1 экземпляръ

Литературы

Дворянскій Институтъ
Корпусъ

1866.

84
У-88

92 Հ-ղրամբեան
Ս-86

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՒՀԻՈՅՆ ԵՂԻՍԱԲԵԹԻ

ՀՈՒՆԳԱՐԱՑԻՈՅ

ԳԱՂԻՒԱՐԵՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՏԻՐՈՒՀԻ ՍՐԻՈՐԴ ԵՊԱՂԷՔՋԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1866

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՒՀԻՈՅՆ ԵՂԻՍԱԲԵԹԻ

ՀՈՒՆԳԱՐԱՑԻՈՅ

84
Ս-88 ար.
30 APR 2006
19 NOV 2010

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՒՀԻՈՅՆ ԵՂԻՍԱԲԵԹԻ

ՀՈՒՆԳԱՐԱՑԻՈՅ

ԳԱՂԴԻԱՐՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՏԻՐՈՒՀԻ ՕՐԻՈՐԴ ՆԱԶԱԼԵԹՅԱՆ

1004
178803
91

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Государственная Библиотека
1/XI-1922
Инвент. Каталогизация
Ա. ՄՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1866

04.07.2013

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գաղղիոյ արդի մատենագրաց մէջ նշանաւոր է Մոնթալամպէր կոմսը՝ իր բազմաթիւ և ընտիր երկասիրութիւններովն։

Այս գրուածոց յարդն աւելցընողն ու բոլոր եւրոպական ազգաց սիրելի ընողը՝ ոչ միայն իր ուղիղ ու հաստատուն փիլիսոփայութիւնն ու լեզուին գեղեցկութիւնն է, այլ մանաւանդ ճշմարիտ քրիստոնէական հոգին և ընտիր բարոյականը։

Այս զովելի յատկութիւններն աւելի կերպով մը կ'երևնան սրբուհւոյն Եղիսաբեթի Հունգարաց թագուհւոյն վարուցը մէջ՝ որ Մոնթալամպերի գլուխ գործոցը կը սեպուի։

Սրբոց վարքին մէջ Եղիսաբեթի պատմութեան նման սրտաշարժ կենսագրութիւն մը՝ քիչ կրնանք գտնել։ Հունգարիոյ արքունեաց մէջ սնած ու մեծցած, ուրիշ արքունեաց ճոխութեան ու փառացը՝

ու իր բարեպաշտ ամուսնոյն գորովալից խանդաղատանացը մէջ՝ առժամանակ մը կը կարծէ գտնել իր հանգիստը։ Եւ սակայն անակնկալ դէպքով, Աստուծոյ մասնաւոր տնտեսութեամբը՝ արհամարհանօք կը մերժուի իւր իշխանական աթոռէն, կը զրկուի փառքէն ու սիրելի զաւակներէն, կ'ինկնայ յետին աղքատութեան ու տառապանաց մէջ։

Բայց ինչպէս փառացը՝ ասանկ ալ նեղութեանց ատեն՝ միայն իր հոգւոյն փրկութիւնը փնտռող երկրաւոր պանդուխտ մըն է սրբուհին Եղիսաբէթ. ուստի մերթ զուարթագէմ՝ և երբեմն արհամարհանօք իրեն նայող աշխարհիս վրայ՝ անտարբեր աչք մը կը դարձընէ, վասն զի իւր բովանդակ միտքն ու սիրտը Աստուծոյ հետ է. ու յաջողութեանց և վշտացը մէջ հաւասար մեծարելով անոր երկրպագելի կամքը, անանց ու յաւիտենական հանգիստ մը կը փնտռէ երկնից փառացը մէջ։

Այսպիսի երկնից հաճոյական ու մարդկան զարմանալի սրբուհւոյ մը վարուց պատմութիւնը՝ փափաքեցաւ ծանօթացընել ազգերնուս՝ մեծապատիւ և բարեպաշտոն Եպիսկոպոսեան Պետրոս Լիֆէնտիի դուստրը՝ աղնուատուն Տիրուհի օրիորդը։ Հայկական լեզուի ուսմանց յարատև և անխոնջ հետամուտ, անոր մէկ արդիւնքն ուղեց ընծայել ազգին իւր այս թարգմանութեամբը, և իր ծախքովը տպագրել։

Յուժարափոյթ կը հրատարակենք այս երկասիրութիւնը, ոչ միայն աղնիւ թարգմանչին փափաքանացն համեմատ՝ այսպիսի մեծանուն երկնաբաղաքացւոյ մը սրբութիւնն ու փառքը հռչակելու նպատակաւ, այլ նաև իր ու իրեն աղնուափայլ Գերդաստանին ծանօթ բարեպաշտութեանը նոր ապա-

ցոյց մը · խրախոյս մը՝ ազգին պատանեաց և օրիորդաց՝ եւրոպական լեզուաց հետ նաև բուն մեր ազգային լեզուին և մատենագրութեանը հմտանալու · և մանաւանդ բարւոյ օրինակ մը անոնց ամենուն որ օտար լեզուաց ուսմանը մէջ՝ փոխանակ այսպիսի ընտիր և օգտակար երկասիրութեանց ընթերցմանը պարապելու, վնասակար ու հոգեկորոյս գրոց մէջ կը փնտռեն իրենց ու այլոց դատապարտութիւնը ·

ՏԳ ԱԴՐԱՂՔ

Ա.

Ծնունդ սրբուհւոյն Եղիսաբեթի.

Երեքտասանեերորդ դարուն սկիզբները՝ Գերմանիոյ վրայ տիրող իշխանաց մէջ՝ հռչակաւոր բազմանդամ սեպուած էր իր քաջութեամբն և համբաւով՝ Դուրինկիոյ և Հէսսի Լանտկրաւը Հերմանն։ Արիութիւնն ու հանճարը՝ կարծես թէ ժառանգութիւն ստացած էր իր Լուդովիկոս հօրմէն, որ Երկսթի կը կոչուէր, և միջին դարու գլխաւոր իշխաններէն մէկը համարուած էր. մերձաւոր ազգական էր Փրեդերիկոս Շիլկամբուս կայսեր, ու Պոհեմիոյ, Սաքսի, Պաւերայի և Այտարիոյ այլ և այլ իշխանական տոհմերուն։ Ասոնցմէ զատ՝ իր երկրին ընդարձակութիւնը, որ Լահն գետէն մինչև Յիլսա կը տարածուէր, քաղաքական մեծ ազդեցութիւն մը տուած էր իրեն. անանկ որ Գերմանիոյ այլ և

այլ վերհասկացողը՝ ոչ միայն զինքը կը մեծարէին, այլ նաև վախնային իրմէն։

Սակայն Հերման չէ թէ միայն ուժովը՝ բոլոր Գերմանիոյ մեծարանքն իրեն ձգած էր, այլ վասն զի նշանաւոր ալ էր իր գերազանց վերհանձնութեամբը, գիտութեամբն և աստուածպաշտութեամբ։ Այնն իրիկուն՝ սուրբ գրքէն գլուխ մը չկարդացած՝ անկողնն չէր մտներ. իսկ իւր ուսմունքն ի Բարիզ սորված էր, որ այն ատենն ալ սրբազան և արտաքին գիտութեանց գերագոյն աւանդատան կը սեպուէր։ Մանաւոր սէր մը ձգած էր քերթողական արուեստին, և իր թագաւորութեանը ժամանակ՝ առանձին խնամով Գերմանիոյ հին բանաստեղծից գրուածներն հաւաքեր և կարգի դնել տուած էր։

Այսպէս բարեպաշտ կենաց՝ ուսման և խաղաղութեան՝ սիրող պաշտպան և խնամատար էր Հերման. ուստի և իրաւամբ իր ժամանակակից քերթողաց մէկը կը զրուցէր, թէ «Ուրիշ իշխանները ալ գթած սիրտ ունին, բայց ոչ որ իրեն հաւասար է յաջնուական վերհանձնութեան... Դուրինկիոյ ծաղիկը ամբերուն մէջ ալ կը փայլի, իր փառաց ամառն ու ձմեռը՝ գարնան պէս քաղցր է ու գեղեցիկ»։

Այսոր թագաւորութեան ատենները՝ Հէս քաղաքը եկաւ Գրլինտոր անունով մէկը, ու պանդոկի մը մէջ իջևանեցաւ։ Նէ որովհետև ժողովրդեան մէջ համբաւ տարածուած էր թէ հանդերձելոց գիտութիւնն ունի Գրլինտոր, շատ ազնուական մարդիկ իր քովն եկան, ու կը խնդրէին նորանոր բաներ լսել իրմէ։ Ան ալ

ոտք եկեղեցի՝ երկար սահեն մնադրութեամբ քննեց աստղնեղեն, ու ետքը դարձաւ ըսաւ ա-նոնց. «Ձեզի նոր և ուրախալի աւետիս մը պի-տի տամ։ գեղեցիկ աստղ մը կը տեսնեմ՝ որ կը ծագէ ի Հունգարիա, ու մանկէ կը ճառագայթէ ի Մարպուրկ ու Մարպուրկէն բոլոր աշխարհը։ Գիտցէք որ այս իրիկուն Հունգարիոյ թագաւորին աղջիկ մը ծնաւ Եղիսաբեթ անունով. ա-նիկայ պիտի հարմանայ այս երկրիս իշխանին տղուն, ու պիտի ըլլայ այնպիսի սուրբ մը՝ որ իրմով բոլոր քրիստոնէութիւնն պիտի ուրա-խանայ և փիթարուի»։ Հոն եղողներն ուրա-խութեամբ մոռի ըրին այս գուշակութիւնն, և երկրորդ օրն՝ ասպետներէն քանի մը հոգի կա-նուխ Վարդպուրկ գնացին Լանտկրաւէն պատ-մելու։ Իշխանն ուրախանալով՝ մէկէն ի մէկ ձի հեծաւ, գնաց գտաւ զԳրլնտոր, ու զինքը Վարդ-պուրկ բերելով՝ ամէն պատիւ ու մեծարանք ցցուց, ու ետքն առատ պարգևներով իր երկիրը դարձուց զինքը։

Նոյն ժամանակը Հունգարիոյ վրայ կ'իշխեր Անդրէաս Բ. որուն թագաւորութիւնն սիրելի էր աստուծոյ և իր ժողովրդոյը, ահարկու թըշ-նամեաց իր գէնքերուն ուժովը, պաշտպան եկե-ղեցւոյ ու անոր իրաւանցը, գորովագութ հայր ամենուն՝ և մանաւանդ աղքատաց։ Իր ամու-սինն ալ Կերդրուտա՝ արժանաւոր էր իրեն ազ-նուատոհմութեամբն, բարեպաշտութեամբ ու այլ և այլ ընտիր և գեղեցիկ բարեմասնու-թեամբք։

Հազար երկու հարիւր եօթանասուն տարւոյն մէջ, Գրլնտորին ծնուցած ժամանակին, Կեր-

դրուտա թագուհին դուստր մը ծնաւ որ առա-
զանէն Եղիսաբեթ անունն ընդունեցաւ։ Իւր
մկրտութեան հանդէսն մեծ փառաւորութեամբ
եղաւ. Եկեղեցի տարին զինքը ամսկհովանիի մը
տակ՝ որ Պուռսային մէջ գտնուածներէն ամե-
նէն գեղեցիկն էր. որ այն ատենն արևելեան
Ճոխութեան գլխաւոր գանձարաններէն մէկը
սեպուած էր։ Օրորոցէն՝ այս առաջուց տհմա-
նուած տղան՝ նշաններ տուաւ այն գերազանց
վիճակին՝ որուն ստուած պահած էր զինքը.
կրօնքի նուիրական անուններէն՝ առաջին խօս-
քերն եղան որ իւր մտացը մէջ կը տպաւորուէին,
դարձեալ առաջիններն՝ զորմնք կրցաւ Թոմա-
վել քանի որ լեզուն կը բացուէր. քիչ ատե-
նէն երբ սկսաւ խօսիլ՝ աղօթքներ կը զուցէր։
Զարմանալի մտադրութիւն մը կը ցուցնէր
կրօնքի առաջին գիտելիքներուն՝ զոր իրեն կը
սորվեցընէին, և անշուշտ նեբբին լոյս մը ար-
դէն կը սորվեցըներ իրեն այս սուրբ ճշմարտու-
թիւնները։ Երբեք տարուան հասակին, ինչպէս
որ պատմագիրները կ՝առանդէն, իւր գթու-
թիւնը կը ցուցըներ բոլոր աղքատաց վրայ, և
կը ջանար իրենց խեղճութեանը օգնել պար-
գևներով։

Բոլոր իւր կեանքին նկարագիրը օրորոցին մէ-
ջէն կը գուշակուէր. կենաց առաջին գործը՝
ողորմութիւն մընն էր, և առաջին խօսքն՝ ա-
զօթք։ Կարծես թէ կ՝երևնար թէ աստուծ-
մէ սահմանուած էր այնպիսի հնարքներ ստա-
նալ որ ժամանակ անցնելէն վերջը՝ այսչափ ա-
ռատ կերպով երկրիս վրայ պիտի սփռէր։ Հա-
զիւ թէ ծնաւ՝ Հունգարիային պատերազմները

դադրեցան. նեբբին խառնակութիւնները հան-
դարտեցան։ Այս հանդարտութիւնը՝ հասա-
բակաց կեանքին սկսեալ՝ շուտով մը առանձին
ամեն մէկուն կենացը վրայ ալ փայլեցաւ։ Ա-
ստուծոյ օրէնքին անարգութիւնները, նախա-
տինքները, հայհոյութիւնները քիչցան. և Ան-
դրէաս Թագաւորն ալ տեսաւ կատարուած իւր
փափաքը, զոր ուղղափառ Թագաւոր մը կրնար
ունենալ։ Բարեպաշտ և պարկեշտ անձինք՝ չէին
դադրեր այն ատենէն ի վեր դիտելու այս հան-
դարտութեան ու յաջողութեան տեսարանը
մէկ տղու մը ծնունդեամբը, որուն վրայ աստուած-
պաշտութիւնն այսչափ կանուխ սկսած էր. և
երբ ժամանակ անցնելէն վերջը յայտնի կեր-
պով մը ստուգուած տեսան իւր առաջի տարի-
ներուն մէջ տուած ակնկալութիւնները՝ Հուն-
գարացիք շատ հաճութեամբ մը կ'ըսէին, որ
բնաւ արքունական զաւակ մը այսչափ շնորհք
բերած չէր իւր հայրենեացը։ Սակայն Հերման
դուքսը շատ ջանաց տեղեակ ըլլալ Թէ Գլին-
սորին գուշակութիւնները կատարուած էին,
և Թէ արդեօք իշխանուհի մը ծնած էր Հուն-
գարիային մէջ գուշակուած օրը. և երբ խնա-
ցաւ չէ Թէ միայն իւր ծնունդը՝ հապա նաև աս-
տուածպաշտութեան նշանները որ արդէն կը
ցուցընէր, և այն երջանկութիւնը զոր կարծես
Թէ երկնքէն բերած էր իւր գաւառին, կարգէ
դուրս փափաք մը զգաց գուշակութիւնը բոլո-
րովին կատարուած գտնել իւր երիտասարդ
տղայն՝ Եղիսաբեթին փեսայ տեսնելով։ Ճանա-
պարհորդները՝ որ այն գաւառէն ատեն ատեն
կու գային, որ այս օրուան պէս Եւրոպային մը-

նացած մնասերէն զատուած էր, յաձախ լուրեր կը բերէին Աշդէհաս թագաւորին դատերը վերայ։ Մանաւանդ օր մը կրօնաւոր մը որ Հունգարիայէն կը դառնար, անոր պատմեց թէ չորս տարիէն ի վեր կոյր բլալով շատ մը առողջացած էր երիտասարդ իշխանուհւոյն միանգամ դպչելովը. բոլոր Հունգարիան, ըսաւ դքսին, այս մանկանը վերայ կ'ուրախանայ, վասն զի իրեն հետ միատեղ խաղաղութիւն բերաւ։

Ասիկայ բաւական եղաւ Հերմանը համոզելու՝ Հունգարիոյ թագաւորին դէսպան մը իրը կել իշխաններէ և ազնուական տիկիններէ կազմուած, Եղիսաբեթին ձեռքը խնդրելու իր Լուդովիկոս տղուն անուանքը, և միատեղ բերել զանիկայ՝ թէ որ կարելի էր՝ ի Դուրինկիա։ Այս դէսպանութեան համար Բենարտ կոմը ընտրեց, Կոթիէ իր մատակարարը, և Պերթ տիկինը Լժիլդիին այրին, որ Ժամանակակից պատմագիրներուն ըսածին համեմատ՝ անուանի էր իր խնայտութեամբն և պարկեշտութեամբը, և ասոնցմէ զատ նաև գեղեցիկ, բարեպաշտ և ամենուն սէրը յարգելի ձիրքերովը։ Երկու գեղեցիկ և ազնուական օրիորդներ, և երկու ասպետներ իրեն ընկերակից էին։ Դէսպանները եռեւեն կ'երթային գրեթէ երեսունեն աւելի ձիաւորներ. Ճանապարհին բոլոր երկայնութեանը մէջ շատ պատուով ընդունուեցան բոլոր իշխաններէն և քահանայներէն՝ որոնց երկիրներէն կ'անցնէին՝ իրենց ազնուականութեանը համեմատ։ Յաջող ուերջանիկ Ճանապարհորդութեամբ հասան ի Փրեսպուրկ, հոն արքունական ընդունելութիւն գը-

տան, և իրենց հանդերձն երկրորդ օրը ամեն կողմանէ բազմաթիւ պատգամաւորներ հասան։ Երբ Թագաւորին յայտնեցին իրենց դեսպանութեան նպատակը, մեկէն իւր խորհրդականները ժողովեց՝ Դուբինկիոյ դքսին խնդիրքին վերայ մնացածները հարցաւ։ Գրինսար եռանդնալից ձառով մը, որ այն ժամանակին Դուբինկիոյ վիճակին նկարագիրը կընայ սեպուիլ, երկայն ատեն խօսեցաւ Հերմանին հարստութեանն և զօրութեանը վրայ. տանտուերկու կոմսերը կարգաւ համբեց որ իրեն հպատակ էին, առանց սեպելու պարոնները և ասպետները. լաւ բերդերն որ իւր երկիրը կը պաշտպանէին. պատմեց թէ որչափ այս երկիրը իրեն պտղաբեր երևցած էր, լաւ մշակուած, գեղեցիկ անտառներով շրջապատուած, և ձկանց լճերով զարդարուած, և թէ որչափ ժողովուրդը հանդիստ էր, զօրաւոր գարեջուր խմելով, և լաւ ձերմակ հայ ուտելով։ Վերջապէս մեծ գովեստներ բրաւ դքսին բնութեանը վրայ. և վրայ բերաւ թէ իրեն այնպէս երևցած էր թէ իրեն տղայն ալ հասակին համեմատ ամեն բնտիր բարեմասնութիւններով զարդարուած էր։ Կերդրուտա Թագուհին յօժարութեամբ համոզուեցաւ դքսին խնդիրքը կատարելու։ Ա.ըբայն ալ անոր հաճութեանը տուլով՝ հաւանեցաւ իւր սիրական դստերն բաժնելի։ Բայց քանի որ Եղիսաբեթ իրմէն չէր բաժնուած, ուզեց անոր պատուոյն համար տօնական հանդէս մը կատարել, իւր արքունեացը ամեն ասպետներն և իրենց տիկնայքը հրաւիրելով, հրամայեց որ փառաւոր ուրախութիւններ կատարեն, խաղերն, պարերը,

մանաւանդ երաժշտութիւնն և ժամանակակից բանաստեղծներուն երգերն երբեք օր տեսեցին։ Երբեք օրուընէ եղբը Դուբրինկիայի դեսպանները թագաւորէն իրենց հրաժեշտը խնդրեցին։ Փոքրիկ Եղիսաբեթը բերին, որ դեռ չորս տարուան էր, արծաթով ու ոսկիով շքեղապատուած մետաքսէ զգեստ մը հագուցած, և ձոյլ արծաթով շինուած բաղնցի մը մէջ դրած, այսպէս Դուբրինկիացւոց յանձնեցին։ Աբքայն Վարիլայի տիրոջը ըսաւ. Ռու ասպետական պատուոյդ կը յանձնեմ իմ մեծ մխիթարութիւնս։ Թագուհին ալ արտասուելով եկաւ իւր զաւակը յանձնեց, որուն որ ասպետը պատասխանեց. Յօժարութեամբ իմ պաշտպանութեանս տակը պիտի պահեմ զանիկայ։ Եւ խօսքին վրայ ալ հաւատարիմ մնաց, ինչպէս որ պիտի տեսնենք։

Դեսպանները Փրեսպուրկէն չհեռացած արքային և թագուհիին մեծ և հարուստ պարգևներ ընդունեցան. թէ իրենց և թէ Հերմանն դքսին յանձնելու համար իբրև իշխանութեան օժիտ։ Ժամանակակից պատմագիրները այս ընծայները տեղնիտեղը կը համրեն յայտնապէս ըսելով թէ երբեք այսչափ սքանչելի և գեղեցիկ նիւթեր տեսնուած չէին ի Դուբրինկիա։ Ուսկից կրնանք հետեւցընել թէ այս ամուսնութիւնը նշանաւոր եղաւ Գերմանիոյ մէջ մոցընելով նոր յառաջադիմութիւն մը արուեստի ճոխութեանը և ճարտարութեանը։ Թագուհին անբաւ ստակ ալ տուաւ, խոստանալով որ եթէ ողջ մնալու ըլլայ, այն գումարին կրկինը պիտի տայ իւր առանձին գանձէն։ Վերջապէս պատգամաւորները գացին, որոնք երկու կառքով եկած

ըլլալով, տանուիրեբով դարձան, այնչափ իրենց բեռները շատցած էին։ Աբբայն անոնց Հունգարացի տանուիրեբ ազնուական օրիորդներ յանձնեց, որպէս զի իւր դստերը ընկերակից ըլլան, որոնք ամենքն ալ ամուսնացան ի Դուբլինկիա՝ Հերման դքսէն իրենց օժիտը ընդունելով։ Դարձին Ճանապարհորդութիւնը առանց մանաւոր դիպուածի մը անցաւ։ Երբ Հերման դուքսը և Սոփիա դքսուհին անոնց մերձենալուն լուրը առին և իրենց դեսպանութեան յաջողուիլը տեսան, ծնկի վրայ գալով զաստուած կ'օրհնէին, որ իրենց խնդրուածքը կատարեր էր։ Վերջէն շատ մը Վարդապարկէն Իգնաք ի-ջան, իրենց աստուծմէ խրկուած Ճանապարհորդը ընդունելու համար։ Նորահասակ դքսուհի մը ընդունելուն ուրախութիւնը՝ կարծես թէ իրենց խելքը գլուխնէրնէն տարեր էր, ինչպէս որ իրենց աբբունեացը պաշտօնական ժամանակագիրներէն մէկը կ'ըսէ։ Ամէնքը մէկ տեղ օթեւան մը գնացին ուր որ Գլենսոր իր դուշակութիւնը ըրած էր, և որ այն ժամանակին օթևանները ամենէն լաւագոյնն էր։ Լանտկրաւ՝ փոքրիկ Եղնսաբեթը բազկացը մէջ առաւ և գրկելով կրկին անգամ՝ աստուծոյ շնորհակալ եղաւ՝ Եղնսաբեթը իրեն շնորհելուն համար։ Վերջէն Վարդապարկ դարձան բնակարանները պատրաստելու համար, բայց Սոփիա դքսուհին բոլոր գիշերը տղուն քով անցուց. երկրորդ առաւօտ զանիկայ բերդը տարաւ, ուր որ դուքսը բոլոր իւր արքունիքը ժողոված էր, և Իգնաքին գլխաւոր քաղաքացիքը և իրենց տիկնայքը հրաւիրեց, որպէս զի տեսնէն աս-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
Инвент.

տուծոյ և Հունդարացի արքային իրեն խրկած իշխանուհին։ Ամուսնութեան նշանտուքը հանդիսով կատարեցին, Եղիսաբեթ իշխանուհոյն՝ որ դեռ չորս տարուան էր՝ Լուդովիկոս դքսին հետ, որ գրեթէ տասնուհինգ տարուան էր։

Ինչպէս ի Փրեսպուրգ՝ հոն ալ շատ կոչունք, պարեր ու երգերի հանդէսներ կատարեցին. և բանաստեղծութիւնն ալ, որ գլխաւոր պարծանքներին մէկն էր Դուբինկիայի արքունեաց, իւր եռանդուն դարձուածքներովը փառաւորեց հանդէսը։ Ա.յն ատենէն ի վեր՝ Եղիսաբեթ չթողուց զանիկայ՝ որ ժամանակաւ իրեն փեսայ պիտի ըլլար, և այն օրէն սկսաւ իւր եղբայրը կոչել զինքը։ Արտաշարժ և գեղեցիկ սովորութիւն մըն է ուղղտիսա ընտանեաց և մանկանց մէջ, որ ընդհանուր դաստիարակութեամբ մը կը մեծնան որոնք իրենց կեանքը միշտ մէկ մէկու հետ պիտի անցընեն։ Սիրուն ազդեցութիւն մը, որ մարդկային սրտին մէջ կը խառնէ քրոջ մաքուր անուանը հետ հարսի սրբազան անունը, որ կենաց ընթացքը կ'ամամհացընէ, որ եղբայրութեան փափուկ զգացմունքներով՝ ամուսնական վիճակի երկայն ու ծանր պարտքերը կը մեղմացընէ, որ մարդկային սրտին մէջ եղող ամէն սառնիկ կրքերը կը սանձէ զանոնք հանդարտելու և ուղղելու համար. և այսպէս կենաց գեղեցիկ յիշատակները և սրբազան զգացմունքները՝ մի և նոյն սիրոյ անոյշ կապի մէջ կը բովանդակէ։

Բ

Մանուկ Եղիսաբեթի սէրն առ Աստուած.

Նոյն իսկ այն ընտանեաց գրկին մէջ ուսկից նախախնամութիւնը կը հեռացընէր այսպէս ըզփոքրիկ Եղիսաբեթը, երկու առիթ նպաստաւոր եղան կանուխ ընդարձակելու իւր սրտին մէջ այն սքանչելի յատկութիւններն որոնք օրորոցին մէջէն տեսնուած էին իր վրայ։ Բոլոր քրիստոնէական առաքինութիւնները աղքայական իշխանութեան հետ միացընելու փառաւոր օրինակ մը ունէր իւր մօրաքոյրը՝ Հետուիկէ դըքսուհին Պոլոնիայի, որ ժամանակ անցնելէն վերջը արժանի սիրտի ըլլար հաստատելոց պաշտամունը, և որուն սաստիկ և եռանդուն աստուածպաշտութիւնը այն ատենէն ի վեր փառք մը եղաւ իւր ընտանեացը և բարի օրինակ մը Եղիսաբեթի։ որուն ջանաց և հաստատեցաւ։

Բայց այս օրինակին ազդեցութենէն զատ

թոյլ տուաւ աստուած որ անակնկալ թշուառութիւն մը՝ տխրութեան ստուերը մը ձգէ իւր կենացը առաջի օրերուն վրայ, և առաջուց իրեն հակիրճնէ աշխարհային մեծութեանց ընդունայնութիւնը։ Դուրինկիայէն ի Հունգարիա երթալէն երկու տարի վերջը, իւր մայրը Կերդրուտա թագուհին՝ դժնդակ մահուամբ մը վախճանեցաւ, ծաղիկ հասակին մէջ սպաննուելով իւր երկանը հպատակներէն։ Իւր մահուան պատճառն այլ և այլ կերպով կը պատմուի. ըստ ոմանց Դաղմատիայի ու Խրուաթիներուն իշխանէն սպաննուեցաւ, որ կամեցաւ իւր կնոջը պատուոյն վրէժն առնուլ, որովհետև թագուհւոյն եղբօրմէն նախատուած էր։ Բայց աւելի հաւատարիմ պատմչաց խօսքովը իւր երկանը օրերուն դէմ պատրաստուած դաւաճանութեան մը զոհ եղաւ, փախչելու ժամանակ՝ դաւաճանաց հարուածքին տակ ինկաղով։ Այս սոսկալի լուրը՝ շուտով մը Եղիսաբեթին ականջն հասաւ, և մեծ տխրութեան և ցաւոց մէջ զինքն ընկղմեց։

Դուրինկիա հասնելուն պէս՝ Լանտգրաֆ եօթն օրիորդ ընտրեց իւր արքունեացը ամենէն ազնուական տոհմերէն, և գրեթէ իւր ապագայ հարսին նոյն հասակովը, որոնց հետ էր նաև իւր բուն Ագնէս դուստրն ալ, որպէս զի Եղիսաբեթի հետ իրենց դաստիարակութիւնն ընդունին։ Այնոցմէ մէկը Կիւտա անուանով որ դեռ հինգ տարուան էր, Եղիսաբեթին տարի մը աւելի, իւր ծառայութեանը մէջ կեցաւ գրեթէ մինչև անոր մահուան ժամանակը, և երբ զնա աստուած յերկինս կոչեց, և իւր արքութեան համբաւը եկեղեցական իշխանութեան մոտ-

դրութիւնը իրեն դարձուց, այս Կիւտան՝ հրապարակաւ հարցուելու ատենը՝ անոր մանկութեանը յիշատակները պատմեց։ Իրեն տուած վկայութիւններին առած, որոնք խնամքով պահուեցան և սուրբ Գահին յանձնուեցան, ստուգեր էնք այն մանր պարագայներուն տեղեկութիւնները զոր պիտի տանք Եղիսաբեթին վերջուցը առաջին տարիներուն վրայօք։

Ս. Յոպիսի փափուկ հասակին մէջ, բոլոր իւր մտածմունքները և զգացմունքները՝ կարծես թէ ուրիշ նպատակ մը չունէին բայց զաստուած պաշտել և երկնից արժանի ըլլալ։ Այնն անգամ՝ որ կրնար՝ բերդին մատուռը կը մտնար, և հոն սեղանին առջեւը խոնարհելով, մեծ սաղմոսարան մը բանալ կուտար, թէպէտ և դեռ կարդալ չէր գիտեր. վերջին իւր փոքրիկ ձեռքերը ամփոփելով, և աչքերը դէպ ի երկինք վերցնելով եռանդեամբ մը և սրտի մեծ աղօթքի և մտածութեան կուտար ինքզինքը։ Իւր ընկերակիցներուն հետ՝ ոտքի վրայ ցատքելով խաղալու ատեն այնպէս կը ձեւացնէր որ ամենքը կը ստիպուէին դէպ ի մատուռը շտկել քայլերնին, և երբ զայն գոցուած կը գտնէր, սաստիկ եռանդով մը փականքը, դուռը և արտաքին պատերը կը համբուրէր, հոն հանգչած աստուծոյն սիրոյն համար։ Իր բոլոր խաղերուն մէջ միշտ աստուծոյ յիշատակն էր՝ իւր գլխաւոր մտածութիւնը։ Անդադար առիթ կը փնտրուէր առաստուած մերձենալու, և երբ արգելք մը կը գտնէր ուզածին չափ աղօթք և ծնրադրութիւն ընելու, իւր ընկերակիցներուն կ'ըսէր. Գնանի վրայ պառկինք, որպէս զի տեսնենք թէ մեր մէջ

ուվ է աւելի մեծահասակը. վերջէն կարդաս ամէն մէկ օրիորդին քով դէտինը պառկելով, առանկով յարմար միջոց մը կը սեպէր առաջի աստուծոյ սրտէն երկրպագութիւն ընելու և ողջոյն մը ըսելու։ Հարսն և մայրը ըլլալէն վերջը՝ շատ կ'ախորժէր իւր մանկութեան այս անմեղ վարպետութիւնները պատմել։

Յաճախ իւր բարեկամները գերեզմանոցը կը տանէր, և իրենց կ'ըսէր. Ցիշեցէք որ օր մը հոդ պիտի դառնանք։ Վերջէն ոսկերաց հանգչած տեղը գալով կ'ըսէր. Ահաւասիկ մեռելոց ոսկրները. այս մարդիկը մեզի պէս կենդանի էին, և այժմ վախճանեցան՝ ինչպէս որ մենք ալ պիտի մեռնինք. այս բանիս համար պարտ է զաստուած սիրել։ Ուստի ծնկան վրայ գալով՝ ինծի հետ ըսէք. Տէր, քու դժնդակ մահուանդ և քու սիրական մարդ Մարիամին համար խնայեսէ այս խեղճ հոգիներն իրենց տանջանքէն։ Տէր, քու հինգ սրբազան վէրքերուդ համար՝ փրկէ զմեզ։ Ասոնք էին, ինչպէս հեղինակին մէկը կ'ըսէ, իւր պարերն և խաղերը։ Բոլոր տղայքը անոր հետ միաբան աղօթք կ'ընէին, և զարմացած կը պատմէին թէ ինչպէս մանուին Ցիսուս յաճախ Եղնսաբեթի այցելութեան կու գար, և գորովալիր կերպով իրեն հետ տեսութիւն ընելով՝ զինքը կը մխիթարէր. բայց անմեղ օրիորդը խստիւ կ'արգիլուր իրենց այսպիսի նիւթերուն վրայ խօսիլը։ Իւր պարարտոյ ժամանակին դուրս կը ջանար, որչափ որ կարելի էր, աւելի աղօթք սորվիլ։ Ով որ աստուծոյ և անոր սուրբ օրինացը վրայ կը խօսէր, միայն այս բանիս համար՝ իրեն սիրական կ'ըլլար։ Ա.ՅԼ և

այլ աղօթք որոշած էր օրուան մէջ ըսելու. և երբ արգելք մը կը պատահէր իւր կամաւոր պարտքը երեկոյեան ատենէն առաջ կատարելու, և իւր հետն եղողները կը ստիպէին զինքը անկողին մտնելու, երբէք չէր պակասեր ընելու լուութեամբ իւր պարտքը, մինչդեռ այլք զինքը հնչած կը համարէին. զատուած կը յիշէր Դաւիթ մարգարէին պէս իւր անկողնոյն մէջ։ Ա.Ը. դէն կ'իմանար պարկեշտութեան յարգը որ հրամայուած է ուղղափառ կուսանաց, և իւր ծածկոյթը այն կերպով կը շտկէր որ կարելի եղաւ ծին չափ քիչ տեսնուի։

Ողորմութիւն ընելու սաստիկ ախորժ մը կը զգար, որ ժամանակ անցնելէն վերջը իւր կեանքը բոլոր ողորմութեան տեսարան մը պիտի դառնար։ Աղքատաց կը բաժնէր այն ամէն ըստակն՝ զոր իւր հայրագիր ծնողացմէ կ'ընդունէր որ և իցէ պատրուակաւ։ Անդադար կ'երթար բերդին գործատուներուն և խոհանոցներուն մէջ, և աւելցած կերակուրները կը ժողովեր, և խնամքով քաղցեալ աղքատաց կը տանէր, և իր այս գործովը արդէն կը գրգռէր իրեն դէմ դքսին տանը պաշտօնակալաց ոտգոհութիւնը։ Որչափ հասակաւ կը մեծնար, այնչափ ալ առաքինութեան և աստուածպաշտութեան մէջ կ'աճէր։ Ա.յն ժամանակին սովորութիւն էր, որ իշխանուհիներն և ազնուական օրիորդները վիճակ կը քաշէին՝ սուրբ առաքելոց մէջէն իւրեանց յատուկ պաշտպան մը ընտրելու։ Եղիսաբեթ՝ որ արդէն ընտրած էր զսուրբ Պօղոս իբրև իւր պաշտպանն և գերագոյն փաստաբան, մասնաւոր մեծարանք մը ալ ունէր, և ինչպէս ձեռ-

նագիր մը կ'ըսէ, առանձինն բարեկամութիւն մը ունէր առ սուրբն Յովհաննէս Աւետարանիչ կուսական մաքրութեանը համար՝ որուն որ այս սուրբ առաքեալը օրինակ մըն էր։ Ուստի սկսաւ Եռանդով առ աստուած աղօթել՝ որպէս զի սուրբ Յովհաննէս ըլլայ իւր պաշտպանը. և ետ-քը խոնարհութեամբ իւր ընկերաց հետ մէկ տեղ ընտրութեան տեղը գնաց։ Ա.յս ընտրութեան համար երկոտասանմամ կը գործածէին, որոնց իւրաքանչիւրին վրայ առաքեալներին մէկուն անունը գրուած էր, և խորանին վրայ դրած ամէնքը մէկ տեղ կը խառնէին, որ իւրաքանչիւր խնդրող՝ կ'երթար ըստ բաղդի անունցմէ մէկը ընտրելու։ Ա.յն մամն որուն վրայ սրբոյն Յովհաննու անունը գրուած էր, առաջ Եղիսաբեթին եկաւ. բայց իւր խնդրուածոցը այս առաջին կատարմամբը գոհ չըլլալով, երկու անգամ փորձը կրկնել տուաւ. և միշտ նոյն յաջողութիւնն ունեցաւ։ Ա.յսպէս տեսնելով նախախնամութեան առանձին կամքը՝ իւր սիրական առաքելոյն վրայ ունեցած ջերմեռանդութիւնը ալ աւելի շատցաւ սրտին մէջ, և իւր բովանդակ կենացը մէջ այս սուրբին հաւատարիմ եղաւ, երբեք չէր մերժեր ինչ որ կը խնդրէին իրմէն սրբոյն Յովհաննու անուամբը, թէ պէտք որ ըլլար նախատինքի մը ներել, և թէ ուրիշին բարեբարութիւն մը ընել։

Ա.յս նուիրական պաշտպանութեանը ինքզինքը յանձնած, բարեպաշտ մանուկը նոր առութիւն մը սեպեց զայն երկնից արժանի ըլլալու և հետևաբար կրկնապատկելու քրիստոնէական կրթութիւններն և կամաւոր մահացուցմունք-

նեբը։ Անփոյթ էր բլլար ամենեւին աստուծոյ անունը սուրբ պահելու մեծ զգուշութիւն ընելով իւր խօսքերուն մէջ։ Կիրակի եւ տօն օրերն իւր զարդարանքէն մաս մը մէկ դի ձգելով նախամեծար կը սեպէր իւր խոնարհութեամբը զաստուած պատուէլ՝ քան թէ իւր զգեստուցը պայծառութեամբ։ Կիւտա մեզի կ'աւանդէ թէ այսպիսի առիթներու մէջ՝ ոչ ձեռնոց եւ ոչ ալ բազպան կը դործածէր, ինչպէս որ այն ժամանակին սովորութիւնն էր։ Ամեն օր առիթ կը փնտռէր իւր կամքը կոտրելու փոքրիկ բաներու մէջ, որպէս զի ինք զինքը վարժեցնէ առ մեծ զոհս ալ։ Իւր խաղերուն մէջ երբ կը վաստրկէր՝ եւ յաջողութիւնը զինքը արտաքոյ կարգի կ'ուրախացրնէր՝ յանկարծ կը դադրէր ըսելով. Այժմ որ երջանկութեամբ լի եմ կ'ուզեմ կանգ առնել առ սերն աստուծոյ։ Պարելը կ'ախորժէր՝ գաւառին ընդհանուր սովորութեանը համեմատ ուր որ մեծցած էր. բայց հազիւ թէ շրջան մը ընէր, կ'ըսէր. Մէկ շրջանը բաւական է աշխարհիս համար. մեկալներէն պիտի զրկեմ ինք զինքս ի պատիւ Յիսուսի Քրիստոսի։ Սակայն պատանին Լուդովիկոս՝ իւր նշանածն՝ անդադար իրեն քովն էր, և Եղկսաբեթն ալ հաճոյք կը զգար անոր քով գտնուելէն. զանիկայ իւր սիրելի եղբայրը կը կոչէր, ինչպէս ան ալ բարեկամն ու սիրելի քոյրս կը կոչէր զինքը։

Այսպէս եղաւ այս օրիորդին առաջին մանկութիւնը, բայց աստուած իրեն սուրբ և պայծառ վիճակ մը պահած էր, անոր կենաց օրերը համրած էր, և կ'ուզէր քիչ ժամանակէն զնա

երկինք կոչել։ Անոր համար արժանի բրաւ զին-
քը իւր մնմաւոր հնորհաց գանձին. իւր կեան-
քը խիստ կարճատև պիտի ըլլար, բայց մեծ հա-
ղուածներով նշանաւոր՝ մէկ քանի երևելի սըբ-
բոց կենացը նման։ Երբեք սրտի մրրիկ մը չխա-
ւարեցուց երկնային ճառագայթը՝ որ իրեն կ'ա-
ռաջնորդէր օրորոցէն ի գերեզման։ Աստուծոյ
աղախնեացը մէջ ինքը միայն չէ որ ժամանակէն
առաջ վկայած ըլլայ անոր գթութեանն և կա-
րողութեանը. և արդարև քրիստոնեայ աչքե-
րուն համար չկայ աւելի քաղցր լուսաւորու-
թիւն մը, իբրև զարշալոյս այն մեծ լոյսերուն՝
որոնք սահմանուած են զերկինս և զերկիր լու-
սաւորել։

Գ.

Վիշտք սրբուհւոյն Եղիսաբեթի.

Եղիսաբեթ հաղիւ թէ ինեերորդ տարուան հասակը հասած էր, երբ իւր նշանածին հայրը Հերման իշխանը՝ վախճանեցաւ հաղար երկերիւր տասնուվեց թուականին։ Դիշեր մը երազին մէջ տեսած էր որ մնհուան դատապարտուածներուն դիակունքը՝ իրենց գլխապարտուեթեան տեղը դրուած էին Նգնաք քաղաքին դրունէն դուրս, որոնք մէկէն ի մէկ Հերման կուսանաց կերպարանք առնելով՝ դէպ ի իւր անկողինը սառաջ կու գային՝ իրենց սառաջնորդ ունենալով զսուրը Աստուածածինն և զսրբուհին Կատարինէ, որուն վրայ սառանձին սեր մը ունէր թագաւորը, և որոնք իրեն կ'ըսէին. Պէտք է որ այս տեղը՝ մեզի տուն մը կառուցանես, և մեր անունը կրող կուսանաց միաբանութիւն մը հաստատես, այն ատեն քիչ ժամանակէն զքեզ ալ

մեզի հետ մէկ տեղ կ'առնունք։ Դուքսը հաւա-
տարմութեամբ այս խնդիրը կատարեց. նշա-
նակուած տեղը՝ կուսաստան մը կանոյց սրբու-
հոյն Կատարինէի անուամբը, և հոն առաջին
աբբասուհի դրաւ նորահասակ այրի մը, զՏրբ-
սուհին Պրապանի, և այս սրբավայրն որոշեց որ
իրեն և իւր յաջորդացը յատուկ գերեզմանա-
տեղին ըլլայ։ Սակեց վերջը վանձանեցաւ, և
հոն թաղուեցաւ, ինչպէս որ հրամայած էր։

Պատանին Լուդովիկոս որ հազիւ թէ տասն-
ու վեց տարուան էր, իւր օրը տեղ անցաւ, ո-
րովհետև անոր անդրանիկ որդին էր. և իւր
կրտսեր եղբայրները՝ Հէնրիկոս Ռասբոն և Գոն-
բատ իւրաքանչիւրը իշխանին տէրութենէն մաս
մը և կալուածք մը ընդունեցան, Դուբինկիայէն
սովորութեանը համեմատ։

Հերմանին մահը՝ Եղեսաբեթի համար թը-
շուառութիւն մը եղաւ. վասն զի այս հանգա-
ւաւոր և բարեպաշտ իշխանը՝ միշտ դորովալիր
կերպով մը սիրեց զանիկայ, տեսնելով անոր
վրայ ժամանակին և հասակին վեր աստուած-
պաշտութեան և բարեպաշտութեան եռանդ
մը. իբրև իւր յատուկ դուստրը սեպած էր միշտ
զանիկայ, և ոչ որ իւր կենդանութեան ժամա-
նակը կը համարձակէր արգելք ըլլալ նորահա-
սակ իշխանուհոյն բարեպաշտական կրթու-
թեանցը։ Բայց իւր մահուընէն վերջը՝ նոյն յա-
ջողութիւնը չունեցաւ։ Թէպէտ և Լուդովիկոս,
որ իւր նշանածը և իշխանը կը սեպուէր, եր-
կրին տէրն եղաւ, սակայն իւր պատանեկութեա-
նը պատճառաւ կերպով մը մոռը Սոփիա դրբ-
սուհոյն իշխանութեանը տակն էր, որ հուչա-

կաւոր Ոթոնին Պաւիերայի դքսին դուստրն էր։ Այս իշխանուհոյն անհաճոյ կ'երևնար Եղիսաբեթին կարգէ դուրս եռանդը, և յաճախ կը յայտնէր իւր տժգոհութիւնը։ Նորահասակն Զգնէս Լուդովիկոսին քոյրը որ իւր հանդերձեալ հարսին հետ մեծցած էր, և արտաքոյ կարգի գեղեցկութեամբը՝ շատ դիւրին եղած էր իրեն աշխարհային ունայնութեանց ետևէ ըլլալու, անդադար դառնութեամբ կը յանդիմանէր անոր խոնարհ և առանձնակեաց բնաւորութիւնը. յաճախ կ'ըսէր իրեն թէ՝ ուրիշ բանի համար ծնած չէր՝ բայց եթէ սենեկապան կամ աղախին մը ըլլալու համար։ Մէկալ աղնուական օրիորդները՝ որ այս երկու իշխանուհիներուն ընկերակիցք էին, տեսնելով որ Եղիսաբեթ օր ըստ օրէ իրենց խաղերէն, պարերէն, և ուրախ և ունայն կեանքէն շատ չախորժիր, Զգնեսին բսածները կը հաստատէին, և յայտնապէս անոր վրայ կը ծիծաղէին։ Դրբսին տանը մէջ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցող պաշտօնակալներն, առանց ակնածելու անոր արքունական տոհմին, իւր սեռին և իւր երիտասարդութենէն, չէին ամչնար զինքը հրապարակաւ նախատինքներով արհամարհելէն. ամենքը մէկ բերան կը զրուցէին թէ իշխանուհոյ վայելչաչ յատկութիւն մը չէր տեսնուեր անոր վրայ։

Եղիսաբեթ հեռանալ մը կը ցուցընէր նորահասակ կոմսուհեաց և աղնուական օրիորդաց ընկերութենէն, որ իրեն հետ կը դաստիարակէին, և աւելի կը ջանար ընկերանալ Իզնաբի քաղաքացեացը և իւր ծառայութեանը մէջ եղող խոնարհ

դատերաց հետ։ Մանաւանդ կերպով մը կ'ախոր-
ժէր բոլորտիքը ունենալ խեղճ կանանց տղայ-
քը, որոնց իւր ողորմութիւնները կը բաժնէր։
Նախատինքներն՝ որոնց նպատակ եղած էր,
պատնէշս եղան իրեն կողմն եղող աղքատներն
ալ աւելի քաջալերելու և սիրական ընելու։ Եւ սակայն
ինքնաբերաբար չեղաւ որ իւր սրտին մէջ տեղիք ունե-
նան ոչ հպարտութեան զգացմունքներ ոչ անձ-
նասիրութիւն մը և ոչ անհամբերութիւն։ Այս
առաջին փորձը մարդկան անիրաւութեան և
աշխարհային ունայնութեանց՝ նոր կայ մը ե-
ղաւ ընդ աստուած և ընդ իւր անձը. անոնց մէջ
նոր ոյժ մը գտաւ զաստուած սիրելու և իրեն
ծառայելու։ Իբրև շուշան մը փուշերուն մէջ,
կ'ըսէ պատմագիրներէն մէկը, անմեղ Եղիսա-
բեթը կը ծաղկեր և կը բողբոջէր դառնու-
թեանց մէջ, և չորս կողմն կը ծաւալեր քաղցր
անուշահոտութիւն մը խոնարհութեան և համ-
բերութեան։

Այն ատենները խոնարհութեան մէկ օրի-
նակ մը ցրցուց, զոր իւր ամէն վարուց պատմա-
գիրները խնամքով կը յիշատակեն։ Վերափոխ-
ման տօնին օրն էր, յորում մեծ ներողութիւն
ներ սահմանուած էին սուրբ Կուսին նուիրա-
կան եկեղեցւոյն մէջ, և հոն կ'ընծայէին իրեն
պտուղներ և տարուոյն բերքը։ Սոփիա դքսուհին
Ագնեսին և Եղիսաբեթին ըսաւ. Խմնաք քա-
ղաքն ինչանք, մեր սիրելի Տիրուհւոյն եկեղեցին
երթանք խելու ձայնաւոր պատարագը զոր մա-
տուցանել կու տան իրեն մնմնաւոր կերպով ջեր-
մեռանդ եղող Տեւտոնեան ասպետներն, թերևս
սուրբ Կուսին վրայ քարոզ մը ալ լսենք. ամե-

նէն առելի գեղեցիկ զգեստներ հագէք, և ոս-
կիէ պսակներդ դրէք։ Երկու նորահասակ իշխա-
նուհիներն անոր հրամանին հաճելմամբ զարդա-
րուելով հետը քաղաք իջան, և եկեղեցին մտ-
նելով գնացին աղօթարանի մը քով ծունկ չո-
քելու մեծ խաչելութեան պատկերի մը առջև։
Մեր փրկութեանը համար մեռնող աստուծոյն
պատկերը տեսնելով Եղիսաբեթ, պսակը հա-
նեց, և իւր նստարանին վրայ դնելով՝ գետնին
վրայ ինկաւ աստուծոյ երկրպագութիւն ընե-
լու, գլխոյն վրայ ուրիշ զարդարանք մը չունե-
նալով բաց ի իւր մազերէն։

Դքսուհին զանիկայ այսպէս տեսնելով՝ բար-
կութեամբ ըսաւ. Ինչ ունիս Եղիսաբեթ օ-
բիորդ, և ինչ նոր բան կ'ընես, կ'ուզես դեռ որ
այս բոլոր բազմութիւնը քու վրադ ծիծաղին.
պէտք է օրիորդք միշտ շիտակ կենան և գետնին
վրայ չէյնան յիմար և պառաւ կանանց պէս, որ
իրենք զիրենք կը թողուն թոռմած վարդերու
պէս։ Մեզի պէս չէս կրնար շարժիլ, փոխանակ
գէշ դատարակուած օրիորդաց պէս ընելու.
արդեօք պսակդ խիստ ծանր է, ինչ կը վայլէ
գեղացիի մը պէս մէջքդ ծռած կենալը։ Եղի-
սաբեթ եռաւ և խոնարհութեամբ իւր կեսու-
րոջը պատասխանեց. Սիրելի տիկին, մի բարկա-
նար. ահաւասիկ աչքիս առջև աստուածս և թա-
գաւորս, այս քաղցր և բարեբար Յիսուսը, որ
սուր փուշերով պսակուած է, և ես որ անարգ
արարած մըն եմ, ինչպէս կրնամ իւր առջևը
կենալ մարդ բիսներով, ոսկւով և ակունքով զար-
դարուած. իմ պսակս, իրենը արհամարհել
կ'ըլլայ։ Այս ըսելով սկսաւ դառնապէս արտա-

սուէլ վասն զի Յիսուսի սէրը՝ արդէն իւր փա-
փուկ սիրտը վերաւորած էր. ուստի նորէն իւր
նստարանին վրայ խնալով՝ Թողուց որ Սոփիան
և Աշնէսը խօսին որչափ որ կ'ուզեն. և շարու-
նակեց նոյն եռանդով աղօթելը, իւր պատմու-
ճանը աչքերուն առջևը դնելով զոր արցունքո-
վը կը թրջեր։ Երկու իշխանուհիները՝ բազմու-
թեան առջև այսպիսի տեսարան մը ծածկելու
համար ստիպուեցան անոր պէս ընել իրենց
պատմուճաններով երեսնին ծածկելով, թէ-
պէտ և այս բանս ընելը իրենց անհաճոյ էր կ'ը-
սէ պատմագիրը։

Ա. Յոպիսի դիպուածներ պատճառ կ'ըլլային
սատակացընելու այն ատելութիւնը զոր արդէն
սկսած էր ազդել աշխարհքը սիրող սրտերու
վրայ. այս ատելութիւնը կարծես ալ աւելի կը
շատնար, քանի որ հասակաւ կը մեծնար։ Վեր-
ջապէս երբ կատարեալ հասակը ունեցաւ, ընդ-
հանուր նշանակ մը եղաւ հալածանաց և նա-
խատանաց բոլոր Նուբինկիայեն արքունեաց մէջ
Իշխանին ազգականներն, խորհրդականներն և
գլխաւոր հպատակները բոլորն ալ անոր դէմ
ելան, յայտնապէս կ'ըսէին թէ պէտք է զինքը
իւր հօրը քովը դարձընել և արուած խօսքն էտ
առնել. վասն զի այսպիսի կարգէ դուրս բարե-
պաշտ օրիորդ մը իրենց իշխանին համար չէր,
այլ պէտք է հարուստ և յիրաւի արքունական
ընտանութիւն ունեցող հարս մը գտնել իրեն
արժանի. և թէ աւելի աղէկ կ'ըներ մերձաւոր
իշխանի մը դստերը հետ ամուսնանալ, որ պէտք
եղած ատենը կարենայ իրեն օգնութեան հաս-
նիլ մինչդեռ Եղիսաբեթին հայրը խիստ հեռու
էր այս բանիս համար։

Երիտասարդ դպրին մտերիմ ընկերակիցները յարմար առիթ կը սեպին այս բաները գրդռելու որ Թոզու զՅղիսաբեթ և միւսանգամ խրկէ ի Հունկարիա. վասն զի շատ քաշուած և վախկոտ էր։ Դպրուհին ալ կը ջանար որպէս զի Եղիսաբեթ ստիպուի կամաց վանքի մը մէջ հաստատուր ըլլալ։ Սմենին աւելի Ագնէս կը հաւածէր զինքը իւր նախատինքներուն և անարգանքներով. անդադար խրէն կը կրկնէր, որ իւր կոչմանը դէմ գործած էր՝ աղախին մը չըլլալով։ Որ մը կ'ըսէ խրէն. Եղիսաբեթ օրիորդ, եթէ որ կը համարիս թէ իմ եղբայրս քեզի հետ պիտի ամուսնանայ, շատ կը խաբուիս. ապա թէ ոչ՝ պէտք է որ բնութիւններդ փոխես։ Այսպիսի առաջարկութիւններ ստիպուած էր ըսել ամէն օր։

Սաստիկ կերպով իւր վիճակին դառնութիւնը զգայ երբ հազիւ թէ դէռ մանկութեան հասակէն եղած էր. արդէն առանց օգնականի, առանց բարեկամի և առանց մարդկային մխիթարութեան մնացած էր. կերպով մը իւր հայրենիքէն աքսորուածի պէս հեռացած, հայրենական պաշտպանութենէն զրկուած, օտար արքունեաց մէջ, և անպաշտպան նշաւակ մը եղած նախատանաց և հալածանաց թէ իւր անձին և թէ աստուծոյն թշնամեացը։ Որ օրուան վրայ ալ աւելի աղէկ չանցաւ որ իւր կեանքը այս անհաստատ աշխարհիս մէջ պանդխտութիւն մը պիտի ըլլայ։ Իւր աստուծոյն գթութեանը ինքզինքը յանձնեց, ու սիրան աստուծոյ կը բանար, և ծածուկ լռութեամբ մը իւր ցաւերը անոր առջևը կը դնէր։

Կը ջանար իւր յատուկ կամքը խառնելու երկնային հօրը կամքին հետ, և կ'աղաչէր որ այս սիրելի կամքը իւր վրայ կատարուի այն ամէն փորձերով որ ինքն պատշաճ սեպէ։ Վերջապէս երբ իւր հանդարտութիւնը և համբերութիւնը խաչելութեան քով կը գտնար, կու գար միւսանգամ խառնուիլ սենեկապանութեան և խեղճ դստերացը հետ, զորս իրեն ընկերակից ընտրած էր, կարգէ դուրս սէր մը կը ցուցնէր անոնց. այս բանս ուրիշ կողմանէ դարձեալ պատճառ կ'ըլլար կրկնապատկելու երկու իշխանութեաց և պաշտպանութեաց ծիծաղը։

Սրբուհւոյն Եղիսաբեթի վարքը գրողներէն մէկը՝ հոս տեղս կը դադրեցընէ իւր խօսքը, և այս աղօթքը սրբուհւոյն կը մատուցանէ. Ո՜վ սիրելի սրբուհի Եղիսաբեթ, քու առաքինի երիտասարդութիւնդ կը մեծարեմ, և քաշած նախատանացդ և հալածանքներուդ վրայ կը ցաւակցիմ քեզի. ինչու համար քեզի պէս սրբութեամբ չեմ անցուցած իմ առաջի տարիներս. ինչու քեզի պէս համբերութեամբ չեմ կրած բոլոր հակառակութիւնները. քու երանելի մանկութիւնդ բարեխօս բռնելով կ'աղաչեմ քեզի իմ մանկական չարիքս անհետացընես. և քու նուիրական համբերութեամբդ իմ բոլոր պակասութեանցս և անհամբերութեանցս թողութիւնը ընդունիս։

Դ.

Եղիսաբեթ՝ հարսն կ'ընծայուի Լուդովիկոսի.

Ա.ղարաղատն աստուած՝ որ իւր Եղիսաբեթին աղաչանքներն և արտասուքն ընդունած էր, քիչ ժամանակէն վարձահատոյց եղաւ անոր համբերութեանը և հնազանդութեանը։ Իւր արքունեացը մէջ, միայն երիտասարդ Լուդովիկոս դուքսը՝ անոր դէմ անիրաւիլ չէր ուզած, և ամենուն յոյսը և ակնկալութիւնը փուճը հանելով՝ Եղիսաբեթին հաւատարիմ կեցաւ, զոր մանկութենէն ի վեր իւր նշանածը սեպած էր։ Իւր սէրն անոր վրայ օր ըստ օրէ կը շատնար, և թէպէտ մօրմէն ակնածելով պատշաճ սեպեր էր հրապարակաւ չյայտնել, սակայն այն մաքուր և սուրբ սէրը իւր սրտին մէջ խորունկ արմատներ ձգեր էր։ Մօրը նախատինքներուն և յորդորանացը կարծես թէ խուլ կ'ըլլար, ինչպէս նաև սուտ բարեկամացը խորհուրդ-

նեբուն և կրից ձայնին։ Ուրախութեան զար-
մանքով կը դիտէր աշխարհքին նախատինքնե-
ը, որոնց Եղիսաբեթ կը համբերէր, անոր կար-
գէ դուրս պարկեշտութիւնը, զգեստացը մէջ
անպարծոյ՝ կերպը, աստուածպաշտութիւնը և
ողորմածութիւնը, և երջանիկ կը սեպէր ինք
զինքը թէ որ կարենար իրմէ այս առաքինու-
թիւններն սորվիլ։ Եւ չէ թէ միայն իբրև իւր
հարսը՝ բնական ու ամուսնական սիրով զինքը
կը սիրէր, այլ իբրև քոյր մը ի Քրիստոս Յիսուս,
և այն այնպիսի սիրով մը, որ կարծես երկնա-
ւոր Հայր մը ազգած էր իր սրտին մէջ։

Որչափ չարամիտ անձինքը նենգաւոր խոր-
հուրդներով կ'ուզէին զինքը մոլորցնել, այն-
չափ սրտին մէջ հաստատմութիւն և գորով կը
զգար այս անմեղ օրիորդին վրայ. և որչափ զին-
քը արհամարհուած կը տեսնէր ուրիշներէն՝ իւր
աստուածպաշտութեանը և առաքինութեանցը
պատճառաւ, այնչափ ալ կարծես թէ հարկ կը
զգար զինքը սիրելու և պաշտպանելու։ Վերջա-
պէս յարմար առիթներ գտաւ, առանց իւր
մայրը դառնացընելու, երթալ և ի ծածուկ մը-
խիթարել զինքը տրտմութեան վայրկեաննե-
րուն մէջ։ Ա.յն միայնութեանը մէջ, աստուծմէ
զատ ուրիշ վկայ մը չունենալով՝ կը խօսէին ի-
րենց ծածուկ և փոխադարձ սիրոյն վրայ. իշ-
խանն ալ կը ջանար իւր փափուկ և քաջալերիչ
խօսքերովը՝ մեղմացընել այն վերբերը որոնցմով
ուրիշները վիրաւորած էին այս նորահաս հո-
գին։ Ա.յս քաղցր վերաբերութեանցը մէջ՝ կար-
գէ դուրս մխիթարութիւն մը կ'ունենար, և ա-
մեն անգամ՝ որ քիչ մը հեռաւոր ճանապար-

հորդութիւններ կ'ընէր, և վաճառաշահ քա-
զաքներէն կ'անցնէր, միշտ սակաւագիւտ կամ
ազնիւ երևցած բան մը կը գտնէր՝ իւր նշանա-
ծին ընծայելու. երբէք պարապ ձեռքով չէր
դառնար. կամ վարդարան մը, կամ փոքրիկ խա-
չելութիւն մը, կամ ջերմեռանդութիւն բերող
պատկեր մը, կամ կտրոց մը, քսակ մը, ձեռնոցներ
կամ ադամանդներ անոր կուրծքը զարդարելու
համար շղթայներ, ոսկիէ գնդասեղներ, վեր-
ջապէս անանկ բան մը որ Եղիսաբեթի աչքին
հաճոյական երևնար. և ի դարձին ուրախու-
թեամբ առաջ կը վազէր զինքը ողջունելու.
բաղկացը մէջ կ'առնուր զինքը, և քաղցրու-
թեամբ կը գգուէր, վերջէն բերած ընծայն
կուտար, իբրև առհաւատչեայ իւր սիրոյն, և
նշանակ մը որ զինքը յիշած էր ճանապարհորդ-
ութեանը մէջ։

Սակայն անգամ մը դուքսը որ ճանապար-
հորդութիւն կ'ընէր շատ օտարական ազնուա-
կանաց հետ, մուտացաւ Եղիսաբեթին բերելու
իւր սովորական ընծայն։ Իշխանուհին որ հալա-
ծանաց և նախատանաց պատճառաւ սկսած էր
վստահութիւնը թուլնալ, կարգէ դուրս կեր-
պով մը զգաց այս մուտացութիւնը, և իւր թըշ-
նամիներն ալ ուրախութեամբ այս բանս դի-
տեցին, և ուրախացան նշանակ մը սեպելով
զայն թէ Լոդովիկոս փոխուած է իւր մտացը
և սիրոյն մէջ։

Եղիսաբեթ Վարիլայի Կոդիէ իշխանին հան-
դիպելով, որ զինքը Հունգարիայէն բերած էր,
և որուն իւր հայրը արքային մանաւոր կերպով
մը յանձնած էր զինքը, և որ միշտ ձեռքէն է-

կածին չափ ուրիշ պալատականաց անիրաւութեանցը դէմ զինքը պաշտպանած էր, իւր տագնապը յայտնեց իրեն։ Մտիր ասպետը շատ վշտացաւ անոր սրտին վշտերը տեսնելով, խոստացաւ տիրոջը հետ խօսիլ, և քիչ ժամանակէն ալ առիթը գտաւ։

Դուքսը որսի համար զինքը միատեղ առնելով Վարդպուրկի շրջակայքը, երբոր երկուքը առանձին կը հանդիպէին այն անտառին մէջ, ուսկից Մսեէլպէրկ լեռը առջևնին կը տեսնէին, Դուրենկիայեն ամենէն բարձր լեռը, Կոդիկ ասպետը ըսաւ դքսին. Կը հաճիք, տէր իմ, պատասխանել հարցմունքի մը զոր ձեզի պիտի ընեմ։ Որուն իշխանը պատասխանեց՝ խօսիլ ազատօրէն վստահութեամբ։ Ան ատեն վրայ բերաւ իշխանը. կը փափաքէի գիտնալ թէ ինչ կը մտածէք Եղիսաբեթ օրիորդին համար, զոր ձեզի բերի. արդեօք անոր հետ պիտի ամուսնանաք, չէ նէ ձեր խօսքէն ետ դառնալով՝ իւր հօրը պիտի խրկէք։ Ան ատեն Լուդովիկոս մեկէն ոտը ելաւ, և ձեռքը դէպի Մսեէլպէրկ երկընցրնելով, կը տեսնես, ըսաւ, այդ լեռը որ մեր առջևն է. եթէ այս լեռը՝ իւր ոտքէն մինչև վերի ծայրը զուտ ոսկիէ ըլլար, և այդ ամէն հարստութիւնը իմ ըլլար՝ միայն այս պայմանաւ որ իմ Եղիսաբեթս ետ խրկեմ, երբէք չէի ըներ այդ բանը. թող մտածեն և ըսեն անոր վերայ ինչ որ կ'ուզեն. ես այս կ'ըսեմ։ զինքը կը սիրեմ, և աշխարհիս վրայ երբէք անկէ աւելի ուրիշ մէկ մը պիտի չսիրեմ։ կ'ուզեմ ունենալ իմ Եղիսաբեթս. ինծի աւելի սիրական է ինքն իւր աստուածպաշտութեամբն և առաքինու-

թեամբը, քան թէ աշխարհիս բոլոր երկիրներն ամենայն հարստութեամբը։ Կոդիկէ սիրտ առնելով՝ ասաց. Կ'աղաչեմ, տէր իմ, ինծի թոյլ տաք ուրեմն այս խօսքերը իրեն ծանուցանելու։ Իսկ իրեն, պատասխանեց դուքսը, և ըսէ որ երբէք ականջ պիտի չկախեմ ինչ որ իրեն դէմ ինծի խորհուրդ տալու ըլլան. և ասիկայ տուր իրեն՝ իբրև նոր առհաւատչեայ իմ հաւատարմութեանս։ Այս ըսելով իւր քսակին մէջ փընտռեց, և փոքրիկ հայելի մը հանեց կրկին ապակիով և արծաթի վրայ ագուցած, այս հայելին վրայ Յիսուսի խաչելութեան պատկերը կար։

Ասպետն ածանպարեց երթալ գտնել զԵղիսաբեթ, բոլոր բանծնելն իրեն հաղորդեց, ու հայելին ալ անոր յանձնեց։ Եղիսաբեթ մեծ ուրախութիւն խնացաւ և հնորհակալ եղաւ Կոդիկէ ասպետին, որ իրեն վրայ այսպէս խնամք կը տաներ իբրև հայր և իբրև բարեկամ մը. վերջէն հայելին բացաւ, և Յիսուսի պատկերը տեսնելով՝ եռանդով մը համբուրեց, և սրտին վրայ դրաւ։

Կը մօտենար այն ժամանակը յորում Լուդովիկոս իւր քրիստոնէական և իշխանական խօսքը պիտի կատարէր, և Եղիսաբեթ պիտի ընդունէր իւր համբերութեանցը վարձը, և նեղութեանցը մէջ պիտի մխիթարուէր։ Հազար երկերիւր տասնրութին, սրբոյն Գիլեանի տօնախմբութեան օրը, դուքսը իւր ութ և տասնամեայ հասակը կատարելով, ասպետական զէնքերը հագաւ Խմնաբի սրբոյն Գէորգայ եկեղեցւոյն մէջ ուրիշ շատ ազնուական երիտասարդ-

դաց հետ. Նաեւ մնալուի եպիսկոպոսն ալ եկաւ սուրբերնին օրհնեց։ Գրեթէ օտար իշխան չկար. վասն զի Լուդովիկոս յայտնեց թէ իւր ասպետութեան պատիւը աստուծմէ և իւր մեծերմինեբէն պիտի ընդունէր։ Հետեւեալ տարին պատերազմաւ մը զբաղեցաւ՝ Մայանս քաղաքին արքեպիսկոպոսին դէմ, որ Հերման դքսին հետ ունեցած քանի մը դժտութեանցը պատճառաւ՝ իւր որդին բանադրած էր։ Սակայն Լուդովիկոս անակնկալ ժամանակ մը Հէս քաղաքը մտնելով, եպիսկոպոսին և անոր բարեկամաց ստացուածքը յափշտակեց, և ստիպեց զինքը որ հաշտութիւն խնդրէ։ Ֆիւլտ քաղաքին մէջ իրարու հետ տեսնուեցան հազար երկերիւր տասնուհինգ. իշխանը հանդիսական կերպով իր բանադրանքէն արձակուեցաւ, և կատարեալ հաշտութիւն եղաւ մէջերնին։ Այս առաջին պատերազմէն դառնալէն վերջը՝ Լուդովիկոս իր միտքը յայտնեց՝ նշանածին հետ ամուսնանալու, և ամանկով լուեցընելու ամէն նախատինքները և անիրաւ խորհուրդները որոնց Եղիսաբեթ զոհ եղած էր։ Ոչ ոք համարձակեցաւ այսպիսի հաստատուն կամքի մը դէմ կենալ, և մարդկան խորամանկութիւնը անկարող գտնուեցաւ՝ երկու սրտերը իրարմէ բաժնելու զորանք աստուած իւր յաւիտենական խորհրդոցը մէջ միացուցած էր։ Ջարմացէք, կ'ըսէ Եղիսաբեթի կենսագիրներէն մէկը, զարմացէք տեսնելով թէ ինչպէս այս երջանիկ երիտասարդը և ողջախոհ փեսայն ամուսնանալով՝ խուլ կ'ըլլայ օտար և անիրաւ խորհուրդներուն և հարբաստութեան փափաքին, գիտնալով որ բարեպաշտ

ամուսին մը այն բարի բաժինն է՝ զոր աստուած սահմանած է անոր՝ որ երկրիս վրայ աղէկութիւն ըրած է։

Հազար երկերիւր քսանին՝ հարսանիքը շատ հանդիսով կատարուեցաւ Վարդապուրկ քաղաքին մէջ։ Դուքսը Հեսի և Դուրինկիայի բոլոր կոմսերը հրաւիրեց, եկան նաև շատ ասպետներ և վահանակիրներ։ Բոլոր հրաւիրեալք իւր ծախքովը Իվնաբի մէջ բնակեցան։ Իշխանները ամենքը մէկ բերան Մէյնհարտ կոմսին և Վարիայի իշխանին հրամայեցին հարսը եկեղեցին տանելու պատիւը, որովհետև մինը տարի առաջ Հունգարիայէն զանիկայ բերած էին, և հիմա կերպով մը կնիք պիտի դնէին իրենց Ամնապարհորդութեանը։ Եղիսաբեթին ընկերացած էին գաւառին բոլոր ազնուական տիկնայքը և օրիորդները։ Պատմագիրները ամենևին չէն զրուցեր թէ ինչ տպաւորութիւն ըրաւ այս՝ ազնուական տաց վրայ՝ երբ տեսան անոր յաղթանակը, որ այնչափ ժամանակէն ի վեր նպատակ եղած էր իրենց նախատանացը և հալածանաց։ Բայց պարծանքով կը պատմեն ձայնաւոր պատարագին ներդաշնակ երաժշտութիւնը, կոչնաց, նիզակախաղութեանց և պարերուն Ամնութիւնը և փառաւորութիւնը, որ իրեք օր տևեց, և ուրանց մէջ երիտասարդ ասպետներէն շատերը համբաւաւոր եղան։ Այս իրեք օրուան հանդիսէն ետքը՝ իշխանները և իրենց տիկնայքը ետևէ ետև սկսան իրենց բերդերը երթալ երկու նորահաս ամուսինքը՝ ալ անկէ ետքը միայն իրարու կը վերաբերէին։ Լուդովիկոս քսան տարեկան էր, իսկ Եղիսաբեթ իւր երեքտասանա-

մեայ հասակին մէջ. երկուքն ալ թէ սրտով և թէ հասակաւ անմեղ. երկուքն ալ ոչ միայն մարմնով, այլ նաև սրտով և հաւատարմութեամբ իրարու հետ միացած։

Ե

Դուքան Լուդովիկոս.

Փեսայն զոր Աստուած սահմանած էր իր գըթութեամբն իւր բարեպաշտ աղախնոյն, և զոր կը սիրէր Եղիսաբեթ կարգէ դուրս գորովով, յիրաւի իրեն և իւր սիրոյն արժանի էր։ Դուքինկիայի և սրբուհւոյն բոլոր պատմագիրները՝ կը միաբանին դքսին սրտաշարժ վարքը ստորագրելու. և բաց ի իւր փառաւոր համանուն՝ սուրբ Լուդովիկոս Գաղղիոյ թագաւորէն՝ իւր դարուն պատմութիւնը ուրիշ իշխան մը չերևցնէր որ իր երիտասարդական հասակին մէջ այսպիսի գերագոյն ատենանաւ մը բոլոր քրիստոնէական և իշխանական առաքինութեանց տեր ըլլայ։ Իւր հոգւոյն մաքրութիւնն և ազնուականութիւնը՝ ամենուն յայտնի կ'ըլլար նաև արտաքին կերպարանքէն. այրական գեղեցկութեամբը հռչակաւոր էր բոլոր ժամա-

նակակցացը մէջ. ամէն մտաենդ իրենը կը գո-
վէն անոր հասակին կատարեալ չափակցութիւ-
նը, դիմաց վայելչութիւնը, ոսկեգոյն և երկայն
մազերը, և իւր կերպարանքին քաղցր և զուարթ
գեղեցկութիւնը։ Իւր երեսացը քաղցր ժպտե-
լուն՝ անկարելի էր դէմ կենալ. քալուածքը
ազնուական և մեծավայելուչ էր, ձայնն ալ
կարգէ դուրս քաղցրութիւն մը ունէր։ Ոչ ոք
կրնար զինքը տեսնել և չսիրել. բայց ծաղիկ
հասակին մէջ զինքը հոչակաւոր ընողը մարմնոյ
և հոգւոյ մաքրութիւնն եղաւ, զոր երբէք թե-
թև բծով մը ալ չարատաւորեց. պարկեշտ և
ամենթխած օրիորդի մը պէս՝ դիւրաւ կը կարմ-
ըէր, և խօսքերուն մէջ մեծ զգուշութիւն կը
բանեցընէր. չէ թէ միայն իւր առջև և անմեղ
տարիներուն մէջ այս մաքրութեան գանձը կըը-
ցաւ զգուշութեամբ պահել, հապա ունեցաւ
հաստատուն և արմատացած կամք մը, որ բոլոր
կենացը կանոն եղաւ, անմոլուն ընդդիմամար-
տութիւն մը՝ բանեցընելով ամենէն աւելի յա-
ճախեալ և վտանգալից փորձութեանց դէմ։

Ինքն իւր անձին տեր եղած՝ պատանեկու-
թեան ծաղիկ հասակին մէջ, վերջապանամեայ
Գերմանիոյ հարուստ և զօրաւոր գաւառներուն
մէկուն տեր ըլլալով, իշխանութեանց, Հոխու-
թեանց, և այն ատենուան յաւելալ վիճակի մը
մէջ, և մանաւանդ նենգաւոր խորհրդակիցնե-
րէ և մարդերդներէ պաշարուած ալ ըլլալով,
որ կը ցանկային իւր առաքինութիւնները կոր-
սընցընելու՝ ամենեւին մոռի չբրաւ անոնց, և թե-
թև կերպով մը ալ չապականեց այն հաւա-
տարմութիւնը՝ զոր խոստացած էր աստուծոյ,

թէ իւր անձին նկատմամբ և թէ անոր զոր Աստուծոյ համար կը սիրէր։ Ա.յս ըսածներնուս ստուգութիւնը ցուցընելու համար կ'ուզենք երկու դէպք պատմել, զոր ժամանակակից պատմագիրները մանրապատում կ'աւանդեն։

Իւր հօրը մահուընէն քիչ վերջը, երբ օր մը իւր մօրը Սոփիայ դրսուհւոյն հետ՝ Եպեսպէրկ քաղաքին բերդին մէջն էր, ազնուական իշխան մը ուզեց անոր անմեղ երիտասարդութիւնը փոշեել։ Մերձաւոր քաղաքի մը մէջ նորահաս հրաշագեղ օրիորդ մը գտնելով՝ հրամայեց բերդը բերել զինքը, և իշխանին սենեակը տարաւ. այս բանիս համար պէտք էր գաւթէ մը անցնիլ՝ ուր Եղիսաբեթ այն միջոցին իւր ընկերակցաց հետ կը խաղար։ Եղիսաբեթ այս օտարական օրիորդը տեսնելով, սկսաւ դառնապէս արտասուել և երբ իրեն հարցուցին արտասուացը պատճառը, պատասխանեց. Անոր համար կ'ուլամ որ կ'ուզեն իմ եղբօրս պատուական հոգին առնել և կորսնցընել։ Ա.յն միջոցին երիտասարդ դուքսը իւր անկողնոյն վրայ կը հանգչէր և երբ լսեց իւր դրանը զարնուիլը. շուտ մը իւր անկողնէն ցատքելով՝ բանալու գնաց։ Օրիորդը ասպետին հետ մնաւ, և երբ նստան. Օրիորդ, կ'ըսէ Լուդովիկոս, ինչ բանի համար հոս տեղս եկար։ Ձեմ գիտեր ամենևին, տեր իմ, պատասխանեց օրիորդը։ Ա.յն ատեն ասպետը կ'ըսէ. Կամաւ քեզի բերի, որպէս զի ձեր հանգչելը կատարէք։ Ա.յս խօսքերը բարեպաշտ և խնամտուն իշխանը լսելով, իւր սենեկապահներէն մէկը կանչեց և իրեն հրամայեց որ քանի մը ոսկի դահեկան բերէ. և օրիորդին տալով ըսաւ. Ե-

բեսիդ ծածկոյթը իջեցու, և այս պզտի ընծայն առ իբրև նշանակ մը օրհնութեան, որով կա-բենաս ուրախութեամբ դառնալ քու ընտա-նեացդ քով։ Վերջէն մէկ դի առնելով անար-ժան ասպետը, ասպարեց որ այս օրիորդը իւր ծնողացը յանձնէ. դոյզն վտանգ մըն ալ հան-դիպելու ըլլայ իրեն, վրայ բերաւ, կ'երդնում որ զքեզ կախել կու տամ։ Եղիսաբեթ տեսնե-լով որ օտարականը այսչափ շուտով մեկնեցաւ, իւր արցունքը սրբեց, և ուրախացաւ աստու-ծոյ ընդհակակ ըլլալով։

Ուրիշ անգամ մը Իշնաք քաղաքին մէջ եր-բոր իշխանը պատուհանէ մը կընայէր հրապա-րակի մը վրայ, ուր կը պարէին, ներկայ գտ-նուողներէն մէկը քաղաքացւոյ կին մը իրեն ցը-ցուց, որ նշանաւոր եղած էր իւր գեղեցկու-թեամբը, և վրայ բերաւ որ եթէ իրեն հաճոյ է, ինքը պատրաստ էր այդ կինը իրեն բերել։ Իշխանը բարկացած դէպ ի անոր դարձաւ, ըսաւ. թէ որ ուրիշ անգամ համարձակիս այդ-պիսի խօսք մը բերնէդ հանել, աբքունիքես զգ-քեզ կը մերժեմ։ Ինչպէս կը համարձակիս ին-ծի առաջարկելու այսպիսի մեղքի մը հաղորդ ըլլալ, որ ամէն օր կրնամ աստուծոյ առեանը կանչուիլ դատուելու և պատժուելու։ Այսպի-սի սակաւագիւտ և արիական առաքինութիւն մը չէր կրնար ուրիշ հիմն ունենալ բայց եթէ գործունեայ հաւատք մը, և յեկեղեցւոյ սահ-մանուած ամէն պատուիրանաց գործնական կրթութիւնը։

Եւ յիրաւի. վասն զի ամէն օր հանդիսով կը կատարուէին իր առջևը եկեղեցւոյ սուրբ խոր-

հուրդները, որոնց ներկայ կը գտնուէր բարի օրինակ առնելու բարեպաշտութեամբ մը։ Նախնձայրդ պաշտպան էր իրաւանց եկեղեցւոյ և վանորէից. ու երբ անգութ անիրաւութիւն մը կամ աշխարհական հպատակացը ագահութիւնը կը խռովէին աստուծոյ պաշտօնէից հանդարտ և բարեբար կեանքը, շուտ մը ձի կը հեծնար, որպէս զի նիզակը ձեռքը երթայ պաշտպանել աստուծոյ և խեղճ ժողովրդեան իրաւունքը։ Այնչափ աւելի կրօնաւորաց ընկերակցութենէն կ'ախորժէր, և հասարակօրէն իւր շքեղապատութեանցը տեղը՝ խաղաղութեան ժամանակ՝ Բենեդիկտեանց աբեղայարանն էր, ուր իւր շիրիմը պատրաստել տուած էր։ Հոն հասնելուն պէս, իւր առաջին այցելութիւնն աղքատաց և պանդուխտներուն հիւրանոցն էր, ուր կը ջանար մխիթարել հիւանդները և տկարները իր ներկայութեամբը և քաղցր խօսքերով, և կը թողուր իրենց իբրև ողորմութիւն իւր հարուստ զգեստուցը մէկ մասը. կամ ուրիշ նուէր մը։ Ու երբ միւսանգամ իւր պալատը կը դառնար, կը ջանար իւր վարուցը վրայ ցուցընելու ինչ բարի օրինակ որ կրօնաւորաց վանքը առած էր։ Այպաշխարութեան համար ամենեւին աղած կերակուրներ կամ շաքարեղէն չէր ուտեր, և այն ժամանակին Գերմանիոյ իշխանաց սովորութեանը հակառակ՝ երբեք գարեջուր չէր խմեր. իսկ գինի՝ միայն իւր հիւանդութեանը ժամանակ։ Այս անկեղծ և քաղցր եռանդը քրիստոնէական կենաց խստամբեր պարտքերու՝ պատճառ կ'ըլլար աւելի պայծառ կերպով մը երևցընելու անոր վրայ բարեպաշտ ասպետի մը ձիրքերն։

Ոչ ոք իւր ժամանակակից իշխաններէն զինքը կը գերազանցէր քաջութեամբ, բնական ուժով, և ոչ իսկ մարմնոյ կրթութեամբը։ Իր քաջութիւնը յայտնեց առթի մը մէջ զոր նոյն ատենն պատմագիրները խնամքով կը յիշատակեն։ Կայսրն Իրէն առիւծ մը պարգևած էր. մէկ առաւօտ մը երբ դուքսը հաղիւ թէ հագուած, անդէն և անպաշտպան իւր գաւթին մէջ կը շրջագայէր, առիւծը տեսաւ որ իւր գառագիղէն փախած դէպ ի իրեն կը գիմէր մանչերով։ Առանց ահաբեկելու քաջութեամբ սպասեց, իւր բուռը ցրցուց անոր, և ձայնով սպառնացաւ՝ իւր վստահութիւնը աստուծոյ վրայ դնելով։ Առիւծը շուտ մը եկաւ իւր ոտքին քով նստաւ, պոչը շարժելով. պահապան մը որ պատին քով կեցած էր, գազանին մանչերը լսելով իւր տիրոջը վտանգը տեսաւ, և օգնութիւն պոռաց։ Առիւծը թողուց որ զինքը շղթայով կապէն, առանց դէմ կենալու. այն կատաղի գազանին վրայ բանեցուցած իշխանութեան մէջ շատ մարդիկ տեսան յայտնի առհաւատչեայ մը երկնային խնամոյ՝ որուն արժանի էր դուքսը իւր աստուածպաշտութեամբն և նորահաստակ եղեսաբերութիւն սրբութեամբը։ Այդ քաջութիւնն, որուն ուրիշ այլ և այլ հաւաստիքն ալ մէջ պիտի բերէ այս պատմութիւնը, հետը միացուցեր էր գերազանց կերպով այնպիսի ազնուական մարդասէր կերպ մը, զոր սուրբն Գրանտիսկոս Ասսիզացի իւր հոչակաւոր ժամանակակիցը՝ Գոյր գթութեան անուանեց։ Աժեն կանանց հետ կարգէ դուրս մեծարանքով և պարկեշտութեամբ կը վարուէր. ամենուն

հետ, և մանաւանդ իրմէ ստորինները՝ քաղ-
ցրութիւն և անկեղծ սէր կը ցուցնէր։ Կ'ա-
խորժէր հասարակ մարդկան հաձոյքը կատա-
րել. քնաւ չէր վիրաւորեր և ոչ մէկը. հպար-
տութեամբն և կամ ցրտութեամբ չէր արհա-
մարհեր. քաղցր և պարզ ուրախութիւն մը,
սիրալիր ընտանութիւն մը կը տեսնուէր իւր ա-
մէն մտերիմ և ընտանի կենակցութեանցը մէջ։
Աստուածաբանները անոր առատաձեռնութիւնը կը գո-
վէին. կոմերն և իշխանները՝ որ իւր աբքունի-
քը կու գային, իրենց ատոիճանին յարմար ա-
մէն մեծարանք և պատիւ կը գտնէին իրմէ։

Ա. յս ասպետական առաքինութեանց վրայ
կ'աւելցնէր քրիստոնեայ իշխանի մը բոլոր ա-
ռաքինութիւնները։ Միակ սաստիկ կիրքը՝ ո-
րուն բոլոր պատմագիրները կը վկայեն, արդա-
րութեան կիրքն էր. այնպիսի քաջութեամբ և
եռանդեամբ պաշտպան էր արդարութեան, որ
ամէն հարկաւոր խստութիւն կը բանեցընէր
առ ի պատուհասել արդարութեան օրինացը
զանցառուները։ Իւր աբքունիքին հեռացուց, և
առանց թողութեան զրկեց իրենց պաշտօնե-
րէն կամ գործերէն այն իշխանները որ հպա-
տակներն կը չարչարէին. և զանոնք որ հպարտու-
թեամբ կը վարուէին աղքատաց հետ, կամ բրո-
նական գործեր կ'ընէին, և կամ խաբէական ու
չարամիտ ամբաստանութիւններ իրեն կ'ընէին։
Հայհոյիչներն և այն մարդիկները որ չէին ամա-
չեր աղտեղի խօսքեր ըսելու, շատ մը հրապա-
բակաւ կը պատժէր։ Աստուծոյ օրէնքը արհա-
մարհողներուն դէմ խիստ էր, և ընդ հակա-
ռակն համբերող և ներողամիտ անոնց՝ որ իրեն

դէմ կը պակսէին։ Երբ իւր ծառայներէն ո-
մանք իրեն վայելուչ մեծարանքէն կը պակսէին,
բաւական կը սեպէր ըսելու. Սիրելի որդիք, ու-
րիշ անգամ մի՛ ընէք. վասն զի իմ սիրտս կը
վշտացընէք։

Բոլոր իւր որոշմանցը մէջ փոքրձուած խոհե-
մութիւնը կը ցուցընէր, իւր զինուորական աբ-
շաւանքը, քաղաքական գործերը այնպիսի ճար-
տարութիւն և նախատեսութիւն մը կը ցու-
ցընէին, զոր դժուար էր միաբանելը իւր երի-
տասարդութեանը և բարուցը պարզութեանը
հետ։ Եռանդեամբ և փութով կը զբաղէր տե-
ղութեան կառավարութեանը պահանջած գոր-
ծերուն. իւր արդարութիւնն յամենայնի փոր-
ձուած էր. և իր մէկ պզտի խօսքն ալ՝ այնպիսի
վստահութիւն մը կ'ազդէր՝ իբր թէ հանդիսա-
ւոր երդում մը ըրած ըլլար։ Գեր ած և առա-
տաձեռն էր առ աղքատս, կարգէ դուրս փոյթ
մը կը ցուցընէր իւր ամէն կարգի ժողովրդեան։
Կամերոնն և երկրին մեծ իշխանաց՝ անարգ
գիւղական մը հաւասար խստութիւն կը բա-
նեցընէր, եթէ հարստահարութեան կամ ա-
ւարառութեան ամբաստանութիւն մը վրանին
ըսէր։ Որոնք որ՝ որ և իցէ անձէ մը նախատուած՝
վստահութեամբ իրեն կը դիմէին, երբէք ընդ-
ունայն չէին ելլեր։ Պիտի տեսնենք զինքը շատ
անգամ պատերազմի դաշտերուն մէջ ելած
վրէժխնդրութիւն ընելու իւր ամենէն աւելի
խանարհ հպատակաց եղած նախատինքներուն
համար։ Ա.յսպիսի իշխանի մը տակ՝ Դուքին-
կիայի բարոյական և նիւթական յաջողութիւնն
պէտք էր ակնել. ժամանակին պատմագիրները

կ՝աւանդէն թէ ինչպիսի երջանկութիւն մը վայելեց երկիրը՝ իր սակաւատեւ տէրութեանը ժամանակ, և թէ ինչ գեղեցիկ արդիւնքներ՝ իրեն առաքինութեանց օրինակը ցրցուց. ազնուականք իրենց գլխաւորին հետևող եղան. ալ անկէ ետքը չէր լսուեր հպատակաց գանգատիլը իրենց իշխանաց վրայ թէ զիրենք կը տանջէին. ժողովուրդը հնազանդ և հանդարտ էր. միաբանութիւն, խաղաղութիւնն և արդարութիւնը ամէն տեղ կը տիրեր. թէ իր հպատակները և թէ օտարք ամենքը մէկ ձայնով այն երջանկութիւնը կը գովէին, զոր Ղուբինկիացիք պարտկան էին Լուդովիկոս դքսին առաքինութեանցը։ Համառօտ ըսենք, բոլոր իւր բարքը և կեանքը կենցային բովանդակուիլ այն ազնուական ձրից մէջ զոր ինքն վրան ցրցուցեր էր՝ իւր առաջի տարիներին ի վեր, որոնք էին աստուածպաշտութիւն, սրբութիւն և արդարութիւն։ Լուդովիկոս արդարացուց ուղղափառ դարերուն այն փառաւոր կարծիքն՝ որ հիմնական նամանութիւն մը կը ճանաչէին, քահանայից և ասպետաց մէջ, և որոնց համար ճշմարիտ ասպետները՝ քահանայներն արդարութեամբ և հաւատքով զինեալ էին. ինչպէս նաև քահանայներն ալ՝ ասպետք էին աստուծոյ բանին և աղօթից։

Զ.

Լուդովիկոս և Եղիսաբեթ՝ սուրբ ամուսին։

Իշխան մը որ այսպիսի կատարեալ օրինակ մը կ'ընծայէր բարեպաշտ քրիստոնէի մը, այս երկրիս վրայ ուրիշ քաղցրագոյն և աւելի գեղեցիկ վարձատրութիւն մը չէր կրնար ընդունել՝ բայց եթէ սրբուհւոյ մը սէրը։ Տեսանք թէ ինչպէս Եղիսաբեթ ուրիշ կապով մը միացած էր աշխարհիս կենաց հետ, բայց միայն սուրբ սիրոյ մը կապով՝ զոր բարեպաշտ մտածութեամբք որոշէր էր։ Լուդովիկոս ալ իւր կողմանէ երբեք սուտ չհանեց իւր առաջի տարիներուն ազնուախոհ հաւատարմութիւնը։ Եւ սակայն Եղիսաբեթի վրայ ալ կը տեսնուէր այն ամէն բան ինչ որ կրնար դպչիլ կամ հրապուրել նոր-բահաս սիրտ մը. աստուծոյ առջև զարդարուած ըլլալով իւր աստուածպաշտութեամբն և խոնարհութեամբը, զարդարուած էր նաև մարդկան առջև ամենայն արտաքին ձիրքերով։

Այն պատմագիրներն որ անոր երեսացը նը-կարագիրը պահած են, կ'աւանդեն թէ կատա-րեալ և կանոնաւոր գեղեցկութիւն մը ունէր. անանկ որ անկարելի էր անկէ աւելին փափա-քիլ։ Մարմնոյն գոյնը թուխ և մաքուր, մազերը սեաւ, հասակը անհամեմատ՝ ընդհանուր և մեծ-վայելչութեամբ, քայլուածքն ալ ծանր և ազ-նուական, աչուքները՝ գորովոց, գթութեան և ողորմութեան վառարան մըն էր. դիւրին է ը-սելը թէ այս երկրաւոր գեղեցկութիւնը՝ հան-դիպատկեր մըն էր իւր հոգւոյն անմահ գեղեց-կութեանը։

Բայց իրենց սրտերուն միութիւնը՝ ոչ թէ ի-բարու վրայ ունեցած համարման և կամ բնա-կան սիրոյ մը վրայ հաստատուած էր, այլ հա-սարակաց հաւատքի մը վրայ, և խստակրօն կրթութեանց և պկսպէս առաքինութեանց՝ որ այս հաւատքը կ'ուսուցանէ, և այն ամէն պարտքերու վրայ զոր կը պահանջէ։ Իւր երի-տասարդութեամբը և գրեթէ մանկական սի-րոյն եռանդեամբը զոր ունէր երկանը վրայ, ե-զիսաբեթ երբէք չէր մոռնար՝ որ իւր գլուխն էր, ինչպէս Ցիսուս Քրիստոս եկեղեցւոյ գլուխն է. և թէ պարտական էր յամենայնի հնազան-դիլ ինչպէս եկեղեցին Ցիսուսի Քրիստոսի։ Ուս-տի իւր սաստիկ սիրոյն հետ՝ կարգէ դուրս մե-ծարանք մը ունէր. դիսին ամէն դոյզն նշանին և դոյզն խօսքին փութով կը հնազանդէր. ա-մենայն խնամք կը բանեցրնէր՝ որպէս զի իւր գործերէն և ամենայն խօսքերէն բան մը չկարե-նայ զինքը վիրաւորել կամ սրտնեղութիւն մը տալ։ Սակայն այն լուծը՝ որուն կը հնազանդէր,

եկեղեցւոյ կամացը համեմատ լուծ մէն էր՝ սի-
բոյ և խաղաղութեան լուծ մէ. վասն զի Լուսա-
վիկոս իրեն աղաստութեանը թողեր էր զինքը
աստուածպաշտութեան և գթութեան կրթու-
թեանցը մէջ՝ որոց միայն ետևէ էր Եղիսաբեթ,
որով կը քաջալերեր և կը զօրացնէր զինքը
օգտակար կրթութեանցը մէջ՝ բարեպաշտ ե-
ռանդեամբ մը, բաւական կը սեպէր միայն ի-
րեն եռանդը չափաւորել՝ երբ չափը անցած կը
տեսնէր. իրեն աղդարարութիւնները սիրալիր
խոհականութեամբ մը լի էին, զորոնք միշտ մը-
տադիրութեամբ կ'ընդունէր Եղիսաբեթ.

Լաւ կը տեսնէր, կ'ըսէ պատմագիրն, որ զաս-
տուած բոլոր սրտով կը սիրէր, և այս մտած-
մունքը զինքը կ'ապահովցրնէր. Եղիսաբեթն ալ
իւր կողմանէ՝ դքսին աստուածպաշտութեանը
և խնամտութեանը վրայ վստահ՝ իւր մահա-
ցուցումներէն բան մը իրմէն չէր ծածկեր, ո-
րովհետև լաւ գիտէր թէ բնաւ արդելք չէր ըն-
լար իւր կամքը կատարելու առ սէրն աստու-
ծոյ։ Ա.յսպիսի փոխոխակի սիրով երկուքն ալ
քաղցրութեամբ կը յորդորէին մէկմէկ կատա-
բելութեան Ճանապարհին մէջ յառաջադիմե-
լու. այս սուրբ նախանձը զիրենք կը զօրացրնէր
և կը հաստատեր աստուծոյ պաշտամունքը մէջ.
իրենց միութեան քաղցրութիւնը՝ գեղագոյն
զգացմունց և սիրոյ հաճոյք մէն էր. իրենց մա-
քուր և պարզ սիրոյն յատկութիւնը կը ցայտ-
նուէր մանաւանդ այն գորովալի սովորութե-
նէն՝ զոր միշտ պահած էին, մէկմէկ քայլ և
եղբայր կոչելու՝ նոյն իսկ իրենց ամուսնութե-
նէն ալ ետքը՝ իբրև թէ իրենց միատեղ անցու-

ցած մանկութեան յիշատակը միանձնեռաւորել մը ուզելով, և իրենց բովանդակ կեանքը միակ սիրով մը խառնել։ Իրարմէ անբաժան ըլլալու երջանկութիւնն իրենց համար այնչափ անհրաժեշտ էր, և մէկ մէկու վրայ ունեցած ողջախոհ սէրը այնչափ զօրաւոր, և այնչափ սաստիկ իրենց հոգւոյն մտերիմ միաբանութիւնը, որ չէին կրնար մէկ մէկէ բաժնուած կենալ։ Նաև քիչ մը ատեն ալ։ Ուստի երբոր դռքսը պզտի ճանապարհորդութիւններ կ'ընէր, իւր սիրական Եղիսաբեթը միշտ մէկ տեղ կ'առնուր, և ինքն ալ ուրախութեամբ դքսին հետ կ'ընկերանար, թէպէտ և յաճախ կը հանդիպէր վտանգալից և դժուար ճամբայներէն անցնիլ, և հեռու տեղուանք շրջագայիլ, և սաստիկ մրրիկներու հանդիպիլ։ Սակայն ոչ սառամանիք, ոչ ձիւն, ոչ սաստիկ ջերմութիւն և ոչ հեղեղք՝ կրնային իրեն արգելք ըլլալ. որովհետև անկարելի էր դքսէն բաժնուած կենալը։

Սակայն երբեմն կը պատահէր որ Լուդովիկոս ստիպուած կ'ըլլար, իւր թագաւորական գործերէն, հեռու ճանապարհորդութեանց ձեռք զարնել, իւր երկրէն հեռանալ. և իւր կիներն միատեղ չառնուլ։ Բայց այս հեռաւորութեան առիթներն՝ պատճառ կ'ըլլային իրենց փոխխակի հաւատարմութիւնն և գորովը աւելի հաստատելու։ Նորահաս դքսին չարամիտ բարեկամներն՝ այն միջոցներն յարմար ժամանակ կը սեպէին և կը ջանային զինքը յորդորելու, որպէս զի ինքզինքը մարմնոյ հակամիտութեանցը տայ, որպէս զի իւր սրբութեանն և իւր առ Եղիսաբեթ ունեցած սիրոյն դէմ չարու-

թեան յաղթանակ՝ մը կանգնեն։ Օր մը իւր աշակերտներէն ոմանք՝ իրեն կ՚ըսեն. Տէր, ինչ բանի համար ուրիշ իշխանաց և տերանց պէս չես ըներ. միշտ կնոջդ հետ չես կրնար ըլլալ, և ոչ ալ համբերել քու երիտասարդութեանդ փափաքանաց։ Լուդովիկոս նախ լռեց, բայց տեսնելով որ շատ վրայ կու տային, բարկութեամբ մը պատասխանեց. Պարոններ, եթէ կը փափաքիք իմ առջև հաճոյ ըլլալ, զգուշացէք ինծի հետ ուրիշ ատեն այսպիսի լեզու մը բռնելէն, որովհետև կին մը ունիմ, և պարարկան եմ իրեն իմ հաւատարմութիւնս պահելու։ Եղիսաբեթ՝ երբ իւր ամուսինը կը հեռանար, իշխանուհւոյ զգեստները մէկ դի կը դնէր, և այրի կանանց զգեստը կը հագնէր, և անոնց պէս գլուխը քողով կը ծածկէր. և այնպէս կը կենար դքսին ճանապարհորդութեան ժամանակը, անոր վերադարձին սպասելով աղօթքով, տքնութեամբ և ամենայն խստակրօն մնացուցումներով։ Բայց երբ կու գային ծանուցանելու իւր դքսին մեռնելը, կ՚ուռնապարեր ամենայն զգուշութեամբ և պայծառութեամբ զարդարուիլ, ինչ որ իւր աստիճանը կրնար պահանջել։ Ոչ եթէ, կ՚ըսեր իւր հետը եղողներուն, աշխարհային հաճոյից կամ ուռնայնասիրութեան համար այսպէս կը զարդարուիմ, աստուած ինծի կը վկայէ. այլ միայն քրիստոնէական սիրոյ համար, որպէս զի իմ եղբօրմէս վերցրնեմ ամենայն տժգոհութեան և մեղայ առիթը, որ չըլլայ թէ բան մը իրեն անհաճոյ ըլլայ իմ վերաս, որպէս զի միայն զիս սիրէ՝ առ սէրն աստուծոյ, և աստուած որ մեր միութիւնը պա-

հած է երկրիս վրայ, մեղմ երկուքնեբնուս ալ շնորհէ միանալ յաւիտենական կենաց մէջ։ Յետոյ դքսին ընդ առաջ կ'երթար կարգէ դուրս ուրախութեամբ և զուարթութեամբ, և որչափ որ մէկ տեղ էին՝ ամեն ջանք կ'ընէր հաճոյանալու իր առջևը և իր սրտին. կերակրոյ ատեն՝ անկարելի էր իւր դքսէն հեռու նստիլ. միշտ քովն աթոռին վրայ կը նստէր, և այս բանս այն ժամանակին աղնուական տիկնայց սովորութեանը դէմ էր։

Սամսկով չէ թէ միայն կը ջանար կրցածին չափ իւր փեսայէն չհեռանալ, այլ և կ'խմանար թէ իւր ներկայութեամբը նորահասակ աստուծոց թեթև խօսակցութեանց սանձ մը կը դրնէր. և յիրաւի բան մը չկրնար աշխարհասէր սրտերու վրայ այնչափ պատկառանք մը ազդելու, ինչպէս երկու նորահաս սրտերու մէջ եղած առաքինութեանց տեսարան մը։ Ս.յսպէս միացած սուրբ կապով մը, խոնարհութեամբ և մաքրութեամբ լի սիրով և բարի յօժարութեամբ աստուծոյ և մարդկան առջև մէկ մէկու վրայ կարգէ դուրս սէր մը և գորով մը ունէին. բայց այնպիսի սէր մը որ երկուքն ալ միշտ առ աստուած կը տանէր. երկուքն ալ երկնից և երկրի կ'ընծայէին քաղցր և բարի օրհնակ առնելու տեսարան մը, և առաջուց կը հառաջտեին այն գեղեցիկ և փառաւոր նկարագիրը՝ զոր ուղղափառ գերագոյն բանաստեղծ մը սրբազան և երկնային ամուսնութեան մը վրայ գրեց։

Է

Ճգնութիւնք սրբուհւոյն Եղիսաբեթի.

Մանկահասակ իշխանուհին Եղիսաբեթ կը վայելէր առջի տարիներուն բարեբաստութիւնը, և այն քաղցր ուրախութիւնն կենաց մանկութեանը՝ որուն չկրնար հաւասարիլ որ և իցէ ապագայ ուրախութիւն մը, և զոր որ և իցէ թըշուառութիւն մը չկրնար մոռցընել։ Մեր տկար սրտերուն մէջ այնչափ աւելի կեանքը կը դառնանայ որչափ որ այն մանկութիւնը մեզմէ հեռանայ, և իրենց յիշատակութիւնը բաւական է ամենայն դժնդակ ցաւերը մեղմացընելու։ Աստուած յաճախ կը շնորհէ իւր արարածոց այս կենաց առաւօտեան ցօղը, որպէս զի կարենայ ծանրութեան և օրուան ջերմութեանը դէմ կենալ։ Սակայն Եղիսաբեթ, որուն նեբքին աչուընները երկնքին վրայ սեւեռած էին. ընդունելով այս երջանկութիւնը՝ կարգէ դուրս

գորովալից ապաւինութեամբ մը, կ'իմանար ա-
պագայ վտանգը. և այս՝ ամենիւ հոգւոյն հա-
մար՝ տեսակ մը փորձ էր որուն պէտք էր յաղ-
թանակել։

Սակայն Եղիսաբեթ կ'զգար թէ՝ այն հնորհ-
քը զոր աստուած իրեն պարգևած էր, միացը-
նելով զինքը անոր հետ՝ որուն վրայ այնչափ սեր
ունէր այս երկրիս վրայ, պարտք կը դնէր իրեն
վրայ աւելի եռանդուն հաւատարմութիւն մը
և աւելի մեծ երախտագիտութիւն մը ունենա-
լու իւր երկնաւոր բարերարին։ Թէպէտ և ան-
տարակոյս՝ իւր մանկութեան խիղճը ծանրա-
ցած էր՝ ծանր սխալմունքներով, սակայն եր-
բէք մոքէն չէր հանէր՝ թէ յանդիման արդար
դատաստանին աստուծոյ, ամենէն աւելի հա-
ւատարիմ հոգիներն ալ՝ ուրիշ բան չեն բայց
անպիտան ծառայներ, և թէ պէտք եղած զո-
հերը անկարելի է որ մարդս կարենայ ընել՝
փրկութեան արժանի ըլլալու համար։ Ա-
մենէն սկսաւ իւր հոգւոյն խոնարհութեանը
մէջ՝ այն հնորհաց առաքինութիւնը, որ է՝ ըստ
քաղցր և մխիթարիչ վարդապետութեան եկե-
ղեցւոյ, աստուծոյ սուրբերուն համար պայծառ
փառք մը. և հաւատարիմներուն համար ալ հա-
րուստ դանձարան մը. և ապահով ապաստանա-
րան մը։ Այնեն բանէ առաջ ջանաց Եղիսաբեթ
նուաՀել իւր մտքինը տքնութեամբ. տեսանք
մենք թէ՝ ինչ յարատև խստութեամբ մը գի-
տէր ինքզինքը մահացընել՝ այս նիւթին մէջ.
մեծ խնամքով և ներողամիտ սիրով մը իւր բա-
ռեպաշտ փեսայն ալ կը տեսնէր զինքը որ իւր
քովէն կ'ելլէր առ աստուած մտնելու հա-

մար։ Բայց Եղիսաբեթ յաճախ իւր բարի յո-
ժարութեամբն ալ աղօթք ընելու ատենը չէր
կրնար քունին դէմ դնելէ և կը հնչէր այն օ-
թոցին վրայ որ անկողնոյն քովն էր, ձեռքը իւր
փեսային ձեռացը մէջ։ Իրեն ծառայութիւն ը-
նող աղախիններէն երբ առաւօտուն սենեակը
կը մտնէին, և զինքը գետնի վրայ կը տեսնէին՝
տհաճութեամբ մը կը հարցնէին թէ աւելի
լաւ չէր ըներ անկողնին մէջ հնչելէ քան թէ
գետնի վրայ։ Ոչ, պատասխան կու տար, միշտ
աղօթք չեմ կրնար ընելէ. սակայն կրնամ ինք-
զինքս մահացրնել՝ հեռանալով ի սիրելւոյս. կ'ու-
զեմ որ մարմինս նուաճուի, վասն զի թէ որ ի-
րեն ուզածը ընելու ըլլամ՝ ինծի կը յաղթէ։

Երբ իւր ատենները ձանապարհորդութեան
զբաղած էր, բոլոր գիշերը տքնութեամբ կ'ան-
ցնէր՝ Յիսուսին իւր հոգւոյն փեսային հետ։
Անմեղ իշխանուհին իւր փառաւոր և գեղեցիկ
զգեստներուն տակէն ալ միշտ քուրձ մը կը հագ-
նէր մարմնոյն վրայէն։ Ուրբաթ օրերը ի յիշա-
տակ Յիսուսի Քրիստոսի ցաւալի չարչարանացը,
և մեծ պահոց մէջ ամէն օր ի ծածուկ իր մար-
մինը ծեծել կու տար խստութեամբ որպէս զի,
պատմագիրներէն մէկը կ'ըսէ, Յիսուսի Քրիս-
տոսի հատուցմունք մը ընէ, անոր որ մեզի հա-
մար ձաղկեցաւ. և վերջէն կ'ելլէր իւր արքու-
նեացը կ'երևնար պայծառ և ուրախ դէմքով։
Երբեմն ալ գիշեր ատեն իւր փեսային քովէն ել-
լելով առանձին սենեակ մը կը մտնէր, և իւր ծա-
ռաներն կը տեսնէր որ անխնայ ծեծեն զինքը։

Ա.յսպիսի խստամբեր չարչարանքներով իւր
անձին և իրեն յատուկ տկարութեանն վրայ ա-

պահոցած, նորէն իւր փեսային քով կը դառնար, որուն քով կրնար պատիկ կը զգար ուրախութիւնը և քաղցրութիւնը։ Այս կերպով, կ'ըսէ ժամանակակից քերթող մը, կը ջանար Եղիսաբեթ առ աստուած մօտենալ և իւր մարմնոյ բանտին կապերը խորտակել, իբրև քաջասիրտ պատերազմող մը Յիսուսի Քրիստոսի սիրոյն։ Սակայն իրեն կանոն դրած էր, որ չըլլայ թէ այս ծածուկ խստամբերութիւնները ցաւալի աղդեցութիւն մը բերեն իւր սովորական գործոցը վրայ, կամ տխուր և մռայլոտ բնաւորութիւն մը ցուցնեն իւր վրայ։ Ոչ երբէք դիժուարութիւն մը կը ցուցնէր՝ առաջնիկայ գըտնուիլ այնպիսի հանդէսներու և աշխարհային գումարմանց, որոնք կերպով մը իւր վիճակին պարտքը կրնային տեսնել, և ինչպէս կ'ըսէ երևելի սուրբ մը որ զինքը լաւ հասկըցեր էր և ճանչցեր, Եղիսաբեթ երբեմն կը խաղար ու կը պարեր ալ, առանց իւր ջերմեռանդութեանը մնաս մը բերելու, որովհետև աստուածպաշտութիւնը խորտնկ կերպով մը իւր սրտին մէջ արմատացած էր, և ինչպէս Ռիեթի լեռնին գագաթէն եղած ժայռերն ալիքներէն զարնուելով հանդերձ կ'ամրանան, այսպէս ալ իւր աստուածպաշտութիւնը կ'ամրանար ձոխութեանց և ունայնութեանց մէջ։ կ'արհամարհէր ամենայն տեսակ արտաքին չափազանցութիւն աստուածպաշտութեան գործոցը մէջ, և ամենայն տեսակ կեղծաւորութիւն որոնք որ աղօթք ընելու ժամանակին տխուր և խիստ կերպարանք մը կ'առնէին, անոնց հանար կ'ըսէր թէ կարծես որ կը փափաքին բարեբար աստուածը վախցը-

նել, վասն զի կրնային ուրախութեամբ և բարի սրտով խնդրել՝ ուղածնին։ Սակայն թնաւ ան-փոյթ չէր ըլլար աստուծոյ ընծայելու իւր խոնարհութեան և հնազանդութեան խղճերը։ Իրեն խոստովանահայրն էր Գոնզատ Մարպուրկ գաւառին վարդապետը, որուն վրայ վերջէն պիտի խօսինք. և որուն դիմաց փեսայն թոյլ տըւած էր հնազանդութեան ուխտ մը ընելու այն ամենայն բանին մէջ որ չէին հակառակեր իւր ամուսնական իրաւանցը։

Գոնզատ՝ որ մէկ քանի տուրքերուն դէմ էր, որոնց եկամուտը սահմանուած էր արքունական սեղանոյն ծախքերը հոգալու, իւր խոստովանորդուոյն ապստրած էր՝ միայն այն կերակուրներով մնանիլ՝ որոնց համար ստոյգ գիտէր թէ իւր ամուսնոյն ստացուածքներէն վճարուած էին, և չէ թէ իւր հպատակաց ինչքերէն, զոր անիրաւ հարստութիւն կը սեպէր և աստուծոյ կամացը դէմ։ Երիտասարդ դքսուհւոյն գթալի սիրտը՝ մտադիրութեամբ ընդունեցաւ այս առաջարկը, և ի գործ դրաւ զգուշաւոր ճշդութեամբ. բայց երբեմն կը տագնապէր այս ըղգուշութիւնն ընելու, վասն զի ինչպէս որ ըսինք, միշտ կերակրոց ժամանակ իւր ամուսնոյն քովը կը նստէր։ Սակայն բարեպաշտ դուքսը երբէք արգելք չեղաւ իւր փափաքանացը, և երբ դքսուհւոյն պատուոյ երեք օրիորդներն ալ հրամանն խնդրեցին իրենց տիրուհւոյն օրինակին հետեւելու, շատ մը իրենց շնորհեց, ըսելով թէ ես ալ յօժարութեամբ ձեզի պէս պիտի ընեմ, եթէ չվախնամ չարախօսութենէ և գայթակղութենէ. բայց աստուծոյ օգնութեամբը ես

ալ քիչ ժամանակէն իմ կեանքիս կերպը պիտի փոխեմ։ Յարգելով իւր կնոջը խիղճը, անձամբ իմաց կու տար քաղցր և սիրալիր յոժարութեամբ մը՝ երբ այնպիսի կերպակուրներ սեղանի վրայ կը դրուէին որ իրեն կանանէն դուրս էին. ուստի երբ ստուգութեամբ գիտէր թէ այն կերակուրները իւր յատուկ ինչքերէն առաջ եկած էին, այն ատեն կը ստիպէր որ ուտէ։ Սակայն Եղիսաբեթ հաղիւ կը համարձակէր որ և իցէ պնակի մը դպչիլ. վասն զի միշտ վախի մէջ էր որ չըլլայ թէ աղքատի մը դառն քրտանց պտուղն ըլլայ. կը զգուշանար մարդկան աչքէն ծածկելու ինչ որ կ'ընէր առ սէրն աստուծոյ. երբոր դքսին սեղանը կը նստէր՝ արքունական սոսպետաց և պաշտօնակալաց հետ, բազմապատիկ հնարքներ կը բանեցընէր, որպէս զի իւր մահացուցմունքները չիմանան։

Իւր պատուոյ օրիորդներն, իւր մահացուցմանց ընկերակիցքը, կը պատմեն թէ երբեմն իրեն կերակուրը ուրիշ բան չէր՝ բայց միայն ցամաք հաց կամ փոքրիկ խմորեղէններ, որոնց վրայ մեղը քսելով կ'ուտէր։ Օր մը մեծ խնջոյքի մը վրայ ստիպուելով հինգ փոքրիկ թռչուններ ընդունելու, ջանաց գրեթէ ամբողջ իւր հետևողներուն թողուլը։ Եղիսաբեթ անոնց ալ մահացուցմանցն իրենին պէս մատնուլը խնամք մը ունէր։ Ուրիշ անգամ մը որ իւր ամուսնոյն հետ կ'երթար՝ տերութեան խորհրդոցը, սեղանի վրայ ուրիշ բան չդտաւ, զոր կարենար անխիղճ ուտել. բայց կոտոր մը սեաւ հաց, և ան ալ այն չափ չոր՝ որ ստիպուեցաւ տաք ջուրի մէջ կակղացընել, սակայն ծոմի օր ըլլալուն՝ այսչափ սը-

նումդը իրեն բաւական սեպէր, և նոյն օրուան մէջ տասնուվեց մղոն ձիով ճանապարհորդութիւն ըրաւ։

Հաճոյական աւանդութիւն մը կը ցրցունէ թէ որչափ աստուած Եղիսաբէթին կը քաղցրացրնէր, նոյն իսկ բնական և զգալի կերպով, ինչ որ իւր մահացումնց մէջ խիստ և դժուարին բան մը գտնուէր։ Օր մը՝ իւր ամուսնոյն հեռու եղած ժամանակը, առանձին կը ճաշէր իւր աղքատին կերակուրը, որ էր ցամաքը հաց և ջուր։ Դուքսն անակնկալ ժամանակ վրայ գալով՝ կամեցաւ ինչպան բարեկամութեան անոր բաժակէն խմել. և մեծ զարմանքով գտաւ այնպիսի ըմպելիք մը որ կարծես թէ աշխարհիս վրայ գտնուող սակաւագիւտ և ամենի գինի մըն էր. շուտ մը մատակարարին հարցուց թէ ուսկից առեր էր, և անիկայ պատասխանեց թէ դքսուհոյն միայն ջուր տուած էր։ Լուդովիկոս լռեց. սակայն պատմողին արդար և բարեպաշտ բացատրութեանը համեմատ, գուշակեց մէկէն թէ աստուածային սիրոյ նշանակ մը կար հոն, և փոխարէն վարձք մը իւր կնոջը ըրած ճգնութեանցը։ Յաճախ պալատին մառանները կը քալէր իւր աղախնոյն հետ, և մեծ խնամքը կը տեղեկանար ամենայն կերակրոց և ըմպելեաց ուսկից մատակարարուելը։ Երբ թոյլ տրուած կերակուր մը կը գտնէր, իւր հետը եղող օրիորդացը կ'ըսէր. միայն ասիկայ պիտի ուտէք։ Կամ երբ օրինաւոր ըմպելիք մը, ինչպէս իւր ամուսնոյն այգիներուն գինին՝ միայն ասիկայ խմեցէք կ'ըսէր։ Սակայն երբ կը տեսնէր թէ բոլոր կերակուրներն իւր կամացը համեմատ էին, այն

ատեն կը սկսէր ձեռք ձեռքի զարնել մանկա-
կան ուրախութեամբ մը աղաղակելով. Ա. յօր
ամեն բան լաւ է, վասն զի պիտի կարենանք ու-
տել և ըմպել։ Եղեսաբեթ այն ատենը հնգե-
տասնամեայ հասակին մէջ էր, և դեռ պա-
հած էր սրտին և մտացը մանկութիւնը, իւր
հասակէն վեր առաքինութեամբ՝ ինքզինքը բո-
լորովին աստուծոյ նուիրելով։ Ա. յսպիսի խստա-
կրօն կեանք մը և միանգամայն հակառակ իւր
աստիճանին և վիճակին սովորութեանցը, դբ-
սուհոյն վրայ ձգէց հրապարակական նախա-
տինք և բոլոր իւր արքունեացը յանդիմանու-
թիւնը. դբսին ալ չէին խնայեր, տեսնելով որ
թոյլ կու տար կնոջը, և անոր կարգէ դուրս բրո-
նած կերպը չէր արդիլեր։ Երկուքն ալ կը հա-
մակերպէին համբերութեամբ և ներողամտու-
թեամբ այս անիրաւ դատաստանաց, և աւելի
կ'ախորժէին աստուծոյ հաճոյ ըլլալ քան թէ
մարդկան։

Սակայն նորահասակ իշխանուհին նոր ասպա-
րէզ մը գտաւ իւր մահացուցմանց սէրն և ե-
ռանդը յառաջ տանելու։ Հանդիսի օր մը ըստ
սովորութեան Վարդապուրէին Խշնաք ինքնա փա-
ռաւոր զգեստ մը հագած, այլ և այլ զարդե-
րով զարդարուած, գլուխն ալ դբսուհոյ պը-
սակ մը դրած, իւր զբանչին, և ուրիշ ազնուա-
կան տիկնայց հետ միաբանած քաղքին եկե-
ղեցին գնաց։ Սովորութիւն ըրած էր որ ամեն
անգամ՝ եկեղեցի մտնելուն՝ մէկէն ի մէկ իւր
աչքը դէպ ի խաչելութեան կը դարձնէր. նոյ-
նը ըրաւ նաև նոյն օրն ալ. իւր փրկչին պատկե-
րը տեսնելով մերկ, փուշով պսակուած, ձեռ-

քերն և ոտքերը բևեռաձև խաչափայտին վրայ գամուած, կարգէ դուրս զղջում մը զգաց սրբոտին մէջ ինչպէս ուրիշ անգամ իւր մանկութեան ժամանակը. բայց վերջէն ինքզինքը գրաստնելով սկսաւ ըսել. ահաւասիկ քու աստուածդ խաչափայտէն կախուած, և դու անարգ արարած, անոր դիմացը կ'երևնաս փառաւոր զգեստներով և զարդով. գլուխը փշով պսակուած է, և դու ոսկեղէն պսակ ունիս։ Ա.յն միջոցին կարգէ դուրս ցաւ մը զգալով, մարեցաւ և գետնի վրայ ինկաւ։ Հոն գտնուողներն զարհուրած՝ գետնէն վերուցին զինքը, և եկեղեցւոյն դրան քով տարին և օրհնած ջուր զարկին երեսին. որպէս զի արթննայ. քիչ ատենէն խելքը գըլխուը եկաւ։

Ա.յն վայրկեանէն առաջադրեց յամենայն զարդուց հրաժարիլ, բայց ի այն առիթներէն որ կամ իւր աստիճանը զինքը կը ստիպէր, կամ իւր ամուսնոյն կամքը։ Իւր աղախնեայցը վկայութեանցը մէջ կը գտնուի շատ մանրապատում նիւթեր, թէ այն ամէն զարդերէն՝ որ իշխանուհւոյ մը սեպհական կը սեպուէին՝ այն ժամանակէն, ինքը չուզեց ամենևին գործածել. օրինակ ինն՝ բոլորովին հրաժարեցաւ բայց գունով մետաքսեայ զգեստներէն, փայլուն գլխի քողերէն, նեղ թեղնիքներէն, որ այն ատենուան մեծ Հոխութիւնները կը սեպուէին, բեհեզեայ ժապաւէններէն, որ մազերը վեր կը բռնէին, և վերջապէս գետնաքարշ և երկայն զգեստներէն։ Սակայն երբ ստիպուած էր հանդիսի զգեստները հագնիլ, ծիրանագոյն պատմուճանին և զարդերուն տակէն հասարակ բուր-

դէ զգեստ մը կը հագնէր, և մարմնոյն վրայէն քուրձը երբէք չէր թողուր։ Նոյնպէս հրապարակական հանդէսներու մէջ ալ միշտ կը ջանար քրիստոնեայ իշխանուհւոյ մը պարկեշտութիւնը ցուցնել վրան։ Այս քրիստոնէական պարկեշտութիւնը կ'ապպրբեր ուրիշ ազնուական տիկնայց ալ՝ որ իրեն այցելութեան կու գային, և անդադար կը յորդորեր գէթ հրաժարիլ աշխարհային ունայնութենէ, և զգեստի օրինակներ ալ կը խրկեր զոր իրենց յարմար կը սեպէր։ Իւր աշխատութիւններն անպտուղ չեղան. այս երիտասարդ իշխանուհւոյն տիկիններէն ոմանք՝ հազիւ թէ ամուսնացած՝ իրեն օրինակէն յորդորուելով աշխարհային ունայնութենէ հրաժարեցան. և մէջերնէն ոմանք մշանջենաւոր ժուժկալութեան ուխտադրութիւն մին ալ՝ բրին։

Ո՛ սուրբ անկեղծութիւն, անմեղութիւն մանկութեան հատակին, երջանիկ օրերուն անենդ և մաքուր գգուանքը, արդեօք նորէն պիտի դառնան. պէտք է արդեօք կարծել թէ դու բոլորովին պիտի մարիս և ոչնչանաս։ Թէ որ ՀՐՇՄարիտ է թէ աշխարհիս շարունակութեան դարերն կը նմանին մարդկան տարիներուն, ալ պիտի չդառնան քնաւ մէջտեղ ալ այսպիսի տխուր և երկար ձմեռուրնէ վերջը, ով քաղցր գարուն հաւատոյ, որ մեր սիրտն և աշխարհքը կ'ուռուցես։

Ը.

Աղքատասիրութիւն սրբուհւոյն Եղիսաբեթի.

Մինչդեռ Եղիսաբեթ այսպիսի խստակրօն լուծ մը կը դնէր իւր զգայարանացը, և ասանկ հաստատուն խստութեամբ մը ինքզինքը կը կառավարէր, իւր սիրտը լի էր ողորմածութեամբ և գթութեամբ թշուառ եղբարցը վրայ։ Գորդ վալից գթութիւն, որով միշտ վառուած էր իւր մանկութենէն ի վեր, և որ օրըստ օրէ կ'աճէր սրտին մէջ, որ և քիչ ժամանակ վրան անցնելէն ետքը արժանի պիտի ընէր զինքը այն քաղցր և փառաւոր մականունը՝ որ էր կոչուիլը Պաշտպան աղքատաց. և այս անուամբ մինչև ցայսօր բոլոր քրիստոնէութիւնը զինքը կը մեծարէ։ Նոյն ժամանակին նշանաւոր ձիրքերէն մէկն ալ էր առատաձեռնութիւնն առ աղքատս՝ մանաւանդ մեծազգի իշխանաց մէջ. բայց Եղիսաբեթին ողորմածութիւնն՝ չէ թէ ազնուատոհմ ըլլալուն

արդիւնք էր, կամ մարդկային երախտագէտ գովութեան արժանի ըլլալու փափաք մը, այլ երկնային և նեբբին ազդեցութենէ մը յառաջ եկած։ Մանուկ հասակէն անկարելի եղած էր որ աղքատ մը տեսնէր և սիրտը տակն ու վրայ չըլլար, և հիմա՝ որ իւր ամուսինը իրեն լիուլի ազատութիւն տուած էր ընելու ինչ որ ի պատիւ աստուծոյ կամ մարդկան աղէկութեանը կը պատշաձէր, բովանդակ ինքզինքը տուաւ իւր բնական հակամիտութեանը՝ սփոփելու Քրիստոսի նեղութեան մէջ եղող անդամները։ Հանապազորդ մնածմունքն սովիկայ էր, ամէն աւելորդը աղքատաց կը բաժնէր, ու կը հրաժարէր ինչ որ իւր սեռին և աստիճանին ալ սովորութեանցը վայելուչ էր։ Իր ամուսնոյն տուած ստակէն զատ, այնչափ շուտով բոլոր ունեցածն աղքատաց կը բաժնէր, որ շատ անգամ՝ պէտք կ'ըլլար իւր զգեստներէն մերկանալ, որպէս զի ձեռքը բան մը ունենայ սփոփելու զթշուառս։

Ա. յսպիսի սրտաշարժ անձնանուիրութիւն մը կարելի չէր որ ժողովրդեան զգացումը և սիրտը չշարժէր. ուստի հին ժամանակագիրներն կը պատմեն, թէ հինգշաբթի օր մը դքսուհին քաղաքը կ'ելնար հարուստ կերպով հագուած և պսակուած. ճանապարհին վրայ խիստ շատ աղքատ հանդիպեցաւ, հանեց մէկէն, անոնց բաժնեց բոլոր իւր վրայ ունեցած ստակը։ Երբ առանց ստակի մնաց, ուրիշ մուրացիկ մի տեսաւ որ ցաւագին ձայնով իրմէ օգնութիւն կը խնդրէր՝ հառաչեց որ իւր վրայ բան մը չուներ անոր տալու. բայց որպէս զի չվշացուցնէ զինքը՝ ձեռնոցը հանեց, որ հարուստ կերպով բանուած

և ակունքով զարդարուած էր, ու մուրացկանին տուաւ։ Երիտասարդ ասպետ մը, որ հեծեր էր, այս տեսնելով գնաց աղքատին քով և դքսուհոյն ձեռնոցը գնեց, և իւր սաղաւարտին վրայ դրաւ, իբրև առհաւատչեայ մը իրեն աստուածաձայն պաշտպանութեանը. և իրաւցընէ այն ատենէն տեսաւ, որ ամենայն պատերազմաց խառնուրդներուն մէջ՝ միշտ իւր թշնամեացը կը յաղթանակէր, և երբէք ինքը չէր յաղթուած։ Ժամանակ անցնելէն վերջը խաչակրաց հետ գընաց, ուր իւր քաջութեամբն շատ հռչակաւոր եղաւ։ Իւր հայրենիքը դառնալէն վերջն ալ մահուանը անկողնոյն մէջ յայտնեց թէ այն պաշտպանութեան արդիւնք կը սեպէր ամենայն փառքն և յաջողութիւնքն։

Բայց ոչ պարզեւաք և ոչ ալ ստրկով նորահասակ իշխանուհին կրնար գոհ ընել իւր աղքատաց վրայ ունեցած եռանդը, որով բոլորովին աստուածպաշտութեան տուած էր ինքզինքը և այնպիսի գործովքիր և յարատև խնամոյ՝ որ անշուշտ յաչս աստուծոյ և յաչս խեղճերու ալ պատուականագոյն և նուիրական էն քան զողորմութիւն։ և այս խնամոյ մէջ կը տեսնուէր վրան բոլորովին պարզութիւն մը և արտաքին ուրախութիւն մըն ալ։ Երբ ախտաժէտք կու գային իրմէն ողորմութիւն խնդրելու, կը ցածէին չափ զանոնք գոհ ընելէն վերջը, բնակութիւնքն կը տեղեկանար, որպէս զի երթայ զանոնք տեսնելու։

Ա. յն ատեն ոչ Ճանապարհի հեռաւորութիւն և ոչ ալ դժուարութիւն կրնային արգելք ըլլալ Եղիսաբեթին, վասն զի լաւ գիտէր թէ

բան մը չկայ որ կարենայ զօրացընել ողորմութեան զգածմունքը, ինչպէս լաւ կերպով խմնալ մարդկային թշուառութիւնները, և անոնց մեծութեանը համեմատ դարման մատուցանել։ Իւր պալատէն ամենէն աւելի հեռաւոր հիւղերու մէջ կը մտնէր, որ նողկալի էին գէշ օդով և աղտեղութեամբ. աղքատաց պատսպարանոցներուն մէջ կը մտնէր կարգէ դուրս եռանդով, և ընտանութեամբ. անձամբ տանելով ինչ որ հարկաւոր կը սեպէր անոնց տխուր բնակչացը. զանոնք կը սիրտիէր ոչ միայն իւր առատաձեռն պարգևաբեր, այլ առաւել քաջալերելով և սիրալիր խօսքերով. և երբ կ'իմանար թէ պարտական են, և հատուցանելու միջոց մը չունին, իւր վրայ կ'առնուր անոնց պարտքերը վճարել յատուկ ստացուածքովը։ Այնենէն աւելի աղքատ և նոր զաւակ բերող կանանց վրայ իր գթալիր խնամքը կը տարածէր։ Շատ անգամ կ'երթար անոնց անկողնոյն քով կը նստէր և զանոնք կը քաջալերէր, և նորածին մանկունքը իւր բազկացը մէջ կ'առնուր՝ մայրական սիրով, և իւր ձեռքովը շինած զգեստներով զանոնք կը ծածկէր։ Յաճախ անոնց կնքամայրը ալ կ'ըլլար, որպէս զի այս հոգևոր մայրութիւնը աւելի առատ մը ըլլայ զանոնք առաւել սիրելու, և խնամելու բովանդակ կենաց ընթացքներուն մէջ։ Երբ աղքատներէն մէկը վախճանէր, կու գար անոնց քով կը դիապատէր, և յուղարկաւորութեան հանդէսին ներկայ կը գտնուէր. և կը զարմանային տեսնելով որ այս ազնուական թագուհին իւր յետին հպատակին աղքատ դագաղին ետևէն կ'երթար, օրինակ տալով խնամար-

հութեան և մարդասիրութեան։ Ցանը մէջ իւր պարապ ժամանակը կը գործածէր, ոչ եթէ հաւրըստութեան փափուկ զուարճութեանցը, հապա սուրբ Գրոց ժրագլուխ կնոջ պէս դժուարին ու օգտակար աշխատանաց. բուրդը կը հիւսէր իւր նաժշտացը հետ, և իւր յատուկ ձեռքովը զգեստ կը շինէր, աղքատաց կամ մուրացիկ կրօնաւորաց համար, որ այն ժամանակը կու գային իւր տեղութեան սահմանացը մէջ բնակելու։ Շատ անգամ պատրաստել կու տար կամու անհամ կերակուրներ իրեն համար. որպէս զի փորձով գիտնայ թէ ինչպէս աղքատը կը կերակրուին, զոր մեծ ուրախութեամբ կ'ուտէր։ Եղիսաբեթ ստէպ անսուաղ կ'անցնէր, որպէս զի չըլլայ թէ կասկած մը տայ իր հպատակացը, որ առանց արդեանց և առանց արժանաւորութիւն մը ունենալու սեպուի իրեն՝ իւր կերած կերակուրը։ Երբ իւր տանը ծառայից վրայ կրթութեան դէմ պակասութիւն մը կամ յանցանքի հետք մը կը տեսնէր՝ մէկէն կ'երթար իւր ամուսնոյն ծանուցանելու, և անձամբ կը ջանար անոնց հաւատացմունքն ընելու, որչափ որ իւր միջոցները թոյլ կու տային։ Կարծես թէ իւր սրտաշարժ առաքինութիւններն՝ Հունգարիայի տանը յատուկ ժառանգութիւն էին, նոյն առաքինութեանց գործածութիւնը կը գտնենք գրեթէ երկու դարէ վերջը՝ Երիտասարդ և երևելի իշխանուհւոյ մը վրայ, որ Եղիսաբեթին պէս Հունգարիոյ թագաւորաց մէկուն դուստրն էր. Հետ վիկէի վրայ, որ երեքտասանամեայ հասակին մէջ Բոլոնիայի թագուհի ընտրուեցաւ, որ Եաս կելլոնի հետ ամուսնութեամբը միաբանեց Լի-

թումանեան ընդ Բոլոնիայի, և Հոգին աւանդեց քսան և ութ տարուան ծաղկեալ հասակին մէջ սրբութեան նշանաներով հաղար երեք հարիւր ինսնուն և ինկին, և իւր ժամանակին իշխանութեացը մէջ ամենէն աւելի հռչակաւորն էր գեղեցկութեամբը և քաջութեամբը։ Ա. Ժամաւոր Եղիսաբեթի ցեղէն ըլլալուն իւր սրբութեան անչափ եռանդեամբը և գթասիրութեամբը առ աղքատս՝ իւր հայրենեացը պատմութեան գրքերուն մէջ թողուց քաղցրագոյն խօսք մը՝ որ քիչ անգամ լսուած է քրիստոնէի մը սրբութեան։ Աղքատ գիւղականներ իշխանուհւոյն եկած ըլլալով արտասուօք գանգատելու թէ թաղաւորին ծառայքը իրենց բոլոր դաւարներն յափշտակեցին. վաղվաղակի իւր ամուսնոյն կը դիմէր և շուտով մը հատուցմունքն կ'ընդունէր. ետքը կ'ըսէր. դաւարը իրենց յանձնուեցաւ բայց արցունքներն ոչ պիտի կրկին հատուցանէ անոնց։ Եղիսաբեթ շատ կ'ախորժէր աղքատաց օգնութեանը համար, չէ թէ միայն ստակով, այլ տեսակ տեսակ նիւթերով, որ անոնց համար կը սահմանէր. թէ մանուդ և թէ ըզգեստ. շատ անգամ կը տեսնէին զԵղիսաբեթ որ ծանրացեալ բեռամբ իւր պալատէն ելլելով, զառ ի վեր կամ ծածուկ ճամբաներէն կ'երթար, առ ի սիրելի զթշուառս։ Օր մը երբ նեղ և խիստ ճամբէ մը կ'ելնէր՝ իւր սիրելի օրիորդաց մէկուն հետ ընկերացած, և պատմուճանին տակէն կողով մը ուներ որ հացով, միսով, ձուով և ուրիշ կերակուրներով լի էր, որպէս զի աղքատաց բաժնէ, յանկարծ իւր ամուսնոյն հանդիպեցաւ որ այն միջոցին որսէն կը

դառնար՝ զարմացած դնա այսպէս տեմնելով ծանրացած իւր բեռան պատճառաւը՝ բաւ իրեն. նայենք ինչ կը տանիս, և նոյն միջոցին առոր չուզելովը՝ բացաւ անոր վերարկուն որ բոլորովին զարհուրած կոզովը բռնած էր. սակայն ուրիշ բան չտեսաւ բայց եթէ սպիտակ և կարմիր վարդեր, և այնչափ գեղեցիկ որ իւր կենսացը մէջ անոնց նմանը երբէք չէր տեսած. այս բանս շատ զարմացուց զինքը, որովհետև ծաղկի և վարդի ժամանակ չէր։ Սակայն Եղիսաբեթին շփոթութիւնը տեմնելով կամեցաւ ապահովցնել անոր սիրտը իւր գգուանօքը. բայց յանկարծ կանչ առաւ, վասն զի անոր գլխին վրայ լուսաւորեալ պատկեր մի տեսաւ խաչելութեան ձևով. այն ատեն թոյլ տուաւ Եղիսաբեթին որ ձամբան շարունակէ անկասկած, ինքն ալ Վարդապետի գնաց, ու խորունկ կերպով մը կը մտածէր թէ աստուած որչափ կը սիրէր զԵղիսաբէթը, և առնելով այն հրաշալի վարդերէն իրբև յիշատակ մը պահեց բոլոր իւր կենսացը մէջ։ Ա.յն տեղն ուր մէկմէկու հանդիպեցան՝ հին ծառ մը ըլլալով, վաղվաղակի կտրեցին, և տեղը քարէ սիւն մը բարձրացուցին, գագաթն ալ խաչ մը դնելով, որպէս զի յաւիտեան յիշուի այս բանս, ինչ որ տեսաւ իւր կընոջը գլխին վրայ։

Ա.յն ամենայն թշուառաց մէջ՝ որոնք իւր գութը կը շարժէին, և անոնց մէջէն բորոտները, որոնց թշուառութեանցը մատնաւոր և խորհրդական յատկութիւնը, բոլոր միջին դարուն մէջ, առանձինն խնամոց նիւթ մը ըրած էր, սիրոյ և վախի հետ խառնուած։ Եղիսա-

բեթ իւր ժամանակին երևելի սուրբերուն և իշխանաց նման, կ'ախորժէր այս յետին զգացման վրայ յաղթանակել, և արհամարհել այն ամենայն զգուշութիւններն որ արտաքին կերպով կը բաժնէին քրիստոնէից ընկերութենէ այս աստուծոյ ձեռամբը նշանուած արարածքը։ Ուր որ բորոտը կը տեսնէր, քովերնին կ'երթար, և առանց վախնալու այն տարափոխիկ հիւանդութենէն, քովերնին կը նստէր, և մինչ թարիչ քաղցրութեամբ հետերնին կը խօսէր, զանոնք համբերութեան կը յորդորէր, և ապաւինիլ առ աստուած, և անոնցմէ չէր հեռանար՝ մինչև որ զանոնք առատ ողորմութեամբը գոհ չընէր։ Պարտական էր, կ'ըսէր անոնց՝ այսնեղութեանց սիրով համբերել, և ոչ տրրտմութիւն և ոչ ալ բարկութիւն պէտք է ունենաք, վասն զի ստոյգ գիտեմ որ եթէ այս տանջանքը համբերութեամբ կրեալ ըլլաք, զոր աստուած ձեզի կը ղրկէ այս աշխարհիս մէջ, պիտի փրկուիք հանդերձեալ կրակէն։ Ուստի գիտէի որ այս բանս մեծ արդիւնք է։ Որ մը այս թշուառաց մէկուն հանդիպելով, որ բորոտութենէն զատ գլխոյ հիւանդութիւն մըն ալ կը կրեր, և ոլուն կերպարանքը վերջի աստիճանի նողկալի էր, բերել տուաւ զնա ի ծածուկ իւր մրգաստանին մէջ առանձին տեղ մը, և անձամբ անոր սոսկալի մազերը կտրեց, գլուխը լուաց, վերքերն ալ մաքրեց։ Ան միջոցին, իւր պատուոյ օրիորդքն վրայ գալով տեսան իւր այս նորօրինակ մարդասիրութիւնը որոնց և լուութեամբ մը ժպտեցաւ անոնց երեսին։ Աւագ հինգշաբթի օր մը՝ բազմութիւն բորոտներ ժողովեց, ձեռքեր-

նին լուաց, վերջէն առջևնին երեսի վրայ իյնալով՝ խոնարհութեամբ անոնց վերքերը և պալարները համբուրեց։ Ուրիշ անգամ մը իշխանը մէկ քանի օրուան համար Նատումպուրկ բերդը գացած էր, որ հիւսիսային կողմերը և Սաքսոնիոյ մէջ ունեցած ստացուածոցը մօտ կ'ելնար, Եղիսաբեթ ալ Վարդպուրկ մնաց. և իր ամուսնոյն հեռու եղած ժամանակը ուրիշ քանի եռևէ չեղաւ՝ բայց եթէ կրկնապատիկ եռանդով աղքատներուն և ախտաժեռներուն խնամելու. վերքերնին անձամբ կը լուար, ու կը հագուեցընէր իր ձեռքովը շինած զգեստներովը. թէպետև յայտնի կերպով կը տեսնէր մայր դրքասուհւոյն Սոփիայի գժկամակութիւնը զոր կը ցուցընէր առ Եղիսաբեթ, և որ իր ամուսնոյն մահուընէն ետքը՝ տղուն հետ մէկտեղ կը բնակէր։ Բայց երիտասարդ իշխանուհին՝ իր զոքանչին գանգատները բանի տեղ չէր դներ։ Այն ժամանակին հիւանդաց մէջ, թշուառ և փոքրիկ բորոտ մի կար՝ Հելիոս անուամբ, որուն վիճակը այնչափ սիգալի էր, որ ոչ որ կ'ուզէր խնամել զնա։ Եղիսաբեթ միայն տեսնելով որ ամենուն երեսէն թողուած է, իրեն պարտք սեպեց անոր վրայ աւելի խնամք ցուցընել. զանիկայ մէկդի քաշեց, իր ձեռքովը լուաց, և փրկարար իւղոնի օծեց զնա, և իր անկողնոյն մէջ զանիկայ հանգչեցուց։ Այն միջոցին յոլսեմ Եղիսաբեթի այսպիսի զբաղմանց եռևէ էր, դուքսն ալ իր բերդը կը դառնար. վազվազակի մայր թագուհին դիմեց անոր ընդ առաջ, և երը դուքսը գրաստէն վար կ'իջնար՝ ըսաւ անոր. «Որդեակ իմ սիրելի, Էկ ինծի հետ, վասն զի

քեզի պիտի ցուցնեմ քու Եղիսաբեթիդ մեկ սքանչելի գործը»։ Այս ըսելով անոր ձեռքէն բռնեց՝ ու իր սենեակը տարաւ ըսելով իրեն. «Ա. հաւասիկ տես, սիրելի որդեակս, կենդ բորոտելէ, և անկողնոյդ մէջն է, ես չեմ կրնար զինքը այդ գործէն ետ կեցնել, և անձամբ կը տեսնես որ կը փափաքի զքեզ ալ բորոտել»։ Դուքսը այս խօսքերը ըսելով չիրցաւ բարկութիւնը սանձել, և խստութեամբ իր անկողնոյն վերմակը վերուց։ Բայց նոյն ատենը, պատմողին զեղցիկ բացատրութեանը համեմատ, ամենակարողն աստուած անոր հոգւոյն աչքերը բացաւ, և բորոտին տեղը Յիսուսի Քրիստոսի խաչելեալ պատկերը տեսաւ իր անկողնոյն մէջ պատկած։ Ա. յս տեսարանին թէ դուքսը և թէ մայրը փշուած մնացին, և դուքսը սկսաւ դառնապէս արտասուել. նախ չիրցաւ խօսք մը հանել բերնէն, վերջէն դէպ ի իր կնոջը դառնալով, որ կամայուկ անոր եւևէն գացած էր, որպէս զի բորոտին դէմ ունեցած բարկութիւնը մեղմացնէ։ Ա. յն ատեն մէկէն ի մէկ կ'ըսէ առ Եղիսաբեթ. «Բարի և սիրելի քոյրս, կ'աղաչեմ որ յանձնես իմ անկողնոս այսպիսի առանձնականներու տան, որով և միշտ հաղորդակալ պիտի ըլլամ քեզի. երբէք մի դադարիր քու առաքինական կրթութիւններդ»։ Վերջը ծնկան վրայ գալով այս աղօթքը ըրաւ առ աստուած. «աստուած խնդրեմ ինծի պէս մեղաւորին. վասն զի ոչ երբէք արժանի կը համարիմ ինքզինքս այսպիսի սքանչելագործութիւն տեսնալու։ Օգնական եղիր ինծի և արժանի ըրէ զիս որ քու սրտիդ և կամացդ համեմատ մարդ մը ըլլամ»։

Եղիսաբեթ այս տեսարանին խորունկ տպաւորութիւնը դքսին վրայ տեսնելով. յարմար ատեն դտաւ իշխանէն հրամայն մը ընդունելու որպէս զի ժայռին քով հիւրանոց մը կառուցանէ, որ Վարդապարկ բերդին վրայ կը նայէր, այն տեղը ուր եղբը Փրանկիսկեան կրօնաւորաց վանք մը շինուեցաւ։ Ա. յն ատենէն սկսաւ հոն պահել քսան և ութ թշուառ հիւանդներ կամ խեղեր, որոնք աւելի տկար էին, և կարողութիւն չունէին մինչև բերդը երթալու։ Ամեն օր անոնց այցելութեան կ'երթար, և հետը թէ կերակուր և թէ ըմպելիք կը տանէր։ Ա. յսպէս թշուառաց հետ և անոնց համար ապրելով, զարմանալի բան չէ որ աստուած իրեն ազդած ըլլայ այս աղքատութեան սուրբ եռանդը, որ ամենէն աւելի համբաւաւոր հոգիները նշանաւոր ըրաւ իւր շնորհքովը։ Մինչդեռ Ժողովը-դեան մէջէն կ'երթար Փրանկիսկոս Ասսիզացին, և ամենուն համար կը բանար սրբարանի նոր դուռ մը, ուսկից եռանդեանը կը մտնէին այն ամենայն բարեպաշտ հոգիները որոնք կը փափաքէին իրենք զիրենք յօժարութեամբ ուրանալ և կամ նուիրել աստուծոյ, Գերմանիոյ ասպետաց մէջ երևցաւ այս արքունի օրիորդը, որ հնգետասանամեայ հասակին մէջ արդէն աւետարանական աղքատութեան փափաքը կրզգար, սրտին մէջ անոր սիրովը կը բորբոքեր, և կ'ամչցնէր իրեն նման իշխանուհեաց հպարտութիւնն ու Ճոխութիւնը, խորունկ և գերագոյն արհամարհութեամբ մը ամենայն երկրաւոր ընչից։ Ա. յսպէս կարծես թէ՝ յայտնի կը ցուցնէր իրեն նշանակուած այն տեղն, զոր ա-

Ճապարեց ընդունիլ եկեղեցւոյ պաշտամունքը մէջ, և քրիստոնեայ ժողովրդեան սէրը Աստուծոյ Սէրովբէին քով։ Իւր երիտասարդութեան գեղեցիկ հասակին մէջ՝ գիտցաւ ջնջել իւր սրբութեան մէջէն աշխարհային փառաց անցաւոր սէրը։ Անիկայ, կ'ըսէ հին մատենագիր մը, որ գերագոյն փառաց մէջ էր, կը փնտռէր աղքատութեան վիճակը, որպէս զի աշխարհս իրեն վրայ բան մը չունենայ, և եղաւ աղքատ ըստ օրինակի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եղիսաբեթ կը փափաքէր որ իւր սիրելի փեսայն ալ ընկերակից ըլլայ իրեն ամենայն ծածուկ և սուրբ զմայլմունքը, և իւր մանկական երևակայութեանց ամենայն բերմունքը՝ այնպիսի կեանքի մը որ աւելի պարզ էր և միանգամայն աւելի յարմար աւետարանական կատարելութեան։ Գիշեր մը երբ պառկած էին և դեռ քունեներնին չէր տարած, Եղիսաբեթ ըսաւ դրբսին. Տէր իմ, եթէ այս բանս զձեզ հնազանդեցուցեր, մտածմունք մը միտքս եկաւ որուն կարծեմ կրնանք հետևիլ, որպէս զի արժանապէս աստուծոյ ծառայենք։ Ըսէ տեսնենք, սիրելի բարեկամ, պատասխանեց ամուսինը. ինչ է ձեր մտածմունքը այս նիւթիս վրայ։ Կը փափաքիմ, կ'ըսէ Եղիսաբեթ, որ ունենայինք միայն փոքրիկ դաշտ մը, որ մեր ապրուստը տայ, և երկու հարիւրի չափ ոչխար. այն ատեն դու երկրագործութիւն կ'ընէիր, ձիերը կը բանեցնէիր, և ես ոչխարները կը խնամէի, և զանոնք կը խուզէի, և այս աշխատանքներ՝ կ'ընէինք Քրիստոսի սիրոյն համար։ Դուքսը սկսաւ ծիծաղիլ և Եղիսաբեթին պատասխանեց. սիրելի քոյրս,

եթէ այսչափ երկիր և ոչխար ունենայինք, կարծեմ թէ նոյնպէս աղքատ չէինք սեպուեր, և շատ մարդիկ զմեզ հարուստի տեղ պիտի դընէին։ Բայց դուքսը կարգէ դուրս զմայլած իւր կնոջը փափուկ պարզութեանը վրայ, քիչ օրէն ետքը անձամբ պատմեց այս ընտանեկան խօսակցութիւնը իւր բարեկամին՝ Դրիւայի Թէոդորոս աբքեպիսկոպոսին. և նոյն աբքեպիսկոպոսէն լսած է՝ մեզի այս բանս աւանդող պատմագիրը։ Ուրիշ անգամներ իւր աղախնեացը հետ, որոնք միանգամայն իւր բարեկամներն էին, երկայն բարակ կը խօսէր աղքատութեան ուրախութեանցը վրայ, և յաճախ անոնց հետ ըրած ընտանեկան խօսակցութեանցը մէջ նորահաս իշխանուհին, որ դեռ մանուկ էր հասակաւ ինչպէս նաև սրտով, կը ջանար արդիւնացընել գէթ մտքովը իւր բարեպաշտ փափաքները։ Աբքեպիսկոպոսն զգեստներէն մերկացած աղքատին վերարկու մը վրան կ'առնուր, մեծագոյն որ միայն աղքատներն և գիւղականք կը գործածէին, կը լուխը կը ծածկէր պատառատուն քողով մը, և իւր ընկերակցացը առջև վեր վար կը քալէր իբրև աղքատ մը, և կը ձեւացընէր թէ օրուան հացը կը մուրայ, ետքը կարծես թէ աստուածային ազդեցութեամբ մը լուսաւորուած այն վիճակին զոր աստուած սահմանած էր իրեն, այս մարգարէական խօսքերը կ'ըսէր անոնց. այսպէս պիտի քալեմ երբ աղքատութեան և թշուառութեան մէջ լինիմ առ սէրն աստուծոյ։ Ո՛վ աստուած իմ, կ'աղաղակեր Փրանկիսկոս Սալեզեացին այս պատմութիւնը աւանդելով իւր սիրելւոյն Փիլոթեսի. այս իշխանուհին աղքատ

էր իւր հարստութեանը մէջ, և հարուստ իւր աղքատութեանը մէջ։ Մտադիր կը խոստովանիմ թէ այս սրբութեան կենացը մէջ, զոր այնչափ երանդեամբ քննեցինք, մեզի ուրիշ բան մը աւելի սրատարած և զարմացման արժանի չերևնար, ինչպէս այս մանկական պարկեշտութիւնը որ թերևս ոմանց ծաղուն և արհամարհացը պատճառ ըլլայ։ Մեր աչքն ալ՝ այն փափուկ բերումը իւր ամենայն զգացմանց, իւր ծիծաղները և ստէպ ստէպ սրտին թափած արցունքները, ուրախութիւնները որ օր մը երկնաւոր հօրը քով աշխարհիս վրայ թողած հանգստութիւնները պիտի գտնէ, իւր գերագոյն մտածութիւնը իրեն ամեն գործոցը մէջ, և կարգէ դուրս երանդուն ստուգամտութիւնը և մանաւորապէս իւր ողորմածութիւնը, ամենէն աւելի քաղցր և զօրաւոր զարմանք մը կը պատճառէն մեզի։ Ա. յնպիսի ատեն մը, մանաւանդ մեր ժամանակին մէջ, յորում ծաղկրնները կը փճանան՝ քանի որ պտուղներն դեռ չեն հասունցած, և յորում պարկեշտութիւնը մեռած էր թէ՛ սրտերու և թէ հասարակ կենաց մէջ, քրիստոնեայ մը չկրնար քննել առանց սիրտը շարժելու՝ թէ ինչպէս ամէնցան ասոնք Եղիսաբեթին հոգւոյն մէջ, որուն հանառօտ կեանքը ուրիշ բան չէր՝ բայց եթէ երկար և երկնային մանկութիւն և մշանջենաւոր հնազանդութիւն ի Յիսուսէ զուրցուած խօսքին. երբոր փոքրիկ տղայ մը կ՝առնուր և իւր առաքելոց մէջ տեղը կեցնելով կ՝ըսէր անոնց. Ցիրաւի կ՝ըսեմ ձեզի, որ եթէ այս տղուն պէս չըլլաք. պիտի չկարենաք մտնել երկնից արքայութեանը մէջ։

Թ

Սրբուհւոյն Եղիսաբեթի կարգի դուրս ջերմեռանդութիւնը և խոնարհութիւնը.

Անհնարին էր որ Եղիսաբեթ կարենար ինքզինքը նուիրել ընկերացը սիրոյն, այսպիսի ըսքանչելի եռանդեամբ, թէ որ աստուածային սէրը իւր սրտին վրայ տիրած չըլլար. և որպէս զի ինքիրմէ վերը՝ իւր մերձաւորին վրայ սէր ունենայ, պէտք էր որ զաստուած ամէն բանէ աւելի սիրէր։ Ա. յոպէս կը տեսնենք զնա որ հանապազ նորանոր յառաջադիմութիւն կ'ընէր այս գերագոյն գիտութեանը մէջ. խոնարհութեան առաքինութիւնը որ իւր մանկութեան հասակին առաջին ընկերն էր՝ օրէ օր կ'աւելնար, ու կ'ամրէր իւր սրտին մէջ և ամէն օր այս աստուածային բարեկամին օգնականութեամբը աւելի կերպով մը կը ջանար ինչ որ իւր սրտին մէջ աշխարհային կիրք մը մնացած էր՝ հանել

սրտէն, որով այնպիսի հանգիստ և ապահով վիճակի մը վիճակեցար աստուծոյ քովը, որուն ամենէն երևելի սուրբերը կունային նախանձիլ։ Ա. յն աստիճանին հասնելու և հոն մնալու համար աւելի զօրաւոր և հաստատուն օգնականութիւն մը չունէր, բայց միայն եկեղեցւոյ պատուիրանացը հաւատարիմ կրթութիւնը. և յաճախ մերձենալով այն խորհուրդներուն՝ զոր եկեղեցին, մեր բարեբար առատագութ մայրը՝ իւր որդւոցը կ'ընծայէ։ Ատեպ ստէպ սուրբ խորհրդոյն կը հաղորդուէր, թէպէտ և միշտ վախով և մեծարանօք։ Եղնսաբեթ կ'իմանար իւր սուրբ հաւատոցը խելամտութեամբը այդ գանձին անպատում գինը, որով և աստուածային պաշտամանց՝ յարգութեամբ, սիրով և վախով և անանման փութով ներկայ կը գտնուէր։ Հաղիւ թէ եկեղեցւոյն զանգակին ձայնը կը լսէր, թռչունի պէս մէկէն եկեղեցին կը վազէր և միշտ կը ջանար որ իւր աղախիններէն առաջ հոն հասնի, ուր ծունկ չոքած կարգէ դուրս եռանդեամբ և բարեպաշտութեամբ աղօթք կ'ընէր առ աստուած, բոլորովին իւր երկնային հօրը վրայ դնելով իրեն վստահութիւնը։ Պատարագի ատեն կը ջանար արտաքին խոնարհութեան գործերով ցուցընել այն փափուկ երախտագիտութիւնը, զոր կ'ազդէր իրեն այն սուրբ զոհը, անմեղ և անարատ Գառնին աստուծոյ։ Ստիպուած ըլլալով՝ իւր ամուսնոյն ներկայ գտնուելուն պատճառաւ, և որպէս զի հաւատացեալք չգայթակղին՝ իւր աստիճանին համեմատ վայելուչ զգեստ մը հագնելուն, խոնարհամտութիւնը ձեռքէ չեր թողուր՝ իւր

պարկեշտութեամբն և զգուշութեամբը։ Ինչ-պէս նաև խորհուրդներու առջև կը մերկանար բոլոր իւր զարդերէն՝ զորոնք կրնար մէկ դի դնել. զոր օրինակ՝ իւր դքսական պսակը, իւր վզնոցներն, ապարանջանները, մատանիներն և ձեռնոցները, աւետարանին ընթերցման ատենը, և մանաւանդ սրբագործութեան և հաղորդութեան միջոց։ Օր մը պատարագի ժամանակ, երբ եռանդեամբ աղօթք կը մատուցանէր առաստաւած, ձեռքերը պարկեշտութեամբ ամփոփած, և իւր վերարկուին տակ ծածկած, և քոյն ալ վերուցած՝ որպէս զի կարենայ սուրբ նշխարը տեսնել, երկնային լոյս մը անոր յոբս կողմը շրջապատեց։ Քահանայն որ պատարագը կը մատուցանէր, սրբակաց մարդ մը՝ թէ՛ վարքովը և թէ՛ հանքաւորովը, տեսնելով սրբագործութեան ժամանակ դքսուհւոյն կերպարանքը երկնային լուսով մը փայլած, բոլորովին տպէացաւ, և մինչև հաղորդութեան ժամանակ՝ ճառապայթներուն մէջ շրջապատուած էր, ինչ-պէս թէ արեգական լուսոյն մէջ կեցած ըլլար։ Զարմացած առ բանիս վրայ, աստուծոյ փառք տուաւ, որ յայտնի և սքանչելի կերպով ցոյց տայ Սուրբ հոգւոյն ներքին լոյսը, և վերջէն պատմեց տեսածը։ Մեծ խնամք ունէր եկեղեցւոյ պատուիրանաց պահպանութեանը։ Եղիսաբեթ մեծ պահոց ժամանակը աստուծոյ նուիրելով սովորական ծոմերը կը կատարէր, թէպէտ և իւր հասակէն չէր պահանջուեր, իսկ աղօթքէ և յաճախ ողորմութիւն տալէն չէր պակսեր։

Բայց ոչ ոք կրնայ պատմել այն եռանդուն

սէրն և բարեպաշտ մեծարանքը՝ որով Եղիսաբեթի կը տոնախմբէր այն նուիրական օրերն, յորում՝ Եկեղեցին հաւատացեալց կը յիշեցնէ սրտաշարժ և ազդու արարողութեամբ՝ մեր փրկարար ցաւագին խորհուրդը։ Աւագ հինգշաբթի օրը՝ Թագաւորաց Թագաւորին նմանեալ, որ նոյն օրը կերակրոյ սեղանէն ելած, և իւր զգեստները մերկացած, Հունգարիոյ Թագաւորաց օրինորդն ալ՝ իւր ամենայն զարդերէն մերկացած՝ որ իրեն երկրաւոր Ճոխութիւն մը կը յիշեցնէին, և աղքատ մուրացիկներու հասարակ զգեստներով, և տեսակ մը կօշիկ հագած, որ կը հանարուէր թէ միայն թշուառաց սահմանուած ըլլայ անոր գոյծածութիւնը, և հետի կ'երթար եկեղեցեաց այցելութիւն ընելու։ Նոյն օրը խոնարհութեամբ կը լուար երկոտասան աղքատաց ոտքերն և երբեմն ալ բոլոտոներու, և իւրաքանչիւրոց կը բաժներ երկոտասան արծաթէ դահեկանները, և ատուէ ըզգեստ մը, ու սպիտակ հաց մը։ Եղիսաբեթի բոլոր Աւագ հինգշաբթի գիշեր՝ մինչև Աւագ ուրբաթու իրիկունը ազօթքով և Յիսուսի Քրիստոսի չարչարանքները մտածելով կ'անցնէր։ Աստուածային զոհին պատարագուած օրուանը արշալուսէն կրկիսներ իւր ազախնայց ըսելու. Այս օրուան օրն՝ բոլոր աշխարհին համար խոնարհութեան օր մին է. անոր համար կը բաղձամ՝ որ ձեզմէ ոչ ոք ինծի դայլն մեծարանքի նշան մի ցուցընէ։ Նախընթաց օրուան պէս՝ հասարակ զգեստ մը հագուած և գաւառին աղքատ կանանց սովորութեանց յարմարած, իւր զգեստին մէջ կը դնէր փոքրիկ ծրարներ հասա-

բակ լաթի, քիչ մը խունկ և փոքրիկ մոմեր. և վերջէն մերկ ոտքով ամբոխին մէջէն անցնելով ամենայն եկեղեցեաց մէջ կը մտնէր, և ամէն մէկ խորանի առջև ծնկան վրայ գալով, լաթի ծրար մը, խունկ և մոմ մը կը նուիրէր, և խոնարհութեամբ երկրպագութիւն ընելէն վերջը՝ միւս խորանը կ'անցնէր։ Հղկասաբեթ այս կերպով մէկ եկեղեցւոյ մը մէջ այցելութիւնները կատարելէն վերջը, հրապարակը կ'ելնէր, և աղքատաց առատ ողորմութիւն կը բաժնէր։ Բայց որովհետև բաղձութիւնը գնա չէին ձանչնար, այն պատճառաւ անողորմ կերպով մէկ դիէն մէկալ դի կը հրելին զՀղկասաբեթ, իբրև հաստակ կնիկ մը ժողովրդեան մէջ։ Պալատականները կը յանդիմանէին զինքը՝ որ այսպիսի մեծ հանդիսի օր իր եկեղեցւոյն այնպիսի աղքատին նուէրներ կը մատուցանէր, մինչդեռ իբրև իշխանուհի մը և տիրուհի՝ պարտ էր ձոխութեան և առատաձեռնութեան օրինակ ըլլալ։ Բայց իւր սրտին երկնային ազդեցութիւնը՝ իրեն կ'ըսէր թէ՝ այնպիսի օր աւելի լաւ էր խոնարհութեամբ տոնախմբել քան թէ ուրիշ առաքինութեամբ։ Բռնութիւն կ'ընէր իրեն բնական եղած կարգէ դուրս առատաձեռնութեանը, որպէս զի կարենայ աւելի հաստատեալ կերպով ընդ փոքրիկոց և խոնարհոյ խառնուիլ, և առ աստուած նուիրել խոնարհ և ցաւագին սրտի մը զոհը, զոր միաբը դրաւ երբեք չ'արհամարհել։ Համբարձման տօնին նախընթաց երեքօրեայ պաղատանաց ժամանակ, զոր մեծ հանդիսով և ուրախութեամբ կը տօնախմբէին, երիտասարդ դքսուհին միշտ թափո-

րին հետ երթալու ժամանակ հասարակ զգեստով և մերկ ոտքով կը քալէր։ Քարոզիչներուն քարոզ տուած ժամանակը՝ միշտ աղքատ մուրացիկներու քով կը նստէր, և այնպէս քարոզը մտիկ կ'ընէր, և այսպէս կարգէ դուրս խոնարհութեամբ միշտ Յիսուսի Քրիստոսի սուրբ Խաչին վրայ կը մտածէր։ Այսն զի կ'ըսէ իրեն ժամանակակցայ մէկը թէ իւր ամենայն փառքն Յիսուսի Քրիստոսի խաչին և չարչարանաց վրայ էին. և բոլոր աշխարհ իրեն համար 'ի խաչ ելեալ էր, և աստուած որ ինքզինքը աստուած նախանձու կ'անուանէ, ոչ կարէր հանդուրժել որ իւր հաւատարիմ աղախնոյն սիրտը տակն ու վրայ ըլլայ, նաև վայրկենի մը մտածութեամբ և կամ՝ լոկ մարդկային սիրով, որչափ ալ օրինաւոր ըլլայ։ Իւր Պէրդոյա մատրանատեղը երևելի դէպք մը կը յիշատակէ, զոր ամենայն պատմագիրք կ'աւանդեն, ըսելով թէ անգամ մը երկուքն ալ այսինքն Եղիսաբեթ և իւր էրիկը արիւն առած էին, և ըստ սովորութեան ժամանակին՝ դուքսը այն առթով բոլոր շրջակայքն եղող ասպետները ժողոված էր, որպէս զի անոնց հետ զբօսնու, և զանազան օրեր աշխարհային ուրախութիւններ տուած էր անոնց։ Այն օրերուն մէկը, դուքսն և բոլոր ասպետները հանդիսաւոր ձայնաւոր պատարագին ներկայ գտնուած էին Խշնակ քաղաքին սուրբ Գէորգ եկեղեցւոյն մէջ, և դքսուհին մոնանալով պատարագին սրբութիւնը, իւր աչուքներն ու մտածութիւնը սիրելի փեսին վրայ դարձուց՝ որ քովը նստած էր, այնպէս երկար ժամանակ դքսին դէղեցկութեամբ և շնորհալի կերպին վը-

բայ զմայլմամբ մը նայելով, որով ամենուն հա-
ճոյացած էր։ Բայց երբ սրբագործութեան ժա-
մանակ ինք իրեն եկաւ, իւր հոգւոյն երկնաւոր
փեսայն ազդեց թէ որչափ կը վիրաւորեն զին-
քը (այնպիսի մնաց ցրումներ) վասն զի երբ քա-
հանայն նուիրական սուրբ նշխարը դէպ ի ժո-
ղովուրդեան դարձուց, Եղիսաբեթի քահանային
ձեռացը մէջ ուրիշ բան չտեսաւ՝ բայց եթէ
զՏէր խաչելեալ, և բոլոր վերքերն արիւնալից։
Այս տեսարանէն տակն ու վրայ եղած, մէկէն
ճանչցաւ իրեն սխալմունքը, ինկաւ գետին՝ խո-
բանին առջև արցունքով լի, աստուծմէ իւր մե-
ղացը ներումը խնդրելով։ Զայնաւոր պատարա-
գը լմննալէն վերջը, դուքսը իւր պսպատակա-
նաց հետ եկեղեցիէն ելաւ, և Եղիսաբեթն ալ
առանձին մնաց խորանին առջև, ծնկան վրայ
եկած մինչև ճաշու ժամանակ։ Կերակուրը
պատրաստ ըլլալով բաղմութիւն հրաւիրելոց հա-
մար՝ Եղիսաբեթին գալստեանը կը սպասէին. և
ոչ ոք կը համարձակեր դքսուհւոյն աղօթիցը
արգելք ըլլալ։ Դուքսը անձամբ եկաւ զանիկայ
գտնելու, և մեծաւ քաղցրութեամբ ըսաւ ի-
րեն. Սիրելի քոյր, ինչու սեղանի չես գար, և
մեզի այսչափ երկար ժամանակ սպասել կու-
տաս։ Դքսին ձայնէն՝ Եղիսաբեթ գլուխը վե-
րուց. և լռութեամբ անոր նայեցաւ. դուքսն ալ
անոր կարմրացած և արիւնալից աչքերը տես-
նելով, որովհետև խիստ շատ լացեր էր, և բոլո-
րովին շփոթած՝ ըսաւ անոր. Սիրելի քոյր, ինչու
այդչափ դառնապէս արցունք թափեր ես. և հոն
Եղիսաբեթին քով ծնկան վրայ գալով, և ա-
նոր պատմութիւնը լսելով սկսաւ ինքն ևս լալ

և միաբան հետը աղօթել։ Քիչ մը ետքը ոտքի ելաւ. և ըստ Եղեսաբեթին՝ աստուծոյ վրայ գնեցեք մեր վստահութիւնը։ Բայց տեսնելով դուքսը որ Եղեսաբեթ կարգէ դուրս տրտմած էր, և այն կերպով անկարելի էր իւր աբբուհեայը մէջ իր երևնալը, արցունքները սրբեց, և հրաւիրելոց քով գնաց, մինչդեռ դքսուհին կը շարունակէր իւր յանցանքը լալ և զղջալ։

Ա. յս երիտասարդ և բարեպաշտ իշխանուհին ընդունած էր երկնքէն շնորհք արտասուաց. այն քաղցր և զովացուցիչ արցունքը՝ որ կ'արթնցնէ սրտերու մէջ երկնային միսիթարութեանց և շնորհաց սնապատ գանձին ներկայութիւնը։ Իւր ընկերակիցքն կը պատմեն թէ, որչափ ալ առատ ըլլային արցունքները, չէին այլ այլեր ոչ իւր գեղեցկութիւնն, և ոչ ալ կերպարանքին պարզութիւնը։ Սակայն միայն իրեն համար առանձնական շնորհք մը չէր ասիկայ, հապա բոլոր նոյն դարուն և իւր ժամանակակից ամենայն ուղղափառ ժողովուրդք ստացած էին զայն. և կը ճանչնային անոր գերազանց զօրութիւնը ինչպէս ևս և այն ջերմեռանդ ժողովուրդքը որ կը մեծարէին այսպիսի սրտաշարժ պաշտամունքի մը այն աստուածային արցունքը՝ զոր Յիսուս իւր բարեկամին շիրմին վրայ թափած էր։ Ինչպէս որ շատ բանասաեղծութեանց մէջ, նոյնպէս նաև ամէն երիտասարդական հասակի մէջ եղած բարեպաշտութեանց արցունք չպակսիր։ Ա. յս հոգւոյն արիւնը, ինչպէս կ'ըսէր սուրբն Աւգոստինոս, այս սրտի ջուրը, զոր այսպէս կը կոչէն մեր հին վիպասանները, դառնապէս կը վազէր անոնց աչքէն որ բարեպաշտ և

պարզամիտ հոգւոց համար՝ տեսակ մը աղօթք սե-
պուած էր, որ միանգամայն նեղբին էր և ազդու.
գորովալից և լեին նուէր մը, որ զերեզք կը միացը-
նէր Ցիսուսի Քրիստոսի և իւր սրբոցը ամենայն
ցաւոց և արդեանցը և ամենայն եկեղեցական
մեծարանացը հետ։ Երանելին Դոմինիկոս այն
արցունքով կը լուար հոգւոյն վերքերը. և սրբու-
հոյն Օտիլիայի հետ արցունքով կը գնեին մարդ-
կանց մեղքերը զորանք այս աշխարհին մէջ ա-
ւելի կերպով մը սիրած էին, և զոր հրեշտակ-
ները կը ժողվէին տանելու հօրն գթութեան
առջեւ, զորս կը համարէր աստուած իբրև պա-
տուական պարգև մը զղջման և սուրբ սիրոյ։
Զի թէ միայն տկար կանայք և տգէտ ժողո-
վուրդը կը զգար արցունքին զօրութիւնը և քաղ-
ցրութիւնը, որուն ապացուցութեանը բաւա-
կան է այն դարերուն պատմագրի մը գիրքը բա-
նալ, տեսնելու՝ անոնց մէկ երեսին մէջ թէ ինչ-
պէս նաև իշխանք, թագաւորի ասպետք և բովան-
դակ բանակներ՝ անմեղոց և ակամայ արցունքներ
կը թափէին. բոլոր այս երկաթի մարդիկը և
անյաղթ քաջք՝ իրենց կուրծքին մէջ գորովա-
լիր և փափուկ սիրտ մը կը կրէին տղոց նման։
Դեռ ևս սորված չէին իրենց զգացմանցը բնա-
կան անմեղութիւնը փճացրնել, և կամ ամրչ-
նալ. իրենց սրտին եղած չէր սիրոյ պարզ եռան-
դը և աստուածային այն զօրաւոր ցօղը որ կը
պտղաբերէ և կը գեղեցկացրնէ մարդուս հան-
դերձեալ կեանքը։

Ո՛վ արդեօք կրնայ մոռնալ Կոտֆրուայի և
առաջին խաչակրաց հեծեծանքներն և անմահ
արցունքները, երբոր Քրիստոսի գերեզմանը տե-

սան, որուն տիրած էին այնպիսի սքանչելի յաղ-
թանակներէն և դժնդակ փորձերէն վերջը։ Ժա-
մանակ անցնելէն ետքը, առիւծասիրտ Թիզար-
տոսը դառնապէս կ'արտասուէր՝ տեսնելով որ
զերուսաղէմ չէր կրնար ազատել, և սրբոյն Լու-
դովիկոսի խոստովանահայրը պատմեց՝ իւր խոս-
տովանորդոյն համար, որ երբ Լիթանիայի մէջ
այս խօսքերն առ Աստուած կ'ըսէր ջերմեռան-
դութեամբ. Ո՛վ տէր աստուած, չեմ համար-
ձակիր արտասուաց աղբիւր մը խնդրել քեզմէ,
այլ ինծի բաւական են շնթք արտասուաց՝ իմ
սրտիս չորութիւնը ոռոգելու համար. և իւր
խոստովանահօրն առանձին խնացուց թէ աղօթ-
քի մէջ տուած էր իրեն աստուած այն արցուն-
քը, և երբ կ'իմանար թէ իւր երեսէն վար վա-
զելով կը մնային բերնին մէջ, իրեն կարդէ
դուրս քաղցրահամ և անուշ կու գային, չէ
թէ միայն սրտին, այլ նաև բերնին մէջ։

Ժ

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ Ճանչցուեցաւ և սիրուեցաւ երևելի սուրբ Փրանկիսկոսէն, և ինչպէս ուսնեցաւ իբրև տեսուչ զԾերատոս Մարպուրցի.

Ինչ որ արդէն պատմեցինք Եղիսաբեթին վրայ, բաւական կը համարինք հասկրցնելու համար այն ազգականութիւնն որ իր հոգւոյն և Քրիստոսի փառաւորեալ աղքատին մէջ կար, որ այն ժամանակը բոլոր Իտալիա կը լուսաւորեր իւր զօրաւոր և հրաշալի գործերով։ Աստուած չէր ուզեր որ այս նեղքին միութիւնն անպտուղ կամ անծանօթ մնար, այլ ընդհակառակն՝ պտղաբեր ըլլար՝ ի միութարութիւն իւր հաւատարիմ աղախնոյն, և ի յիշատակ օրհնութեան ամեն դերմանացւոց։ Արդէն մնմնաւոր մոերմութիւն մը ունէին մէջերնին։ Հազար երկու հարիւր եօթին Եղիսաբեթին ծննդեան տարին ծնած էր նաև ծառայն աս-

տուծոյ սուրբն Ֆրանչիսկոս. բայց այս տարբեր-
բութեամբ որ առջինը՝ դուստր բլալով զորա-
ւոր թագաւորի մը և թոռն մեծին Կարոլոսի՝
կը ծնանէր յաշխարհի ընկղմած տերութեան
ամենայն ճոխութեան մէջ. իսկ վերջինս որ էր
որդի Պեռնարտոս վաճառականին՝ կը հրաժա-
րէր իւր աղքատին ստացուածէն, ընտանիքէն,
և ի պատուոյն պարզ աստուծոյ սիրոյն համար.
ծեծուած և բանտարգելեալ իւր հօրմէն, և հա-
զիւ մօրը գորովանօքն ազատուած բանտին շըղ-
թաներէն, տղմով և նախատինքով ծածկեալ
իւր քաղաքակիցներէն. և այսպէս մինչև իր յե-
տին զգեստներէն ալ կը մերկանար, որպէս զի
մերկ երթայ՝ մերկ Յիսուսի խաչելոյն ետևէն;
Եղիսաբեթին աչքին դիմացը բան մը չէր ե-
ւեր իր այս փառաւոր ծնունդը. վասն զի ար-
դէն պատրաստուած էր երկնքին համար, և
պզտիկուց ալ կրցեր էր շինել իւր անմեղ սիր-
տը մաքուր և արգասաւոր դաշտ մը, յորում՝
սուրբն Ֆրանկիսկոս կենաց հունտեր պիտի ցա-
նէր, որոնց հոտաւէտ բուրմունքը և գունագոյն
տեսքը պիտի վայելէին յաւիտեանս քրիստո-
նեայ ժողովուրդներ։

Պիտի չպատմենք հոս սրբոյն Ֆրանկիսկոսի
Իտալիոյ մէջ բրած յաղթանակաց սքանչելա-
գործ պատմութիւնը. այլ իւր քարոզելու ժա-
մանակին սկսելով՝ պէտք է որ բաւական սե-
պենք այն դիպուածներն որ ուղղակի կը վերա-
բերին Եղիսաբեթին կենացը հետ։ Քիչ առե-
նուան մէջ այնչափ ազգու եղան նոր առաքե-
լոյն խօսքերը թմրած և գաղջ հոգիներուն վը-
բայ, և այնչափ բուռն այն կործանման որ տի-

բեր էր գրեթէ ամենայն հաւատացելոց վրայ որ հարկ եղաւ չափաւ մէջ դնել և սանձել այն ուժը, զոր պարգևեր էր իրեն աստուած պտղաբեր ընելու համար։

Ամեն մէկ քայլափոխին բիւրաւոր ամուսնաց կը պատահէր, որ կ'ուզէին կամ իրենց կնիկներէն կամ խօսեալներէն և կամ որդիքներէն հրաժարիլ, որպէս զի կարենան ազատ համարձակ դնել իրենց գլուխը աղքատութեան և աւետարանական քարոզութեան սրոյն տակը, և նոյնպէս կնիկներ ալ՝ որ ինքզինքնին պատրաստ կը ցուցընէին իրենց ամուսնական և մայրական պարտքերէն հրաժարիլ, որպէս զի բազմամարդ ընեն այն կուսանաց վանքերը որոնց առաջնորդութիւն կ'ըներ սրբուհին Բլարա իրեն նախանձորդը և քոյրը։ Դժուարին պարագայի մը մէջ կը գտնուէր. վասն զի պէտք էր իրեն որ կամ դէմ կենար անոնց բարի առաջարկութեանցը, և կամ լուծանել ամուսնական աստուածադիր կապը. ան առեն միջին Ջամբայ մը բռնեց, զոր երկինք պիտի օրհնէին, ինչպէս իւր ուրիշ ամեն գործքերը։ Ան բազմութեան որ կը ցանկար իրեն հնազանդիլ, առանձին կենաց կանոն մը խոստացաւ որով կցորդակից պիտի ըլլային իւր կրօնաւորացը, հաղորդ ըլլալով աղօթից, բարի գործոց և ապաշխարութեան, այն ամեն քրիստոնեաները որ ընտանեկան կենաց պարտքը վրանին առած էին, առանց խղելու աստուծմով սրբուած կապերը։ Նախ տըւաւ այս կանոնը բերնով բազմութիւնը հաւատացելոց՝ թէ երիկ մարդկանց և թէ կանանց որ կը փութային ի գործ դնել զայն, մանաւանդ

Փլորենտիոյ և մծտաւոր քաղաքաց մէջ։ Կ'ուրախանային որ միջոց մը գտան վանաց պատերէն դուրս ելլալով հանդերձ՝ վանդալից ուրախութիւններէ և աշխարհային ընդունայնութիւններէ հրաժարելու։ Փրանկիսկոս տեսնելով այն եռանդը, և աշակերտաց օր օրուան վրայ բազմանալը, զանոնք Այպաշարարդի կարգի կոչեց, իբր թէ ձեւացնելով իւր ընտանեաց երրորդ ճիւղը, ուր արդէն կ'երևնային կրտսեր եղբարքը, որոնց անմիջական գլուխն էր, և սրբուհւոյն Քլարայի հաւատաւորները։ Անոնց համար սահմանած կանոնները գրեց և հրատարակեց 1221ին։ Իւր գլխաւոր կարգադրութեանցը համեմատ, հարկ էր նոյն կարգին մէջ մտնելու համար, եթէ ամուսնացեալ մէն էր, իր լծակցին հաւանութիւնը. պէտք էր դարձեալ ամենայն տեսակ յանցանքները, զոր մէկը կրնար ըրած ըլլալ, քաւել և հրապարակաւ հաշտուիլ բոլոր իւր թշնամեացը հետ. առանց ընտանիքնին և վիճակնին թողու, պէտք էր որ հագնէին սև զգեստներ, և ամենևին զէնք չէին կրնար կրել։ բայց միայն ի պաշտպանութիւն եկեղեցւոյ և հայրենեաց։ Պէտք էր եւ կենալ հանդէմներէ, և աշխարհային ամենայն ուրախութիւններէ, բացի այն պահերէն և ծոմերէն զորոնք հրամայած է եկեղեցին, մա չուտել ոչ երկուշաբթի և ոչ ալ չորեքշաբթի օրերը, և պահք բռնել սրբոյն Մարտինոսի տօնէն մինչև ծնունդ, ինչպէս նաև տարւոյն ամէն չորեքշաբթի և ուրբաթ օրերը. ամէն օր պատարագ լսել, հաղորդուիլ երբեք մեծ տօներուն, այսինքն զատկին, հոգեգալստեան և ծննդեան,

ամեն երեկոյ մանաւոր աղօթքներ ընել առ աստուած, և երրորդ կարգի եղբարց և քերց այցելութեան երթալ իրենց հիւանդութեանց առեն, և անոնց յուղարկաւորութեան հանդէսին ներկայ գտնուիլ։ Այս կանոնն, ինչպէս կը տեսնուի, ուրիշ բան չէր բայց եթէ բարեպաշտ ընկերութիւն կամ եղբայրութիւն մը, և ոչ թէ վանական կարգ մը։ Այսեն անցնելէ ետքը, եղաւ որ երրորդ կարգի եղբայրութիւնը հանդիսաւոր ուխտադրութեան սովորութիւնն ալ ընդունեցաւ, զոր ինչուան այսօր կը պահէ անխախտաւ։

Որքան Փրանկիսկոսի կարգին այնչափ շատ և արագ տարածումը՝ այն ժամանակին ամենէն երևելի և նշանաւոր դէպքերէն մէկն է, և կըրնայ կարծուիլ որ եկեղեցին մանաւոր կերպով մը պարտական է Երրորդ կարգի ընկերութեանը՝ այս եղած յառաջադիմութեանցը համար։ Անթիւ քրիստոնեայք, թէ երիկ մարդկանցմէ և թէ ի կանանց, ամեն օր անդամ կ'ելլային. և Իտալիա, Գաղղիա և Գերմանիա եռանդ եռանդ լեցուցեան այս նոր բանակաւ։ Պէտք եղաւ որ աշխարհը բանի տեղ դնէ զանոնք, վասն զի եկեղեցւոյ թշնամիքը շուտով տեսան զօրաւոր արգելքներ որ իրենց դէմ պիտի ելլէին այնպիսի միաբանութեան մը մէջ, յորում ժողովուած էին հաւատացեալք ամենայն հասակէ, ամենայն աստիճանէ և ամենայն արհեստէ, պատերազմողն և վաճառականը, քահանայն և իրաւագէտը, իշխանն և գեղացին, և յորում կրօնից պարտքերուն մէջ և խստակրօն կրթութիւններն հարկաւորապէս աւելի կերպով մը

կ՝ամրացընեին հնազանդութեան և սիրոյ կապերը՝ որ զիրենք կը միացընեին Քրիստոսի անմահ հարսին հետ, թողլով հանդերձ զիրենք ընկերական և աշխարհային կենաց մէջ, որպէս զի հոն հանգիստ կերպով աճեցընեն այն անձնանուիրութիւնը և այն սէրը որ դեռ նոր արծարծած էր սրտերնուն մէջ։ Անոր համար Բ Փրեդերիկոս կայսրն հրապարակաւ կը գանգատէր, որ այս Երրորդ կարգին մէջ արգելք մը կը գտնար իւր խորհուրդներն ի գործ դնելու զոր ունէր սուրբ Ա.թոռոյն դէմ, և իւր Ա. տեղապահին Պետրոս իւր թղթոցը մէջ կը պատմէ որ կարծես թէ բոլանդակ քրիստոնէութիւնը անոր մէջ մտած էր. և թէ այս կարգին և իր յառաջադիմութեանը հնարիւ, երկնից զօրութիւնն այս աշխարհիս վրայ աւելի ահաւոր և աւելի շահաւետ եղած էր քան թէ երկրաւոր զօրութիւնը։ 1221ին, այն տարին յորում սուրբն Փրանկիսկոս հրատարակեց Երրորդ կարգի կանոնադրութիւնը, իւր կրօնաւորքը սկսան Գերմանիոյ մէջ հաստատուն բնակութիւն մը ունենալ։ Տարակոյս չկայ որ ուրիշ տեղ մը այսչափ համակրութիւն և քաջալերութիւն չեին կրնար գտնել, ինչպէս Գերմանիոյ բարեպաշտ և երիտասարդ դքսուհւոյն քով, որ շուտով տուաւ անոնց բարեհաճութեան մը նշանները և ամենայն ձեռքէն եկած օգնութիւնը։ Նախ և առաջ սկսաւ իր Ա.յդնախ մայրաքաղաքին մէջ Փրանկիսկեանց վանք մը շինել եկեղեցեաւ հանդերձ, երբոր ասոնք Գերմանիա մտան։ Վերջը իրեն խոստովանահայր ընտրեց Բոտինկեր եղբայրը, որ սրտալրեական կա-

նոնն ընդունող առաջին Գերմանացիներին մէկն էր կրօնաւոր մը լի եռանդեամբ, որ եղկսաբեթի վրայ կարգէ դուրս սէր և մեծարանք ունեցաւ բոլոր կենացը մէջ։

Այս նոր վերաբերութեանցը պատճառաւ Փրանկիսկոսի վրայ լսած բաները վառեցին բոլոր բոցեցին իւր նորահաս սիրտն եռանդուն սիրով առնա, և տեսակ մը անդիմադրելի բերում մը կը յորդորէր զնա հետևիլ այս ամէն տեսակ աւաքինութեանց գերագոյն օրինակին. այն ատենէն ընտրեց զնա իրեն պաշտպան և հոգևոր հայր։ Իւր նոր հիւրերին տեղեկանալով Եղիսաբեթ կարգին հաստատութիւնը Իտալիոյ և ուրիշ քաղաքաց մէջ, ուր սրբոյն Փրանկիսկոսի կրօնքն արդէն տարածուած էր, ինքն ալ խնդացաւ այն օգուտները, զոր կ'ընծայէր Ջերմեռանդ քրիստոնեի մը այս կրօնքիս մէջ մնալը։ Վասն զի կը տեսնէր հոն որ ինքն իրեն դրած մտհացուցումները և բարեպաշտ հրահանգները մնանալու կերպով սրբազան բան մը եղեր էին. ուստի խոնարհութեամբ խնդրեց իւր տնտսինէն հրաման՝ կարգին մէջ գրուելու, և առանց դրժուարութեան ընդունելին վերջը՝ անմասարեց այս առաջին կասը հաստատել սրբոյն հետ, որ քիչ ժամանակէն պիտի տեսնէր զնա գալ Թագաւորիլ իւր քովը յերկինս։ Ինքն եղաւ առաջին Գերմանիոյ մէջ որ անդամ եղաւ Եղիսաբեթ կարգին, և կանանց ալ պահեց կարգէ դուրս խղճամիտ հաւատարմութեամբ. կրնանք կարծել որ այսպիսի աղնուական իշխանուհոյ մը օրինակը՝ Թէ իւր ատենանաւը և Թէ հանրաւաւոր աստուածպաշտութեամբը՝ մեծ ազդե-

ցութիւն ունեցած ըլլայ այս ընկերութեան ա-
բաց տարածմանը վրայ։ Փրանկիսկոս քիչ ժա-
մանակէն իմացաւ թէ ինչ պատուական ստա-
ցուած մը իւր քարոզիչքը ձեռք ձգած էին
յանձն Եղիսաբէթի։ Իմացաւ նաև անոր որդե-
գրիլը իր կարգին, և իր վրայ ունեցած սէրը, և
այն սրտաշարժ առաքինութիւնքն որոնցմով կը
շինէր և կ'օրհնէր զԻուրինկիա։ Կարգէ դուրս
երախտագիտութիւն և զարմանք ունեցաւ, և
ստէպ կը խօսէր այս բանիս վրայ իր կարգին
պաշտպան Ուկոլինոյ ծիրանաւորին հետ, որ քե-
ռորդի էր Ինոսենտիոս Գին, և ետքէն քա-
հանայապետ ալ եղաւ Գրիգոր Թ կոչուելով։
Սա որ ժամանակաւ պիտի հսկէր Եղիսաբէթի
ապահովութեանը երկրիս վրայ, և իւր փառքը
նուիրական պիտի ընէր յերկինս, արդէն անոր
վրայ սիրալիր հոգատարութիւն ունէր, և այս
զգացմունքը օր օրուան վրայ կ'աւելնար պատ-
ճառաւ այն համակրութեանը զոր ինքը կը գըտ-
նէր դքսուհւոյն վրայ՝ այս առաքելոյն համար,
որուն գլխաւոր պաշտպանն էր, ինչպէս նաև մը-
տերիմ և ջերմ բարեկամը. անոր համար զօ-
բացուց զՓրանկիսկոս Եղիսաբէթի վրայ ունե-
ցած սիրալիր զգացմունքը մէջ։ Ա.ին սքանչելի
խոնարհութիւնն որուն այս երիտասարդ իշխա-
նուհին գեղեցիկ օրինակ մը կ'ընծայէր, իւր
խստակրօն և եռանդուն բարեպաշտութիւնն և
աղքատասիրութիւնը յանձախ իրենց ընտանեկան
խօսակցութեանցը նիւթ կ'ըլլային։ Օր մը ծի-
րանաւորն սրբոյն յանձնեց որ դքսուհւոյն առ-
հատչեայ մը տայ իւր սիրոյն և յիշատակին,
և նոյն միջոցին վրայէն վերցուց այն հին և աղ-

քատ վերարկուն զոր վրան առած էր, պատուիրելով որ շուտ մը իւր Գերմանիոյ մէջ ունեցած դստերը զրկէ, խոնարհ Եղիսաբեթին, իբրև պարգև մը պատշաճ իր խոնարհութեանը և կամաւոր աղքատութեան զորոնք ուխտիւ յանձն առած էր, և միանգամայն իբրև նշանակ երախտագիտութեան այն ամենայն ծառայութեանց զոր արդէն ըրած էր Երրորդ կարգին։ «Կուզեմ որ, ըսաւ, որովհետև ինքը լի է քու հոգովդ, իրեն ձգես այնպիսի ժառանգութիւն մը, ինչ որ Եղիա ձգեց իւր Եղիսէ աշակերտին»։ Սուրբը հնազանդեցաւ իւր բարեկամին, և զրկեց անոր՝ զոր իրաւամբ կրնար կոչել իւր դուստրը՝ այս պարկեշտ ընծայն հանդերձ նամակով մը յորում խնդակից կ'ըլլար իրեն հետ այն ամենայն հնարքներուն համար զոր աստուած իրեն տուեր էր, և ինքը աղէկ կը գործածէր։

Դիւրին է գուշակել այն երախտագիտութիւնն որով Եղիսաբեթ ընդունեցաւ այս ընծայն որ այնպէս յարդ ունէր իր դիմացը, և ուրիշներուն ալ կը յայտնէր. ամէն անգամ որ աղօթքի կը կենար՝ աստուծմէ մանաւոր շնորհք մը ընդունելու համար զայն կը հաղնէր, և երբ ժամանակ անցնելէ վերջը՝ կատարեալ կերպով հրաժարեցաւ որ և իցէ իրեն յատուկ բան ստանալէն, գտաւ մինչև իւր աղքատ հօրը սիրելի վերարկուն՝ մինչև իր մահը պահելու, և այն ատեն կտակաւ ձգեց զայն, իբրև իւր ամենէն աւելի պատուական գոհարը՝ իւր մէկ բարեկամուհւոյն։ Յետոյ պահուեցաւ ամենամեծ խնամքով, իբրև կրկնակի սուրբ նշխար մը, Տեւտոնեան ասպետներէն Վէիսսենֆելէլը քաղաքը

Սբիրայի վիճակին մէջ. և Պերդոլտ անուանով եղբայրը, որ այն դարուն հռչակաւոր քարոզիչն էր, Եղիսաբէթի սրբացումանը դատաւորնեբուն պատմեց, որ շատ անգամ ինքը տեսած էր զայն և մեծարանօք շօշափած, իբրև փառաւոր դրօշ մը այն աղքատութեան որ յաղթած էր բոլոր աշխարհի և անոր ամէն ճոխութեանցը այնչափ սրտերու մէջ։

Այս դրօշին հովանոցին տակն է որ Եղիսաբէթ պիտի ժողվէ իր հոգւոյն խորերուն մէջ այն պէտք եղած այժը որով ժամանակ անցնելէ վերջը աշխարհիս և իւր սրտին վրայ պիտի տանի այն շքեղ յաղթանակները զոր աստուած պահեր է իրեն. այսուհետև միացած մտերիմ և սիրալիր կապով մը այն սերովբէանման մարդուն հետ, նորանոր քայլեր պիտի առնու այն փշալից և նեղ ճանապարհին մէջ որ յաւիտենական փառաց կը տանի և ուսկից ինքը պէտք է որ անցնի քիչ տարուան մէջ։

Սակայն հազիւ թէ տասն և եօթը տարուան էր՝ թողուց զինքը իւր Փրանկիսկեան խստաշունչ նահայրը, հայրն Ռոտինկէր, որ իւր առաջին քայլերուն առաջնորդած էր՝ սրբոյն Փրանկիսկոսի հետեւորը վրայէն։ Պէտք եղաւ խորհիլ ուրիշ մը գտնել անոր տեղը, և դուքսը որուն Եղիսաբէթի խորհուրդ հարցուց՝ իր այս շփոթութեանը մէջ, և որ կարգէ դուրս տրտմած էր, տեսնելով զԵղիսաբէթ որ դեռ բաւական հրմտութիւն չունէր սուրբ գրոց և կրօնից գիտութեանցը, քահանայապետին գրեց՝ խնդրելով խնայուն և լուսաւորեալ առաջնորդ մը իւր կնոջը համար։ Սրբազան պապը պատասխանեց

թէ՝ Մարպուրկի Գոնրատ քահանայէն աւելի բարեպաշտ և խնամատուն քահանայ մը չէր Ճանչնար. որ իւր ուսմունքը ըրած էր 'ի Բարիզ, և այն ատեն Գերմանիոյ մէջ առաքելական պաշտամանց գործակատարն էր։ Եւ արդարև Գոնրատ քահանայն այն ժամանակը կարգէ դուրս համարմունք ստացեր էր ամէն հաւատացելոց և եկեղեցականաց առջև, կը փայլէր ի Գերմանիա, ինչպէս որ իւր ժամանակակիցք կ'ըսեն, լուսաւոր աստղի մը պէս։ Ընդարձակ գիտութեան հետ ուներ օրինակ առնելու սրբութիւն մը և հաստատուն գործադրութիւն մը աւետարանական աղքատութեան։ Հրաժարեցաւ չէ թէ միայն յամենայն ժամանակաւոր ընչից, որոնց իւր ազնուական ծննդոյն իրաւունք ուներ, այլ նաև յամենայն եկեղեցական պատուոյ. անոր համար պատմագիրներն շատը՝ մուրացիկ կրօնաւորաց կարգերուն մէկուն մէջ կը դնեն զինքը, որոնք այն ատեն Եւրոպիոյ մէջ սկսած էին տարածուիլ. բայց աւելի հաւանական կ'երևնայ որ միշտ աշխարհական քահանայ մնացած ըլլայ։ Իւր արտաքին կերպը պարզ էր, պարկեշտ, և միանգամայն խիստ. իւր զգեստն բոլորովին համեմատ եկեղեցական վիճակի. Ճարտասանութեամբը զօրաւոր ազդեցութիւն մը ուներ սրբտերու վրայ։ Պզտիկ ջուրոյ մը վրայ հեծած, կը քալէր բոլոր Գերմանիոյ մէջ. ուր որ կ'երթար, ետևէն կը վազէին անթիւ քահանայք և աշխարհականք, իւր բերանէն ընդունելու համար աստուածային խօսքին հացը։ Ամէն տեղ սեր կամ երկիւղ կ'ազդեր, սեր՝ ջերմեռանդ քրիստոնէից, երկիւղ ամենայն մոլորամիտ հե-

բետիկոսաց։ Մեծն Իննովկենտիոս Գ. իրեն յանձնած էր սրբազնութեան պաշտամանն գործակալութիւնն ի Գերմանիա, և մանաւորապէս Վալդեանց, Լիոնի աղքատը ըսուած հերետիկոսներուն և ասոնց նմանեաց աղանդոյն տարածմանը դէմն առնուլ, որոնք մնած էին Հռոմէական անդին եղող գաւառաց մէջ, և եկեղեցւոյ նոյն թշուառութիւնները կը սպառնային ինչ որ ի հարաւային Գաղղիա։ Ասոնցմէ զատ խաչակրութիւն ալ քարոզելը իրեն վրան էր, և շատ անգամ կրցաւ տաքցընել գերմանական գաղղութիւնը այս նուիրական արշաւանաց համար, Իննովկենտիոսի արժանաւոր եռանդ եամբ և անխոնջութեամբ։ Ս. յս քահանայապետին երկու յաջորդքը Ոնորիոս Գ. և Գրիգոր Թ. այս պաշտամունքը դարձեալ իրեն յանձնեցին. և ինքը արժանի եղաւ անոնց վստահութեանն՝ իր յարատեւութեամբը, նախանձովը և անսկուն քաջութեամբը, զոր կը ցուցընէր իւր ամէն գործոցը մէջ։ Ս. յն քսան տարուանը մէջ զոր այս պաշտամանցը նուիրեց՝ որ և իցէ արգելք որ և իցէ դիմադրութիւն, որչափ որ ալ զօրաւոր ըլլային իրեն չկրցան յաղթել. նոյն իսկ իշխանաք և եպիսկոպոսք՝ անոր խիստ արդարութենէն ազատ չեղան ոչ ինչ նուազ քան զաղքատ աշխարհականաց՝ երբոր գործքերնին ստգտանելի էր՝ և կրնանք իր այս բացարձակ անկողմնակալութեանն ընծայել այն մեծ սէրը զոր ստացաւ ժողովրդէն իր դժուարին պաշտամանց հրահանգացը մէջ։ Ժամանակակից մը կ'ըսէ որ ինքը դառն դատախազ մըն էր ամենայն ախտից, սոսկումն ամենայն բռնաւորաց, և անխոնջ հալածիչ հեր-

ձուածողաց։ Վերջապէս զոհ եղաւ իւր խստութեանը, ինչպէս որ պիտի տեսնենք. բայց իրմէ հալածուողներէն ունեցած սաստիկ մահը՝ չբերաւ իրեն այն գերագոյն պատիւը զոր սուրբ Աթոռը տուաւ սրբոյն Պետրոսի Պարեհտիկեայ, և կամ Վերծնացի սուրբ Պետրոսին որ իրեն պէս գրեթէ նոյն ժամանակը մեռան վկայ հաւատոց։

Լուդովիկոս դուքսը որ արդէն Ճանչցած էր հաւանականաբար զԳոնրատ նախ քան սրբազան պապին զանիկայ իրեն յանձնելը, այնչափ վստահութիւն և մեծարանք ունեցաւ իրեն վերայ հանդիսական կերպով իշխանութիւն տալու իւր եղբարց հաւանութեամբը այս պարզ քահանային հնորհել արժանաւորագոյն հպատակաց ամենայն եկեղեցական իշխանութիւնները որոնց վերայ պաշտպանութեան և կամ մատակարարութեան իրաւունք ունէր։ Ասիկայ լաւագոյն՝ պատասխանն էր Գոնրատի յորդորանացը որ կը խրատէր զինքը խղճի մտոք գործածել այսպիսի իրաւունք մը որ այնչափ կարևոր է հոգւոց փրկութեան համար։ «Երբ կը յանձնես, ասած էր իրեն բարեհաճութեամբ քաջոգիչը, եկեղեցի մը կամ խորան մը որուն հետ եկեղեցական հասոյթ մը կապուած է՝ տգէտ կամ անարժան քահանայի մը, աւելի մեծ մեղք մը կը գործես, քան եթէ պատերազմի մէջ յիսուն կամ վաթսուն հոգի սպանած ըլլայիր քու ձեռքովդ»։ Վերջը Լուդովիկոս իրեն աղաչեց որ յանձն առնու իւր կնոջ հոգևոր վերակացութիւնը, և Գոնրատ հաւանեցաւ, թէ դքսին բարեպաշտութեանը նայելով, և թէ քահանայապետին յանձնարարութեանը։

Նորահաս դքսուհին, որ ինչպէս ըսինք դէռ տասնը եօթը տարուան էր, երբոր իմացաւ թէ այսպիսի սրբութեամբ և գիտութեամբ համբաւաւոր անձ մը իրեն պիտի նուիրէր իւր մանուկ խնամքը, կարգէ դուրս երախտագիտութիւն և խանարհութիւն ունեցաւ, և պատրաստուեցաւ պահօք և նորանոր մտհացուցմամբ այն բանին զոր ինքը կը համարէր երկնային շնորհք մը։ Շատ անգամ կ'ըսէր. « Ես աղքատ մեղաւոր մըն եմ և արժանի չեմ որ այս սուրբ մարդը իմ վրաս խնամք ունենայ. աստուած իմ, ո՞ւրչափ շնորհակալ եմ քու շնորհացդ »։ Երբ իրեն ծանուցին Գոնրատի մօտենալը, ընդառաջ գնաց, և ծնկան վրայ գալով բսաւ. « Իմ հոգևոր Հայրս, հաճէ ընդունել զիս իբրև քու դուստրդ յաստուած. ես քեզի անարժան եմ, բայց ինքզինքս քեզի կը յանձնեմ եղբօրս սիրոյն համար »։ Գոնրատ տեսնելով երիտասարդ և հարուստ իշխանուհւոյ մը այսպիսի կանուխ և խորին խոնարհութեամբ մէջ անոր հոգւոյն հանդերձեալ փառաց գուշակութիւնը, չկրցաւ ինքզինքը բռնել ու աղաղակեց. « Ցեր իմ Յիսուս, քանի հրաշքներ կը գործես քուկդ եղած սրտերուն մէջ »։ և յայտնեց այլ և այլ անգամ իր այս պատահմանէն զգացած ուրախութիւնը։ Այն ժամանակէն ի վեր՝ Գոնրատ դքսուհւոյն խոստովանահայրը եղաւ, և իրեն սովորական եռանդեամբը սկսաւ դարմանել այս պատուական բոյսը որ իրեն յանձնուած էր երկնից համար աճեցընել։ Քիչ ատենէն հոգևոր կենաց բնական ազդեցութիւնը այնչափ ուժով ընդարձակուեցաւ Եղիսաբեթի հոգւոյն

մէջ, և իւր եռանդը քրիստոնէական կատարելութեան համար այնչափ սաստիկ և շատ եղաւ, որ Գոնրատ օր մը գտաւ զինքը, ինչպէս որ առքահանայապետը գրած նամակին մէջ կ'ըսէ, արցունքով լի և դառնապէս գանգատելով որ իւր ծնողքը սահմանած էին զինքը ամուսնական վիճակի, և թէ չէր կրցած այս մտկանացու կեանքը լմընցընել՝ պահելով իւր կուսութեան ծաղիկը որպէս զի մատուցանէ զայն աստուծոյ։ Սակայն, ինչպէս որ իր պատմիչներէն մէկը կ'ըսէ, թէպէտ Ջերմեռանդութեանն համար կը ցաւէր ամուսնացած ըլլալուն վրայ, բայց սաստիկ սէր և գորով կը ցուցընէր իւր ամուսնոյն։ Անոր փոխարէն՝ իր ամուսինն ալ Եղիսաբեթի յառաջադիմութեանցը արգելք չըլլալուն զատ ան ճամբուն մէջ ուր կը մտցընէր զինքը Գոնրատ, ձեռքէն եկածին չափ գործակից և օգնական կ'ըլլար։ Սիրով իրեն թոյլ տուաւ որ կատարեալ հնազանդութիւն ուխտէ այն ամէն բաներուն զոր խոստովանահայրը իրեն պիտի ապսպրէր, և որ ամուսնութեան իրաւանցը և արդար իշխանութեանը հակառակ պիտի չըլլային։ Եղիսաբեթ վրան աւելցուց նաև ժուժկալութեան ուխտը երբոր այրի մնալու ըլլար, և այս երկու ուխտերն ըրաւ 1225ին, տասը ութը տարուան եղած ատենը մեծահանդէս կերպով Գոնրատայ առջև, Անյմնախ քաղաքը, սրբուհւոյն Կատարինեայ հաւատաւորաց եկեղեցւոյն մէջ։ Այս հնազանդութեան ուխտը շատ հաւատարմութեամբ և խոնարհութեամբ կը պահէր, աստուծոյ նուիրելով այն ամէնայն ջհերը որ իրեն աւելի ծանր կու գային։ Վերը

տեսանք թէ ինչ փափկութեամբ և խղճամիտ ճշդութեամբ կը հպատակէր Գոնրատայ դրած արգելքներուն նկատմամբ դքսական սեղանոյն կերակրոցը որոնց սկիզբը աղքատ ժողովրդէն անիրաւ կերպով պահանջուած տուքերուն ալ դիւնք կ'երևնար իրեն։ Գոնրատ ըստ իր բարուց խստութեանը, և զեղխաբէթ իբրև սոսկ քրիստոնեայ մը մնածելով, ամենևին չէր ուզեր թեթևցնել այն կամաւոր լուծը զոր անիկայ վրան առած էր, և հետը անանկ սաստկութեամբ կը վարուէր որ երթալով անոր ալ արդիւնքը կը շատնային աստուծոյ առջև։ Որ մը Գոնրատ կանչել տուաւ զեղխաբէթ, որպէս զի իր քարոզը լսէ. սակայն նա չկրցաւ գալ, որովհետև իր տալը Մինոիդ Մարկրաւոնէին՝ իրեն այցելութեան եկած էր։ Գոնրատ նեղանալով անոր անհնազանդութեանը վրայ, և կոծրնցնելուն համար քսան օրուան ներողութիւնը զոր Պապը շնորհած էր իր քարոզներուն ներկայ եղողաց, խնայուց իրեն որ անկէ վերջը պիտի դադրի իր հոգւոյն վրայ խնամք ունենալէն։ Երկրորդ առաւօտը Եղխաբէթ վազեց Գոնրատի քով և խիստ շատ աղաչեց որ այս դժնդակ դիտաւորութենէն ետ կենայ, և ներէ իր յանցանքին։ Աջի բերանը Գոնրատ մերժեց խստութեամբ անոր աղաչանքը. բայց Եղխաբէթ անոր ոտքը ինկաւ, և յետ այս դրբին մէջ երկար ժամանակ աղաչելու, վերջապէս ներումն ընդունեցաւ, հանդերձ ծանր ապաշխարանքով մը որ դրուեցաւ իրեն և իր պատուոյ օրիորդաց վրայ զորոնք Գոնրատ Եղխաբէթի անհնազանդութեանը մնանակից սեպեց, և այն պատճառաւ ասասիկ ալ յանդիմանութիւն տուաւ անոնց։

Զեռուընիս պատուական յիշատակարան մը հասած է Գոնարատայ իր երևելի ապաշխարութեան վրայ բանեցուցած հոգևոր վերակացութեանը, որ է այն երկոտասան կանոնները զոր տուած էր իրեն իբրև բովանդակութիւն մը իր բռնելու ձամբուն, և զոր ժամանակագիրը խնամով պահած են։ Մենք ալ հոս մէջ կը բերենք բառ առ բառ։

1. Կամաւոր աղքատութեան անարգութիւնները համբերութեամբ կրէ։

2. Սրտիդ մէջ առաջին տեղը խոնարհութեան տուր։

3. Մարդկային մխիթարութիւններէ և մարմնոյ հեշտութիւններէն ետ կեցիր։

4. Ցամենայնի եղբարցդ հետ գթութեամբ վարուէ։

5. Աստուծոյ յիշատակը միշտ սրտիդ մէջ ունեցիր։

6. Շնորհակալ եղիր աստուծոյ, որ իւր մարմնամբը զքեզ յաւիտենական մահուանէ և 'ի դժոխոց ազատեց։

7. Որովհետև աստուած քեզի համար այնչափ չարչարանք քաշեց, դուն ալ խաչդ համբերութեամբ վերցուր։

8. Բովանդակ ինքզինքդ աստուծոյ նուիրէ հոգւով և մարմնով։

9. Ստէպ յիշէ որ աստուծոյ ձեռացը գործն ես, և հետևաբար այնպէս գնայ, որ կարենաս յաւիտեան իրեն հետ ըլլալ։

10. Ներէ և թող տուր եղբարցդ՝ ինչ որ կը փափաքիս որ անոնք քեզի ներեն և թողուն. ըրէ իրենց՝ ինչ որ կ'ուզես որ իրենք քեզի ընեն։

11. Մտածէ միշտ թէ որչափ համառօտ է կեանքը, և թէ երիտասարդք ալ կը մեռնին ծերոց պէս, և միշտ յաւիտենական կենաց փափաքէ։

12. Անդադար ողբա մեղացդ վրայ և աղաչէ զաստուած որ քեզի ներէ։

ԺԱ.

Ինչպէս ասուած յայտնեց իւր շնորհքները սրբուհւոյն Եղիսաբեթի.

Յետ այսպէս Եղիսաբեթի կենաց ընդհանուր դէպքերը պատմելնուս իւր Լուդովիկոս դքսին հետ ամուսնացած ժամանակը, պէտք է որ դառնանք իւր ամուսնութեան առաջին տարիները, և պատմենք այն դէպքերէն մէկքանին որ իւր կենաց միօրինակութեանը զանազանութիւն մը տուին, և միանգամայն աստուծոյ իր խոնարհ աղախնոյն վրայ ունեցած սիրոյն սքանչելագործ ցոյցերն էին։

1221ին դքսուհւոյն հարսնիքէն քիչ ետքը, իւր հայրն Անդրէաս թագաւորը, որ մէկ քանի տարի առաջ խաչակիր զինուոր գրուած էր և կը դառնար Յեգիպտոս ըրած փառաւոր արշաւանքէ մը, տեղեկացաւ Ճշմարտապատում անձինքէ որ իւր դստերն ամուսնութիւնը կատա-

բուած էր, և թէ յիրաւի Դուբինկիոյ դքսուհի
եղեր էր։ Բայց ալ աւելի վստահ ըլլալու հա-
մար, յանձնեց իւր աղբուսնեացը չորս իշխանանե-
ուն որ կ'երթային յուխտ Լա-Լա-Շաբէլ քա-
ղաքը, որ գառնալու ատենին անցին Դուբին-
կիայէ, և իրեն ստոյգ տեղեկութիւն բերին
իւր գաղերը կենաց կերպին, աղբուսնեացն ու
բնակած գաւառին վիճակին վրայ, և միանգա-
մայն հրաւիրեն զինքը որ իւր ամուսնոյն հետ
Հունդարիա գայ իւր ծերունի հայրը ուրախա-
ցընելու, վասն զի մեծ փափաք ունէր երկուքն
ալ տեսնելու։ Իշխանները իրենց ուխտը կատա-
րելին վերջը Լա-Լա-Շաբէլ քաղաքը՝ սուրբ աս-
տուածածնայ եկեղեցւոյն մէջ փոխանակ Փրան-
գոնիոյ՝ Դուբինկիոյ ճամբան բռնեցին և հա-
սան Վարդպուրկ։ Դուքսը զանգնք սիրալիր կեր-
պով ընդունեցաւ, սակայն մէկէն միտքն ե-
կաւ որ իւր կինը պատշաճ զգեստ չունէր այս
հրաւիրելոց առջևն ելնելու համար. ուստի
այս բանիս համար սաստիկ տագնապած և հոգ
ընելով, գնաց Եղիսաբեթի սենեակը, և ըսաւ
իրեն. «Ո՛հ, սիրելի քոյր, ահա հօրդ պալա-
տականներէն ոմանք եկեր են. ստոյգ եմ որ
պիտի ուզեն իմանալ ինծի հետ ինչպիսի կեանք
կ'անցընես, և եթէ ունիս արդեօք դքսուհւոյ
մը արժանաւոր կերպը։ Բայց դու ինչպէս պի-
տի ելլես անոնց դիմացը. այնչափ խեղդ միտքդ
աղքատանալուն տուեր ես որ ինքզինքդ կը մո-
նաս. միշտ կ'ուզես այդ ողորմելի զգեստները
հագնիլ, որով թէ՛ զիս և թէ զքեզ ամօթով
կը ձգես։ Ինչ անպատուութիւն ինծի համար,
երբ երթան Հունդարիա պատմելու որ զքեզ

առանց զգեստի կը ձգեմ, և թէ զքեզ այսպի-
սի խեղճ վիճակի մը մէջ գտան. ժամանակ ալ
չունիմ որ քեզի ուրիշ զգեստներ պատրաստել
տամ որ արժանի ըլլաս քու և իմ ատենա-
նիս»։ Բայց Եղիսաբէթ քաղցրութեամբ պա-
տասխանեց իրեն. «Իմ սիրելի տէրս և Եղբայրս,
հոգ մ՚ըներ այս բանիս համար, փոխն զի միտքս
դրած եմ՝ իմ փառքս ոչ երբէք զգեստներուս
վրայ դնելու. գիտեմ ես այս իշխանաց առջև ինք-
զինքս արդարացընել, և պիտի ջանամ հետերը-
նին անանկ զուարթութեամբ և քաղցրութեամբ
վարուիլ, որ իրենց հաճոյ ըլլամ որպէս թէ
ամենին աղուոր զգեստները հագած ըլլայի»։
Եւ մէկէն աղօթքի կեցաւ, և խնդրեց աս-
տուծմէ որ զինքը հաճոյական երևցընէ իւր բա-
րեկամացը առջև. յետոյ ձեռքէն եկածին չափ
մաքուր հագուելով, գնաց իւր ամուսնոյն և հօ-
րը կողմանէ զրկուած մարդիկներուն տեսնուե-
լու։ Ոչ միայն զանոնք զմայլեցուց իւր սիրալիր
ընդունելութեամբը, քաղցր կերպովը, հրաշալի
և արշալուսոյն պէս թարմ գեղեցկութեամբը,
այլ նաև ի մեծ զարմանս դքսին և օտարական-
ներուն երևցաւ իրենց մետաքսէ փառաւոր զգ-
եստներ հագած և երկնագոյն թաւիշէ պատ-
մուճանի մը մէջ պլլուած որ ցանուած էր մե-
ծագին մարգարիտներով։ Հունգարացիք ըսին որ
Գաղղիոյ թագուհին այսչափ հարուստ կերպով
չէր կրնար զարդարուիլ։ Մեծահանդէս սեղա-
նէ մը վերջը, դուքսը շատ ուրախ եղաւ իր հիւրերուն
որ դեռ աւելի կենան իր քովը. բայց ամենը նե-
րուն խնդրեցին պատճառ բերելով որ իրենց
ուխտի ընկերակիցքը չեին ուզեր սպասել, ուս-

տի անոնց հետ քաղաքը ինքաւ, բոլոր ծախքերնին վճարեց, և անոնց ուղեկից եղաւ քաւական հեռու տեղ։ Յետոյ ամենայն փութով իւր կնոջը քով գնաց, և հարցուց իրեն թէ՝ ուսկից աս գեստները գտած էր։ Եղիսաբեթ պատասխանեց քաղցր և համեստ ժպիտով մը. «Ահա աստուծոյ ըրածը երբ իրեն հաճոյ է»։

Եատ հեղինակներ այս հրաշքը ուրիշ կերպով կ'աւանդեն. կ'ըսեն թէ որովհետև Եղիսաբեթի առաքինութեանց համբաւը ամեն տեղ կը տարածուէր, զօրաւոր իշխան մը, (որ ըստ ոմանց ինքն իսկ կայսրն էր), Ամբոխդութեան ատենը դքսին երկիրներէն անցաւ, դուքսը իրեն ընդ առաջ գնաց, և ուզեց զինքը իւր դրդեակը հրաւիրել, բայց օտարականը չընդունեցաւ դքսին հրաւէրքը, ինչուան որ չխոստանայ իրեն ցուցընել զդքսուհին, և թոյլ տալ որ անոր հետ խօսի։ Լուդովիկոս յօժարութեամբ յանձն առաւ, և իշխանը տարաւ Վարպուրկ։ Մեծ կոյսունքէ մը վերջը, իշխանը յիշեցուց դքսին իւր խոստմունքը, անիկայ ալ շուտով մարդ ղրկեց Եղիսաբեթին, որ սենեակին մէջ աղօթք կ'ընէր. որպէս զի գայ և օտարականին հետ խօսի։ Բայց Եղիսաբեթ՝ ըստ իր սովորութեանը աղքատաց տուած էր իւր զգեստներն և զարդերը. անոր համար աղաչէց ի ծածուկ իւր ամուսնոյն որ այս անգամ թողութիւն շնորհէ իրեն, որովհետև պատշաճ զգեստ չունէր հիւրերուն առջև երևնալու համար։ Իշխանը միշտ վրդով կու տար։ Այն ատեն Լուդովիկոս երբ սեղանէն և գնաց զԵղիսաբեթ աղաչելու որ գայ, մէկ քանի քաղցր յանդիմանութիւններ ալ ը-

նելով իրեն, մէկէն ի մէկ չհնազանդելուն հա-
մար։ Եղիսաբեթ պատասխանեց որ հիմա կու-
գամ։ «Քաղցր և գեղեցիկ Տէր իմ, վրայ բե-
բաս, պիտի երթամ և կանչդ պիտի կատարեմ,
վասն զի ինձի մեծ յիմարութիւն է քեզի դէմ
դնելը որ և իցէ բանի մէջ։ Ես քուկդ եմ, տէր
իմ, քեզի տրուած եմ, միշտ քեզի հաւատար-
մութեամբ հնազանդած եմ, և ասկէց ետքն ալ
քու կանչդ պիտի կատարեմ, որովհետև աս-
տուծմէ ետքը դու ես իմ տէրս»։ Յետոյ երբ
դուքսը սենեակէն ելաւ, Եղիսաբեթ ծնկան վրայ
գալով՝ ըսաւ. «Տէր Յիսուս Քրիստոս, Հայր
բարեգութ և հաւատարիմ, քաղցր միսիթարիչ
աղքատաց և ամենայն նեղելոց, բարեկամ և
օգնական հաւատարիմ քեզի ապաւինողներուն,
օգնէ քու խեղճ աղախնոյդ, որ մերկացաւ բո-
լոր իր զարդերը քու սիրոյդ համար»։ Մէյմէն
ալ հրեշտակ մը երևցաւ իրեն և ըսաւ. «Ո՛վ
ազնուական հարսն թագաւորին երկնից, տես
թէ ինչ կը խրկէ քեզի այնչափ սիրած աս-
տուածդ, զքեզ ողջունելով գորովալիր մտեր-
մութեամբ, պիտի հագնիս այս պատմուճանը,
և այս պսակով պիտի պսակուիս ինչպես յաւի-
տենական փառաց»։ Եղիսաբեթ չնորհակալ
եղաւ աստուծոյ, զարդարուեցաւ պսակովն և
պատմուճանաւը, ու գնաց կոչնոց սրահը։ Հրա-
փիրեալք տեսնելով զԵղիսաբեթ այնպէս ազ-
խութեամբ հագուած և այնպէս գեղեցիկ, կար-
գէ դուրս զարմացան, վասն զի իր դէմքը
հրեշտակի մը պէս կը փայլէր։ Նստաւ անոնց մէջ
տեղը, և ողջունեց սիրով և ուրախութեամբ.
վերջէն անոնց սկսաւ զուրցել մեղրէն աւելի

քաղցր խօսքեր, անանկ որ բոլոր կոչնականները աւելի մնալնդ առին անոր ըսածներէն քան թէ սեղանին վրայ եղած կերակուրներէն։ Իշխանը ուրախացած զՆղիսաբեթ տեսնելուն համար՝ զոր այնչափ կը փափաքէր տեսնել, իւր հրաժարական ողջոյնը տուաւ և Ջամբայ եկաւ. դուքսը բաւական տեղ անոր հետ գնաց, վերջէն փութով իւր կնոջը քով եկաւ, և իրեն հարցուց թէ ուսիկից գտեր էր այդ զարդերը։ Նղիսաբեթ վրդաւ ծածկել. այն ատեն բարեպաշտ իշխանն աղաղակեց. «Ցիրաւի մեր աստուածը շատ բարի աստուած մըն է. ինչ հաճոյական բան է այսպիսի բարերար տիրոջ մը ծառայել, որ այսչափ հաւատարմութեամբ իրենները օգնութեան կը հասնի։ Ես ալ հիմակուընէ կ'ուզեմ միշտ իր ծառան ըլլալ»։

Հետեւեալ տարին, 1222ին, ըստ հրաւիրանաց Անդրեաս թագաւորին՝ զոր իրմէ խրկուած մարդիկը տուեր էին յանուն նորա, Լուդովիկոսի և Նղիսաբեթի, դուքսը տարաւ զՆղիսաբեթ Հունգարիա, իւր տեղութեան պահպանութիւնը յանձնելով Միհլպերկ կոմսին և ուրիշ իշխանները. իրեն հետ առաւ խիստ շատ երեւելի մարդիկ, որոնց մէջ նշանաւոր էին Վարիլայի Ռոտոլֆը, Կոմիտ իշխանին որդին, որ տասնամեկ տարի առաջ Հունգարիա գացած էր զՆղիսաբեթ բերելու, և իր հօրը յաջորդած էր ոչ միայն տակառապետութեան պաշտամանը մէջ, այլ մանաւանդ իւր հաւատարիմ անձնանուիրութեանն առ Նղիսաբեթ։

Դքսուհին իրեն ուղեկից առած էր վերը յիշած կոմսերնուս ամուսինքը, և բազմաթիւ աղ-

նուատոհմ կանայք և օրիորդք։ Անդրէաս Թագաւորն անպատուամ ուրախութեամբ ընդունեցաւ իւր դուստրն և փեսայն, որոնք երկար ժամանակ անոր արքունեացը մէջ կեցան, և ներկայ գտնուեցան շատ հանդէսներու և խաղերու՝ որ տրուեցան ի պատիւ նոցա, և որոնց մէջ Դուրինկիոյ ասպետները մանաւորապէս նշանաւոր եղան. նոյնպէս ներկայ գտնուեցան Թագաւորին երկրորդ հարսանեացը. որ ամուսնացաւ Իոլանտ Գուդրնէ օրիորդին հետ, որ Կոստանդնուպոլսոյ Գաղղիացի կայսեր աղջիկն էր։ Անդրէաս Թագաւորն այս առթով անոնց տեսակ տեսակ պարգևներ տուաւ, մանաւանդ մեծագին ակուռներ. և ամեն ասպետները, և իրենց հետ եղող տիկնայք ինչուան յետին ծառայները՝ Թագաւորէն բազմահարուստ ընծաներ ընդունեցան։ Թագաւորը շինել տուաւ նաև մասնաւոր ձևով կառք մը իր աղջկանը հետը տանելիք ոսկին և գոհարները մէջը դնելու համար։ Երբոր մեկնելու ժամանակը հասաւ, Թագաւորը մեծ որսի մը տարաւ զիրենք, որովհետև Լուդովիկոս դուքսը քաջ որսորդ էր։ Յետոյ մեկմեկէ բաժնուեցան, և դուքսը տարաւ յաջողութեամբ Հունգարիա զՆդղիսաբեթ, իւր հետը եղողներն, և իւր նոր ստացած հարստութիւնը։

Իւր դառնալէն քիչ ետքը, դուքսն ամուսնացուց իւր քոյրը՝ զգ.եղեցիկն Ագնէս որ Նդղիսաբեթի մանկութեան ընկերակիցն էր, ընդ Հենրիկոսի դքսին Աւստրիոյ, և այս առթիւ համար ըլլայ, կամ իւր դարձին հանդէսն ընելու համար, մեծ հարկինք մը տուաւ ի Վարպուրկ, ուր հրաւիրեց բոլոր իր դքսութեան կոմսերը և մեծ

իշխանները հանդերձ իրենց կնիկներովը։ Երբոր սեղան պիտի նստէին, տեսան որ դքսուհին հոն չէր, որովհետև էր եկած բան սովորութեան ջուր առնելու իր ամուսնոյն հրաւիրելոյը հետ ձեռքերը լուալու համար. ամենքը միաբերան յայտնեցին որ չէին ուզեր ուտելու սկսիլ ինչուան որ դքսուհին չգայ։ Ա. ին միջոցին Եղիսաբեթ եկեղեցիէն կոչնոց սրահը դառնալու ժամանակը՝ տեսեր էր խեղճ թշուառ մը, դրեթէ մերկ՝ սանդուղքին վրայ պառկած, և այնպիսի հիւանդոտ և տկար տեսքով որ Եղիսաբեթ զարմացաւ թէ ինչպէս անանկ վիճակի մէջ կրցեր էր քաղքէն իր դղեակը գալ։ Եսիկայ զեղիսաբեթ տեսնելուն պէս աղաչեց որ իրեն ողորմութիւն մը տայ ի սէր Քրիստոսի։ Եղիսաբեթ պատասխանեց որ ոչ ժամանակ ունէր և ոչ ալ վրան ստակ. բայց խոստացաւ որ սեղանէն իրեն կերակուր զրկէ. սակայն աղքատը բարձր ձայնիւ անդադար կը ստիպէր որ շուտով իրեն բան մը տայ. մինչև որ դքսուհին յաղթուելով գթութենէն, հանեց իր պատուական մատաքսէ վերարկուն տուաւ մուրացկանին, անիկայ ալ առնելով՝ մէկէն ծալեց զայն, և իսկոյն անհետացաւ։ Եղիսաբեթ առանց վերարկուի մնալով, որ այն ժամանակին սովորութեանը հակառակ էր, չհամարձակեցաւ կոչնոց սրահը մտնել, այլ իւր սենեակը դարձաւ, ու հոն ինքզինքը ատուածոյ յանձնեց։ Բայց ծառայն որ այս ամէն բանը տեսեր էր, գնաց շուտ մը դքսին պատմելու բոլոր հրաւիրելոյց առջև ու ըսաւ. «Ցե՛ս, ցե՛ս իմ, թէ մեր ամենասիրելի դքսուհոյն ըրածը խելացի բա՞ն է. մինչդեռ

այսպէս ազնուական իշխանք հոս իրեն կը սպա-
սեն, ինքը ընդ հակառակն կը զբաղի աղքատ-
ները հագուեցընելու, և հիմա մուրացկանի մը
տուաւ իւր վերարկուն»։ Բարեպաշտ դուքսը
ըսաւ ծիծաղելով. «Երթամ նայիմ եղածը.
քիչ ատենէն ինքը հոս կու գայ»։ Այրեկեան
մը թողուլ իւր հրաւիրեալքը, գնաց առ Եղի-
սաբեթ և իրեն ըսաւ. «Սիրելի քոյր, մեզի հետ
սեղան ընելու չէս գար, շատոնցուընէ ի վեր կե-
րակուրի նստած կ'ըլլայինք՝ եթէ քեզի չսպա-
սէինք։ «Սիրելի եղբայրս, պատասխանեց, պատ-
բաստ եմ ընելու ինչ որ կ'ուզես»։ «Սակայն
ուր է, վայ բերաւ դուքսը, այն վերարկուն զոր
ունէիր եկեղեցի գացած ժամանակդ»։ «Տուի
զայն, բարի եղբայրս, ըսաւ Եղիսաբեթ. բայց
երբոր կ'ուզես, ինչպէս որ եմ՝ անանկ կու գամ»։
Այս ըսելու ատենը իր սենեկապան կնիկներէն
մէկը զուրցեց իրեն. «Տիկին, հոս գալու ժամա-
նակս վերարկուդ կախուած տեսայ իւր բևեռ-
ին դարանին մէջ. երթամ բերեմ զայն». և
քիչ ատենէն եկաւ՝ ձեռքը նոյն վերարկուն զոր
աղքատը տարած էր։ Եղիսաբեթ ծնկան վրայ
եկաւ, և ստուծոյ շնորհակալ եղաւ. յետոյ
կոչնոց սրահը գնաց իւր ամուսնոյն հետ։ Մինչ-
դեռ ամենայն ասպետք, և մանաւանդ Աւստրիոյ
դուքսը՝ իւր նորեկ հարսին հետ ուրախութեան
կու տային իրենք զիրենք, Լուդովիկոս դուքսն
ընդ հակառակն ծանր կը կենար, վասն զի կը
մտածէր այն բազմաթիւ հնորհաց վրայ՝ զոր աս-
տուած կու տար իւր Եղիսաբեթին։ Ո՞վ կրնայ
տարակուսիլ, վրայ կը բերէ իւր բարեպաշտ և
հաւատարիմ պատմագիրներէն մէկը, որ երկ-

նային հրեշտակ մը բերած ջրլայ այս վերարկուն, և թէ ինքն Քրիստոս ջրլայ այս մերկ մուրացկանին կերպարանքն առնողը՝ իւր սիրելի Եղիսաբեթը փորձելու համար, ինչպէս երբեմն զփառաւորեալ սուրբ Մարտիրոսը։ Այնպէս զարդարեց Քրիստոս իւր սիրելի ծաղկին Եղիսաբեթը՝ որ մաքրութեան և հաւատոյ շուշանն էր, ինչպէս չիրցաւ ըլլալ Սողոմոն իւր ամենայն փառացը մէջ։ Սակայն աստուած այս աղնուատոհմ և բարեպաշտ ամուսնացը ալ աւելի քաղցր և սիրելի շնորհք մը պահած էր. ամուսնութեան պատուականագոյն օրհնութիւնը՝ չէր կրնար ժխտել ամենակարողը այս երկու լծակցաց, որոնք քրիստոնէական միութեան գեղեցիկ օրինակ մը կու տային ամենուն. անոր համար տուաւ իւր հաւատարիմ աղախնոյն բերնաւորութեան շնորհքը, որպէս թէ հոս երկրիս վրայ վարձատրելու համար իր հոգւոյ և մարմնոյ մաքրութիւնը։

1223ին, երբոր Եղիսաբեթ վերջասանամեայ հասակին մէջ էր՝ իւր առաջին զաւակն ունեցաւ։ Ծնանելուն մօտ՝ տանել տուաւ զինքը Գրայզպուրկ գղեակը որ Վերա գետին վրայ է, Այզնախ քաղաքէն մէկ քանի մղոն հեռու։ Եղիսաբեթ հոն աւելի հանգիստ էր, քան թէ Վարպուրկ և աւելի մօտ էր իւր փեսային, որ գացած էր կարգաւորելու Հեսի և Մարպուրկի վիճակները։ Բազմաթիւ ազնուատոհմ տիկնայք եկան իրեն օգնելու, և հսկեցին գիշեր ցորեկ։ Մարտի 28ին, աստուածածնայ աւետման տօնէն իրեք օր վերջը, ծնաւ իւր անդրանիկ որդին. դուքսը չէր կրցած ատենին մեկնիլ Մար-

պուրկէն, և Հոն խնացուցին որ իրեն տղայ մը ծներ է։ Լուդովիկոս մեծաւ ուրախութեամբ լեցուած, հարուստ կերպով վարձատրեց ա-մէտիս բերողը, և փութով մեկնեցաւ իւր Եղիսաբեթին քով Երթալու։ Աղէկ ատենին հա-սաւ մանկանը մկրտութիւնը տեսնելու համար, զոր Հերման կոչեց ի յիշատակ իւր հօրը։ Դուք-սը այս տղուն ծննդեանը համար զգացած ուրա-խութիւնը յայտնելու դիտմամբ, քարէ շինել տուաւ այն փայտէ կամուրջը, որ Գրազպուրկ քաղաքը կը տանէր։ Ա.յս կամուրջը դեռ կե-ցած է, հանդերձ գեղեցիկ գոթական ձեւով մատարանը մը որ և նուիրուած է սրբոյն Լիսո-ռիոսի, Ման քաղքին եպիսկոպոսին։ Հետեւեալ տարին, (1224) դքսուհին Վարպուրկ եղած ժամանակը, ուակից դուքսը թոյլ չէր տուած իրեն որ հեռանայ, որպէս զի միշտ քովը ըլ-լայ, դուստր մը ծնաւ որուն անունը Սոփիա դրին։ Ա.յս իշխանուհին յետոյ Պրուսանի դքսին հետ ամուսնացաւ և հիմնեցաւ Հէսի տանը արմատն եղաւ։ Եղիսաբեթ ուրիշ երկու աղ-ջիկներ ալ ունեցաւ, որոնց երկրորդը նմանա-պէս Սոփիա կոչուեցաւ, և երրորդն ալ՝ որ իւր հօրը մահուընէն վերջը ծնաւ՝ Գերտրուդա։ Եր-կուքն ալ ի խանձարրոց աստուծոյ նուիրուե-ցան, և աստուծոյ հարսերուն քովն առին։

Եղիսաբեթ ամենայն հաւատարմութեամբ և խղճի մտօք՝ խոնարհութեան և պարկեշտու-թեան պարտքերը՝ զորոնք վրան առած էր, կը պահէր իւր մայրական ուրախութեանցը մէջ, ինչպէս որ պահած էր թագաւորական ձոխու-թեանցը մէջ։ Իր ամեն տղաքերքէն վերջը,

երբոր մաքրութեան ժամանակը կը հասնէր, փոխանակ աշխարհային հանդէսներ և ուրախութիւններ ընելու, ինչպէս որ այն առեղին սովորութիւնն էր, կ'առնուր բազկացը մէջ իւր նոր ծածին մանուկը գաղտուկ կ'ելնէր դղեկէն, բրդէ անպատճոյճ զգեստ մը հագած և բոպիկ, ու դէպ ի հեռաւոր եկեղեցի մը կ'երթար, որ էր սրբոյն Կատարինեայ, Ա. յզնախի պարիսպներէն դուրս։ Ցաւիսայրը երկայն և խիստ էր, Ճամբան լի սուր քարերով, որ կը պատառոտէին և կ'արիւնոտէին իւր փափուկ ոտքերը. ինքը անձամբ կը տանէր իւր մանուկը, ինչպէս ըրած էր անարատ կոյսը, և եկեղեցին հասնելուն պէս, տղան խորանին վրայ կը դնէր, հետն ալ մամ մը և գառնուկ մը, ու կ'ըսէր. « Տէր Յիսուս Քրիստոս, քեզի ու քու սիրելի Մօրդ Մարիամին կը նուիրեմ իմ արգանդիս սիրելի պտուղը. ահաւասիկ, աստուած իմ և Տէր իմ, քեզի կը նուիրեմ զինքը բոլորով սրտիս՝ ինչպէս որ ինծի տուիր, քեզի՝ որ ես Թագաւոր և բարեգութ հայր թէ մօրը և թէ տղուն։ Ա. յս օրուան քեզի ըրած բոլոր աղօթքս և քեզմէ խնդրած բոլոր շնորհքս այն է՝ որ հաճիս ընդունիլ այս պզտիկ մանուկը բոլորովին իմ արցունքովս թրջած՝ քու ծառայիցդ և բարեկամացդ թուոյն մէջ, և տաս իրեն քու սուրբ օրհնութիւնդ »։

ԺԲ.

Ինչպէս բարեսիրտ Լուդովիկոս դուքսը կը պաշտպանէր իւր աղքատ ժողովուրդը.

Այս երկու սուրբ ամուսնաց վարքին մէջ, ամէն բան կը ցուցնէ այն սաստիկ համակրութիւնն որ զիրեանք կը միացնէր. և թէ որչափ արժանաւոր էին իրարու։ Ցեսանք զդքսուհին թէ ինչպէս կը բանեցընէր իւր հոգւոյն քովանդակ ազդեցութիւնն և հնարագէտ գորովը իւր իշխանութեան տակ եղած թշուառնեերը սփոփելու համար. հիմա կը մնայ ցուցնել թէ ինչպէս Լուդովիկոս դուքսը իւր զինուորական հանճարը և քաջութիւնը կը նուիրեր այն ժողովրդեան շահերը պաշտպանելու համար զոր աստուած իրեն յանձնած էր։ Այն բնաձին սէրն արդարութեան, զոր արդէն տեսանք իրրև իր գլխաւոր առաքինութիւնը, այնպէս մեծ ըմբռնել կու տար իրեն իւր հպատակաց

իրաւունքը, և այնպէս հոգ կ'ընէր անոնց դէմ եղած անիրաւութեանցը, որ այս պատճառները միայն կը շարժէին զինքը հեռաւոր և բազմաձախ արշաւանքներ ընելու։

Այսպէս 1225ին դուքսը խնացաւ որ իւր հրապատակներէն ոմանք որ վաճառականութիւն կ'ընէին Եգիպտոսի և ուրիշ սլաւեան քաղաքաց հետ, մերկացած և գողցուած էին Լիւսիանդաք բերդին քով ի Եգիպտոս։ Լուդովիկոս Եգիպտոսի դքսէն հատուցմունք մը խնդրեց այս խեղճերուն համար, և խնդիրքը մերժուեցաւ. այն ատեն հրամայեց որ շուտով բազմաթիւ բանակ մը կազմին Հէսքի, Դուբին կիոյ և Փրանգոմիոյ բնակիչներէն, որոնց հետ էին նաև Օսդէնքանտի ասպետները. տարաբաղձանք ի ծածուկ մինչև Լրպա գետին ափունքը, առանց խնացընելու իւր ընթացքին վախճանը։ Լիբսիա քաղաքը հասնելով՝ իրեն հետ միատեղ առաւ իր իշխանութեան տակ եղած սաքսոն ասպետներէն շատը, և բազմաթիւ Միսիոյ զինեալ մարդիկներ, վասն զի ինքն էր խնամակալ այն գաւառին երիտասարդ իշխանին՝ որ իւր քեռորդին էր։ Այն ատեն միայն յայտնեց թէ միտք ունէր արշաւել մինչև ի Եգիպտոս, Լիւսանդաք դղեակը պաշարելու և վրէժ խնդրելու համար իւր աղքատ հպատակաց դէմ եղած անիրաւութեանը։ Հասարակաց զարմանք մը եղաւ այս բոլոր ասպետներուն, որք չէին կրնար ըմբռնել թէ այնչափ հեռու տեղ ուզենայ երթալ վաճառականաց ոչինչ գործողութեան մը համար. բայց դուքսը ամենևին չուզեց անոնց յորդորանքներուն մտիկ ընել. ո-

բով խիստ շատը մտածեցին եւ դառնալ. սա-
կայն սոմեթը և Թերևս իւր խստութեան վախը
զիրենք արգիլեց։ Անոր համար բռնադատուե-
ցան հետը երթալ մինչև Լեհաստան, ուր մը-
տաւ իւր բանակին գլուխ կեցած, իր դիմացը
գալցընելով երեք հազար հինգ հարիւր այրբն-
տիր զօրաց առաջապահ գունդ մը, որ իրմէ ե-
րեք օր առաջ հասան Լիւպանդաք դղեկին առ-
ջեւը. քաղաքն այրեցին և դղեակը պաշարեցին,
սպասելով Լուդովիկոսի։ Լեհաստանի դուքսը
կարգէ դուրս զարմացաւ իմանալով որ Պուրին-
կիոյ իշխան մը այսչափ հեռուէն եկած էր հը-
զօր բանակաւ իւր երկիրը յափշտակելու, ու
ամոր շատ դրամական պարգևներ ղրկեց, իր
հպատակացը դէմ եղած անկարութեանը փո-
խարէն ընելու համար։ Սակայն Լուդովիկոս
մերժեց զանոնք իմացընելով իրեն որ այս ըն-
ծաները այն ժամանակ պէտք էր ընել երբոր
բարեկամութեամբ իրեն կը գրեր, դեռ պատե-
բազմի ձեռք չզարկած. և թէ չէր ուզեր այս-
չափ երկայն ճամբայ մը ընդունայն տեղ ըրած
ըլլալ։ Լիւպանդաք բերդին առջեւը հասնելուն
պէս՝ պաշարումն սաստկացուց։ Լեհաստանի իշ-
խանը խաւրեց իրեն ան ատեն եպիսկոպոս մը՝
նոր և աւելի զօրաւոր պատգամաւորութիւն մը
ընելու համար։ Ա.յս եպիսկոպոսը դքսին ըսաւ
թէ պէտք չէ մոռնայ որ Լեհաստանցիք ալ հրու-
շակաւոր պատերազմողք են, և թէ որ անյա-
պաղ ետ չդառնայ՝ Լեհաստանի դուքսը պի-
տի գայ երկրորդ երկուշաբթին, բոլոր իւր
բանակովը, և սուրէ պիտի անցընէ այն ամէն
Գերմանացիքը։ Որուն իշխանը պատասխանեց

թէ շատ պիտի ուրախանար ինքը Լեհաստանի դուքսին հետ տեսութիւն ընելուն համար, և որոշուած երկուշաբթիէն դէռ ութ օր եղեր պիտի կենար, որպէս զի տեսնէ թէ ինչպիսի մարդիկ են Լեհաստանցիք. սակայն ոչ դուքսը և ոչ ալ Լեհաստանցիք երևցան։ Մէկ քանի յաջորդակցութեանէ վերջը, դղեակը անձնատուր եղաւ և Լուդովիկոս յետ հիմնայատակ քանդելու զայն՝ դարձաւ իւր երկիրը, բոլոր արևելեան Գերմանիոյ մէջ տարածելով իւր արդարութեանը, քաջութեանը և աղքատ ժողովրդեան վրայ ունեցած սիրոյն համբաւը։

Քիչ ատենէ եղեր՝ դուքսը ուրիշ պատերազմի մը ձեռք զարկաւ որուն շարժառիթը առջինէն աւելի անհնար երևցաւ. սակայն այս դէպքը այնպիսի Ճիշդ գաղտիար մը կու տայ իւր ժողովրդականամ և բարեսէր բարուցը և այն ատենի սովորութեանցը որ մնարապատում հոս պիտի պատմենք։ Երկու կամ երեք տարի առաջ՝ Սլյնսիս քաղքին տարեկան տօնավաճառին օրը՝ երբ դուքսը քաղաքի ինչ կը զբօսնուր նայելու կրպակներուն և վաճառքներուն, աղքատ փերեզակ մը տեսաւ որ խիստ փոքրիկ ծրար մը ունէր, և կը ծախէր մանտոց, ասեղ, դգալ, կապարէ պատկերներ, և կանանց պզտիկ զարդեր։ Դուքսը հարցուց իրեն թէ այս պզտի ծրարով կրնար իւր ապրուստը Ճարել։ «Տէր իմ, պատասխանեց փերեզակը, կ՚ամչնամ մուրալու, և բաւական ոյժ չունիմ աւուրչեքով աշխատելու. բայց թէ որ միայն կարենայի ապահովութեամբ քաղքէ քաղաք երթալ, յուսամ որ աստուծոյ օգնութեամբը ապրուստս

կը ձարէի այս փոքրիկ ծարաւս, և ինչուան այն չափ կընէի որ տարւոյն վերջը՝ սկզբան ունեցածս կրկինը վաստակած կ'ըլլայի»։ Բարեսիրտ դուքսը գուշը շարժելով՝ ըսաւ իրեն. «Լաւ ան ատեն, քեզի տամ իմ ապահովագիրս մէկ տարուան համար, որպէս զի չվնարես ոչ ձամբուս ծախք և ոչ ալ մնաքս, բոլոր իմ տէրութեանս սահմանացը մէջ։ Քանի կ'ուժեղնես ծարաղ։ — Բան շիլին, պատասխանեց փերեզակը։ — Ցաստը շիլին տուր ասոր, ըսաւ դուքսն իւր գանձապետին որ իրեն հետն էր, և խրկել տուր իրեն ապահովագիր մը իմ կնիքովս»։ Յետոյ փերեզակին դառնալով «Կ'ուզես, ըսաւ, քու վաճառքիդ մասնակից ըլլալ. միայն թէ ինծի խոստացիր որ հաւատարիմ ընկերակից ըլլաս, և ես ամէն տոյժ և վնասէ կ'ազատեմ զքեզ»։ Խեղճ փերեզակը անպատում ուրախութեամբ լեցուեցաւ, ու վստահութեամբ և յաջողութեամբ ձամբայ ելաւ։ Նոր տարւոյն սկիզբը՝ փերեզակը Վարպուրկ եկաւ իւր ազնուական ընկերակիցը գտնելու, և ցրցուց իրեն իւր բոլոր ծարաղը որ խիստ աճած էր։ Դուքսը մէկ քանի բաներ գնեց ու իւր ծառայից տուաւ։ Այնն կաղանդի օրը փերեզակը Վարպուրկ կու գար դուքսին խմացընելու համար իւր վաճառքին շատնալը, որ քիչ ժամանակէն այնչափ եղաւ որ չկրցաւ կռնակին վրայ տանիլ, ուստի էշ մը գնեց, և վաճառքն երկու կապոց ընելով, սկսաւ աւելի երկայն և շահաւոր շրջագայութիւններ ընել։

1225 տարւոյն վերջերը փերեզակը Վենետիկ գացած և հոն խել մը օտար և պատուական

բաներ գնած էր, ինչպէս մատանիներ, ապա-
բանջանիներ, կանանց կուրծքի գնդասեղներ,
ակամակալ պսակներ և թագեր, փղոսկրե բա-
ժակներ ու հայելիներ, դանակներ, օձի լեզու-
ներ, բուստե վարդաբաններ, և այլն։ Երբ կը
պատրաստուէր դառնալ ի Դուբրնիկիա, որպէս
զի իւր սովորութեանը համեմատ՝ Վարպուրկ
քաղաքը գտնուի նոր տարւոյն սկիզբը, հասաւ
Փրանգմնիոյ Ալբրգպուրկ քաղաքն։ ուր ծախու
հանեց բոլոր իւր ունեցածները։ Քանի մը Փրանգ
գոնիացիներ որ տեսնելու եկեր էին, բաւական
զարդեր գտան իրենց բանին յարմար, և շատ
կը փափաքէին իրենց կանանց կամ բարեկա-
մներուն տալ, սակայն առանց ստակը վճա-
րելու։ Ա.ին պատճառաւ դիտեցին փերեզակին
մեկնելու ժամանակը, և քաղքէն քիչ մը հե-
ռու դարանի նստան անոր սպասելու։ Երբոր
հոսկից կ'անցնէր յանկարծ վրան վազեցին և
յարձակեցին իր եշը և բոլոր վաճառքը. փերե-
զակը փուճ տեղը կը ցուցնէր անանց Դուբրնիկիոյ
դուքսին ապահովագիրը, առաջակիները վրան ծի-
ծաղեցան ու ինչուան ուզեցին կապել զինքը և
հետերնին տանիլ. հաղիւ հազ փերեզակը կրցաւ
ձերբազատիլ խալասիլ, ու տրտում տխուր եկաւ
Ա.ին իւր տերը և ընկերակիցը գտնելու. և
անոր պատմեց իւր թշուառութիւնը։ «Սիրելիս,
բաւ իրեն խնտալով բարի դուքսը, շատ մի վշտա-
նար մեր վաճառքին կորսուելուն համար.
քիչ մը համբերէ, և ինձի թող ասնիկայ գրա-
նալուն հոգը»։ Շուտ մը ժողվեց շրջակայից կոմ-
սերը, ասպետները և զինակիրները, ինչուան
նաև գիւղացիները որ հետի կը պատերազմէին,

անոնց գլուխ կեցաւ, ու անյաղթաղ մնաւ Փրանգնիա, բոլոր երկիրը աւրշրջեց մինչև Վիւրցպուրկ քաղաքին դռները, ամէն տեղ իւր էշը փնտռելով։ Վիւրցպուրկի իշխան եպիսկոպոսը այս արշաւանքին լուրը առնելով՝ իրեն մարդ ղրկեց հարցնելու թէ ինչ կը նշանակէ այսպիսի ընթացք մը. որուն դուքսը պատասխան տուաւ թէ՝ իր մէկ էշը կը փնտռէր, զոր եպիսկոպոսին մարդիկը իրմէ գողցած էին։ Եպիսկոպոսը շուտ մը ետ տուաւ թէ՝ էշը և թէ՝ բոլոր վաճառքը, և դուքսը յաղթանակաւ իւր երկիրը դարձաւ, մեծ զարմանք պատճառելով իր խեղճ ժողովրդեանը զոր այնպէս կը պաշտպանէր։

Բայց մինչդեռ դուքսը այսպիսի բաներու հետ էր, հրաւիրուեցաւ Փրեդերիկոս Բ-ին Իտալիա իրեն օգնութեան գալու. շուտ մը ձամբայ ինկաւ, ու Ալպեան լեռներէն անցաւ ձմեռուընկ առաջ. և կայսեր հետ միաբանելով՝ պատերազմեցաւ Պոլոնիացւոց և ուրիշ ապստամբած քաղաքաց դէմ, և 1226ի զատկին Գրեմոնա քաղաքը եղած մեծ ժողովքին մէջ գտնուեցաւ։ Կայսրն այնչափ գոհ եղաւ իւր քաջութեանն և հաւատարմութեանը վրայ, որ իրեն շնորհեց Միխիոյ գաւառին կուսակալութիւնը, բայց այն պայմանաւ որ այս իշխանութիւնը այն ատեն իրեն անցնի երբ Յուդիթ քրոջը ցեղը լմընալու ըլլայ։ Իրեն տուաւ դարձեալ այն ամենայն գաւառաց իշխանութիւնը զոր կը յուսար ձեռք ձգել ի Բրուսիա և ի Լիթուանիա, ուր միտք ունէր քրիստոնէական հաւատքը տարածելու։

ԺԳ

Դուբենկիոյ սոսկալի սովը, և սրբուհի Եղիսաբեթին մեծ ողորմածութիւնը։

Հազիւ թէ դուքսը մեկնեցաւ արքունական դրօշուն տակ երթալու մնացեալ հատուածները, և ահա դժոխակ սով մը երևցաւ բոլոր Գերմանիոյ մէջ, և ապականեց մանաւանդ զԴուբենկիա։ Անօթի ժողովուրդը յեռին խեղճութեան մէջ ինկաւ. աղքատները կը ցրուէին դաշտերու և անտառներու մէջ ու ճամբաներու վրայ վայրենի արմատներ և պտուղներ քաղելու համար՝ որոնք ընդհանրապէս անատոց կերակուր էին. կը լափէին մեռած ձիերը և էշերը, և ամենէն զաղիր կենդանիները, սակայն հանդերձ այնու այն ողորմելիներէն շատը անօթութենէն մեռան, և ճամբաները լեցուեցան անոնց դիակներովը։

Եղիսաբեթ այսչափ խեղճութիւն տեսնելով՝ սիրտը տրորեցաւ. այնուհետև իւր միակ մնա-

ծութիւնն, իւր միակ զբաղմունքն եղաւ գիշեր ցորեկ իւր թշուառ հպատակները սփոփել։ Վաղ պուրկ դղեակը, ուր իւր ամուսինը թողած էր զինքը, եղաւ անսահման ողբմութեան մը վայրանը, ուսկից մերձակայ ժողովրդոց վրայ կ'ինկնային միշտ իր անսպառ բարեբարութիւնքը։ Նախ սկսաւ բաժնել իւր դքսութեան մէջ եղած աղքատներուն որչափ որ պատրաստ ստակ կար դքսին գանձատանը մէջ, որ այն ժամանակին համար՝ շատ մեծ գումարի կը հասնէր, այսինքն վեթսունը չորս հազար ֆիորին, որոնք մէկ քանի նոր վանքուած կաղուածներու գինն էին։ Յետոյ բանալ տուաւ իւր ամունոյն ամէն ցորենոյ շտեմարանները. և առանց նայելու իւր տանը հազարապետներուն ընդդիմութեանը՝ բոլոր ցորենը խեղճ ժողովրդեան բաժնեց, իրեն բան մը ալ չպահելով. այնչափ էր ցորենը որ ժամանակակից պատմչաց աւանդութեանը համեմատ, միայն աղքատներուն տուածը գնելու համար հարկ էր գրաւի դնել դքսութեան երկու մեծամեծ դղեակները և շատ քաղաքներ։ Սակայն գիտցաւ միացընել խոհեմութիւնը իր անսահման առատաձեռնութեանն հետ փոխանակ շատ շատ տալու ցորենը, զոր կրնային անխորհրդաբար գործածել, ամէն օր բաժնել կու տար իւրաքանչիւր աղքատի իրեն հարկաւոր եղած մասը. և որպէս զի որ և իցէ կերպով ծախքի մը պատճառ չըլլայ իրենց, դղեկնուն փոներուն մէջ եփել կու տար որչափ որ ալիւր կրնային առնուլ, և ինքը անձամբ խեղճերուն կը բաժներ ջերմ հացը։ Ինն հարիւր աղքատ ամէն օր կու գային ապրուստին Եղիսաբեթէն

խնդրելու, և կը դառնային լցուած իւր բարիք-
ներովը։

Սակայն դեռ ուրիշ շատ թշուառներ ալ
կային, որոնց տկարութիւնը կամ հիւանդու-
թիւնը թող չէր տար այն լեռն երթալու, յո-
բում շինուած էր դքսական ապարանքը. ասոնց
համար մանաւորապէս Եղիսաբեթի կրկնապատ
կեց իւր գութն և խնամքը այն ցաւալի ժամա-
նակին մէջ։ Անձամբ կը տանէր լերան ստորոտը՝
այն տկարաց որ աւելի խեղճ էին, իւր և հետը
եղողներուն կերակրոց մնացորդները, որոնց չէին
համարձակեր դպչիլ, վախնալով որ չըլլայ թէ
աղքատաց մասը պակասցընեն։ Քան և ութ
անկողին ունեցող հիւանդանոցին մէջ զոր առաջ
յիշեցինք, և զոր Եղիսաբեթի շինել տուած էր
դղեկին զան ի վերին մօտ, դրաւ այն հիւանդ-
ներն որ մասնաւոր խնամք կը պահանջէին. և
այնպէս կարգաւորեց որ հաղիւ թէ անոնցմէ
մէկը վախճանէր, մէկէն ուրիշ մը անոր անկո-
ղինը կը բռնէր։ Հիմնեց նաև երկու նորաշէն
հիւանդանոցներ նոյն իսկ Ա.յշնախ քաղքին
մէջ. մէկը նուիրեալ Հոգւոյն սրբոյ, սրբոյն
Գէորգայ դրան քով, աղքատ կանանց համար,
միւսն ալ սրբոյն Անտոնի՝ ընդհանուր ամէն հի-
ւանդաց համար. այս յետինս դեռ կեցած է։
Ամէն օր անվրէպ և երկու անգամ՝ առտու և
իրիկուն երիտասարդ դքսուհին կ'ինչնար և կ'ել-
նէր այն երկար և քարուտ ճամբէն որ կը տա-
նէր Վարպուրկէն այս հիւանդանոցները, առանց
նայելու իր խնացած նեղութիւնը՝ իր աղքատ-
ներուն այցելութիւն ընելու և անոնց հարկա-
ւոր կամ հանձոյական բաներ տանելու համար։

Այն թշուառութեան պատսպարանները հասնելով՝ անկողնին կ'երթար, հիւանդաց հարցնելու համար թէ՝ ինչ կը փափաքէին, և ամենէն ցած ծառայութիւնները կ'ընէր առանց այնպիսի երանդաւոր և գորովով, զոր աստուծոյ սէրն և իւր մանաւոր շնորհքը միայն կրնային ազդել։ Իւր յատուկ ձեռուքներովը կը կերակրէր զանոնք որոնց հիւանդութիւնը ամենէն աւելի դանելի էր, ինքը կը շոկէր առանց անկողինքը, կը վերցնէր զանոնք, և կռնակը կամ թեւերուն վրայ առած՝ ուրիշ անկողնի մը կը տանէր, և իր գլխին քօղովը կը սրբէր առանց երեսը, քիթը և բերանը՝ անայլայլակ ուրախութեամբ և սիրով։ Թէպէտ և բնական խորշում մը ունէր ծանրահոտ օդէ և ընդհանրապէս անհնարին էր իրեն անոր դիմանալը, սակայն առանց պզտիկ գանել մին ալ ցուցընելու կը կենար հիւանդաց սրահին գարշահոտութեանը մէջ՝ ամառուան էն տաք օրերուն, մինչդեռ իւր հետն եղողները չէին կրնար համբերել ու համարձակ կը քրթմնջէին։ « Մինչդեռ իւր հետն եղողներուն սիրտը զզուելէն տակն ու վրայ կ'ելլար, կ'ըսէ այս բանիս վրայօք Եօթն և տասներորդ դարուն քարի կրօնաւոր մը, արքայութեան արժանի իշխանուհին ծիծաղելով մը կ'ըսէր. երբոր աստուծոյ դատաստանին առջև ելլամ՝, և ինծի հարցնեն թէ աղքատաց ծառայեր ես, այսպէս, Տէր իմ, պիտի ըսեմ՝ այնչափ որ իմ աղախիններս շատ անգամ զզուած էն»։ Եղիսաբեթ հաստատած էր այս հիւանդանոցներէն մէկուն մէջ, մանաւոր պատսպարան մի հիւանդ, ձգուած կամ որբ տղոց

համար որոնք իւր գորովոյն մանուանոր նպատակն էին, և ամենեն քաղցր ու սիրալիր խնամքը կը ցուցըներ անոնց վրայ։ Այս տղոց պզտիկ սրտերը շուտով խնացան Թէ՝ ինչպիսի անոյշ մայր մը տուած էր աստուած իրենց այն հիգուԹեանը մէջ։ Այնեն անգամ որ ԵղիսաբեԹ կու գար, նման այն Թռչնիկներուն որ կը պահուըտին ի՛րենց մօրը Թևերուն տակ, ամենքն ալ իրեն դիմացը կը վազեին, և անոր զգեստներուն պըլ-լուելով կ՚աղաղակեին. մայրիկ, մայրիկ։ Ան ալ զանոնք իւր չորս կողմը կը նստեցըներ, պզտիկ ընծաներ կը բաժներ. և իւրաքանչիւրոց վիճակը կը քններ, իւր սէրն և գուԹը կը յայտներ մանաւանդ որոնց որ ախտը աւելի գծնդակ էր, իր ծնկոցներուն վրայ առնելով զանոնք և շատ շատ գգուելով։

Ոչ միայն այս ամենայն Թշուառաց բարերարն էր, այլ նաև անոնց բարեկամը և խորհրդակիցը։ Օր մը աղքատ հիւանդ մը իրեն պատմելով ի ծածուկ Թէ խիղճը կը զարներ պարտք մը հատուցած չըլլալուն համար, ԵղիսաբեԹ հանդարտեցուց զանիկայ խոստանալով որ ինքը կը հատուցանէ, և շուտով կատարեց իւր խոստումն։

Հիւանդանոցներու հսկիչէն ետքը կ՚ելլար քիչ մը Վարպուրկի շրջակայքը պտտելու, կերակուր և օգնուԹիւն բաժնելու այն աղքատաց որ չէին կրնար ելնել մինչև դռեակը, ամենեն խեղճ հիւղերուն այցելուԹիւն ընելու, և հոն ամենեն արհամարհ և իւր աստիճանին անվայել ծառայուԹիւններն ընելու։ Օր մը աղքատ հիւանդի մը տնակը մտաւ, ուր միայն էր, հիւանդը տեսնելով զԵղիսաբեԹ ցաւալի ձայ-

նով իրմէ կաթ խնդրեց ըսելով, թէ ինքը բաւական ուժ չունէր իր կովը կթելու. խոնարհ իշխանուհին մէկէն ախոռը մտաւ, և սկսաւ իւր ձեռքովը կովէն կաթ կթելու, բայց անասունը վարժած չըլլալով այնպիսի փափուկ ձեռքերէ շօշափուելու, թոյլ չտուաւ Եղիսաբեթի որ իւր բարի մտածութիւնը կատարէ։

Եղիսաբեթ կը ջանար հոգեվարներուն մօտուան անկողնին քով գտնուիլ որպէս զի անոնց յետին տագնապը մեղմացընէ, անոնց վերջի շունչը կ'առնուր եղբայրական սիրոյ համբուրիւ, և եռանդեամբ կ'աղօթէր աստուծոյ ամբողջ ժամերով որ սրբացընէ այս թշուառներուն վախճանը, և զանոնք ընդունի իւր փառաց մէջ։ Ոչ երբէք կը պակսէր աղքատաց յուզարկաւորութեանը հսկելու. և թէպէտ մարդամէջը խիստ շատցած էր, սակայն միշտ մեռելոց ընկերակից կ'ըլլար մինչև ի գերեզման, յետ զանոնք իւր ձեռքովը դիապատած ըլլալու այն կատաղով զոր անձամբ հիւսած էր այս դիտմամբ, կամ զոր իւր զգեստներուն մէջէն առած էր. ինչպէս այս բանիս համար մեծ ձեռմակ քողմը կտրեց, զոր սովորաբար կը գործածէր։ Չէր կրնար համբերել տեսնելով որ հարուստները դիապատելու համար նոր կամ պատուական դիպակներ կը գործածէին, այլ կը պահանջէր որ անոնց տեղ հինները գործածեն՝ նորերուն արժէքը աղքատներուն տալով։

Թշուառ բանտարկեալքն ալ Եղիսաբեթի խնամքէն զուրկ չմնացին. վասն զի այցելութեան կ'երթար ամէն տեղ ուր որ կային, դրամով կը խաղցնէր զանոնք որ պարտքի համար բանտ դը-

բուած էին, կը մաքրեր և իւղով կ'օծէր անոնց վերքերը՝ զոր շղթաներն ըրած էին. յետոյ ա-նոնց քով ծնկան վրայ գալով՝ աստուծմէ կը խնդրէր որ այն թշուառաց վրայ հոգի և զանոնք պահպանէ յամենայն նեղութենէ և յապագայ պատուհասից։ Այս ամէն զբաղմունքները որ մարդուս դիւրաբաւ յօգնութիւն, զգուշութիւն և ան-համբերութիւն կու տան՝ ընդ հակառակին Եղիսաբէթի տուին երկայնին խաղաղութիւն և ու-բախութիւն մը։ Մինչդեռ կը սփռէր իւր այն-չափ աղքատ եղբարցը վրայ իր առատ ողորմու-թեան գանձերը, Եղիսաբէթի սիրտը և մտած-մունքը միշտ առ աստուած վերացած էին, և յաճախ կ'ընդհատէր իւր բարեգործական ըզ-բաղմունքները, որպէս զի բարձրացայն առ աս-տուած ըսէ. «Ո՛վ Տէր, չեմ կրնար ըստ ար-ժանւոյն իմ շնորհակալութիւնս քեզի յայտ-նել ինծի շնորհելուդ համար այս աղքատ մար-դիկը ժողովելու առիթը, որ են քու սիրելի բա-րեկամներդ, և ինծի թոյլ տալուդ համար ան-ձամբ ասոնց ծառայելու»։ Երբ օր մը հիւրա-նոցին մէջ այս սլաքական աղօթքը կ'ընէր, աղքատները կարծեցին որ աստուծոյ հրեշտակ մը տեսան որ կ'երևնար իրեն ու կ'ըսէր. «Ու-բախացիր, Եղիսաբէթ, վասն զի դու ալ ամե-նակարող աստուծոյ բարեկամն ես, և անոր ա-ջացը առջև լուսոյ պէս կը փայլիս»։ Ուրիշ հրա-շալի նշաններ ալ կը յայտնէին պարզ և հաւա-տարիմ հոգւոյ, թէ որչափ հաճոյական էր աս-տուծոյ այս իշխանուհւոյն ողորմածութիւնն և խոնարհութիւնը։ Օր մը որ քաղաք իջած էր քանի մը հողէ ամաններ, տեսակ տեսակ ապա-

կիւ մանեակներ և խաղալիկներ գնելու իր ժողովածՆ աղքատ տղոցը համար, սայլով դղեակը դառնալու առնէր կառավարին անհմնութեամբ բը կառքը գլորեցաւ, և ժայռի մը գլխէն ինկաւ քարերու կոյտի մը վրայ։ Սակայն ոչ Եղիսաբեթ վիրաւորեցաւ, և ոչ ալ ան խաղալիկներէն մէկը կոտրեցաւ. շուտ մը գնաց զանոնք իր տղեկներուն բաժնելու և զիրենք ուրախացնելու։ Ուրիշ անգամ մը երբ իր գոգնոցովը ուտելիք կը տանէր բազմաթիւ թշուառներու, ցաւով սրտի տեսաւ որ անոնց ամենուն ալ տալու չափ չունէր, վասն զի ամէն վայրկեան ուրիշ մուրացիկներ հետզհետէ վրայ կը հասնէին։ Ուստի Եղիսաբեթ սկսաւ մտքէն աստուծոյ աղօթք ընել մէկ կողմանէ բաժնելով ինչ որ ունէր իր զգեստին մէջ, և որչափ կտոր առնելու ըլլար, միշտ անոնց տեղ ուրիշ կտոր մը կը գտնէր, և ամէն աղքատի իւր մասը տալէն վերջը դեռ իրեն կը մնար։ Եղիսաբեթ դղեակը դարձաւ իւր ընկերակցացը հետ օրհնելով զաստուած որ զինքն արժանի սեպած էր իրեն հաղորդելու իւր ամենակարող զօրութիւնը, ըստ իր բացարձակ խոստմանը. Ցիրաւի կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ինծի կը հաւատայ, իմ ըրած գործքերս պիտի ընէ, և դեռ աւելի մեծերը պիտի ընէ։

Ոչ միայն իւր բնակութեանը մերձակայ ժողովրդոցը պահած էր իւր խնամքն և սէրը, այլ նաև իր ամուսնոյն տերութեանը ամենէն աւելի հեռաւոր կողմերուն բնակիչները վայելեցին իւր գերագոյն և մայրական խնամքը։ Մասնաւոր հրամաններ տուաւ, որպէս զի Լուդովիկոս դրբսին չորս իշխանութեանց եկամուտքը գործա-

ծուին ի սփոփումն և ի պահպանութիւն աղ-
քատ բնակաց, որոնք ապրուստ չունէին սովին
պատճառաւ, և ուշի ուշով հսկեց այս հրաման-
ներուն գործադրութեանը, թէպէտ և դքսին
հազարապետներէն շատը դէմ կը դնէին։ Ա-
կեց զատ, իր հեռաւորութեամբը արգիլուած
ըլլալուն համար ատոնց անձամբ օգնելէն, ծա-
խել տուաւ իր ամէն ակունքը, պատուական
զարդերն և նիւթերը, ու անոնց գինը բաժնել
տուաւ իրենց։

Ա.յս բաներս շարունակուեցան մինչև 1226
տարւոյն հնձոց ժամանակը. այն ատեն դքսու-
հին ժողվեց բոլոր աղքատները, որոնք որ կըր-
նային աշխատիլ, արք և կանայք, անոնց ման-
գաղներ, նոր շապիկներ և մուճակներ տուաւ,
որ ոտքերնին չվիրաւորուի կամ չպատրուտի դաշ-
տին մէջ մնացած խոզանոներէն, և զանոնք աշ-
խատանքի դրկեց։ Որոնք որ բաւական ուժ չու-
նէին աշխատելու, անոնց իր ձեռքովը զգեստ-
ներ բաժնեց՝ զորոնք այս վախճանաւ շինել տը-
ւած և կամ վաճառանոցէն գնած էր։ Իւրա-
քանչիւր աղքատի՝ որ իրմէ կը մեկնէր, սիրալիր
հրաժեշտի ողջոյնները կու տար, փոքրիկ գու-
մար մին ալ տալով. բայց երբոր ստակը պակսե-
ցաւ, այն ատեն իւր քողերը և հարուստ դիպա-
կէ զգեստները տուաւ, և աղքատ կանանց բաժ-
նեց ըսելով «Ձեմ ուզեր որ այս բաներս իբրև
զարդ գործածէք, այլ ծախել տաք, որպէս զի
ձեր պիտոյիցը օգնութիւն ըլլայ, և աշխատիք
ձեր ուժին համեմատ, վասն զի գրուած է. Ո՛վ
որ չաշխատիր, և ոչ ալ կ՚ուտէ։ Աղքատ պա-
ռաւ կին մը, որուն դքսուհին տուած էր շապիկ-

ներ, մուճակներ և վերարկու մը, կարգէ դուրս ուրախութիւն զգաց, և աղաղակելով թէ ոչ երբէք բոլանդակ կենացը մէջ այսպիսի բարեբաղդութիւն մը ունեցած էր՝ գեռնի վրայ ինկաւ մեռածի պէս։ Բարի Եղիսաբեթը զարհուրած, փութացաւ զանիկայ գետնէն վերցնելու, և ինքզինքը յանդիմանեց իրեւ յանցաւոր իւր անխոհեմութեամբը այս կնոջ կեանքը վտանգի մէջ ձգած ըլլալուն համար։

Գորովալիր յարգութեամբ և խղճամիտ խրատքով տեսանք այն տեղերը՝ որ տեսարան եղան այսպիսի անսպառ ողորմութեան մը և երկնային անձնանուիրութեան. քալեցինք բոլոր այն քարոտ ճամբաներէն, զոր ազքատաց անխնայ բարեկամին Եղիսաբեթի ոտքերը կոխեցին։ Երկար ժամանակ նայեցանք այն գեղեցիկ դաշտավայրին վրայ, որ Վարպուրկի բարձրէն կը տեսնուի, մտածելով թէ Եղիսաբեթի օրհնեալ աչքերը տեսած էին իր կենաց մեծագոյն մասին մէջ՝ այս ընդարձակ դաշտը, և ամենուն վրայ հաւասար սփռած էր այն սերը՝ որուն ոչ աղբիւրը և ոչ հատուցումը երկրիս վրայ չէ։ Ափսոս. արքունական ողորմաբաշխին ձեռքով հիմնուած շէնքերը բոլոր կործանած են. ժողովուրդը մոռցած է թէ գնա և թէ իւր հարցը հաւասրը. մէկ քանի անուանք միայն մնացած են, և կը պահեն ուղղափառ պանդխտի մը համար սիրելի սրբութեան հետքը։ Նոյն իսկ Վարպուրկի դղեկին մէջ ԼուԹերի՝ ապստամբ և յաղթական հպարտութեան յիշատակը՝ անհետ ըրած է Եղիսաբեթի խոնարհութեան և ողորմութեան յիշատակը. այն հին մատրանը մէջ

յորում յաձախ կ՚աղօթէր Եղիսաբէթ, դառող հերետիկոսապետին գահը կը ցուցընէն հիմա Ձանապարհորդաց։ Բայց այն հիւանդանոցը զոր Եղիսաբէթ շինեալ տուած էր իւր դպրական բնակութեանը քով որպէս զի ոչ երբէք կորսընցընէ մարդկային հիւրութեանց տեսարանը՝ իւր ամենայն փառացը մէջ, այս խոնարհ և ծածկուած տեղը իրեն թողուած է և իւր անունը կը կրէ։ Իր մահուընէն հարիւր տարի վերջը 1331ին, հիւանդանոցը Փրանկիսկեան կրօնաւոր բաց վանք եղաւ. զոր ի պատիւ նորա շինեց Խիստն Փրեդերիկոս դուքսը։ Նորաղանդութեան ժամանակ այն վանքը վերցուեցաւ, մինչդեռ միայն Ա. յշնախ քաղքին մէջ ուրիշ 17 վանք և եկեղեցի մէկ օրուան մէջ կործանեցան և աւերեցան, ու կրօնաւորները և քահանայները գնացին զոյգ զոյգ, «Ձքեզ աստուած» երգելով, ժողովրդեան զիրենք ծաղրելու ժամանակ։ Գաւառին բարեբարին շէնքը ուրիշ շէնքերու վիճակն ունեցաւ, ու քարերը գործածուեցան դղեկին ամրոցները նորոգելու համար։ Սակայն աղբիւրը մը մնացած է մնքուր և զով ջուրի՝ որ կը վազէ քարակամար աւազանի մը մէջ, որ ուրիշ զարդ չունի բաց ի խիտ առ խիտ ծաղկիներէ և զով շքերէ որոնցմով շրջապատած է։ Հոն դքսուհին կը լուար աղքատաց լաթերը, և այն աղբիւրը դեռ Եղիսաբեթի աղբիւր կը կոչուի. բոլորտիքը անթիւ ծառեր կան, որ շատ անցաւորներէ կը ծածկեն այս տեղը. անկից անդին ալ պատի մը խեղճ մնացորդներ, զոր ժողովուրդը՝ Պարտէզ Եղիսաբեթի անուանած է։

Անկից հեռու, դէպ ի արևելք, այն լերան

ստորոտը որուն վրայ կը նայի Վարպուրկ և այն լերան ու Կարթուսեան վանքին մէջտեղը որ սրբոյն Եղիսաբեթի նուիրեալ էր 1394ին, գեղեցիկ ձոր մը կը տեսնուի, որուն մէջէն կ'անցնի խաղաղ վտակ մը որ կը վազէ վարդերով և շուշաններով լի մարգագետնոց մէջէն։ Երկու կողմը հին կաղնիներ կը հովանաւորեն, որոնք Գերմանիոյ նախնի անտառաց մնացորդներ են։ Այս ձորը իր դարձուածքներէն մէկուն մէջ պարտնոց մը ձեւացուցած է, ուր խեղճ տնակ մը շինուած է, որ ժամանակաւ մատուռ մըն էր։ Հոն երբեմն Եղիսաբեթ իւր աղքատացը հետ կը տեսնուէր, որ աստուծոյ և իւր բարեկամներն էին. հոն կ'երթար գորովագութ, անխոնջ և հնարագէտ տիկինը ծածուկ ճամբաներէ և անտառներու մէջէն անցնելով, հեռու առած շատ մը ուտելիք և ուրիշ օգնութիւններ, որպէս զի ազատէ զիրենք մինչև դղեակն երթալու դժուարութենէն, և միանգամայն՝ որպէս զի մարդկանց աչքին չերևայ։ Այս ամսոյի պարտնոցը մինչև այս օրս Շուշանաց դաշտ կը կոչուի, այս խոնարհ տնակն ալ՝ Աղքատաց հանգստարան, և բոլոր ձորը կը կրեր ատենօք Զոր Եղիսաբեթի անոյշ անունը։

ԺԴ

Լուդովիկոս դքսին իւր կնոջը քով դառնալը.

Այն միջոցին Լուդովիկոս դուքսը՝ անշուշտ խմնալով թէ ինչ նեղութեան մէջ էին իւր երկրին բնակիչները, կայսրէն հրաման խնդրեց իւր երկիրը դառնալու, և խնդիրքը ընդունելի եղաւ։ Ուստի մեկնեցաւ 1226ին յունիսի 22ին և Գրեմոնա հասաւ Յովհաննու Մկրտչի տօնին նախընթաց օրը, երբ կրակ կը վառէին բոլոր բարձրաւանդակներուն վրայ։ Յաջողութեամբ Ալպեան լեռներէն անցնելէն վերջը, իշխանի մը տուն ինչաւ, որուն անունը չէն յիշատակեր պատմագիրը, բայց իր մօտաւոր ազգականն և բարեկամն էր, որ զԼուդովիկոս սիրով և շքեղութեամբ ընդունեցաւ. փառաւոր կոչունքէ մը վերջը, ուր երաժշտութիւն և երգերն ալ պակաս չէին, տարին զինքը իւր ննջելու սենեակը, յորում իշխանը ուղեղով դքսին առաքինու-

թիւնը փորձել, անոր անկողնոյն մէջ դնել տուած էր խիստ գեղեցիկ և երիտասարդ կին մը։ Սակայն դուքսը շուտ մը բան իւր հաւատարիմ տակառապետին Վարիլայի տիրոջը. «Հեռացուր այս երիտասարդ կինը, և իրեն ստակ տուր որպէս զի վերարկու մը գնէ, և ուրիշ անգամ աղքատութենէն չատիպուի այսպիսի մեղք գործելու։ Այնպէս պարզմտութեամբ կ'ըսեմ քեզի, որ եթէ հնութիւնը մեղք ալ չըլլար աստուծոյ դէմ, և ոչ գայթակղութիւն եղբարցս առջև, ոչ երբեք յանձն կ'առնուի գործել միայն իմ սիրելի Եղեսաբեթիս համար, որպէս զի չարտեղնեմ զինքը և սիրտը տուին ու վրայ չընեմ»։ Երկրորդ առաւօտը, երբ դուքսը սկսաւ իւր հիւրին հետ ծաղրաբանել այս նիւթիս վրայ, Լուդովիկոս պատասխանեց անոր. «Գիտցիր, Հօրաքեռորդի իմ, որ բովանդակ Հռովմայեցւոց կայսրութիւնը ստանալու համար՝ այսպիսի մեղք մը չէի գործեր։ Յետոյ Ճամբորդութիւնը շարունակելով՝ յուլիսի 2ին Ավիսպուրկ քաղաքը հասաւ, ուր տանտիրնոջ օր կեցաւ, երիտասարդ Հենրիկոսի՝ կայսեր որդւոյն՝ դատը պաշտպանելու համար Պաւիերայի դքսին քով, և զինքը հաւանեցընելու որ զերիտասարդ իշխանն ընդունի իւր աքբունիքը։

Այս բանս յաջողցընելէն վերջը, դուքսը Դուրինկիոյ Ճամբան բռնեց, և Մայն գետն անցնելով՝ Շեվայնֆուրդ գնաց, ուր մեծ պատուով ընդունեցան զինքը քաղաքացիները. բայց ընթրիքէն վերջը իրեն ծանուցին որ Հենեսպերկի Բոբբան կոմսը, իւր ամենամեծ թշնամին, միաբը դրած էր գիշերանց իրեն վրայ յարձակելու։

Ա.յս վանդակէն ազատելու համար շուտ մը ձամբ բայ ինկաւ, բոլոր գիշերը քալեց և երկրորդ օրը Վարպուրկ հասաւ։ Լուդովիկոսի գալատեան համբաւը՝ բոլոր Դուբրինկիոյ մէջ մեծ ուրախութիւն պատճառեր էր։ Բոլոր այն խեղճ սովեալները՝ իրենց օրը և առատասիրտ պաշտպանին դարձը իբրև նշան մը կը համարէին իրենց հիւրութեանց լմննալուն։ Իւր մայրը և երիտասարդ եղբարքը՝ արտաքոյ կարգի ուրախացան, սակայն Եղիսաբեթին ուրախութիւնը կ՚անցընէր զամենունը. առաջին անգամն էր որ իրմէ այսչափ երկար ժամանակ հեռացեր էր այն սիրելի ամուսինը՝ որ ինքը միանակ կը հակընար անոր հոգւոյն ազնուութիւնը և առ աստուած ու առլաւագոյն կեանս ունեցած բաղձանքը։ Նմանապէս Եղիսաբեթ միանակ այն հրաշալի ազդեցութեամբն զոր աստուած սուրբ հոգւոյ կը ներշնչէ, իմացեր էր իւր ամուսնոյն հոգւոյն ամենայն հարստութիւնը, մինչդեռ ուրիշ մարդիկ իւր ժամանակին իշխանաց նման զգացմունքը և կիրքը իրեն կ՚ընծայէին միշտ։ Դքսին տանը գլխաւոր հաղարապետքն և մանաւանդ սպարապետն և մարգարատը՝ վախնալով իրենց տիրոջը բարկութենէն, երբ իմանալու ըլլար իւր գանձին և պաշարներուն գործածութիւնը, ընդառաջ գացին, և իրեն խնայուցին դքսուհւոյն անխոհեմ առատաձեռնութիւնը. պատմելով իրեն թէ ինչպէս իրենց ականջ չկախելով՝ Վարպուրկի բոլոր ցորենոյ շտեմարանները պարպեր էր, և իրեն պահպանութեանը յանձնեալ սահկը բոլոր վատեր էր։ Ա.յս գանդատները այն պիսի վայրկենի մը մէջ սրդողցուցին զդուքը,

որ իրենց պատասխանեց. «Իմ սիրելի կինս հանգիստ է, ահաւասիկ ինչ որ կը փափաքիմ իմանալ, ինծի ինչ մնացածը». յետոյ վրայ բերաւ. «Ա՛ուզեմ որ թողուք իմ սիրելի Եղիսաբեթս՝ որ ուղածին չափ ողորմութիւն ընէ, և դուք իրեն օգնական ըլլաք քան թէ արգելք. թողուցէք որ տայ որչափ որ կ՚ուզէ աստուծոյ սիրոյն համար, միայն թէ ինծի ձգէ Ա.յդնախ, Վարպուրկ և Ղեմպուրկ քաղաքները։ Ա.յն ատեն աստուած մեզի կրկինը կու տայ, երբոր հաճի. ողորմութիւնը չէ որ զմեզ երբէք պիտի կործանէ». և շուտ մը ճանապարհեց իւր սիրելի Եղիսաբեթին քով երթալու։ Երբ Եղիսաբեթ տեսաւ իւր ամուսինը, ուրախութիւնն անսահման եղաւ. ինկաւ անոր թաւերուն մէջ, և բիւր անգամ համբուրեց զինքը բերնով և սրտով. «Սիրելի քոյր, ըսաւ մինչդեռ զրկեր էր զԵղիսաբեթ, ինչ է. զանքու աղբատներդ այս խեղճ տարուանս մէջ»։ Եղիսաբեթ քաղցրութեամբ պատասխանեց. «Աստուծոյ տուի ինչ որ իրենն էր, և աստուած մեզի պահէց ինչ որ քունդ և իմն էր»։ Ա.ռանդութիւն մը վրայ կը բերէ, թէ երբոր դուքսը Եղիսաբեթի հետ մեծ սրահին մէջ վեր վար կը պտտէր, տեսաւ որ քաղքին ամէն դռներէն ցորեն կը մտնէր, այնչափ որ ամենքը վրայէն կը քալէին։ Դուքսը կանչեց զսպարապետը, և հրամայեց իրեն որ երթայ հայի թէ ուսկից կու գար այնչափ ցորեն. անիկայ պատասխանեց թէ շտեմարանները այնչափ լեցուեր էին, որ ցորենը կը վազանէր և գետնի վրայ կը թափուէր։ Ա.յն ատեն թէ՛ դուքսը և թէ Եղիսաբեթ աստուծոյ շնորհակալ եղան. յետոյ Վարիլայի

տերը պատմեց դքսուհոյն՝ ինչ որ պատահեր էր դքսին իր ճամբորդութեանը մէջ, երբոր իշխան մը ուզեց անոր ամուսնական հաւատարմութիւնը փորձել։ Եղիսաբեթ շուտ մը ծնկան վրայ եկաւ ու ըսաւ. «Տէր իմ, արժանի չեմ այսպիսի բարի ամուսին մը ունենալու. ուրեմն օգնէ մեզ ուրպէս զի ամուսնութեան սրբութիւնը պահենք, և կարենանք միասին ապրիլ յաւիտեանս քու քովդ»։ Հաղիւ թէ իւր երկիրը դարձաւ, այս ազնիւ և բարեպաշտ իշխանը միանգամ սկսաւ իւր Հպատակաց օգուտը և շահը մտածել։ Մինչդեռ խոհական իմաստութեամբ կը հսկէր կայսեր իրեն յանձնած գործերը կարգի դնելու, միշտ սուրը ձեռքին մէջն էր ի պաշտպանել զկրօնաւորս և զաղքատս. այսպէս թէ՛ միջնորդ կ'ըլլար ընդ կայսրն և ընդ Պոհեմիոյ Ռադոգար թագաւորը, ու հարսանեաց դաշն կը հաստատեր այս իշխանին դստերը Հուսմայեցւոյ Հենրիկոս երիտասարդ թագաւորին հետ, ու թէ՛ կը պտրտեր իւր երկրին մէջ իւր բացակայութեան ժամանակ խեղճ ժողովրդեան դէմ եղած անիրաւութիւնները դարմանելու համար։ Օգդերլանտի ասպետներն շատ որ իրենց Հպատակները հարստահարեր էին, և հասարակաց ապահովութիւնը խռովեր, մեկէն փախան երբոր իմացան անոր գալուստը. Լուդովիկոս ալ անոնց դղեակներն յափշտակեց և ի հիմանց փլուցց Սիւց և Բալպենրիւք բերդերը։ Յետոյ շուտով իրեն սիրական Բենհարցպրիւն աբբայարանին այցելութեան գնաց։ Աբբայն դուքսին գանգատ ըրաւ թէ՝ Սալցայի իշխանը իւր բացակայութեան

ժամանակն յարմար առիթ սեպելով իրեն, կրօնաւորաց երկիր մը յափշտակեր էր, Ազ-տէնպերկ կոչուած լերան վրայ, որ կը նայեր այն ձորին վրայ ուր էր աբբայարանը. և ամուր բերդ մը շիներ էր հոն, ուսկից անդադար կը հարստահարեր կրօնաւորները և անոնց հպա-տակները։ Շաբաթ իրիկուն մըն էր՝ երբ Լու-դովիկոս դուքսը հոն հասաւ, և այս բոլորը լը-սեց։ Շուտ մը գրել տուաւ Վարպուրկի և Ա.Յզ-նախի իշխանաց՝ որ երկրորդ առաւօտը կանուխ իրեն գան աբբայարանը, իրենց զինուորներովը և սանդուխներով։ Կիրակի օրը կանուխ՝ արշա-լոյսը դեռ չծագած՝ թիւ պատարագ մը լսեց, և աբբային ապսպրեց որ՝ ոչ խաչը դուրս հանէն և ոչ ալ ձայնաւոր պատարագ ըսէն ինչուան որ դառնայ. յետոյ ձիուն վրայ հեծաւ, և իւր բա-նակին առջևէն երթալով դէպ ի դղեակը՝ հրա-մայեց զօրացը որ յարձակին։ Այնքը զարմա-ցան մնացին. պարիսպներէն անդին անցան սանդուխներով, և Սալցայի տէրը գերի բռնեցին. դուքսը շղթայի զարկաւ զանկիայ և հետը աբ-բայարանը բերաւ։ Հաղիւ թէ հասաւ, խաչը դուրս հանել տուաւ և ինքն ալ պատարագին սովորական թափօրին մէջ մտաւ, խաչին առ-ջևէն քալեցնելով շղթայակապ իշխանը և իւր զինուորները։ Երգիչը սաղմոսին այն տունը սկը-սաւ զրուցել. Տէր, դու խոնարհեցուցանես զամ-բարտաւանս... և բոլոր կրօնաւորները պատաս-խանեցին. Զօրութեամբ բազկի քոյ ցրուեցեր ղթշնամիս քո։

Պատարագէն վերջը, Լուդովիկոս դուքսը եր-դում առաւ Սալցայի իշխանէն որ անկեց եղբը

մէյ մին ալ այնպիսի բռնութիւն չընէ աբբայա-
բանին դէմ։ յետոյ արձակեց զինքը, իւր զօր-
քերուն հրաման տալով որ հիմնայատակ կոր-
ծանեն այն բերդը՝ որուն առտուն տիրեր էին։
Բարի դուքսը ամէն քանէ աւելի կը վախնար
որ չըլլայ թէ վանքին ծանրութիւն ըլլայ. անոր
համար խոհանոց մը և մատնաւոր մթերանոց մը
շինել տուեր էր՝ իւր տանը պիտոյիցը համար
հոն անցուցած ժամանակը. և միշտ երթալու-
տեղը այնչափ առատ ճաշացորդներ կը ձգէր,
որով բովանդակ վանքը կը կերակրուեր երեք
օր։ Սակայն Սալցայի իշխանին դէմ արշաւա-
նաց կիրակին, աբբայն աղաչեց իրեն որ այն օրը
իրենց հետ ճաշէ, և փառաւոր ու առատ կո-
չունք մը տուաւ։ Լուդովիկոս սեղանին եկնելու
միջոց, մէկդի տարաւ իւր գանձապետը, և իրեն
հրամայեց որ բոլոր ծախքերը առատապէս վը-
ճարէ։ Գանձապետը գնաց կրօնաւորներուն, և
ուզեց անոնց ստակը տալ. սակայն կրօնաւորնե-
ը ամենևին չուզեցին անոր առաջարկութիւնն
ընդունիլ. ինչպէս որ կը վայելէ լաւ կրթուած
կրօնաւորներու, կ'ըսէ այն ողջմանաբանը որ մե-
զի այս պատմութիւնը կ'աւանդէ։ «Տէր գան-
ձապետ, ըսին կրօնաւորքը, ինչ որ մենք ողջ-
մելի կրօնաւորքս կրնանք ընել, մեր բարի տի-
րոջը ձեռքն է. և ոչ միայն այսօր՝ հապա նաև
ամէն անգամ որ ինքը այնպէս փափաքի. ուս-
տի իւր ստակը չենք ուզեր առնուլ»։ Գանձա-
պետը դէմ չկեցաւ, և դուքսին հետ մեկնե-
ցաւ. բայց Լուդովիկոս Ա. յընախ քաղքին ճամ-
բուն վրայ՝ գանձապետին դարձաւ և հարցուց
իրեն թէ՝ արդեօք աղէկ կատարեր էր իր հրա-

մանները։ Գանձապետը եղածը պատմեց դուքսին. որ վերջն աստիճանի բարկացած՝ պատասխանեց. «Որովհետև չուզեցիր իմ ստրկէս վճարել ինձի համար եղած ծախքը՝ քու ստրկէդ պիտի վճարես։ Ուստի խեղճ մարդը ստիպուեցաւ դառնալ Բենհարցպրիւն, և իւր քրտակէն վճարել մինչև վերջին փողը։

Դիչ եղբը՝ սոյն վանքին աբբայն դուքսին իմացուց որ Փրանգոնիոյ քանի մը պատուաւոր մարդիկ գինիի տակառ մը և վեց ձի յափշտակեր էին իրմէ։ Դուքսը անոնց նամակ գրեց և ստիպեց որ գողցած բաներնին շուտով ետ դարձնեն. բայց անոնք երբոր չուզեցին մոխիկ ընել իրեն բողոքանացը, Լուդովիկոս մէկէն մը տաւ Փրանգոնիա բանակի մը գլուխ կեցած, յանցաւորներուն ստացուածքը աւարեց, և զանոնք ստիպեց որ գան բոպիկ ոտքով, շապկանց և վզերնին չուան մը, վանքին դէմ եղած անիրաւութեանը համար թողութիւն խնդրեն աբբայէն. վերջէն արձակեց զիրենք, բայց յետ պարտաւորեցաւ որ վանքին շատ մը ազնիւ գինի և ազնիւ ձիեր ղրկէն։

Գրեթէ նոյն ժամանակը՝ իշխանաց մեծ ժողովք մը եղաւ ի Մերսէպուրկ, ուր ժողովեցան Միսնիոյ, Սաքսոնիոյ և Մարշի իշխաններէն շատերը. նոյնպէս Հեսի և Դուրինկիոյ իշխաններն ալ, օրինակ առնելով Լուդովիկոս դքսէն որ իրեն հետ մէկտեղ բերաւ զեղխաբութեամբ թագուհին և բազմաթիւ պալատականներ։ Այս գումարման մէջ բան մը պատահեցաւ որ այն ժամանակին բարուցը աղէկ նկարագիր կրնայ ըլլալ։ Դուրինկիացի ասպետ մը՝ խիստ հոչակաւոր իւր

քաջութեամբքն և սատուած պաշտութեամբք՝ Կոդիէ մնունով, բարեկամ և միանդամայն հաղարապետ Լուդովիկոս դքսին տանը, անոր հետ ժողովքէն եկեր էր, հանդերձ պեղցիկ օրիորդաւ մը որ սքանչելի ձիու մը վրայ հեծեր էր, և բուռին վրայ ալ աղուոր բաղէ մը բռներ։ Ճամբուն վրայ երեք երեք մղոնի չափ տեղ կանգ կառնէր՝ ամէն հանդիսաղին հետ նիզակով խաղալու համար, պայմանաւ որ եթէ մէկը զինքը ձիէն վար ձգելու ըլլայ, առնէ իրեն զէնքերը, օրիորդին ձին և բաղէն, և թէ օրիորդն իսկ ինքզինքը պիտի փրկանաւորէր ոսկի մատանիով մը։ Ընդհակառակն թէ որ Կոդիէ իշխանը յաղթող ելլէր, այն ատեն յաղթուողը ոսկի մատանի մը պիտի տար օրիորդին։ Ասպետներուն մէջ մեծ հակառակութիւն կ'ելլէր ամէն անգամ որ Կոդիէ կանգ կ'առնէր գիտնալու համար թէ ով պատիւ պիտի ունենար անոր հետ մրցելու. զանոնք միաբանելու համար հարկ եղաւ, որ միշտ ինքը անձամբ որոշէ թէ ով իրեն դիմացը պիտի ելլէր։ Ա. յապէս գնաց Մերսեպուրկ և հոնկէց դարձաւ առանց ամենևին յաղթուելու. ու երբ դարձաւ Դուբրինկիա, օրիորդն իր երկու ձեռացն ամէն մատուըներուն վրայ ունէր մէյմէկ ոսկիէ մատանի, զոր յաղթուած ասպետէ մը ընդունած էր։ Կոդիէ իշխանը այն տասը մատանիները պարգևեց Եղիսաբէթ դքսուհւոյն, պատուոյ տիկիններուն և օրիորդներուն, որ մեծապէս ուրախացան, և ամենքը մէկ բերան իրենց տիրուհւոյն հետ՝ ողջունդագին շնորհակալ եղան իր առատաձեռնութեանը։

ԺԵ

Լուդովիկոս դքսին խաչակրութեան երթալը, և մեծ ցաւով բաժնուիլը իւր բարեկամներէն, ընտանիքէն և մանաւանդ սրբուհւոյն Եղիսաբեթէն։

Գուրինկիան չկրցաւ երկար ժամանակ վայելել իւր սիրելի իշխանին ներկայութիւնը, անոր Իտալիայէն դառնալէն վերջը. և Եղիսաբեթ որ այնպիսի մեծ ուրախութիւն զգացեր էր իր ամուսինը նորէն տեսնելուն համար, քիչ ժամանակէն պիտի ստիպուէր՝ երկայն և միանգամայն անհանգիստ բաժանման մը. վասն զի բոլոր Գերմանիան խաչակրութեան կը պատրաստուէր։ Փրեդերիկոս Բ. կայսրը, զինջանելով վերջապէս Հռոմայ Ոնորիոս Գ. և Գրիգոր Թ. քահանայապետներուն անդադար թախանձանացը, բոլոր ազնուականները և քրիստոնեայ հաւատացեալները հրաւիրեր էր խաչին դրօշուն տա-

կը մնանելու, և իրեն հետ երթալու մինչև ի սուրբ Երկիրն 1227ին աշնան եղանակին։ Խաչակրութեան միայն գաղափարը և ձայնը՝ ամենուն սիրտը տակն ու վրայ կ'ըներ, և գրեթէ ի հիմանց կը շարժէր բովանդակ ազգերը։ Այս մեծ և սրբազան արշաւանքները՝ հոգւոց վերայ այնպէս զօրաւոր ազդեցութիւն մը ունէին, որ մէկ քաջ ասպետ մը, բարեպաշտ և եռանդուն քրիստոնեայ մը, չէին գիտեր թէ ինչ կերպով անկեց հրաժարին։ Հռիքարդ առիւծասիրտն թագաւորին գրեթէ առասպելահատն քաջութեանց յիշատակը՝ որ քառասուն տարի առաջ հանդիպեր էին՝ դեռ կենդանի էր ասպետաց և ժողովրդեան մտքին մէջ։ Ջորրորդ խաչակրութեան շքեղ և անակնկալ ելքը՝ բովանդակ Եւրոպան շլացուցեր էր։ Ցեսեր էին Բիւզանդիոնի հին կայսրութեան կործանումը, որ ուրիշ բան ըրած չէր, բայց եթէ մնանել կամ երեսի վրայ ձգել հաւատոց համար պատերազմող քրիստոնեայները, և ասկայն դեռ յիշատակը կը մեծարուէր ժողովուրդներէն, և անոր աւերակացը վրայ կանգնուեր էր մէկ օրուան մէջ նոր տերութիւն մը, զոր հաստատեր էին քանի մը գաղղիացի իշխաններ և վենետիկցի նաւավարներ։ Այս բանս միայն շատ էր ամենուն երևակայութիւնը շարժելու և տակնուվրայ ընելու, մէկդի դնելով հաւատոց ազդեցութիւնը, որ իւր զօրութիւնը դեռ չէր կորսնցուցեր։ Բովանդակ երեքտասներորդ դարուն մարդիկը ջերմեռանդն փափաք ունեցեր էն Քրիստոսի գերեզմանը փրկելու, և արևելքը խաչին առջև խոնարհեցնելու. այս փափաքը սրբոյն Լուդո-

վիկոսի հետ մեկտեղ մեռաւ։ Գերմանիան՝ որ մինչև այն ժամանակը եւրոպիներէն եղեր էր այս ազնուական վտանգաց մէջ ինքզինքը ձգելու, մէկէն ի մէկ եռանդուն ազդեցութեամբ մը բորբոքուեցաւ, որ հռչակաւոր է այն ժամանակին բազմաթիւ քերթողաց երգոցը մէջ։ Վազդեր քերթողը, որ ամենէն աւելի հասկացեր էր իւր ժամանակին տոլորութիւնները և կիրքերը, և որ խաչակրաց արշաւանքին մասնակից եղեր էր, շատ լաւ զգացեր և յայտներ է քրիստոնեից դէպ ի այն երկիրը բերումը որ Քրիստոսի արեամբը ոռոգուած է. «Ամենքիս ալ գիտենք, կ՚աղաղակէ այս արշաւանքին երգչին առաջ, թէ ինչպէս այս ազնուական և սուրբ երկիրը թշուառ է, ինչպէս երեսի վրայ ձգուած և անպիս։ Ալտասուէ՛ Երուսաղէմ, արտասուէ՛. ինչպէս մարդիկ զքեզ մոռցան. կեանքը կ՚անցնի, մտքը զմեզ մեղաւոր պիտի գտնէ։ Վտանգաց և փորձութեանց մէջ շնորհքը կը վաստրկուի. երեթանք Քրիստոսի վերքերը բերժշկելու, երեթանք իւր երկրին շղթաները խորտակելու։ Ո՛վ Թագուհի ամենայն կանանց, քու օգնութեանդ արժանի ըրէ զմեզ։ Հոն քու որդիդ սպանուեցաւ. հոն յանձն առաւ մկրտուիլ ինքն որ այնչափ մաքուր էր՝ զմեզ մաքրելու համար. հոն վաճառուեցաւ զմեզ փրկելու համար. ինքն որ այնչափ հարուստ էր, մեզի յետին աղքատացաւ համար, հոն ճաշակեց ըզմահ դժնդակ։ Ողջոյն ձեզի նիզակ, խաչ, փուշեր։ վայ ձեզի հեթանոսք։ Աստուած կամեցաւ իւր նախատանաց վրէժն առնուլ քաջաց ձեռքովը»։

Նոյն զգացմունքներն են որ ինձմէ ժամանակի Նավարրայի արքունական քերթողին սիրտը կ'ազդեն իւր ամենէն գեղեցիկ քերթուածներէն մէկ քանին, երբոր խօսքը կը դարձնէ առ իւր ասպետս և անոնց կ'ըսէ. «Լաւ գիտցէք, տեսաբը. ով որ այն երկիրը չերթար, ուր աստուած մեռաւ և կենդանացաւ, ով որ խաչը չառնու՝ ծովէն անդին անցնելու, գժուարութեամբ պիտի մտնէ յերկինս։ Ամեն մարդ որ պահած է բարեպաշտութիւնը կամ՝ յիշատակ մը մեծին աստուծոյ, պարտիկան է անոր վրէժն առնելու Ջանալ, և անոր երկիրն ազատելու։ Պէտք է որ երթան ամեն քաջ ասպետները, որոնք կը սիրեն զաստուած և այս աշխարհիս պատիւը, որոնք որ կ'ուզեն իմաստութեամբ երթալ առ աստուած. միայն չարերն և ծոյլերը պիտի մնան։ Ո՞ըչափ կոյր են անոնք որ իրենց բովանդակ կենացը մէջ օգնութիւն մը չեն ըներ աստուծոյ, և այսչափ քիչ բանի համար աշխարհիս փառքը կը կորսնցնեն։ Աստուած որ մեզի համար խաչին վրայ մեռաւ, դատաստանին օրը մեզի պիտի ըսէ. դուք որ ինձի օգնեցիք խաչս վերցնելու՝ հոն պիտի երթաք ուր են հրեշտակները, հոն պիտի տեսնէք զիս և զՄարիամ մայր իմ։ Իսկ դուք՝ որ ոչ երբէք ծառայութիւն մը ըրիք ինձի, ամենքնիդ ալ գնացէք ի խորս դժոխոց։ Քաղցր տիկին, թագուհի՛դ պակեալ, աղաչէ մեզի համար, կոյս անապատ, և այն ատեն մեզի ինամ մը չկրնար համնիլ»։ Ա՛յսպիսի զգացմունքներ չէին կրնար գտնել ուրիշ տեղ այնպիսի զօրաւոր արձագանգ մը՝ ինչպէս Դուրինկիոյ Լուդովիկոս իշ-

խանին սրտին մէջ, որուն հպատակն էր Վալդեր քերթողը։ Ոչ ոք իրմէ աւելի եռանդ կընար զգալ (Վալդեր) երթալ ի պատերազմ իւր կայսեր և զինուորակից եղբարցը հետ, ի պաշտպանութիւն սուրբ երկրին։ Իւր պայծառ քաջութիւնն, աստուածպաշտութեան ու հաւատոյ եռանդն, և ինչ որ իր հոգւոյն մէջ վեհանձն, անշահասէր և քրիստոնէական առաքինութիւնները կային, ամենքը մէկ տեղ պիտի յորդորէին զինքը սուրբ խաչին նշանը վրան առնել, և կամ ինչպէս սովորութիւն ունէին այն ատենի Գերմանացիքը զուրցելու՝ Քրիստոսի ծաղկովը զարդարուիլ։ Ա.յս անձնական առաքինութիւն հետ պիտի միանային այն ազնուական օրինակները զորոնք կը գտնէր իւր ընտանեացը յիշատակարանները մէջ։ Իւր հօրեղբայրն և նախորդը, բարեպաշտն Լուդովիկոս, ուղեկից եղեր էր աւիւծասիրտն Հռիքարդոսի և Փիլիպպոս Օգոստոսի, երթալու մինչև սուրբ երկիրը, և հոն մեծ փառք ստացեր էր։ Իւր անէրը՝ Հռոն գարիոյ Աշդրեանս թագաւորը՝ իւր կենաց մեծ մասը արևելք անցուցեր էր ընդդէմ անհաւատից պատերազմելով. իր ազնուականութեանը նախատինք կ'ելլար իւր տանը մէջ մնալը, անոր համար երկար ատեն չմտածեց այս բանիս վրայ։ Իւր Ճամբորդութեանցը մէկուն մէջ մեծարգոյ Գոնրատ եպիսկոպոսին հանդիպելով՝ միտքը անոր յայտնեց, և անոր հաւանութիւնն ընդունելով՝ ուխտ ըրաւ միաբանել այն արշաւանաց գացողներուն հետ, և եպիսկոպոսին ձեռքէն առաւ զիրաչը։

Սակայն դուքսը երբ դարձաւ ի Վարպուրկ

յանկարծ յիշեց այն դժնդակ ցաւը զոր Եղիսաբեթ պիտի կրէր երբ իւր որոշմունքն իմանար. և որովհետև իշխանուհին յղի էր ան օրերը իւր տրրորդ որդւովը, դուքսը չհամարձակեցաւ անոր հետ այս նիւթիս վրայ խօսելու, և որոշեց իւր խորհուրդը գաղտնի պահել մինչև իւր մեկնելուն ժամանակը, որպէս զի առաջուց չարտահայտնէ զանիկայ զոր այնչափ սաստիկ կը սիրէր, և իւր առաջնութիւնը վտանգի մէջ չձգէ. և փոխանակ իւր զգեստուցը վրայ դնելու խաչը, բաւական սեպեց ի ծածուկ վերան պահել, որչափ ատեն որ կարելի եղաւ իր մեծակայ մեկնելը չհրատարակելը։ Բայց իրիկուն մը երբոր դքսուհւոյն հետ առանձնացեր էր իւր սենեակը, և քովէ քով նստեր էին գոյզը և մտերիմ ընտանութեամբ, Եղիսաբեթ իւր ամուսնոյն սրոյ գօտին քակեց, և սկսաւ գրպանին մէջ եղածները քննել։ Յանկարծ խաչը ձեռքին հանդիպեցաւ, զոր սովորաբար խաչակրաց զգեստուցը վրայ կը դնէին. ան որ տեսաւ Եղիսաբեթ, մէկէն հասկրցաւ գլխուն գաղիք դժբաղդութիւնը, և կարգէ դուրս ցաւով և տագնապով գեռանի վրայ ընկած՝ ինքզինքը բոլորովին կորսընցուց։ Դուքսը զարհուրած, զանիկայ գեռանէն վերուց, և ջանաց քաղցր և սիրալիր խօսքերով անոր ցաւը մեղմացընել ու խելքը գլուխը բերել. և յետոյ անոր հետ երկայն բարակ խօսեցաւ, կրծքին ձայնը բանեցընելով և նոյն իսկ սուրբ գրոց ոճերը, որոնց ոչ երբեք անզգայ էր Եղիսաբեթ. «Մեր տիրոջը Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար է, ըսաւ, որ այս բանս կ'ընեմ. կը յուսամ որ ինծի դէմ

պիտի չկենաս աստուծոյ սիրոյն համար կատա-
բելու այն բանը՝ զոր սպարտիկան է ընելու երկ-
բաւոր իշխան մը՝ կայսեր և կայսրութեան հա-
մար, եթէ այնպէս պէտք ըլլայ»։ Երկար լռու-
թենէ մը և շատ արցունքներէ վերջը, Եղիսա-
բեթ ըսաւ դքսին. «Սիրելի եղբայր, եթէ աս-
տուծոյ կամացը դէմ չէ, ինծի հետ կեցիր»։
Սակայն դուքսը պատասխանեց. «Սիրելի քոյր,
թոյլ տուր ինծի որ երթամ, վասն զի աստու-
ծոյ ուխտ ըրեր եմ»։ Այն ատեն խելքը գլու-
խըն եկաւ, և իւր կամքը աստուծոյ կամացը զը-
հելով՝ դքսին պատասխանեց. «Զեմ ուզեր աս-
տուծոյ կամացը դէմ գրեզ իմ քովս ունենալ.
աստուած իւր շնորհքը տայ քեզի՝ որպէս զի
յամենայնի իւր կամքն ընես. վասն զի գրեզ և
զիս իրեն զոհեցի, իւր բարերարութեամբը հրա-
կէ քու վրադ, և ամենայն երջանկութիւն միշտ
հետդ ըլլայ. աս պիտի ըլլայ իմ ամեն օրուան
աղօթքս. գնա ուրեմն յանուն աստուծոյ»։ Նոր
լռութենէ մը վերջը՝ ծնանելիք մանկանը վրայ
խօսեցան, և երկուքը մէկտեղ որոշեցին որ աս-
տուծոյ նուիրեն զայն իւր ծնողքանը վայրկե-
նէն, թէ որ մանչ ըլլար՝ Ռամերստորֆի աբ-
բայարանը մոցընելով, իսկ թէ որ աղջիկ՝ Ա-
դենպերկ գաւառին կուսանաց վանքը։

Դուքսը ալ պատճառ չունենալով իւր որոշ-
մունքը ծածուկ պահելու, բոլոր իւր հպատա-
կացը յայտնեց զայն, միանգամայն ծանուցա-
նելով որ այս արշաւանքը իւր յատուկ ծախ-
քովը պիտի ըներ և ժողովրդէն կարգէ դուրս
տուրք պիտի չառնուր, երջանիկ սեպելով ինք-
զինքը՝ որ պիտի կարենար այս կերպով աստու-

ծոյ հատուցանել իրմէ ընդունած բարեաց մէկ մասը։ Պէտք եղած զինուորական պատրաստութիւններէն վերջը, իշխանաց հանդիսաւոր դուռմարմնոյն մը ըրաւ Գրայցպուրկ քաղաքը։ Տեղւոյն տեղը անոնց խմացուց իւր որոշմունքը, և պէտք եղածը մնացեց անոնց հետ երկրին աղէկ տեսչութեանը վրայ, իւր բացակայութեան ժամանակը. իշխաններուն խստիւ ապսպրեց որ ժողովուրդը քաղցրութեամբ կառավարեն, և մէջերնին խաղաղութիւն և արդարութիւն պահեն։ Ժողովրդէն դեռ չգացած՝ հետևեալ խօսքերը զրուցեց հանդիսականաց քաղցր ձայնով. « Սիրելի զինուորակից եղբարք իմ՝ պարտնք և ազնուական ասպետք, և դուք իմ հաւատարիմ ժողովուրդս, գիտէք որ իմ հանգուցեալ հօրս կենդանութեան ժամանակէն՝ մեր երկիրը դժնդակ պատերազմներ ունեցեր է և երկար խռովութիւններ։ Այնքդ ալ գիտէք, թէ իմ հայրս ոչչափ դժուարութիւն և աշխատանք կրեր է ինքզինքը պաշտպանելու զօրաւոր թշնամեաց դէմ, և իր երկիրը պահելու համար բովանդակ կործանմունքէ մը։ Իր բաները յանձնեցին իր քաջութեամբն և առատաձեռնութեամբը, և իւր անունը ահաւոր եղաւ ամենուն։ Սակայն աստուած ինձի հնարհեց՝ ինչպէս Սողոմոնի՝ Դաւթի որդւոյն՝ հանգիստ և խաղաղ օրեր։ Իմ չորս կողմս ահաւոր դրացի մը չունիմ, ինչպէսնաև դրացիներս վախ չունին որ ապօրինաւոր բռնութիւններով զիրենք նեղեմ։ Եթէ ժամանակաւ դժտութիւն մը ունեցայ անոնց հետ, սակայն հիմա ամենուն հետ խաղաղութեան մէջ եմ, խաղաղարար աստուծոյ

հնարքովը։ Այնինքնիդ ալ պէտք է որ այս բա-
բերարութիւնը ճանչնաք, և աստուծոյ հնարքա-
կալ ըլլաք. իսկ եւ՝ այն աստուծոյ սիրոյն հա-
մար որ այսպիսի հնարքներով զիս լեցուցեր է,
և իրեն յայտնելու համար իմ բոլոր երախտա-
գիտութիւնս՝ և հոգիս փրկելու վախճանաւ,
հիմա կ'ուզեմ արևելք երթալ, որպէս զի ինծի
սիրելի քրիստոնէութիւնը՝ որ հոն կը հարբա-
տահարուի՝ մխիթարեմ, և պաշտպանեմ զա-
նոնք աստուծոյ անուան և արեանը թշնամի-
ներուն դէմ։ Այս հեռաւոր արշաւանքը իմ
յատուկ ծախքովս պիտի ընեմ, առանց ձեզմէ,
իմ սիրելի հպատակներս, նոր ու ծանր տուրք
մը առնելու։ Բարձրելոյն պաշտպանութեանը
կը յանձնեմ իմ բարեպաշտ սիրելի անուսնս,
որդիքս, սիրելի եղբայրներս, բարեկամներս,
ժողովուրդս և երկիրս, վերջապէս զանոնք ա-
մենքը՝ որոնցմէ կը հրաժարիմ յօժարութեամբ
ի պատիւ իր սուրբ անուանը։ Խոտիս ձեզի կ'ա-
պրստրեմ որ իմ բացակայութեանս ժամանակ
մէջերնիդ խաղաղութիւն ունենաք. կ'ուզեմ
մանաւանդ, որ իշխանները քրիստոնեաբար վա-
րուին իմ աղքատ ժողովրդեանս հետ։ Վերջա-
պէս ձեզմէ կը խնդրեմ որ ինծի համար աս-
տուծոյ շատ աղօթէք, որպէս զի պաշտպանէ
զիս ամենայն թշուառութենէ այս ճամբորդու-
թեանս մէջ, և զիս նորէն ողջ առողջ դարձնէ
առ ձեզ, եթէ այնպէս է իւր բարերար կամ-
քը. վասն զի ամեն բանէ առաջ իւր աստուա-
ծային կամացը կը յանձնեմ զիս, զձեզ և բոլոր
ունեցածս»։ Այս սրտաշարժ խօսքերուն մէջ
յայտնապէս կը տեսնենք ան ատենուան իւա-

չակրոչեան բառած խորհրդոյն բոլոր խորութիւնը, խորհուրդ հաւատոց, անձնանուիրութեան և սիրոյ, զոր երբէք պիտի չկարենան հասկընալ անհաւատ դարերու միտքերը։ Ա. յս պիսի քրիստոնեայ իշխանի մը բերնին արժանաւոր ատենաբանութիւնը լսելով, բոլոր ժողովրդոց սիրտը շարժեցաւ. ամենէն աւելի կորիճ ապաստները տեսնուեցան խոր տրտմութեան մէջ ընկղմած, արցունքներ և հառաչանքներ յայտնեցին այն անձկութիւնը զոր կը պատճառէր երիտասարդ և սիրելի իշխանին մեկնիլը։ Վերջէն դուքսը մեծաւ խոհականութեամբ ընտրեց այլ և այլ պաշտօնակալքը, զորոնք կ'ուզեր գլուխ կարգել իւր գաւառներուն. և իր քաղաքներուն ատենակալ որոշեց ամենէն իմաստուն և բարեբարոյ քաղաքացիները։ Կարգաւորեց իւր տանը առանձնական գործերը, և մանաւանդ կերպով յանձնեց իւր սիրելի ամուսինը, մօրը, եղբարցն և բոլոր պաշտօնակալաց խնամոցը։ «Լաւ գիտեմ, ըսաւ այն ատեն գանձապետը, որ դքսուհին աղքատաց պիտի բաժնէ ինչ որ ձեռքն հանդիպի, և զմեզ խեղճութեան պիտի հասցնէ»։ Որուն Լուդովիկոս պատասխանեց թէ նոյն բանն է իրեն համար, որովհետև ապահով էր որ աստուած իրեն փոխարէնը պիտի հատուցանէր։

Ժողովրդեան աղէկ ըմբռնել տալու համար այն աղդեցութիւնները որ զինքը շարժեցին սուրբ երկիր երթալու, Ա. յդնախ քաղքին մէջ իւր յատուկ ծախքովը թատերասաղ մը ձևացընել տուաւ եկեղեցականներէն ընտրուած դերասաններով, որ կը ներկայացընէին Քրիս-

տուի չարչարանաց և մահուան բոլոր տեսարան-
ները։ Կրնանք երևակայել թէ ինչ մեծ եռանդ
բերած պիտի ըլլայ այն ժամանակին մանաւանդ և
բորբոքեալ մտքերուն վրայ այսպիսի թատերա-
կան հանդէս մը։ Ա. յս խաղը այնչափ ճիշդ և
աղէկ կերպով ներկայացուցին որ դուքսը ար-
ժանի սեպեց երկրորդ անգամ մին ալ կրկնել
տալ։

Ա. յսեւ թեան գնաց նաև Ա. յշնախի բոլոր
վանքերուն, ինչպէս կուսաստանները ալ. ա-
նոնց օրհնութիւնը խնդրեց, առատ ողորմու-
թիւններ բաշխեց, և ինքզինքը անոնց աղօթի-
ցը յանձնեց։ Յետոյ Ա. յշնախէն Ճամբայ ելաւ
իւր կնոջը, մօրը, որդւոցը և եղբարցը հետ, և
նախ Բենհարցպրիւն քաղքին աբբայարանը
գնաց, զոր ամենէն աւելի կը սիրէր, և որուն
հետ կապուեր էր մանուսուր ջերմեռանդու-
թեան և խիստ ընտանութեան մը կապերով։ Ե-
բեկյեան ժամերգութեան ներկայ ըլլալէն ետ
քը, երբոր կրօնաւորները դասէն կ'ելլէին օրհ-
նած ջուր առնելու համար ըստ իրենց սովորու-
թեանը, բարի դուքսը սրակող քահանային քո-
վը կեցաւ, և քանի որ կրօնաւորները կ'անց-
նէին, խանդաղատանօք կը գրկէր զանոնք, մին
չև դասին ամենէն փոքրիկ տղաքն իւր թաւերովը
վեր կրվերցնէր՝ անոնց անմեղ ճակտին վրայ հայ-
բական համբոյր մը դրոշմելու համար։ Կրօնաւ-
որները զգացուած դքսին իրենց վրայ ցուցած
այսչափ բարութեանը վրայ՝ սկսան լալ, և երբ
կար ժամանակ ուրիշ բան չտեսնցաւ բայց ե-
թէ հեծկլտանաց և հառաչանաց ձայներ զոր
կը պատճառէր իրենց պաշտպանին բացակայու-

թեան մնածութիւնը։ Նոյն իսկ Լուդովիկոսի սիրտն ալ եղելով՝ ինքն ալ սկսաւ լալ, ու տրխուր նախազուշակութեամբ մը ըսաւ անոնց. «Այանց պատճառի չէ որ կ'արտասուէք, սիրելի բարեկամներս. վասն զի գիտեմ որ իմ մեկնելս վերջը՝ յաջիշտակող գայլեր ձեր վրայ պիտի վազեն և իրենց մահաւորի ժանիքներով զձեզ անողորմաբար պիտի ջարդեն։ Երբ թշուառութեան և աղքատութեան մէջ իյնաք, այն ատեն պիտի տեսնէք որ ինծմով կորսընցուցիք սակաւագիւտ պաշտպան և իշխան մը։ Սակայն ստոյգ գիտեմ նաև որ աստուած իմ պանդրխտութիւնս յիշելով, պիտի բանայ ձեզի իւր գթութեան աղբիւրը, զոր սրտանց կը խնդրեմ հիմա և միշտ»։ Յետոյ հրաժարեցաւ անոնցմէ, և կրօնաւորները իրեն ուղեկից եղան իրենց խանդաղատանօքն ու արտասուալի նայուածքներով։

Դուքսը իրեն ընտանիքովը՝ Թեոհարցպրիւնէն Շմանքալտ գնաց, ուր պիտի ժողովուէին աս պետութեան և իշխանները, իրեն հետ սուրբ երկիրն երթալու համար։ Հոն հրաժեշտի ողջոյնը պիտի տար իւր մերձաւոր ազգականացը, կնոջը, և անոնց ամենուն որոնց յիշատակը իւր սրտին մէջ էր։ Հասաւ չհասաւ՝ իւր Հենրիկոս եղբայրը մէկ կողմը տարաւ ու ըսաւ իրեն. «Աստուծոյ օգնութեամբը ձեռքէս եկածն ըրի, որպէս զի իմ հոգւոյս փրկութեանը ճամբուն մէջէն երթամ։ բան մը չեմ յիշեր որ հոգիս վանպի մէջ ձգած ըլլայ, բայց եթէ Էյդերպուրկի գրաւելը կը չկրծանելը՝ ինչպէս որ հայրս պատուիրած էր, որ շինուած է մերձակայ աբբայարանին

ֆեասովը։ Ուստի կ՚աղաչեմ քեզի, սիրելի եղբայր, որ չմոռնաս ի հիմանց կործանել զայն՝ իմ Ճամբայ ելլելէս ետքը. ասիկայ օգտակար պիտի ըլլայ քու հոգւոյդ փրկութեանը »։

Վերջապէս սուրբ Յովհաննու Մկրտչի ծնունդեան օրը հասնելով՝ որ սահմանուեր էր Ճամբայ իջնալու համար, պէտք եղաւ որ դուքսը բաժնուի։ Այս բաժանումը եղաւ իր երկրին հեռաւոր իշխանութիւններէն եկած ասպետներուն և ժողովրդեան առջև, և որ կը փութար վերջին անգամ մը իրեն սիրելի իշխանը տեսնելու։ Նախ սկսաւ իւր երկու եղբայրները գորովանաք օրհնել, որ միատեղ կու լային. եռանդեամբ յանձնեց իրենց իւր մայրը, որդիքը և իւր ամուսինը։

Իւր պզտիկ տղաքը զգեստէն բռներ էին, լալով զինքը կը գրկէին և մանկական լեզուով ի բենց վերջին ողջոյնը կու տային. « Երթաս բարով, սիրելի հայր. հաղար անգամ երթաս բարով, սիրելի հայր ոսկի սրտով »։ Դուքսը չէր կրնար արցունքները բռնել զանոնք համբուրելու ժամանակը. և երբոր դարձաւ դէպ ի իւր եղեսաբէթը, հեծկլտանքներն և արցունքներն այնպէս իր ձայնը խեղդեցին որ բան մը չկրցաւ զուրցել։ Այն ատեն մէկ թևով զմայրը և մէկալով զեղեսաբէթ գրկելով՝ այնպէս երկուքն ալ սրտին վրայ սկսեց առանց խօսիլ կարենալու, զիրենք ստէպ համբուրելով և կէս ժամէն աւելի յորդ արցունք թափելով. վերջապէս ըսաւ. « Սիրելի մայրս, պէտք է որ գքեզ թողում։ իմ տեղս քեզի կը ձգեմ մէկալ երկու որդիքդ Դոնրատը և Հենրիկոսը. քեզի կը յանձ

նեմ իմ կինս, որուն սրտին ցաւը և տագնապը կը տեսնես»։ Սակայն ոչ մայրը և ոչ ալ ամուսինը չէին ուզեր իրենց սիրականին բաժնուիլ, ու երկուքն ալ պինդ բռներ էին զինքը։ Իր եղբայրքը և ուրիշ ասպետները այս ցաւալից խմբին բոլորտիքը կը խոնդէին. ամենուն սիրտը տակն ու վրայ եղեր էր, ամենուն աչքը արտասուալից էր, տեսնելով այս բարեպաշտ որդին, այս գորովագութ և հաւատարիմ փեսայն, որ կը ջանար իր աշխարհիս վրայ ամենէն աւելի սիրականներուն յետին գրկախառնութիւններէն հրաժարիլ և այնչափ հեռու տեղ երթալ ատտուծոյ ծառայելու համար իր կենաց վտանգովը։ Խեղճ ժողովուրդը իր անկեղծ ցաւը կը խառներ իշխանները և պատերազմողներուն ցաւին հետ։ Սակայն միայն դքսին ընտանիքը չէր որ այսպիսի ցաւ կ'իմանար իրեն բացակայութեանը համար. հոն ամբոխին մէջ կար խաչակրաց բազմութիւն մը որ դքսին հետ պիտի երթային սուրբ երկիրը, խիստ շատ հայրեր, ամուսիններ, եղբայրներ որ կ'արտասուէին և իրենց տիրոջը պես իրենք զերեզք կը բռնադատեին ընտանիքներէն և բարեկամներնէն հրաժարելու։ Ամենքն ալ այն տեղուն համար պահած ըլլային այս դժնդակ զգացմանց վայրկեանը։ Դուրինկիացիները, Հէսսեցիները և Սաքսոնները հոն միատեղ ժողվուեր էին իրենց ցաւերովը ինչպէս իրենց արշաւանաց նպատակաւ։ Ամենչափ կապեր չէին կրնար խորտակուիլ առանց գերբնական ձգանց. ամէն կողմանէ կը լսուէին հառաչանքներ և հեկեկանքներ, խառնակ և խուլ աղաղակներ, որ կը միանային հասարակաց ցաւերուն հետ։

Սակայն շատերը աւելի տեր ելլալով իրենց օրտին, կամ աւելի կանուխ հեռացած իրենց ազգականներէն, կամ վերջապէս ջնջնելով ոչ ընտանի և ոչ խզելու կապ մը, այն հանդիսական վարկենին մէջ երեսներնուն վրայ կը ցուցընեին իրենց ձեռնարկութեան սրբազան տպաւորութիւնը։ Սոնք որ ամեն բանէ առաջ խաչակիր և պանդուխտ էին, մինչդեռ ուրիշները կ'արտասուէին և կ'ողբային, աստուծոյ շնորհակալութեան երգ մը երգեցին որ զիրենք արժանի կ'ընէր պատերազմելու ի պատիւ իւր սուրբ անունը։ Այս շնորհակալութեանց երգերուն ձայնը կը խառնուէին սուգի ձայներուն և հառաչանաց հետ որ ամեն կողմանէ կը լսուէին, և այսպէս միացեր էին վսեմ հակադրութեամբ մը այն ուրախութիւնը զոր կ'ազդեր Քրիստոսի սէրը, և նեղբին ցաւոց սաստկութիւնը՝ որուն այն աստուածային սէրը գիտեր յաղթել։

Երբ դուքսը վերջապէս կրցաւ իւր մօրը գրկախառնութենէն քակուիլ, մնացած սպասեալները և այն խեղճ ժողովուրդը որուն իրաւամբ այնչափ սիրելի էր՝ իր շրջս կողմն առին. իւրաքանչիւր ոք կ'ուզեր արգիլել զինքը, նորէն գրկել ձեռքը բռնել կամ գէթ զգեստներուն դպչիլ։ բայց դուքսը արցունքէն ձայնը մարած, մէկու մը պատասխան չտուաւ։ Շատ ջանքի վերջը հազիւ կրցաւ ձամբայ մը բանալ դէպ ի այն տեղը երթալու ուր իր ձին իրեն կը սպասէր. հեծաւ վրան, մտաւ խաչակրաց գունդին մէջ, և մեկնեցաւ իւր ձայնը խառնելով նուիրական երգերուն հետ, զոր խմբովին կ'երգէին։

Իւր ամենասիրելի Եղիսաբեթը դեռ իրեն քովն էր, վասն զի չէր կրցեր յանձն առնուլ ուրիշներուն հետ անոր հրաժեշտի ողջոյնն ընդունիլ և դուքսէն հրաման առեր էր՝ որ իրեն հետ երթայ մինչև Դուրինկիոյ սահմանագլուխը։ Այսպէս ձիու վրայ հեծած՝ քովէ քով կ'երթային, սրտերնին տրտմութեամբ լի. չդիտնալով թէ ինչպէս խօսին. դքսուհին հառաչելէն զատ՝ ուրիշ բան չէր ըներ։ Սահմանագլուխը հասնելով, Եղիսաբեթ չկրցաւ հոն թողուլ ընդդուքը, անոր հետ դեռ օրուան մը ճամբայ ըրաւ, վերջէն երկրորդ օր մին ալ յաղթուած և բռնադատուած ի ցաւոց և ի սիրոյ։ Երրորդ երկրորդ օրն ալ լմընցաւ, դքսուհին յայտնեց թէ չէր գիտեր որ պիտի կարենար երբեք դքսէն հրաժարիլ չէ նէ իրեն հետ երթալ մինչև ի վախճան։ Սակայն վերջապէս պէտք եղաւ որ զինջանի, և այն ատտուածայնին սէրը՝ որ մահուան պէս բուռն է, յաղթեց այս երկու գորովալից և ազնիւ սրտերուն մէջի արարածական սիրուն։ Վարիլայի տէրը, դուքսին տակառապետը, մնտեցաւ իրեն ու ըսաւ. «Տէր իմ, ժամանակն է, թող տուր որ դքսուհին երթայ, պէտք է որ աս ասանկ ըլլայ»։ Այս խօսքիս երկու ամուսինք ալ սկսան լալ, մէկզմէկ դողդըղալով գրկեցին անանկ հառաչանքներով որ բոլոր ներկայ եղողներուն սիրտը երաւ։ Սակայն իմաստուն Վարիլայի տէրը վրայ կու տար և կը ջանար զանոնք բաժնելու. բայց այս երկու սիրտերը որ մէկզմէկ այնչափ սաստիկ և սերտ կը սիրէին, անյաղթելի ուժով մը կպեր էին իրարու հետ այն գերագոյն վարկենին։

Վերջապէս Լուդովիկոս յաղթեց իր անձին և մեկնելու նշանը տուաւ։ Դիքսուէոյն մնտանի մը ցրցուց զոր կը կրէր իւր մտին վրայ, և կընքոյ տեղ կը գործածէր իր ծածուկ նամակներուն. «Եղիսաբեթ, ըսաւ իրեն, ով սիրելիդ քան զամենայն քոյս, աղէկ նայէ այս մատանւոյս վրայ զոր հետս կը տանիմ, և որուն վրայ փորուած է շարիւղայ քարի վրայ գառն աստուծոյ իւր դրոշովը. ասիկայ ըլլայ քեզի ապահով և ստոյգ նշան մը ամենայնի ինչ որ ինծի կը վերաբերի։ Ով որ քեզի այս մատանին բերէ, սիրելի և հաւատարիմ քոյր, և պատմէ որ մեռած կամ կենդանի եմ, հաւատա անոր ամէն զուրցածին»։ Յետոյ վրայ բերաւ. «Աստուած զքեզ օրհնէ, անձկալիդ Եղիսաբեթ, սիրելի քոյր իմ և գանձ անուշակ. հաւատարիմն աստուածհոգիդ և քաջութիւնդ պահպանէ։ Օրհնէ ինքը սրտիդ տակը կրած տղաղ ալ զոր աստուծոյ պիտի ընծայենք մեր խոստմանը համեմատ։ Մնաս բարով, յիշէ միշտ մեր հասարակաց կեանքը, մեր գորովալից և սուրբ սէրը. զիս երբէք մի մոռնար աղօթքներուդ մէջ. մնաս բարով, ալ չեմ կրնար կենալ»։ Ու մեկնեցաւ դուքսը ձգելով զԵղիսաբեթ իւր տիկնայց բազկացը մէջ։ Եղիսաբեթ երկար ժամանակ աչքովը դբսին ելուէն գնաց. յետոյ կիսամեռ արցունքով ողողած՝ դարձաւ Վարպուրկ, իւր սրտին մէջ արդէն նախագուշակութեամբ զգալով որ զմնքը մէյ մ՚ալ պիտի չտեսնէր։ Իւր տխուր բնակարանը դառնալէն վերջը, շուտ մը իւր արքունական զգեստները հանեց, որպէս զի իրաւացի յուսահատութեամբ հագուի այրութեան զգեստները, զորոնք ոչ երբէք պիտի հանէր։

Բարեպաշտ փրանկիսկեան կրօնաւոր մը՝ որ սրբոյն Եղիսաբեթի վարքը գրած է Լուդովիկոս ԺԴի ժամանակ, «Ա.յս օրուան օրս, կ'ըսէ, յորում խիստ քիչ կը գտնուի Ճշմարիտ բարեկամութիւն ամուսնացելոց մէջ, նաև անոնց մէջ ալ որ բարեպաշտ կը կարծուին, թերևս զարմանք ըլլայ տեսնելը այսպիսի խստավար իշխանուհւոյ մը վրայ այնչափ սէր իւր ամուսնոյն համար»։ Մենք ալ բաւական կը սեպենք Եղիսաբեթի համար երկրորդել ինչ որ կ'ըսէր Բանելին Բեռնարդոս սուրբ աստուածածնայ համար, «Մի զարմանաք, սիրելի եղբարք, թէ Մարիամ՝ սրտի մաքրութիւն կոչուեր է, զարմանալու համար պէտք էր մոռնալ որ սուրբն Պօղոս հեթանոսաց մեծ յանցանք սեպեր է իրենց անսիրելութիւնը»։ Եւ կրնանք համարձակ զրուցել թէ այնչափ արդարներ՝ որ պըսակուեցան, ոչ ոք Եղիսաբեթի նման կատարեալ օրինակ մը եղաւ Ճշմարիտ հարսի, ոչ ոք իրեն չափ ամուսացուց կամ սրբացուց մարդկային սէր մը, այնչափ բարձրացրնելով զայն սրտի մը մէջ որ աստուծոյ սիրովը վառուեր էր։ Եւ սակայն սակաւագիտ բան մը չէր այն զօրաւոր և մաքուր ազդեցութեանց ժամանակը՝ այս երկրիս օրինաւոր սէրը միացրնել խրատակրօն և ջերմեռանդ աստուածպաշտութեան հետ։ Քաղցր և օգտակար աշխատանք մը կրնայ ըլլալ, և որուն թերևս օր մը ձեռք պիտի զարնենք, ցուցրնելը թէ ինչպէս քրիստոնեայ դարերուն մէջ՝ մարդկային սրտին ամենէն աւելի զօրաւոր և գորովալից զգացմունքները սրբուեր և կրկնապատկուեր էին հաւատքով. զգաց-

մունքները՝ որ Թերևս հիմնակուլնէն քիչ փո-
փոխական, քիչ տարածուած և քիչ բարակ
էին, ան ատենը շատ աւելի խորունկ էին։ և
երբ կրօնքը միանգամ իւր անմահութեան կը-
նիքը կը դնէր անոնց վրայ, չեմ գիտեր ինչպէ-
սի՛ նեղբին և հրաշալի զորութիւն մը կ՚առնուին։
Որոնք որ կը ճանչնան միջին դարու պատմական
և մատենագրական յիշատակարանները, պիտի
ընդունին այս խօսքիս ստուգութիւնը։ Ա.յն
ժամանակներուն բարոյական ու նեղբին կենաց
մանաւոր յատկութիւնն էր անբաժան միու-
թիւն մը ամենէն աւելի եռանդուն կրից իրենց
օրինաւոր սրբութեանը հետ. կրօնական պարտ-
քը էական տարր մը կ՚ըլլար սրտի գորովալից
զեղմունքներուն։ Հոս ալ, ինչպէս ուրիշ այն-
չափ կողմանէ, Եղիսաբեթ զարմանալի և կա-
տարեալ անձնաւորութիւն մը եղեր է իրեն
ժամանակին։ Մինչ այն դարը չէր յորում
սուրբն Լուդովիկոս կը պահէր իր բովանդակ
կենացը մէջ՝ իւր Մարգարիտա կնոջը համար իր
առաջին տարիներուն հնարագէտ և եռանդուն
գորովը, յորում այս մեծ թագաւորը և մեծ
սուրբը ցուցընելով այն մատանին զոր միշտ կը
կրէր, և որուն վրայ փորել տուեր էր այս ե-
րեք բառերը, Աստուած, Գաղղիա և Մարգա-
ռիտա, հաճոյական պարզութեամբ մը կ՚ըսէր.
Ա.յս մատանիէն դուրս ուրիշ սէր չունիմ։ Ա.ր-
դեօք այն դարը չէր յորում Անգղլոյ Եդուարդ
Ա. թագաւորը կը կանգներ այն հնգետասան
քարեայ խաչերը, որոնց մնացորդքը կրնան սե-
պուիլ աքանչելիք քրիստոնէական արուեստին,
իւր սիրելի ամուսնոյն Էլէոնորա դշխոյին դա-

գաղղին հանգչած տեղեանքը, երբոր մեռած՝ քաղքէն զինքը Վեդմինդը կը տանէին։ Ան տարակոյս տիկայ եղեր է ամենէն աւելի սրբատաշարժ և մեծաշուք յուղարկաւորութեան հանդէսը. տակայն այս բանս միթէ շատ էր այն փնջի համար, որ քսան տարի առաջ գացեր էր իւր ամուսնոյն հետ մնմնակից ըլլալու խաչակրութեան վտանգներուն, և կը ծծէր իր շրթունքներովը Սարակինոսի մը սրոյն թոյնը որ կը քալեր Եդեսարդայ երակներուն մէջ, և այս կերպով փրկեր էր անոր կեանքը իւր կենաց վտանգաւոր։

Բայց զարմանալին այն է որ այս միութիւնը հաւասարապէս նուիրական սեպուեր էր թէ կեղծեօք բանաստեղծութեան և թէ իրօք. Եղիսաբեթին ժամանակակից կամ իրմէն առաջ եղած բանաստեղծութիւնը՝ նոյն հոգին ունի։ Ստեն անցնելէն ետքը եղաւ որ ապօրինաւոր կամ եկեղեցիէն չարքուած սէրը սկսաւ հաճոյ անցնիլ. ինչպէս այն ատենը կարծես թէ երկու սրտերու պատմութեանը մէջ հարկաւոր էր ամուսնութիւնը կամ նշանտուքը, ուղղափառ հոգիներուն համարձակութիւն տալու համար որ քերթողաց պատմածներուն վրայ սրտերնին շարժի։

Գաղղիացւոց մատենագրութեանը մէջ Ռոլանդի և իրեն Օտ անունով խօսեցեալին փափուկ և պարկեշտ սէրը, ծերաբոյ Ռուսկիեռնի թշուառութեանց զարմանալի պատմութիւնը, որոնց այնչափ վեհանձնութեամբ մնմնակից եղաւ իւր ամուսինը, բաւական կենան ըլլալ գաղափար մը տալու համար թէ ինչպէս վարուե-

ցան այս նիւթիս մէջ գաղղիացի բանաստեղծ-
ները։ Գերմանիոյ մէջ՝ որ Եղիսաբեթի երկ-
րորդ հայրենիքն է՝ կրնանք ըսել որ ամէն տեղէ
աւելի բարգաւաճ և ախորժական եղեր է. ա-
սոր ամենէն աւելի աղուոր օրինակը կրնանք տես-
նել Նիպելունկէնլիսուած բանաստեղծութեա-
նը մէջ, Սիկֆրիտ և Քրիմհիլտէ ամուսնաց վը-
բայ, որ այնպէս գեղեցիկ կերպով միամիտ են,
մաքուր և ինքնանուէր։ Այս սուրբ սիրոյ աստ-
ղը՝ որ երկրին պատմական գեղեցկագոյն աւան-
դութիւնները կը լուսաւորէ, է դեռ ևս լուսա-
ւոր վառարանը ասպետական մեծ քերթուած-
ներու։ Բարսրվալ այնչափ կը յատիշտակուի
ձեան վրայ արեան երեք կաթիլ տեսնելով՝ ո-
րոնք կը յիշեցնեն իրեն իւր կնոջ վարդէնի և
սպիտակ երեսաց գոյնը, որ կ'արհամարհէ զիտաս
և պատերազմները՝ զանոնք դիտելու համար։ Լը
հենկրինի ամուսինը՝ ամէն անգամ որ իր երի-
կը իրմէ կը հեռանայ, կը մարի և այնպէս մա-
ռած կը մնայ ինչուան որ դառնայ։ Դիդիերիի
մէջ, երբ որ երկու հաւատարիմ ամուսինք մա-
հուամբ իրարու հետ կը միանան, իրենց միակ
գերեզմանէն երկու գեղեցիկ ոլորտուունկեր
կ'ելլան որ իրարու հետ պլլուելով մէկզմէկ կը
բռնեն։ Քաղցր և ազնիւ նշանակներ այն սուրբ
գորովանաց, որ երկրիս վրայ միայն աղուոր ծաղ-
կներ կը բուսցընեն, բայց որոնց արմատը և
պտուղը ուրիշ տեղ էր։

ԺԶ.

Ինչպէս Լուդովիկոս դուքսը սուրբ երկիր երթալու ժամանակ Ճամբան վախճանեցաւ.

Լուդովիկոս՝ իւր տրտմութիւնը, որ կը բաժնուէր իր սիրելի Եղիսաբեթէն՝ մուցաւ արիութեամբ սրտի իւր հեռաւոր արշաւանաց մէջ. և կը զգար ուրախութիւն մը զոր հաւատք միայն կ'ազդէ իւր առաքինեաց սրտերուն մէջ։ Դուքսին հետ էին իւր տէրութեան ընտրելագոյն ասպետները. Հինգ կոմս, իւր մատակարարը Ռոտոլի, Վարիլայի իշխանը. իւր սպարապետը՝ Հենրիկոս Լ'ապերցպերկի իշխանը, սենեկապետը Հենրիկոս Փահնեբնի իշխանը, և բազմաթիւ պարոններ և ասպետներ. հետը ունեցած հեծեալակ զօրաց թիւը սակաւաւոր էր, ինչպէս կ'ասէին մեզի ժամանակագիր մը, տեղւոյն հեռաւորութեանը պատճառաւ։ Հինգ քահանայք, և անոնց մէջ իւր ողորմաբաշխը Պեր-

դոլ, որ իր վարքը գրած էր, պարտիկան էին հոգալու պատարագը և խոստովանանքը և ուրիշ հոգևորական օգնութիւններ, բոլոր այս պատերազմողաց՝ իրենց արշաւանացը մէջ։ Լուդովիկոս դուքսին իշխաններուն և կոմերուն հետ ընկերացեր էին՝ իբրև գլուխ խաչակրաց՝ բոլոր միջին Գերմանիոյ բազմութիւն ուրիշ ասպետներ ալ, ինչպէս նաև Սուապիայէն, Փրանգոնիայէն և Հռենոս գետին ափունքէն։ Անոնց մէջը հռչակաւոր էր Գլէշէնի՝ իւր առասպելական դէպքերուն համար՝ այս խաչակրութեան միջոց։ Հաստատուն աւանդութիւն մը, պատմական այլ և այլ ապացոյցներով ստուգուած, կը պատմէ՝ թէ գերի բռնուելով ի Պաղեստին և յետոյ Յեգիպտոս տարուելով, հոն ազատեցաւ Սուլտանի Մէլէքսալա օրիորդին ձեռքով, այն պայմանաւ որ իրեն հետ ամուսնանայ, թէպէտ և ձգած էր Դուրինկիա իւր կինը Օրլամինտի կոմուհին։ Իրեն հետ տարաւ զանիկայ ի Հռոմ, ուր կը կարծուի որ Տրանան առած ըլլայ սուրբ Հայրապետէն այս կրկին ամուսնութեան համար, և անկէց իւր Գլէշէն բերդը գընաց, յորում երկու հարսերը խաղաղութեամբ և սիրով մէկմէկու հետ կեցան։

Ասյսպիսի քաղցր ընկերութեամբ, դուքսը Ճամբայ ելաւ ի Փրանգոնիայէն, Սուապեայէն և Պաւիերայէն, անցաւ Դիրոլի Ալպեան լեռներէն, Լոմպարտիայէն և Դոսքանայէն ու գնաց յԱպուլիա կայսեր հետ միանալու համար։ Ասյս գումարումը Տրոյա քաղքին մէջ եղաւ օգոստոսի վերջերը, 1227ին։ Կայսրը հոն զօրաւոր բանակ մը ժողվեր էր, գրեթէ վաթսուն հա-

զար զինուոր բանակած էին խաչին դրօշին տակ։ Սակայն տարափոխիկ սխտ մը արդէն սկսած էր երևնալ բանակին մէջ, և իրենց նաև մտնելը կ'ուշացընէր։ Սակայն ամէն բան պատրաստ էր։ Դուքսը առանձին խօսակցութիւն մը ունեցաւ կայսեր հետ սուրբ Անդրէի կղզւոյն մէջ, արշաւանաց կերպին վրայ. և ետքը երկու իշխանք Պրինտիզի քաղաքէն նաև մնան, աստուծոյ յանձնելով իրենց Ճանապարհորդութիւնը հանդիսական աղօթքներով և ուրիշ կրօնական արարողութեամբ։ Բայց Հաղիւ թէ Լուդովիկոս դուքսը նաև մնաւ, պաղ տենդ մը զգաց. և իրեք օրէն վերջը՝ ծովին չկարենալով դիմանալ, Օդրանդ քաղաքը ելաւ, ուր էր կայսրուհին ալ. դուքսն ալ միատեղ գնաց, թէպէտև ասպետներէն և զինուորներէն շատերը իրենց Ճանապարհորդութիւնը շարունակեցին դէպ ի Պաղեստին։ Լուդովիկոս՝ կայսրուհւոյն այցելութեան գնաց՝ սովորական յարգութեամբ և մեծարանօք. սակայն իւր ջերմը աստիճանաւ, և հաղիւ կրցաւ նաև մնալ, ուր բռնադատեցաւ անկողին մտնել։ Հիւանդութիւնը խիստ շատ յառաջադիմութիւն ըրաւ, և քիչ ժամանակէն հարկ եղաւ բժշկութեան ամենայն յոյսը կորսընչնչել։ Դուքսը առաջինը եղաւ որ իւր վիճակին ծանրութիւնը Ճանչցաւ. շուտով մը կտակը գրել տուաւ, և Երուսաղեմի պատրիարքը կանչեց, որպէս զի իրեն վերջի խորհուրդները մատակարարէ։ Այս եպիսկոպոսը եկաւ Անդրիայի եպիսկոպոսն ալ հետը առած, և վերջին օծումը իրեն մատակարարեց։ Յետոյ խոնարհութեամբ և զղջմամբ իւր մեղքերը խոս-

տովանելով՝ դուքսը իր անկողնոյն չորս կողմը ասպետները ժողվել տուաւ, և անոնց առջևը սուրբ Հաղորդութիւնը ընդունեցաւ սաստիկ եռանդով ու կենդանի հաւատով։

Ոչ իւր ողորմաբաշխին պատմութեանը մէջ կը գտնուի, որ ներկայ էր անոր վերջի վարկեանները, և ոչ պատմագրաց մէկուն մէջ, որ իրմէ եռքը աւանդեցին, խօսք մը՝ որ կարենայ մեզ հաւատացնել, թէ այս սուրբ և քաջ ասպետը կեանքը Թողուլ ատենը ցաւ մը զգացած ըլլայ։ Ոչ իւր երիտասարդութիւնը, որուն ծաղիկը կը տանէր ի գերեզման, ոչ իւր հայրենիքը՝ ուսկից հեռացած կը վախճանէր, ոչ այն իշխանութիւնը՝ զոր այնչափ կատարեալ և ազնուական կերպով բանեցուցած էր, ոչ իր ազգականները, ոչ իւր որդիքը, զորոնք հազիւ ժամանակ ունեցած էր ճանչնալու, և ոչ այն Եղիսաբեթը՝ զոր այնչափ հաւատարմութեամբ և գորովով սիրած էր. այս բարիքներէն մէկը չէր կրնար վայրկեան մը արգելք ըլլալ իւր երկնքին փափաքող հոգւոյն. ընդ հակառակն մեզի կ'աւանդէն թէ մեռնելու կը փութար. և այն բարեբաղդութիւնը, որ Քրիստոսի դրօշուն տակ կը գտնէր մահը՝ և անոր ծառայութեանը և գրեթէ փրկանացը համար մեռնելու, այս ամէն բան զոհելէն վերջը, իւր գլխաւոր մտածմունքն էր, և սրտին մէջ տեղ չէր Թողուցած երկրաւոր յիշատակի մը համար։ Եւ որովհետև կեանքը անցուցած էր աստուծոյ սիրոյն համար և յաստուած, իրեն պարզ և դիւրին երևցաւ մեռնիլ, այն առաջին վայրկենին յորում աստուած զինքը կը կոչէր, և այն տեղւոյն մէջ զոր իրեն

համար սահմաներ էր աստուած։ Հնազանդ և հաստատամիտ զինուորի մը պէս անգանգաստ նշանը ընդունեցաւ, որ զինքը կը կանչէր պատերազմին վախճանին առաջ։ Անիկայ որ այնչափ արցունք թափած էր, առ ժամանակ մը թողուլ իւր սիրելի ընտանիքը. անիկայ որ այնչափ հառաչանաք հրաժարած էր՝ հարսի մը գրգռումներէն, զոր յոյս ունէր քիչ ժամանակէն տեսնել, չունի այս կատարեալ և անդարմանելի բաժանման վայրկենին մէջ ոչ հառաչանք մը և ոչ ալ արցունք մը իրեն տալու։ Կրնար հառաչել և արտասուել իրմէ երկրիս վրայ հեռու ըլլալուն պատճառաւ. սակայն երկնքին դրանը մօտ այս սիրելի պատկերը ոչ կրնար անոր ներենալ բայց եթէ ապագայ ուրախութեանց և յաւիտենական բարեբաստութեանց ծոցին մէջ։

Բաւական սեպէց իւր ասպետացը ապպարել որ երթան իր մահը ծանուցանեն իւր գերդաստանին, և իւր Եղիսաբեթին տանելով իր այն մատանին զոր իրեն ցուցեր էր, և մէկ քանի խօսքեր ալ որ մեզի չեն աւանդուած։ Ուստի առաջեց յանուն աստուծոյ և սուրբ աստուածածնայ բոլոր այն մարդկանց որ հոն կը տեսնէր, զինքը չմոռնալ եթէ իրմէն աւելի ապրին իրենց այս սուրբ գործին մէջ, և իւր ոսկրները տանին ի Դուրինկիա և ի Բենհարցպրիսն թաղեն, ուր իւր շիրիմը ընտրած էր. ինչպէս նաև զինքը ալ մենեին չմոռնան իրենց աղօթիցը մէջ։ Հոգին աւանդելէն քանի մը վայրկեան առաջ լեցուն ձերմակ աղաւնիներ տեսաւ որ իր սենեակը կը լեցուէին, և անկողնոյն չորս կողմը կը թռչէին։ «Ցեսէ՛ք տեսէ՛ք, ըսաւ, այս ձիւնէն աւելի սպի-

տակ աղաւնիներ»։ Ներկայ գտնուողներն կարծեցին թէ խելքը կորսնցուց. քիչ մը եռաբը ըսաւ. «Հարկ է որ Թուչիմ այս գեղեցիկ աղաւնիներուն հետ»։ Այս խօսքերս ըսելով առ աստուած նետեց, այս մահկանացու պանդխտութիւնը ձգելով, որպէս զի անմահ յաւիտենական կուԹեան մէջ մնայ և բազմի աստուծոյ սեղանատոց մէջ. սուրբ կուսին ծննդեան երբորդ օրը իւր քսան և եօԹնամեայ ծաղիկ հասակին մէջ։

Երբ Լուդովիկոս վերջին շունչը առանդեց, իւր Պերդոլտ ողորմաբաշխը այն աղաւնիները տեսաւ, որոնց վրայ խօսած էր, որ դէպ ի աւանելք կը Թուչէին. երկար ժամանակ անոնց ետևէն աչքով նայեցաւ. և չզարմացաւ Թէ ինչպէս Հոգին սուրբ իջած էր ի վերայ որդւոյն աստուծոյ աղաւնիի կերպարանքով, հրեշտակներ զրկած էր սպիտակ զգեստներով, որպէս զի երԹան փնտրուէն և տանին առ արեգակն յաւիտենական արդարուԹեան այն նորահաս հոգին, որ պահած էր իւր մահկանացու պանդխտութեանը մէջ աղաւնիի անմեղուԹիւնը և սրբուԹիւնը։ Իւր կերպարանքը արդէն այնչափ գեղեցիկ էր բովանդակ կենացը մէջ, որ կարծես Թէ նոր գեղեցկուԹիւն մը ստացեր էր մահուան գրկին մէջ, և անկարելի էր նկատել առանց զարմանալու, կատարեալ հաւատք մը, քաղցր խաղաղուԹիւն և անանց ուրախուԹիւն, նկարուած իւր Թարկացեալ այտերը վրայ, մահուան խաղաղուԹեամբը որուն գեղեցկուԹիւնը այնչափ խորունկ և մաքուր էր։

Դժնդակ ցաւ մը եղաւ անանց որ միատեղ այնչափ հեռու գնացած էին, զանիկայ տեսնե-

լով մեռնիլ իրենց բազկացը մէջ երիտասարդութեան պայծառութեամբ և քաջութեամբ, և առանց առաջնորդի մնալ այսպիսի վտանգալի արշաւանքի մը մէջ։ Եւ առաւել սատիկ էր ալ իւր հպատակաց և զինակիր եղբարցը մէջ մնոց՝ որ իրմէ առաջ գացած էին ի պատերազմ։ և այն տխուր բարեբաստութիւնը չունեցան իւր վերջին վայրկեաններուն հսկել, և իւր յետին շունչը ընդունիլ, և որոց գնացին ծանուցանել ծովուն ընդարձակութեանը մէջ այն կորուստը զոր ըրին։ Իրենց ցաւոց ձայները և երկայն հառաչանաց աղաղակները օդերը թընդացուցին և աղեաց վրայ լուեցան։ «Վաղ, սիրելի տէր, կ'ըսէին, աւաղ ամենիւ ասպետ, ինչպէս զքեզ այսպիսի օտար երկրի մը վրայ աքսորուած թողուցինք. ինչպէս զքեզ կորսնցուցինք, զքեզ՝ լոյս մեր աչաց, առաջնորդ մեր պանդխտութեան, յոյս մեր վերադարձին. վայ մեզի»։

Շուտ մը իրենց ընթացքին ետ դարձան, և միաբանելով անոնց հետ՝ որ ցամաքը մնացած էին, ամենքն ալ հանդիսական երդումներ ըրին, որպէս զի իրենց սիրելի իշխանին վերջին կամքը հաստատեն, եթէ իրենք ալ ազատին խաչակրութեան վտանգներէն. և այս բանիս սպասելով՝ յուզարկաւորութիւնը հանդիսով կատարեցին, և մարմինը խնամքով թաղեցին, յետոյ Ճամբայ ելան իրենց ուխտը կատարելու։

ԺԷ.

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ մեծ տրամութեամբ և ցաւով իւր ամուսնոյն մահը խնացաւ։

Այն իշխանները՝ որոնց Լուդովիկոս դուքսը յանձնած էր մեռնելու ժամանակը, որ Երթան իւր մահը ծանուցանեն ի Դուբրինկիա, Երկայն և դժուարին ճանապարհորդութիւն մը ունէին կատարելու. այն տխուր լուրը, զոր պիտի տանէին իրենց հայրենիքը, չէր կրնար իրենց ընթացքին շարունակութիւնը փութացընել։ Հասան ի Դուբրինկիա, երբոր ձմեռը արդէն սկսեր էր. նորահաս դքսուհին այն միջոցին մէջ իւր ջրրորդ որդին ծներ էր, զԱՎերդրուտա իշխանուհին, և այն պատճառաւ չկրցան պատգամաւորները տեսնել երբոր հասան։ Ուստի մօր դքսուհւոյն և երիտասարդ իշխանաց Գոնրատոսի և Հենրիկոսի խնացուցին այն դժնդակ և անակնկալ կորուստը, որ իրենց վրայ հասած էր։

Ա.ին ընդհանուր ցաւին, որ այս լուրը տարածեց հռչակաւոր հանդուցեալին գերդաստանին և ժողովրդեան մէջ, խոհական և բարեպաշտ անձինք մտածեցին թէ՝ ինչ կերպ ազդեցութիւն պիտի ունենար նորահասակ մօրը վրայ, որ առանց գիտնալու այրի մնացեր էր։ Սոփիա խոտիւ հրամաններ տուաւ, որպէս զի չըլլայ մէկը որ իւր հարսուհւոյն ծանուցանէ այն դժբաղդութիւնը, որ իրեն վրայ հասեր էր, և հարկաւոր եղած զգուշութիւնները գործածեց որպէս զի իւր հրամանները հաւատարմութեամբ կատարուին։

Սակայն պէտք եղած ժամանակը անցեր էր իր տղայաբերութենէն ի վեր, և հարկ եղաւ որ ծանուցանէն այս գորովալից և հաւատարիմ ամուսնոյն այն դժբաղդութիւնը որ աստուած իւր վրայ ղրկեր էր։ Սոփիա դքսուհին յանձն առաւ այս ցաւալի պաշտօնը. հետը ունենալով շատ ազնուական և խոհական տիկնայք, գնաց իւր հարսուհւոյն բնակարանին մէջ։ Եղիսաբեթ զանոնք յարգութեամբ և սիրով ընդունեցաւ և բազմեցընել տուաւ անկողնոյն ջրոյ կողմը, առանց տարակոյս մը ունենալու իրենց այցելութեան նպատակին վրայ։ Երբոր ամենքն ալ նստան, Սոփիա դքսուհին սկսաւ խօսիլ. «Հաճայերուէ՛, սիրելի օրիորդս, և ինքզինքդ տանին ու վրայ մի՛ բերեր, ինչ որ պատահեցաւ քու ամուսնոյդ, իմ որդւոյս, աստուծոյ կամքովը եղաւ, որուն՝ ինչպէս որ գիտես՝ ինքզինքը բոլորովին յանձներ էր»։ Եղիսաբեթ իւր կեսրոջը հանդարտութիւնը տեսնելով, որ այս խօսքերը իրեն կ'ըսէր առանց արտասուելու, չկրցաւ մա-

կաբերել իւր գժբաղդութեան մեծութիւնը, և կարծելով թէ իւր ամուսինը գերի ընկեր է՝ պատասխանեց. «Եթէ եղբայրս գերի ինկած է, աստուծոյ և բարեկամաց օգնութեամբը շուտով պիտի գնուի. ստոյգ եմ որ հայրս անոր օգնութիւն պիտի հասնի, և ես քիչ ատենէն պիտի մխիթարուիմ»։ Բայց Սոփիա դքսուհին վայ բերաւ. «Ո՛հ, հանդարտէ սիրելի դուստրս և առ այս մնատանիս որ քեզի կը զրկէ, վասն զի մեր գժբաղդութեամբը անիկայ արդէն մեռած է»։ «Ո՛հ, տիկին, աղաղակեց նորահաս գրքասուհին, ինչ կ'ըսես»։ «Մեռած է, պատասխանեց մայրը»։ Ա.յս խօսքերուս Եղիսաբեթ թաղկացաւ, յետոյ իւր կարմիր ձեռքերը ծնկանը վայ դնելով, և խոնարհութեամբ ամիսոփելով մարած ձայնով մը ըսաւ. «Ո՛հ աստուած իմ, աստուած իմ, ահաւասիկ բովանդակ աշխարհքս ալ մեռած է ինծի համար, բոլոր աշխարհքը՝ իրեն ամեն քաղցրութեամբը»։

Յետոյ ոտը ելաւ ինքզինքը բոլորովին կորսընցուցած, և բոլոր զօրութեամբը սկսաւ բերդին երկայն սրահներուն մէջ ընթանալ, կանչելով՝ մեռած է, մեռած է. միայն սեղանատան մէջ կանգ առաւ, յորում պատի մը հանդիպեցաւ, որուն առջևը մնաց լի արցունքով։ Կարծես թէ խելքը կորսընցուցեր էր. դքսուհին և ուրիշ աղնուական տիկնայք հետը գնացին, պատէն զատեցին. աթոռի մը վրայ նստեցուցին և ջանացին մխիթարել զանիկայ։ Սակայն յանկարծ սկսաւ մեծ ձայնով հառաչել և արտասուել, այս անընդհատ խօսքերը ըսելով. Հիմա (յաձախ այս խօսքը կը զրուցեր) հիմա ամեն բան

կորմնցուցի. ահ սիրելի եղբայրս, իմ սրտիս քաջ բեկամը, ահ բարի և բարեպաշտ ամուսին, ուրեմն մեռած ես, և զիս խեղճութեան մէջ ձգեցիր, ինչպէս պիտի ապրիմ առանց քեզի։ Ահ, աստուած իմ, որ երբեք չես ձգեր ինծի պէս դժբաղդ այրիները և որբերը, միթիթարէ՛ զիս ալ ու սփոփէ քիչ մը։ Տէր աստուած, զօրացո՛ զիս իմ տկարութեանս մէջ, և օգնութեան հասիր։

Ա. Յիս միջոցին իրեն ծառայող կանայքը եկան զինքը առնելու և իւր սենեակը տանելու։ Եղիսաբէթ թող տուաւ որ քաշկռտելով տանին զինքը. բայց երբ հասաւ իւր տեղը՝ մէկէն երեսի վրայ գետին ինկաւ, և երբ վեր վերուցին՝ նորէն սկսաւ լալ, ողբալ ու հեծկլտալ։ Սոփիա դքսուհին ալ չկարենալով յաղթել իւր մայրենի ցաւոցը, իւր հարսին հետ սկսաւ ինքն ալ լալ, ինչպէս նաև ամեն ազնուական տիկնայք և օրիորդք որ ներկայ գտնուեցան այս տխուր տեսարանին. իրենց հետուեցան նոյնպէս դուքսին տանը բոլոր պաշտօնակալքը, նաև Վարպուրկի բոլոր ժողովուրդը ուր Լուդովիկոս անցուցեր էր իրեն կարձատև կեանքը. ասոնք ամենքը որ ինչուան ան ատենը ծածկեր էին իրենց սրտին ցաւը, վախնալով որ չըլլայ թէ ատենէն առաջ իմանայ խեղճ այրին, սկսան անմխիթար արցունքով ողբալ իրենց սիրական իշխանին մահը։ Գրեթէ ուր օր ուրիշ բան չէր լսուեր այն բնակարանին մէջ, բայց արտասուք հառաչանք և ցաւոց աղաղակներ։ Բայց ոչ այս համակրութիւնը և ոչ ուրիշ որ և իցէ սփոփումն չէին կրնար հանդարտել Եղիսաբէթի ցաւը. փուռ

տեղ դարման մը կը փնտրուէին անոր յուսահատութեանը. և սակայն կար անոր քով ամենազօր մխիթարիչ մը. Հոգին սուրբ որ Հայր է այրեաց որբոց և վշտահար սրտերու, և որ անոր ուժին համեմատ կը ղրկէր այս վշտերս, կ'ուզեր լեցընել զնա իւր շնորհօքը լինցընելով անոր ցաւերը։

Եւ յիրաւի ահա սիրելի սրբուհին որ Ճնմրիա քրիստոնէական ամուսնութեամբ մը կապուած էր, որ է ըսել աշխարհքիս ամենամեծ բարեբաստութեամբ մը, ահաւասիկ այրի մնացած իրեն քսան տարուան հասակին. ահաւասիկ սիրող և այնչափ սիրուած հարը՝ սրտի միայնութեան մը դատապարտուած՝ հիմա կը հառաչէ միայնակ. բաւական չէր սեպած աստուած որ մանկութեան հասակին նպատակ ըլլայ չարասիրտ մարդիկներու հալածանաց և նախատանաց. վասն զի անարատ պահեր էր իր առաստուած ունեցած վստահութիւնը։ Բաւական չէր սեպած փորձել զինքը արքունական մեծութեանց փառքովը, ասպետաց մեծարանքովը, և կամ ամուսնական կենաց նեղքին ուրախութեամբն և երջանկութեամբը. այս ամեն բարեբաստութեանց մէջ Եղիսաբեթ իր սրտին մէջ երկնից մտածութիւնը միայն ամեն քանէ վեր դրեր էր. իր կենացը մէջն ալ սփոփել թշուառները, և իր կարօտ և նեղեալ եղբայրները. սակայն այս ամեն բան բաւական չէր սեպած աստուածային սէրը. այլ պէտք էր որ դեռ երկրային փառացը հաղորդ չեղած, ինքը՝ որ այնչափ թշուառներ մխիթարած էր՝ բլլայ թշուառ քան զամեն արարածս, և դեռ յաւիտենական կենաց

դուները իրեն առջևը չըացուած, պետք էր որ ամեն օր բիւր անգամ մեռնէր աշխարհի ու ա-նոր ամեն բարեացը։ Այսկէ ետքը մինչև իւր կե-նացը վերջին օրը, մրրիկք անդադար այս տկար բուսոյն վրայ կը յարձրկին, և մեծ ու հրաշալի զօրութեամբ մը, զոր դիւրաւ կրնան հասկը-նալ աստուածասէր հոգիք, փոխանակ խորտա-կելու և գետնի վրայ իյնալու, հաստատուն կը մնայ և ամեն կողմանէ ճիւղեր կ'արձրկէ, որ-պէս զի ընդունի երկնային ցօղը և անմման գե-ղեցկութեամբ ծաղկի։ Եթէ գորովալից ամուս-նոյ մը կորուստը, եթէ նուիրական միաւորու-թեան այսպիսի անակնկալ կործանումը, կրը-ցաւ անոր սիրտը քիչ մը ատենուան համար յու-սահատութեան անդունդին մը մէջ ձգելու, քիչ ատենէն նոր և դժնդակ նեղութիւնք ետ պիտի դարձնեն իրեն առաջին զօրութիւնը, հանդարտութիւնը և անկուն եռանդը։ Թէ որ քիչ մը ատեն յաղթուեցաւ զգալով մարդ-կային սիրոյն վերքերուն ցաւը, նորէն պիտի ըս-տանայ իր զօրութիւնը, ձեռք ձգելով երկնա-ւոր սիրոյն այն շղթայն՝ որ զինքը պիտի միաւորէ աստուծոյ հետ, և ոչ ոք պիտի կարենայ զանի-կայ խորտակել։

ԺԸ.

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ իւր փոքրիկ ազգը հետ կ'սպասուի իր բերդէն, և վերջի տասիճանի հիգութեան մէջ կ'ելնայ. և փոխանակ բարեաց՝ ապերախտութիւն ու չարութիւն կ'ընդունի իր պաշտօնակալներէն.

Եղիսաբեթի վարքին այս երկրորդ մասը սկսելով իւր քսանամեայ հասակէն, կը ծանուցանենք մեր ընթերցողաց, թէ աներևութացած պիտի տեսնեն սակէ ետքը մարդկային կարծուած դէպքերը, և գրեթէ այն վիպասանութեան կերպարանք ունեցող դիպուածները՝ զորոնք թերևս գտած ըլլան մեր պատմութեանը առաջին մասին մէջ։ Ո՛չ և այ պիտի տեսնեն զինքը նորահաս և փափուկ հարս մը, որ կը ջանայ միացընել՝ իւր հոգւոյն գորովալից անմեղութեանը մէջ՝ երկնաւոր հօրը պաշտամանը հետ երկրիս վրայ գտնուած ամենէն աւելի քաղցր սէրը. այլ պիտի տեսնեն ապաշխարող մը, ինք-

զինքը բոլորովին հոգևորական կենաց նուիրած՝ ընդհանուր հաստատելոց համար բացուած սովորական ճամբաներէն դուրս ելլելով, իւր կեանքէն արմատաբի խլելով և սրտին մէջէն խորտակելով, ինչ որ կրցեր էր դնել աստուծոյ դէմ։ Եղեսաբեթ սակէ ետքը քրիստոնեայ այրի մը պիտի ըլլայ, բարեբարոյ մեծ զօրութիւն, ինքզինքը ամէն բանէ զրկած, և վերջապէս հոգևորական մահացումն և ուրացութեան այն աստիճանին հասած՝ որ թէ՛ սրտի և թէ՛ մտքի դէմ կ'երևնայ. և անոնց քաղցրութեան ճաշակն առնուլ ուզողը՝ պէտք է որ զօրաւոր և անարատ հաւատք մը ունենայ։

Ո՛չ երկարատև և ոչ զօրաւոր եղաւ այն կարեկցութիւնն որով շրջապատուած տեսանք զինքը իւր սուգին առաջին վայրկեաններուն մէջ իր պալատականներէն։ Քիչ ատեն անցնելէն ետքը հալածանքը և ապերախտութիւնը իրենց դառնութիւնը աւելցուցին այն ցաւին վրայ որով լեցուած էր իրեն սիրտը։ Երբոր բոլորովին այն ցաւոցը մէջ ընկղմած, երեսի վրայ ձգեր էր տէրութեան հոգերը, որ ալ իրեն չէին վերաբերեր իւր ամուսնոյն մահուամբը և որդւոյն պզտիկութեանը պատճառաւ, հին թշնամութիւնները արթնցան իրեն դէմ, և ասիկայ յարմար առիթ մը սեպեցին ընկճելու և սաստկացնելու այն վէրքը որով զինքը աստուած վիրաւորեր էր։ Լուդովիկոս դուքսը՝ երկու կրտսեր եղբայրք ունէր, որ էին Հենրիկոս և Գոնսրատ, որոնց չորս կողմը առեր էին արդարութիւն ու պատիւ չճանչցող մարդիկ։ Ա.յս անօրէն խորհրդականները ամէն բանէ աւելի ջանացին մե-

լրեցընել Հենրիկոս իշխանը և դաւաճանու-
թիւն ընել իրեն հարսին դէմ։ Ըսին թէ Դու-
ընկոյ օրինացը համեմատ բոլոր իշխանութիւ-
նը մնաւաժան պիտի մնայ իշխանական գերդաս-
տանին անդրանկին ձեռքը, և անիկայ միայն
աշխարհք պիտի մնէ, ու իրմէ ետքը ծնած-
ները՝ եթէ ուզենան կարդուիլ, շատ շատ քիչ
մը երկրի տէր կընային ըլլալ՝ ու կոմս կը սե-
պուէին, միշտ հպատակ մնալով իրենց մեծ եղ-
բօրը. ուստի պէտք էր որ Հենրիկոս շուտով մը
ձեռք ձգէ գերագոյն իշխանութիւնը, և ընտա-
նեաց անդրանկին իրաւունքը մէկդի ձգելով՝
Լուդովիկոսի Հերմանն որդին՝ շուտով մը ամու-
նանայ, որպէս զի տէրութիւնը իր ձեռքը մնայ։
Կ'երևնայ թէ չհամարձակեցան խորհուրդ տալ
իրեն օրինաւոր ժառանգը սպաննելու. բայց
ստիպեցին որ իր եղբօր կինը՝ իր զաւկներովը
մէկտեղ վռընտէ՝ չէ թէ միայն Վարպուրկի աբ-
քեպական պալատէն դուրս՝ այլ նաև Իմնա-
կէն և ուրիշ ամէն իշխանական գաւառներէն։
Եթէ դիպուածով ապրելու ըլլայ այն զաւակը,
կ'ըսէին թշնամիները, երջանիկ պիտի ըլլայ ե-
թէ իր հօրեղբօրմէն մէկ կամ երկու բերդ
ձեռք ձգէ. բայց հիմա պէտք է փութալ հեռա-
ցընել այն տղան, հալածել իւր շռայլ և կեղ-
ծաւոր Եղիսաբեթի մօրը հետ։

Հենրիկոս դուքը դժբաղդաբար մտիկ ըրաւ
այս վատ խորհրդոյ. արդարութիւնը և պատի-
ւը, կ'ըսէ հին բանաստեղծ մը, հեռացան իւր
սրտէն, և յայտնի թշնամութիւն բացաւ այն
պրոյն և որբին հետ, զորոնք երդում ըրած
էր պաշտպանելու։ Իւր կրտսեր եղբայրը Գոն-

բատ անոր պէս յաղթուեցաւ, և վստահացած անոնց երկուքին համախոհութեանը վրայ, վատ և չար դրանիներ՝ Եղիսաբեթ դքսուհւոյն քով դիմեցին, որպէս զի իրենց նոր տիրապետին կամ քը յայտնեն։ Գտան իւր Սոփիա զրքանչին քով, և նախ սկսան արհամարհել զնա նախատանօք. յանդիմանեցին որ բոլոր երկիրը կործաներ էր շուայլութեամբ, վատներ էր տերութեան գանձերը, խաբեր և անպատիւ ըրեր էր իւր ամուսինը. և խնայուցին իրեն որ ի պատիժ իւր յանցանացը՝ բոլոր ստացուածքը ձեռքէն պիտի առնուի, և Հենրիկոս դուքսն ալ սակէ վերջը տիրապետ է բոլոր գաւառին, և իրեն կը հրամայէ նոյն վայրկենին բերդէն ելլել ու գլխուն Ճարը տեսնել։ Եղիսաբեթ զարմացած այս նախատանաց և պատգամաւորներուն վրայ, Ջանաց իւր չար և վատ թշնամւոց սիրտը մեղմացընել, և խոնարհութեամբ՝ աղաչեց որ իրեն թոյլ տան քիչ մը ժամանակ դեռ հոն մնալու։ Սոփիա դքսուհին բարկացաւ անոնց այս աստիճանի անմտութեանը վրայ, և իւր հարսը գրկացաւ մէջ առնելով՝ աղաղակեց. «Ինծի հետ պիտի մնայ, և ոչ ոք պիտի կարենայ ինծմէ զատիկայ յայտիշտակել։ Ուր էն տղաքս, կ'ուզեմ մէյմը անոնց հետ խօսիլ»։ Պատգամաւորները պատասխանեցին. «Ոչ, պէտք է որ այս վայրկենիս բերդէն ելնէ». և սկսան բռնութեամբ երկու իշխանուհիները մէկմէկէ բաժնել։ Տեսնելով որ չէն կրնար անոնց բռնութեանը յաղթել։ Սոփիա դքսուհին ուզեց դռնէ խեղճ Եղիսաբեթին հետ մինչև բերդին արտաքին դուռն երթալ։ Թող չտուին Եղիսաբեթ դքսուհւոյն

որ և իցէ բան մը հետը տանելու. բայց գաւ-
թին մէջ գտաւ իւր փոքրիկ տղաքը, և պա-
տուց օրիորդներէն երկուքը, որ նոյն ժամա-
նակ իրեն հետ մէկտեղ պիտի մերժուէին, և
որ աւանդեցին մեզի այս տխուր տեսարանիս
պատմութիւնը։

Բերդին դուռը հասնելով՝ Սոփիա դքսուհին
նորէն համբուրեց զՆղիսաբեթ, առատ ար-
ցունք թափելով. և չէր կրնար թողուլ զՆղիսա-
բեթն որ իրմէ բաժնուի։ Իւր հանգուցեալ
որդւոյն տղաքը տեսնելով, այն պզտիկ որբերը՝
որ դատապարտուեր էին իրենց մօրը հետ, սիր-
տը կտոր կտոր կ'ըլլար։ Նորէն խնդրեց շատ ա-
ղաչանօք որ իւր Հենրիկոս և Գոնզատիոս որդ-
ւոցը հետ տեսնուի. խեղճը կը կարծէր որ իւր
աղաչանքը պիտի չմերժեն։ Բայց իրեն պատաս-
խանեցին իշխանները որ հոն չէին. և յիրաւի
պահուըտեր էին այն հրամանին գործադրու-
թեանը ժամանակ, և չէին համարձակեր տես-
նել իրենց մօրը աղաչանքը և արցունքները, և
ոչ այն չարեաց տեսարանը՝ որուն կը դատա-
պարտէին իրենց հարսը։ Վերջապէս երկար ժա-
մանակ իւր արցունքը Նղիսաբեթին արցունքին
հետ խառնելէն ետքը, ուսկից չէր ուզած ամե-
նևին բաժնուիլ, կ'ըսէ պատմիչ մը, իւր որդւոյն
մահուանը ցաւը նորոգուեր էր սրտին մէջ. և
շատ կը նեղուեր մնացած տղոցը չարութիւն-
ները տեսնելով։ Սոփիա դքսուհին մեծ և դժնդ-
դակ ցաւով յանձն առաւ որ Նղիսաբեթ իր-
մէն բաժնուի։ Բերդին դռները, որոնց վրայ
դքսուհին այնչափ տարի իշխեր էր՝ մէկէն ետևէն
փակուեցան. այն պալատէն՝ ուսկից ձնմարիտ

ազնուական ասպետներ գնացեր էին Քրիստոսի գերեզմանը ազատելու, ոչ ոք գտնուեցաւ՝ որ կամ օգնէ և կամ ապաւինելու տեղ մը տայ այրուցոյն և որբ տղացը։

Թագաւորաց դուստրը տրտում տխուր ինքնայն դժուարին և քարոտ ճամբուն վրայ որ քաղաք կը տանէր, իր բազկացը մէջ բռնելով իւր նորածին մանուկը. իսկ մնացած իրեք տղաքը իւր պատուոյ օրիորդներն կը տանէին. եղանակը ձմեռ էր, ցուրտն ալ շատ դժուդակ։ Վարպուրկ լեռան ստորոտը հասնելով և Խշնակ քաղաքը մտնելով՝ որ լեցուն էր իրեն բարեգործութիւններովը՝ հոն ալ ոչինչ նուազ անողորմ սրտեր գտաւ։ Ցիրաւի Հենրիկոս դուքսը ապրպիրեր էր քաղքին, թէ ով որ ընդունելու ըլլայ զՅղիսաբեթ դքսուհին կամ իւր տղաքը, իրեն մեծ տհաճութիւն կը պատճառէ. այս հրամանիս պատճառաւ շատ աւելի անգութ ապերախտութիւն ցրցուցին Յղիսաբեթի բոլոր Խշնակի բնակիչքը։ Ընդունայն տեղ դժբաղդ իշխանուհին իւր չորս պզտիկ տղաքը հեռն առած, լալով դնէ դուռ կը պտտէր, և մնաւանդ անոնց՝ որ քիչ մը առաջ իրեն այնչափ սէր ցրցուցեր էին, բայց ոչ ոք զինքը ներս ընդունեցաւ։ Վերջապէս խեղճ գինեստուն մը հասաւ, որուն պանդոկապետը չմերժեց զՅղիսաբեթ որ անդադար կու լար ու կ'ըսէր. ամէն բանս յափշտակեցին ու զիս ալ անէս ու տեղէս վռնտեցին, բացի առ աստուած ազօթելէն՝ ուրիշ բան ձեռքէս չգար։ Պանդոկապետը միայն այն գիշերուան համար՝ թէ՛ իրեն և թէ՛ իրեն հեռը եղողներուն նեղ խուց մը տուաւ, ուր կը բնա-

կեին իւր խոզերը, և ուր կը դներ գինետան հարկաւոր եղած գործիքները. բայց նոյն գիշերը Գուրինկիոյ դքսուհւոյն և Հունգարիոյ արքունական իշխանուհւոյն քիչ մը տեղ տալու համար՝ խոզերը անկէ դուրս հանեց։ Իրեն այս ամենացած վիճակը՝ շատ շուտով հանդարտեց իր խռովեալ հոգին. վասն զի հաղիւ թէ ոտքը այն աղտեղի բնակարանին մէջ դրեր էր՝ մէյ-մին ալ յանկարծ արցունքները դադրեցան, և գերբնական ուրախութիւն մը իր վրան իջնալով՝ մինչև կէս գիշեր այնպէս զմայլած կեցաւ. այն ժամուն Փրանկիսկեանց վանքին առաւօտեան զանգակը լսեց. այս վանքը ինքն իւր ամմանոյն կենդանութեանը ժամանակ հիմնած էր։ Շուտ մը անոնց եկեղեցին գնաց, և առաւօտեան ժամերգութեան ներկայ գտնուելէն ետքը, քահանայից աղաչեց որ Ցքեղ աստուած գոչվարանեմք երգը երգեն, որպէս զի Հնորհակալ ըլլայ աստուծոյ իրեն ղրկած նեղութեանցը համար։

Խորհրդներուն առջև երեսի վրայ ինկած, մինչդեռ տխուր գիշերուան խաւարին մէջ այս ուրախութեան երգը՝ այնչափ անիմանալի աշխարհասիրաց՝ դէպ ի երկինք կը բարձրանար, Եղիսաբեթ իրեն հաւատարիմ հետևողներուն բարի օրինակ կ'ըլլար իւր հոգւոյն առ աստուած ունեցած եռանդեռանքն և խոնարհութեանքը։ Հնարհակալ կ'ըլլար աստուծոյ բարձր ձայնով իրեն այնպէս աղքատ և ամէն բանէ զրկուած ըլլալուն համար, ինչպէս որ ինքն Քրիստոս էր Բեթղեհեմի մսրին մէջ. «Ցէր աստուած իմ, կ'ըսէր Եղիսաբեթ, պէտք է որ քու կամքդ կա-

տարուի. երեկ դքսուհի մ'էի մեծ բերդերով, իսկ այսօր մուրացող մ'եմ, և ոչ ոք ինծի ապաւինելու բնակարան մը կու տայ. տէր իմ, եթէ քեզի աւելի աղէկ ծառայած ըլլայի դքսուհեանս ատեն, և եթէ աւելի ողորմութիւններ ըրած ըլլայի քու սիրոյդ համար, հիմա պիտի ուրախանայի. բայց դժբաղդաբար այսպէս չէղաւ»։ Երբ ինքն այսպէս վերացեր էր մտքովն առ աստուած, լսելով յանկարծ իր խեղճ տղոց լալս ձայնը, որոնք ցրտէն ու անօթութենէն կը նեղուէին, նոր ցաւեր արթնցան իւր փափուկ սրտին մէջ։ «Ա՛ւրժանի եղայ, կ'ըսէր, զանոնք այս վիճակիս մէջ տեսնելու. բայց դառնապէս կը զղջամ տղաքս իշխան և իշխանուհի ծնած ըլլալուս, որ հիմա անօթի են, և ոչ ալ պառկելու անկողին մ'ունին. սիրոս վերջի աստիճանի վիրաւորուած է անոնց համար»։

Բոլոր նոյն գիշերն և երկրորդ օրուան մէկ մասը՝ իրենեռրովը եկեղեցւոյն մէջ կեցաւ. սակայն ցուրտին սաստկութիւնը և անօթութիւնը՝ ուսկից սաստիկ կը չարչարուէին տղաքը ու կը գանգատէին, բռնադատեցին զՆեղոսաբեթ ելլել հոն տեղէն և նորէն երթալ քիչ մը կերակուր և բնակարան մը ձարելու։

Փուճ՝ տեղը երկար ժամանակ բոլոր քաղքին մէջ ասդիս անդին պտտեցաւ, ուր այնչափ մարդիկ իրմով հարստացեր, բժշկուեր ու խնամուեր էին. վերջապէս աղքատ քահանայ մը գտնուեցաւ որ սրբուհւոյն Նեղոսաբեթի խեղճութեանը վրայ զթալով, և Հենրիկոս իշխանին բարկութիւնը արհամարհելով, առաւ զանիկայ իր տունը տարաւ։ Նեղոսաբեթ մեծ երախտագի-

տութեամբ ընդունեցաւ անոր իրեն ցրցուցած բարիքը. քահանայն յարդէ անկողմներ պատրաստեց, և զանոնք իւր հիւրութեանը համեմատ ջանաց պատուերու։ Իսկ Եղիսաբեթ որպէս զի կարենայ թէ՛ իրեն և թէ տղոցը համար քիչ մը կերակուր գտնել, ստիպուեցաւ գրաւի դնել այն ադամանդներն՝ որ Վարպուրկէն աբսորուելու ժամանակ իրեն հետն առեր էր։ Սակայն իւր հալածիչքը խմնալով որ բնաւ կարան մը գտած էր, և չթողուլով իրենց բիւրտ կատաղութիւնը, հրամայեցին Եղիսաբեթին որ երթայ աբբունական իշխանի մը քով կենայ, որ իրեն ամենէն աւելի ատելութիւն ցրցուցեր էր, և Իվնակ քաղքին մէջ ընդարձակ բերդ մը ուներ մեծ շրջակայներով։ Ա.յս մարդը ամենևին չամչցաւ դքսուհւոյն նեղ բնակարան մը ցրցունելու, յորում բոլոր գերդաստանովը փակեց զանիկայ. սաստիկ կոշտութեամբ անոր հետ ուզելով վարուիլ՝ ոչ հարկաւոր կերակուրը կուտար, և ոչ ալ տաքնալու կրակ. իւր կինն և ծառայքն ալ ամեն բան Ճիշդ իրեն պէս կ'ընէին։ Դիշերն ի բուն Եղիսաբեթ այն աղտոտ տեղւոյն մէջ կը տեսնէր իւր տղոց անօթութենէն և սաստիկ ցրտէն չարչարուիլը։ Երկրորդ առաւօտն ալ չուզեց այնպիսի անհիւրընկալ բնակարանը կենալ, և երթալու ժամանակ դարձաւ պատերուն ու ըսաւ. «Ճնորհակալ եմ ձեզի, որ պաշտպանեցիք զիս ամբողջ գիշերս որչափ որ կրցաք անձրևին և հովին դէմ։ կը փափաքէի բոլոր սրտիս շնորհակալ ըլլալ նաև տէրերնուդ, բայց չեմ գիտեր թէ ինչ բանի համար»։

Եղիսաբեթ նորէն գնաց իւր առջի գիշերուան անցուցած բնակարանը՝ գինետան մէջ. միայն այս տեղ էր՝ ուկից իւր թշնամիքը չհամարձակեցան զինքը մերժել։ Օրուան մեծ մասը՝ ինչպէս նաև գիշերները՝ եկեղեցւոյն մէջ կ'անցընէր. «Գէթ հոն տեղէն, կ'ըսէր, ոչ զբ կը համարձակի զիս մերժելու, վասն զի աստուծոյ տունն է, և աստուած է միայն զիս ընդունողը»։ Եղիսաբեթ ամէն զոհերէն աւելի ուրիշ դառնագոյն զոհ մէն ալ ստիպեցաւ ընելու. ինքը որ այնչափ օրբեր մնացեր էր, այնչափ երեսի վրայ ձգուած աղքատ և թշուառ տղոց վրայ ամէնէն աւելի ցրցուցեր էր իր գութը, և որոնց համար գորովագութ մայր մէն էր, հիմա ինքը կը բրնադատուէր իր հարազատ որդւոցմէ բաժնուիլ ու զրկուիլ իր յետին մարդկային միխթարութենէն, որպէս զի զանոնք ալ չդատապարտի իրեն հետ կրելու իրենց մանկական ծաղիկ հասակին մէջ թշուառութիւն և հիգութիւն։ Հաւատարիմ մարդիկ՝ որոնց անունը մեզի անծանօթ է՝ գիտնալով Եղիսաբեթին վիճակը, առաջարկեցին որ հոգ տանի իր որդւոցը վրայ, զոր յանձն առաւ թէպէտ իրեն համար մեծ նեղութիւն էր և մեծ դժուարութեամբ կրնար անոնց ամէն պիտոյքը լեցընել։ Այս առաքինական գործը յանձն չառնելը, կ'ըսէ ժամանակակից պատմագիր մը, կը վախցընէր զԵղիսաբեթ չըլլայ որ աստուծոյ սիրոյն դէմ մեղանչէ, տեսնելով իր սիրելիները տառապանաց մէջ. վասն զի, կ'ըսէ դարձեալ նոյն վիպագիրը, Եղիսաբեթ իր տղաքը կարգէ դուրս կը սիրէր։ Ուստի անոնք իրմէ յափշտակուեցան, և մէկ

մէկէ բաժնուած հեռու տեղուանք պահուեցան։ Անոնց վիճակին վրայ ապահով, իր վիճակին համար աւելի համակերպեցաւ աստուծոյ կամացը հետ. վասն զի գրաւի դրաւ իւր ազնիւ և պատուական ադամանդները, և ինքն ալ սկըսաւ հիւսելով իւր ապրուստը գտնել։ Թէպէտ և այսպիսի խոր հիգութեան մէջ ընկեր էր, սակայն չէր կրնար աղքատ մը տեսնել և անոր չօգնել. երբեմն նաև իր խեղճ կերակուրէն մաս մը մէկ դի կը դնէր, որպէս զի Թշուառ աղքատի մը տայ որ իրմէ մուրալու կու գար։

Ա. յսպիսի դիւցազնական համբերութիւն մը կարծես թէ պիտի հանդարտեցընէր իւր զորաւոր հալածիչներուն կատաղութիւնը. սակայն այս ալ բաւական չեղաւ գթութեան կամ երախտագիտութեան յորդորել Խլնակ քաղքին բնակչացը սրտերը։ Ոչ գթութեան և ոչ ալ կարեկցութեան նշանակ մը չուզեցին ցուցընել, ինչպէս որ յայտնի կը տեսնենք այն մանրամասնութեանց մէջ՝ որ այս սրտաշարժ դէպքերը մեզի աւանդեցին. կարծես թէ ընդհակառակն ուզեցին ցուցընել արդեամբք թէ ապերախտութիւնը՝ ինչպէս ուրիշ մարդկային անարգ կրքերը, չեն կրնար լռեցընել խղճի ձայներն ուրիշ կերպով, բայց եթէ առաջին յանցանաց վրայ նոր յանցանքներ աւելցընելով։ Այսիկայ օրինակով մ՝ալ հաստատենք։ Ա. յն միջոցին Խլնակ քաղքին մէջ մուրացկան պառաւ կին մը կար, որ վերջի աստիճանի թըշուառութեան մէջ ընկեր էր, և երկար ժամանակ դքսուհւոյն առատաձեռնութիւնը, գթութիւնն և խնամքը կը վայելէր. երբ Եղիսա-

բեմն ալ մուրացկան վիճակին հասաւ, և երբ օր մը տղմոտ գետ մը կ'անցներ, որ մինչև հիմա իշնակ քաղքին փողոցի մը մէջէն հանդարտ կը վազէ, և որուն վրայ քանի մը քարեր նետուած էին, որպէս զի բնակիչք դիւրաւ անցընին այն գետէն, Եղիսաբեթ նոյն պառաւ կընկան հանդիպեցաւ որ նոյն ժամանակ նեղ քարերուն վրայէն դէպ ի իրեն կը մօտենար, և որ Եղիսաբեթին անցնելու տեղ չթողուց ու ուժով մը ալ հրելով, այն գարշելի ջրին մէջ ձգեց երեսի վրայ։ Յետոյ այն ըրած չարաճիրտ ապերախտութեանն ալ գոհ չըլլալով, սկսաւ նաև նախատել զանիկայ ու կանչել. «Ինչ աղէկ վիճակի մէջ ես. որովհետև չուզեցիր դքսուհւոյ պէս ապրիլ, ահա հիմա ստիպուեցար այդ աղտեղի տղմին մէջ պառկիլ. գիտցիր որ ես ըզքեզ վեր պիտի չբերցնեմ»։ Եղիսաբեթ միշտ համբերող և քաղցր, եւաւ տղմէն ու սկսաւ ուրախութեամբ ծիծաղիլ իւր գլխուն հասած վտանգին վրայ և ըսել. «Ահաւասիկ այն ոսկիներուն և սակաւագիւտ ադամանդներուն տեղ՝ ոնցմով դքսութեանս ժամանակ զարդարուած էի՝ այս տղմոտ կերպարանքս»։ Յետոյ գնաց, վրայ կը բերէ պատմագիրը, համբերութեամբ և ուրախութեամբ իւր զգեստները լուալու՝ մօտ գետի մը մէջ, և իւր համբերող հոգին Գառնին աստուծոյ արեանը մէջ։

Հասնելով Եղիսաբեթի պատմութեան այս տեղը, բարեպաշտ և հոգեսէր կրօնաւոր մը, զոր արդէն ուրիշ անգամ յիշատակեր ենք, կ'աղաղակէ գորովագութ և փափուկ կարեկցութեամբ մը. «Ո՜հ իմ սիրելի սրբուհի Եղի-

սաբեթս, ես քեզմէ աւելի կը կրեմ քու հի-
գութեանդ թշուառութիւնը. ես քեզմէ աւե-
լի կընեղանամ բարկութեամբ այս անդութ և
ապերախտ մարդկանց, որ զքեզ հալածեցին։
Ո՜հ, եթէ հոն գտնուելու բարեբաղդութիւնն
ունենայի, ինչպէս զքեզ փափաքով տիզմէն
պիտի հանէի, որպիսի սիրով զքեզ պիտի խնա-
մէի. և ինչ փափաքով յօգնութիւն կը հաս-
նէի քու պիտոյիցդ։ Գէթ իմ բարի յօժարու-
թիւնս հաճոյական ըլլայ քեզի. և երբոր գայ
այն ահագին օրը՝ յորում աշխարհքէս արհա-
մարհուած՝ ես միայնակ աստուծոյ դիմացը պի-
տի ելլեմ, կ՚աղաչեմ քեզի որ իմ քովս գաս ու
առնես տանիս զիս յաւիտենական խորանաց
բնակութեանը մէջ»։

Ի

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ չուզեց կրկին անգամ ամուսնանալ, և ինչպէս իւր հարսանեաց զգեստը Քրիստոսի իր նոր փեսային նուիրեց.

Այն տխուր վիճակին մէջ՝ յորում ինկեր էր իշխանուհի մը, այնպիսի հռչակաւոր տոհմի մը ծնունդը, և խնամեցած այլ և այլ զօրաւոր արքունական գերդաստաններու հետ, անտարակոյս իւր ազգականաց գուութը պիտի շարժէր, եթէ իմանային անոր թշուառութիւնը։ Սոփիա դքսուհին շատ ջանաց համոզելու իւր որդիքը, որպէս զի քիչ մը մեղմացնեն թշուառ Եղիսաբեթին վիճակը. բայց տեսնելով որ ձար չեղաւ գնաց ան ատեն ծածուկ իր Մաթիլտէ հօրաքրոջը՝ որ Գիդզենժի աբբասուհին էր՝ անոր խեղճութիւնն իմացուց։ Այս բարեպաշտ իշխանուհւոյն սիրտը տակն ու վրայ եղաւ իմանալով Եղիսաբեթի քաշած նեղութիւնները.

պիտի սրբէր անոնց ամենուն արցունքը, չէր կրնար մոռնալ իրեն խոնարհ և առաքինի աղա-խինը, որ ինկեր էր իրեն առջևը ծանրացած այն ամեն ցաւերով՝ որոնք կրնան յուսահատու-թեան մէջ ձգել զմահկանացուն։ Ոչ միայն սրբեց անոր արցունքը՝ այլ նաև բացաւ աչուք-ները տեսնելու առաջուց յաւիտենական լուսոյ գաւառին մէջ իրեն համար սահմանուած տեղը։

Մինչդեռ ցորեկ և գիշեր կ'աղօթէր առ աստուած խորհուրդներուն առջևն ընկած, յաճախ տեսիլներ և յայտնութիւններ կը հասնէին իւր հոգին ուրախացընելու և զարմանելու համար։ Ուզնդրուտա, իւր պատուոյ օրիորդներէն ամենէն աւելի սիրելին, որ իրմէ երբեք չէր բաժնուած, և որ ուզեր էր իւր հիգութեանցը հաղորդ ըլլալ, ինչպէս հաղորդ էր անոր փառացը, եկեղեցական դատաւորին պատմեց այն ամեն տեսիլներն ու յայտնութիւնները զոր տեսեր ու լսեր էր իր Եղիսաբեթ տիկինէն։ Շատ անգամ կը տեսնէր որ իւր տիրուհին այնպիսի ուփշութեան մէջ ընկղմած էր՝ որ չէր գիտեր թէ ինչ է պատճառը։ Մանաւանդ օր մը, մեծ պահոց ատեն, երբ դքսուհին պատարագ կը տեսնէր եկեղեցւոյն մէջ ծնկան վրայ, յանկարծ գրբրեցաւ ինկաւ պատին առջևը և երկար ժամանակ կեցաւ այն վիճակին մէջ, իբրև երկրէս վեր բարձրացեալ, խոր զմայլմանց մէջ ընկղմած, աչքերը անշարժ և խորանին սեւեռած մինչև հաղորդութեան ժամանակ։ Երբ խելքը գլուխը եկաւ, երեսին վրայ կարծես թէ երկնային երանութեան նշանակ մը կար։ Ուզնդրուտա, որ աչքը տեսեր էր այս շարժմունքները,

յարմար ժամանակ գտաւ աղաչելու, որ իրեն յայտնէ այն տեսիլքը զոր անտարակոյս տեսեր էր։ Եղիսաբեթ կարգէ դուրս ուրախութեամբ անոր պատասխանեց. «Իրաւունք չունիմ մարդկանց պատմելու՝ ինչ որ աստուած արժանի սեպեց ինծի յայտնելու. սակայն չեմ ալ ուզեր քեզմէ ծածկել թէ ինչպէս միտքս յափշտակեցաւ անպատում ուրախութեամբ, երբ թոյլ տուաւ ինծի աստուած տեսնել հոգւոյս աչքովը այն հրաշալի խորհուրդը»։

Վերջի օրհնութենէն ետքը իւր փոքրիկ բնակարանը մտնելով՝ քիչ մը նախաճաշիկ ըրաւ, և կարգէ դուրս յոգնութիւն զգալով՝ գնաց պառուհանին առջև նստարանի մը վրայ պառկեցաւ և գլուխն ալ իւր սիրելի և հաւատարիմ Իզանդրուտային կուրծքին վրայ դրաւ. անիկայ կարծեց թէ դքսուհին հիւանդ էր և քնանալ կ'ուզեր. բայց այս կերպով պառկած, աչքերը բաց դէպ ի երկինք սևեռեր էր իւր բնակարանին պատուհաններէն։ Յանկարծ Իզանդրուտա տեսաւ որ դքսուհւոյն երեսները կը փայլփլին և երկնային պարզութիւն մը և կարգէ դուրս ուրախութիւն մը կ'արձրկէին. քաղցր և գորովալի ծիծաղ մը իւր շրթունքները կը շարժէին։ Սակայն քիչ ետքը աչքերը գոցուեցան, և դառնապէս կ'արտասուէր. յետոյ նորէն բացուեցան, և ուրախութիւնն ու ծիծաղն երևցան փոխանակ արցունքի. և այս վիճակին մէջ կեցաւ մինչև երեկոյեան ժամերգութիւնը, միշտ գլուխը դրած իւր սիրելւոյն կուրծքին վրայ և ընկղմած երբեմն յուրախութեան և երբեմն տրտմութեան մէջ. և կարծես թէ ուրախու-

թիւնը զարմանութիւնը կը գերազանցէր։ Ա.յս լուիկ զմայլմունքէն ետքը Եղնսաբեթ ազազա-կեց անմեղ և սրտաշարժ ձայնով. «Ա.յո՛, տէր իմ, եթէ կ'ուզես ինծի հետ ըլլալ, ես ալ կ'ու-զեմ քեզի հետ ըլլալ, և քեզմէ ոչ երբեք բաժ-նուիլ»։ Փիլ մը ետքը երբոր խելքը գլուխն ե-կաւ, Իզանդրուտա աղաչեց անոր, որ իրեն պատ-մէ թէ ինչ բանի համար երբեմն կը ծիծաղէր և երբեմն կ'արտասուէր, և ինչ կը նշանակէին այն խօսքերը զոր կ'ըսէր։ Եղնսաբեթ միշտ լի խոնարհութեամբ, Ջանաց չմնացրնել Իզանդրու-տայ ստուծմէ ընդունած այն մտնտաւոր հնարհ-քը։ Վերջապէս կարենալով դէմ կենալ անոր, զոր այնպէս սրտանց կը սիրէր, և իւր մտերիմ բարեկամուհին էր երկար ժամանակէ ի վեր, «Տեսայ, ըսաւ, երկինքը բացուած, և իմ տէրս ամենակարող և ամենագութ Յիսուսը՝ զիս ար-ժանի սեպեց դէպ ի ինծի խոնարհիլ և սփո-փել զիս այն վշտերէն, որ իմ վրաս հասեր էին. ինծի հետ կարգէ դուրս հեզութեամբ և քաղ-ցրութեամբ խօսեցաւ, և զիս իւր սիրելի քոյրը կոչեց. ցրցուց ինծի իւր սիրելի մայրը զՄարիամ, և նաև իւր հաւատարիմ առաքեալը զսուրբն Յովհաննէս, որ իրեն հետն էր։ Երբ տեսայ իմ Փրկիչս, հարկ եղաւ որ յայտնեմ ուրախու-թիւնս և ծիծաղս. երբեմն երեսը ինծմէ կը դարձընէր, իբրև թէ երկինք վերանալու հա-մար, այն ատեն ես կու լայի որ դեռ բաւական արդիւնք չունիմ, որ թոյլ տան ինծի քիչ մ՚աւելի երկար ժամանակ զինքը վայելելու։ Սակայն գթաց իմ վրաս, և վերջին անգամ մ՚այլ իւր երկնային նայուածքը վրաս դար-

ձգնելով՝ ըսաւ. Եղիսաբեթ, եթէ կ'ուզես ինծի հետ ըլլալ, ես ալ կ'ուզեմ քեզի հետ ըլլալ, և քեզմէ ոչ երբէք բաժնուիլ։ Ես ալ պատասխանեցի. Ա.յո, այո, տէր իմ, միշտ կ'ուզեմ քեզի հետ ըլլալ և քեզմէ ոչ երբէք բաժնուիլ, ոչ երջանկութեան և ոչ ալ դժբաղդութեան մէջ»։ Ա.յն ատենէն ի վեր այս աստուածային խօսքերը՝ իւր սրտին մէջ դրոշմեցան ճշմարիտ բոցի պէս, և երկնային պայծառութեամբ կը լուսաւորէին։ Ա.յս նուիրական դաշինքին մէջ, և այս մտերիմ և սիրելի միութեանս ընդ Յիսուսի, աստուած խաղաղութեան և հայր աղքատաց և թշուառաց, կրցաւ տեսնել Եղիսաբեթ իրրև վախճան իւր այրիութեան և իրրև հաստատուն և անսնեղ նշանաւոր մը իր անմահ փեսային հետ։

Սակայն այս առաջին անգամ չէր որ աստուածային փեսայն յայտնեց իրեն դիալիր կերպով իւր մտադիր և արթուն խնամքը։ Օր մը երբ աստիկ կը չարչարուէր իր հալածողներէն, իւր սիրտը՝ որ այնչափ համբերող էր, այնպէս վերջի աստիճանի տակն ու վրայ եղաւ՝ որ աղօթքէն դուրս ուրիշ տեղ մը չգտաւ ապաւինութեան. դիսուհին եռանդեամբ սկսաւ աղօթել առ աստուած յորդահոս արցունք թափելով անոնց համար որ զինքը կը նախատէին և կը չարչարէին. աղաչելով զաստուած որ իւրաքանչիւրոց մէջմէկ բարութիւն շնորհէ փոխանակ անոնցմէ ընդունած նախատանացը։ Երբ յոգնեցաւ աղօթք ընելէն, ձայն մը լսեց որ իրեն այս խօսքերը կ'ըսէր. «Ա.յս օրուան բրած խնդրուածքդ ինծի շատ հաճելի եղաւ, և մը-

տան մինչև սրտիս խորը. անոր համար կը նե-
բեմ բոլոր քու մեղքերդ՝ որ ըրած ես բոլան-
դակ կենացդ մէջ». և սոյն ձայնը բոլոր իւր
մեղացը թափը ցուցընելով՝ ըսաւ. «Կը նեբեմ
քեզի այս և այն մեղքը»։ Եղիսաբեթ զարմա-
ցած աղաղակեց. «Ո՞վ ես որ ինծի հետ այսպէս
կը խօսիս»։ Որուն նոյն ձայնը պատասխանեց. «Ես
անիկայ եմ որուն առջևը Մարիամ Մագդաղե-
նացին ծնկան վրայ ինկաւ Սիմոն բորոտին տու-
նը»։ Քիչ մը ետքը երբ կը գանգատեր որ իր քա-
վը չուներ իւր սովորական խոստովանահայրը,
աստուած իրեն խոստովանահայր դրաւ այն սուրբ
բը՝ որ իւր մանկութեան ժամանակէն ի վերնա
խամեծար սեպեր և միշտ անչափ եռանդեամբ
սիրեր էր, զսուրբն Յովհաննէս աւետարանիչ։
Երևցաւ իրեն սիրոյ առաքեալը, և Եղիսա-
բեթ խոստովանեցաւ անոր աւելի տեղն ի տե-
ղը իւր մեղքերը այնպիսի մեծ զղջումով՝ որ
երբեք չէր իմացեր քահանայի մը խոստովանած
ժամանակը։ Առաքեալը Եղիսաբեթին ապաշ-
խարանք մը դրաւ, և այնչափ ազդու և փափուկ
խրատներ տուաւ, որ իրեն բնական ցաւերը մեղ-
մացան, ինչպէս նաև հոգւոյն վերքերն ալ։

Եղիսաբեթ շատ անգամ եռանդուն մտա-
ծումներու մէջ կ'ինկնար, և մինչև Քրիստո-
սի ցաւոցից չարչարանաց դոյզն պարագայիցը
մէջ կը թափանցեր։ Ինչպէս անգամ մը, եր-
բոր եռանդեամբ աղօթք կը մատուցաներ, տե-
սաւ մտքովն իւր առջևը սպիտակ և լուսափայլ
ձեռք մը երևցած, բայց կարգէ դուրս նի-
հար, մատները տարածած և ափուն մէջ խոր
սպի մը. այս վերջին նշանով Հանչցաւ որ Քրիս-

տոսի ձեռքն էր այն, և զարմացաւ այնչափ նի-
հարանալուն վրայ։ Քրիստոս ալ անմիջապէս
պատասխանեց. «Վասն զի բոլոր գիշերը յոյնե-
ցայ հսկելէն և աղօթելէն, ցորեկն ալ ճամ-
բորդութիւն ընելէն քաղաքաց և գիւղից մէջ,
աստուծոյ արքայութիւնը քարոզելու»։ Տեսաւ
դարձեալ Եղիսաբեթ Քրիստոսի կողէն բխած
թանձր և պղտոր արիւնը, և զարմացաւ անոր
ջրոտ և մաքուր չըլլալուն. նոյն ձայնը իրեն պա-
տասխանեց, որ այս բանս աստուածային անդա-
մից խորտակուելուն նշանն էր, և այն դժնդակ
ցաւերուն՝ որոնք որդին աստուծոյ կրեց երբ
գամեցին իւր մարմինը խաչափայտին վրայ։

Բոլոր այս հրաշալի տեսիլները՝ կը բորբոքէին
Եղիսաբեթին զգայուն սրտին մէջ կարգէ դուրս
ցաւ մը իւր մեղացը համար, զորոնք քաւելու
համար այնչափ չարչարանք քաշեր էր Քրիս-
տոս։ Օր մը երբոր Եղիսաբեթ այս բանիս հա-
մար կու լար, յանկարծ իւր երկնային մխիթա-
բիչն ինքնին Քրիստոս երևցաւ իրեն և այս խօս-
քերս ըսաւ. «Ինքզինքդ մի չարչարեր, սիրելի
օրիորդ, վասն զի բոլոր մեղքերդ քաւեալ են.
ես փոխանակ քեզի, ես պատուհաս կրեցի բո-
լոր անդամներուս՝ որոնցմով կրցար քու արա-
միչդ անարգել ու վիրաւորել։ Դիտցիր որ ազատ
ես դու ամեն մեղքէ»։ «Եթէ այնչափ սուրբ եմ
և մաքուր, պատասխանեց այն ատեն Եղիսա-
բեթ, ուրեմն ինչ բանի համար չեմ դադրիր
զքեզ նախատելէն»։ Աբջի ձայնը նորէն իրեն
պատասխանեց. «Զքեզ այն աստիճանի սուրբ և
մաքուր չեմ ըրած որ ալ չկարենաս մեղանչել
ինծի դէմ. բայց պարգևեցի քեզի հնարք այն-

չափ զիս սիրելու՝ որ աւելի յանձն առնուս մեռ-
նիլ՝ քան թէ մեղանչել»։

Սակայն Եղիսաբեթի խոնարհ և փափուկ
սիրտը չէ թէ կը ձխար իրեն պարգևած այս ա-
ռանձին շնորհքներուս համար, այլ կարծես թէ
ընդ հակառակն առիթ կ'առնուր իրեն զանոնք՝
ինքզինքն ալ աւելի արհամարհելու, իւր զօրու-
թեանը վրայ չվստահանալու, և բանի մը տեղ
չդնելու իր անձը։ Երբ ոտքի տակ կ'առնուր ա-
մէն արտաքին փոքռութիւններն և անթիւ հա-
լածանքները, խաղաղ ու հանդարտ կը գտնէր
սիրտը, և ան ատեն ուրախութենէն կ' սկսէր
արտասուել։ Բայց աստուած՝ որուն բոլորովին
յանձներ էր իւր հոգին և սիրտը, և որ կը հը-
կէր միշտ այս գանձին վրայ, և կարծես թէ կ'ու-
զէր ճաշակել տալ իրեն այս ամէն մխիթարու-
թիւններս, որ միայն իւր սիրելի որդւոց համար
են, յանձնեց աստուածածնայ որ գայ ու բը-
ժշկէ իր հարսը՝ որ բոլորովին հիւանդ և յու-
սահատութեան մէջ կը տագնապէր։ Երկնից
թագուհին այն ժամանակէն ի վեր միջնորդ ե-
ղաւ ամենայն շնորհաց և լուսոյ, որ իւր աս-
տուածային որդին ուզեց տարածել այն հար-
սին վրայ, որուն նուիրուած էր օրօրոցէն։ Կոյսն
Մարիամ Եղիսաբեթին հետ ամենաձիշդ նոյն
պէս վարուեցաւ՝ ինչպէս որ վարուեր էր սրբ-
բուհի Պրիճիտայի և ուրիշ հռչակաւոր սրբու-
հեաց հետ։ Շատ անգամ՝ սուրբ Կոյսն երևցաւ
առ Եղիսաբեթ՝ որպէս զի հրահանգէ, լուսա-
ւորէ և զօրացնէ զնա աստուծոյ ճամբուն մէջ։
Անիկայ՝ զոր եկեղեցին կ'անուանէ միշտ Մայր,
Տիրամայր, Առաջնորդ և Տիրուհի ամենայն

մարդկան, անարժան չէր սեպեր իրեն՝ առաջնորդելու իւր որդւոյն այն նորահաս և խոնարհ բարեկամուհւոյն ամէն մէկ քայլերուն։ Այս տեսիլներուս մանրամասն աւանդութիւնը՝ մանաւոր ժողովուած է Եղիսաբեթի պատմութեան մէջէն, և պահուած է սրբոյն Փրանսիսկոսի կարգին ժամանակագրութեանը մէջ։ Այս սքանչելի յիշատակարաններէն կը տեսնենք զարմանքով թէ ինչպիսի քաղցր ընտանութեամբ և մայրական խնամքով հաղորդ կ'ըլլար Մարիամ Եղիսաբեթի ամենայն շարժմանց և ամենայն տագնապներու որ տակն ու վրայ կ'ընէին իրեն խղճահար և փափուկ սիրտը։ Ուստի անվախ սկսինք մէջ բերել հանուռատ կերպով այն սրտաշարժ պատմութիւններն որոնցմով անշուշտ կը գրգռուին ամէն ճշմարիտ ուղղափառ սրտերը։

Անհամեմատ ու ցանկալի բան մըն էր Եղիսաբեթի այս երկնային հետ ունեցած վերաբերութիւնը։ Օր մը երբ վշտացեալ այրին ետանդեամբ և անձկանօք կը խնդրեր իւր սիրելին և չէր կրնար գտնել, յանկարծ միտքը գնաց Յիսուսի յեղիպտոս փախչելուն պատճառին վրայ մտածելու, և կարգէ դուրս փափաք մը ըզգաց որ սուրբ կրծնաւորէ մը այս նիւթիս վրայ տեղեկութիւն հարցնէ։ Մէկէն ի մէկ սուրբ Կոյսն իրեն երևցաւ ու այս խօսքերն ըսաւ. «Եթէ կ'ուզես իմ աշակերտս ըլլալ, ես ալ քու ուսուցիչդ կ'ըլլամ։ Եթէ ուզենաս աղախին ըլլալ, ես քու տիրուհիդ կ'ըլլամ։» Եղիսաբեթ՝ որ ինքզինքը երբէք արժանաւոր չէր համարեր այսպիսի բարեաց և պատիւներու, պատասխան տը-

ւաս սուրբ Կուսին. «Ո՞վ ես դու որ զիս աշա-
կերտ և աղախին կ'ուզես ընդունիլ»։ Մարիամ
ալ պատասխանեց. «Ցիսուսին մայրն եմ, անոր
համար քեզի կ'ըսեմ, որ եթէ տեղեկութիւն
կ'ուզես մէկէ մը այս նիւթիս վրայօք՝ գիտցիր որ
ինծմէ լաւ ուսուցիչ մը չես կրնար գտնել»։ Ա.յս
խօսքերուս Եղիսաբեթի՝ ձեռքերն ամիսփելով՝
երկնցուց առ մայրն գթութեան, որ իւր ձե-
ռացը մէջ գգուելով՝ ըսաւ. «Եթէ կ'ուզես իմ
դուստրս ըլլաչ, ես ալ քու մայրդ կ'ըլլամ։ և երբ
լաւ հրահանգուած ու հնազանդ ըլլաս՝ իբրև
բարի աշակերտ, հաւատարիմ աղախին և անձ-
նանուէր դուստր, այն ատեն զքեզ իմ որդւոյս
կը յանձնեմ։ Նայէ՛ որ ետ կենաս ամենայն վի-
ճաբանութիւններէ, և ամենայն դոցես ամենայն
նախատանաց, որոնցմով զքեզ կը նախատեն.
յիշէ՛ որ իմ որդիս յԵգիպտոս փախաւ, որպէս
զի Հերովդէսին թշնամութենէն և չարութե-
նէն ազատի»։

Սակայն այսպիսի կարգէ դուրս սէր մը, բա-
ւական չէրաւ կատարեալ կերպով հանդարտե-
ցընել զնդիսաբեթ. ինքն իրեն վրայ ունեցած
վստահութիւնը ալ աւելի շատցաւ. բայց գթած
մայրը՝ որ զինքը այնպիսի մեծ սիրով իրեն որ-
դեգրեր էր, մէյմին ալ զինքը պիտի չթողուր։
Սրբուհւոյն Ակադայի տօնախմբութեան օրը
(Ն փետրուար) երբ Եղիսաբեթ դառնապէս կ'ար-
տասուէր իւր անհնազանդութեանը վրայ (ո-
րովհետև իր աստուածային ուսուցչին խրատնե-
րը պէտք եղածին պէս մտիկ չէր ըրած), այն
քաղցր մխիթարիչը յանկարծ քովը գտնուեցաւ
ու ըսաւ. «Ո՜հ, դուստր իմ, ինչու համար այս-

պիսի բուռն վշտաք կը յարյարուիս. զքեզ անոր համար ինծի որդեգիր չըրի, որ ալ աւելի շատ նան քու յարյարանքներդ. իմ պատուիրանները զգուշութեամբ չպահելուդ համար այսչափ մի յուսահատիր. ես արդէն առաջուց գիտէի որ պիտի պակասիս. անգամ մը զրուցէ հրեշտակային ողջոյնատուութիւնը և կատարելապէս քու մեղքերդ կը քաւուին»։ Քիչ մը ժամանակէն ետքը, սրբուհւոյն Ակոլաստիկայի տօնախմբութեան օրը (10 փետրուար), երբոր Եղնաբեթ սաստիկ կերպով և հառաչանքով կ'արտասուէր, իւր անխոնջ սիրտիչը իրեն եկաւ, հետը ունենալով նաև զուրբն Յովհաննէս առաքեալը, որ սրբուհւոյն Եղնաբեթի մանկութեանը մնոնաւոր բարեկամ և պաշտպանն էր. «Ձիս ընտրեցիր, ըսաւ Մարիամ Եղնաբեթին, ուսուցիչ և մայր, և ինքզինքդ ինծի յանձնեցիր. բայց կ'ուզեմ որ քու կողմանդ ըրած ընտրութիւնդ հրապարակաւ հաստատուի. և ահա անոր համար ինծի հետ բերի զուրբն Յովհաննէս իմ սիրական աշակերտս»։ Եղնաբեթ նորէն ձեռքերն ամիսոփելով դրաւ երկնից թագուհւոյն ձեռացը մէջ, ինչպէս ծառայ մը իւր տիրոջը կ'ընէ, և անոր այս խօսքերս ըսաւ. «Ինչպէս որ կ'ուզես անանկ ըրէ, տիկին և տիրուհի. վասն զի քու աղախինդ եմ ես»։ Յետոյ այս ըրած ուխտը երդմամբ ալ հաստատեց. և զոր առաջ անձամբ միայն ըրած էր, հիմա սուրբն Յովհաննէս նոյն դաշնադրութիւնը գրի վրայ առաւ։

Գիշեր մը երբ Եղնաբեթ հրեշտակային ողջոյնը կ'ըսէր, աստուածածին որ մոիկ կ'ընէր

անուշութեամբ այս օրհնած աղօթքին՝ երևցաւ իրեն, և ուրիշ խօսքերէն զատ՝ հետևեալ խօսքերս ալ իրեն ըսաւ. «Կ'ուզեմ սորվեցընել քեզի այն ամէն աղօթքները զոր ես կ'ըսէի տաճարին մէջ եղած ժամանակս. ամէն բանէ աւելի աստուծմէ կը խնդրէի որ զինքը սիրեմ, և թշնամիքս ատեմ: վասն զի այս առաքինութեամբս է որ տեսակ տեսակ շնորհքներ կ'ինջնան մարդուս հոգւոյն վրայ. սակայն ինչնալէն վերջը հոն չեն կենար, այլ ջուրի պէս կը վազեն կ'երթան, եթէ հոգին չատե իւր թշնամիքը, որ են մեղք և կիրք: Ուստի ով որ այս երկնաւոր շնորհքը ընդուներ է, պէտք է որ գիտնայ այս սիրոյս գործադրութիւնը, և ուսնենայ ատելութիւն իրեն թշնամեայ դէմ: Կ'ուզեմ որ ինչ որ ես կ'ընեմ՝ դուն ալ զնոյնը ընես, կը շարունակեր սուրբ Կոյսն Եղիսաբեթին. Կ'երթամ ամէն կէս գիշեր ու կ'երթայի խորանները առջև երկրպագութիւն ընելու, և աստուծմէ կը խնդրէի որ իւր օրհնայ ամէն մէկ պատուիրանները զգուշութեամբ կատարեմ: և պարգևէ ինծի այն շնորհքը, որ պէտք էր իրեն հանձն ըլլալու համար. մանաւանդ կը խնդրէի՝ տեսնել այն ժամանակը յորում պիտի երևէր այն սուրբ Կոյսը, ուսկից աստուծոյ որդին պիտի ծնանէր. որպէս զի կարենամ ինքզինքս անոր նուիրել, զանիկայ պատուելու և իրեն ծառայելու համար»: Եղիսաբեթ ընդհատեց անոր այս խօսքը ու ըսաւ. «Ո՛վ քաղցր տիրուհի, միթէ արդէն առաքինութեամբ և շնորհքով լցուած չէիր»: Սուրբ Կոյսն իրեն պատասխանեց. «Այսահով եղիր որ ինքզինքս այնչափ մեծաւոր

և խեղճ կը սեպէի՝ ինչպէս որ դու ինքզինքդ կը համարիս. անոր համար կը խնդրէի աստուծմէ որ իւր շնորհքը ինծի պարգևէ »։

«Աստուած, վրայ բերաւ սուրբ Կոյսը, ինծի նոյնը կ'ընէր ինչ որ երաժիշտը կ'ընէ իւր քնարին լարերը կարգի դնելով, որպէս զի ակնջի հաճոյական հնչէն և ներդաշնակ ըլլան։ Այսպէս աստուած անուշցուցեր էր իւր բարի յօժարութեամբը սիրտս, հոգիս, միտքս և ամէն մէկ զգայարանքներս։ Այսպէս կարգաւորուած իւր խնամատութեամբը շատ անգամ հրեշտակներէն մինչև աստուծոյ գիրկը կը տարուէի, և հոն այնչափ ուրախութիւն, քաղցրութիւն և մխիթարութիւն կը գտնէի՝ որ և ոչ մարդէս կ'անցընէի աշխարհիս վրայ տարած ըլլալս. այնչափ ընտանի էի աստուծոյ և հրեշտակաց հետ՝ որ կը փափաքէի միշտ և յաւիտեան այս փառաւոր արքունեաց մէջ կենալ։ յետոյ երբ հաճոյ կ'ըլլար հօր աստուծոյ՝ հրեշտակները զիս դարձեալ կը բերէին նոյն տեղը՝ ուր առաջ աղօթքի կեցեր էի։ Երբ երկրիս վրայ կը գտնուէի, և կը մտածէի թէ քիչ մը առաջ ուր գտնացեր էի, այս միտքս այնպէս զիս աստուածային սիրով մը կը բորբոքէր՝ որ երկիրը կը պագնէի, քարերը, ծառերը, և ամէն արարածները՝ պարզ զիրենք ստեղծողին վրայ ունեցած սիրովս, և կը փափաքէի աղախին ըլլալ ամենայն սուրբ կանանց՝ որ տաճարը կը բնակէին. կը բաղձայի հրպատակ ըլլալ ամենայն արարածոց՝ գերագոյն աստուծոյ սիրոյն համար. և այս ինծի սովորական բան մը դարձեր էր. կ'ուզեմ որ դուն ալ նոյնը ընես. սակայն դուն ինքզինքդ անհանգիստ

կ'ընես ըսելով. ինչո՞ւ այսպիսի հնորհքներ կը տուին ինծի, երբ ես անարժան եմ զանոնք ընդունելու. ու այսպէս ըսելով յուսահատութեան մէջ կը ձգես ինքզինքդ, և կը սկսես թերահաւատիլ նաև աստուածային բարերարութեանցը վրայ։ Զգուշացիր այսպիսի խօսակցութիւններէ. վասն զի աստուծոյ շատ անհաճոյ են։ Վերջապէս, բսաւ աստուածային ուսուցիչը խօսքը լմննցնելով, քեզի եկայ մանուսոր հնորհքով և այս գիշերուան համար քեզի տրուեցայ. հարցուր ամենայն վստահութեամբ, և ամէն բանիդ պիտի պատասխանեմ»։ Եղիսաբեթ նախ չհամարձակեցաւ սուրբ Կուսին հարցմունք մ'ընելու. իսկ Մարիամ կրկին անգամ վրայ տուաւ Եղիսաբեթին. այն ալ համարձակելով այս հարցմունքն ըրաւ. «Ուրեմն ըսէ ինծի տիրուհի, ինչ բանի համար այնչափ սաստիկ փափաք ունիր այն կոյսը տեսնելու՝ որ պիտի ծնանիր զորդին աստուծոյ»։ Այն ատեն, սուրբ Կոյսը պատմեց իրեն թէ ինչպէս փափաքելով միթարուիլ հնորհաց կերպ կերպ ներգործութիւններուն՝ մարգարէից գրքերը կարդացեր ու այս փափաքն սրտին մէջ ծագեր էր. և ինչպէս որոշեր էր մարքին մէջ իր կուսութիւնը աստուծոյ նուիրելու, որպէս զի աւելի արժանի ըլլայ այն նախասահմանեալ կուսին ծառայելու. և թէ ինչպէս աստուած յայտներ էր իրեն որ այս կոյսը ինքն է և ոչ ուրիշ մէկ մը։

Գիշ մը ետքը երբոր Եղիսաբեթ եռանդեամբ աղօթք կ'ընէր, իւր գորովալից մայրն իրեն երևցաւ միանգամ և այս խօսքերն ըսաւ. «Ո՞նչ, կը կարծես որ ես այս ամենայն հնորհաց առանց

աշխատանքն արժանի եղայ, չէ՞, գուսան իմ, այնպէս չէ։ Յիրաւի կ'ըսեմ՝ որ առանց աշխատանաց, առանց անդադար աղօթից, և առանց աղաչանաց, հնարհք մ՚ալ չընդունեցայ. այլ սաստիկ փափաքով, խորունկ ջերմեռանդութեամբ, և շատ արցունքով ու փորձութիւններով։ Ա-պահով եղիր որ հնարհքն ուրիշ կերպով չիջնար հոգւոյն վրայ, բայց միայն աղօթքով և մարմնոյ մահացուցմամբը։ Երբոր աստուծոյ կը նուիրենք ինչ որ անձամբ կրնանք ընել, որչափ ալ քիչ ըլլայ այն՝ ինքն աստուած կը խոնարհի մեր հոգւոյն մէջ գալ, հետը բերելով իւր գերագոյն պարգևները, որ կերպով մը հոգին կը տկարացընէն, և մարքէն կը հանէն ինչ որ երբեմն աստուծոյ հաճոյական բան մը ըրեր է. որով ա-ժելի անարգ և աւելի արհամարհ կ'ըլլայ իւր աչքին առջև այն բրածը։ Հապա այն ատեն հոգին ինչ պիտի ընէ արդեօք. ուրիշ բան չէ՝ բայց եթէ ջերմեռանդութեամբ աստուծոյ հնարհակալ ըլլայ՝ անոր պարգևած հնարհացը համար. երբ աստուած կը տեսնէ որ հոգին կը խոնարհի և իրեն հնարհակալ կ'ըլլայ, այնչափ գերագոյն խոստմունքներ կ'ընէ անոր, որ կերպով մը հոգւոյն ամէն ծածուկ փափաքներին աւելի կը բարձրանան։ Ա. յս ձամբան բռնեց աստուած նաև ինծի հետ՝ երբ զրկեց իւր Գաբրիել հրեշտակապետը. ես այն ատենը ինչ ըրի. ծնկան վրայ եկայ, ձեռքերս ամփոփեցի ու իրեն ըսի. «Ահաւասիկ կամ աղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում»։ Աստուած ալ ան ատեն տըւաւ ինծի իւր որդին և Հոգւոյն սրբոյ Հօթը պարգևները. գիտե՞ս ինչ բանի համար. վասն

զի իրեն հաւատացի և իւր առջևը խոնարհեցայ։ Այս բաները կ'ըսեմ քեզի, դուստր իմ, որովհետև կ'ուզեմ հաւատոյ և յուսոյ դէմ ունեցած յանցանքներդ մաքրել զքեզ։ Երբոր աստուած քեզի բան մը խոստանայ՝ դուն ալ ինծի պէս ըսէ. Ահաւասիկ եմ աղախինդ, և այն. և հաստատուն հաւատքով այս խոստմունքին սպասէ՝ մինչև որ կատարուի. իսկ եթէ չկատարուիր, մնածէ թէ արդեօք աստուծոյ դէմ յանցանք մը ըրեր ես, որով նաև անարժան գտնուեր ես քեզի խոստացեալ պարգևացը»։

Ծննդեան խթման իրիկունը, Եղիսաբեթ աստուծոյ կ'աղաչէր որ պարգևէ իրեն հնարէք զինքը բոլորով սրտիս սիրելու։ Սուրբ Կոյսը նոր ին երևեցաւ Եղիսաբեթի և այս հարցմունքս ըրաւ. «Ո՞վ զաստուած կը սիրէ. դու արդեօք կը սիրե՞ս զնա»։ Խոնարհ Եղիսաբեթն ոչ համարձակեցաւ այո՛ ըսելու, և ոչ ալ կրցաւ ուրանալու. և երբ այսպէս լուռ կեցեր էր, Մարիամ առաջ տարաւ խօսքը. «Կ'ուզե՞ս որ ըսեմ քեզի թէ ո՞վ սիրեց զնա. երանելին Բարթողիմէոս, երանելին Յովհաննէս և երանելին Լորենցիոս սիրեցին զանիկայ. կ'ուզե՞ս դուն ալ որ անոնց պէս մեռնիս նահատակութեամբ և ողջ ողջ այրուիս»։ Եղիսաբեթ դեռ լուռ կը կենար, իսկ Մարիամ նորին վրայ բերաւ. «Ցիրաւի կ'ըսեմ քեզի, եթէ յանձն կ'առնուս մերկանալ այն ամէն բաներն որ քեզի սիրական է, պատուական և հաճոյ, և նոյն իսկ քու յատուկ կամքդդ, ես քեզի համար ալ կ'ընդունիմ նոյն արդիւնքը՝ ինչ որ ունեցաւ Բարթողիմէոս երբոր իւր մարթը հանեցին վրայէն։ Եթէ դու համբերու-

թեամբ դիմացինիդ նախատինքները կը կրես, գիտցած բլլաս որ նոյն արդիւնքը պիտի ունենաս դուն ալ ինչ որ ունեցաւ Լորենցիոս երբոր այրեցին զինքը. եթէ չես բարկանար ու նեղանար զքեզ արհամարհողաց և նախատողաց՝ նոյն արդիւնքը պիտի ունենաս՝ ինչ որ Յովհաննէս ունեցաւ երբ զինքը թունաւորեցին. ես ալ հոն ներկայ պիտի գտնուիմ քեզի օգնելու և զօրացընելու»։ Օր մը երբ Եղնսարեթ սուրբ Կուսին տաճարին մէջ բրած աղօթիցը վերայ կը մտածէր ու ինքն իւր անձին կը հարցընէր թէ ինչ բանի համար այս անարատ հոգին ընտրէք կը խնդրէր յաստուծոյ, որ լի էր ընտրհօր, Մարիամ միւսանգամ երևեցաւ, և իրեն պատասխանեց կարգէ դուրս քաղցրութեամբ և ընտանութեամբ. «Աղօթք ըրի, ըսաւ, այն մարդուն պէս՝ որ կ'ուզէ գեղեցիկ աղբիւր մը կառուցանել։ Կ'երթայ լերան ստորոտը, և խնամքով կը քննէ այն տեղերն ուսկից առաջ կու գան ջրոց ակունքը, կը փորէ մինչև որ զանոնք գտնէ. և գտնելուն պէս դէպ ի այն կողմը կը դարձընէ զանոնք՝ ուր կ'ուզէ կառուցանել իւր աղբիւրը. կը զարդարէ ու կը մաքրէ այն տեղը, որպէս զի ջուրը մաքուր և պայծառ մնայ. պատմ՝ այլ կը քաշէ իւր աղբիւրին չորս կողմը և սիւն մը կը մնէ, և բոլորտիքը առուներ բանալ կու տայ, ուսկից ջուրը կարենայ առատութեամբ վազել ամենուն մխիթարութեանը համար։ Ես ալ ահա նոյնը ըրի. գնացի լերան ստորոտը, և երբոր սկսայ օրէնքներն ընթերցուլ՝ գտայ ակունքն, երբ ընթերցումն և աղօթքն խնդի յայտնեցին՝ թէ աղբիւր ամենայն բարեաց է սիրել զաս-

տուած բոլորով սրտիս։ Տեղը պատրաստեցի՝ երբոր սիրելու փափաքն ունեցայ, ինչ որ ինքը կը սիրէր. ուզեցի որ ջուրը պայծառ և մաքուր ըլլայ՝ երբ որոշեցի ատել մեղքը և փախչիլ անկէ։ Ներքակայքը պատով ամրացուցի, երբոր անբաժանելի կերպով խոնարհութիւնը, համբերութիւնն ու հեզութիւնը միացուցի մէկմէկու հետ սիրոյ կրակով մը, և զանոնք այս կերպով մինչև ի մահ պահեցի։ Սիւնը բարձրացուցի ու բացի ջոց ձամբաները երբ ընդհանուր աղաղակարան մ՝ եղայ. որովհետև միշտ պատրաստ եմ հեզուլ երկնային շնորհք առատութեամբ անոնց ամենուն վրայ որ ինծի կը դիմեն։ Սուրը կայսր խօսքը վերջացնելով ըսաւ առ Եղիսաբեթ. ահա յայտնեցի քեզի, սիրելի դուստր իմ, այն ամէն աղօթքները զոր կ՝ընէի. որպէս զի սորվիս իմ օրինակովս վստահութեամբ և խոնարհութեամբ խնդրելու յաստուծոյ ինչ որ կ՝ուզես։ Գիտես թէ ինչ բանի համար աւաքինութիւնները մարդկանց հաւասարապէս բաշխուած չէն, վասն զի ամենք ոչ խոնարհութեամբ անոր խնդրելու կերպը գիտեն, և ոչ ալ զգուշութեամբ պահելու ուրիշներուն պէս. անոր համար կ՝ուզէ աստուած որ առաքինութիւն չունեցողը՝ ունեցողէն առնէ։ Ես ալ կ՝ուզեմ որ դու եռանդեամբ և ջերմեռանդութեամբ աղօթես թէ՛ քու և թէ ուրիշներուն փրկութեանը համար »։

Այս անուշ և սրտաշարժ խօսակցութիւնները քանի մ՝ օր անցնելէն ետքը, Եղիսաբեթ սքանչելի գերեզման մը տեսաւ այլ և այլ ծաղիկներով զարդարուած, ուսկից իւր

աստուածային մխիթարիչն յերկինս կը բարձրանար անթիւ հրեշտակներով շրջապատեալ, որ իւր որդւոյն գիրկը կը տանէին զնա. հրեշտակ մ'Եկաւ իրեն բացատրեց վերափոխման տեսիլքը որ իրեն համար երկնային պարգև մը պիտի ըլլար, զինքը զօրացընելու իւր երկար թշուառութեանը մէջ. և միանգամայն փառաց քաղցր գրաւական մը զոր աստուած իրեն համար պահեր էր, ինչպէս Մարիամու, եթէ հնազանդ և հաւատարիմ մնալու ըլլար մինչև ետքը իրեն կամացը։ Քրիստոսի խոնարհ աղախինը աս ամէն հրաշալիքը պատմելով, կ'ըսէր որ տեսեր և լսեր էր զանոնք այնպէս պայծառ և ճշմարիտ կերպով որ մինչև յանձն կ'առնուր աւելի մեռնիլ՝ քան թէ անոնց ստուգութիւնն ուրանալ։ Ահա այս կերպով աստուած կը հատուցանէր իւր հաւատարիմ աղախնոյն վարձքը. Քրիստոս եղաւ այն մենակեաց և խեղճ այրւոյն փեսայ, այն նոթապակ հարսին որ բոլորովին խոռոչեալ և յուսահատեալ էր. և որուն տիրուհի և մայր պարգևեց զանիկայ՝ որ է միանգամայն մայր ցաւոց և մխիթարութեանց, այն հոգւոյն՝ որ կոչուսեր էր երկրաւոր ամէն հարստութիւնները, որպէս զի գանէ երկնային անդին գանձերը։

ԺԹ

Ինչպէս բարերարն Յիսուս մխիթարեց զարբուհին Եղիսաբեթի իւր հիգութեանը և ամենէն երեսկ ձգուած ատենը. և ինչպէս ամենասիրելի կոյսն Մարիամ եկաւ զօրացնելու զնոսիսաբեթ.

Ա.յնչափ նեղութեանց մէջ Եղիսաբեթ և ոչ մէկ վայրկեան մը մոռցաւ որ աստուած է իրեն այս ամենայն չարչարանքը զրկողը, և ոչ երբէք գանգատեցաւ. այլ մանաւանդ ընդ հակառակին բոլորովին ինքզինքը աղօթքի և բարեպաշտ կրօնութեանց տուած, որոնք եկեղեցին կ'ընծայէ մայրական առատաձեռնութեամբ վշտացեալ հոգւոց, անդադար զաստուած կը փնտրուէր, զոր շուտով ալ գտաւ։ Ինքը Քրիստոս եկաւ անոր Հայրական գթութեամբ, որպէս զի անանց մխիթարութեանց հետ փոխանակէ այն վիշտերը զորոնք այնչափ ուրախութեամբ ընդուներ էր։ Անիկայ որ խոստացաւ իր ընտրեալը թէ

ուստի մէկէն ի մէկ հաւատարիմ պատգամաւորներ ղրկեց երկու կառքով, որպէս զի եղբօր դուստրն և անոր տղաքը գտնէն ու վանք բերէն։ Եղիսաբեթ սատիկ ուրախացաւ այս բանիս համար, վասն զի նորէն պիտի միանար իր տղոցը հետ, զորոնք այնչափ եռանդեամբ կը սիրէր. ուստի հօրաքրոջը հրաւէրքն ընդունեցաւ, որուն անշուշտ հալածիչքը չկրցան հակառակիլ և աբբայարանը երթալու համար ճամբայ ելաւ, ընդարձակ լեռներէն և անտառներէն անցնելով, որոնք կը բաժնէին Դուրինկիան ի Փրանգոնիոյ. վերջապէս վանքը հասաւ որ Մայն գետին վրան էր։ Աբբասուհին մայրական գութեամբ և առատ արցունքով ընդունեցաւ զՆղիսաբեթ, և անոր աստիճանին յարմար բնակարան մը ցրցուց, և ջանաց մոռցնել տալ անոր հոգւոյ և մարմնոյ այն դժնդակ ցաւերը՝ զոր կրեր էր։ Սակայն Եղիսաբեթ ինքզինքը վանական կենաց սովորութեանցը վարժեցընելէն զատ ուրիշ աւելի քաղցր մխիթարութիւն մը չէր գտներ. անոր համար շատ անգամ իր սրտին ցաւը կը յայտներ որ իւր տղոցը խնամքը կ'արգելուին զինքը վանական կանոնաց հնազանդելէն իբրև պարզ հաւատաւոր մը։ Սակայն Լիժպէր, Պանկերվի իշխանաղուն եպիսկոպոսը՝ Մաթիլտէ աբբասուհւոյն եղբայրը, խնամալով Եղիսաբեթին թշուառութիւններն ու վանք հանիլը, կարծեց թէ անոր վանքին մէջ երկար ատեն կենալը լաւ չէր յարմարեր ոչ իւր վիճակին, և ոչ ալ վանական սովորութեանցը. ուստի հրաւիրեց զնա որ իւր երկիրը գայ։ Եղիսաբեթ հնազանդեցաւ եպիսկոպոսին, թերևս

քիչ մը ժժգոհութեամբ. իւր հօրաքրոջ խնամոցը յանձնելով իր Սոփիա երկրորդ դուստրը, որ հազիւ թէ երկու տարուան էր, և որ յետոյ նոյն վանքին մէջ հաւատաւոր եղաւ, որ մանկութեանը օրօրոցն եղած էր։ Եպիսկոպոսն այնպիսի ընդունելութիւն մը ըրաւ իւր եղբօր աղջկանը՝ որով յայտնի տեսաւ Եղիսաբեթ անոր իր վրայ ունեցած սիրոյն մեծութիւնը։ Սառաջարկեց զկէս զինքը ի Հունգարիա իւր թագաւոր հօրը. բայց մերժեց, անտարակոյս իւր Կերդրուտա մօրը մահուանը տխուր յիշատակին պատճառաւ։ Այն ատեն Եղիսաբեթին իբրև բնակարան Պոդենստենի բերդը տուաւ, իւր աստիճանին յարմար զարդարուած տնով մը. որ ուզածին պէս պիտի կառավարէր. հոն գնաց Եղիսաբեթ իւր տղոցմով ու աղախիններովը, որ էին Իզանդրուտա և Կիւտա, որ Եղիսաբեթին ամէն վշտացը ազնուական վերհանձնութեամբ մասնակից եղեր էին. այն հանդարտ բնակութեան մէջ՝ սկսան ցորեկ և գիշեր իրենց բարեպաշտական կրթութիւնները շարունակեր Սակայն տեսնելով Եպիսկոպոսը որ դքսուհին դեռ խիստ երիտասարդ էր, (քսան տարուան), և միանգամայն խիստ գեղեցիկ, Պօղոս առաքելոյն պատուէրը յիշելով, մտածեց կրկին ամուսնացընել զԵղիսաբեթ։ Մէկ քանի հեղինակաց խօսքին համեմատ՝ յոյս ուներ Փրեդերիկոս Բ կայսեր զանիկայ հարս տալ, որ իւր երկրորդ կինը կորսնցուցեր էր։ Իսկը կայսրն ալ՝ ըստ ժամանակակից պատմչի մը, կարգէ դուրս փափաք ուներ զԵղիսաբեթ իրեն հարս առնելու։

Եպիսկոպոսը գնաց առ Եղիսաբեթ, և իւր

մնածութիւնը անոր հաղորդեց.«Ա՛ուզեմ ըսաւ. զքեզ ամուսնացընել իշխանի մը հետ՝ որ քու հանգուցեալ ամուսինդ շատ աւելի հուսկաւոր և զօրաւոր է»։ Եղնսաբեթ քաղցրութեամբ պատասխանեց եպիսկոպոսին որ իրեն աւելի հաճելի էր այնպէս մինակ կենալ, և իւր մնացեալ բովանդակ կենացը մէջ աստուծմէ զատ ուրիշ ընկեր մը չունենալ։ Եպիսկոպոսը շատ ջանաց համոզելու զԵղիսաբեթ, ըսելով իրեն որ դեռ երիտասարդ ըլլալով՝ իրեն այսպիսի կեանք մը չյարմարիր. յիշեցուց դարձեալ այն հալածանքները զոր կրած էր. և թէ կարելի էր որ իւր մահուընէն ետքը կրկին այն հալածանքները նորոգուէին։ Վասն զի թէպէտ և որոշած էր անոր ժառանգութիւն թողուլ Պոդենտենի բերդն իւր շքեղակայ գիւղերովը, սակայն չէր կրնար ինքն իր մեռնելէն ետքը պաշտպանել զնա ամենայն տեսակ չարութեանց դէմ։ Բայց Եղիսաբեթ ամենևին չհամոզուեցաւ, և այսպէս պատասխան տուաւ. «Տէր իմ, ըսաւ բարեպաշտ իշխանուհին, ես ինծի տէր ունեցայ այնպիսի ամուսին մը, որ անչափ սիրով սիրեց զիս ու միշտ իմ հաւատարիմ բարեկամն եղաւ. մանկակից եղայ անոր պատիւներուն և զօրութեանը, շատ ակունք ունեցայ, հարստութիւն և աշխարհային ուրախութիւնք. այս ամէն բանն ունեցայ, սակայն միշտ կը մտածէի ինչ որ դուն ալ լաւ գիտես, որ այս աշխարհիս ուրախութիւնն ընդունայն է։ Վասն որոյ կը փափաքիմ այս աշխարհը թողուլ, և հատուցանել աստուծոյ ինչ որ իրեն պարտական եմ իմ հոգւոյս կողմանէ։ Տէր իմ, լաւ գիտես որ աշ-

խարհային հանգստութիւնները՝ մարդուս հոգւոյն ցաւ, չարչարանք և մահ կը բերեն։ Տեր իմ, եթէ գիտնայիր թէ որչափ կը փափաքիմ ժամ մը առաջ ընկերակից ըլլալ իմ արարչիս. աշխարհիս մէջ բաց ասկէ ուրիշ բան չեմ խնդրեր, իմ հանգուցեալ փեսայէս երկու որդիք ունիմ որ հարուստ և զօրաւոր պիտի ըլլան. ես շատ ուրախ և երախտապարտ պիտի ըլլամ աստուծոյ եթէ զանոնք ալ իմ սիրոյս համար իւր արքայութեան արժանաւոր ընէ»։ Չեմ կարծեր որ դքսուհին մշանջենաւոր ժուժկալութեան ուխտը մէջ բերած ըլլայ, զոր ուխտած էր իւր ամուսնոյն կենդանութեանը ժամանակ, եթէ իրմէ աւելի ապրելու ըլլար։ Եղիսաբեթ յաճախ կը խօսակցեր իւր պատուոյ օրիորդացը հետ, որոնք դքսուհւոյն հետ այս ուխտը ի ծածուկ հաստատեր էին իրենց սրտին մէջ, բայց կը վախեին որ չըլլայ թէ եպիսկոպոսն իւր իշխանութեամբն անոնց ուխտը աւրել տայ։ Եղիսաբեթ կը ջանար քաջալերել զանոնք՝ ինքզինքն անոնց երաշխաւոր ցուցընելով։ «Երդում ըրած եմ, կ'ըսէր, աստուծոյ և ամուսնոյս, քանի որ կենդանի էր, թէ երբէք ուրիշ մարդու մը հետ պիտի չկարգուիմ։ Աստուած որ գիտէ ամենուն սիրտը, և կը ճանչնայ ամենայն մարդկանց ծածուկ խորհուրդները, լաւ գիտէ որ ես այս ուխտն ըրեր եմ պարզ և մաքուր սրտով և կատարեալ հաւատով։ Ուստի անոր ողորմութեանը միայն կ'ապաւինիմ, և անհնարին է որ չըպաշտպանէ իմ կուսութիւնս ամենայն մարդկանց չար մտածութեանը դէմ, և նաև որ և իցէ բռնութեան դէմ։ Ասիկայ պայմանով ե-

դած ուխտ մը չէ, կամ թէ որ անանկ հաճոյ ըլլայ իմ բարեկամացս և ծնողացս. այլ հաստատուն, բացարձակ և ազատ ուխտ. որ է ինքզինքս բոլորովին նուիրել սիրելոյս մահուընէն վերջը իմ արարչիս փառացը։ Եթէ համար ձակի մէկին որ ամուսնութեան ազատութիւնը արհամարհէ, և զիս որ և իցէ մարդու մը յանձնէ, խորանին առջևը պիտի բողոքեմ. և եթէ ուրիշ փախչելու ճար մ՚ալ չգտնեմ, ծածուկ քիթս պիտի կտրեմ, որպէս զի ամենայն մարդկանց ահարկու ըլլամ։ Թէպէտ և դքսուհին դրսէն այսպէս կը խօսէր՝ բայց ներսէն անհանգիստ էր. որովհետև եպիսկոպոսին հաստատուն կամքէն կը գուշակէր որ շատ պատերազմներ պիտի կրէր՝ աստուծոյ և իւր խղճին հաւատարիմ մնալու համար։ Մեծ տխրութիւն մը պատեց Եղլեսաբեթին սիրտը. դիմեց դերադոյն մը խիթարչին, ծնկան վրայ եկաւ դիմացն ու լի արցունքով աղաչեց որ հսկէ այն գանձին պահպանութեանը վրայ զոր իրեն նուիրեր էր. դիմեց նաև երկնից թագուհւոյն՝ որ իրեն մայր տրուեր էր. և երկուքն ալ զօրացուցին Եղլիսաբեթ ու հոգւոյն խաղաղութիւն շնորհեցին, որով դքսուհին լի վստահութեամբ երկնային պաշտպանութեանը վրայ՝ քիչ առեն մը բոլորովին հանգարտեցաւ։

Անշուշտ Եղլիսաբեթի կենացն այս միջոցին կը վերաբերին այն ամեն ճնշմորդութիւններն զոր երբեմն իր հօրեղբօրը ձեռքէն ազատելու համար և երբեմն ալ ջերմեռանդութեան կամ բարեպաշտ հետաքրքրութեան համար բրեր էր։ Ասիկայ միայն բաւական էր այնպիսի միջոցի մը

համար յորում նիւթական շահասիրութիւնը զօրացած չէր մարդկանց սրտին վրայ. աղքատները, հիւանդները, մինչև կանայք ալ կը փափաքէին երթալ հռչակաւոր եկեղեցւոյ մը մէջ, յարգելու իրենց մէկ սիրական սուրբին մասունքը, ու իրենց ներողութեան օրերուն մէջ մխիթարուիլ, մաքերնին բերելով այն պանդխտութիւնը զոր ըրեր էին աստուծոյ ու իրենց սուրբ հրեշտակաց պահպանութեամբը։ Եղեսաբեթ այսպէս երկու անգամ գնաց Երփիւրտ քաղաքը, որ հռչակաւոր էր իրեն գեղեցիկ եկեղեցիներովը, և որ իր փեսային երկիրներուն մէջ շինուած էր։ Հոն դարձի եկող օրիորդաց վանք մը իրեն բնակութիւն ընտրեց, և շատ օր հոն կեցաւ առանձնութեան մէջ, ու բաժնուելու ատենը հասարակ գաւառի մը անոր թոռուց, զոր իրեն կերակուրի ատեն կը գործածէր, և որ ինչուան այսօր կը մեծարուի իբրև յիշատակ իր սրտին բարութեանը և խոնարհութեանը։

Ա. յն ատենները տեսնելու գնաց իւր մայրենի ցեղին նախնեացը բերդը, Աշտէքս քաղաքին մէջ, որ Ավլեան լերանց մօտ բարձր տեղի մը վրայ շինուած է. այս հին և երևելի բերդը Հենրիկոս իշխանը Բեռնեդիկտեան կրօնաւորաց վանք մը շինեց, որ ետքը հռչակաւոր եղաւ մէջի սրբոց մասունքներովն և անոնց ձեռքով եղած շատ հրաշքներովը։ Հոն ալ գնաց Եղիսաբեթ ու այն սուրբ լերանը վրայէն տեսաւ Պաւիերայի գեղեցիկ աշխարհը, որ ան ատենը հարուստ էր կրկին գեղեցկութեամբ, բնութեան և կրօնից, լեցուն անուանի վանքերով, որոնցմէ ոմանք ծածկուեր էն հին անտառներու մէջ, և ոմանք ալ

մաքուր և խաղաղ ըներու քով շինուած, ամենքն ալ քրիստոնէական քաղաքակրթութեան ապաւինի տեղ մը եղեր են. և որոնք երկար ատեն պիտի ըլլային գիտութեանց պահապան, խաղաղութեան և աղօթից փափաքող սրտերու՝ քաղցր և ապահով ապաստանարան մը, և ասպնջականութեան տեղ մը այն բազմաթիւ պանդուխտներուն՝ որ հիւսիսային թագաւորութեանց երկիրներէն կ'անցնէին, երթալու յուխտ սուրբ առաքելոց գերեզմաններուն։ Ո՛րչափ անգամ դարձուցեր է անշուշտ Եղիսաբեթ իր աչքերը Դիրոլի գեղեցիկ լեռներուն վրայ, որոնց ետևի կողմը ամեն ուղղափառ սրտեր ուրախութեամբ կը նկատեն մրտքով զՀռոմմ և զՄտալիա. այն լերան ստորոտը Եղիսաբեթ աղօթքով ջրոյ առատ աղբիւր մը բղխեցուց, որ ամենևին չցամքիր նոյն իսկ ամենէն աւելի չորութեան տարիներուն մէջ, և շատ առողջարար յատկութիւններ ունի։ Բարեպաշտ իշխանուհին մինչև այս տեղս իրեն հետ կը բերեր քաղցր և գորովալից յիշատակ մը իրեն ամուսնական կենացը, և զոր պարզմութեամբ կ'ընծայեր իր հոգւոյն նոր փեսային։ Աստիկայ իր հարսանեաց զգեստն էր, զոր հագեր էր իրեն սիրելւոյն Լուդովիկոսի հետ ամուսնացած օրը։ Այն զգեստը դրաւ հոն խորանին վրայ, ուր նոյն միջոցը յանձնեց կրօնաւորաց նաև արծաթի խաչ մը որուն մէջ կային Քրիստոսի ջարշապանաց գործիներուն մասունքը՝ զոր միշտ իրեն վրայ կը կրեր, և շատ մը ուրիշ իրեն սիրական նիւթեր։

Քիչ տարիներ անցնելէն ետքը այս այրուոյս ա-

նունը, որ խոնարհ պանդուխտի մը պէս եկաւ իրեն նուէրը մատուցանելու այս սուրբ եկեղեցւոյն, քրիստոնեայ աշխարհքը պիտի լեցընէ իր փառքովը, և սրբազան քահանայապետը սրբոց խմբին հետ պիտի խառնէ զինքը։ Եւ ինչ պէտք է զարմանալ թէ այն ատենը այս սրբուհւոյն թողուցած ընծաները մէյմէկ աղնիւ և մեծարանաց արժանի մասունք պիտի ըլլան, և ինչուան այս օրս ժամանակին մրրիկներէն և խաւարէն ետքն ալ, հաւատացեալ և պարզամիտ ժողովուրդը դեռ ևս կու գայ մեծարելու զանոնք և համբուրելու սիրով։

ԻԱ.

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ իւր սիրելի ամուսնոյն սակերպն ընդունեցաւ, և ինչպէս Թադեցին ի Բենհարցպրեան.

Հաղիւ թէ Եղիսաբեթ դարձաւ ի Պոդէնսոտին՝ եպիսկոպոսին կողմանէ զրկուած պատգամաւոր մը եկաւ, և հրաւիրեց զԵղիսաբեթ որ գայ ի Պամպերկ, որպէս զի իւր ամուսնոյն մարմինն ընդունի, զոր դուբրինկիացի ասպետք խաչակրութենէն դառնալու ատեն հետերնին կը բերէին։ Յիրաւի Լուդովիկոս դքսին ընկերակիցքը, ինչպէս որ տեսանք, անոր մարմինը Օդրանդ քաղաքին մէջ Թադեցին, և յետոյ Ճամբայ ելեր էին յԱսորեստան երթալու, որպէս զի իրենց ուխտը կատարեն։ Ամենայմ բազմութիւն անձինք որ կրցան երթալ մինչև Յերուսաղէմ, անոր դիտմանը համար աղօթք և ընծաներ մատուցին, ինչպէս որ Լուդովիկոս աղաչեր էր զանոնք իւր մահուան անկողնոյն մէջ։ Իրենց

պանդխտութիւնէն դառնալու միջոց Օդրանդ քաղաքէն անցան, որպէս զի հետերնին տանին իրենց տիրոջ մարմինը. հանեցին հողէն, և առնոր ոսկերքը ձեռն պէս սպիտակ գտան, որ այն ժամանակը ստոյգ նշան մը էր փեսային սատակ հաւատարմութիւն պահելուն իւր հարսին։ Դիւսին ոսկերքը գեղեցիկ և պատուական դագաղ մը մէջ դնելէն ետքը, ձիու մը վրայ դրին և ճամբայ ելան իրենց երկիրը երթալու։ Դագաղին առջևէն արծրեթէ մեծ խաչ մը կ'երթար, ակունքով զարդարուած, իբրև նշանակ իրենց յատուկ բարեպաշտութեանն և եռանդուն սիրոյն որ ունէին իրենց իշխանին վրայ։ Ամէն քաղաք՝ ուր որ կանգ կ'առնուին գիշերը անցնելու, դագաղը եկեղեցւոյ մը մէջ կը դընէին. և հսկել կու տային կրօնաւորներու և կամ ուրիշ բարեպաշտ անձանց, որ մինչուան և ուրիշ աղօթքներ ամբողջ գիշերն երգէն։ Երկրորդ առաւօտուն դեռ ճամբայ չելած՝ պատարագ մը մատուցանել կու տային, և խոստ շատ ընծաներ կը պարգևէին։ Նոյնպէս դագաղին վրայի ծածկուած ծիրանագոյն լաթն ալ որ եկեղեցին որ կը կենային՝ հոն կը ձգէին որպէս զի անոր եկամուտով հանգուցեալին հոգւոյն դիտմանը համար պատարագ ըսուի։ Այսպէս աւելի հանդիսաւոր յուղարկաւորութիւն մը երբէք տեսնուած չէր աշխարհիս վրայ։

Այս կերպով անցան բոլոր Իտալիայէն և միջին Գերմանիայէն։ Երբ Պամպերկ քաղաքին մօտեցան, իրենց գալուստը այն եպիսկոպոսին ծանուցին, որ շուտով պատգամաւորներ ղրկեց, որպէս զի գոնէն զեղիսաբեթ, և բերին Պամ-

պերկ քաղաքը։ Նոյն Ժամանակը պատուիրեց ամենայն իշխանաց և կուսակալաց ալ՝ որ պատրաստուին ընդունելու զԵղիսաբեթ մեծ սիրով, և երկրորդ օրուան տխուր հանդիսին Ժամանակն ալ քովը գտնուելու, վախնալով որ չըլլայ թէ վրան կարգէ դուրս այլայլութիւն մը գայ։ Եպիսկոպոսն անձամբ մարմնոյն ընդառաջ գնաց հետը առնելով բոլոր իւր ուխտը, քաղքին այլ և այլ վանքերուն քահանայքը, դպրոցաց տղաքը և բազմաթիւ Ժողովուրդ, որոնց ձայնը կը խառնուէր քահանայից տխուր երգերուն և եպիսկոպոսանիստ քաղաքին ամենայն զանգակներուն հետ։ Շրջակայքն եղած կոմսերն և իշխանները ոմանք յուղարկաւորութեան տխուր հանդիսին ներկայ էին որ միատեղ քաղաքը մտան ու դքսին մարմինը փառաւոր մայր եկեղեցին տարին, ուր կը հանդչէին նաև սրբոյն Հենրիկոսի կայսեր և սրբուհւոյն Կիւնեկոնտայի նուիրական մարմինները. ու բոլոր գիշերը հանգուցելոյն հոգւոյն համգստանը համար աղօթքներ մատուցին։

Երկրորդ առաւօտն Եղիսաբեթ միշտ հետն ունենալով իւր հաւատարիմ պատուոյ օրիորդները, Իզանդրուտան և Կիւտան, գնաց անոնց մոլ իւր ամուսնոյն ոսկերացը քով։ Բացին դագաղը, և թոյլ տուին անոր որ նկատէ իւր ամուսնոյն մարմինը։ Ա.ինպիսի ցաւ և սեր ազդեց Եղիսաբեթի սրտին այդ տեսարանը, որ միայն աստուած կրնայ գիտնալ՝ որ գիտէ ամենայն մարդկանց սրտին գաղտնիքը։ Բոլոր իւր առջի տրտմութիւնները նորոգուեցան սրտին մէջ. ինկաւ անոր ոսկերացը վրայ, և եռանդեամբ համ-

բուրեց։ Ա.ինպէս կը վաղեին արցունքներն ե-
րեսէն՝ և այնպիսի այլայլութիւն մ՚եկաւ իրեն
վրայ, որ եպիսկոպոսը և իշխանք՝ որ ներկայ էին
այդ ցաւալից տեսարանին՝ հարկ սեպեցին հան-
դարտեցընել զինքը, և միտքը ուրիշ բանի մը
զբաղեցընել։ Սակայն իշխանուհին զաստուած
յիշեց ու մէկէն զօրացաւ. «Շնորհակալ կ՚ըլ-
լամ քեզի, տէր իմ, ըսաւ, որ արժանի սեպե-
ցիր մտիկ ընել քու աղախնոյդ ձայնին, և կա-
տարել այն սաստիկ փափաքը զոր ունէի տես-
նելու սիրելի ամուսնոյս մարմինը, որ քեզի ալ
սիրելի էր։ Դարձեալ կրկին շնորհակալ կ՚ըլ-
լամ քեզի, որ այսպիսի գթութեամբ մխիթա-
րեցիր իմ վշտացեալ և յուսահատեալ հոգիս։
Անձամբ ինքզինքը քեզի նուիրած էր, ինչպէս
որ նաև ես ալ քեզի նուիրած էի զինքը, երբ
քու սուրբ երկրիդ պաշտպանութեանը համար
ձամբայ կ՚ելլէր. և ամենևին չեմ զղջար զինքը
այսպիսի բանի մը նուիրելուս վրայ, թէպէտ և
կը սիրէի զինքը բոլորով սրտիս։ Գիտես, տէր
իմ, որչափ կը սիրէի այն փեսայն որ զքեզ սաս-
տիկ սիրով կը սիրէր, և գիտես թէ հազար ան-
գամ աւելի վեր կը սեպէի անոր ներկայութիւ-
նը քան աշխարհիս ամենայն ուրախութիւնը.
գիտես, տէր իմ, որ կ՚ուզէի բոլոր իմ կեանքս
անոր հետ աղքատութեամբ անցընել, և դունե
դուռ պտըտելով՝ օրուան հացս մուրալ։ Հիմա
քեզի կը յանձնեմ իմ ամուսնս, և ինքզինքս
ալ քու կամացդ կը յանձնեմ, թող քու կամքդ
կատարուի ամեն բանի մէջ, ով աստուած իմ»։

Իշխանուհին այս խօսքերս ըսելէն ետքը՝ սրբ-
բեց երեսին արցունքն ու լռութեամբ եկեղե-

ցիէն գուրս ելլելով՝ գնաց եկեղեցւոյն մօտ խո-
տով զարդարուած փոքրիկ դաշտի մը մէջ նըս-
տաւ, և աղաչեց Դուբրինկիացի իշխաններուն,
որ հետերնին բերեր էին իւր ամուսնոյն մար-
մինը, որ գան իրեն հետ տեսնուին։ Երբ իշ-
խանները մօտեցան, Եղիսաբեթ խոնարհու-
թեամբ ոտք ելաւ զանոնք պատուելու համար,
և աղաչեց որ իւր քովը նստին, վասն զի ոտքի
վրայ կենալու բաւական ուժ չունէր։ Յետոյ ա-
նոնց հետ մեծաւ քաղցրութեամբ երկայն բա-
րակ խօսեցաւ, և աղաչեց յանուն աստուծոյ և
Քրիստոսի, որ յանձն առնուն իւր թշուառ որդ-
ւոյը հոգն ու անոնց պաշտպան ըլլան։ Եղիսա-
բեթ պատմեց անոնց թէ ինչպիսի տմարդու-
թեամբ վարուեր են իրեն և իւր տղոյը հետ
Հենրիկ և Գոնրատ իշխանները, և ինչ խեղճու-
թիւն կրեր են Ինքնաք քաղքին մէջ։ Եպիսկո-
պոսն անձամբ հաստատելու եկաւ իւր քեռորդ-
ւոյն պատմութիւնը, և երկայն բարակ խօսե-
ցաւ ասպետներուն հետ թէ այրոյն և թէ որ-
բոյ՝ իրենց տիրապետէն եղած նախատանաց
դարման մը գտնելու համար։ Սաստիկ բարկա-
ցան ասպետներն, իմանալով դքսուհւոյն եղած
նախատինքը, և յայտնեցին իրենց միտքը ըսե-
լով որ զՆեղիսաբեթ միշտ իրենց տէր և տիրու-
հի կը ճանչնան, և պիտի պաշտպանեն զնա ա-
մենայն մարդկանց դէմ։ Իրենց առաջնորդ ու-
նէին ազնուական և հաւատարիմ Վարիլայի
իշխանը, անոր որդին որ տասնըվեց տարի առաջ
գնացեր էր Հունգարիոյ թագաւորական պալա-
տին մէջ փնտրուելու այն իշխանուհին՝ զոր հի-
մա իւր դիմացը կը տեսնէր իբրև արհամար-

հուած և անարգուած այրի մը. անշուշտ յիշեց նաև այն երդմունքը՝ զոր իւր հայրը ըրեր էր Անդրեաս Թագաւորին, որ իւր դստերը վրայ հսկէ։ Իւր զինուորակիցքը եպիսկոպոսին աղաչեցին որ իրենց յանձնէ այն ազնուական և թշուառ գերդաստանը, զոր Դուբինկիա կ'ուզէին տանել Լուդովիկոս իշխանին մարմնոյն հետ. և երդմամբ խոստացան որ արդար վրէժխնդրութիւնը պիտի հատուցանէին։ Աստահացած այն կարիճ և հռչակաւոր ասպետներուն խոստմանը վրայ, որ իրենց վերջի խաչակրութեամբը համբաւնին ալ աւելի շատցուցեր էին, Պամպերկի եպիսկոպոսը յանձն առաւ յանձնել զանիկայ անոնց պաշտպանութեանը։ Ինչպէս որ կ'երևի չի յայտնեց անոնց իր միտքն որ զնեղութեամբ կ'ուզէր երկրորդ անգամ ամուսնացընել։ Ի պատիւ հանգուցեալին՝ եպիսկոպոսական պատարագ մը մատուցանելէն ետքը, որուն բոլոր քաղաքը ուզեց ներկայ գտնուիլ, և առատաձեռնութեամբ հատուցանելէն վերջը իւր հիւրերուն ամենայն ծախքը Պամպերկին մէջ եղած ժամանակին, հրաժեշտի ողջոյն տուաւ թէ՛ ազնուական ին և թէ անոր որդւոցը։

Տխուր յուղարկաւորութիւնը ձամբայ ելաւ, և գնաց դէպ ի Բենհարցպրիւնի աբբայարանը, ուր բարեպաշտ Լուդովիկոս ուզեր էր թաղուիլ։ Բարի և սիրելի իշխանին մարմնոյն հասնելուն ձայնը տարածուեցաւ բոլոր Դուբինկիայի մէջ, և քաղաքը տակն ու վրայ ըրաւ. բայց ի Սոփիա Լուդովիկոսի մարմէն, և իւր Հենրիկ և Գոմրատ եղբարցմէ, որ աճապարեցին երթալ ի Բենհարցպրիւն անոր մարմին ընդունելու, նաև ա-

մինայն կոմսերն, իշխանները և քաղքին բոլոր ազնուականները, և մանաւանդ աղքատ ժողովուրդը՝ զոր այնչափ սիրեր էր Լուդովիկոս և այնչափ զօրութեամբ պաշտպաներ՝ ընդառաջ գացին։ Բազմաթիւ անձինք թէ՛ հարուստ և թէ աղքատ, թէ՛ քաղաքացի և թէ գեղացի, թէ՛ արք և թէ կանայք, ամենքը ի Բենհարցպրիւն ժողվեցան, որպէս զի կատարեն իրենց վերջի պարտքը անոր՝ որուն քիչ մը առաջ ի պատիւ փառացն աստուծոյ օտար երկիր երթալը տեսեր էին ի խնդիր մահուան՝ զոր շուտով ալ գտեր էր։ Նաև ասկէ զատ ուրիշ առիթներ ալ կային բազմութեան թիւը շատցընելու. բնական փափաք մը խաչակիրները տեսնելու, որոնք ձամբուն վտանգներէն ազատեր էին ողջ առողջ. ամենք ալ մէջերնին բարեկամներ և ազգականներ ունէին։ Շատերն ալ հոն եկեր էին Եղիսաբեթ դքսուհին տեսնելու, որուն թշուառութեան և տարագրութեան պատմութիւնը տարածուեր էր բոլոր քաղքին մէջ. և շատ կը փափաքէին իմանալու այս անպաշտպան և անտէր կնոջ վիճակը։ Մէկ քանի եպիսկոպոսներ և աբբաներ ալ եկեր էին սուրբ գերեզմանին և եկեղեցւոյն ազնուական ախոյեանքը պատուելու համար։ Ամէն կրօնաւորներն՝ որոնցմէ այնպիսի գորովալից և ճշմարիտ սիրով հրաժարեր էր Լուդովիկոս, հիմա պիտի կատարեն իրեն վրայ այն տխուր պարտքը և նուիրական պատիւը՝ զոր եկեղեցին իւր հնազանդ որդւոցը կը պահէ։ Ընդառաջ գնացին անոր մարմնոյն՝ հետերնին ունենալով խիստ շատ աշխարհական քահանաներ և աղքատ ժողովուրդ, որոնցմէ ոմանք սաղմոս

կ'երդէին, ոմանք ալ շարականներ, որոնք յա-
ճախ յարտասուց կ'ընդհատէին։ Յուզարկա-
ւորութեան տխուր հանդէսը աբբայարանին ե-
կեղեցւոյն մէջ կատարուեցաւ երկու դքսուհի-
ներու և երկու երիտասարդ իշխանաց առջև։
Լուդովիկոսի մարմնոյն առջև հասարակաց և ան-
կեղծ ցաւ մը զլրենք միացուցեր էր. ամենայն
Ֆոխութեամբ եկեղեցական արարողութիւնք
կատարուեցան, և շատ օր տեւեցին։ Ժողովուրդ
գեան ցաւն ու արցունքը նոր և ամենէն աւելի
գեղեցիկ հանդէսն եղաւ։ Եկեղեցւոյ մեծագին
ընծաներ, և աղքատաց տրուած ողորմութիւն-
ները վերջին պատիւ մը եղան անոր յիշատակին՝
որ այնչափ սիրեր էր զաղքատներն ու այնչափ
մեծարեր էր զեկեղեցին։ Իր ոսկերքը քարէ գե-
րեզմանի մը մէջ դրուեցան անանկ կերպով մը
որ միշտ հաւատացեալց աչքին առջև ըլլայ, ու
շատերը սկսան իրեն ուխտի երթալ. վասն զի
ժողովուրդն և երախտագէտ կրօնաւորներն ար-
դէն իսկ սկսեր էին զինքը սուրբ կանչել. որով-
հետև իր բարեխօսութեամբը արդէն սկսեր էին
իր գերեզմանէն հրաշալի բժշկութիւններ գըտ-
նել։ Երբք դարու չափ՝ այս տեղը իբրև ուխտա-
տեղի հոնտեղի ժողովրդէն պատուեցաւ։ Նոյեմ
1525ին, անօրէն Նորաղանդները հոս յարձակե-
լով, յափշտակեցին բոլոր Թէնհարցպրինի աբ-
բայարանին հարստութիւնը, գերեզմանները
թալանեցին, մանաւանդ Լուդովիկոս դքսին.
որուն մարմինը մատուռէն հանելով՝ մեծամեծ
նախատանաց սրբազան ոսկորները ասոր անոր
գլուխն սկսան նետել։ Հիմա ալ քրիստոնեայ
ուղղափառ Ֆրանսիոյը տեսնելով հոն սրբոյն գե-

բեզմանին կոտրած վէմը՝ չարափառ եկեղեցւոյ մը պատին կռթնցուցած՝ անկարելի է որ սիրտը չփղձկի անոր յիշատակաւը, զոր թէ և եկեղեցին սրբոց թուին մէջ դասած չըլլայ՝ գոնէ սրբութիւնոյ մը արժանապոյն փեսայ եղեր է։

ԻԲ

Ինչպէս Դուբլինկիացի սարկաւագները յանդիմանեցին Հենրիկոս դքսին չարութիւնը, և ինչ կերպով հաստատուեցաւ ըրին Եղիսաբեթ իշխանուհւոյն։

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը լըմընալուն պէս, Վարիլայի իշխանը յիշեցուց խաչակիր ասպետաց, որ Եղիսաբեթ դքսուհւոյն չարս կողմը կեցեր էին՝ այն արդար վրէժը, զոր Պանդերկի եպիսկոպոսին առջևը յանձն առեր էին հանելու Եղիսաբեթի թշնամիներէն։ Մասնաւոր տեղ մը առանձնացած՝ պէտք եղած ուրոյնման վրայ սկսան մտածել. «Հիմա պէտք է, ըսաւ Ռոտոլի իշխանը, մեր երդմանը վրայ հաստատուն կենալ, զոր մեր ազնուական իշխանին և Եղիսաբեթի տիրուհւոյն հանար ըրինք. տարա թէ ոչ՝ կը վախենամ որ չըլլայ թէ դժոխոց յաւիտենական կրակը զմեզ այրէ»։ Այնպէս ալ իմացան անոր խոստակցութեան նպատակը. վասն զի

այն ժամանակը ամենէն քաջ պատերազմող-
ներն անգամ չէին ամբիշտար իրենց ամէն գոր-
ծերնուն առաջնորդ բռնել հանդերձեալ կե-
նաց մնացածութիւնը, և անանկով իրենց այս աշ-
խարհիս վրայ ունեցած պարտքը կը կատարէին։
Ուստի որոշեցին ամենքը մէկտեղ որ մէկէն ի
մէկ Հենրիկոս իշխանին և անոր եղբօրը մեծ
յանդիմանութիւն մը տան, և այս դժուարին
պաշտօնը մասնաւոր կերպով չորս ասպետաց
յանձնուեցաւ՝ որոնց անունը պատմութիւնը
կ'աւանդէ մեզի, և որոնք արժանաւոր են անմ-
ոռաց մնալու անմահական փառքով։ Նախ Վարբ-
լայի իշխանը, մեծ մտատակարար, որ ամենուն
կողմանէ պիտի խօսէր, որովհետև ինքն էր ա-
մենէն աւելի Ճարտարախօսը և ամենէն աւելի
Եղիսաբեթի վրայ սէր ունեցողը։ Վարբլայի իշ-
խանին հետ միաբան էին Պերսդեդրն Լուտոլի
իշխանը, Հերպայի Հարդվիկ իշխանը, և Վարբ-
լայի Կոթիէ իշխանը Ռոտոլֆի ազգականը։ Մէ-
կալ ասպետը՝ զասունք իրենց առաջնորդ ունե-
նալով, երիտասարդ իշխանաց քով գնացին, և
գտան իրենց մօրը քով։ Վարբլայի իշխանը Հեն-
րիկոս դքսին դառնալով, այս հետևեալ խօս-
քերն ըսաւ, զորոնք զգուշութեամբ արձանա-
գրուեր են երկրին հին պատմիչներուն գրուա-
ծոցը մէջ և ինչպան մեզի հասեր են.

«Տէր իմ, բարեկամներս և քու հպատակ-
ներդ որ հիմա հոս են, ինծի աղաչեցին որ իրենց
տեղ խօսիմ քեզի հետ։ Փրանգոնիոյ մէջ և
հոս ի Դուբլինկիա այնպիսի արհամարհական և
անարգական խօսքեր լսեցինք քու վրադ, որ ա-
մենքնիս ալ ցաւեցանք և ամչցանք, որ մեր

երկրին և մեր իշխանաց մէջ՝ այսպիսի չարա-
համբաւութիւն և անհաւատարմութիւն դրա-
նուի. և այսպիսի ահաւոր և դժնդակ պատուոյ
մոռացութիւն։ Ո՛վ երիտասարդ իշխան, ուրեմն
ինչ ըրիր, և այսպիսի խորհուրդներ քեզի ո՞վ
տուաւ. ինչպէս չարասրտութեամբ և արհա-
մարհանօք մերժեցիր բերդէդ և քաղաքներէդ
եղբօրդ ամուսինն իբրև մոլորեալ կին մը, յու-
սահատեալ խեղճ այրին, հռչակաւոր թագա-
ւորի մը օրիորդը, զոր պէտք էր ընդ հակառակն
մեծարել ու սիրել. քու անձինդ համբաւոյն
արհամարհանօքը հիւութեան մէջ թողուցիր
զնա, և թող տուիր որ իբրև մուրացիկ կին մը
դանէ դուռ թափառական պտրտի։ Մինչդեռ
եղբայրդ իւր կեանքը վտանգի մէջ կը դնէ առ
սէրն աստուծոյ, անոր այս փոքրիկ որբերը՝ որ
պէտք էր պաշտպանէիր և մուցանէիր հաւա-
տարիմ պաշտպանի մը սիրով և եռանդեամբ,
դժնդակ կերպով քեզմէ կը հեռացընես, և
բռնութեամբ ալ կը ստիպես որ բաժնուին ի-
ւենց մօրմէն, որպէս զի անոր հետ անօթութե-
նէ չմեռնին. այ անօրէն։ Այս է եղբայրական
գութդ, այսպէս սորվեցուց քեզի քու առաքի-
նի եղբայրդ որ չէր ուզեր այս կերպով վարուիլ
և ոչ իւր ամենէն աւելի յետին հպատակացը
հետ։ Եւ ոչ իսկ անկիրթ գեղացի մը այսպիսի
բարբարոսութեամբ կը վարուէր իւր եղբօրը
կամ իրեն նման մէկուն հետ. և դու, դու, որ
իշխան ես, աստուկ վարուեցար եղբօրդ հետ մինչ-
դեռ խեղճը օտար երկիր գացեր էր առ սէրն
աստուծոյ։ Ա՛լ սակեց եղբը ինչպէս պիտի վրա-
տահինք հաւատարմութեամբդ և պատուոյդ վը-

բայ։ Գիտես, և իբրև ասպետ, կրկին պարտականես պաշտպանելու այրիներն ու որբերը, իսկ դու անձամբ կը նախատես եղբօրդ որբերն ու այրին. համարձակ կ'ըսեմ քեզի որ քու այս գործդ աստուածային վրէժխնդրութեան և բարեսիրաց պատնէշ պիտի ըլլայ քեզի »։

Երբ Սոփիա դքսուհին լսեց այն յանդիմանութիւնները, որով իրաւամբք կը յանդիմանէին իւր սիրելի որդին, սկսաւ դառնապէս արտասուել։ Երիտասարդ դուքսը շփոթած և ի ամօթոյ, գլուխը խոնարհեցուց անպատասխան. մեծ մատակարարը նորէն վրայ բերաւ. « Տէր իմ, ինչու կը վախես այսպիսի հիւանդ, երեսի վրայ ձգուած, յուսահատեալ, անօգնական, առանց բարեկամի մնացած կնոջէ մը, և ինչ կրնայ ընել քեզի այս սուրբ և առաքինի տիկինը, թէպէտ և տէր մնացած ըլլար քու բոլոր բերդերուդ. և հիմա ինչ պիտի ըսէն մեր վրայ ուրիշ քաղաքները։ Ո՛հ, ինչ ամօթ, գ'ամբշնամ երբ կը մնածեմ. գիտցիր որ զաստուած անարգեցիր, Պուրբոնկիոյ բոլոր երկիրը անպատիւ ըրիր, համբաւդ կորսնցուցիր և ոտքի տակ առիր թէ՛ քու և թէ՛ ամենուսին տանդ հոչակը. և եթէ չապաշխարես ըրած մեղքդ և չհաշտուիս այն բարեպաշտ տիկնոջ հետ, ու չհաստատուցանես եղբօրդ որդուոյը ինչ որ յափշտակեցիր անոնցմէ, շատ կը վախեմ որ աստուծոյ բարկութիւնը պիտի թափի բոլոր երկրիս և մեր գլխուն վրայ »։

Բոլոր ներկայ գտնուողներն զարմացան այս ամենուսին ասպետին կարգէ դուրս համարձակ խօսակցութեանը վրայ. սակայն աստուած

միայն կրցաւ այսպիսի երկար ատենէ ի վեր աստուածպաշտութեան և արդարութեան դէմ քարացած սիրտը՝ կակղեցընել։ Երիտասարդ իշխանը՝ որ մինչև այն ժամանակը լուռ կեցեր էր, սկսաւ յորդ արտասուել առանց պատասխան մը տալու, յետոյ վրայ բերաւ. «Կը զղջամ բոլոր սրտովս ըրած գործողութեանս վրայ, և ասկէց ետքը մտիկ պիտի չընեմ ամենեին անանց՝ որոնք խորհուրդ տուին ինծի այս կերպով վարուելու. հաշտուէ նորէն ինծի հետ ու բարեկամն եղիր. ահա յանձն կ'առնում յոժարութեամբ ընելու՝ ինչ որ Եղիսաբեթ քոյրս կը պահանջէ ինծմէ. և իշխանութիւն ալ կուտամ քեզի գործածելու՝ ինչպէս որ կ'ուզես՝ զիս ու բոլոր իմ ստացուածներս»։ Վարիլայի իշխանը դէսին պատասխանեց. «Լաւ է, այս կերպով միայն կընենք աղատիլ աստուծոյ բարկութենէն»։ Իսկ Հենրիկոս ցած ձայնով այս խօսքերս ըսաւ. «Եթէ Եղիսաբեթ քոյրս բոլոր Գերմանիոյ երկիրը իւր իշխանութեանը տակն ունենար, իրեն բան մը չէր մնար. վասն զի բոմանդակ երկիրն աստուծոյ սիրուն համար ուրիշին կը թողուր»։

Վարիլա շուտով մը իւր զինուորակցացը հետ գնաց Եղիսաբեթ դքսուհւոյն պատմելու գործոյն յաջողութիւնը, և միանգամայն խնդրելու իւր փեսին եղբօրն իրեն հետ հաշտուիլ ուզելը, և արդարութեամբ հատուցանել այն անմեն թշուառութիւններն որ հասեր էին իր վրայ։ Երբ սկսան խօսիլ այն պայմանները ուրայ զոր պիտի դնէին Հենրիկոս դքսին, Եղիսաբեթ բարձրաձայն ըսաւ. «Չեմ ուզեր, չէ,

ոչ իւր բերդերը, ոչ քաղաքները, ոչ երկիրներն և ոչ բան մը որ կրնայ իմ միտքս ցրուել ու շփոթել. սակայն ուրիշ կողմանէ շատ երախտագէտ պիտի ըլլամ Հենրիկոս իշխանին, իմ սիրելի ամուսնոյս եղբօրը, եթէ ուզենայ տալ ինծի ընկած գումարը, զոր կարենամ գործածել ինչպէս որ կը փափաքիմ՝ թէ՛ իմ սիրելոյս և թէ իմ հոգւոյս փրկութեանը համար»։ Գնային ասպետները Հենրիկոս դուքսը առին ու Եղիսաբեթին քովը բերին։ Հենրիկոսի հետն էին նաև իւր մայրը և Գոնրատ եղբայրը։ Երբ Հենրիկոս տեսաւ զԵղիսաբեթ, աղաչեց անոր որ ներէ իրեն այն ամէն չարեացը համար, զոր ըրեր էր իրեն դէմ։ և քիչ մը ետքը դարձաւ անոր ու մեծ ցաւով և զղջմամբ ըսաւ որ ասկէց վերջը իրեն վրայ հաւատարիմ և հեռանդուն գուելթ մը պիտի ունենար։ Սոփիա և Գոնրատ միացուցին իրենց աղաչանքը անոր աղաչանացը հետ։ Ամենայն պատասխանուց տեղ Եղիսաբեթ իւր փեսին եղբօրը բազկացը մէջ խնալով՝ սկսաւ դառնապէս արտասուել։ Երկու եղբարքն և Սոփիա դքսուհին խառնեցին իրենց արցունքը անոր արցունքին հետ, և քաջ պատերազմողներն անդամ չկրցան իրենց արցունքը բռնել երբ տեսան այդ սրտաշարժ տեսարանը. յիշելով միանգամայն քաղցր և հնար հալի իշխանը՝ որ ամենուն սիրելի էր, և զոր հիմա կորուսեր էին յաւիտեանս։

Եղիսաբեթի տղոց իրաւունքն ալ ապահովցաւ, մանաւորապէս երիտասարդ Հերմոն իշխանին՝ որ իւր անդրանիկ որդին էր, և օրինաւոր ժառանգ Դուրինկիոյ և Հեսի դքսութեանց։

որոնց վրայ իշխելու իրաւունքը իրեն տղայու-
թեան ժամանակը իւր հօրեղբարցը մէջէն ան-
դրանկին պիտի մնար։ Այս ամէն կարգաւորու-
թիւններն որոշուելէն ետքը, խաչակիր ասպետ-
ները բաժնուեցան իրենց բերդերն երթալու.
Եղիսաբեթ և իւր տղաքն ալ Ճամբայ ելան հե-
տերնին ունենալով Սոփիա դքսուհին իւր կե-
սուրը, և երկու երիտասարդ իշխանները Վարդ-
պուրկ երթալու՝ ուսկից առաջ խայտառակա-
բար մերժուեր էին։

Զէ թէ միայն Պամպերկի եպիսկոպոսն և
Դուրինկիացի խաչակիրներն էին որ իրենց վրայ
առեր էին այս սուրբ այրուոյն պաշտպանութիւ-
նը, այլ նաև միջին Գերմանիոյ ամենէն աւելի
քաջասիրտ և հռչակաւոր իշխանները մէկը՝
Պիւսանկցի Գոնրատը, որ Սէն-Կալլ համբա-
ւաւոր վանքին աբբայն էր. ասիկայ ամէն ջան-
քը թափեց որ Եղիսաբեթ ձեռք բերէ իւր բո-
լոր իրաւունքը։ Այս վանքին տարեգիրներէն
կը տեսնուի որ վանքին աբբայն Եղիսաբեթի
հետ մանաւոր դաշինք մը դրեր է եղեր զինքը
պաշտպանելու այս երկրիս վրայ, որպէս զի ան-
դին ալ անիկայ իրեն բարեխօս ըլլայ առ աս-
տուած։

ԻԳ

Թէպէտ սրբուհին Եղիսաբէթ ընդունայն աշխարհէս հրաժարելով՝ առանձնացաւ ի վարդապետէ սրբոյն Փրանկիսկոսի ասպիզացոյն կրօնքին զգեստը հագաւ.

Հէնրիկոս դուքսը հաստատուն և հաւատարիմ կեցաւ իւր խոստմանը վրայ. և այն բոլոր դակ ժամանակը՝ որ Եղիսաբէթ իր քոյրն անցուց, ջանաց Հէնրիկոս լի սիրով և եռանդեամբ մոռցընել տալ անոր այն նախատինքը՝ որով վերաստացուցեր էր անոր սիրտը։ Եղիսաբէթին կը բկնապատիկ իր աստիճանին յարմար ամէն պատիւները տուաւ. նոյնպէս ազատութիւն՝ որ իւր բարեպաշտութիւնն և ողորմութիւնը շարունակէ։ Եղիսաբէթ ալ դարձեալ ձեռք առաւ իւր առջի հոգևոր կրթութիւնները։ Նոյն ժամանակը ընկերաց սրբուհոյն Մարիամու Մագդալենացւոյն հիւրանոցը, զոր սկսեր էր արդէն շինել իւր ամուսնոյն կենդանութեան ատեն

Կոթա քաղաքին մէջ։ Առջինին պէս աղքատաց սիրոյն կը նուիրէր իր բովանդակ կենացն աղօթքէ և մտածութենէ աւելցած բոլոր ժամանակը։ Իւր այրիութեանը պատճառաւ չէր կրնար ներկայ գտնուիլ տօնից և հասարակաց հանդէսներուն. կը փախչէր որ և իցէ իշխանաց ընկերութենէ և աբքունական ուրախութիւններէ. որոնք Եղիսաբեթի աչքին առջև հարստահարութեան պտուղներ կ'երևէին. անոր համար աւելի լաւ կը սեպէր խոնարհիլ աղքատ ժողովրդեան ու անոր համար աշխատիլ, քան աշխարհիս իշխանաց ուրախութիւնները վայելել։ Ա. յոպիսի կեանք մը, աշխարհասիրաց աչքին առջևը այնպէս խիստ կ'երևէր որ կարծես թէ շուտով պիտի բորբոքէր պալատականաց և դրանիկներուն բարկութիւնը, և նաև անարժան ասպետաց արհամարհանքն՝ որոնք արդէն այնչափ դառնութեամբ Եղիսաբեթին մանկութեան և այրիութեան առաջին տարիները լցուցէին։ Եղիսաբեթի հարստութեանց և հանձիցից դէմ ցրցուցած արհամարհանաց վրէժը խնդրելու համար, զոր ամէն բանէ նախամեծար կը սեպէին, կը յանդիմանէին զանիկայ, և պզտիկութիւն կը սեպէին իրենց անոր քովայցելութեան երթալը կամ հետը խօսիլ. և եթէ դիպուածով ալ հանդիպէին՝ յարմար առիթի մը կը սեպէին զայն զինքը անգամներու և նախատելու, բարձր ձայնով յիմար և անմիտ կոչելով։ Եղիսաբեթի ուրախութեամբ և մեծ համբերութեամբ կը կրէր այս ամէն նախատինքը. և երբեմն վրայ կը տեսնուէր հանդարտութիւն և առ աստուած ունեցած մեծ վստա-

հութիւնը. անանկ որ սապէտնէրը չարութեամբ կը յանդիմանէին զԵղիսաբեթի իբրև թէ արդէն մոռցած ըլլայ ամուսնոյն մնչը, և ինքզինքը չար և անարժան ուրախութեանց տուած։ Թշուառք, կ'ըսէ ժամանակակից հեղինակ մը, չէին կրնար իմանալ և ըմբռնել այն ուրախութիւնը՝ ուսկից զուրկ են ամենևին չարերը։ Սոփիա դքսուհին ալ հաւատաց այս զրպարտութեանց, և յայտնեց իւր հարսին իր զարմանքն և սրտին դժկամակութիւնը. սակայն Եղիսաբեթ ոչ երբեք տակն ու վայր եղաւ, որովհետև աստուած՝ որուն համար միայն կ'ապրէր, անոր հոգւոյն ամենևին ծածուկ գաղտնիքը կը տեսնէր։

Ուրիշ կողմանէ ալ բարեպաշտ և իմաստուն մարդիկ, որոնց ծանօթ էր, անոր խոնարհութեանը վայր կը զարմանային, և իրեն Նատալ ու պաշտպան կը կենային։ Ինչպէս այն Ուկոլին ծիրանաւորը, որ առենաք իշխանուհւոյն և Փրանկիսկոս սասիզացւոյն մէջ միջնորդ եղաւ, և որ հիմա քահանայապետ օծուեր էր Գրիգոր Թ անուամբ, սաիկայ լսելով Եղիսաբեթի թշուառութիւնները և երկիւղածութիւնն որ առ աստուած՝ այլ և այլ նամակներ գրեց անոր, որոնցմով առատութեամբ կը թափէր անոր վրայ ամենայն առաքեալական մխիթարութիւններ. և սրբոց օրինակովն և յաւիտենական կենաց խոստմամբը կը յորդորէր զինքը որպէս զի հաստատուն մնայ համբերութեան և ժուժկալութեան առիթներուն մէջ. միանգամայն ապրպարելով որ բոլոր վստահութիւնն իւր վայր դնէ. վասն զի մինչև իր ետքի շունչը՝ զինքը ձեռ-

քէ պիտի չեղողը. այլ ընդ հակառակն իւր գաստերը պէտ՝ թէ զինքը և թէ բոլոր անոր ունեցածն իւր մանաւանդ պաշտպանութիւնը տակ կ՝առնուր։ Այս ժամանակը արտուստ թիւն մը ալ հնարէց անոր որ մանաւանդ եկեղեցի մը և գերեզմանոց մը ունենայ ի Կոմա, որ բուսնոյն Մարիամու Մագդալենացւոյն՝ իր հիւրանոցին մէջ։ Վերջապէս այս գրուվալից և արթուն քահանայապետը հրամայեց Մարսուրկցի Գանրատ վարդապետին՝ որ միշտ ի Գերմանիա առաքելական գահոն իշխանութիւնները կը բանեցնէր, և որ այն ատենը ի Գուրիմիկիա էր, որպէս զի մանաւանդ կերպով իրեն վրայ առնու Եղիսաբեթ դքսուհւոյն հոգևոր պաշտպանութիւնը, և մանաւանդ անոնց ամենուն դէմ որ զինքը կը հալածէին։

Կամ որքազան պատկին այս յորդորանաց պատճառաւս և կամ՝ որ աւելի մեծն է, աստուածային հնարքաց հրաշալի ազդեցութեամբն էր՝ որ իրեն միտքն արթնցուց սաստիկ փափաք մը՝ աւելի կատարեալ կենաց ձեռք զարնելու և մերձենալու առ աստուած։ Ինքը թէպէտև հրաժարեր էր առաջուընէ ըստ կարելւոյն՝ իւր ազատիճանին յարմար ուրախութիւններէն ու ճոխութիւններէն, սակայն այս բաւական չէր անոր եռանդը յագեցնելու, որովհետև դեռ կատարեալ բաժնուած չէր աշխարհիս հոգերէն։ Երկայն բարակ մտածելէն ետքը բռնելիք կենաց կերպին վրայ, զոր աստուծոյ հանոյ ըլլալու համար յանձն պիտի առնուր, և երբ դեռ չէր որոշած որ վանքին կանոններն իրեն աւելի յարմարագոյն պիտի ըլլային և որը ան-

յարմար, յանկարծ հուշակաւոր Փրանկիսկոս սասիզացւոյն օրինակը միտքն եկաւ, որուն արդէն դուստրն էր՝ Երրորդականաց կարգէն ըլլալով։ Ա.յս մտածմունքէս սիրտը շարժելով, նոյն քաջութիւնը, նոյն սէրն աստուծոյ և նոյն աղքատութիւնն զգաց՝ ինչ որ զգացեր էր երանելին Փրանկիսկոս իրեն սուրբ. ո. ոչեց մեկէն որ անոր եռանդուն աշակերտացը պէս ամէն ունեցածը թողու, և դնէ դուռ մուրանալով՝ իւր հանապազորդ հացը ձարէ։ Եղիսաբեթ իրեն միտքը Գոնրատ վարդապետին յայտնելով՝ խոնարհութեամբ անկէ հրաման խնդրեց անոր գործադրութեանը։ Բայց անիկայ արհամարհանք մը մերժեց այս մտածութիւնը և սաստիկ յանդիմանելով զանիկայ համոզեց որ իւր սեռին և տկարութեանը այսպիսի կեանք մը չէր յարմարեր։ Գքսուհին շատ թախանձեց, և առատ արցունք թափեց անոր առջև. և որովհետև Գոնրատ միշտ դէմ կը կենար, Եղիսաբեթ ալ զանիկայ թողուլ բարձրաձայն բսաւ. «Լաւ է, կը տեսնես որ անանկ բան մը պիտի ընեմ, որ պիտի չկարենաս ինծի արգելուլ»։

Վարդապետը տեսնելով որ չկրնար յաղթելու զանիկայ, ուրիշ կերպ մը բանեցուց մեղմացնելու անոր եռանդուն փափաքը՝ որ զինքը կը հալէր ու կը մաշէր։ Հէնրիկոս՝ տերութեան առաջամարակեայ ուղղիչը՝ թէպէտև ներսէն չէր սիրեր զԵղիսաբեթ, սակայն արտաքուստ մեծարանք և սէր կը ցուցնէր անոր վրայ, զոր խոստացեր էր այլ ցուցնելու իւր եղբօրն ուկերացը քով։ Եղիսաբեթ ալ տեսնելով դքսին

իրեն վրայ ցուցած գութը, տարուց մը չափ ա-
նոր ընտանեացը հետ կենալէն ետքը, աղաչեց
Հենրիկոս դքսին որ իրեն առանձին բնակարան
մը տայ, յորում կատարելապէս ինքզինքը աս-
տուծոյ նուիրելով, անդադար բարեպաշտու-
թեան և ողորմածութեան հրահանգաց պա-
բապի։ Հենրիկոս իւր մօրն ու եղբօրը խորհրդ-
դովը Մարպուրկ քաղաքն իր շրջակայ գեղե-
րով տուաւ Եղիսաբեթին, որ լի երախտագիտու-
թեամբ շնորհակալ եղաւ իւր ամուսնոյն եղբօ-
րը և կեսուրջը, վրայ բերելով թէ անարժան
էր ինքը այսչափ պատուոյ։ Բայց իշխանը խոս-
տացաւ անոր թէ անկէ զատ իրեն հինգ հա-
րիւր արծրիթէ դրամ պիտի ղրկէր իւր առջի
բնակութեան ծախքին համար։ Գոնրատ վար-
դապետը կ'երևի թէ այս կարգաւորութեան
չհաւնեցաւ, որովհետև քահանայապետին նա-
մակ գրեց ըսելով՝ որ իւր կամացը դէմ էր դքս-
սուհոյն հայրենիքը դառնալը. սակայն բաց-
արձակապէս ալ դէմ չկեցաւ։ Այս իրեն յար-
մար առիթ սեպելով Եղիսաբեթ ելաւ Դուրին
կիայէն ու իր հոգևոր հօրը քով այն քաղաքը
գնաց՝ ուր իր անունն այնչափ անկէ ետքը պիտի
հռչակուէր։

Մարպուրկ հասնելով, քաղքին ժողովուրդը
այնչափ փութաջան երևցաւ իւր նորահաս տի-
բուհոյն պատիւ մատուցանելու, որ իւր խոս-
նարհութիւնը խիստ շատ վերաւորուեցաւ, ուս-
տի մէկէն քաշուեցաւ Վերտա ըսուած պզտիկ
գեղը, որ քաղքէն քիչ հեռու Լահն գետին
զուարճալի ափանցը վրայ շինուած էր։ Հոն հաս-
նելով՝ երեսի վրայ ձգուած և կիսակործան

հիւղ մը գտնելով՝ զայն իրեն բնակութեան տեղ ընտրեց, վասն զի չէր ուզեր և ոչ պզտի կերպով մը ծանրանալու գեղին աղքատ և թըշուառ բնակչացը վրայ։ Ինքզինքը դրսի օդէն պատսպարելու համար՝ սանդուղի մը կամ վառարանի մը կամարին տակ պահուրտեցաւ, և տերևներով ու ՀԻՒՂԵՐՈՎ մեծ ծակերը կը գոցէր, ուսկից հոմն ու արեգակը կրնային զինքը անհանգիստ ընել։ Անձամբ կը պատրաստեր քիչ մը թեթև կերակուր որչափ որ կրնար, աստուծմէ գոհանալով։ Այս խեղճ բնակութիւնը զինքը ոչ տաքէն և ոչ ալ սաստիկ ցրտէն կը պաշտպանէր, վառարանին ծուխն ալ շատ կը նեղէր զինքը և աչուքները կը ցաւցնէր։ Սակայն Եղիսաբեթ միշտ զաստուած յիշելով՝ ուրախութեամբ կը կրէր այս ամենը։ Այս միջոցին Մարպուրկի մէջ Կրտսեր Եղբարց վանքին քով փայտե փոքրիկ տուն մը շինել տըւաւ, որպէս զի ամենուն ցուցնէ որ մայրաքաղքին մէջ բնակող հարուստ իշխանուհի մը չէր, հապա պարզ և համբերող այրի մը, որ ամենայն խոնարհութեամբ աստուծոյ ծառայելու կը պատրաստուէր։ Երբ այս իրեն աղքատին հիւղն շինուեցաւ ընտաւ, շուտով իւր տղոց և հաւատարիմ օրիորդացը հետ հոն գնաց բնակելու։

Սակայն պէտք էր իրեն աւելի որոշ և աւելի կատարեալ կերպով մը հրաժարիլ աշխարհէն և աւելի ներքին և միանգամայն աւելի յայտնի կապ մը ունենալ ընդ աստուծոյ։ Երբոր դքսուհոյն խոստովանահայրը թոյլ չէր տար Փրանկիսկեանց կանոնացը հետևելու, և դռնէ դուռ մուրալու իւր հանապազօրեայ հացը, սրբու-

նոյն Գլաբայի հաւատաւորաց նման ուզեց գէլ-
աւելի մեռնել՝ որչափ որ հնարաւոր էր՝ այն
կեանքին՝ զոր օրինակ մը կը հանարեր աւետա-
բանական կատարելութեանց։ Ցեսանք որ նոյն
իսկ իւր ամուսնոյն կենդանութեան ժամանա-
կը մեռեր էր սրբոյն Փրանկիսկոսի Եղբարդակա-
նաց կարգը. այն ժամանակն որոշեց տալ այդ
որդեգրութեանը հանդիսաւոր և հաստատուն
կերպարանք մը. և թէպէտ մինչև այն ատենը
Փրանկիսկեանց այս Ճիւղը կանոնաւորեալ և
բացարձակապէս վանական միաբանութիւն մը
բացած չէր, սակայն ուզեց վանքի մէջ բնակող
հաւատաւորաց նման հանդիսաւոր կերպով նա-
բոգել իրեն ողջախոհութեան, հնազանդու-
թեան և աղքատութեան ուխտերը, զորոնք այն-
չափ անգամ կրկներ ու կրկներ էր իւր սրտին
մէջ։ Ա. Յոպէս ըստ իրեն կարողութեանը կը ջա-
նար ուրանալ ամէն երկրաւոր վայելք, միշտ
մտածելով որ այս կերպով միայն այնչափ ժա-
մանակ սրբոյն Փրանկիսկոսի միաբանութիւնը
արժանաւոր եղաւ աստուծոյ մանաւոր պաշտ-
պանութեանը և բոլոր աշխարհքիս զարմանա-
լուն պատճառ։ Գոնարատ վարդապետն ալ հա-
ւանեցաւ այս մտածութեանը, միայն իմացուց
իրեն թէ աղքատութեան ուխտը իրեն արդելք
պիտի չըլլար ուզածին պէս գործածելու այն
ամէն ստացուածքը՝ որ կամ օժիտէն, և կամ
Հենրիկոսի իրեն պարգևած երկիրներէն ունե-
ցեր էր. այլ ընդ հակառակն պիտի գործածէր
ի տիրել զաղքատս և հատուցանել այն մեկ
քանի պարտքերը զոր թողուցեր էր իւր ամու-
սինը։

Սակայն պէտք էր որ Եղիսաբեթ բոլոր սըրտովն հրաժարէր ոչ միայն երկրաւոր ամէն մեծութիւններէ, այլ նոյն իսկ ամէն աշխարհական օրինաւոր կապերէ։ Գիտէր Եղիսաբեթ որ թէ աշխարհիս վրայ, և թէ իր անձին վրայ յաղթանակ մը կանգնելու համար, իր կամքէն աւելի, իրեն պաշտպան սրբոյն Փրանկիսկոսի օրինակէն աւելի, և ուրիշ ամէն բանէ վեր առտուածային գերագոյն ՇՈՐՀՔ մը հարկաւոր էր. և այն ՇՈՐՀՔԸ սովորականէ վեր եռանդով մը խնդրեց յաստուծոյ կրօնաւորական զգեստը հագնելէն շատ օր առաջ։ Եղիսաբեթ կը պատմէր իւր Խզանդրուտա բարեկամին թէ անդադար կը խնդրեր աստուծմէ որ իրեն իրեք բան ՇՈՐՀԷ. նախ՝ ամենայն երկրաւոր վայելչութիւնէ կատարեալ զզուանք մը և ուրացութիւն. երկրորդ՝ քաջութիւն մը՝ որով կարենայ մարդկանց բամբասանքը և նախատինքը բանի տեղ չդնել. և երրորդ՝ այն սաստիկ սէրը չափաւորել, որով կը սիրեր իւր տղաքը։ Երկար ժամանակ այս դիտմամբ աղօթելէն ետքը, օր մը եկաւ վերջին աստիճանի ուրախութեամբ գըտաւ իւր ընկերակիցքը, և անոնց ըսաւ. «Լսեց աստուած իմ խնդրուածս, ահաւասիկ այս անցաւոր աշխարհին ամենայն հարստութիւնն և ամենայն ստացուածքը՝ զորոնք երբեմն կը սիրէի, հիմա իմ աչքիս առջևը ուրիշ բան չեն՝ բայց եթէ տիղմ։ Իսկ մարդկանց բամբասանքը և նախատինքը կ'արհամարհեմ և ատելութեամբ կ'անգոմնեմ, ու անոր համար շատ երջանիկ եմ։ Իմ փոքրիկ տղաքս, իմ գրկացս սիրելի տղաքը, զորոնք այնչափ կը սիրեի, և գոր-

վալից կը համբուրէի, հիմա ինձի օտարի պէս կ'երևնան, և վկայ է ինձ աստուած, որ անոր կը նուիրեմ և անոր կը յանձնեմ զանոնք. իւր կամքն ըլլայ յամենայնի. բան մը չեմ սիրեր և ոչ արարած մը, միայն իմ ստեղծողս և արարիչս կը սիրեմ»։

Ա.յս գիւցազնական սիրով բորբոքած, Եղիսաբեթ յարմար ժամանակ սեպեց իւր ուխտերը կատարելու և այն զգեստը հագնելու որ արդէն նուիրական եղեր էր սրբոյն Փրանկիսկոսի և սրբուհւոյն Գլարայի փառաւոր օրինակներովը։ «Թէ որ կարենայի, կ'ըսէր, սրբուհի Գլարայի զգեստէն աւելի աղքատ և խեղճ զգեստ մը գտնել, յօժարութեամբ կ'առնէի, վասն զի դեռ անարժան եմ մտնելու բոլորովին անոր սուրբ կարգին մէջ. բայց ափսոս որ չեմ կրնար գտնել»։ Ա.յս զգեստաւորութեան հանդէսն ուզեց իրեն կրօնաւորաց պարգևած մատրան մէջ կատարել աւագ ուրբաթ օրը։ Ա.յն օրն՝ յորում Քրիստոս ամէն բանէ մերկացեալ մեր սիրուն համար, մերկ գամուեցաւ խաչափայտին վրայ, և յորում խորհանքերն ալ իրեն նման մերկացած՝ կը յիշեցնէին հաւատացեալց՝ գերագոյն զոհին յիշատակը. այս օրս Եղիսաբեթ ալ կ'ուզէր մերկանալ յամենայնէ, և խզել խորտակել վերջին կապերը որոնք կը կապէին դնա երկրիս հետ, որպէս զի աւելի թեթև թռչի իւր հոգւոյն փեսին ետևէն աղքատութեան և ողորմածութեան Ճամբով։ Հասաւ վերջապէս այն նուիրական օրն. Եղիսաբեթ ալ եկաւ իւր տղոյը, բարեկամացն և բաղմաթիւ Փրանկիսկեան կրօնաւորաց առջև մերկ

խորանին քարին վրայ ձեռքերը դնելու և երդումնաբար՝ հրաժարելու իւր յատուկ կամքէն, ազգականներէն, տոլոյմէն, բարեկամներէն, աշխարհիս ուրախութիւններէն և ձոխութիւններէն։ Մինչդեռ Գանրատ վարդապետը պատարագ կը մատուցանէր, Հէս գաւառին կրօնաւոր Կրտսեր Եղբարց առաջնորդը՝ որ իբրև իւր դուստրը սեպեր էր զԵղիսաբեթ և հոգևոր բարեկամ,անոր մաղերը կտրեց ու մթնագոյն պատմուձան մը հագցուց, և մէջքը այն չուանը կապեց որ որոշեալ նշանակ մըն էր սրբոյն Փրանկիսկոսի կարգին. հագաւ զգեստը, և մինչև իւր մահուան օրը բոկոտն քալեց։ Ա.ին ատենէն ուզենալով ոչնչացրնել իւր անցեալ մեծութեան և փառաց նշանները, դնել տուաւ իւր գործածած կնքոյն վրայ բոկոտն Փրանկիսկեանի մը գէմքը։

Կիւտա՝ իւր պատուոյ օրիորդն ալ, որ իւր մանկութեան հաւատարիմ և անբաժանելի բարեկամն էր, չուզեց այնպիսի կեանք մը վարել որ իւր սիրելի տիրուհւոյն կեանքէն տարբեր ըլլայ։ Ուստի Երրորդականաց զգեստը հագաւ և ողջախոհութեան ուխտը հանդիսաւոր կերպով նորոգեց, զոր քանի մը տարի առաջ Լուդովիկոս դքսին կենդանութեան ժամանակն ըրեր էր։ Ա.յս քաղցր կենաց և մտածութեանց միութիւնը, Եղիսաբեթի մխիթարութիւն մը կը բերէր, որ շուտով սիտի վերնար։ Ակաա այն ատենէն իւր տղաքը հեռացընել իրմէ, վասն զի ինքզինքը կը յանդիմանէր այնչափ եռանդեամբ զանոնք սիրելուն համար։ Հերման՝ անդրանիկ որդին և հօրը երկիրներուն ժառանգը, որ հա-

զիւ թէ վեց եօթը տարուան էր, Կրիւզուրկ բերդը տարուեցաւ, աղէկ և ապահով պաշտպանութեան տակ հոն մնալու մինչև ժամանակ մը՝ որ կարենայ տէրութեան սանձը ձեռք առնուլ, որ ան ատեն իւր հօրեղբօրը ձեռքով կը կառավարուէր։ Հաւանական է թէ նոյն տեղը բնակած ըլլայ Սոփիա օրիորդը, որ արդէն նշանուեր էր Պրասպնի երիտասարդ դքսին հետ։ Եղիսաբեթին երկրորդ դուստրը Սոփիա՝ աբբայարանը դարձաւ, ու հաւատաւոր եղաւ. և հոն անցուց իւր կենացը մնացած մասը։ Անոնց մէ ամենէն աւելի կրտերագոյնը Կերդրուտա, որ հազիւ թէ երկու տարուան էր, որովհետև հօրը վախճանելէն վերջը ծնաւ, Ալդէնպէրկի հաւատաւորաց վանքը ղրկուեցաւ Վէյլար գետին ափունքը. ամենքը զարմացան որ այս պզտիկ իշխանուհին այսպիսի աղքատ տուն և դեռնոր հիմնուած հիւղի մը մէջ դրուեցաւ։ Խրատիւ յանդիմանեցին զԵղիսաբեթ այս բանիս համար. սակայն անիկայ պատասխանեց որ այսպէս յարմարցուցեր էին իւր ամուսնոյն հետ, վերջին ողջոյնը տալու ժամանակնին. նոյն իսկ մանկան ծնունդենին առաջ աստուած մեղի աղաչեց որ այս վանքը ընտրենք, վասն զի կ՚ուզէ որ իմ դուստրս այս սուրբ տանս թէ՛ ժամանակաւոր և թէ հոգեւոր յառաջադիմութեանը հաղորդ ըլլայ։

Անհաւասիկ Եղիսաբեթի զոհը կատարուած. ալ հրաժարելու բան մը չէր մնացեր. ամէն բան մեռած էր անոր համար այս աշխարհիս մէջ. և իր քսան ու երկու տարուան հասակին Պօղոս առաքելոյն պէս կրնար ըսել. «Կ՚ապրիմ, սա-

կայն էս մեմ որ կ'ապրիմ, այլ Քրիստոս որ կ'ապրի ինծի հետ»։

Աշխարհք և այս աշխարհիս իշխանը սատանան որ իրենց ատելութեամբը զինքը միշտ հալածեցին, պիտի նորոգէին սատկութեամբ իրենց պատերազմները ու իրենց նախատինքը։ Ժամանակին մեծամեծներն ու խնամտուններն ամէնը մէկ բերան կ'արհամարհէին Քրիստոսի այս հարան ու զինքը յիմար կը սեպէին. «Ինչպէս կարելի է, կ'ըսէին, որ այսպիսի երիտասարդ իշխանուհի մը երեսի վրայ ձգելով այնչափ պարտքերը՝ զորմնք հարկ է որ կատարէ, և այնչափ օրինաւոր վայելքները, ու այսպիսի նոր օրինակ կենաց կերպ մը ընտրէ, ու այդչափ աւելորդ ցաւեր ու վշտեր իր վրայ առնու»։ Իսկ մենք պէտք չէ որ այս կերպով մտածենք երբոր այս քրիստոնեայ դիւցազն իշխանուհւոյն յաղթանակը կը տեսնենք. ու թէ որ այսչափ տկար ենք որ չենք կրնար իրեն հետևող կամ նմանող ըլլալ, գէթ այնչափ ալ կրյր չըլլանք որ վարենանք տեսնել ու զարմանալ անոր առաքինութեանցը վրայ. այլ ընդհակառակն խոնարհինք մեծարանօք այն աստուածային սիրոյն առջև՝ որ Յիսուսի խօսքերուն կատարեալ հնազանդեցաւ. անոր որ կ'ըսէ, թէ Ո՛վ որ ինծի կու գայ ու չատելը իր հայրը, մայրը, կինը, տղաքը, եղբայրներն ու քոյրերը ու ինքզինքն ալ, անիկայ չկրնար իմ աշակերտս ըլլալ։

ԻԳ.

Եղիսաբեթին աղքատ կեանքը, և իրեն ցուցած խոնարհութիւնն ու գթութիւնն առ ամենայն մարդիկ.

Եղիսաբեթ մինակ զաստուած իւր ընկեր ունենալով՝ ուզեց որ այն կամաւոր աղքատութիւնը՝ զոր յանձն առեր էր՝ ըստ կարելւոյն կատարեալ և ճշմարիտ ըլլայ. ուստի որոշեց որ ամենայն ինչ իր տնակին փայտին ու հողին հաւասարի՝ այն ողորմելի խրճիթին զոր իւր բնակութիւնն ըրեր էր։ Ուստի հրաժարեցաւ այն ամէն եկամուտներէն՝ զորոնք Գոնրատ վարդապետը տուպեր էր Եղիսաբեթ որ պահէ ի սիրոփումն աղքատաց և ուրիշ բարեպաշտ գործոց համար։ Սակայն Եղիսաբեթ չկարենալով իւր խոստովանահօրէն հրամայն առնուլ իր հանապազօրեայ հացը մուրալու, որոշեց որ իր ձեռաց գործովն իր ապրուստը հոգայ, և այս բանիս համար՝ ուրիշ բան չէր կրնար ընել բայց եթէ

մնանել. բուրդ միայն գիտէր մնանել, բանվակը չէր գիտէր։ Ա.ղէնպէրկի աբբայարանէն բուրդ բերել կու տար մնանելու համար և հաւատաւորաց կը ղրկէր. անոնք ալ անոր աշխատութեան փոխարէն արժէքը կը ղրկէին. շատ անգամ ա նոր արժէքէն ալ վար ստակ կը ղրկէին։ Եղեսաբեթ ընդհակառակն կարդէ դուրս խիղճով կը ջանար իւր գործը կատարել։ Օր մը որ կանխիկ ընդուներ էր քիչ մը բուրդի ստակը զոր պիտի մնանէր, Գոնրատ վարդապետը լուր ղրկեց դքսուհւոյն որ Մարպուրկէն իրեն հետ Խմնակ երթայ. Եղեսաբեթ տեսնելով որ չէր կրնար ամբողջացնել իւր գործը, աբբայարանը ղրկեց այն մնացած քիչ մը բուրդը՝ զոր դեռ չէր մնանած, քանի մը դրամ ալ վրան դնելով, վախնալով որ չըլլայ թէ մեղադրեն զինքը արժէքին աշխատանքէն աւելի ստակ առած ըլլայ ըսելով։ Եւ սակայն այնչափ փութաքով և եռանդեամբ կ'աշխատէր, որ կարդէ դուրս տկարութիւններն ու յաճախակի հիւանդութիւնները բանի տեղ չէր դներ. և մինչև անկողնոյն մէջն ալ մնանելէն չէր դադրեր։ Դքսուհւոյն բարեկամները ձեռքէն կ'առնէին բոքը, որպէս զի չաշխատի. ինքն ալ պարապ չկենալու համար բուրդը կը մաքրեր ու կը պատրաստեր ուրիշ անգամուան դիւրութեան համար։ Իւր աշխատանացը խղճ եկամուտէն ալ մնա մը մեկդի կը դնէներ, եկեղեցւոյն ընծայելու համար, և մնացորդովը իւր աղքատին կերակուրը կը հոգար։ Ա.յս կերակուրներէն աւելի անհամ և աւելի խեղճ կերակուր չէր կրնար ըլլալ. և եթէ համով և փափուկ կերակուր մ'ալ տային իրեն, ինքը ա-

ռանց Ճաշակելու՝ կ'ուզեցարեր զանոնք տանել իւր հիւրանոցին աղքատացը։ Սակայն ուրիշ կողմանէ ալ չէր արհամարհեր քրիստոնէական խոհեմ կարգերն ու խորհուրդները կերակրելոյ համար, և իւր բժշկին կը հարցնէր որ իրեն Ճշդիւ ըսէ ժուժկալութեան կարելի սահմանը։ Ասոնց զի կը վախեր որ չըլլայ թէ ապօրինաւոր տկարութիւններ վրան գան ու զինքը անյարմար ընեն աստուծոյ ծառայելու, որուն օր մը համար պիտի տար իր գործոցը համար։ Եւ յիրաւի ստէպ կը հիւանդանար, և կերակրոյ տեղ շատ անգամ պարզ ջրոյ մէջ եփուած և առանց աղի բանջարեղէններ կ'ուտէր, զոր նանձամբ կը պատրաստեր իրեն ձեռքէն ելածին չափ։ Եւ երբ այսպէս իւր փոքրիկ տնտեսութեան աշխատանացը կը զբաղեր, միշտ իւր միտքն ու աչքերն առ աստուած կը վերցընէր, թէ աղօթքով և թէ ջերմեռանդութեամբ. և յաճախ երբոր մինակ իւր վառարանին քով կ'ելլար, ուր կ'եփէր իւր չորաւոր կերակուրը, կամ տաքնալու ժամանակը, այնպէս մտածութեանց մէջ կ'ընկղմէր՝ որ յաճախ ածուխի կը տարներ և կայծակներ կ'ելնային անոր զգեստուցը վրայ, և կ'այրէին առանց իրեն իմանալուն, թէպէտև անոր ընկերակիցքը սենեակը մնանելով այրած նիւթերուն հոտէն և մուխէն կը խղդուէին։

Եղիսաբեթին զգեստներն ալ կերակուրին հանմանայն էին. հաստ չուխայէ կոշտ զգեստ մը հագեր էր, զոր միայն աղքատը և գեղացիք կը գործածէին. այն ալ պատրոտած. իսկ թելերը խառնատինդոր կարկատանքներով

կարուած էր. մէջքն ալ հաստ չուան մը կա-
պած էր. վրայի վերարկուն ալ նոյն նիւթէն
էր, բայց շատ կարճ ըլլալով հասակին՝ ուրիշ
նիւթով մ՚երկնցուց զայն։ Անոնց տեղէ ուր որ կը
գտնէր այլ և այլ գոյներով չուխայի կոտորներ՝
կը ժողվէր ու կը պահէր, և ետքը իւր յատուկ
ձեռքովը զգեստին այրած և պատռուտած տե-
ղուանքը անոնցմով որչափ որ կրնար կը կարկը-
տէր, որովհետև լաւ կարել ալ չէր գիտեր։ Նէ
էր ալ քաշուէր այս զգեստով դուրս ելնելու,
որով ալ աւելի կը հաստատէր չար և անպիտան
մարդկանց կարծիքը, որոնք զինքը յիմար կը
կանչէին. բայց կը գտնուէին նաև բարեպաշտ
անձինք որ մեծ համարմունք ունէին Եղիսաբե-
թին վրայ, և երկրորդ սրբուհի Գլարա անվա-
կայ կը կարծէին։ Գիքուհին անդադար կը մեր-
կանար իւր հասարակ զգեստները՝ աղքատաց
տալու համար, և հագիս թէ հագնելու զգեստ
կը պահէր իրեն. անոր համար յաճախ ձմեռ-
ուան սաստիկ ցրտերուն կը ստիպուէր իւր փոք-
րիկ վառարանին քովը կենալ, կամ՝ իւր անկող-
նոյն մէջ երկու վերմակով կը ծածկուէր. թէ-
պէտ և շատ անգամ՝ ալ բաց կը մնար, ու այս
խօսքերը կ՚ըսէր. «Ահաւասիկ իբրև թէ իմ դա-
գաղիս մէջ պառկեր եմ՝». և այս ամէն նեղու-
թիւններս Եղիսաբեթին համար նորանոր ու-
բախութեանց աղբիւրներ էին։

Այս իր ամենայն զրկմանց մէջ Եղիսաբեթ
ոչ իւր բնաւորութեան ուրախութիւնն, և ոչ
ալ ընդհանուր և կարգէ դուրս քաղցրութիւնը
կը կորսնցնէր, որ զինքը երևելի ըրեր էին։ Իր
մանկութեան հասակէն իվեր միշտ նախամե-

ծար սեպեր էր աղքատաց և թշուառաց ընկե-
ութիւնը և կարգէ դուրս զանձք կը սիրէր. և
հիմա իւր առանձնութեանը մէջ չէ թէ միայն
նոյն գորովալից և քաղցր սէրը իւր պատուոյ օ-
րիորդաց կը ցուցընէր՝ որոնք ուզեցին դքսուհւոյն
հետ մէկտեղ կենալ, այլ նաև այն աղախիններ-
ուն որ Գոնրատ վարդապետը իրեն ծառայու-
թեանը որոշեր էր։ Ուշխատութիւն խնդրեր էր ա-
նոնցմէ որ ոչ ոք՝ որչափ ալ նուաստ աստիճանի
ըլլայ՝ իրեն պատուոյ կամ մեծարանաց անուն
մը չտայ, այլ միայն մկրտութեան պարզ ա-
նուանքը եղիսաբեթ կոչէ զինքը. և անոնց հետ
այնպէս կը վարուէր որ կարծես թէ իւր հաւա-
սարն կամ անոնցմէ ալ ստորինն ըլլար։ Եղիսա-
բեթ կը ջանար աւելի անոնց ծառայել՝ քան
թէ անոնցմէ ծառայութիւն ընդունիլ։ Այս
թագաւորաց դուստրը՝ կ'ախորժէր լուալ և մաք-
րել փոխանակ անոնց իւր խոհանոցին անօթ-
ներն և գործիները. և որպէս զի կարենայ ամե-
նայն ազատութեամբ այսպիսի գործոց զբաղիլ,
որ նուաստ և արհամարհ է մարդկանց առջև,
սակայն ամենացած աստուծոյ առջև գերագոյն
խնամարհութեամբ մը, յարմար միջոց կը գտնէր
աղախինները իւր քովէն հեռացընելու, անոնց
արտաքին ծառայութիւն մը յանձնելով. երբ-
որ տուն կը դառնային աղախինները կը տես-
նէին որ ամէն բան իրենց տիրուհին ըրեր լմն-
ցուցեր էր։ Իւր կերակուրը անոնց հետ պատ-
րաստելէն վերջը, ինչպէս որ տեսանք, կ'ուզէր
որ իրեն հետ կերակուր ուտեն իւր քովը նըս-
տած, և շատ անգամ այն պնակէն ուսկից որ
ինքը կ'ուտէր։ Անոնցմէ մէկը՝ Իրմանկարտ ա-

նուամբ, որ այս ամենը մանրամասն պատմեց և կեղծեցական դատաւորաց, զարմացած իշխանուհւոյ մը այսչափ խոնարհութեանը վրայ՝ որ ժամանակաւ այնչափ զօրաւոր էր, օր մը կ'ըսէ անոր. «Յիրաւի, տիկին, մեծ արդիւնք կը ստանամ մեզի հետ բռնած կերպովդ. սակայն կը մոռնամ որ ասանկով զմեզ մեծ վտանգի մէջ կը ձգես, վասն զի կը հպարտանանք՝ երբոր քու սեղանդ և քու քովդ նստած կերակուր կ'ուտենք»։ Որուն իշխանուհին պատասխանեց. «Որովհետև ատանկ է, պէտք է որ դուն նստիս իմ ծնկանս վրայ». և շուտով առաւ զնա իւր բազկացը մէջ, և նստեցուց ծնկուընէրուն վրայ։

Եղնսաբեթի իր համբերութիւնն ու սէրը աստեն բանի մէջ կը ցուցընէր։ Որ և իցէ բանի վրայ ոչ կը բարկանար և ոչ ալ կը դժկամակեր, երկայն բարակ կը խօսակցէր իւր ընկերակցացը հետ. այն երկնային քաղցրութիւնը և իւր սրբութիւն ուրախութիւնը կը զեղուր այս ընտանի խօսակցութեանց մէջ, որոնք շատ օգտակար էին ներկայ գտնուողներուն և լսողներուն փրկութեանը համար։ Բայց չէր ուզեր որ իւր առջեր թեթև և ընդունայն խօսակցութիւններ ըլլային, կամ թէ բարկութեամբ և անհամբերութեամբ զուրցուած. զորոնք միշտ կ'ընդհատէր ու կը ջանար այնպիսի խօսակցութիւնները խափանել. «Շատ լաւ, կ'ըսէր, ուրեմն հիմա ուր է ատուած». և յանցաւորները շնորհքով և քաղցրութեամբ կը յանդիմանէր։

Ա. յայլիսի կեանք մը, որ դրսուանց այնչափ դժնդակ և այնչափ նուաստացուցիչ է, սակայն այնչափ փառաւոր է ատուծոյ առջև, և այս-

ամբ արդիւնաւոր այնպիսոյն համար որ ինքզինքը բոլորովին անոր տուեր է Եղիսաբեթի պէս, որ իր հոգւոյն փրկութեանը խնամքին վերջը, իւր երկրաւոր կենաց առաջին և միակ շէնն էր իրեն աղքատ և վշտացեալ եղբարց տիպումը։ Սմենայն ինչ արհամարհելէն և առտնջոյնութիւնէն ետքը, որպէս զի աւելի ապահով կերպով գտնէ զՔրիստոս յերկինս, Եղիսաբեթ չէր կրնար երեսի վրայ ձգել անոր նեղութեան մէջ եղող անդամները՝ որ ցրուեալ տարածեալ էին յերկրի։ Բաւական չի սեպելով իւր ժառանգութեան իրաւունքը աղքատաց թողուլը՝ իրեն բան մը ալ չէր պահած՝ որով կարենայ հոգալ իւր կենաց առաջին պիտոյքը, անոր համար ստիպուեր էր իւր ուղղիչը սանձ մը դնել անոր չափէ դուրս հոգեւոր շռայլութեանը. պէտք էր իրեն նաև, որ դեռ կարիճ երիտասարդութեան հասակին մէջն էր, ընկերանալ յամենայնի աղքատաց թշուառութեանցը, անձամբ լուալով և մաքրելով անոնց թէ հոգւոյն և թէ մարմնոյն վէրքերը։ Հաղիւ թէ Մարպուրգի հասեր էր, իւր առաջին խնամքն էր՝ հիւանդանոց մը շինել տալ, զոր նուիրեց ի պատիւ յիշատակի սրբոյն Փրանկիսկոսի առիպացւոյն, Գրիգոր Թ պապին հրամանաւը։ Ա.յս քահանայապետը որ սրբոյ կարգը անցուցեր էր այն սերտելէանման մարդը, յարմար առեթ սեպեց՝ անոր մարմնոյն փոխադրութեանը ժամանակ՝ զրկել այն սրբոյն թագաւորազուն և քաջասիրտ նմանողին խեղճ և աղքատին վերարկուէն զատ՝ զոր առաջ զրկեր էր, ուրիշ ալ աւելի պատուական պարգև մը. որ էր սրբոյն

արեանը մեկ քանի կաթիլներէն որ անոր կո-
ղէն ելեր էին, երկնքէն աստուածային սպեաց
տպաւորութիւնը ընդունելու ժամանակը։ Ե-
ղիսաբէթ այս նուիրական պարգևը նոյն սիրովն
ընդունեցաւ՝ որով քահանայապետն շնորհեր
եր իրեն իբրև նոր առհաւատչեայ մը անոր դաշ-
նակցութեանը և ունեցած սիրոյն որ առ Քրիս-
տոս։ Եղիսաբէթ չեր կրնար աւելի մեծարել
և պատուել այս սուրբ նշխարքը, քան թէ դնե-
լով զայն մարդկային հիգութեանց ապաստա-
նին մէջ, որոնց նուիրեր էր իւր մնացած կեան-
քը։ Երբոր հիւանդանոցին շինութիւնը լմն-
ցաւ, բազմաթիւ աղքատ հիւանդներ և խեղճ
որբատի որ գտաւ հոն դրաւ։ Յետոյ ամեն օր
հետն առած իւր երկու հաւատարիմ բարե-
կամներն և քոյրերն ի Քրիստոս, Կիւտա և Ի-
զանդրուտա, հոն կ'երթար, և երկար ժամերով
անոնց վերքերը կը լուար ու կը մաքրեր, և ա-
նոնց սահմանեալ դեղերը կը մատակարարեր. և
ամեն բանէ աւելի կը մխիթարեր զանոնք անուշ
ու սիրալիր խրատներով։ Եղիսաբէթ կը ջանար
իւրաքանչիւր ախտացեալին թէ՛ հոգևորական և
թէ մարմնաւոր հիւանդութեանց ծանրութիւնն
և տեսակը իմանալ։ Ոչ միայն կը մխիթարեր աղ-
քատները, հապա նաև անոնց աղախինը կ'ըն-
լար. և որ և իցէ գործ ոչ դարշելի ոչ անարգ
և ոչ անսիտան կ'երևնար իր աչքին, վասն զի
անոնցմէ ամեն մէկը իրեն համար մէյմէկ կեն-
դանի պատկերներ էին իւր հոգևոր երկնաւոր
փեսային։ Այն հիւանդները որ դժկամակու-
թիւն մը կամ արհամարհանք կը պատճառէին
դիմացինին, ամենէն առաջ անոնք իւր գթու-

թեան և խնամոց նպատակ կ'ը[illegible]ային և կ'ընդունէին անոր թագաւորական ձեռքերէն ամենէն աւելի անարգ և ցած խնամքը. շատ հեղ բժիշկներն անգամ կը փախչէին այդ զզուելի հիւանդներէն, մինչդեռ Եղիսաբեթ զանոնք գգուանօք կը սիրէր, և քաղցր ընտանութեամբ անոնց վէրքերն ու սոսկալի սպիները կը համբուրէր։

Ոչ ոք ի մարդկանէ երբէք այսպիսի հրաշալի յաղթանակ մը կանգնած է զգայութեանց դէմ մխիթարութեանը վրայ, և այսպիսի կերպով միացուած եռանդն և յարատևութիւնը աստուածային սիրոյն հրահանգացը մէջ։ Անիկը կը զարմանային երբ կը տեսնէին այն կեանքը զոր կամաւ ընտրեր էր թագաւորի օրիորդ մը որ հաղիւ քսանուերկու տարուան կար. և որուն նմանը և ոչ իսկ սրբոց վարուցը մէջ կը տեսնուէր։ Օր մը՝ դքսուհւոյն եկեղեցի երթալու ժամանակը, թշուառ և աղքատ մուրացկան մը ձամբուն վրայ պատահեցաւ, զոր իւր տունը տարաւ և շուտով մը անոր ձեռքերն ու ոտքերն լուաց։ Սակայն այն անգամ այս բանս այնպիսի զզուանք մը բերաւ Եղիսաբեթին՝ որ դող եկաւ վրան, բայց շուտով ինքզինքը յաղթելու համար՝ ըսաւ իր մարմնոյն. «Ո՜հ, գաւրէլի և անպիտան պարկ, այս բանս դքեզ կը գանեցրնէ։ բայց գիտցիր որ այս ջուրը սուրբ ընդելիք մըն է»։ և այս խօսքերն ըսելով խմեց այն ջուրը զոր գործածեր էր աղքատին ոտքերը լուալու. յետոյ ըսաւ. «Ո՜վ աստուած իմ, երբոր խաչիդ վրայ գամուեր էիր, ինչպէս խմեցիր այն քացախով լեղին, և ես ոչ երբէք արժանի եմ այս

պիսի աշնիւ ըմպելիքի մը. օգնէ ինծի որ լաւագոյն ըլլամ»։

Բորոտք՝ որ աւելի կերպով մը զգուելի սեպուեր են մարդուս աչքին՝ իրենց հիւանդութեան տարափոխիկ ըլլալուն պատճառաւ, եղիսաբեթ զանոնք աւելի կը սիրեր և աւելի կը խնամէր, կը լուար ու կը համբուրեր անոնց վերքերը. վարագոյրներ և ուրիշ պատուականներ կը կարդտեր, որպէս զի կարենայ աղքատներուն մարմինը սրբել և փաթթել երբ բաղնիքէն կ՚ելնէին։ Եղիսաբեթ անձամբ կը պատրաստեր անոնց անկողինը, կը պառկեցնէր և կը ծածկեր կրցածին չափ։ «Ո՛հ, որչափ երջանիկ էնք, ըսաւ օր մը իր աղախնեայցը, որ կը բնանք լուալ և հագուեցընել այսպէս մեր տէր Յիսուս Քրիստոսը»։ Որուն անունցմէ մէկը պատասխանեց. «Կարելի է, տիկին, որ քեզի հաճոյ անցնի այս քու բռնած նամբադ. բայց չեմ գիտեր թէ այս կեանքը արդեօք ամենուն ալ կրնայ յարմարիլ»։ Գոնարատ վարդապետը տեսնելով որ Եղիսաբեթին առ հիւանդս ցուցած ողորմութիւնն ու գութը չափազանց էր, արգիլեց զինքը որ ոչ դպչի և ոչ ալ պագնէ բորոտներուն և ուրիշ հիւանդաց վերքերը. վասն զի կը վախեր որ չըլլայ թէ անոնց ախտերն իրեն պլըշտրկին։ Բայց այս զգուշութիւնը իր նպատակին չհասաւ, որովհետև վերջն աստիճանի տրտմելով այդ արգելքին համար, և սրտին տագնապը և գութը սաստկանալով՝ զինքը անկողին ձգեցին։

Զէ թէ միայն իւր եղբարցը մարմնոյ ցաւերուն այս եռանդուն Քրիստոսի աշակերտը իր

գութն ու բարերարութիւնները կը ցուցներ, այլ և ամենեին աչքէն չէր ելներ ոչ անոնց հոգւոյն առողջութիւնը և ոչ ալ հոգեւորական դեղերը։ Խղճիւ կը հսկէր որ աղքատները կարելի եղածին չափ մկրտել տան իրենց ոգիները, և անստաժէտք խոստովանին ու ընդունին վերջի խորհուրդները, չէ թէ մահուան ժամանակնին՝ հապա հիւանդանոց մտնելնուն պէս։ Թէպէտև իւր օրինակը պէտք էր որ մեծ ազդեցութիւն ընէր իւր խօսակցութեանցը, սակայն Եղիսաբեթի յաճախ դէմ կը կենային այնպիսիներ՝ որոնք աղքատութեամբ անոր վշտերովը դառնացեր էին և կամ երկար ատեն եկեղեցւոյ մատուցած օգնութիւններէն հեռու՝ թըշուառաբար գաղջութեան մէջ կը գտնուէին։ Օր մը կոյր հիւանդ մը հիւանդանոց եկաւ, և խնդրեց որ զինքն ընդունին։ Նոյն ատեն Եղիսաբեթ ալ դրան առջև գտնուելով Գոնրատ վարդապետին հետ՝ դքսուհին աղքատին խեղճութիւնը տեսնելով՝ յանձն առաւ ուրախութեամբ որ այդ կոյրն ընդունին, բայց այս պայմանաւ որ նախ պիտի սկսէր անոր ներքին հիւանդութիւնը բժշկել ապաշխարութեան ատենին մտնելնալով խոստովանութեամբ։ Բայց կոյրը ցաւէն և այս յորդորանքներէն նեղանալով, սկսաւ երդուիլնալ և հայհոյել՝ այն բաները աւելորդապաշտութիւն սեպելով։ Եղիսաբեթ բարկացած՝ խստիւ յանդիմանեց զնա, անանկ որ շուտով զղջումի եկաւ ու Գոնրատ վարդապետին առջև ծնկան վրայ գալով՝ բարեպաշտութեամբ խոստովանեցաւ։

Դքսուհին բաւական չէր սեպեր իւր ողորմա-

ծութիւնն միայն հիւանդանոցին մէջ գործա-
ծել որ իւր սիրական բնակարանն էր, հապա
իւր աղախնեայցը հետ Մարպուրկի աղքատաց
տնակներն և անոր շրջակայքը եղող գիւղերը
այց կ'ելնէր, և նոյն ատենը տանել կու տար հի-
ւանդանոց միս, հաց, ալիւր և ուրիշ նիւթեր,
զորոնք անձամբ կը բաժնէր աղքատաց. սրտա-
շարժ կերպով կը մտնէր անոնց տխուր և սգալի
բնակարանաց մէջ և զգուշութեամբ կը դիտէր
անոնց զգեստներն և անկողինները, որպէս զի
կարենայ հոգալ անոնց պիտոյքը։ Դքսուհին
վաճառել կու տար ի ծածուկ իւր քովը մնա-
ցած ակունքն, մատանիները, դիպակէ քողերն
և ամենայն երկրաւոր զարդերը. և այն ստակով
աղքատաց օգնութեան կը հասնէր, և հոն ալ
փոթ ուներ ամենէն աւելի ընտանի ծառայու-
թիւններն ընել անոնց, և կը ջանար ամենէն
դոյգն փափաքնին ալ կատարել։ Ձմեռնային
ցուրտ և սառած օր մը, խեղճ հիւանդ մը ձուկ
ուտելու փափաք ունեցաւ. Եղիսաբեթ ալ մե-
կէն մերձակայ աղբիւրը գնաց, խնդրելով օգ-
նութիւն ատուածային նախախնամութենէն.
«Տէր Յիսուս Քրիստոս, ըսաւ, եթէ կ'ուզես՝
ձուկ տուր ինծի այսօր որ այդ աղքատին տա-
նիմ»։ Յետոյ աղբիւրէն ջուր առնելով՝ մեծ
ձուկ մը գտաւ, և կարգէ դուրս ուրախութեամբ
առնպարեց աղքատին տանիլ։

Երբոր իւր բարի գործոցը մէջ այնպիսի աղ-
քատներու կը հանդիպէր՝ որոնց հիգութիւնը,
տկարութիւնը կամ ցաւերը մանաւոր դութ
մը կ'ազդէին, կամ իրենց բարեպաշտութեամ-
բը՝ աւելի նուիրական կ'երևնային աչքին առ-

ջեր, Եղիսաբեթ զանոնք բերել կու տար չէ թէ միայն իւր հիւանդանոցը՝ հապա նաև իւր յատուկ բնակարանը. կը ջանար անոնց ծառայութիւն մը ընել, և իւր սեղանը նստեցընել կու տար։ Գոնարատ վարդապետն այս բանին համար սաստիկ յանդիմանեց զԵղիսաբեթ. իսկ դքսուհին պատասխանեց անոր. «Ո՛հ, չէ, սիրելի տերս, չէ՛. զանոնք ինծի թող, և յիշէ՛ իմ անցեալ կեանքս՝ որ զբաղեր էի աշխարհիս հարբուտութիւններովը. հիմա պէտք է ինծի որ շնորհեմ ըրած սխալանքներս, պէտք է որ կեանքս անցընեմ խոնարհաց հետ. և որովհետև անոնց ընկերութիւնը բաղմաթիւ հնարներ կը պարգևէ ինծի՝ թող ուրեմն որ վայելեմ»։

Յետոյ աղքատ, հօրին ու մօրմէն որբ մնացած տղայ մը տեսաւ, որ խեղ էր ի ծննդենէ, միակամի և հիւանդ, իրեն որդեգրեց և զգուշութեամբ խնամեց։ Այս երեսի վրայ ձգուած խեղճ արարածս Եղիսաբեթին քով մօրմէն աւելի գութ և խնամք գտաւ, վասն զի դքսուհին հիւանդին քով ամբողջ գիշերներ կ՚անցընէր, և ամենէն աւելի նողկալի և աղտեղի ծառայութիւններ կ՚ընէր, զանիկայ սիրելով և մխիթարելով գորովալից խօսքերով։ Մանուկը վախճանեցաւ, և Եղիսաբեթ անոր տեղը շուտով ուրիշ աղջիկ մ՚առաւ, որ բորոտութեամբ պրծգալի կերպարանք մ՚առեր էր, անանկ որ հիւանդանոցին մէջ ոչ ոք կը համարձակէր մօտենալ և ոչ ալ անոր երեսը նայիլ։ Իսկ Եղիսաբեթ ընդ հակառակն այն վայրկեանէն որ հիւանդ բորոտը տեսաւ, անոր քովն եկաւ բարեպաշտ մեծարանքով, կարծես թէ ինքն Քրիս-

տոմն էր, որ իրեն երևցած ըլլար՝ ցաւոց այս քո-
ղին տակ. իշխանուհին մեկէն ծնկան վրայ գա-
լով բորոտին առջև՝ անոր մուշտակներն ու գուբ-
պաները հանեց, թէպէտև տղան դէմ կը կե-
նար։ Յետոյ անոր վերքերը լուաց և մաքրեց և
սահմանեալ դեղերը մատակարարեց. թէ՛ ոտ-
քին և թէ ձեռքին եղունգները կտրեց. և այն-
պիսի սիրով և բարութեամբ խնամեց՝ որ շու-
տով թշուառ բորոտին վիճակը լաւագոյն եղաւ։
Վերջը իր տունը բերել տուաւ այն բորոտը, և
և սկսաւ անձամբ յարդարել անոր անկողինը.
երկար ժամեր կ՚անցընէր անոր քովը, յոռ կը
ջանար խեղճ բորոտին հետ խաղալով թէ՛ ցա-
ւերն և թէ թշուառութիւնը մոռցընել տալ,
և սփոփել զանիկայ քաղցր և սիրալիր խօսքե-
րով։ Սակայն Գոնբատ վարդապետն իր խոս-
տովանորդէն այն բռնած ընթացքն իմանա-
լով՝ հեռացուց անկից աղքատ բորոտը, վախե-
լով որ չըլլայ թէ անոր տարափոխիկ ախտն տա-
նայ։ Եղիսաբեթին այս չափազանց եռանդը ընկ-
ճելու համար այնպիսի խիստ ապաշխարանք մը
դրաւ վրան՝ որ յետոյ պարտը սեպեց քահանա-
յապետին յայտնել իր զղջումը։ Իսկ Եղիսա-
բեթ՝ որուն անխոնջ եռանդը բան մը չկար
որ կարենար լքուցանել, շուտով իր քոմն ա-
ռաւ ուրիշ տղայ մ՚ալ, որուն հիւանդութիւնը
բորոտութենէն աւելի նողկալի և աղտեղի էր.
զոր անտարբեր կը խնամէր. և այնպիսի ճարտա-
րութեամբ և փութառութեամբ անոր հետ կը
վարուէր, զոր միայն այս սրբազան դիտութիւ-
նը իրեն կրնար թելադրել. դեռ հին այն բո-
րոտը իր քովը պահեց մինչև անոր մահը։ Ա.յ-

պէս բորոտներն Եղիսաբէթին սիրոյն և գորովա-
նացը նպատակ եղեր էին միշտ, որոնցմէ ուրիշ-
ներն ընդհակառակն կը փախչին, գիտնալով որ
մարդկանց ամէն հիւանդութիւններէն աւելի
ահիկայ է որ մարդուս կեանքը շուտ շուտ կը
կարձեցնէ։ Գերմանիոյ Փրանկիկեանց առաջ-
նորդը՝ Եղբայր Գերարտ, որ Գոնրատ վարդա-
պետէն ետքը դքսուհւոյն բարեպաշտ և մտե-
ղիմ մտածմանցը խորհրդակիցն էր, օր մը գա-
լով Եղիսաբէթին այցելութեան, դքսուհին ել-
կայն բարակ անոր հետ սուրբ աղքատութեան
վրայ խօսելէն ետքը, աղաղակեց. «Ո՜հ, հայր
իմ, այն՝ որ բոլոր սրտովս կը փափաքէի՝ ուրիշ
բան չէր բայց եթէ ինձի հետ յամենայնի իբ-
րև հասարակ բորոտի մը պէս ամենքը վարուին.
կ՚ուզէի որ ինձի ալ ընեն ինչ որ կ՚ընեն այս
աղքատ և թշուառ մարդկանց. ինձի ալ յարդ-
էն և խոտէ փոքրիկ հիւղ մը տան և դրան առ-
ջև լաթ մը կախեն և գանձանակ մը դնեն, որ-
պէս զի ճամբորդներն քիչ մը ողորմութիւն ձը-
գեն»։ Այս խօսքերուն վրայ այլայլութիւն մը
եկաւ վրան. և խելքը միտքը երկինքը վերանա-
լով՝ սկսաւ երկնայնոց հետ սրբազան երգեր եր-
գել՝ զոր մեծաւորն ալ՝ որ իւր բազկացը մէջ
բռներ էր զանիկայ՝ լսեց. յետոյ խելքը գլուխն
եկաւ։ Թոյլ տուի մեզի որ սրբուհւոյն Եղիսա-
բեթի այս խօսքը բացատրելու համար բերենք
հոս մեր պատմութեանը մէջ քանի մը մանր-
պատում պարագաներ թէ ինչ կերպով բորոտ-
ներն և թշուառները ուղղափառ դարերուն մէջ
կը նայուէին։

Քրիստոնէութեան առջի դարերուն մէջ՝ ե-

կեղեցին այնպիսի մսիթարութիւններ կը հնորհէր մարմնաւոր հիւանդութեանց՝ զոր հաւատք և աստուածպաշտութիւն միայն կրնային ընծայել քրիստոնէից. այսինքն թէ չկարենալով նիւթական դեղերով այս հիւանդութեանց առջև առնուլ, այն խեղճ աղաղակող բարոյապէս սրբութեան պատիւ մը կ'ընծայէին, անանկ որ այն միջոցին բորոտը նուիրական բան մը սեպուեր էր եկեղեցւոյ և հաւատացելոց առջև, պարզև աստուծոյ և մանաւոր նշան մը աստուածային սիրոյ։ Նոյն ատենուան պատմութեանց մէջ կը կարդանք թէ Գուլիելմոս աշխարհակալին ժամանակակից կարիճ իշխաններէն մէկը կրնաւոր ըլլալով, խոնարհութեամբ խնդրեց յաստուծոյ՝ իբրև առանձին հնորհք մը՝ որ անբժշկելի բորոտութեամբ զինքը հիւանդացընէ, որպէս զի անանկով կարենայ իր մեղքերը քաւել. և աստուած ալ մտիկ ըրաւ իրեն աղաչանքին ու զրկեց։ Երբ արդար և ողորմած աստուծոյ բարձր բազուկը կը զարներ քրիստոնեի մը, այնպիսի կերպով որ մարդուս խելքը չհասնիր, այն վայրկենին քրիստոնէին հիւանդութիւնը մեծարանաց նիւթ մը կ'ըլլար ուրիշ հաւատացելոց առջև։ Բորոտները ստիպուեր էին իրենց հիւանդութեանցը համար ամենին զատուիլ և հեռանալ. բայց իրենց եղբարցը սէրն ու աղօթքը իրենցմէ ամենևին չէր բաժնուեր. ու երբ նոյն հիւանդութեամբ ախտացեալ մը կը ստիպուէին իրենց մէջէն դուրս հանել՝ կարգէ դուրս սրտաշարժ աղօթքներ կ'ընէին անոնց վրայ։ Հիւանդը մէջտեղ բերել կու տային, ու իրեն առջևը ննջեցելոց պա-

տարագ մը մատուցանելէն ետքը՝ կ'օրհնէին այն ամէն կարգ կարասիքը զոր պիտի գործածէր իր առանձնութեանը ժամանակ. ու հոն ներկայ եղողներն ամէնքն ալ իրեն ողջմութիւն տալէն ետքը, քահանաները իրենց հետն առած բոլոր հաւատացեալց բազմութիւնը՝ կը տանէին զինքը մատնաւոր տնակի մը մէջ ու զայն իրեն բնակութիւն կը սահմանէին։ Ա. յս տնակին վրայ քահանայն գերեզմանի հող կը ցանէր ու կ'ըսէր. «Ա. յսպէս մեռեալդ աշխարհի՝ կենդանի լեցիս առ աստուած»։ ու ետքը միսիթարական խօսքերով կը յիշեցնէր իրեն աղքայութեան փառքը և անանց ուրախութիւնը. և եթէ առ այժմ բաժնուեր է ի հաւատացելոց, այլ անոնց աղօթքը միշտ իրեն հետն է։ Փայտէ խաչ մը անոր տնակին դրանը առջև տնկէին ու գանձանակ մ'այլ կախէին ետքը, անցնող դարձողին ողջմութիւն ընդունելու համար, ամէնքն ալ կ'երլէին կ'երթային։ Մինչև զատկի օրերը բորոտները կընային Քրիստոսի պէս երլել իրենց հիւղերէն դուրս ու քանի մ'օր քաղաքաց և գեղերու մէջ ժուռ գալ, որպէս զի քրիստոնէից ուրախութեանցը մասնակից ըլլան։

Սուրբ Եկեղեցւոյ միտքը շատ լաւ հասկցեր էին իր հարազատ որդիքը. անոր համար ամէնէն աւելի քաղցր ու միսիթարական տուտնները կու տային բորոտներուն, կը կոչէին զիրենք աստուծոյ հիւանդներ, աստուծոյ սիրած աղքատներ, բարի մարդիկներ։ Կ'ախորժէին մինչև քերթին բերել թէ Հոգին սուրբ իբրև բորոտ մը նկարագրեր է զՅիսուս Քրիստոս. «Համարեցաք զնա իբրև զբորոտ», երբոր սրբուհի Մա-

ըիսմ՝ Մագդաղենացի Եկաւ օծելու անոր ոտ-
քերը. նամանաւէս կը յիշէին թէ իրեն սիրա-
կան անձանց նշան ընտրեր էր բորոտ Ղազարո-
սը. և թէ ինքն ալ շատ անգամ նոյն կերպա-
րանքով երևցեր էր երկրիս վրայ եղած սրբոցը։
Այսկէ զատ Երուսաղէմ եղած պանդխտու-
թեանց և խաչակրութիւններու պատճառաւ՝
բորոտութիւնը տարածուեր էր Եւրոպայի մէջ.
և այս ծագումը նուիրական յատկութիւն մը
տուեր էր այն հիւանդութեան։ Այսպէտաց կար-
գը սրբոյն Ղազարու անուանքը հաստատուեր
էր յԵրուսաղէմ՝ որոց զբաղմունքն էր զբորոտ-
ները խնամել. և իրենց գլխաւորը բորոտ մին
էր. նոյն վախճանաւ նաև նոյն քաղաքին մէջ
կանանց ընկերութիւն մ՚ալ հաստատուեր էր
սրբոյն Յովհաննու Ողորմածին հիւրանոցին մէջ։
Երբոր Լինգանի Հուգոն եպիսկոպոսը սուրբ
պատարագ կը մատուցանէր՝ խաղաղութեան ող-
ջոյնն ամենէն առաջ բորոտներուն կու տար. և
երբ իւր ատենադպիրը կը յիշեցնէր իրեն թէ
սուրբն Մարտինոս բորոտները կը բժշկէր անոնց
հետ գրկախառնելով, պատասխան տուաւ ե-
պիսկոպոսը. «Ա՚յո՛, սրբոյն Մարտինոսի համ-
բաւը բորոտներու մարմինը կը բժշկէր. իսկ
զիս, բորոտներուն համբաւն է որ կը բժշկէ իմ
հոգիս»։ Թագաւորաց և երկրաւոր իշխանաց
մէջ միայն Եղեսաբեթ չէր որ կը մեծարէր զՔ՚ս
բորոտներու վրայ. այլ նաև ուրիշ անուանի և
զօրաւոր իշխաններ ալ իրենց արքունական թա-
գին պարտք մը սեպեր էին այս բանս։ Գաղղիոյ
Թագաւորը Ռոպերդ՝ յաձախ այցելութիւն կը-
նէր անոնց հիւանդանոցներուն։ Սուրբն Լուդո-

վիկոս եղբայրական գութ և սէր կը ցուցնէր անոնց. պահոց օրերը զանոնք տեսնելու կ'երթար ու կը համբուրէր անոնց վէրքերը։ Նոյնը կ'ընէր նաև Հէնրիկոս Գ. Անգղեոյ թագաւորը։ Ֆիանտրացի Սիպիլ կոմսուհին, որ իրեն Թէոդորիկ ամուսնոյն հետ 1156ին Երուսաղէմ գաղթեր էր, երբոր կոմսը անհաւատից դէմ պատերազմի գացեր էր, ինքը սրբոյն Յովհաննու Ողջոյնածին հիւրանոցին մէջ բորոտները կը խնամէր։ Օր մը երբոր այս թշուառներուն վէրքերը կը լուար, ինքն ալ Եղիսաբեթի պէս այն անախորժ գործոյն զզուանքն խմացաւ. բայց մէկէն ի մէկ ինքզինքը պատժելու համար խմեց այն գործածած ջուրը։ Եւ երբ իւր ամուսինը Պաղեստինէն եկաւ գնաց, ինքը հրաման ուզեց իրմէ որ հոն մնայ, որպէս զի մնացած կեանքը բորոտներու ծառայութեանը նուիրէ. ու իր եղբայրն ալ, որ Երուսաղէմի թագաւոր էր՝ իր կողմանէ նոյն աղաչանքն ըրաւ իր քրոջը համար. կոմսը երկար ատեն դէմ կեցաւ ու չհամոզուեցաւ բաժնուիլ իր կնոջմէն, մինչև որ իրեն աներձաւ գէն՝ իրրև ի վարձ իրեն զահին՝ գերագոյն նշանը մ'ընդունեցաւ Յիսուսի Փրկչին արեան մէկ կաթիլը, զոր Ժողովեց Յովսէփ արիմաթացին զինքը խաչէն վար առնելու ժամանակ. ու դարձաւ միայնակ իւր հայրենիքը հետն ունենալով այն նուիրական գանձը, զոր դրաւ Պուժ քաղաքին մէջ, և բարեպաշտ ժողովուրդը մեծ զարմանքով և յարգութեամբ լսեց թէ ինչպէս իրենց կոմսը վաճառեր էր Քրիստոսի և աղքատաց՝ իւր կինը, և փոխանակ անոր՝ իրենց աստուծոյն արիւնը բերեր էր։

Բայց ամենէն աւելի միջին դարուն սուրբերը գերագոյն եռանդն և սէր յայտնեցին բորոտաց։ Սրբուհի Կատարինէ սենացւոյն ձեռքերը բորոտեցան խեղճ և պառաւ բորոտ կին մը խնամելով, զոր ուզեց անձամբ թաղել, և երբ ամէն բան ընցուց, մէկէն ի մէկ իւր ձեռքերը ձեփ ձերմակ դարձան նոր ծնած տղու մը ձեռքերու նման, և պայծառ լոյս մը ծագեցաւ այն գարշելի և նողկալի տեղերէն։ Սուրբն Փրանկիսկոս ասսիզացի և սրբուհի Գլարա իւր աղնուական և հաւատարիմ ընկերակիցը և ուրիշ սուրբեր մեծ հաճոյք կը զգային բորոտներու խոնարհ ծառայութիւններ մատուցանելէն, և յաճախ անոնց աղաչանքովը՝ բորոտները կատարելապէս մէկէն ի մէկ կը բժշկուէին։

Այս փառաւոր ընկերութեան մէջ Եղիսաբեթ արդէն իւր բնակութիւնը ընտրեր էր, իւր սրտին անկուն բերմանքը առ աստուած, զոր միշտ կը տեսնէր այս աղքատաց վրայ։ Բայց ըսպասելով որ կարենայ ճաշակել անոնց հետ երկնային յաւիտենական ուրախութիւնները բան մը չէր բաւեր երկրիս վրայ որ կարենար հանդարտել այն իրեն գթալիր եռանդն, որ իւր սիրտը անհանգիստ կ'ընէր, և ոչ ալ բժշկել իւր հոգին որ ցաւոց մէջ էր քանի որ իւր եղբարցը թշուառութիւնները կը տեսնէր։

ԻԵ

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ չուզեց նորէն իւր հօրն սրքունիքը դառնալ, որպէս զի աւելի ապահով կերպով կարենայ մնալ յերկինս։

Երբոր Հունգարիոյ Թագաւորը, այս խեղճ հիւանդապահ Եղիսաբեթին հարուստ և զօրաւոր հայրը, իմացաւ Հունգարացի պանդուխտներէն, որոնք Լա-Լա-Շաբէլ քաղաքը և Հռենոս գետին ափունքը եղող ուրիշ ուխտաւորները կ'երթային, թէ Եղիսաբեթ իւր դուստրը երեսի վրայ ձգուեր, խեղճ և աղքատ վիճակի մէջ կը գտնուէր, լսելով միանգամայն թէ սրչափ տժգոհ էին իրենք՝ որ իրենց իշխանուհին այսպէս անպատիւ և անարքունիք կ'ապրէր ողորմելի աղքատութեան մէջ ընկղմած, վերջին աստիճանի վշտացաւ, և սիրան այնչափ տակն ու վրայ եղաւ որ սկսաւ դառնապէս արտասուել։ Վերջը իւր խորհրդականացը գանգատեցաւ այն

նախատանաց համար, զոր կը ցուցընեին իւր դատերը, և որոշեց պատգամաւոր մը ղրկել՝ որ իւր քովը բերէն զՆղիսաբեթ, և այս պաշտօնը Պանֆիլ կոմսին յանձնեց։ Դեսպանը գընաց ի Դուբլինկիա բաղմաթիւ ասպետաց և պաշտօնակալաց հետ. նախ եկաւ ի Վարդպուրկ՝ որպէս զի Հենրիկոս իշխանին հետ տեսութիւն ընէ, և տեղեկութիւն ուղէ դքսուհւոյն վիճակին վրայօք։ Ան ալ պատասխան տուաւ պատգամաւորին. «Բոլոր բոլորովին յիմարեր է, բոլոր աշխարհք գիտէ, դուն ալ հիմա աչքովդ պիտի տեսնես». յետոյ դեսպանին պատմեց թէ ինչ կերպով Եղիսաբեթ առանձնացած ի Մարպուրկ՝ կարգէ դուրս գործողութիւններ կ՚ընէր, մինակ ապրելով մուրացկանաց և բորոտաց հետ. և ուրիշ ասուց նման դէպքերը տեղն ի տեղը պատմէց։ Այս ալ ըսելով թէ Եղիսաբեթին աղքատութիւնը բոլորովին կասմաւոր էր, և թէ իր կողմանէ երաշխաւորութիւն տուեր էր որ կարենայ ստանալ ինչ որ կը փափաքի։ Կոմսը շատ զարմացած, Ճամբայ ելաւ Մարպուրկ երթալու, ուր հասնելով՝ հարցուց պանդոկապետին՝ որուն քովը իջևաներ էր, թէ ինչպէս էր մնածել այն կնոջ համար որ Եղիսաբեթ կը կոչուէր, և Հունգարիայէն այն երկիրը եկեր էր. ինչու համար խեղճութեամբ կ՚ապրէր, և ինչու թողուցեր էր իւր ամուսնոյն գերդաստանին իշխանները. և թէ այս բանիս արդեօք մէկ պատճառ մը կայ, որով դքսուհին կը ստիպուէր անարքունիք, անպատիւ և այսպէս աղքատօրէն ապրիլ։ Պանդոկապետը պատասխան տուաւ. «Խիստ բարեպաշտ և լի առաքի-

նութեամբ տիկին մին է. և անանկ հարուստ՝ որ անկէ աւելի չկրնար մէկը փափաքիլ. վասն զի այս քաղաքն և բոլոր շրջակայքը՝ որ պզտիկ բան մը չէ, իրեն են։ Եթէ ինքն ուզած ըլլար ամուսնանալ՝ շատ իշխանները կրնար գտնել աւ նոնց հետ պսակուելու. բայց իւր մեծ խոնարհութեանը համար կ'ուզէ այս կերպով ապրիլ. ոչերբէք քաղքին տներուն մէջ կ'ուզէ բնակիլ. որպէս զի հիւանդանոցին աւելի մօտ ըլլայ, զոր ինքնին շինել տուեր է ի սփոփումն աղքատաց. երկրաւոր ամենայն ստացուածք և Հոխութիւն իր աչքին դիմաց բան մը չեն երևիր։ Աստուած այս բարեպաշտ և սուրբ տիկինը զրկելով մեզի մեծ հնարքը պարգևեց. որոնք որ իրեն կ'երթան՝ իրենց փրկութեանը համար մեծ օգուտ կը քաղեն. ամենեին իւր ողորմութեան գործերէն չդադրիր. ամենաքաղցր է, լի գթութեամբ և մաքուր, բայց ամեն բանէ աւելի խոնարհ»։ Կոմ սը պանդոկապետին հետ գնաց զԵղիսաբեթ գտնելու. նախ պանդոկապետը ներս մտնելով՝ դբսուհոյն ըսաւ. «Տիկին, ահա բարեկամներդ եկան որ զքեզ կը փնտռեն, և կարծեմ թէ կը փափաքին քեզի հետ խօսելու»։ Պատգամաւորն անոր ետևէն մտակին մէջ մտնելով, և տեսնելով իւր թագաւորին դուստրը որ բուրդ մանելու զբաղեր էր, այնչափ զարմացաւ այն տեսարանին որ երբեք խօսք հանեց, և դառնապէս սկսաւ արտասուել։ Յետոյ աղաղակեց. «Ո՛վ տեսեր է թագաւորի մը դուստր որ բուրդ կը մանէ»։ վերջէն քովը նստաւ և անոր ըսաւ, թէ ինչպէս իւր թագաւոր հայրը զրկեր էր զինքը ի Դուրինկիա, որպէս զի Եղիսաբեթ իշխանու-

հին վիճառէ և ծնած երկիրը նորէն դարձընէ։ Խոստացաւ նաև դքսուհւոյն թէ շատ պատիւ պիտի մատուցանէն իրեն ի Հունգարիա, և թաղաւորը միշտ իւր սիրելի դուստրը պիտի սեպէ զինքը։ Սակայն Եղիսաբեթի մերժեց այս ամէն աղաչանքները, ու ըսաւ. «Ձիս ով կը կարծես. աղքատ մեղաւոր մէն եմ որ ոչ երբէք ինչպէս որ պէտք է հնազանդեր եմ աստուծոյս օրինացը»։ «Ո՞վ գրեզ այս ողորմելի վիճակին հասուց»։ կոմսը Եղիսաբեթին հարցուց։ «Ոչ ոք, պատասխանեց դքսուհին. միայն իմ երկնաւոր Հօրս հարուստ և ազնուական Որդին, որ ինծի ցրցուց իւր օրինակովն արհամարհել հարստութիւնը և աղքատութիւնը սիրել ամէն երկրաւոր թագաւորութիւններէն վեր»։ Ան ատեն պատմեց իւր բոլոր կեանքը այրիութենէն սկսեալ, և բոլոր իւր մտածութիւնները՝ ապագայ կենացը համար. ապահովցնելով զանիկայ որ բնաւ մէկու մը վրայ դանդատ չունէր և բան մը չէր պակսեր իրեն, և կատարելապէս երջանիկ էր այն հիւղին մէջ։ Սակայն կոմսը կը ստիպէր զինքն ըսելով. «Ե՛կ ինծի հետ, ազնուական թագուհի, եկ երթանք սիրելի հօրդ քով, եկ առնելու անոր արքունիքը և քու ժառանգութիւնդ»։ «Կը յուսամ, պատասխանեց դքսուհին, որ արդէն ստացեր եմ իմ Հօրս ժառանգութիւնը, այսինքն՝ մեր սիրելի տիրոջ Յիսուսի Քրիստոսի յաւիտենական գթութիւնը»։ Պատգամաւորը շատ աղաչեց որ այսպիսի արհամարհական և իւր աստիճանին անյարմար և անպատիւ կեանք մ՚անցընելով՝ իւր թագաւոր հօրը տհաճութեան պատճառ չըլլայ, և ոչ ալ

տրտմեցրեն զինքը չընդունելով իւր հրաւէրը։ Եղիսաբեթ պատասխանեց կոմսին. «Ըսէ իմ թագաւոր հօրս որ ես աւելի երջանիկ եմ այս արհամարհ կենացս մէջ, քան թէ ինքն իւր արքայական ճոխութեանցը մէջ. և փոխանակ տրտմութեան՝ պէտք է որ ուրախանայ, վասն զի արդէն աղջիկ մ՚ունի երկնից և երկրի գեղագոյն թագաւորին ծառայութեանը մէջ։ Աշխարհս մէջ, վրայ բերաւ Եղիսաբեթի կոմսին, աղօթքէն զատ ուրիշ բան չեմ ուզեր իրմէ. ըսէ՛ իրեն որ ինծի համար աղօթէ, և աղօթք ընեցուցայ, և ես ալ իրեն համար կ՚աղօթեմ, որչափ որ ապրիմ»։

Կոմսը տեսնելով որ բոլոր ջանքը պարապը գնաց, լի տրտմութեամբ և սաստիկ ցաւով հրաժարեցաւ Եղիսաբեթէն. իսկ Հունգարիոյ թագաւորաց գուստրը ընդհակառակն կարգէ դուրս երջանիկ՝ բոլոր նորէն ձեռքն առաւ, ուսկսաւ միւսանգամ բուրդ մանել, որպէս զի աւելի որոշակի հաստատէ եկեղեցւոյ կողմանէ նուիրական գերագոյն խօսքերն անոնց՝ որ իրեն պէս հրաժարեր են ամէն բանէ Քրիստոսի համար. «Արհամարհեր եմ երկրաւոր թագաւորութիւն, ամենայն ճոխութիւն և փառաւորութիւն աշխարհի՝ իմ տիրոջս Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար. տեսայ զՔրիստոս, զանիկայ սիրեցի, անոր ապաւինեցայ և զանիկայ ամէն բանէ աւելի վեր սեպեցի»։

ԻԶ.

Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ աղքատաց բաժնեց իւր ամենայն օժիտը.

Որչափ որ ալ համոզուած բլլար Հենրիկոս իշխանն իւր հարսին յիմարութեանը վրայ, սակայն հարկ սեպեց կատարելու այն խոստմունքները, զոր անոր խոստացեր էր. մեկալ կողմանէ ալ քահանայապետին երկիւղը, որ Եղիսաբեթին պաշտպանութիւնը իւր վրայ առեր էր, և Գոնրատ վարդապետին ազդեցութիւնը՝ որ այնչափ մեծ էր իրեն վրայ, որչափ որ էր Լուդովիկոս եղբօրը վրայ, ատոնք մեծապէս կը վախցնէին զինքը հաւատարիմ մնալու իր խոստմանը վրայ։ Ուստի զրկեց իշխանուհւոյն հինգ հարիւր արծրթէ դրամ՝ որ իրեն խոստացեր էր Վարդպուրկէն դեռ չմեկնած, որպէս զի ի գործ դնէ իւր նոր բնակութեանը մէջ ինորդութեան ծախքին համար։ Այս հարստութեան առա-

տութիւնը յարմար առիթ երևցաւ ողջմտաքաշխ իշխանուհւոյն կատարելու համար այն խորհուրդը՝ զոր երկար ատենէ ի վեր կը մտածէր. այս ինքն կատարելապէս իւր վրայէն ձգէ ամենայն ստացուածոց բեռը, որոնց ժառանգութիւնը ստիպուեր էր իր վրայ պահել թէ պէտև առանց վայելելու անոնց պտուղը։ Ուստի ժողվեց այն ամէն ստացուածքն որ իրեն օժիտն էին, և զորոնք ստիպուեր էր Հենրիկոս իրեն դարձընել, և որոնց բոլոր գումարն եղաւ երկու հազար արծրթեթ դահեկան, որ այն ատենուան համար շատ բան էր։ «Այսպէս կ'ուզէր, կ'ըսէ իրեն վարքը գրող բարեպաշտ պատմագիր մը, իրեն հարստութեանցը մարդկային կենաց սակաւատևութեանը համեմատ դիրք մը տալ, որ կարենայ աւելի ապահով կերպով առաջնորդել զինքը յաւիտենական կենաց անշարժ երջանկութեանը»։ Այնուհետև տուաւ ամէն ակունքը և այն ամէն զարդերը, որ դեռ իրեն քովը մնացեր էին. և զորոնք իւր ծնողքը տուեր էին իրեն Հունգարիայէն երթալու ատեն. որոնց մէջ կային ոսկիէ և արծրթէ անօթներ, ոսկիէ բանուած դիպակներ, և ծանր արժէք ունեցող ակունքներով զարդարուած այլ և այլ նիւթեր։ Այս վանականներն առաջ եկած ամէն ստակը՝ բաժնուեցաւ իրեն ձեռքին աղքատներուն այլ և այլ անդամ։ բայց այնպիսի առատութեամբ որ սկսան զինքը նախատել շատերը որոնք պէտք չունէին իրեն օգնութեանը. համարձակ կերպով կը նախատէին զինքը երբև շրայլ, վատնող և յիմար կին մը։ Բայց ինքը ամենևին չէր շարժեր այս խօսքերէն, մնաւանդ կը համա-

րեր թէ այսպէս արժան կերպով կը վաստրկեր իւր հոգւոյն յաւիտենական փրկութիւնը։ Աստուծոյ նուիրելով իրեն կորստական հարստութիւնը։ Երբոր ընդունեցաւ այս հինգ հարիւր արծրիթէ դահեկանները, զոր Հենրիկոս դուքսը իրեն զրկեր էր, միտքը դրաւ մէկէն ի մէկ բաժնել զայն աղքատաց մէկ անգամով մի և նոյն օրուան մէջ. անոր համար ամէն տեղ Մարպուրկի շրջակայքը ինչուան քսան և հինգ մղոն տեղ խնայրնեալ տուաւ որ սահմանեալ օրը Վերտա գեղին մօտ դաշտին մէջ ժողովին ամէն աղքատները, այն գեղը յորում ինքն ալ անցուցեր էր իրեն կամաւոր աղքատութեան առաջին տարիները։ Որոշեալ օրը հրապարակին մէջ տեմնուեցան հաղարաւոր մուրացիկք, կոյրեր, հաշմեր, խեղեր, տկարներ և աղքատներ երկու սեռէ. և անոնցմէ զատ բազմութիւն ժողովուրդ որ կը ցանկային ներկայ գտնուիլ այն նոր տեսարանին։ Այս բազմութեան կարգով կանոնով և միանգամայն արդարութեամբ բաժնելու համար ողորմութիւնը՝ դքսուհին չափաւոր թուով ասպետներ և զօրաւոր ծառաներ ընտրեց. պատուիրելով անոնց որ իւրաքանչիւր աղքատ իր տեղէն չշարժի. վասն զի կը վախեր որ չըլլայ թէ անոնցմէ մէկը յարմար միջոց գտնելով՝ երկու անգամ ողորմութիւն ընդունի, և անանկով իւր ընկերացը ինաս ընէ։ Ուստի իշխանուհին ապրսպրեց թէ ով որ այս արգելքին չհնազանդիր, մէկէն ի մէկ անոր մազերը պիտի կտրուին։ Օրիորդ մը, Հիլտեկոնտէ անուն, որ նշանաւոր էր իւր գեղեցիկ մազերովը, երբ հեռացաւ այն բազմութենէն որպէս զի

երթայ իւր հիւանդ քոյրը խնամէ, կտրեցին անոր գեղեցիկ մազերը որ ուսոյը վրայ կը ծաւծանէին՝ Մարպուրգ քաղաքին օրիորդաց սովորութեանը համեմատ. օրիորդը տեսնելով իրեն գլխուն եկածը՝ սկսաւ արտասուել և բարձր ձայնով իւր անմեղութիւնը յայտնել ամենուն դիմաց։ Ա.յն ատեն առին զինքը դքսուհւոյն առջևը բերին, որ անոր գեղեցիկ մազերուն կորուստը հնորհաւորելէն ետքը, հարցուց եթէ արդեօք ինչ մտքէն անցեր էր լաւագոյն կեանք մը անցնելու. որովհետև ալ անկէց ետքը չէր կրնար պարուց և աշխարհային ուրախութեանց ներկայ գտնուիլ։ «Երկար ատենէ ի վեր, պատասխանեց Հիլտեկոնտէ, ինքզինքս աստուծոյ կը նուիրեմ հաւատարոյց զգեստը հագնելով եթէ ինձի այնչափ դժուարին երևցած չըլլար իմ գեղեցիկ մազերուս զոհը»։ Ա.յս որ լսեց Եղիսաբեթ լուրախութեամբ աղաղակեց. «Շատ աւելի երջանիկ եմ որ քու մազերդ կտրեցուն, և այն երջանկութիւնը պիտի չունենայի եթէ իմ որդիս Հռովմայեցւոյ կայսր ընտրուած ըլլար»։ Յետոյ այն խեղճ օրիորդը իւր քովն առաւ, և անիկայ հնազանդեցաւ այն ազգարարութեանը, զոր նոյն օրը ակամայ ընդուներ էր. և ինքզինքը նուիրեց ի ծառայութիւն աստուծոյ և աղքատաց՝ դքսուհւոյն շինել տուած հիւանդանոցին մէջ։

Ողորմութեան բաժնուիլը շատ կարգաւորեալ առաջ կ'երթայր բոլոր այն բազմութեանը մէջ, այն ապահով և հաւատարիմ մարդկանց ձեռքովը՝ որոնք Եղիսաբեթ ընտրեր էր այս պաշտամանս համար։ Ինքն ալ անձամբ ներ-

կայ կը գտնուէր այն հանդիսին, մէկ կարգէն միւս կարգը կ՚անցնէր. և ինչպէս Յիսուս Քրիստոս մէջքը լաթ մը կապած ծառայեց իւր աշակերտացը, այնպէս ինքն ալ այն թշուառ աղքատաց կը ծառայէր։ Դիւրահին կը թափառէր այս ընդարձակ բազմութեանը մէջ, բոլորովին ուրախ և երջանիկ այն բարեբաստութեան համար, որուն ինքը պատճառ եղեր էր. դէմքը պայծառ և հանդարտ, ուրախութիւնը սրտին մէջ զեղուն, և շրթանցը վրայ քաղցր և սիրալիր խօսքեր, զորոնք կ՚ուղղէր մանաւանդ այն օտար թշուառաց՝ զորոնք առաջին անգամ կը տեսնէր։ Իւր կարեկցութեանը հետ քաղցր ուրախութիւն մը կը խառնէր, և երկնային պարզութիւն մը՝ իւր անսահման առատաձեռնութեանը մէջ. ամեն քայլին նոր մխիթարութիւններ կը գտնէր, նորանոր թշուառութեանց համար։ Վերջապէս ինքզինքը ստուգիւ այն արքունեաց մէջ կը կարծէր՝ որ միանակ իրեն հաճոյական էր. իրաւցընէ այն օրը իւր գթութեանքը, հոն իւր աղքատ բանակին մէջ իբրև զօրաւոր տիրապետ մը կ՚երևէր իւր գանձուցը վրայ. և թեպետև խեղճ զգեստ մը հագեր էր, սակայն անով ալ նոր զարմանք կը պատճառէր այն աղքատաց շլացեալ աչքերուն զոր կը սփոփէր. երևցաւ լի պայծառութեամբ իբրև արեգակն, և ծածկուած ձեռն պէս սպիտակ զգեստներով։

Հինգ հարիւր արծրութեան դրամները դեռ իրենց չեղած բոլորն ալ թշուառաց բաժնուեցաւ, և պայծառ լուսինը երկնքին երեսը բարձրանալով, աղքատները ճամբայ ելան իրենց այլ և այլ բնակարաններն երթալու. բայց հի-

ւանդ կամ տկար եղողներէն շատերը չկրցան անմիջապէս մեկնիլ, և որոշեցին հոն հիւանդաՀոցին այլ և այլ անկիւնները և մնատուր չէնքերուն մէջ այն գիշերն անցընել։ Եղիսաբեթ տեսաւ զանոնք հիւանդանոցը մնալու ժամանակ, և միշտ վառուած անսպառ կարեկցութեամբ, շուտ մը բաւ իւր աղախնեայցը. «Ամենէն տկարները հոս մնացեր են, քիչ մըն ալ բան տանք անոնց». այս խօսքին վրայ իւրաքանչիւր աղքատին մէջ մէջ դրամ տուաւ, և յուզեց որ այն փոքրիկ տղաքը որ հոն անոնց մէջն էին՝ ուրիշներէն քիչ ստակ ընդունին։ Յետոյ շատ մը հոց բերել տալով՝ բոլորն ալ աղքատաց բաժնեց։ «Վերջապէս, ըսաւ, կ'ուզեմ այս աղքատ մարդկանց կատարեալ հանդէս մը ընել տալ. ուստի թող կրակ վառէն»։ Եղիսաբեթին հրամանները շուտով կատարուեցան. մեծ կրակ մը վառեցին ամէն տեղ ուր որ աղքատք պառկեր էին, և անոնց ձեռուընէն ու ոտուընները լուացին ու օծեցին։ Աղքատները տեսնելով որ իրենց հետ այսպէս աղէկ կը վարուին, և այնչափ պատիւ կ'ընեն, սկսան բարձր ձայնով երգել և ուրախանալ։ Եղիսաբեթ անոնց երգերուն ձայները լսելով իւր բնակարանէն, գորովալից և փափուկ սիրտը այնչափ տաքն ու վրայ եղաւ որ մէկէն ի մէկ աղաղակեց ի ուրախութեամբ. «Ես արդէն իսկ ձեզի ըսեր էի, թէ պէտք է կարելի եղածին չափ երջանիկ ընել զմարդիկ». և շուտով դուրս ելաւ որպէս զի անոնց ուրախութեանը մասնակից ըլլայ։

Այսպէս գիտցար դու և իմացար, ով գորովալից սուրբ հոգի, այն լի ուրախութեամբ

զուրիչն երջանիկ ընելու գաղանիքը. դուն որ այնչափ խիստ և անգութ էիր քու մարմնոյդ, տեսար վերջապէս այս քաղցր խորհրդոյն կատարածը։ Ա.յն երկրաւոր երջանկութիւնը զոր բոլորովին ուրացեր և մերժեր էիր կեանքէդ՝ գիտցար փնտռել և ձեռք բերել վերհանձն յարատևութեամբ աղքատ եղբարցդ համար։ Ո՛հ, որչափ երջանիկ ենք քանի որ կը մտածենք թէ յերկինս՝ ուր հիմա կը քաղես այդ եռանդուն գթութեանդ յաւիտենական վարձքը, հոգ ալ դարձեալ հաւատարիմ ես այն խնամքին որով լեցուեր էր սիրտդ այս երկրիս վրայ եղած աստենդ. և որչափ մխիթարութիւն է մեզի գիտնալը թէ այն աղքատները՝ որ իրենց տրտմութեանը և երկրաւոր կարօտութեանը մէջ մեզի կը դիմեն, չես մոռնար զանոնք քու անսպառ գթութեամբդ, մանաւանդ թէ կ'աւելցնես զորութիւնդ և եռանդդ, որպէս զի հաղորդ ընես զանոնք ալ քու երջանիկ անմահութեանդ։

Իվ.

Ինչպէս սրբուհին Եղիսաբէթ կը սորվէր Գոնբաս վարդապետէն ամէն բանի մէջ խորտակել իւր կամքը.

Կրնայ մէկը կարծել թէ ալ բան մը չէր պակսեր սրբուհւոյն Եղիսաբէթի՝ հասնելու այն նպատակին զոր քաջութեամբ յանձն առեր էր, այսինքն սիրելու զաստուած և իր եղբարքը աստուծոյ համար, ու բոլորովին արհամարհել զաշխարհ և անոր ամէն վայելքը։ Եւ սակայն քրիստոնէական կատարելութեան այս հրաշալի ճամբուն մէջ թերևս ունէր վախնալու արգելքներ և դժուարագոյն յաղթութիւններ. բաւական չէր յաղթել աշխարհին և ինչ որ կրնար զինքը աշխարհքին հետ կապել. այլ պէտք էր յաղթել նաև անձին՝ մարդկային տկարութեան դիւրակործան մարմնոյն մէջ, այսինքն յաղթել իր կամքին։ Այս կամքը՝ որչափ ալ սուրբ, որչափ ալ լի փափաքով երկնից, և բոլը

բովին որոշեալ յերկրաւորաց ըլլար, բայց բանի մը մէջ պէտք էր որ իրեն յատուկ ուժովը չբաղձրանար, հապա խոնարհէր աստուածային կամայ ամէն մէկ շնչմանը համեմատ, ցորեն՝ լեցուն հասկի մը նման, ինչուան որ երկնաւոր հնձողը ժողովէ երկնից շտեմարանաց մէջ։

Գոնարատ վարդապետը, որուն մանուանը կերպով յանձներ էր սրբազան քահանայապետը այս պատուական հոգւոյն կառավարութեան խնամքը, լաւ ճանչնալով անոր առ աստուած ունեցած սիրոյն անչափութիւնը, ուզեց աւետարանական կատարելութեան գերագոյն աստիճանին հասցնել զինքն այնպիսի ճամբով մը որ անշուշտ անախորժ պիտի երևնայ մեր օրերուն շատ քրիստոնէից սովորութեանն ու բարուցը. բայց այն աքանչելի պարզութեան դարերուն մէջ՝ ոչ գանգատի և ոչ ալ զուարճանալու պատճառ կ'ըլլար, երբ սովորեր էին բոլորովին ուրանալ ինքզինքնին՝ աստուծոյ հաճոյանալու համար։ Սակայն և ոչ արդարացընել կ'ուզենք ինչ որ պիտի պատմենք Գոնարատին բռնած կերպին վրայ՝ իրեն հոչակաւոր ապաշխարողին հետ. կարգէ դուրս եռանդը որուն նշանաբերեր զոհ եղաւ, քրիստոնէական չափաւորութեան սահմանին զինքը դուրս հանեց. բայց մենք առանց ուղերձ յանդգնութեամբ դատել այսպիսի անձ մը, բաւական կը սեպենք տեղն ի տեղ նշանակել այս ազնուական իշխանուհւոյն առ իւր վարդապետն ունեցած կրօր հնազանդութիւնը, փափաքելով խոնարհեցընել գլուխը աստուածային լուսոյն տակ, և հետևել անոր որ մեզի համար հնազանդ եղաւ մինչև ի մահ։

Ուրեմն Գոնարատ վարդապետը միտքը դրած ըլլալով նուաճել Եղիսաբեթի սրտին մէջի մարդկանց հաճոյանալուն միակ սկզբունքը՝ զոր Թեբլեւ կը նկատէր անոր վրայ, սկսաւ խորտակել անոր կամքը ամենէն աւելի օրինաւոր և սրտին մէջի արմատացած բաներուն մէջ, մանաւանդ ողորմութեան վերաբերեալ։ Սանձ մը դրաւ՝ որ խիստ դժնդակ էր դքսուհւոյն սրտին, այն առատաձեռնութեանը՝ որուն այնչափ պայծառ օրինակները լիշեցինք վերը, արգիլելով անոր որ ա՛ և է աղքատի չկարենայ մէկ դահեկանէն աւելի ողորմութիւն տալ։ Եղիսաբեթ այլ և այլ հնարներով ջանաց՝ առանց ամենեւին մեր անհնազանդ դտնուելու՝ այս արգելքին մտիկ չընել. ուստի պղնձէ դահեկանի տեղ արծրթէ դահեկաններ ձուլել տալով, որոնց ամեն մէկուն արժէքը՝ վեց դահեկանէ աւելի էր, սկսաւ հասարակ դահեկանի պէս զանոնք աղքատաց բաժնել։ Բայց երբ աղքատները, որոնք իրեն կարգէ դուրս առատաձեռնութեանը վարժէր էին, սկսան գանգատիլ իւր այսչափ խնայողութեանը վրայ՝ Եղիսաբեթ ըսաւ անոնց. «Ինծի արգիլուած է որ ամեն մէկ անգամուն չկարենամ մէկ դահեկանէն աւելի տալ ձեզի, բայց արգիլուած չէ կրկին տալը որչափ անգամ որ ինծի դառնալու ըլլաք»։ Աղքատները մտիկ ըրին իրեն այս խորհրդոյն, ու մէկ անգամ մը իրմէն ողորմութիւն առնելէն ետքը, կը դառնային նորէն հիւանդանոցին մէկալ կողմանեն ու կու գային կրկին անգամ՝ ողորմութիւն ուզելու, որոնց միշտ կու տար դքսուհին, առանց անգամ մ՚այլ ժխտելու։ Գոնարատ երբոր այս

բանս իմացաւ, փոխանակ անոր սրտին առաքի-
նութեանը վրայ զարմանալու՝ խստիւ յանդի-
մանեց զինքը, և ինչուան ապտակ ալ զարկաւ
անոր երեսին։ Եղիսաբեթ համբերեց ուրախու-
թեամբ այս նախատանացը, վասն զի շատ ատե-
նէ ի վեր կը փափաքէր հաղորդ ըլլալ յանհնայ-
նի այն նախատանաց զոր ընդուներ էր իւր աս-
տուածային փրկիչը դեռ իրեն համար չմեռած։
Գոնարատ արգիլեց զինքը որ ինչ և իցէ պատ-
ըուակաւ չկարենայ ստակ տալ մէկուն. միայն
հաց բաժնելու հրաման տուաւ. բայց Եղիսա-
բեթ ասոր մէջ ալ չափը չպահելով՝ արգիլուե-
ցաւ հացի կտորուանք միայն տալու և ոչ երբէք
ամբողջ հաց։ Վերջապէս որ և իցէ ողորմու-
թիւն արգիլեց, միայն իր վրայ թողլով հիւան-
դաց հոգը, անոր մէջ ալ խստիւ արգիլեր էր
որ իրեն սիրական բորոտներուն չկարենայ ամե-
նևին մօտենալ, ու երբ կը տեսնէր թէ Եղիսա-
բեթ իր հրամաններէն կը պակսէր, չէր քա-
շուեր խիստ հարուածներ տալու անոր։

Կրնանք գուշակել Եղիսաբեթի սրտին ցա-
ւը՝ տեսնելով ինքզինքը զրկուած այն ազատու-
թեանէն որ իրեն համար այնչափ պատուական
էր և հարկաւոր, և իրեն դէմ բարձրացած այն
պիսի արգելք մը՝ որով պիտի չկարենար օգնել
թշուառաց և հիւանդաց։ Սակայն առանց դան-
գատելու՝ հնազանդեցաւ իրեն հոգևոր հօրը
հրամաններուն. վասն զի հաստատուն միտքը
դրեր էր թէ իրեն համար ամենէն աւելի մեծ
առաքինութիւնը՝ էր ամեն բանի մէջ անոր
հնազանդիլ՝ որ երեսփոխան էր աստուածային
կամաց։ Երբոր զինքը կանչելու ըլլար՝ Ճամբուն

հեռաւորութիւնը բան մը չէր երևեր իրեն աչքին. և սակայն Գոնրատ այնպիսի կերպով հեռը կը վարուէր՝ որ ամենևին ոչ Եղիսաբեթի սրտին, ոչ երիտասարդութեանը և ոչ ալ ասիձնին կը յարմարէր. բայց Գոնրատ միտքը դրեր էր փչալից և գժուար ձամբով առաջնորդել իրեն ի փրկութիւն, որպէս զի յաւիտենական դատաւորին առջևը վարձքով լեցուն կարենայ երևնալ։ «Այսպէս կը վարուէր իրեն հետ այրն աստուծոյ, կ'ըսէ Գաղղիացի մատենագիր մը, անոր կանքը կոտրելու համար. և որ բոլոր սերը աստուծոյ վրայ դնելով՝ միտքը չբերէ ամենևին իրեն անցեալ փառքը։ Ամեն բանի մէջ արագ էր ի հնազանդիլ, և հաստատուն ի համբերել, և անսակով ազնուացաւ իւր հնազանդութեան յաղթանակը»։ Այս հնազանդութիւնը մի և նոյն յոժարամտութեամբ կը կատարէր թէ ծանր և թէ թեթև բաներու մէջ։ Օր մը ձամբայ ելեր էր այցելութեան երթալու ձգնաւորի մը որ Մարպուրկ քաղաքին մօտերը կը բնակէր. Գոնրատ մարդ ղրկեց պատուիրելով որ շուտով մը ետ դառնայ։ Եղիսաբեթ մէկէն նոյն վայրկենին ետ դարձաւ, և ժպտելով մը իրեն այս հրամանը բերողին ըսաւ. «Թէ որ խելք ունինք, պէտք է որ խղճնջի նման ըլլանք, որ անձրևի ատեն իր պատենին մէջ կը քաշուի. հնազանդինք ուրեմն, ու մեր ձամբէն ետ դառնանք»։

Իր հոգևոր հօրմէն շատ կը վախէր, որովհետև զանիկայ աստուծոյ տեղ դրեր էր, ու շատ անգամ կ'ըսէր իրեն հետը եղողներուն. «Եթէ այսչափ կը վախեմ մահկանացու մարդէ մը,

ոչչափ աւելի պէտք է դողամ ատտուծոյ առջեւ՝ որ տէր է և դատաւոր ամենայն մարդկան »։ Բայց հոգեւոր վախ մ՚էր այս, բոլորովին յանձնած ըլլալով իր կամքը Գոնրատին ձեռքը, որ աղքատ էր և ամենայն մարդկային մեծութենէ զուրկ. ինչպէս ինքն ալ կ՚ուզէր ըլլալ, ու շատ անգամ կ՚ըսէր. «Աւելի անոր համար ընտրեցի աղքատ քոյրերու կեանքը, վասն զի ամենէն արհամարհուած է. և եթէ կարենայի գրտնել աւելի անարգը՝ զայն պիտի ընտրէի։ Կը բնայի հնազանդութեան ուխտ ընել եպիսկոպոսի մը կամ հարուստ վանահօր մը առջև, բայց նախամեծար ընտրեցի Գոնրատ վարդապետը որ աղքատ մուրացիկ մըն է, որպէս զի այս աշխարհիս մէջ մէկու մը ապաւինելու յոյս չունենանք »։ Գոնրատ ալ իր ունեցած իշխանութիւնը խստիւ կը բանեցընէր. օր մը Ալդենպէրկի վանքը գացած ըլլալով, ուր արդէն Եղիսաբեթի Գերդուստա աղջիկը գրուեր էր, Գոնրատ ուզեց զինքն ալ նոյն վանքը դնել. ուստի Մարպուրկի քաղաքը մարդ ղրկեց որ զինքը գտնէն ու իրեն բերէն, որպէս զի կարենայ իւր մտածութիւնը հաղորդել իրեն։ Եղիսաբեթ մէկէն ի մէկ հնազանդեցաւ հրամանին. վանքին կուսանքը Գոնրատէն հրաման խնդրեցին որ թոյլ տայ Եղիսաբեթի մնալու իրենց վանքը որպէս զի տեսնէն զանիկայ։ Գոնրատ ուզելով փորձել անոր հնազանդութիւնը, ու գիտնալով թէ վանքին մէջ մնողաղը և կանայք բանադրանքի տակ կ՚ինկան՝ ըսաւ. «Թող մնայ թէ որ կ՚ուզէ». այս խօսքս Եղիսաբեթի հրաման մը կարծելով վանքը մնաւ. Գոնրատ մէկէն հա-

նել տուաւ զինքը, ու յիշեցընելով այն ուխտը զոր ըրեր էր ամէն բանի մէջ իրէն հնազանդելու, իրէն հետը եղող կրօնաւորին հրամայեց որ երկայն ու հաստ գաւազանով մը ծեծէ զեղխաբեթ, ինչուան որ ինքը Ողորմեա ինձ աստուած սաղմոսը լմնցընէ։ Դքսուհին առանց գանգատելու և գէրազանց հպատակութեամբ իր թեթև յանցանացը համար այս անարդ պատիժն ընդունեցաւ. և քիչ ատենէն ետքը իրէն հետը եղող Իսմանկարտա օրիորդին ըսաւ. «Պէտք է որ համբերութեամբ կրենք այսպիսի պատիժներ. վասն զի մենք գէտերուն մէջի եղեգներուն նման ենք. երբոր գէտը կը բարձրանայ՝ եղեգը կը խոնարհի ու կը ծռի, և ջուրը զայն կոխելով՝ անոր վրայէն կը վազէ առանց խորտակելու. յետոյ կը շտկուի և կը բարձրանայ իւր ամենայն զօրութեամբը, ու նորէն կը վայելէ իւր նոր կեանքը։ Մենք ալ երբեմն պէտք է դէպի երկիր խոնարհինք, և յետոյ շուտով մը շտկուինք և բարձրանանք ուրախութեամբ և վստահութեամբ»։

Ուրիշ անգամ մըն ալ, թէ որ արժան է հաւատալ աւանդութեան մը, Գոնզատ Ֆիսուսի Քրիստոսի չարչարանաց վրայ քարոզ տուաւ, որպէս զի Եղխաբեթ քարոզին ներկայ գտնուելով՝ կարենայ ստանալ այն ներոզութիւնը որ քահանայապետը շնորհէր էր անոնց ամենուն որ մտիկ կ'ընէին իւր առաքելոյն։ Իսկ դքսուհին զգաղած ըլլալով երկու նոր հատած հիւանդներուն խնամքին՝ չկրցաւ երթալ քարոզը մտիկ ընել։ Երբոր քարոզը լմնցաւ՝ Գոնզատ կանչեց զեղխաբեթ ու հարցուց թէ ուր գնա-

ցեր էր, որ չէկաւ ու իրեն քարոզին մտիկ չը-
բաւ. և ժամանակ չթողուլով որ պատասխանէ,
ուժով մը զարկաւ անոր՝ ըսելով. «Ահա՛ քեզի,
որպէս զի սորվիս ուրիշ անգամ դալու երբոր
գքեզ կանչելու ըլլամ»։ Խոնարհ և համբերող
իշխանուհին այս խստութեան փոխարէն ծի-
ծաղեցաւ քթին տակէն և ուզեց ինքզինքը
արդարացնել. սակայն Գոնդատ նորին այնպէս
մը զարկաւ՝ որ արիւն եկաւ։ Այն ատեն Եղի-
սաբեթի աչքերը դէպի երկինք վերցուց, և բա-
ւական ատեն այնպէս կեցուցին ետքն ըսաւ.
«Աստուած իմ, հնարհակալ եմ որ զիս ընտրե-
ցիր այս բանին համար»։ Իւր ծառայութեանը
մէջ եղող մարդիկն եկան զինքը մխիթարելու,
և տեսնելով արիւնը որ անոր զգեստուցը վրայէն
վար կը վազէր, հարցուցին իրեն թէ ինչպէս
կրցաւ համբերել այնչափ հարուածներուն։ Ե-
ղիսաբեթ պատասխանեց ժպտելով մը. «Համ-
բերութեամբ կրեցաւ պատճառաւ՝ ատստուած
թոյլ տուաւ ինծի որ տեսնեմ զՔրիստոս իւր
հրեշտակացը մէջ. վասն զի վարդապետին հա-
րուածները զիս մինչև երրորդ երկինքը զրկե-
ցին»։ Երբ Գոնդատ լսեց այս խօսքերը, աղա-
ղակեց. «Անանկ է նէ միշտ պիտի զղջամ զնե-
ղիսաբեթ մինչև ինքներորդ երկինքը չզրկելուս
համար»։

Մենք առջի բաներնիս նորէն կը կրկնենք. այ-
սինքն թէ պէտք չէ որ մեր ժամանակին գաղա-
փարներովը դատենք նոյն ժամանակուան հո-
գևորական կենաց կերպը և քրիստոնէական սո-
վորութիւնները, որոնք և ոչ եկեղեցւոյ ամեն
դարերուն մէջ նոյնը են։ Բայց և ոչ արհամար-

հել և անգոմնել պէտք է այն քարեպաշտ և անկեղծ հոգիները, որոնք անմահական յաղթանակներ կը կանգնեն ողորմութեամբ, խոնարհութեամբ, և անձին ուրացութեամբ, և անանկով կը տանան մաքուր, անմեղ և սուրբ փառք մը։

Մինչդեռ գերագոյն դատաւորը՝ կը կշռէր իւր յաւիտենական կշռոյն մէջ իր պաշտօնեին խստութիւնը, և խոնարհ հարիւն անյաղթելի համբերութիւնը, չար մարդիկ ալ առիթ մը կը փնտռէին իրենց սրտին չարութիւնը յայտնելու, և խեղճ Եղիսաբեթին նոր զոհ մը կ'աւելցնէին այն զոհերուն վրայ զոր կը նուիրեր արդէն իւր երկնաւոր փեսային։ Այսպէս զինքը շռայլ և յիմար համարէին եւրոպ՝ ուզեցին կոտրել իր անունը անմիտ կարծիքներով Գոնսալա վարդապետին հետ ունեցած այնպիսի սերտ մտերմութեանը պատճառաւ։ Հանարձակ ալ կ'ըսէին թէ այն քահանայն մոլորեցուցեր է Լուդովիկոս դքսին այրն կինը, և առեր իրեն երկիրը տարեր էր զանիկայ, որպէս զի անոր հետ վայելէ անոր օժիտը և ունեցած հարստութիւնները։ Դքսուհոյն երիտասարդութիւնը, որ ինչպէս ըսինք, հազիւ քսան և երկու տարուան էր Մարպուրկ առանձնանալու ժամանակը, կրնար պատճառ ըլլալ այս ամբաստանութեանց. և ահա պարզ ատոր համար հաւատաց այն գէշ մարդկանց Եղիսաբեթի հաւատարիմ պաշտպանը՝ Վարիլլայի տերը, որ Մարպուրկ գալով մեծ տեղաս իրեն մեծարանօք ու բան։ «Թոյլ տուր ինձի, տիկին, որ համարձակութեամբ և միանգամայն մեծարանօք խօսիմ քեզի հետ»։ Եղի-

սաբեթ խոնարհութեամբ պատասխանեց թէ կ'ուզէր անոր մտիկ ընել. «Կ'աղաչեմ, ըսաւ, սիրելի տիկին, որ հոկեա և զգուշանաս քու անունդ և համբաւիդ. որովհետև Գոնարատ վարդապետին հետ ունեցած ընտանութեանդ և մտերմութեանդ համար գիտցած ըլլաս որ շատ գայթակղութեան առիթ տուեր ես անկիրթ և ռամիկ մարդկանց»։ Եղիսաբեթ աչուընէրն երկինք վերցնելով և առանց դէմքին վրայ պզտի շփոթութիւն մը յայտնելու՝ պատասխանեց. «Օրհնեալ ըլլայ յաւիտենական մեր ամենաբաղցր տէրը Յիսուս Քրիստոս, իմ միակ բարեկամս, որ կը խոնարհի և արժանաւոր կերպով կ'ընդունի ձեռքէս այս աղքատին նուէրը. անոր սիրոյն համար և ինքզինքս անոր տալուն համար իբրև իւր աղախինը, հրաժարեցայ իմ աղնուատոհմութենէս, արհամարհեցի հարստութիւններս և ինչքս, փճացուցի գեղեցկութիւնս և երիտասարդութիւնս. թող տուի հայրս, հայրենիքս, տղաքս, աշխարհիս ամենայն մխիթարութիւնները, և յանձն առի աղքատութիւն ու մուրացկան եղայ, որպէս զի իմ հանապազօրեայ հացս ձարեմ։ Ուրիշ բան չպահեցի ինծի, բայց միայն իմ պատիւս և կանացի համբաւս։ Բայց ահա զայս ալ կը խնդրեն ինծմէ, ինչպէս որ կը տեսնեմ, և կու տամ բոլորով սրտիս, որովհետև արժանի կը սեպէ ընդունիլ իբրև մնաս-ատ զոհ մը իմ բարի համբաւս. և զիս հաճոյական երևցընել իւր աչքին առջև խոստաստակութեամբ. այո, յանձն կ'առնում ապրիլ իբրև պատիւը կորսնցուցած կին մը։ Բայց իմ սիրելի փրկիչս, խեղճ տղաքս որ անմեղ են, պահէ

զանոնք յամենայն ամօթոյ. որպէս զի չըլլայ որ անոնց ալ իմ պատճառաւս վնաս մը հասնի »։ Բայց միւս կողմանէ ալ ուզելով ապահովցնել իւր հին բարեկամին միտքը, վրայ բերաւ. « Գո՛նէ դու, տեր իշխան և մատակարար, դու գտնէ վրաս այսպիսի չար կարծիք մի ունենար. տես մէյմը վիրաւորեալ ուսերս ». ու այս ըսելով՝ ցրցուց իշխանին այն հարուածոց նշանները զոր ընդուներ էր Գոնրատէն։ « Ա՛հաւասիկ, շարունակեց դքսուհին, այս սուրբ քահանային իմ վրաս ունեցած բորբոքեալ սէրը, և թէ ինչպէս կը բորբոքէ զիս առ սէրն աստուծոյ »։ « Հրաշալի միաւորութիւն մը, կ՚ըսէ իրեն վարքը գրողներէն մէկը, խոնարհութեան, համբերութեան և բարեպաշտ խոհականութեան, որ ջորհակալ ըլլալով աստուծոյ՝ այսպիսի վատահամբաւութեան մը համար որուն արժանի չէր, իր ընկերոջը սրտէն կը հեռացընէր ամէն գայթակղութիւն »։

Սակայն չէ թէ միայն արտաքին և մարմնական խստութիւններուն մէջ կը ցուցընէր Գոնրատ իւր իշխանութիւնը, այլ կը ջանար խորտակել և մահացընել նաև անոր սիրտը, արմատաբի խլելով անկէ որ և իցէ սէր կամ մարդկային մտածութիւն, որպէս զի բոլորովին լեցուի աստուածային սիրով և մտածութեամբ։ Իւր անցեալ կեանց ամէն զուարճութիւններէն՝ ելլեալ թէ հին և քաղցր սովորութիւն մը պահեր էր. որ էր իր երիտասարդութեանը բարեկամներուն հետ կենակցիլը, որոնք իբրև պատուոյ օրիորդք հաղորդ եղեր էին իրեն իշխանական մեծութեանը. ու իրեն հետ միատեղ

կերեր էին թշառութեան հացը երբոր Վարդ-
պուրկէն վերնտուեցաւ. որոնք անբաժան ընկե-
ակիցք էին անոր կրօնաւորական կենացը ա-
մէն կամաւոր զրկումներուն, ու աստուածապաշ-
տութեան հրահանգաց ապաշխարութեան և
որ և իցէ ուրիշ բարի գործերուն։ Կենար ըլ-
լալ որ այս գողովալից և ընտանեկան սէրը՝ այս-
չափ մահացուցմանց և փորձանաց դառնութիւ-
նը անուշցրնէր. և այն սիրտը որ ինչպէս տե-
սանք, բոլորովին վառուեր էր սիրով, իրեն քաղցր
և բարեպաշտ մխիթարութիւնը կը գտներ ի-
րեն հետը եղողներուն կենակցութեանը մէջ։
Այս յետին մխիթարութիւնն ալ ուզեց Գոն-
բատ իրմէ վերցնել, վախնալով որ չըլլայ թէ
դքսուհւոյն սրտին մէջ անցեալ փառացը վրայ
յիշատակ մը կամ ցաւ մը արթննայ։ Գոնբատ
արդէն հեռացուցեր էր դքսուհւոյն հին տանը
ամէն ծառայողներն, որ դեռ քովը մնացեր էին.
և անոնց մեկնած ժամանակն Եղիսաբեթ կար-
գէ դուրս տագնապ և սաստիկ ցաւ զգացեր էր։
Յետոյ կարգը եկաւ իւր երկու բարեկամացը.
նախ Իշանդրուտան հեռացուց, որ Եղիսաբե-
թի ամենէն աւելի սիրական բարեկամն էր,
ուսկից ծածուկ բան մը չէր պահեր, և որուն
միշտ յայտներ էր իւր սրտին գաղտնի խոր-
հուրդները, թէ՝ աշխարհէն քաշուելէն առաջ
և թէ ետքը։ «Սակայն պէտք եղաւ, կը պատ-
մէ այս հաւատարիմ Իշանդրուտա բարեկա-
մուհին, որ ինծմէ ալ բաժնուի, ինծմէ՝ որ ա-
մենէն աւելի կը սիրեր, և որ այնչափ արցուն-
քով ու հառաչանօք հաղիւ կրցաւ բաժնուիլ»։
Վերջը կարգը Կիւտային եկաւ, որ հինգ տա-

բուան հասակին իր մանկութեան ընկերակիցն եղեր էր, և զոր կարգէ դուրս սիրով կը սիրեր. և որուն բաժնուելու ատենը դառնապէս հառաչանաք արտասուեց խեղճ Եղիսաբեթը։ «Իրեն անանկ երևցաւ, կ'ըսէ բարեպաշտ պատմագիր մը որուն խօսքերը կ'ախորժինք հոս տեղը բերել, թէ իր սիրաը երկուք բաժնուեցաւ. և այս ցաւը ինչուան իւր մահը սրտին մէջ մնաց։ Հաւատարիմ սրտեր դիւրաւ կրնան հասկրնալ այն ցաւին մեծութիւնը. վասն զի աշխարհիս վրայ երկու զիրար սիրող սրտերու իրարմէ բաժնուելու ցաւէն աւելի ուրիշ սաստիկ ցաւ չկայ։ —Ո՛վ սիրելի սրբուհի Եղիսաբեթ, կը յիշեցնեմ քեզի այն բաժանմանը, և այն դառն ցաւին համար՝ զոր զգացիր երբ ամենէն աւելի սիրական բարեկամներդ բաժնուեցար, ընորհք խնդրէ ինծի համար, որ ճանչնամ թէ ինչ գէշ բան ըրի ամէն անգամ որ մեզմէ բաժնուեցայ իմ աստուծմէս»։

Այսպէս Եղիսաբեթ բոլորովին ինքզինքը զոհելով աստուծոյ համար, միայնութեան մինթարութիւնն ալ չկրցաւ ունենալ. վասն զի Գոնրատ իրեն սիրական ընկերներուն տեղ, ուրիշ երկու կանայք դրաւ քովը, որոնք անոնցմէ բոլորովին տարբեր էին։ Անոնցմէ մէկը հասարակ մարդու մը աղջիկ էր, և որ դքսուհոյն պէս Եղիսաբեթի կը կոչուեր. և թէպէտ ջերմեռանդ, բայց այնպէս անկիրթ և բիրտ և անանկ տգեղ՝ որ տղաքը երեսը նայելու ատենին վախերնէն կը դողային։ Իսկ մէկալն ալ այրի կին մը էր, պառաւ, խուլ և անանկ գէշ բնաւորութեան տէր՝ որ ամէն օր գիշեր ցորեկ

կը բարկանար։ Եղիսաբեթ կատարեալ հնազանդութեամբ ստուծոյ սիրոյն համար սիրով համբերեց այս փոփոխութեանը. և փափաքելով խնարհութեան և համբերութեան մէջ առաջ երթալ, կը կենակցեր անոնց հետ, համբերելով անոնց անկրթութեանը և անիրաւ բարկութեանը։ Իսկ անոնք ընդհակառակն օր քան զօր ալ աւելի կը խստացընէին իրենց անձնոնի վարմունքը։ Երբ Եղիսաբեթ ապաշխարութեան համար սիրով յանձն կ'առնուր այն տնական ծառայութիւնները՝ զորոնք կատարելը իրենց պարտքն էր, անոնք աւելի դժուարին ծառայութիւն մը կը դնէին իրեն վրայ. կամ երբ խոհանոցին կրակին քովը կեցած, իշխանուհին բոլորովին հոգևոր մտածմունքներու զբաղած՝ անհոգ կ'ըլլար կրակին վրայ դրուած անհամ կերակուրներուն նայելու, և անոնք երբ անոնց այրելուն հոտը կ'առնուին, բնաւ չէին վախնար զինքը դատապարտել յանդիմանելէն, մինչև երբեմն ալ կը զարնէին որ և ոչ ապուր մը կրնար եփել. կը տեսնէին զինքը որ երբեք չէր կրցեր մտածել իր անցեալ փառացը մէջ, թէ ատեն պիտի գայ յորում՝ պիտի ստիպուի կերակուրի ծառայութիւնները ալ ընելու։

Այս կանայքը ամեն անգամ անդթութեամբ զինքը Գոնրատի կ'ամբաստանէին, երբ կը տեսնէին թէ անոր արգելքին մտիկ չընելով՝ աղքատաց ողորմութիւն կը բաժնէր. Գոնրատ ալ ասոր համար խստիւ կը յանդիմանէր զինքը ու կը պատժէր. իսկ Եղիսաբեթ ամեն բանի սիրով կը համբերէր, վասն զի մէյմը միտքը դրեր էր որ անոր առաջնորդութեամբը շուտով և ա-

պահով կերպով պիտի կարենար ժառանգել յաւիտենական Հայրենիքը։ Ա.ինչափ էր իր խոնարհութիւնը որ երբ իր հին և սիրելի ընկերակիցքը երբեմն իրեն այցելութեան կու գային, չէր համարձակեր կերակուր մը դնելու առջևնին, և ոչ ալ բարև մը տալու առանց Գոնբատէն հրաման առնելու։

Վերջապէս յետին փորձ մըն ալ պահուեր էր իր գորովագութ սրտին, և ասիկայ պիտի ըլլար իրեն համար յետին յաղթանակի առիթ մը։ Ցեսանը թէ ինչպէս բաժնուեցաւ իր զաւկրներէն, որոնց համար այնպիսի սէր մը ունէր, զոր աստուածային սիրով միայն կրցեր էր նուաճել։ Սակայն կ'երևնայ թէ այս բաժանումը բոլորովին և կատարեալ կերպով եղած չէր, վասն զի չկրնալով մայրական սիրոյն յաղթել, կը ստիպուէր երբեմն երբեմն իր զաւկրներէն մէկը բերել տալու, և սիրելով ու համբուրելով իր մայրական կարօտն առնելու։ Բայց քիչ ատենէն վախցաւ որ չըլլայ թէ իր սրտին մէջ երկու տարբեր սէր գտնուելով, ապրելը ըլլան իրեն սովորական աղօթիցը. վախցաւ որ չըլլայ թէ աստուծմէ զատ զուրիշ մը սիրէ. ուստի կամ Գոնբատին յորդորանօքը և կամ իր կողմանէ, այս երկրաւոր երջանկութեան յետին մնայորդն ալ իրմէ հեռացուց։

Դեռս հէսոյն այսչափ աստուածային սիրոյն համար ըրած յաղթանակները, անկարելի էր որ երկար ատեն անծանօթ մնային. որոնք ոչ միայն երկնից մէջ իրեն անմահական վարձ մը կը պատրաստէին, հապա նաև երկրիս վրայ մարդիկ ալ կը պատրաստուէին։ Վերջապէս մեծա-

ընելու հաստատ և սիրոյ այս գերասիրաշ գիւ-
ցազն. վարձատրելու այն զանկրնեերը զորոնք ին-
քը աստուծոյ սիրոյն համար երեսի վրայ ձգեր
էր։ Վասն զի քանի մը տարիէն ետքը Գաղղիոյ
Լուդովիկոս Թագաւորին արքունիքը Գերմանա-
ցի երիտասարդ իշխան մը երևցաւ՝ որ տասն և
ութ տարուան էր, ու Թագուհւոյն սենեակին
վրայ կը ծառայեր. այն Գաղղիոյ Թագուհւոյն՝
որ միջին դարու ասպետներուն համար՝ կանա-
ցի գեղեցկութեան և ազնուականութեան գա-
ղափար մը սեպուեր էր. և այս Թագուհին էր
Գասդիլիոյ Պլանշ իշխանուհին։ Արքունեաց
մէջ եղողները զարմանքով կը ցուցընէին այն
երիտասարդ իշխանը որ սրբուհւոյն Եղիսաբե-
թի որդին էր. և զոր Պլանշ Թագուհին յա-
ճախ կը գրկեր մեծարանաք, անոր երիտասարդ
ձակտին վրայ փնտռելով այն համբուրի նշան-
ները՝ որոնցմով համբուրեր էր զինքը իր մայրը։
Ա.յսպէս սուրբի մը մայրը կը պատուէր սրբու-
հւոյ մը որդի. այն գորովալից և բարեպաշտ
համբոյրներուն մէջ կարծես թէ իրարու կը
հանդիպէին Գաղղիոյ սուրբ Լուդովիկոս Թա-
գաւորին և Հունգարիոյ սրբուհւոյն Եղիսաբե-
թի սրտերը։

ԻԸ.

Ինչպէս աստուած յայտնեց իր մեծ կարողութիւնն ու ողորմութիւնը սրբուհւոյն Եղիսաբէթի միջնորդութեամբը, և անոր աղօթիցը հրաշալի զօրութեամբը.

Կը մտանէնար կամաց կամաց այն ժամանակը յորում Եղիսաբէթ իր կարճատև կենաց անմահական վարձքը պիտի ընդունէր յաստուծոյ. բայց աստուած դեռ զինքը վճռած ու իրեն փառացը հաղորդ չըրած, ուզեց անոր կենդանութեան ատենէն փառաւորել զինքը երկնաւոր փառաց լուսոյն այն մարդիկներուն առջև՝ որոնք զինքը հալածեցին և բամբասեցին. ուզեց այն տկար կնոջ ձեռքովը՝ որ այնպէս կրցեր էր ինքզինքը նուաձել, գերադոյն զօրութիւն մը տալ որով կարենայ յաղթել և արմատաբի խլել իր եղբարցը սրտէն այն ամէն թշուառութիւնները որ հետևանք են մեղաց։ Պիտի տեսնէնք սակէ ետքը որ չէ թէ միայն գթութեամբ, ա-

աստուածեղծութեամբ, աշխատանքով և եռանդեամբ խեղճերուն թշուառութիւնը պիտի սիրիէ այն աստուածային սէրը որ բանէ մը չյաղթուիր, այլ նաև իրեն այնպիսի ուժ մը պիտի պարգևէ՝ որ բերնէն եւած մէկ խօսքով կամ մէկ աղօթքովը պիտի ցրուէ ու պիտի հեռացրնէ այն նեղութիւնները՝ զորոնք առաջ կը ջանար թեթևցնել։ Այսկէ ետքը երբ ջերմեռանդութեան կամ սիրոյ պատճառաւ իր խեղճ տնակէն դուրս կ'ելլէ չէ թէ միայն իր եռանդը ցուցնելու համար պիտի ըլլայ, այլ յանձնէ իր գերարհարաշ զօրութիւնը՝ զոր աստուած կը շնորհէ անոնց՝ զորս ընտրեր է ի սկզբանէ. և այն նորանոր բարերարութիւնները, պիտի ըլլան մեղի համար իր սրբութեանը գերագոյն և վերջին վկայութիւնները։

Օր չէր անցներ որ Եղիսաբեթ չերթար իւր հիւանդանոցին մէջ եղող խեղճ հիւանդացն այցելութիւն մ'ընելու. և անոնց սահմանած օգնութիւնը և կերակուրը կը տանէր։ Աւուրց մը հիւանդանոց մտնելու ժամանակ տեսաւ դբան սեմին վրայ անշարժ պառկած հաշմ և խեղ երիտասարդ պատանի մը, որ համբ և խուլ էր, որուն բոլոր անդամները ծռեր էին դժնդակ հիւանդութեամբ, անսանկ որ չէր կրնար քալել։ այլ անասնոյ մը պէս իւր ոտքերուն և ձեռքերուն վրայ կը սողար։ Իւր մայրը, որ այսպիսի որդի մը ունենալուն վրայ կ'ամչնար, հոն բերեր էր զանիկայ, և դբան սեմին վրայ թողուցեր. յուսալով որ բարի դքսուհին կ'ողորմի ասնոր։ Ցիրաւի Եղիսաբեթ երբ տեսաւ այն խեղճ պատանին գորովանօք մը նայեցաւ անոր, և կար

գէ դուրս ցաւ զգայ. ու դէպի անոր ծռելով՝ այս խօսքերս ըսաւ. «Ըսէ՛ ինծի, սիրելի որդեակ, ուր էն քու ծնողքդ որ զքեզ հոս բերին». տըղան խուլ ըլլալով չկրցաւ անոր խօսքերը լսել. դքսուհին նորէն կրկնեց իւր խօսքը անուշ ձայնով մը և զանիկայ փայփայելով. «Ո՞նչ ցաւ ունիս, ըսէ ինծի. չէս ուզեր ինծի հետ խօսիլ»։ Տղան անոր երեսը նայեցաւ, բայց պատասխան մը չտուաւ։ Եղեսաբեթ չգիտնալով որ անիկայ համր է, կարծեց թէ այսահար մըն է, և իւր գթութիւնը սաստկանալով հետզհետէ, բարձր ձայնով անոր ըսաւ. «Յանուն Յիսուսի Քրիստոսի, կը հրամայեմ քեզի և անոր՝ որ քու մէջդ է, ինծի պատասխան տալու, և ըսելու թէ ուստ կից կու գաս»։ Մէկէն պատանին շիփ շնտակ ոտքի վրայ կայնեցաւ անոր առջևը, լեզուն բացուցեցաւ, և ասանկ պատասխան տուաւ Եղիսաբեթին. «Մայրս զիս հոս բերաւ». և յետոյ պատմեց անոր թէ մինչև այն ատեն երբեք ոչ լսեր էր և ոչ խօսեր. այլ անանկ՝ ինչպէս որ զինքը կը տեսնէր՝ հաշմ և խեղ ծներ էր։ «Բայց հիմա, ըսաւ իւր անդամներն երկնցընելով ետևէ ետև, ահա աստուած ինծի շարժմունք, խօսք և լսելիք շնորհեց. որով այնպիսի խօսքեր կը խօսիմ որ ոչ երբեք մէկէ մը լսեր կամ սորվեր եմ»։ Յետոյ սկսաւ արտասուել և աստուծոյ շնորհակալ ըլլալ. «Ցաստուած չէի ճանչնար, ըսաւ դքսուհւոյն, և բոլոր զգայարանքս մեռեր էին. չէի գիտեր թէ մարդ ինչ է. սակայն հիմա կ՚իմանամ, որ անասնոյ մը պէս չեմ, հիմա կրնամ խօսիլ աստուծոյ վրայ։ Օրհնեալ ըլլայ բերնիս այն հարցմունքը, որով ընդունե-

ցար յաստուծոյ այն հնարքը՝ որ չմեռնիմ ա-
նանկ՝ ինչպէս որ մինչև հիմա ապրեր էի»։ Ե-
ղիսաբեթ երբոր լսեց այս խօսքերը՝ որ այնպէս
գեղեցիկ կերպով կը յայտնէին հոգւոյ մը ա-
ռաջին զգացմունքները՝ յայտնի իմացաւ թէ
աստուած հրաշալի կերպով գործեր էր զայն
իւր միջնորդութեամբը։ Սակայն բոլորովին շփո-
թած և զարհուրած այս ահաւոր խորհրդոյն
վրայ, շուտով ծնկան վրայ եկաւ, և խառնեց
իւր առատ արցունքը պատանւոյն արցունքին
հետ զոր բժշկեր էր։ Ա.յս հնարքին համար
աստուծոյ հնարհակալ ըլլալէն ետքը՝ անոր ը-
սաւ. «Շուտով ետ դարձիր քու ծնողացդ քով.
և մի ըսեր ինչ որ պատահեցաւ քեզի. մանա-
ւանդ իմ վրաս մարդու մը հետ մի խօսիր. մի-
այն ըսէ թէ աստուած օգնեց. և զգուշացիր
գիշեր ցորեկ ամենայն մահուանէ մեղքէ՝ ապա
թէ ոչ նորէն կրնաս իյնալ քու առաջին հիւան-
դութեանդ մէջ. միշտ յիշէ՛ ինչ որ կրեցիր մին-
չև հիմա, և աստուծոյ աղօթէ, ինծի համար,
ինչպէս որ ես ալ միշտ քեզի համար պիտի աղօ-
թեմ»։ Մէկէն աներևոյթ եղաւ, կարծես թէ
ուզելով այս անակնկալ փառքէն փախչիլ. պա-
տանւոյն մայրն ալ վրայ հասաւ, բոլորովին զար-
հուրած և շփոթած իր որդւոյն ոտքի վրայ և լե-
զուն բացուած տեսնելով. «Լեզուդ ո՞վ բացաւ»,
հարցուց անոր. «Քաղցրաբարոյ տիկին մը, պա-
տասխանեց տղան, մեծապոյն զգեստներ հա-
գած, հրամայելով յանուն Յիսուսի Քրիստո-
սի. որ խօսիմ իրեն հետ և ես խօսք դուսյ ա-
նոր պատասխան տալու»։ Այն ատեն մայրը սկը-
սաւ դէպի այն կողմը վազել ուսկից Եղիսաբեթ

գայթը էր, և հեռուանց տեսնելով որ կը փախչէր, Հանչցաւ զնա և ասին տեղ հրատարակեց այս հրաշքը։

Ս. Յակոբ Թէպէտև Եղիսաբեթի կը ջանար ինքզինքը ծածկելու, սակայն ինչուան հեռաւոր տեղուանք տարածուեցաւ իրեն ձեռքով յայտնուած աստուծոյ ամենակարողութիւնը. ան ատեն ամէն թշուառները և ցաւոց մէջ եղողները սկսան իրեն աղաչանքներ զրկել։ Եղիսաբեթի իր գթած սրտովը՝ չէր կրնար մերժել այն խեղճերուն աղաչանքը՝ որ իրմէ օգնութիւն կը խնդրէին. բայց մէկալ կողմանէ այն մեծամեծ հրաշնեերը զոր աստուած իրեն ձեռքովը կ'ընէր, ինքզինքը ալ աւելի կը խոնարհեցնէր, որով ալ աւելի հաճոյական կ'ելլար աստուծոյ առջև։ Օր մը հիւանդին մէկին իրեն եկաւ որ զինքը բժշկէ յանուն սրբոյն Յովհաննու աւետարանչին, որուն մասնաւոր ջերմեռանդութիւն ունէր Եղիսաբեթ։ Անոր համար աղօթք ընելէն ետքը՝ հիւանդը զգալով թէ իր խնդրած բժշկութիւնն ընդունեցաւ, մէկէն ի մէկ ծընկան վրայ եկաւ Եղիսաբեթին առջև իրեն շնորհակալ ելլալու համար. բայց սրբուհին ինքն ալ գետնի խոնարհելով անոր քով՝ սկսաւ գոհանալ յաստուծոյ որ իրեն սիրական առաքելոյն՝ սրբոյն Յովհաննու աղաչանացը մտիկ ըրեր էր. և սակայն, ինչպէս այս դէպքը աւանդող պատմագիրը կ'ըսէ, իր աղօթքը ընդուներ էր աստուած սրբոյն Յովհաննու մտղեթանացը հետ։

Ուրիշ անգամ մ'ալ, ձեռքը և ոտիքը հաշմած մարդ մը անոր աղաղակեց. «Ո՛վ փայլուն արեգակն պայծառութեան կանանց մէջ, Բենհարց-

պրիւն քաղքէն եմ, ուր քու ամուսինդ կը հանգչի, անոր հոգւոյն սիրոյն համար հասիր ինծի յօգնութիւն, և բժշկէ զիս»։ Երբ Եղիսաբեթ լսեց իւր ամուսնոյն անունը, սիրտը տակն ու վրայ եղաւ, վասն զի անոր քաղցը և սուրբ յիշատակը միտքն եկաւ. կեցաւ հոն ու կարգէ դուրս գորովով մը անոր նայեցաւ որ զինքը կը կանչէր. և նոյն վայրկենին դքսուհւոյն այս մէկ նայելովը, խեղճ հաշմը բժշկուեցաւ, և սկսաւ աստուծոյ շնորհակալ ըլլալ։

Քիչ մը ետքը, երբ Ամբոյ եղեր էր Աղբէնպուրկի վանքն երթալու՝ խեղճ մարդ մը հեռուէն կանչեց Եղիսաբեթ ու ըսաւ. «Ահաւասիկ տասուերկու տարիէն ի վեր չար ոգի մը կը տիրէ վրաս, թոյլ տուր որ մէյմը դպչիմ ըզգեստիդ քղանցիցը՝ որ հեռանայ ինծմէ չար այսը»։ Եղիսաբեթ շուտով ետ դարձաւ, և ծնկան վրայ գալով հաշմին քով Ամբուն վրայ՝ զանիկայ համբուրեց, օրհնելով յանուն Յիսուսի Քրիստոսի, և վաղվաղակի դիւահարը բժշկուեցաւ։

Ուրիշ օր մ՚ալ իրեն հիւանդանոցին համար անձամբ շինել տուած իւր եկեղեցին գնացեր էր կէս օրուան մօտ. դիտմամբ այս ժամն ընտրեր էր Եղիսաբեթ իրեն շրջագայութեանը. վասն զի այն ատեն կէրակուբ ուտելու համար կը հեռանային ամեն հաւատացեալք, որով ինքը կրնար ազատ համարձակ իւր բարեպաշտական գործոց և աղօթիցը ետեւէն ըլլալ։ Հոնտեղը կոյր մը տեսաւ որ խարխափելով միայնակ կը քալէր եկեղեցւոյն ջրոս կողմը. աչքերը բաց էին, ամենուն աչքին պէս, սակայն բիբերը պար-

պուէր ու ջրցեր էին. շուտով անոր մօտեցաւ և հարցուց թէ հոն ինչ կ'ընէր մինակ, և ինչ բանի համար կը թափառէր եկեղեցւոյն մէջ. կոյրը պատասխանեց. «Կ'ուզէի երթալ այն սիրելի և քաղցրաբարոյ տիկնոջ, որ կը մխիթարէ զԹշուառները, խնդրելու իրմէն որ օգնէ ինծի յանուն աստուծոյ. բայց նախ եկայ աղօթք ընելու այս եկեղեցւոյն մէջ, և չորս կողմն կը պտըտիմ իմանալու համար թէ որչափ մեծ և լայն է. որովհետև գժբաղդաբար աչքովս չեմ կրնար տեսնել»։ «Կ'ուզես տեսնել այս եկեղեցին», ըսաւ անոր գԹալից Եղիսաբեթը. «Եթէ աստուած կ'ուզէ, պատասխանեց կոյրը, շատ կը փափաքիմ զայն տեսնելու. սակայն ի ծնէ աչքիս լոյսը կորուսեր եմ, երբէք չեմ տեսած արեգական լոյսը»։ Ցետոյ սկսաւ կոյրը դժբուհայն պատմել իւր ամէն խեղճութիւնն. «Շատ կը փափաքէի, ըսաւ, որ ուրիշներու նման կաբենայի աշխատիլ. վասն զի հիմա, թէ՛ ինծի և թէ ուրիշներուն բանի մը չեմ գար. ամենէն կարճ ժամերը՝ ինծի շատ երկայն կ'երևին։ Երբոր ուրիշի մը քով կը գտնուիմ, որ պայծառ աչուքներով կը տեսնէ ամէն բան, չեմ կրնար ազատ պահել զիս նախանձու մեղքէն. եթէ առանձին մնալու ըլլամ կ'արտասուեմ Թշուառութեանս վրայ»։ «Ի՞նչ աղէկութեանդ համար, պատասխանեց Եղիսաբեթ, աստուած քեզի զրկեր է այս Թշուառութիւնը. վասն զի եթէ աչուքներդ բաց ըլլային, Թերևս անկարգ ճամբաներու ետևէն երթայիր ու այն ատեն հիմակուրնէն աւելի մեղք գործէիր»։ «Ո՛չ, ոչ, վրայ բերաւ կոյրը, մանաւանդ թէ շատ պիտի

զգուշանայի մեղք ընելէն, և ինքզինքս դժուա-
բին աշխատանաց տալով՝ կարենայի ամենօրեայ
կերակուրս իմ Ձակտիս քրտինքովը Ձարել. ո-
րով այս օրուան տխուր մտածմունքներս ալ
չէի ունենար»։ Եղիսաբեթին սիրտը չդիմանա-
լով՝ ըսաւ աղքատին. «Աստուծոյ աղօթէ որ ա-
ւելընելուդ լոյս հնորհէ, ես ալ ահա քեզի հետ
կ՚աղօթեմ»։ Ա.յս խօսքին վրայ, կոյրը յայտնի
իմացաւ որ սուրբ դքսուհի Եղիսաբեթին հետ
կը խօսէր, և անոր առջևը գետնի վրայ ինկալով
աղաղակեց. «Ո՛վ ազնուատոհմ և հնորհալից
տիկին, կ՚աղաչեմ գթա՛ վրաս»։ Իսկ սրբուհին
նորէն ապսպրեց անոր որ աստուծոյ աղօթք ը-
նէ կատարեալ հաւատքով և յուսով։ ու ինքը
ծնկան վրայ գալով կոյրէն քիչ մը հեռու սկսաւ
եռանդեամբ աղօթք մատուցանել առ աստուած։
Մէկէն աստուած հնորհեց կոյրին աչաց լոյսը, և
գեղեցիկ բիբերով զարդարեց անոր պարապ աչ-
քին խոռոչները։ Յետոյ հաշմը ոտք ելաւ. բո-
լորտիքը նայեցաւ, և ամնապարեց երթալ առ Ե-
ղիսաբեթ, զոր գտնելով՝ «Տիկին, ըսաւ, փա-
ռաւորեալ է աստուած, վասն զի անոր հնորհ-
քովը ամէն բան լաւ և պայծառ կը տեսնեմ։
քու խօսքերդ ալ իրաւ ելան»։ Սակայն բարե-
պաշտ իշխանուհին որ միշտ իրեն վերջին վախ-
ճանը կը մտածէր՝ ըսաւ անոր. «Հիմայ որ ալ
պայծառ կը տեսնես՝ ետևէդ եղիր ծառայելու առ
աստուծոյ, և հեռանալու կրցածիդ չափ որ և իցէ
մեղքէ, աշխատէ և բարի մարդ եղիր, խոնարհ
և հաւատարիմ յամենայնի»։

Աստուծոյ խոնարհ աղախնոյն աղօթքը, եթէ
այնչափ զօրաւոր էր որ կրնար դարման մատու-

ցանել մարմնոյ ցաւերուն, հապա ուրչափ աւելի զօրաւոր պիտի ըլլար նաև հոգիները բժշկելու համար։ — Լենպարհ գաւառին Կերդրուտա տիւ կիներ, որ շրջակայքը տիրող ամնուատոհմ ասպետի մը կիներն էր, օր մը այցելութեան գալով գբսուհէոյն, իրեն հետ բերեր էր նաև Պերդոլ որդին։ Աղիկոյ տասն ու չորս տարուան կորեռ պատանեակ մ'էր, որ փառաւորապէս հագուած և զարդարուած ըլլալով՝ կարծես թէ շատ կ'ախորժէր հարուստ, սքանչելի և սակաւագիւտ զգեստներ հագնիլ։ Եղիսաբեթ երկայն բարակ անոր մօրը հետ խօսելէն ետքը, դարձաւ պատանեկին ու ըսաւ. « Սիրելի որդեակ, ինծի այնպէս կ'երևի, որ շատ աշխարհօրէն և շռայլութեամբ հագուեր և աշխարհիս հետ մեծ սիրով կապուեր ես։ Ի՞նչ բանի համար չես մտածեր քու ստեղծողիդ ծառայելու որով աւելի հանգիստ պիտի ըլլաս թէ՛ հոգւով և թէ մարմնով։ Իսկ ինծի, սիրելի որդեակ, կը կարծէս թէ քու և իմ տեղս այսպէս հագուեր էր, երբ խոնարհութեամբ աշխարհ եկաւ իւր աբիւնը թափելու մեզի համար »։ Պատասխանեց պատանեակը գբսուհէոյն. « Ո՛վ տիկին, կ'աղաչեմ որ ինծի համար աղօթես առ աստուած, որպէս զի ինծի իրեն ծառայելու շնորհք պարգևէ »։ « Կ'ուզէ՞ս յիրաւի, պատասխանեց իշխանուհին, որ քեզի համար աղօթեմ »։ — « Այո՛, կ'աղաչեմ »։ — « Այն ատեն պէտք է որ պատրաստես ինքզինքդ՝ ընդունելու այս շնորհքը որուն կը փափաքիս. ես ալ յօժարութեամբ պիտի աղօթեմ քեզի համար. ուստի միատեղ եկեղեցի երթանք, և ինդրենք յաստուծոյ որ քեզի շը-

նորէք տայ»։ Պատանեակը դքսուհւոյն հետ շուտով եկեղեցի գնաց. և մօրը հետ խորանին առջև ծռեցաւ քիչ հեռու այն տեղէն ուր Եղիսաբեթ կ'աղօթէր։ Աղօթքէն բաւական ժամանակ տևեցին եռքը, պատանեակին բարձր ձայնով աղաղակեց. «Ո՛վ սիրելի տիկին, դադրէ՛ ալ աղօթելէն»։ Բայց Եղիսաբեթ միշտ կը շարունակէր իւր եռանդուն աղօթքը. այն ատեն Պերդոլտ աւելի բարձրաձայն սկսաւ կանչել. «Դադրէ՛, տիկին, դադրէ աղօթելէն. վասն զի ալ չեմ կրնար դիմանալ, բոլոր մարմինս բոլոր բոքուեր է»։ Ցիրաւի այնպիսի մեծ ջերմութիւն մը վրան եկաւ որ մարմնէն շոգի կ'ելլէր։ Իւր մայրը և իշխանուհւոյն երկու աղախնայքը երբոր լսեցին պատանեկին կանչելը, դէպի իրեն վազեցին և անոր զգեստները քրանքի մէջ թաթխուած գտան. մարմնոյն մրմնջ ալ այնչափ տաքցեր էր՝ որ հաղիւ կրնային ձեռք մօտեցընել։ Իսկ Եղիսաբեթ աղօթելէն չէր դադրեր, մինչև որ պատանին յուսահատեալ ըսաւ իրեն. «Ցանուն Յիսուսի Քրիստոսի, կ'երդուցընեմ զքեզ, որ ալ չաղօթես. վասն զի մաշեցայ ներքին կրակով, հիմա սիրտս պիտի խորտակի»։ Այն ատեն Եղիսաբեթ դադրեցաւ աղօթելէն, և Պերդոլտ սկսաւ կամաց կամաց պաղիլ. սակայն աստուածային սիրոյն կրակը մէյմ՛որ Եղիսաբեթի եռանդուն աղօթքովը երիտասարդին սիրտն իջաւ, չկրցաւ ալ մարիլ, որով քիչ ետքը Պերդոլտ սրբոյն Փրանկիսկոսի կարգը մտաւ։

Այսպիսի օրինակներ յորդորեցին զԵղիսաբեթ աւելի եռանդեամբ աղօթելու ցաւոց մէջ

եղող բազմութիւն անձանց համար, որոնք կը դիմեին դքսուհւոյն զօրաւոր միջնորդութեանը, և Եղիսաբեթի կը կատարէր բարեպաշտ խոնարհութեամբ անոնց ամենուն փափաքը։ Երիտասարդ Պերդոլտին օրինակովը շատերը լուսաւորուած, և հանդարտած անոր աղօթքին զօրութեամբը, եկեղեցական վիճակին ընդունեցան։ Այն քաղցրալից և բարերար ազդեցութիւնը կը տարածուէր նաև այս կենաց սահմաններէն դուրս, և այս զօրաւոր օգնութեան արդիւնքը յայտնապէս կը տեսնէին անդին այն հոգիները, որ դեռ չէին քաւած իրենց ամենայն մեղքը։ Գիշեր մը Եղիսաբեթ երազին մէջ տեսաւ իւր մայրը զԱՒերդրուտա թագուհին, որ շատ տարի առաջ վատութեամբ սպանուեր էր. և դքսուհւոյն առջևը ծնկան վրայ գալով՝ բարձր ձայնով ըսաւ. «Սիրելի դուստր, և սիրեցեալդ յաստուծոյ, կ'աղաչեմ որ ինծի համար ալ աղօթես. յիշէ՛ այն ցաւը, որով զքեզ ծնայ, և գթա իմ հիմանկուան կրած թշուառութեանս վրայ, խնդրելով աստուծմէ որ համառօտէ զանոնք, և մեղքերուս պատիժ սեպէ այն նախատական և ամօթալի մահը զոր կրեցի անմեղութեամբ։ Դուն եթէ ուզես կրնաս ասիրեալս կատարել, որովհետև լի ես շնորհօք»։ Եղիսաբեթ լալով արթնցաւ։ Եւաւ իւր անկողինէն և սկսաւ վաղվաղակի աղօթք մատուցանել աստուծոյ։ Եռանդեամբ աղօթք ընելէն վերջը իւր մօրը հոգւոյն համար՝ դարձեալ պառկեցաւ ու քնացաւ։ Մայրը նորէն երևցաւ իրեն ու ըսաւ. «Օրհնեալ ըլլայ այն ժամը և այն օրը, յորում զքեզ ծնայ. որովհետև քու աղօթքիդ զօրու-

թեամբն ազատեցայ այս տեղէս, և վաղը յա-
փտենական երջանկութեան մէջ պիտի մնանեմ։
Սակայն միշտ աղօթէ անմոռ ամենուն համար
զորոնք կը սիրես. վասն զի կը մխիթարէ ա-
տուած զայն՝ որ իւր թշուառութեան ատեն քե-
զի կը դիմէ »։ Եղիսաբեթ դարձեալ արթն-
ցաւ, և սիրտը լի ուրախութեամբ այս տեսիլ-
քիս վրայ՝ բերկրութեան արցունք թափեց։ Ցե-
տոյ յոգնած նորէն պառկեցաւ, և այնպէս խո-
րունկ քուն եղաւ, որ մնտակայ եկեղեցւոյն՝ ուր
սովորութիւն ըրեր էր երթալու, առաւօտեան
ժամերգութեան զանգակը չլսեց. երկրորդ զան-
գակին արթնցաւելով՝ շուտով գնաց խոստովա-
նելու իւր ծուլութիւնը. և խոստովանահօրմէն
խնդրեց որ այս բանիս համար մնտնաւոր ապաշ-
խարանք մ՚ալ դնէ իրեն վրայ։

Եղիսաբեթի ձայնը եթէ այնչափ զօրաւոր և
ազդու էր երկնային գթութիւնն ընդունելու,
զօրաւոր էր նաև երբեմն արդար դատաստան
կտրելու համար։ Իւր մէկ ճամբորդութեանը
մէջ, ինքը որ աղքատաց դայեակ կը կոչուէր,
ճամբուն վրայ աղքատ կին մը տեսաւ՝ որ տղա-
բերքի ցաւոց մէջ կը տառապէր. շուտով զանի-
կայ իւր հիւանդանոցը դրկեց, և հոն հարկա-
ւոր եղած խնամքը մատոյց թշուառին. ինքա-
մայր ալ եղաւ այն ծնած մանկանը և զանիկայ
իւր քաղցր անուամբը Եղիսաբեթ կոչեց։ Ամեն
օր մօրը այցելութեան կ՚երթար, կ՚օրհնէր զնա
և հարկաւոր եղած ամեն օգնութիւն անոր կը
մատուցանէր։ Գրեթէ ամիս մը զանիկայ իւր
հիւանդանոցին մէջ պահեց. ետքը երբ կատա-
րեալ առողջացաւ՝ արձակեց զայն իր տունը.

ապրուստէն զատ տալով անոր նաև տասուերկու դահեկան, պատմուհան մը և իւր ոտքին կօշիկները. անկէ զատ նորածին մանուկը մուշտակի մը մէջ պատել տուաւ, զոր իւր հետն եղողներէն մէկէն առեր էր։ Բայց այս անշնորհք և ապերախտ մայրը, փոխանակ Եղիսաբեթի այսչափ առատաձեռնութեանը և բարերարութեանը երախտագէտ ըլլալու, ընդ հակառակն նոյն իրիկունը դքսուհիէն հրաժեշտի ողջոյն խնդրեց, և առաւօտուն կանուխ ամուսնոյն հետ փախաւ գնաց իւր մանուկը հիւանդանոցը ձգելով։ Իսկ Եղիսաբեթ, որ գիշեր ցորեկ միշտ իւր սիրելի աղքատներուն վրայ կը մտածէր, առաւօտը կանուխ եկեղեցի մտնելու ժամանակ՝ իւր աղախնայրը մէկուն ըսաւ. «Փսակիս մէջ մէկ քանի դահեկան ունիմ, որ կրնայ օգտակար ըլլալ նորածին մանկան և իր թշուառ մօրը մխիթարութեան համար. ուստի առ ու իրեն տար». աղախինը ետ դարձաւ, ըսելով թէ կինը գնացեր էր իւր մանուկը հիւանդանոցին մէջ թողլով։ «Նուտ ըրէ, ըսաւ ապնիւ Եղիսաբեթը ծառային, գնա մանուկը ինծի բեր, որպէս զի չըլլայ թէ երեսի վրայ մնայ»։ Սակայն ուզեց որ արդարութեան ձեռքով՝ ասոր ձարը տեսնէ. ուստի դատաւորին մարդ ղրկեց որ ձամբայնեռուն վրայ զնուորներ դնէ որպէս զի այդ ապերախտ մայրը բռնեն և իրեն բերեն. բայց զինուորները չկարենալով գտնել՝ ետ դարձան. այն ատեն դքսուհին սկսաւ եռանդեամբ աղօթք մատուցանել առ աստուած։ Իւր աղախիններէն մէկը, որ կը վախեր Գոնբատի խրստութենէն՝ երբոր խմնալու ըլլար եղածը, ը-

սաւ իւր տիրուհւոյն որ աղօթք ընէ, որպէս զի աստուած յայտնէ այն ապերախտ մայրը։ Եղնսաբեթ ալ ըսաւ թէ «Ուրիշ բան չեմ խնդրեր աստուծմէ, միայն թէ իւր կամքը կատարուի յամենայնի»։ Փիչ Եռբը թէ՝ երիկը և թէ կինը հասան, ու դքսուհւոյն ոտքն խնալով՝ իրենց յանցանացը համար թողութիւն խնդրեցին. ու խոստովանեցան թէ անարեւոյթ զօրութեամբ արգիլուեցան ձամբուն վրայ, և չկրցան իրենց ձամբան առաջ տանիլ, որով ստիպուեցան նորէն իրենց առջի տեղը դառնալ։ Ոչ ոք տարակուսեցաւ թէ այս բանս դքսուհւոյն աղօթքովն եղեր էր. մէկէն առին յանցաւոր և ապերախտ մօրը ձեռքէն ինչ որ առաջ տուեր էին, որպէս զի ուրիշ արժանաւորագոյն աղքատաց բաշխեն. իսկ Եղնսաբեթ որուն սրտին վրայ գթութիւնը և աստուածպաշտութիւնը շուտ մը դարձեալ զօրացաւ, նորէն այն աղքատ կնոջը դարձուց թէ՝ կօշիկն և թէ մուշտակը՝ նորածին մանուկը պատելու համար։

Սակայն այսչափ յայտնի նշանաներով ալ, ոչ ոքնցմով աղէկ կը տեսնուէր թէ որչափ զօրաւոր է աստուծոյ քով իր բարեխօսութեամբը, իր կարգէ դուրս խնայարհութեամբն Եղնսաբեթ երբեմն այնպիսի անսխտահութիւն կ'ունենար իր անձին վրայ՝ որ կարծես թէ կը տարակուսէր աստուծոյ ողորմութեանը վրայ, ինչն ալ կ'ունենար երբեմն յուսահատական և տրխուր վայրկեանները, ինչպէս որ կ'իմանան իրենց մահկանացու կենացը մէջ՝ երկնաւոր ձամբուն վրայ ամենէն յառաջադէմ հոգիները. այն ատեն իր սիրտը որ միշտ վառ էր աստուածային

սիրով, կը համարձակէր տարակուսիլ թէ արդեօք պիտի կարենար գտնել յաստուած այն սէրը որ համեմատ ըլլար իրեն աստուծոյ վրայ ունեցած սիրոյն։ Իւր առաջին խոստովանահայրը՝ Թոտինկէր վարդապետը, օր մը իրեն այցելութեան եկած ըլլալով, Եղիսաբէթ իրեն հետ Լայն գետին ափանցը վրայ շրջագայութեան ելաւ, հետը ունենալով իւր երեք աղախինները։ Իր հին բարեկամին հետ ըրած խօսակցութեանը մէջ, որ անշուշտ Գոնզատին պէս խիստ չէր, ըսաւ իրեն. «Բան մը կայ որ զիս ամէն բանէ աւելի կը չարչարէ, հայր սուրբ. քիչ մը կը տարակուսիմ ստեղծողիս իմ վրաս ունեցած սիրոյն վրայ. չէ թէ անոր համար որ լի է բարութեամբ և միշտ առատ իւր սիրովը, հապա իմ այնչափ անարժանութեանցս համար, որ զիս իրմէ կը հեռացընեն, թէպէտև իրեն սիրովը բորբոքուեր եմ»։ «Չեն վախնալու բան չկայ, պատասխանեց քահանայն դքսուհւոյն՝ վասն զի աստուածային բարութիւնը այնչափ մեծ է, որ անհնարին է տարակուսիլը թէ աստուած չսիրեր զանոնք ամենքը՝ որ զինքը կը սիրեն, և թէ միայն անոնցմէ կը սիրուի»։ «Ինչպէս ուրեմն, վրայ բերաւ Եղիսաբէթ, թոյլ կուտայ որ տրրտմութիւնը կամ սրտի լքումը զիս իրմէ հեռացընէ քիչ մը ատենուան համար. որոնց հետ միշտ և ամէն ժամանակ կ'ուզէի միացած ըլլալ»։ Կրօնաւորը պատասխանեց իշխանուհւոյն, որ անիկայ չէ թէ երեսի վրայ ձգուած անձի մը նշանակ է, հապա նախամեծար սեպուած սրբոտի. և թէ անոնք են ապահով միջոցներ սէրն աճեցընելու համար։ Յետոյ անոր գեղեցիկ ծառ

մը ցուցնելով, որ գետին դիմացի կողմի ափանցը վրայ կը բարձրանար, ըսաւ թէ «Աչելի դիւրին է որ այս ծառը ինքիրմէ փոխադրուի գետին այս ափանցը վրայ՝ (ուր կը քալէին) քան թէ աստուած իր արարածներէն վար մնայ անանց վրայ ունեցած սիրովը»։ Հազիւ թէ այս խօսքերը զուրցեց, ներկայ գտնուողները զարմանքով տեսան որ այն ծառը, որուն վրայ կը խօսէր, գետէն անցաւ և դիմացի կողմի ափանցը վրայ անկուեցաւ։ Այս աստուածային սիրոյ հրաշալի տեսարանին մէջ Եղիսաբեթ ճանչցաւ կատարեալ կերպով անոր զօրաւոր ու յաւիտենական ճշմարտութիւնը՝ որ ըսեր էր իւր աշակերտացը. «Եթէ միայն մանանխոյ հատի չափ հաւատք ունենայիք, ու ըսէիք այդ թզենւոյն՝ թէ ելիր քու տեղէդ և ծովուն մէջ տընկուէ, ձեզի պիտի հնազանդէր»։ Մէկէն դէպ սուՀին Բոտինկէր վարդապետին ոտքն ինկաւ իւր թերահաւատութեան մեղքը խոստովանելու և իրմէ ներում խնդրելու համար։

Եղիսաբեթ իր աղօթիցը այն անկուն զօրութիւնը տալու համար՝ սովորութիւն ըրեր էր այն գերագոյն կարողութեան հանապազօր կըրթութեանը ետեւէ ըլլալ. և թէպէտ իրէն ժամանակին մեծ մասը ողորմութեան գործերու կը նուիրեր, բայց կը գտնէր նաև երկայն ժամեր ալ աղօթից և մտածութեանց պարապելու։ Մարթայի պէս եռանդուն խնամքով Յիսուսի Քրիստոսի աղբատները հոգալէն ետքը, Մարիամին պէս կու գար կը նստեր իր տիրոջը ոտքին քով, բոլորովին ընկղմելու իր ներհացը և ողորմութեանց մտածութեանը մէջ. «Կեր-

դուքնամ առաջի աստուծոյ – կը գրէր իր խրա-
տակրօն խոստովանահայրը առ քահանայա-
պետն Հռոմայ – որ հազիւ երբէք տեսեր եմ
կնիկ մարդ մը որ Եղիսաբեթի նման մտածա-
կանի ետևէ ըլլայ»։ Շատ անգամ իշխանու-
հին, ձեռքերն ամփոփած, աչքերը և սիրտը
դէպի երկինքը վերուցած այնպէս երկայն ժա-
մեր աղօթք կը մատուցանէր առ աստուած. և
յաճախ գիշերուան մէկ մասը եկեղեցեաց մէջ
կ'անցընէր, թէպէտև Գոնրատ կ'արգելուր զայս,
որովհետև երբէք չէր ուզեր որ Եղիսաբեթ ինք-
զինքը զրկէ հարկաւոր եղած հանգստութենէ։
Եւ որովհետև դքսուհին միշտ առանձին և ա-
զատ չէր գտնուեր Մարպուրկ քաղաքին եկե-
ղեցիներուն մէջ, այն պատճառաւ կ'ախորժէր
իւր աղօթքը մատուցանելու դաշտերուն մէջ
և երկնից կամարին տակ, այնպիսի տեղ մը՝ ո-
րուն իւրաքանչիւր կտորը կը յիշեցնէր իրեն
արարչին մեծութիւնը և փառքը։ Կը պատմուի
թէ երբոր բացօթեայ աղօթք կ'ընէր և անձրև
կու գար և բոլոր գետինը կը թրջէր, ինքը մի-
այն չոր կը մնար։ Շատ կ'ախորժէր երթալ ու
առանձին գեղեցիկ աղբիւրի մը քով քաշուիլ
ու նստիլ, որ աբանչելի անտառի մը մէջ՝ քարա-
ժայռ լերան մը ստորոտէն կը բղխէր քաղքէն
քիչ հեռու, և Մարպուրկէն երկու մղոն ան-
դին։ Հոն տանող ճամբան դժուարին և վտան-
գալից էր, անոր համար քարայատակ մաքուր
ճամբայ մը շինել տուաւ, և այն պայծառ աղ-
բիւրակին քով փոքրիկ մատուռ մը կանգնեց։
Թիչ ատենէն այն դաշտային և առանձին տեղը
Եղիսաբեթի աղբիւր կոչուեցաւ և մինչև այս օրս

այնպէս կը կոչուի։ Ամենէն աւելի գէշ օդերն ալ իրեն արգելք չեին ըլլար իւր սիրելի բնակարանն երթալու. Ճամբան միշտ կ'աղօթէր. իւր աղջիկին մինչև Մարպուրկ հաղիւ Հայր մեր մը կրնար զրուցել. այնչափ իւր աղօթքը խառն և լի էր խորհրդածութեամբ։

Օրինակ առնելու բարեպաշտութեամբ և Ճշդութեամբ ներկայ կը գտնուէր ամենայն աստուածային պաշտամունց։ Աստուծոյ ու սուրբերուն համար լի գորովով և սիրաբուխ մեծամանք մը ունէր. անոնց վարուց պատմութիւնը բարեպաշտութեամբ մտիկ կ'ընէր, խղճի մտոք տնտեսմբութիւնները կը կատարէր, և նշխարացը յարգանքը պաշտօն կը մատուցանէր, ու կը պատուէր մոմեր վառելով և խունկ ծխելով տալով անոնց առջևը։ Սուրբ Յովհաննէս աւետարանչէն ետքը, որ իւր մասնաւոր բարեկամն էր, սրբուհի Մարիամ Մագդաղենացւոյն կարգէ դուրս սէր ունէր. իսկ սուրբ կոյսն Մարիամ իւր առանձին և եռանդուն յարգութեանը միակ նպատակն էր, միշտ իւր վրայ կը կրէր երկնից թագուհւոյն չորս պատկերները, զոր պահեց մինչև իւր մահը, և յետոյ ժառանգութիւն ձգեց իւր Սոփիա անդրանիկ դստերը։ Բայց միւս կողմանէ չէր ալ ուզեր շատ պատիւ ընծայելու այս արտաքին բարեպաշտական նշանացը, և միանգամայն լաւ գիտէր զանազանել անոնց նիւթական յարգը որ կրնայ ըլլալ մտերիմ և մաքուր զգացմանց մէջ, ինչպէս որ սուրբը հաւատքը կը ցուցնէ։ Երբ օր մը վանքի մը այցելութեան գնացեր էր, և կրօնաւորները Եղնսաբեթի չորս կողմը ժողվուած՝ գրեթէ

քան ու ջրս հոգի, կը ցուցնէին իրեն մեծ ուրախութեամբ իրենց եկեղեցին զարդարող ոսկեզօծ հարուստ փորուածները, Եղնաբեթ պատասխանեց անոնց. «Շիտակն ըսելով, այն ստակը զոր ծախեցիք այս փորուածներուն, լաւագոյն ըրած կ'ըլլայիք եթէ գործածած ըլլայիք ձեզի զգեստ շինելու և ձեր կերակրոյն տալու, քան թէ այս պատերը զարդարելու. վասն զի այդ փորուածներուն այդչափ սէր կա՝ պելէն ետքը՝ պէտք է որ զանոնք ձեր սրտին մէջ կրեք»։ Դքսուհին նոյն խստութիւնը կը բանեցընէր նաև իրեն հանար. երբ օր մը իրեն առջևը գեղեցիկ պատկեր մը գովելով՝ կը ստիպէին զինքը որ գնէ, անոնց պատասխանեց. «Այս պիսի պատկերի մը երբէք հարկաւորութիւն չունիմ, վասն զի այն գեղեցիկ պատկերը սրտիս մէջ կը կրեմ»։ Նոյն կարծիքն ունէր նաև իւր հռչակաւոր ժամանակակցաց մէկը, Թէպտան բնաւորութեամբ իրմէ տարբեր, Սիմոն Մոնֆորի կոմսը. որուն հանար սուրբն Լուդովիկոս զարմանքով կը պատմէր Ժոէնվիլի, թէ երբ Եկան իրեն խմացընելու որ գայ տեսնէ Քրիստոսի մարմինը, Ճշմարիտ մարմին և արիւն դարձած քահանային ձեռքը, որուն վրայ շատ զարմացեր էին, կոմսը պատասխանեց անոնց. «Գը՝ նացեք դուք որ կը տարակուսիք. վասն զի ես կատարեալ կերպով և առանց տարակուսելու կը հաւատամ, և ահա այս հաւատալուս համար կը յուսամ երկինքը հրեշտակներէն աւելի պը՝ սակ մը ընդունիլ, որ զինքը դէմ յանդիման կը տեսնեն»։

Անտարակոյս աստուծոյ պատկերը Եղիսա՝

բեթի սրտին մէջ խորունկ կերպով տպաւորուեր և միշտ նեղկայ էր իրեն սիրոյն առջեւ, ուստի կարօտութիւն ալ չունէր այն օգնութիւններուն զոր սուրբ եկեղեցին գթալիր սիրով կը մատուցանէ իւր հաստատակ որդւոցը։ Մինչ իրեն միտքը աստուածային գերագոյն խորհրդոցը մէջ կը յափշտակուէր ու կը պտտէր. աչքին առջեւէն կ'անցնէին այն անկատար պատկերները, զորոնք մարդկային երեւակայութիւնը հնարեր է զհաւատքը ալ աւելի բորբոքելու համար։ Որչափ աւելի կը մտենար իր կարճատեւ կենաց վախճանին, այնչափ աւելի իր աղօթքները զմայլման և յափշտակութեան կերպարանք կ'առնուին, որ կարծես թէ իրեն քաղցր ձայնքայ մը կը բանային յաւիտենական կեանք անցնելու։ Ամեն օր, ու օրուան մէջ երկայն ժամեր կը թողուր այս կերպով ցաւոց և տառապանաց աշխարհքը, որպէս զի առաջուընէ երկնային ուրախութեանց ձաշակին առնու։ Այնթիւ են իրեն եղած յայտնութիւնները և տեսիլները. և թէպէտ ինքը ամեն ջանքը կ'ընէր այս աստուածային շնորհքները չայտնելու, սակայն չէր ալ կրնար բոլորովին ծածուկ պահել. անոնցմէ որ ամեն օր իրեն հետն էին. սակէ զատ իր ուրախութիւնն և երախտագիտութիւնն ալ շատ անգամ զինքը կը մատնէին։ Հրեշտակները սովորական միջնորդներ էին իրեն ու աստուծոյ մէջ. և չէ թէ միայն երկնային խրատներ և լուրեր իրեն կու տային, այլ և շատ անգամ կու գային զինքը մխիթարելու իր նեղութեան ու փորձութեան ատեն։ Անգամ մ'ալ Եղիսաբեթ իր քոյր Հիւանդ եւաղ-

քատ կնիկ մ՚առեր էր, ու ամէն հոգ ու խնամք անոր վրայ կը ցուցընէր. այս կինը առողջութիւնը գտնելէն ետքը առաւօտ մը կանուխ տրնէն ելաւ փախաւ, հետը տանելով իւր բարեբարին ամէն զգեստները, այնպէս որ հաշնելու ուրիշ զգեստ չունենալով՝ ստիպուեցաւ Եղիսաբեթի մերկ անկողնոյն մէջ կենալ. և փոխանակ գանգատելու կամ բարկանալու, բաւական սեպեց այս խօսքս ըսելը. «Սիրելի փրկիչս, շնորհակալ եմ որ զիս այսպէս քեզի նմանող բրիր. վասն զի աշխարհքը եկար մերկ, և ամէն բանէ զրկուած, և այնպէս գամուեցար խաչին վրայ»։ Եւ ահա յանկարծ հրեշտակ մ՚երևցաւ իրեն ուրիշ անգամուան պէս, երբ անձամբ աղքատաց բաժներ էր իւր բոլոր զգեստները, և գեղեցիկ ու աբանելի զգեստ մը ձեռքը բռնած՝ դքսուհւոյն տուաւ ըսելով. «Ա.յս անգամ քեզի պակաս չգերի, որովհետև աստուած իր փառքովը կ՚ուզէ շուտով պակէլ զքեզ»։

Ճատ անգամ ալ իւր հոգւոյն երկնային փեսայն, իւր կենաց միակ տէրն ինքն Քրիստոս կ՚երևէր իրեն դէմ յանդիման, հետն ունենալով շատ մը սուրբեր. կը սփոփէր զանիկայ իւր քաղցր խօսքերովը, և կը զօրացնէր իւր ներկայութիւնովը։ Ա.յս աստուածային խօսակցութիւնները լմընալէն ետքը, Գոնզատին ըսածին համեմատ դքսուհին հրաշալի պայծառութիւնմբ մը լուսաւորուած, աստուածային փառաց լուսաւոր ծագումը կը տեսնուէր անոր երեսին վրայ. և գեղեցիկ բիբերէն՝ արևուն ճառագայթներուն նման փայլուն նայուածներ կը շողային։ Անոնք միայն որ մանուշակ մեղք չունէին, կրնային ա-

նոր երեսը նայիլ առանց շլանալու. և եթէ այս զմայլմունքները երկար ժամանակ տևէին, Եղնսաբէթ մեծ ուժ կ'առնուր, անանկ որ ալ կերակուր ուտելու պէտք չէր ունենար։ Հոգւոյն մնունդը կը բաւէր նաև մարմնաւոր կենացը հաւմար. և բովանդակ օրը կ'անցընէր անով՝ որուն հետ որ կապուէր էր իր սիրովը։ Ուրիշ բանով չէր կրնար իր նոյն ատենուան վիճակին մէկու մը յայտնել բայց եթէ Սուրբ գրոց այն երկնային խօսքերն բաելով. Հոգիս հապեցաւ, երբ իմ սիրելիս ելնէր ետ խօսեցաւ։

Այսպէս իրաւ պիտի ելլէր այն մարգարէական գուշակութիւնը, որով ընտրեր էր մանկութեանը ժամանակ՝ իրեն պաշտպան, բարեկամ և օրինակ՝ այն երանելի աւետարանիչը, որ ընդուներ էր սիրոյ մնմնաւոր պարգևը, և Փրկչին սրտին վրայ հանգչելով՝ տեսեր էր երկնից ամենայն գաղտնիքը։ Ուստի աստուածային ուրախութիւն մը տարածուեցաւ իւր բովանդակ կենացը վրայ. և որ և իցէ ձախորդութիւն կամ փորձութիւն չէին կրնար խռովել այն իրեն ուղեցած քաղցրութիւնը և հանդարտութիւնը. ոչ երբէք տեսան զԵղիսաբեթ շփոթած կամ բարկացած, այլ ընդ հակառակն անդադար կրկնապատկելու հետ էր իր ուրախութիւնը ձախորդութեան ժամանակ։ Ով որ իրեն կուգար ամենեին անոր երեսին վրայ ցաւի կամ հիւանդութեան նշան մը չէր տեսներ, և սակայն միշտ կ'արտասուէր. և այն սուրբ արցունքի պարգևը զոր ընդուներ էր օրօրոցին, այնչափ աւելի կ'առատանար որչափ որ մահը կը մօտենար. և որչափ աւելի երջանիկ սեպէր ինք-

զինքը, այնչափ աւելի կ'արտասուէր. բայց արցունքները հանդարտ և գաղտնի աղբիւրի մը պէս կը վազէին, առանց ամենևին դէմքին վրայ նշան մը ձգելու և կամ գեղեցկութեանը վնաս մը բերելու։ Մանաւանդ թէ ալ աւելի գեղեցկութիւն մը կը հնարէին անոր կերպարանացը. վասն զի արցունքը վերջին եռանդ մը կրնար սեպուիլ իր սրտին համար. և ինչպէս երբեմն ցաւոց արտասուքը, զոր մարդկային սէրը կամ դժնդակ հալածանքները կը վազցնէին իր աչքէն, այսպէս ալ գերբնական ուրախութեան արցունքը զոր իր կենաց բաժակին մէջ կը թափէր, կաթիլ կաթիլ կը ժողվուէին իր երկնային փեսային ձեռքով, և կ'ըլլային մէյմէկ մարգարիտ այն յաւիտենական պսակին՝ որ իրեն պահուեր էր երկնից մէջ։

ԻԹ

Սրբուհւոյն Եղիսաբէթի մահը։

Հազիւ երկու տարի անցեր էր՝ քանի որ Եղիսաբէթ սրբոյն Փրանկիսկոսի կրօնից զգեստին հետ հագեր ու առեր էր երկնային զօրութիւն մը՝ արհամարհելու քաջութիւն ամէն երկրաւոր վայելք, և դիմելու յերկինս փշալից ճամբով մը։ Աստուած ալ բաւական սեպելով անոր ձգնութիւնները՝ հրամայեց որ մահկանացու և վաղանցուկ թագաւորութենէն փոխուելով՝ գայ մտնէ հրեշտակաց անմահ և անանց բնակարանը։ Երբ երգոցին աստուածային փեսայն, իմացուց իւր սիրելոյն թէ բովանդակ կենաց տխուր ու տրտում ճամբուն ալ անցեր էր իր ամենայն փոթորիկներովը, և գարնանային յաւիտենական արշալոյսը պիտի ծագէր իրեն համար։ 1231 տարւոյն վերջը, յորում սրբոյն Փրանկիսկոսի կրօնքը՝ հռչակաւոր և լի փառաք

զսուրբ Անտոն Բատուացին երկնից նուիրեց, Բորդոգալի և Իտալիոյ պատիւը, նոյնպէս ամենակարողն ատուած փափաքելով իւր սրբոյ բանակը շատացնել, նոր զոհ մը կը մնտրուէր, ու կը կրարէր գեղեցիկ և սակաւագիւտ ծաղիկ մը։ Գիշեր մը երբ Եղիսաբեթ կէս մը աղօթքով և կէս մը քունով կ'անցնէր, յանկարծ Քրիստոս աբանչելի կերպով լուսաւորուած երևցաւ իրեն ու անուշ ձայնով մ'ըսաւ. «Ե՛կ Եղիսաբեթ, սիրելի և գորովալից Հարս. Եկ ինծի հետ այն տապանակին մէջ որ ի յաւիտենից քեզի համար պատրաստեցի. հիմա զքեզ հոն պիտի տանիմ»։ Երբ զքսուհին արթնցաւ այս զմայլմունքէն, բոլորովին ուրախ զուարթ իւր մեծակայ ազատութեանը վրայ, անապատ ելաւ պատրաստուիլ այն երջանիկ ճամբորդութեանը, և կարգաւորեց յուղարկաւորութեանը և թաղմանը համար պէտք եղած բաները. և վերջին անգամ մը բոլոր իւր հիւանդացեալն և աղքատաց այցելութեան երթալով՝ օրհնեց զանոնք կարդէ դուրս ուրախութեամբ։ Գոնսատ վարդապետն ալ գրեթէ նոյն ժամանակը բաւական ծանրկեկ հիւանդացեր էր, և սաստիկ ցաւերով կը տանջուէր. մարդ ղրկեց ու խնայուց իր հնազանդ խոստովանողէն՝ իր տկարութիւնը, որ շուտով մը անապարեց ու Գոնսատն քովը եկաւ։ Գոնսատ շատ սիրով ընդունեցաւ զդքսուհին և ան ալ փոխարէն շատ ցաւ զգաց՝ զինքը այս վիճակին մէջ գտնելուն համար։ Գոնսատ վերջէն վրայ բերաւ ըսելով. «Ի՞նչ պիտի ընես, սիրելի դուստր, երբ մեռնելու ըլլամ։ Ի՞նչ կերպով պիտի կառավարես կեանքդ.

ով պաշտպան պիտի ըլլայ քեզի չարերուն դէմ։ և ով քեզի պիտի առաջնորդէ առ աստուած»։ «Հարցմունքդ ընդունայն է, ըսաւ դպրուհին, որովհետև ես քեզմէ առաջ պիտի մեռնիմ, հապա ասում ինծի, և քեզմէ զատ ուրիշ պաշտպանի պէտք պիտի չունենամ»։

Ա. յս խօսակցութենէս չորս օր ետքը Եղնսաբեթ սկսաւ զգալ իր մահաբեր հիւանդութեան սկիզբը, որ պիտի սպառէր իր երկրաւոր կենաց շունչը և որ պիտի առաջնորդէր ու տանէր զինքը Ճշմարիտ և ի յաւիտենական կեանս։ Ուստի իշխանուհին ստիպուեցաւ անկողնին մնալու. գրեթէ տասնուչորս օր ցաւ կրեց սաստիկ ջերմով, բայց միշտ ուրախ զուարթ՝ անդադար աղօթք կը մատուցանէր առ աստուած։ Տասնուչորս օրէն ետքը, օր մը երբ սենեկին պատին կողմը դարձեր էր, ու կարծես թէ կը քնանար, աղախիններէն մէկը՝ որ իրեն պէս Եղնսաբեթ կը կոչուէր և որ անոր անկողնոյն քովը նստեր էր, լսեց քաղցր և ներդաշնակ ձայն մը՝ որ հիւանդին շրթունքներէն կ'ելլէր. քիչ մը ետքը դպրուհին դիրքը փոխեց, և դառնալով դէպի ընկերոջը՝ ըսաւ. «Ո՞ւր ես, սիրելիս»։ «Ահա հոս եմ, պատասխանեց աղախինը. «Ո՛հ, տիկին, գիտես թէ ինչ սքանչելի կերգով կ'երգէիր»։ «Ի՞նչ, ըսաւ Եղնսաբեթ, դուն ալ բան մը լսեցիր»։ Երբ՝ այո՝ պատասխանեց ընկերը, հիւանդն իր խօսքը առաջ տարաւ. «Փոքրիկ, գեղեցիկ թռչուն մը եկաւ հանգչեցաւ իմ և պատին մէջ տեղը, և այնպէս անուշ ու ներդաշնակ ձայնով սկսաւ երգել որ ուրախացուց սիրտս ու հոգիս, և զիս ալ գրգռեց իրեն հետ

երգելու. և յայտնեց ինձի որ չորս օրէն պիտի մեռնիմ»։ «Անշուշտ, կը յաւելու հոս հին պատմագիր մը, պահապան հրեշտակն էր, որ փոքրիկ Թոնշոյ կերպարանքով եկաւ աւետելու իրեն յաւիտենական ուրախութիւնը»։ Ա. յիս ա-տենէն ի վեր՝ ալ քիչ ժամանակ ունենալով իւր աչքին առջևը՝ պատրաստուելու համար իր վերջի պատերազմին, չուզեց քովը ոչ աշխարհական անձ մը, և ոչ ալ այն ազնուական տիկնայքը, որոնք սովորութիւն ունէին իրեն այցելութեան գալու։ Հրաժարեցաւ անոնցմէ, վերջին անգամ մը օրհնելով զամենքը որ կու գային սովորաբար զինքը տեսնելու։ Քովը պահեց՝ բայց ի իւր աղախիններէն՝ մէկ քանի կուսանք որ իրեն հետ մնացեալ սիրով մը կապուած էին. նմանապէս իր խոստովանահայրը և այն փոքրիկ աղքատը՝ զոր երիտասարդ բորոտին տեղ կը պաշտպանէր ու կը խնամէր՝ որ Գոնզատ իրմէ հեռացուցեր էր։ Երբ հարցուցին Եղիսաբեթին՝ թէ ինչ բանի համար այսպէս կը հրաժարէր ամենէն, պատասխանեց անոնց. «Որովհետև միայն աստուծոյ հետ կ'ուզեմ կենալ և մտածել իմ դատաստանիս ահաւոր օրուանը վրայ, և իմ ամենակարող ու անաչառ դատաւորիս վրայ»։ Յետոյ սկսաւ արտասուելով աղօթել և աստուծոյ ողորմութիւնը խնդրել։

Կիրակի օրը, որ սուրբ Մարտինոսի ութօրեկից հոկտեմբերի էր (18 նոյեմբեր 1231), առաւօտեան ժամերգութենէն ետքը, խոստովանանք եղաւ Գոնզատին՝ որ բաւական վրայ դրեր էր։ Ժամանակակից ձեռագիր մը կ'ըսէ թէ Եղիսաբեթ ձեռքը սրտին վրայ տարաւ,

և որչափ որ կրցաւ զայն յայտնեց. բայց բան մը չունէր իւր սրտին մէջ որուն վրայ խիղճը անհանգիստ ըլլար, և ոչ ամենաթեթև յանցանք մը կրնար գտնել, զոր անկեղծ զղջմամբ հազար անգամ խոստովանած չըլլար։ Երբ խոստովանանքը լմընցաւ, Գոնարատ հարցուց Եղիսաբեթի իւր վերջին կամքը իր կամ կարասեացը նկատմամբ։ «Շատ կը զարմանամ, պատասխանեց Եղիսաբեթ, որ ինծի այսպիսի հարցմունք մը կ'ընես. վասն զի լաւ գիտես թէ երբ հնազանդութեան ուխտը ըրի, ամէն ունեցածիս հրաժարեցայ. նոյն իսկ իմ կամքիս, տղոցմիս, և աշխարհային ամէն զուարճութիւններէն. և ուրիշ բան չպահեցի քովս, բայց միայն ինչ որ հարկաւոր էր քու հրամանիդ համեմատ հոգևոր պարտքերս կատարելու և ողորմութիւն ընելու համար. շատ կը փափաքէի որ քու հրամանովդ հրաժարէի ամէն բանէ, և փոքրիկ խցի մը մէջ ապրէի այն ամենօրեայ հացովը՝ որ ուրիշ աղքատներն կը մուրան ու հաղիւ կը գտնեն։ Երկար ատենէ ի վեր իմ չէին ինչ ստացուածք որ հոս կը տեսնէիք ու իմ կը կարծէիք որ ըլլային. անոնք ամէնն ալ աղքատաց ստացուածք կը սեպուէին։ Ուստի անոնց բաժնէ ինչ որ կը ձգեմ, բաց ի այն աղքատին և ամէն օր գործածած պատմուճանէս, որով կ'ուզեմ որ զիս թաղեն. կտակս չեմ գրեր, որովհետև Քրիստոսէ զատ ուրիշ ժառանգ մը չունիմ»։ Բայց երբ իր ընկերներէն մէկը շատ աղաչեց որ իրեն յիշատակ մը ձգէ, տուաւ անոր իր հօրը սրբոյն Փրանկիսկոսի այն խեղճ վերարկուն զոր սրբազան քահանայապետն իրեն զրկեր էր։

«Ահա քեզ կը ձգեմ այս վերարկուս, ըսաւ ընկերոջը, որ թէպէտ պատրաստած, կարկատուն ու խեղճ է, սակայն պատուականագոյն է քան զամենայն մարգարիտս։ Ամէն անգամ որ կ'ուզէի մանաւոր շնորհք մը խնդրել իմ սիրելի Յիսուսէս՝ ու աղօթքի կը կենայի այս պատմուճանս վրաս առած, միշտ կը հաճէր կատարել խնդրուածքս իր անսահմանն գթութեամբը»։ Եղբը խնդրեց որ զինքը այն հիւանդանոցին ե. կեղեցւոյն մէջ թաղեն զոր ինքը շիներ ու նուիրեր էր ի պատիւ և յանուն սրբոյն Փրանկիսկոսի։

Գոնրատին հետ երկար ատեն տեսնուելէն և անոր սուրբ պատարագին ներկայ ըլլալէն ետքը, առաւօտեան դէմ մատուցին իրեն սուրբ խորհուրդները՝ որոնց անհամբերութեամբ կը սպասէր։ Ո՞վ կրնայ մակաբերել և գուշակել թէ ինչ անկեղծ գորովով, որպիսի մաքրութեամբ սրտի, եռանդուն փափաքով և երկնային ուրախութեամբ ընդունեցաւ զսուրբ հաղորդութիւնն. անչուշտ այն միայն գիտէ որ հաճեցաւ իրեն առաջնորդ և թոչակ ըլլալ այն վերջի ճամբորդութեանը մէջ. բայց որչափ որ դրսէն ալ կը տեսնուէր, բաւական էր յայտնելու ներկայ գտնուողներուն այն աստուածային շնորհաց առատութիւնը որով լեցուեր էր սիրտը։ Վերջին օծումն ընդունելէն ու հաղորդուելէն ետքը, երկար ատեն լուռ և անշարժ կեցաւ նոյն օրը ինչպէս երեկոյեան ժամերգութեան ատեն, բոլորովին ընկղմած մտածութեանց մէջ, և զմայլմամբ յափշտակուած այն կենաց արեամբ զոր վերջին անգամ երկրիս վրայ կը ճաշակէր.

եաքը յանկարծ իր շրթունքը բացուեցան, ու շատ մը բարեպաշտ և եռանդուն խօսքեր խօսեցաւ. իր լեզուն որ մինչև այն ատեն սակաւ խօս էր, աղբիւրի պէս սկսաւ լուսաւոր խօսքեր վազցընել բերնէն. բայց այնպիսի խոհեմութեամբ և կշռելով, որ այնչափ խօսած խօսքերուն մէջ և ոչ ընդունայն խօսք մը կը գտնուէր. հապա ինչ որ լսեր էր քարոզիչներէն, կամ ընտիր գրքեր կարդալէն, կամ իր զմայլմանց մէջ զգացած, բոլորն ալ միտքը կու գային, զորմնք մեռնելէն առաջ իր հետն եղողներուն կը հաղորդէր։ Դիտութեան և ճարտասանութեան անծանօթ գէտ մը յանկարծ բղխեց իր սրտէն՝ երբոր երկինք թռչելու կը պատրաստուէր։ Միտքը բերելով սուրբ գրոց պատմութիւնները, և անոնց մէջէն ալ այն դէպքն ընտրեց որ յարմարագոյն էր իրեն նման սիրողի մը սրտին. ու սկսաւ Ղազարու յարութեան պատմութիւնը պատմել. երևակայելով Քրիստոսի այն այցելութիւնը զոր ըրաւ անոր երջանիկ քրոջը Մարթայի և Մարիամու, հաճելով ցաւակից ըլլալ անոնց ցաւոցը, և երթալ մէկտեղ մինչև իրենց եղջերը գերեզմանն ու ցուցընել իր գորովալից և անկեղծ ցաւը, անոնց արտասուաց հետ խառնելով իր աստուածային արտասուքը։ Հոս կենալով Եղեսաբեթ սկսաւ խորունկ կերպով մտածել թէ Քրիստոսի Ղազարու համար, թէ՛ ետուսաղէմ քաղաքին համար և թէ՛ խաչին վրայ թափած արտասուացը վրայ. և եաքը այնպէս սաստիկ և եռանդուն կերպով խօսեցաւ՝ որ հոն եղողներուն սիրտը տակն ու վրայ ըլլալով՝ սկսան լալ. հոգեվարքը տեսնելով որ կու

լան, և ուզելով անոնց անուշ մխիթարութիւն մը տալ, կրկնեց այն խօսքերը զոր Քրիստոս մեռնելու երեթալու ժամանակ ըսաւ. «Երուսաղեմի աղջիկները, մի՛ լայք իմ վրայս, այլ մանաւանդ լացէք ձեր վրայ»։ Իր գեթալից սրտովն երկինք երեթալու ժամանակն ալ գէռ անոնց վրայ կը մտածէր, զորոնք սիրեց երկրիս վրայ. կ'ուզէր սփոփել անոնց ցաւը գորովագութ ու մխիթարական խօսքերով, ու անդադար զիրենք իր բարեկամներն ու սիրելիները կը կոչէր։ Այս ամէն խօսքերէն ետքը լռեց Եղիսաբեթ, խոնարհեցուց իր գլուխն ու երկար ատեն լուռ կեցաւ։

Քիչ մը ժամանակ անցնելէն ետքը, առանց շրթունքները բացուելու, կարգէ դուրս քաղցր և դաշնակաւոր ձայն մը սկսաւ լսուիլ իր բերանէն. երբ իրեն հարցուցին թէ ինչ էր այն ձայնը, պատասխանեց. «Չի լսեցիք անոնց ձայնը որ ինծի հետ կ'երգէին. ես ալ կրցածիս չափ ջանացի երգել անոնց հետ»։ Իր վարքը գրողներէն մէկը կը զուրցէ, թէ «Աշտարակոյս կը խառնէր իր քաղցր ձայնը երկնաւոր զօրաց յաղթական և հաճոյական երգերուն հետ, որոնք կը սպասէին անձկանօք հոգեվարքին իրենց հետ միանալուն։ Կ'երգէր աստուծոյ փառքը հրեշտակաց հետ»։ Կարգէ դուրս ուրախութեամբ և եռանդուն ջերմեռանդութեամբ արևը մտնելէն ետքը մինչև երկրորդ օրուան արշալոյսը այսպէս կեցաւ։ Յաղթութեանը ժամանակ իրաւամբ կ'ուրախանար բոլորովին վերջացած պատերազմներուն, և իր փառաւոր պսակին վրայ։ Դեռ կէս գիշեր չեղած իր բարեկամներուն ըսաւ. «Ի՞նչ պիտի ընենք եթէ մեր թշնամին՝

աստանան երևնալու ըլլայ». ու քիչ մը ատե-
նէն Եսքը բարձր և որոշ ձայնով աղաղակեց.
«Փախիր, ելա, փախիր. ես արդէն քեզմէ հրա-
ժարեր եմ». ու մէկէն ի մէկ վրայ բերաւ. «Հէր
մա որ սատանան գնաց՝ աստուծոյ և իր որդւոյն
վրայ խօսինք. մի՛ ճանճրանաք որովհետև երկար
պիտի չխօսիմ»։ Կէս գիշերուան ատեն այնպէս
իրեն երեսը փայլեցաւ որ հաղիւ կրնային նա-
յիլ. ու առտուան դէմ երբ առաջին անգամ
աքաղաղն ձայնը լսուեցաւ, ըսաւ. «Ահա այն
ժամը յորում Կոյսն Մարիամ ծնաւ զՅ. խա-
սինք ուրեմն աստուծոյ ու մանուկ Յիսուսին վը-
րայ, վասն զի այս ժամուս ծնաւ և դրուեցաւ
մսրին մէջ. ահա այն ժամը յորում եկաւ զաշ-
խարհս փրկելու, զիս ալ պիտի փրկէ. ահա այն
ժամը յորում մեռելոց յարութիւն տուաւ ու
կապուած հոգիները խալըսեց, զիս ալ պիտի
խալըսէ այս խեղճ աշխարհէս»։ Իր ուրախու-
թիւնն և երջանկութիւնը ամէն վայրկեան կը
շատնար. «Ցկաց եմ, կ'ըսէր, բայց ամենեւին
ցաւ մը չունիմ։ կարծես թէ ամենեւին հիւան-
դացած չեմ։... Ցձեզ ամենքնիդ աստուծոյ կը
յանձնեմ»։ Բոլորովին հոգւով սրբով լեցուած,
քիչ մը ժամանակ ևս խօսեցաւ այնպիսի աս-
տուածային սիրոյ խօսքեր որոնք ափսոս որ մե-
զի չհասան։ Վերջապէս ըսաւ. «Ո՛վ Մարիամ,
հասիր ինծի յօգնութիւն։... Եկաւ ահա այն
վայրկեանը յորում աստուած կը կոչէ ի հար-
սանիս իր բարեկամները... փեսայն փնտռելու
կու գայ իր հարսը»։ Եսքը ցած ձայնով մը իրեն
քովը եղողներուն մրմնջեց իր յետին երկրաւոր
մրմունջը. «Լուռ, լուռ կեցէք»։ Ու զայս ըսե-

լով խոնարհեցուց գլուխը, իբրև անուշ քնոյ մէջ, ու յաղթական փառօք աւանդեց Յիսուսին ձեռքը մաքրափայլ հոգին, որ Թուական հրեշտակաց և սրբոց մէջ, որոնք իրեն ընդ առաջ եկեր էին, և ան խոնարհ բնակարանին մէջ ուր իրեն մահկանացու նշխարքը դրուեր էր. ու օդին մէջ լսուեցաւ երկնային զօրաց ձայներ ո՞ր ոնք այսպէս կ'երգէին Եղիսաբեթին բերնէն. «Երկրաւոր թագաւորութիւնը արնաւարուեցի, Յիսուսի Քրիստոսի իմ տիրոջս սիրոյն համար, զոր տեսայ, սիրեցի և որոնն հաւատացի»։ Այսպէս ահա երջանիկ մահուամբ կատարեց սրբուհին Եղիսաբեթ իւր մահկանացու 24 տարուան ընթացքը. 1231ին նոյեմբեր 19։

I.

Սրբուհուն Եղիսաբեթի Թաղումը.

Աստուծոյ ընտրեալոց փառքը մարդկային փառքէն շատ տարբերութիւն ունի. վասն զի մարդկայինը երկրիս վրայ կը սկսի. իսկ Աստուծոյ փառքը յերկինս անոնց մնհուամքը։ Կարծես թէ աստուած իւր հայրական խնամքովը, ուզեր էր դնել անոնց խոնարհութիւնը՝ միշտ այս աշխարհիս նախատանաց և մոռացութեանցը տակ, մինչև որ անոնց մահկանացու նշխարները նպատակ ըլլան իրենց ապագայ մեծարանացը։ Ուստի հազիւ թէ Եղիսաբեթի հոգին թռեր ու գնացեր էր փնտռելու երկնից երջանիկ ու հարուստ հանգիստը, իր մարմինն այն աստիճանի պատուոյ նպատակ եղաւ, որ բնաւ իւր քովանդակ կենացը մէջ չէր ընդունած։ Այն խեղճ և նորահաս այրին որ այնչափ երկար ատեն հալածուեցաւ, արհամարհուեցաւ և բամբասուե-

ցաւ երկրիս վրայ, հիմա պիտի տեսնենք որ բոլոր հաւատացելոց մտածմանը նիւթ պիտի ըլլայ ու պիտի շարժէ ամենայն ուղղափառ հոգիները, եկեղեցւոյ գերագոյն քահանայապետէն սկսեալ մինչև Գերմանիոյ բարեպաշտ և խոնարհ գեղջուկը։

Մեռնելուն պէս իւր հաւատարիմ աղախնայքը և ուրիշ բարեպաշտ տիկնայք լուացին և թաղեցին անոր մարմինը մեծաւ յարգութեամբ. և իբրև պատանք՝ այն խեղճ և պատրուած պատմուճանը փաթթեցին որով կը փափաքէր որ թաղուէր և որ իրեն մեկ հատիկ զարդարանքն էր։ Այն նուիրական մարմինը Փրանկիսկեան կրօնաւորներով, շատ մը եկեղեցականներով, բազմութիւն ժողովրդով, խորին ու տխուր երգերով և ամենուն արցունքներովը տարուեցաւ սրբոյն Փրանկիսկոսի հիւանդանոցին մատուռը, որ իւր փառաց առաջին հանդիսարանը պիտի ըլլար, ինչպէս որ եղեր էր իւր անցեալ դիւցազնական պատերազմաց՝ ատաւծոյ և իր աղքատաց սիրոյն համար։ Այս այն մատուռն էր, յորում Եղիսաբեթ սովորութիւն ըներ էր աղօթելու, և ինքզինքը տալու այլ և այլ բարեպաշտական հրահանգաց։

Դիպուածոյն մահուան հոչակը շուտով տարածուելով, շքեղակայ գտնուող ամենայն քահանայք և կրօնաւորք մեկէն հոն դիմեցին, մանաւանդ կիստերսեան կարգին կրօնաւորները և խուռն ամբոխ մը հաւատացելոց, թէ՛ հարուստ և թէ աղքատ, մատուցանելու անոր իրենց վերջին պարտքը. ան՝ որ այնպէս երիտասարդ՝ պիտի քաղէր իր վաստակոց պտուղը։ Շատ մը

ՔԵՐՄԵՌԱՆԴՆ անձինք քաջալերուած ժողովը-դեան սաստիկ եռանդէն, որ յաՃախ ստոյգ համբաւոյ Ճշմարիտ գուշակութիւն մ'է, և կարծես թէ առաջուց զգալով այն պատիւները ո-րովք եկեղեցին պիտի պատուէր անոր պատուա-կան նշխարքը, մնածեցին հանդերձեալ սրբու-հոյն նշխարաց մասունքն ունենալ քովերնին։ Ուստի Եղնսաբեթի դագաղին վրայ վազելով՝ ոմանք զգեստէն կտորներ փրցուցին առին, ո-մանք ալ մազերէն և եղունգներէն կրտրեցին։ Բայց մէկալ կողմէն ալ չէին պակսեր իրենց սրտին զգացած մեծ ցաւը յայտնելու. ամենուն աչքէն արցունք կը վազէր, և ամեն տեղ հա-ռաչանք և ողբ կը լսուէր, թէ՝ հիւանդներէ և թէ աղքատներէ, որոնց համար իւր գորովալից խնամքը ալ պիտի դադրէր. ասոնք ամենքն ալ բազմութեամբ կը վազէին վերջին անգամ մը տեսնելու իրենց բարերարը. ամենքը միատեղ կ'արտասուէին, իբրև թէ անոնցմէ ամեն մէկը իւր մայրը կորուսած ըլլար։ Բայց ինչպէս կա-րելի է նկարագրել անոնց ամենուն վիշտը, ցաւն և յուսահատութիւնը, որոնք կորուին իրմով ապաւէն կամ օրինակ մը։ Այնենէն աւելի Փրան-կիսկեան կրօնաւորները, որ զինքը թէ՝ իբրև քոյր մը ունէին՝ միաբանութեան զգեստով և կանոններով, և թէ՝ իբրև մայր մը իր հաստա-տուն և զօրաւոր պաշտպանութեամբը, կարգէ դուրս ցաւով կ'արտասուէին իր կորուստը։ «Երբ կը մնածեմ, կ'ըսէ անոնցմէ մէկը՝ որ մեզի ա-սանդէց իրենց երկնային բարեկամին վարուց պատմութիւնը, երբ կը մնածեմ, աւելի արտասուել կ'ուզեմ քան թէ գրել»։

Ժողովրդեան եռանդն և սէրը ստիպելով հրաման առաւ որ սիրեցեալ սրբուհւոյն մարմինը ամբողջ չորս օր եկեղեցւոյն մէջ դրուի, հաւատացելոց բազմութեան առջևը, որոնք բարեպաշտ և տխուր երգեր կ'երգէին։ Սրբուհւոյն երեսը բաց էր, և քաղցր և սրտաշարժ տեսարան մը կ'ընծայէր անոնց որ կը փափաքէին զինքը տեսնելու. իր ծաղկի հասակին գեղեցկութիւնը, և մարմնոյն փափուկ վառ գոյնը՝ պայծառ կը տեսնուէր անոր անթաղամ այտերը վրայ։ Դիակին տեսիլը այնպէս անապական էր՝ որ կարծես թէ տակաւին կենդանի էր։ «Մահուընէն առաջ, կ'ըսէ իւր պատմագիրներն մէկը, գէմքը ճիշդ անոնց կը նմանէր, որոնք իրենց կեանքը դառնութեան և ցաւոց մէջ անցուցեր են. իսկ հոգին աւանդելէն ետքը, կերպարանքն այնպէս մաքուր, այնպէս եռանդուն և գեղեցիկ կ'երևէր, որ անկարելի էր առանց զարմանքի նկատել. և կարծես թէ մահը՝ որ զուրիշները բոլորովին կ'եղծանէ՝ հոս ընդհակառակն ջանացեր էր դարմանելու ոչ միայն նիզիսաբեթի վրայ եկած ժամանակին և ծերութեան աւերակները, այլ նաև թշուառութեան և խրատակրօնութեան. ինչպէս թէ հնարքը որ մինչև այն ատեն բորբոքեր էր իր հոգին, ուզեց բորբոքել նաև մարմինը։ Կարծես թէ մահուան խաւարին և շուքին մէջ անմահական գեղեցկութիւն մը կը փայլէր անոր վրայ, և կամ նոյն իսկ հնարքը առաջուց տարածեր էր իւր ճառագայթները այնպիսի մարմնոյ մը վրայ՝ զոր օր մը պիտի ծածկէր լուսով և պայծառութեամբ»։

Այս սքանչելի և գեղեցիկ աւանդութիւնը

որ կը հաստատմացընէ թէ Եղիսաբէթի բնական գեղեցկութիւնը հաստատուած և շատցած ըլլայ հոգին աւանդելէն ետքը, հաստատմութեամբ եկեր է այն անծանօթ արուեստագիտէն՝ որ քանդակեց դքսուհւոյն վարուց գլխաւոր դէպքերը Մարպուրկ քաղքին եկեղեցւոյն խորանները վրայ, և նկարագրեց զինքը դագաղի վրայ դրուած, շատ աւելի գեղեցիկ մնհուան քնոյ մէջ, քան թէ ուրիշ դէպքերու։

Ոչ միայն աչքը կը զուարճանար այն ցաւալից և տխուր վայրկենին, երիտասարդ հանգուցեալին այն փափուկ և նուիրական մարմնոյն վրայ նայելով, հապա նաև քաղցր և սքանչելի անուշահոտութիւն մը կը բուրեր իբրև անուշ նշան մը հնարհաց և աստուածային առաքինութեանց՝ որոնց աւանդապահն եղեր էր։ Բարեպաշտ անձինք կընային այն ատեն յիշել Սողոմոն իմաստունին խօսքերը, որ կ'ըսէ թէ արդարոց յիշատակը զարմանալի անուշահոտութիւն մըն է։ «Ս. յսպիսի սքանչելի բուրմունք մը, կ'ըսէ այն մատենագիրը զոր վերը յիշեցինք, մեծապէս օգտակար եղաւ ի միութեան զաղքատս և բոլոր ժողովուրդը՝ որ տրտմեր էին Եղիսաբէթի մահուանը վրայ։ Ս. յս երկնային հոտը քաղցրութեամբ կը զուարճացընէր զերեսնք, և կը դարբեցընէր միանգամայն տխրութեան ցաւերն և արտասուքը, մոռացեալով որ սրբուհին թէպէտ մեռեր էր, բայց կենդանութեան ժամանակին աւելի գեղած մայր մը պիտի ըլլար աղքատաց, ապահով ապաստան վշտացելոց. և իր աղօթից նուիրական անուշահոտութիւնը անդադար բարձրանալով մինչև յաթոռն աստուածային

մեծվայելչութեան, ամէն ատեն պիտի տարաձէր իւր ուժը և զօրութիւնը անոնց ամենուն վրայ որ իրեն կը դիմէին իրենց պիտոյիցը մէջ։

Մահուընէն չորս օր եւեթը, յուղարկաւորութիւնը մեծ հանդիսով կատարուեցաւ։ Անոր մաքուր և պատուական մարմինը նեղ դագաղի մը մէջ դրուելով, այն հարուստ և փայլուն գոհարը, խոնարհ քարի մը տակ ծածկուեցաւ իւր հիւանդանոցին մատրանը մէջ, առաջի բազմութիւն աբբայից և կրօնաւորաց մատակայ վանքերու, և անթիւ բազմութեան՝ զոր կրօնաւորաց խոհական ջանքը միայն կրցաւ կանոնաւորել և կարգադրել։ Քրիստոնէից ցաւը սաստիկ եղաւ. ցաւ մը որ անշուշտ իրենց սիրոյն ամենէն աւելի պայծառ նուէրն էր զոր կ'ընծայէին այն վայրկենին հանգուցեալ սրբուհւոյն որ սիրով կ'ընդուներ։ Սակայն անոնց առատ արտասուաց և հառաչանացը հետ կը խառնուէր նոյն ատեն սրբուհւոյն աւելի արժանաւոր և առատ զգացմանց բղխում մը. վասն զի ամենքը յերկինս կը բարձրացընէին եռանդուն գոհութեան ձայներ և աղաղակներ, ուրիշ բանի համար չէ՝ բայց եթէ ընդունած ըլլալնուն համար յաստուծոյ իրենց այսպիսի փառաւոր և եզական օրինակ մը։

Բայց աստուած իւր սիրելւոյն ուրիշ աւելի քաղցր և սրտաշարժ նուէր մը պահեր էր։ Նախընթաց իրիկունը, երբոր մահուան շարականներ և աղօթքներ կը մատուցուէին, Վերդերի աբբասուհին որ եկեր էր ներկայ գտնուելու տխուր հանդիսին, յանկարծ երգի անուշ ձայներ լսեց դրսէն. զարմացած դուրս ելաւ, հետն

առնելով ուրիշ շատ մը մարդիկ, որպէս զի ե-
զած բանին վրայ տարակոյս մը չունենայ. եկե-
ղեցւոյն տանիքին վրայ՝ թէպէտև ձմեռ ատեն,
լեցուն անծանօթ թռչունները տեսար որ ներ-
դաշնակ և քաղցր կերգով կ'երգէին. կարծես
թէ կը փափաքէին իրենք ալ իրենց գիտցած
կերգովը տօնախմբելու այս փառաւոր յուղար-
կաւորութիւնը։ Ամենք կ'ըսեն թէ աստուծմէ
զրկուած հրեշտակներ էին, որպէս զի ընկերա-
նալով սիրեցեալ սրբուհւոյն հոգւոյն հետ յեր-
կնս՝ ետքը միւսանգամ դառնան անոր մարմի-
նը պատուելու երկնային ձայներով, երգերով և
ուրախութեամբ։ « Այս փոքրիկ թռչունքը,
կ'ըսէ սուրբն Բոնաւենդուրա, վկայ եղան դրբ-
սուհւոյն մաքրութեանը իրենց լեզուովը խօսե-
լով անոր թաղման ժամանակը, և երգեցին ներ-
դաշնակ և սքանչելի եղանակով անոր գերեզ-
մանին վրայ։ Անիկայ որ խօսեցաւ իշու մը բերբ
նով առ ի յանդիմանել մարգարէին յիմարու-
թիւնն, ա՛լ աւելի աղէկ կրնար խօսիլ թռչնոց
բերնով սրբուհւոյ մը անմեղութիւնը հռչակե-
լու համար »։

Լ.Ա.

Սրբուհւոյն Եղիսաբէթի գործած հրաշքները, և Գոնզատ դքսին զինքը սրբացընելու համար ըրած ջանքը.

Քիչ ատենէն յայտնեց աստուած Եղիսաբէթի հրաշալի զօրութիւնն և փառքը, որ իր բոլոր մահկանացու կեանքը խոնարհութեամբ անցուցեր էր. և փոխանակ այն ամենուն սիրոյն՝ որով նախամեծար հանարեր էր երկրիս վրայ թշուառութիւնն և արհամարհութիւնն, և միանգամայն իբրև առհաւատչեայ իրեն յաղթութեանը, իրեն պիտի յանձնէր երկնաւոր Հոխութեան գանձարանը։

Իր յուղարկաւորութեան երկրորդ օրը Կիստերսեանց կարգէն կրօնաւոր մը ծնկան վրայ եկած խոնարհեցաւ անոր գերեզմանին քով, իրմէ օգնութիւն խնդրելու համար։ Քառասուն տարիէն աւելի էր որ այս խեղճը նեղքին ցաւով մը ու սրտի ծածուկ վէրքով մը կը հա-

լեր ու կը մաշէր. և անկարելի եղեր էր մարդկային հնարքով մը դարմանը գտնել. բայց կատարեալ հաւատքով անոր դիմելէն ետքը՝ որ Եռանդուն Մխիթարիչ էր ամենայն վշտացելոց, մէկէն ի մէկ զգաց ունեցած վիշտերուն փարատիլը, և երդմամբ վկայութիւն տուաւ Գոնբատ վարդապետին և Մարպուրգի ժողովրդապետին առջև։ Ասիկայ եղաւ՝ իր բարեխօսութեամբը կատարուած՝ առաջին հրաշալի բժշկութիւնը։ Ա. ին գորովալից և սիրական սիրտը որ իր կենդանութեանը ժամանակ այնչափ գութ ցուցեր էր խեղճերուն վրայ, մեռնելէն ետքն ալ իր առաջին բարեխօսութեանը նիւթ ուզեց առնուլ այն նեղբին ցաւերէն մէկը՝ որ մարդկային բժշկութեամբ չէն կրնար իրենց դարմանը գտնել։

Բիչ ատենէն ետքը իրեն գերեզմանին աղնուատոհմ և բարձրաստիճան եկեղեցական մ՝այցելութեան եկաւ։ Պատմութիւնը մեզի չանցուցեր իր անունը, միայն կ՝ըսէ թէ բոլորովին ինքզինքը անկարգութենց տուեր էր՝ որ իր աստիճանին սրբութեանը չվայելէն զատ՝ շատ դժնդակ կ՝երևէին։ Շատ անգամ յաղթուած ի խղճէ և յամօթոյ, ապաշխարութեան ատեանը դիմեր էր, բայց անօգուտ. որովհետև մեղանչելէն ետ չէր կենար, և իր կրկին անգամ մեղք գործելը աւելի գայթակղական ու ցաւալից կերպով կ՝ըլլաւէր. այլ ի վերայ այսր ամենայնի միշտ կը պատերազմէր իր տկարութեանը հետ։ — Օր մը, ինչպէս որ ըսինք, բոլորովին աղտեղացած, եկաւ ուժ խնդրելու սուրբ և մաքուր Նղնսաբեթի գերեզմանին քով. աղօթքի կեցաւ ու իր պաշտպանութիւնն ու բարեխօ-

տութիւնը խնդրեց աչուքներէն արտասուաց գետեր վազցնելով. և այնպէս երկար ատեն կեցաւ առանց դադրելու աղօթելէն, մինչև որ համոզուեցաւ թէ իր աղաչանքն ընդունելի եղաւ աստուծոյ, և հաճեցաւ աստուած լսելու Եղիսաբեթի բարեխօսութեանը. հոգւոր ուժ մը զգաց իր սրտին խորերէն, որ գերազոյն էր որ և իցէ ախտի զօրութենէ. և այն վայրկենէն, ինչպէս որ ինքն ալ յայտնեց Գոնզաստի խոստովանելովը, մարմնոյ խայթը այնպէս մեղմացաւ, որ միայն թեթև փորձութիւններ կը զգար, որոնց դիւրութեամբ ալ կը յաղթեր։

Ուրիշ նեղեալ և ցաւալից անձինք, որ կ'ընկճուէին մեղաց լուծին տակ, կու գային թօթափելու այն լուծը այս սուրբ տիկնոջ նշխարացը քով, որ կենդանութեանն ատեն կրցաւ այնպիսի ազնուական կերպով զանոնք խորտակել։ Կը յիշատակուին մանաւորապէս շատ անձինք որ կը դիմէին առ Եղիսաբեթ իրենց տկարութեանը դարման մը գտնելու համար, և կը բժշկուէին. այնպիսի մարդիկ՝ որոց համար հպարտութեան, ագահութեան, ատելութեան, նախանձու և բարկութեան մեղքերը սովորական բան մը դարձեր էին։ Եւ անշուշտ իրենց մեղաց ծառայութենէն ազատելու համար, միայն անոր հաւատարիմ առաջնորդութեանը կրնային վստահանալ՝ որ միշտ ինքզինքը ամենէն վար կը դասէր. անոր որ իւր անձը և ամենայն ինչքը աստուծոյ աղքատացը բաշխեր էր և բոլոր կեանքը սիրելով ու ներելով անցուցեր էր։

Ոչ միայն բարոյական ցաւերն Եղիսաբեթի ձեռաք զօրաւոր բժշկութիւն կը գտնէին, այլ և

նիւթական տկարութիւններն և ցաւերը, զոր մեծ խնամքով և քաջութեամբ կը սփոփեր իր բուսնդակ կենացը մէջ. և թէպէտև հիմա կորուսին իրմով երկրիս վրայէն այն սիրալիր հոգերը զոր առատահոս կը թափէր անոնց վրայ, սակայն երկնքէն կ'ընդունէին միշտ նորանոր բժշկութիւններ, այնպէս որ անկէց ետքը սրբութիւն իրենց հասնար երկնային բժիշկ մ'ունէր էր։ Արտաշարժ պատմութիւն մը լաւ կը ցուցընէ թէ ինչպէս շուտով յայտնեց սրբութիւն իր այս բարերար զօրութիւնը, և ինչպէս իւր հոգին՝ որ լի էր փառաբ, հաւատարիմ եղաւ այն քաղցր ընտանութեանն որ առ խոնարհս և առ աղքատս, որ արդէն այնչափ գեղեցկութիւն սփռեր էր այս երկրիս վրայ անոնց հետ ունեցած վերաբերութեամբը։ Ինչպէս սրբունի վանքը, յորում կը հանդչէր իր նախնեացը քով Լուդովիկոս դուքսը, հոն աշխատաւոր եղբայր մը կար, որ ջաղացպան էր։ Կարգէ դուրս բարեպաշտ և միանգամայն խստակրօն բնաւորութիւն մ'ունէր, և ուրիշ ճգնութիւններէ զատ՝ մարմնոյն վրայէն երկրթէ զգեստ մ'ալ կը հագնէր, որպէս զի աւելի լաւ կերպով զանիկայ նուաստ է։ Դքսուհին իւր սովորական այցերութեանցը մէջ զոր կ'ընէր աբբայարանին, աղօթելու համար իւր սիրելի փեսին գերեզմանին վրայ, մանաւոր մտադրութիւն ըներ էր այն աղքատ եղբօրը, և առանձին սէր մ'ունէր անոր վարուց սրբութեանը համար։ Օր մը, երբ իւր սիրելւոյն շիրիմը կ'երթար, անոր պատահելով՝ հետը ընտանեբար խօսեցաւ. և խոստումն ուզեց որ միշտ մէջերնին միաբանութիւն մը և

հոգևոր եղբայրութիւն մը ըլլայ։ Որուն հաստատութեանը համար դքսուհին անոր ձեռքը իր ձեռացը մէջ առաւ, թէպէտև խոնարհ կրօնաւորը չուզեց, ամբչնալով այնպիսի հռչակաւոր տիկնոջ ձեռացը դպչելու։ Քիչ ետքը երբոր զբաղած իւր արուեստին մէկ գործին նայելու հետ էր՝ յանկարծ ջաղացքին մէկ թեւը ձեռքին վրայ ինկաւ ու բազուկը ջախջախեց։ Կարգէ դուրս դժնդակ ցաւ մը զգաց, բայց առանց ամենեւին գանգատելու հանգիստ բութեամբ սպասեց, որ աստուած հանի ու զինքը բժշկէ։ Նոյեմբերի տասնումէնին գիշերը, երբ ամենատոհմ սրբուհին Եղիսաբեթ աստուծոյ կը նուիրեր իւր նախասահմանեալ հոգին, աշխատաւոր եղբայրը կը հսկէր ու կ՚աղօթէր աբբայարանին եկեղեցւոյն մէջ, անդադար հառաչելով թեւին պատճառած սաստիկ ցաւէն։

Յանկարծ դքսուհին երևցաւ իրեն ազնուական զգեստով զարդարուած և կարգէ դուրս լուսով պայծառացած. խօսեցաւ խեղճ աշխատաւորին հետ իր սովորական քաղցրութեամբը. «Ի՞նչ կ՚ընես, ազնիւ եղբայրս, այդ ի՞նչպէս եղաւ»։ Թէպէտև զարհուրեցաւ ու շլացաւ այն աստուածային լուսոյն պայծառութենէն, սակայն մէկէն ձանչցաւ զդքսուհին ու ըսաւ իրեն. «Այս ի՞նչ է, տիկին, դուն որ ընդհանրապէս խեղճ և աղքատին զգեստ կը հագնիս, այսօր այս փառաւոր և սքանչելի զգեստներն ուսկից գտար»։ «Ահա, պատասխանեց իշխանուհին, որովհետև հիմա վերնակս փոխեցի»։ Այս ըսելով բռնեց աշխատաւորին աջ ձեռքն իր ձեռացը

մէջ և բժշկեց, նոյն ձեռքը զոր ուրիշ ատեն տուեր էր ի նշան եղբայրութեան և զոր ջաղացքը խորտակեր էր։ Աշխատաւոր եղբայրը կարգէ դուրս ցաւ զգաց, երբ Եղիսաբեթի իր թեւին վիրաւորեալ մնալին դպաւ. արթնցաւ իրրև յերազոյ, և տեսաւ իր ձեռքը և բազուկը կատարեալապէս բժշկուած։ Շուտով հնարհակալ եղաւ աստուծոյ և այն հոգևոր քրոջը որ երկինքը մտնելուն պէս՝ ամենէն առաջ զինքը մտածեր էր։

Բայց շատ աւելի ուրիշ մեծ հրաշքեր եղան Եղիսաբեթի շիրմին քով յուղարկաւորութեան առաջին օրերէն սկսելով։ Խեղճ մարդիկ որ ուռնէին կերպ կերպ և մեծ ախտեր կամ տկարութիւններ, ինչպէս են խլութիւն, կաղութիւն, կուրութիւն, յիմարութիւն, բորոտութիւն, անդամալուծութիւն և այլն, դեռ զանիկայ կենդանի կարծելով, հեռու տեղերէ կու գային իր գթութիւնն և ողորմութիւնը խնդրելու. և յիրաւի բոլորովին բժշկուած՝ յետ աղօթելու այն մատրան մէջ՝ ուր կը հանգչէր իշխանուհւոյն սուրբ մարմինը՝ կ'ելլէին իրենց երկիրը կը դառնային։ Մանաւոր կերպով կը յիշատակեն ժամանակակից պատմագիրներ Եղիսաբեթի բարեխօսութեամբն եղած հաստատուն և ստոյգ բժշկութիւններ։ Մենք մէկը միայն պիտի յիշենք որ երդմամբ պատմուեցաւ առաքելական դատաւորներուն, և որ գաղափար մը կրնայ ըլլալ ուրիշ բժշկութեանց ալ։ Մարսելիացի Հենրիկոս անունով քառասուն տարուան մարդու մը բաւական ատենէ ի վեր աչքերը տկարացած ըլլալով, քալելու ժամանակ

շատ անգամ չէր կրնար զանազանել ցորէնի գաշտերը շիտակ Ճամբէն, ու կը շփոթէր. ուրուն համար ընկերները շատ կը ծիծաղէին վրան. Եռաբէն բոլորովին կուրցաւ, և ստիպուեցաւ իրեն առաջնորդ մը բռնելու՝ որով ամէն ուղած տեղը կարենայ երթալ։ Ուստի աղաչեց ամոր որ զինքը Եղիսաբեթին շիրմին քով տանի. գնաց հոն, ուխտ ըրաւ, և երկու մամ ընծայեց սրբուհւոյն։ Քահանայապետին գործակալները հարցուցին այս թշուառին թէ ինչպիսի խօսքեր և ոճէր կը գործածէր սրբուհւոյն աղօթելու ժամանակը։ Կոյրը այս հետեւեալ խօսքերս ըսաւ անոնց. «Սիրելի սրբուհի Եղիսաբեթ, բժշկէ աչքերս. միշտ հաւատարիմ ծառայդ պիտի ըլլամ, և ամէն տարի երկու դրամ պիտի տամ քու հիւանդանոցիդ»։ Մէկէն աչքը առաջինէն աւելի պայծառ բացուեցաւ։ Այս եղաւ սրբոյն մահուանը տասնը հինգերորդ օրը։

Որչափ որ Եղիսաբեթի հրաշից համբաւը տարածուեցաւ Մարպուրկ քաղքին շրջակայքը, այնչափ աւելի շատցաւ տեսակ տեսակ թշուառաց թիւը, որ խնդրելու կու գային իրենց այլ և այլ ախտից բժշկութիւն։ Աստուածային ողորմութիւնն և գթութիւնը պարապ չէր հաներ քրիստոնեայ ժողովրդեան հաւատքը. և միշտ կը կատարէր ուղածնին որ կ'աղօթէին կամ իրենց պաշտպան կը բռնէին զեղիսաբեթ։ — Ոչ միայն Մայանի և Գրլեւի մերձակայ քաղաքներէն կը գիմէին այլ և այլ ախտաժէտք և նեղեալ անձինք, հապա նաև հեռաւոր գաւառներէն ալ, ինչպէս Գոլոնիայէն, Պրեմայէն,

Մակտէպուրկէն, և այլն։ Անոնք որ մխիթարութիւն և բժշկութիւն գտնելով Եղիսաբեթի բարեխօսութեամբ՝ ետ կը դառնային, շուտով տեղերնին ուրիշները կու գային, որպէս զի իրենք ալ բժշկութիւն գտնեն, և անոնք ալ ետ կը դառնային, հոչակելով աստուծոյ զօրաւոր ողորմութիւնն անոնց ամենուն որ Ճամբուն վրայ կը հանդիպէին։ «Նոյն ատենն ես ալ հոն էի, կ'ըսէ Կէսար կրօնաւորը, և կենացս մէջ երբէք չէի տեսած այնչափ բազմութիւն որ այն ատեն ի Մարպուրկ և անոր շրջակայքն եղող քաղաքաց մէջ կը գտնուէր. հաւիս հաղ կրնար մէկը Ճամբայ մը բանալ եկեղեցի մտնելու կամ անկէց ելնելու համար»։

Գոնրատ վարդապետը միշտ ուշադիր այն պայծառ և փառաւոր արդեանցն որոց պատճառաւ կերպով մը կրնար իրաւամբ իրեն սեպել Եղիսաբեթի փառաց մէկ մասը, փութաց խնայելնելու Գրիգոր Թ քահանայապետին այն հրամանները որով աստուած կը փառաւորեր հանգուցեալ դքսուհւոյն շիրիմը, և ժողովրդեան մեծարանքը՝ որ միշտ աՃելու վրայ էր. առաջարկեց քահանայապետին որ հաստատէ և հանդիսական կերպով մ'ալ յայտնէ ընդհանուր հաւատացելոց Եղիսաբեթի սրբութիւնը։ Այս մեծ քահանայապետը, թէպէտ և ինքնատնտանուն, սակայն սիրտը դեռ երիտասարդ սիրով և ինքնաթեր աստուծոյ և եկեղեցւոյն պատուոյն, պատիւ ունեցեր էր արդէն սրբոց կարգը դասելու զսուրբն Փրանկիսկոս ասսիզացին, և որ նոյն տարին յերկնաւոր փառս ընդուներ էր իւր հոչակաւոր աշակերտը, զսուրբն Անտոն Բա-

տուայի, Գոնդատի առաջարկութեանը փութով և սիրով, միանգամայն առաքելական խոհակա-նութեամբ պատասխանեց. «Խմացանք գրած նամակովդ, սիրելի որդեակ իմ Գոնդատ, քաղցր ուրախութեան արցունքով թէ ինչպէս անիկայ՝ որուն կարողութիւնն անսահման է, օրհնեց իրեն անմահ յիշատակաց արժանաւոր Եղի-սաբեթ աղախինը, որ կենդանութեան ժամա-նակը մեր սիրելի դուստրն էր ի Քրիստոս Յի-սուս և Դուրինկիոյ դքսուհի. և թէ ինչպէս զանիկայ որ բնութեամբ տկար և դիւրաբեկ էր, զօրացուց և հաստատեց հնորհայ պարգևով իր աստուածային անուան պաշտամանը մէջ, և թէ ինչպէս յերկինս սրբոց կարգը դասեցին ետքը, յայտնեց հրաշալի և փառաւոր նշաննե-րով այն երանութիւնն որ իրեն հնորհուեր էր»։ Սակայն քահանայապետը յիշելով թէ ինչ որ կը փայլի ոսկի չէ, և ուզելով վերցնել կաս-կածոտ մարդիկներուն ամենայն տարակոյսը, հրամայեց Մայանսի արքեպիսկոպոսին, Էպեր-պախի աբբային և Գոնդատ վարդապետին՝ հա-սարակաց և հանդիսաւոր վկայութիւններ ժող-վելու, ինչ որ դքսուհւոյն կենացը մէջ հաճոյա-կան եղան աստուծոյ և մարդկան. նոյնպէս այն հրաշեղերն որ դքսուհւոյն մահուընէն ետքը հան-դիպեցան։ Յետ այս այլ և այլ վկայութիւննե-ը գրի վրայ առնելէն ու ինքելէն՝ հռոմի ղը-կեն հաւատարիմ պատգամաւորաց ձեռքով։ Նոյնպէս որոշեց թէ ինչ կարգ և կանոն պիտի քանեն վկայից քննութեանը ժամանակ. վերջա-պէս այնպիսի խնամքով և մանրամասն կերպով՝ որ յայտնի կը ցուցնեն թէ որպիսի խնամտուն

խոհականութեամբ քննութեան կ'առնուէր այս ամենանրբին նիւթը։

Սիժֆրուա Մայանի արքեպիսկոպոսը, այն վիճակին՝ յորում շինուեր էր Մարպուրկ քաղաքն և Եղիսաբեթի շիրիմն, վերջի աստիճանի զարմացած այն աստուածային բարութեանը վրայ որ պայծառ կերպով կը տեսնուէր իւր հաստին մէջ, Գոնրատ վարդապետին աղաչանքովը, և յայտնութենէ մը ետքը որ տեսլեան մը մէջ ունեցաւ, շուտով Մարպուրկ գնաց և սրբոյն Լաբենտեայ տօնախմբութեանն օրը (10 օգոստոս 1232) հանդիսաւոր կերպով երկու խորան օծեց որ հաւատացեալք շիներ էին ի պատիւ Եղիսաբեթի, նոյն եկեղեցւոյն մէջ ուր թաղուեր էր։ Այնթիւ բազմութիւն մը հոն ժողվուեր էին՝ ոչ միայն հանդիսին ներկայ գտնուելու համար, այլ նաև Գոնրատ վարդապետին քարոզը լսելու որ պիտի խօսէր ի պատիւ իւր համբաւաւոր աշակերտուհւոյն։ Քարոզելու ատենը յանկարծ Գոնրատի միտքը եկաւ որ անկէ աւելի յարմար առիթ չկար քահանայապետին կամքը կատարելու. շուտով առանց երկար ժամանակ մտածելու, պատուիրեց անոնց ամենուն որոնք բժշկութիւն գտեր էին կամ երկայնին պարգև մը դրսուհւոյն բարեխօսութեամբը, որ երկրորդ առաւօտուն ժամերգութեան ատենը իրենց վկայեցը հետ Մայանսի արքեպիսկոպոսին և ուրիշ եկեղեցականաց ընդառաջ ելլեն, որոնք եկեր էին ներկայ գտնուելու խորանները օծմանը հանդիսին։ Որոշեալ ժամուն բազմութիւն անձինք եկան ու վկայեցին թէ այլ և այլ հոգիներ ընդուներ էն յայ-

տուծոյ Եղիսաբեթի բարեխօսութեամբը։ Ա.ք. քեպիսկոպոսը ստիպուած ըլլալով շուտով տուն դառնալու իւր խիստ կարեւոր գործերուն պատճառաւ, բաւական սեպեց գրի վրայ առնուլ ա մենէն աւելի գլխաւոր և ստոյգ դէպքերը. բայց չկրցաւ զանոնք կնքել, ինչպէս նաև ուրիշ եկեղեցականներն ալ, վասն զի հետերնին չէին առած իրենց կնիքը։ Գոնրատ վարդապետը բառ առ բառ օրինակեց այս ամէն վկայութիւնները, և ինքն ալ իր կողմանէ ուրիշ շատ մը վկայութիւններ ժողվեց, սակայն միշտ երդմամբ։ Յետոյ բոլորն ալ կարդացին ետքը Մայանսի աբքեպիսկոպոսին և Լպերպախի աբբային առջեւ, որոնք փոխեցու բան մը չգտան, քահանայապետին ղրկեց, վասն համառօտութիւն մ՚ալ աւելցնելով Եղիսաբեթի վարուցը որչափ որ յիշեց։ Ա.յս պատուական յիշատակարանը մեզի ալ հասեր է, որ ամենէն հին աղբիւրն է, ուստի կրնանք քաղել սրբոյն պատմութիւնը։

Ա.յս Գոնրատ վարդապետին աւանդուած հրաշից առաջին թուարկութիւնը, կը բովանդակէ այն մանրամասն պատմութիւնները շուտ և գեղեցկական կերպով եղած երեսուներեօթը բժշկութիւններուն որ գրի վրայ առնելով քահանայապետին հրամանին համեմատ տեղն ի տեղը կը յիշեր այն դէպքերուն մէջ յիշատակուած տեղերը, թիւը և անձինքը, նոյն իսկ ազգութիւն ձեւերը զոր գործածեր էին։ Ա.յս աւանդութիւններուն մեծ մասը գտնէ մեր աչքին առջեւը շատ սրտաշարժ էն. կը տեսնենք ախտաջիկ և թշուառք, առ Եղիսաբեթ դիմելով ա ժէտք և թշուառք, որոնք միշտ այն գորովալիր և ընտանի լեզուով հետ միշտ այն գորովալիր

վը կը խօսէին զոր դքսուհւոյն կարգէ դուրս քաղցրութեանն և խոնարհութեանը պատճառաւ Հանդիսակեր էին իր կենդանութեան ժամանակը բանեցընել։ «Ո՛վ սիրելի սրբուհիդ Եղիսաբեթ, կ՚սէին անոր, բժշկէ ոտքս, միշտ քու եռանդումն ծառայդ պիտի ըլլամ։...» Եւ կամ այսպէս. «Սրբուհի տիկին և դքսուհիդ Եղիսաբեթ, քեզի կը յանձնեմ իմ խեղճ դուստրս»։ — «Ո՛վ երանուհիդ Եղիսաբեթ, կը կանչէր խեղճ մայր մը իւր նոր մեռած տղուն մարմինը թաղելու ատեն, ինչու ուրեմն այսպէս կորուսի որդեակս, հապիր ինծի օգնութեան, կենդանացու զանիկայ»։ Քիչ մը ետքը տղուն բազկերակը սկսաւ զարնել, և կենդանացաւ. և յետ երկար ժամանակ խօսելու ջանալէն՝ կէս գիշերուան մօտ այս խօսքս բաւ. «Ո՞ւր եմ սիրելի». որովհետև դեռ իւր մայրը չէր ճանչնար։

Ուրիշ թշուառ մայր մը, որուն դուստրը գրեթէ հինգ տարիէն ի վեր դժոխակ և ցաւալից ախտերով կը չարչարուէր, և ուրիշ ցաւերէն զատ սոսկալի ուռեցք մ՚ունէր թէ՛ կուրծքին և թէ կուրծքին վրայ, զանիկայ Եղիսաբեթին շիրիմը տարաւ, և իրեն հետ երկու օր հոն կեցաւ աղօթք մատուցանելով առ աստուած, որպէս զի բժշկէ իր աղջիկը։ Երկու օրէն ետքը տեսնելով որ իւր աղօթքը ընդունելի չեղաւ աստուծոյ, սկսաւ գանգատիլ բարձր ձայնով սրբուհւոյն դէմ ըսելով. «Որովհետև խնդիրս չկատարեցիր, անոր համար բոլոր աշխարհքը ետ պիտի դարձընեմ որ չգան քու գերեզմանիդ քով»։ Այսպէս կարգէ դուրս բարկացած՝ Մարսոր ելաւ գնաց. բայց մէնն ու կէս Ճանչայ ը-

նելէն եռաքը, իր աղջկանը ցաւերն և աղաղակ-
ներն ստիպեցին զինքը Ռուտորփ գեղը աղբիւ-
ր մը քով կենալու։ Ցաւագար օրիորդը քիչ
մը ատեն քնացաւ, և արթընցալուն պէս մօրը
պատմեց որ գեղեցիկ տիկին մը տեսեր է եղեր,
որուն կերպարանքը պայծառ և փայլուն էր,
փափուկ ու Գերմանկ ձեռուընները մեղմով մար-
մնոյս ամենէն աւելի ցաւալի և վիրաւորեալ
մասերուն վրայ դնելէն ետքը, ըսաւ. «Լիր ու
քալէ։ «Ո՛վ մայր իմ, կանչեց օրիորդը, ահա
աղատեցայ մարմնոյս ամեն ցաւերէն». և այս
բաներով միատեղ Եղիսաբեթին գերեզմանը վա-
զեցին շնորհակալ ըլլալու իրեն, և հոն թողու-
ցին այն պատգարակն որով զհիւանդը բերեր
էին։

Երիտասարդ մը որուն ոտքերն անդամալու-
ծութեամբ բռնուեր էին, և անկէ զատ դժբն-
դակ ցաւով կը ցաւեր կոնրկին ոսկորը, կառ-
քով ինքզինքը դրաւ Հոյն շիրիմն ուզեց որ տա-
նին, և հոն կոնրկին վրայ եղած ցաւը բոլորս-
վին բժշկուեցաւ։ Ախտաժէտ երիտասարդը իւր
բնակարանը դառնալու ժամանակ ըսաւ. «Սբբ-
բուհիդ Եղիսաբեթ, մէյմ՛ալ քովդ պիտի
չգամ, մինչև որ ողորմա ինծի և ոտուըներս բը-
ժշկես որ կարենամ երթալ»։ Քիչ մ՛ատե-
նէն ետքը ամենայն սրբոց տօնին օրը, խմնա-
լով որ կատարեալապէս բժշկուեր էր, իր խոստ-
մունքը կատարեց։

Կարծեմ՝ շատ մեծ ցաւով պիտի դադրինք
այս հրաշներս պատմելէն որ այն ժամանակին
բարուց և հաւատոց պատուականագոյն վկայու-
թիւններն են. որոնց բովանդակութիւնը՝ 1233

տարբոյն սկիզբները հաղիւ լինելով՝ կրցան Հռոմմ ղրկել. ասոր ուշ ղրկուելուն պատճառը չենք գիտեր։ Դեռ քանի որ Հռոմմ չէին հասած այս վկայութիւններն, Գոնրատ վախճանեցաւ, զոհ ըլլալով հաւատոց վրայ ունեցած իւր եռանդեանը։ Այն համարձակութիւնն՝ որով կը հալածէր և կ'ամբաստանէր զիշխաններն ու մեծամեծները, երբ անոնց բռնած ճամբան իրեն աչքին կասկածելի կ'երևնար, երկար ատենէ ի վեր իրեն դէմ կը գրգռէր անոնց ատելութիւնն և ահաւոր թշնամութիւնը, որ օր օրուան վրայ կ'աճէր իր կարգէ դուրս խստութեամբն և թերևս մէկ քանի վճռոց անարդարութեանը պատճառաւ ալ։ 1233 յուլիսի 30ին երբ Գոնրատ Մայանսէն Մարպուրկ կը դառնար, յանկարծ Գաբէլ գեղին մօտ Սային կոմսին (զոր Գոնրատ իբրև հերետիկոս կ'ամբաստանէր) ասպետներէն և հպատակներէն շատերը անոր բոլորտիքը պաշարելով, վրան դիմեցին ու սպանեցին զինքը։ Մարդասպաններն միայն զԳոնրատ կ'ուզէին սպաննել, առանց դպչելու անոր հետ եղող ճամբուն ընկերին, որ էր Փրանկիսկեան ժէռարտ անուամբ կրօնաւոր մը, որ այնպիսի սաստիկ բռնութեամբ և միանգամայն զօրութեամբ գրկեց իւր վարդապետին մարմինը, որ ստիպուեցան մարդասպանները զինքն ալ Գոնրատին հետ սպաննել։ Գոնրատի, իւր բարեկամին և ուրիշ տասներկու քահանայից և աշխարհիկ անձանց մարմինները, որոնք զոհ եղան այն օրերը հերետիկոսաց կատաղութեանը՝ ժողովրդեան սրտին մեծ ցաւովը փոխադրուեցան ի Մարպուրկ։ Գոնրատ նոյն մնտրանը մէջ

թաղուեցաւ ուր թաղուեր էր սրբուհի դքսուհին իւր դուստրն ի Յիսուս Քրիստոս։

Գոնրատ որ այնչափ հաւատարմութեամբ հակեր էր Եղիսաբեթի մահուընէն ետքը ստացած փառացը վրայ, ինչպէս անոր փրկութեանը՝ կենդանութեանը ժամանակ, իր մահուամբը մեծ արգելք եղաւ անոր սրբացուցմանը, ոչ թուն հաւատացեալք այնչափ փափաքով ու յուսով կը սպասէին։ Անոր ժողված վկայութիւններն Երեսի վրայ ձգուեցան և կամ մոռցուեցան. որով ժողովրդեան և ուրիշներուն վրայ տեսնուած այն առջի եռանդը, սկսաւ կամաց կամաց պաղիլ։ Բայց աստուած չուշացաւ իւր խոնարհ աղախնոյն փառացը նոր պաշտպան մը երևան հանելու այնպիսի տեղէ մը՝ ուր կարծես թէ անկարելի էր յուսալը։

Եղիսաբեթի ամուսնոյն Լուդովիկոս դքսին երկու եղբայրներէն մէկը՝ Հենրիկն էր որ կը կառավարէր դքսութիւնները Հերման որդւոյն պզտիկութեանը համար։ Իսկ միւսը Գոնրատ՝ բոլորովին ինքզինքը երիտասարդական հասակին անսանձ կրիցը տուեր էր։ 1232ին, Մայսոյի արքեպիսկոպոսին Բենհարցպրիւնի արքային վրայ դրած ապաշխարանքին համար, (այն արքային որ Դուրինկիոյ տանը պաշտպանն էր), Գոնրատ իշխանն այնչափ զայրացաւ եպիսկոպոսին դէմ որ ժողովքի մը առեն Լէրֆուրդ քաղքին մէջ վազեց անոր վրայ, մազերէն բռնեց ու գետինը զարկաւ. ու սրով ալ պիտի մեռցնէր եթէ ծառաները չարգիլէին։ Բայց այս անգութ գազանութեամբ ալ գոհ չըլլալով, սկսաւ Մայսոյի արքեպիսկոպոսական աթոռին ստա-

ցուածքը աւրըշարկէլ. ուրիշ տեղերէն զատ պա-
շարեց նաև Ֆրիցլար քաղաքը, զոր պաշարմամբ
առնելով, իրեն եղած նախատանացը վրէժը
խնդրելու համար բոլոր քաղաքը իր եկեղեցի-
ներովը վանքերովը և շատ մը ժողովրդով այրեց։

Նաքէն գնաց առանձնացաւ իւր Դենպերկ
բերդը ի Կոթա. ուր աստուծոյ հզօր աջը պի-
տի շարժէր իրեն սիրտը։ Օր մը անառակ աղջիկ
մը տեսաւ որ մեծ խեղճութեան մէջ ինկած
դէպի իրեն կը մօտենար և ողորմութիւն կը
խնդրէր։ Երբ դուքսը սաստիկ յանդիմանեց
այն աղջիկանը բռնած գէշ ճամբուն, ան ալ պա-
տասխան տուաւ ըսելով որ միայն խեղճութիւնն
էր որ զինքը կը ստիպէր այնպիսի աղտեղի ա-
բուեստի մը ձեռք զարնել. և այնպիսի սրտա-
շարժ նկարագիր մ՚ըրաւ այս բանիս՝ որ դքսին
սիրտը տակն ու վրայ ըլլալով՝ խոստացաւ ա-
նոր հոգալու անկէց ետքը իր ամենայն պիտոյ-
քը՝ եթէ հրաժարի իւր անօրէն և զզուելի
գործէն։ Այս դէպքը այնպիսի ազդեցութիւն
մը տպաւորեց դքսին սրտին, որ հետևեալ բո-
վանդակ գիշերը կարգէ դուրս տաղնապի մը
մէջ անցուց, մտածելով թէ ինչն օրչափ աւելի
յանցաւոր էր քան զայն թշուառ աղջիկը զոր
նախատեր էր, և զոր աղքատութիւնը միայն
զինքը այնպիսի կեանք մը վարելու գրգռեր էր
մինչդեռ ինքը հարուստ և զօրաւոր՝ այնպիսի
վատութեամբ կը գործածէր աստուծոյ իրեն
շնորհած ամենայն պարգևները։ Երկրորդ ա-
ռաւօտը, դուքսն իւր միաբը հաղորդեց նաև իր
բռնութեան և զինակիր եղբարց շատերուն, և
զարմանքով իմացաւ որ անոնք ալ մի և նոյն մը-

տածութեամբ տակն ու վրայ եղեր էին. շուտով Ճանչցան այս նեբբին և համաձայն ազգեցութիւնն իբրև երկնից ազդարարութիւն մը. և որոշեցին որ ապաշխարէն ու իրենց առջի կեանքէն հրաժարին։ Նախ մեծաւորութիւն մը գնացին բոպիկ ոտքով ի Կլատենպախ և հոնկէ ի Հռոմ, որպէս զի ընդունին քահանայապետէն իրենց մեղաց արձակումը։

Հռոմի հանեալ (1233), դուքսը սկսաւ ամենէն աւելի սաստիկ ապաշխարութեան և երանգուն աստուածապաշտութեան ետեւէ ընալ։ Այնոր օր իր սեղանին վրայ քսանուչորս աղքատ ունէր, որոնց անձամբ կը ծառայէր։ Քահանայապետան արձակում տուաւ պայմանաւ որ հաշտուիցնախ Մայանսի արքեպիսկոպոսին և անոնց ամենուն հետ որոց չարութիւն ըրեր էր. նոյնպէս վանք մը շինէ և անոր եկամուտ մը կապէ փոխանակ անոնց որ այրել տուեր էր. հրապարակաւ իր յանցանքը խոստովանելով թողութիւն ուզէ ամենէն Ֆրիդրիխ քաղքին աւերակացը վրայ, և վերջապէս կրօնաւորական կենցաղի մէջ մտնէ։ Մինչդեռ դուքսը այս կերպով մէկ կողմէն առ աստուած կը մերձենար մէկալ կողմէն միշտ կը յիշեր իր խոնարհ և սրբուհի հարսը, զոր հալածեր և արհամարհեր էր։ Միտքը դրաւ որ սրբուհւոյն դէմ ըրած յանցանքը քաւելու համար, աշխատի ամենայն ջանքով անոր փառքը տարածելու. և քահանայապետին հետ ըրած խօսակցութիւններն իրեն առիթ եղան մանրամասն պատմելու անոր դքսուհւոյն վարուց սրբութիւնը, և խնդրելու անկէ սրբոց կարգը դասելու զանիկայ։

Գերմանիա դառնալուն պես (1234), փու-
թաց կատարելու քահանայապետին դրած ի-
րեն ապաշխարանաց ամեն պայմանները։ Առաջ
Ֆրիցլար քաղաքը գնաց, ուր ապաւիներ էին
մեհնաստանին աւերակացը տակ անոնք ամենքը
որ քաղքին բնակչաց կոտորածէն ազատեր էին.
երեսի վրայ խնալով աղաչեց զանոնք որ ատու-
ծոյ սիրուն համար իր անունց դէմ ըրած չարեա-
յը ներեն։ Ետքէն ձեռքը խաչական մ՝առած՝
բոլիկ ոտքով Թափորի ելաւ. և եկեղեցւոյն
դրանն առջև ծնկան վրայ գալով, երկնցուց խա-
չաղանը հոն կեցող բազմութեանը աղաչելով որ
ով որ կ՝ուզէ առնու զայն և իրեն զարնէ. պա-
ռաւ կէս մը միայն հնազանդեցաւ ու քանի մը
անգամ զարկաւ, որուն սիրով համբերեց։ Ետ-
քը եկեղեցին ու վանքը նորէն շինել տուաւ, ու
անկէց Ա.յղնախ քաղաքն երթալով, հոն իր եղ-
բօրը Հենրիկի հետ Բարոզիչ Եղբարց համար
վանք մը շինել տուաւ ու սրբոյն Յովհաննու ա-
ւետարանչին նուիրեց, ի յիշատակ Եղիսաբե-
թի, որպէս զի քաւէ իր յանցանքը, երբ զինքը
անդթութեամբ չարչարեց ու Վարդապուրկ քա-
ղաքէն դուրս վռնտեց։

Անկէ ետքը Գոնրատ վարդապետինն սկը-
սաւ ամեն ջանքը գործածել Եղիսաբեթի փառ-
քը ծաւալելու համար. ու ստիպ կը խնդրեր
Հռովմայ քահանայապետէն, որպէս զի հանդի-
սական կերպով հաստատէ իր հարսին սրբու-
թիւնը, և այն բազմաթիւ հրաշքները, զոր կը-
նէր ատուած անոր բարեխօսութեամբը, շու-
տով ստուգէ։ Քահանայապետը մտիկ ըրաւ ա-
նոր աղաչանացը, և մանաւոր կոնդակով մը պա-

տուիրեց քանի մը եպիսկոպոսաց որ Եղիսաբեթի ընծայուած հրաշքները նորին քննութեան առնուն։ Կը հրամայէր դարձեալ Մայանսի արքեպիսկոպոսին որ Գոնբաս վարդապետին ձեռքովն եղած քննութեանց վաւերականները իրեն ղրկէն. իսկ եթէ անկարելի ըլլայ զանոնք գտնելը, գրի վրայ առնուն թէ՝ նոյն և թէ ուրիշ վկայից խօսքերը, ու հինգ ամուսն մէջ իր ձեռքը հասցընեն։ Եպիսկոպոսներն ալ հնազանդելով քահանայապետին հրամանացը, բոլոր շրջակայ գաւառներուն մէջ հրատարակեցին աւնոր կոնդակը, մանաւոր օր մը որոշելով, յորում ամենքը պիտի ժողվուէին ի Մարպուրկ որոնք Եղիսաբեթի բարեխօսութեանը հրաշք մը կամ բժշկութիւն մը գտեր էին։ Որոշեալ օրը եպիսկոպոսները, և ուրիշ այլ և այլ եկեղեցականք եկան ի Մարպուրկ, և տեսան որ հոն ժողվուեր էին հազարաւոր անձինք Եւրոպայի ամէն կողմերէն, որոնք երդմամբ վկայեցին իրենց տեսած հրաշքները, ու եպիսկոպոսներն ալ քննութեան առին անոնց ամէն խօսքերը։

Ա.յս անգամուան ներկայ գտնուող վկայից անուանքը անծանօթ են մեզի, բաց ի դքսուհւոյն չորս աղախիններէն, որոնք էին. Կիւտա, որ Եղիսաբեթի հետ մանաւոր սիրով կապուեր էր անոր հինգ տարուան հասակէն ի վեր. Իզանդրուտա, իւր խորհրդակիցը և ընտրելագոյն բարեկամը. Եղիսաբեթ և Իրմանկարտ՝ որ դքսուհւոյն ծառայեր էին անոր Մարպուրկ բնակած ժամանակը. ասոնք չորսն ալ եկան պատմեցին ինչ որ գիտէին իրենց տիրուհւոյն վարուցը վրայ։ Ա.յս մեծայարգ դէպքերը բո-

լորն ալ մեզի հասան, և մեր պատմութեան մէջ առաջ բերած սրտաշարժ և ընտանի դէպքերը այս աւանդութիւններէն առնուեր են։ Ուրիշ վկայից մէջ բերած դէպքերը ընդ հանրապէս Եղիսաբեթի բարեխօսութեամբ ընդունուած հրաշներուն վրայ հաստատուեր էին. և այն բազմութիւն աքանչելեաց մէջ նշանելու արժանաւոր են շատ մեռելոց յարութիւն առնելը։ Հարիւր քսան ու ինն վկայութիւնք միայն արժանի դատուելով՝ ժողովեցին, գրի վրայ առին և Հիլտեշայմ քաղքին եպիսկոպոսին և ուրիշ եկեղեցականաց և աբբայից ինքովը ինքեցին Հռոմմ զրկելու համար։ Պուխի Բեռնարդոս աբբայն, Բարոզիչ Եղբարցմէ Մեծն Սողոմոն, և Ցեատնեան կարգէն Գոնրատ կրօնաւորը, որ առաջ իշխան էր և հանգուցելոյն ազգական, ուրուրուեցան որ քահանայապետին տանին անոնց գրի վրայ առած ամբողջ քննութիւնը. նոյնպէս այն քննութիւնն որ երեք տարի առաջ բերեր էր Գոնրատ վարդապետը։ Ա.յս անձինքը, բազմութիւն եպիսկոպոսաց, աբբայից, իշխանաց, իշխանուհեաց և ազնուատոհմ պարոնները նաև մանկներ ալ կը տանէին, որոնք խոնարհութեամբ կ՝աղաչէին բոլոր հաւատացելոց գթած հայրը, որպէս զի վաւերացնէ նաև երկրիս վրայ անոր մեծարանքը՝ որ արդէն յերկինս հրեշտակներէ կը փառաւորուէր. չթողուլ երկնային սիրոյն կենդանի բոյը որ մեր ընտանի արհամարհանաց ամպերով և հեղձանի հերետիկոսաց դանդաչանօքը։

ԼԲ

Սրբուհւոյն Եղիսաբեթի սրբացուցումը, և իրեն Նուիրական Դշխարաց Գերմանիոյ մէջ տարածուիլը։

1235ին գարնան օրերը, երբ քահանայապետը Բերուձիա քաղաքը գնացեր էր, ուր եօթը տարի առաջ սրբոց կարգը անցուցեր էր ըզսուրբն Փրանկիսկոս ասսիզացին, Գնորատ վարդապետն ուրիշ պատգամաւորաց հետ եկաւ զինքը աղաչելու որ դասաւորէ յերկինս իրեն սերովբէականան հօրը քով այս խոնարհ դքսուհին որ Գերմանիոյ մէջ իւր անդրանիկ դուստրն էր և աշակերտներէն ամենէն եռանդունը։ Անոնց այն քաղաքը հասնելուն լուրը մեծ ազդեցութիւն ըրաւ թէ՛ եկեղեցականաց և թէ ժողովրդեան վրայ։ Քահանայապետն պատգամաւորացնամանիները բացաւ ծիրանաւորաց, Հռովմայ արքունեաց գլխաւոր եկեղեցականաց և բազմաթիւ քահանայից դիմացը, որ ժողվուեր էին

այն նամակները լսելու։ Հաղորդեց անոնց թղթին մէջի գտնուած ամէն մանրամասն դէպքերը Եղիսաբէթի վարուցը վրայ, և այն հրաշէջ որոնք իրեն կ'ընծայուէին։ Մեծապէս զարմացան և տակն ու վրայ եղան, և սկսան արտասուել երբ լսեցին անոր այնչափ խոնարհութիւնը և սէրը աղքատաց և աղքատութեան հանմար, և անոր բարեխօսութեամբ եղած այնչափ հրաշները։ Սակայն քահանայապետն մեծ խրատուութիւն բանեցուց այն հրաշներուն քննութեան ժամանակը. և ամէն տարակոյս փարատելու համար, պէտք եղած խնամքը ու արթնութիւնը ի գործ դրաւ. և որչափ խիստ եղաւ քննութիւնը, այնչափ աւելի պայծառ յայտնուեցաւ իրեն սրբութիւնը, և թէ ինչպէս առատած ազատեր էր զԵղիսաբէթ երկրաւորներութեանց մրրիկներէն ու ալիքներէն, և յաւիտենական հանգստեան նաւահանգիստը հասուցեր։ Ժողովքի մը մէջ յորում կընախագահեր Հռովմայ քահանայապետը, և որուն ներկայ էին Անտիոքայ և Երուսաղէմի պատրիարգունքը և բազմաթիւ ծիրանաւորք, Եղիսաբէթի սրբութիւնը յայտնող գրուածները կարդացուեցան, ու ամէնը միաձայն վկայեցին թէ պէտք է երկրիս վրայի ծանուցեալ սրբոց հետ դասակարգել նաև այն երջանիկ անունը որ արդէն դրոշմուեր էր երկնից դպրութեան մէջ, ինչպէս որ յայտնապէս ցուցեր էր աստուած։ Երբ նոյն գրուածքը կարդացին նաև ժողովրդեան առջեւը, այնչափ շարժեցաւ անոնց ջերմեռանդութիւնը և զարմանքը որ ամէնքը միաբան սկսան աղաղակել. « Սրբոց կարգը անցուր զին-

քը, հայը սուրբ, սրբոց կարգը անցուր առանց շատ ժամանակ անցընելու»։ Քահանայապետն ալ հաւանեցաւ վերջապէս. բայց հանդիսին աւելի փառաւորութիւն մը տալու համար, որոշեց որ Հոգեգալստեան օրը կատարուի (26 մայիս 1235)։

Գոնբատ դքսին եռանդը կրկնապատկեցաւ տեսնելով իւր ջանքին յաջողութիւնը. իր վրան առաւ ամենայն հարկաւոր պատրաստութիւնները տեսնել այս սքանչելի և մեծ հանդիսին համար։ Վերջապէս տօնախմբութեան օրն ալ եկաւ. քահանայապետը հետն առած բազմութիւն պատրիարգունք, ծիրանաւորք, եկեղեցականք, և հազարաւոր հաւատացեալք՝ թափորով Բերուձիա Դոմինիկեանց վանքը գնաց. փողեր և ուրիշ նուագարաններ հոչակեցին այն փառաւոր հանդէսը. ամենքն ալ քահանայապետէն սկսեալ մինչև յետին ռամիկը, ձեռքերնին մոմ բռներ էին, զոր դուքսը իւր ծախքովը բաշխեր էր։ Թափօրն եկեղեցին համնելով, ամէն արարողութիւն կատարուելէն ետքը, սարկաւագ ծիրանաւորը որ քահանայապետին քովն էր, բարձր ձայնով կարդաց Եղիսաբեթի հրաշից և վարուցը համառօտ պատմութիւնը. ժողովրդեան ծափահարութեան և սրբազան ուրախութեան արտասուաց չափ չկար, որ բարեպաշտ քրիստոնէից աչուրներէն հեղեղի պէս կը հոսէր. եռանդունք, երջանիկք և իրենք իրենցմէ դուրս եղեր էին այսպիսի խանդակաթ և զօրաւոր բարեկամ՝ մը յերկինս ունենալնուն համար։ Քահանայապետն ապրսպրեց որ աղօթք ընեն, ինչպէս որ ինքն ալ պիտի աղօթէր որպէս

զի աստուած իրեն թոյլ չտայ որ սխալի այն մեծ գործոյն մէջ։ Բոլոր ժողովուրդը ծնկան վրայ եկաւ, և այս դիտաւորութեամբ աղօթք մատուցանելէն ետքը, քահանայապետը ելի, առջի հոգի շարականը հնչեցուց, զոր բոլոր հոն ներկայ գտնուողները երգեցին։ Երբոր երգը լմընցաւ, սարկաւագ ծիրանաւորը, որ քահանայապետին աջ կողմն էր, լատիներէն բարձրաձայն ըսաւ. Ներկայեալ վրայ ակէք. և մեկէն թէ քահանայապետը և թէ ժողովուրդը ծնկան վրայ գալով՝ սկսան ցած ձայնով աղօթել։ Քիչ մը ժամանակ։ Յետոյ ձախ կողմը եղող սարկաւագ ծիրանաւորն ելաւ ըսաւ։ Այս ատեն քահանայապետը նստելով իւր գահին վրայ, հայրապետական խոյրը գլուխը, սրբացուց զՆղիսաբեթ այս խօսքերովս. «Ի պատիւ ամենակարող Աստուծոյն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և ի փառաւորութիւն ուղղափառ հաւատոյ, և յաճումն քրիստոնէական կրօնից, նոյն ամենակարող աստուծոյն իշխանութեամբը, և երանելի առաքելոյն Պետրոսի և Պօղոսի, և մեր իշխանութեամբն ու մեր եղբարց խորհրդակցութեամբը կը սահմանենք և կ'որոշենք՝ թէ բարեյիշատակն Նղիսաբեթ Դուրինկիոյ դքսուհին Սուրբ է և պէտք է որ արձանագրուի Սրբոց յիշատակարանաց մէջ. ուստի կ'արձանագրենք զինքը հոն և կը հրամայենք որ նաև ընդհանուր եկեղեցին անոր տօնախմբութիւնն ու պաշտօնը հանդիսաւոր կերպով կատարէ ամեն տարի անոր մահուան օրը, դեկտեմբերի 13ին։ Դարձեալ նոյն իշխանութեամբ կը շնորհենք մէկ տարուան և քառասուն օրուան նեղոզութիւն

այն ամենայն հաւատացելոց որոնք Աշմարտա-
պէս ապաշխարելով կը խոստովանին ու յայց
կ՚երլեն Եղիսաբեթի շիրմին »։

Քահանայապետն այս վերջին խօսքերս լսն-
ցնելուն պէս , մկկէն երգիչներն և ամէն
զանգակները սկսան հնչել։ Քահանայապետն
ալ խոյրը գլխէն հանելով՝ շնորհակալութեան
Զքեզ Աստուած գովաբանեմք երգն սկսաւ եր-
գել , զոր բոլոր ժողովուրդը միաբան երգեցին
ջերմեռանդն և անուշ ձայնով։ Յետոյ բարձր
ձայնով սարկաւագ ծիրանաւորն կանչեց. «Բա-
նիսատ մագի հաւատ , ով սրբուհիդ Եղիսաբեթ ,
ապէրուխա »։ Քահանայապետն այն ատեն բեր-
նուց ըսաւ այն աղօթքը զոր ի պատիւ նոր սրբ-
ոյն շարադրեր էր։ Վերջը սարկաւագ ծիրա-
նաւորն Խոստովանիմ Աստուծոյ աղօթ-
քը ըսաւ , անմիջապէս առաքելոց անունն ետքը
դնելով Եղիսաբեթի անունը. քահանայապետն
ալ տուաւ սովորական օրհնութիւնն և արձակու-
մը , յիշելով զԵղիսաբեթ այն տեղը ուր խօսած
էր սրբոց արդեանցը և աղօթիցը վրայ։ Նուռով
հանդիսաւոր ձայնաւոր պատարագը կատարուե-
ցաւ , ու վերաբերութեան ժամանակը դատա-
ւոր ծիրանաւորներն երեքը ետևէ ետև խոր-
հրդաւոր նուէրներն ընծայեցին. մոմ , հաց ,
գինի և երկու տարակ իբրև նշանակ նեղանձ-
նական և հոգևորական կենաց. երկու աղա-
նի՝ ինչան գործունեայ կենաց , սակայն մաքուր
սուրբ և հաւատարիմ , և փոքրիկ թռչուն վան-
դակ մը զորոնք թողուցին թռչիլ աղատ դէպ ի
երկինք ինչան սուրբ հոգւոց առ աստուած թռչ-
ելուն։

Բերուձիա քաղքին Դոմինիկեան վանքին մէջ, ուր այս հանդիսաւոր արարողութիւնը կատարուեցաւ, մէկէն ի պատիւ նոր սրբոյն խոլրան մը կանգնեցին. որուն սրբազան քահանայապետը երեսուն տարուան ներողութիւն հաստատեց անոնց համար որ հոն կ'աղօթեն։ Հոն եղաւ առաջին սրբավայրը ուր երանուելոյն Եղիսաբեթի պաշտօնը մեծահանդէս կատարուեցաւ. և այն օրէն սկսեալ նոյն վանքին կրօնաւորքը միշտ մեծարեցին և փառաւորեցին մեծ հանդիսով անոր տօնախմբութեան օրը, իրեն պատուոյն համար յօրինուած շարականներն երգելով նոյն ներդաշնակ եղանակներով, ինչպէս որ իրենց հօրը սրբոյն Դոմինիկոսի տօնախմբութեան օրը կը կատարէին։

Այս տօնախմբութեանս աւելի արտաքին փառաւորութիւն մը տալու համար, Գոնզատ դուքսը իւր սեղանը հրաւիրեց երեք հարիւր կրօնաւորք, և շրջակայքն եղող խիստ շատ վանքերու, անապատականներու՝ հայ, գինի, ձուկ և կթեղէն ղրկեց, մանաւանդ Գլարեան կուսանաց, որոնց նոր սուրբը կարծես թէ մասնաւոր պաշտպան պիտի ըլլար յերկինս, ինչպէս որ իրենց նախանձորդը եղեր էր երկրիս վրայ։ Այսկէ զատ հաղարաւոր աղքատաց և անոնց ամենուն՝ որոնք իրմէ ողորմութիւն կը խնդրէին անխտիր առատ օգնութիւններ ղրկեց, մա, հայ, գինի և ստակ. ոչ եթէ իր յատուկ անուամբը, հապա տեսոնեան ասպետաց կարգին անուամբը, և մասնաւորապէս ի պատիւ անոր՝ որ ամենայն աղքատաց այնչափ առատաձեռն եղեր էր։ Անտարակոյս այս էր զանիկայ սպա-

տուելու լաւագոյն միջոցը և աւելի հաճոյականն անոր գորովալից խնամոցը։ Կրնանք գուշակել թէ որչափ մեծ եղած պիտի ըլլայ այն աղքատ մուրացիկներուն ուրախութիւնը, որոնց ազնուատոհմ և սուրբ օտարականին համբաւը այսպիսի անկարծելի և բարերար կերպով մը յայտնուեցաւ։ Գոնրատ դքսին այս առատաձեռնութիւնը այնչափ հաճոյ երևցաւ քահանայապետին, որ զանիկայ իւր սեղանը հրաւիրեց և իր քովը բազմեցուց, որ մեծ պատիւ մ'էր, և փառաւոր հացկերոյթի մ'ալ տուաւ անոր հետ եղողներուն։ Երբ Գոնրատ հրաժեշտի ողջոյնը տուաւ Գերմանիա դառնալու համար, քահանայապետն անոր խնդրած ամենայն շնորհքները պարգևեց, որ էին յանուն բազմաթիւ խնդրողաց, որ երկար ատենէ ի վեր փափաքանք կը ցանկային։ Յետոյ օրհնեց զԳոնրատ, և համբուրեց գնա շատ արտասուօք։

Նոյն տարւոյն յունիսի Վին, քահանայապետը սրբացուցման կոնդակը հրատարակեց, որ մի-կէն ղրկուեցաւ իշխանաց և եկեղեցւոյ ամենայն եպիսկոպոսաց, և շուտով Գերմանիա հասնելով՝ մեծ եռանդեամբ ընդունուեցաւ ժողովրդէն։ Կ'երևայ թէ նախ Էրֆուրդ քաղքին մէջ հրատարակուեցաւ, ուր տասն օր հանդիսաւոր տօնախմբութիւն մը կատարուեցաւ. և այն օրերուն մէջ աղքատաց շատ շատ ողորմութիւն տրուեցաւ։ Մայանսի արքեպիսկոպոսը՝ շուտով սրբոյն մարմնոյն փոխադրութեան օրը որոշեց և մինչև առաջիկայ գարունը թողուց, որպէս զի եպիսկոպոսաց և Գերմանիոյ հաւատացելոց ժամանակ տրուի Մարպուրկ երթա-

լու և Հանդիսին ներկայ գտնուելու համար։ 1236 մայիսի առաջին օրը այս բանիս համար որոշուեցաւ. որ երբ մօտեցաւ՝ Մարպուրկ փոքրիկ քաղաքն և անոր շրջակայքը գտնուող քաղաքները հաւատացելոց բազմութեամբ լեցուեցան, ամենայն աստիճանի մարդիկներով։ Եթէ հաւատալու ըլլանք ժամանակակից պատմագրաց, տասուերկու հարիւր հազար քրիստոնեայք ժողովուեցան հաւատով և եռանդեամբ՝ խնարհ Եղիսաբեթի շիրմին քով։ Կարծես թէ ամենայն ազգէ և ամենայն լեզուէ մարդ հոն կար։ Բազմութիւն ուխտաւորներ, արք և կանայք, հոն եկեր էին ի Գաղղիոյ և ի Բոհեմիոյ և սրբոյն Հայրենիքէն ի Հեռաւոր Հունգարիոյ։ Ի բենք ալ զարմացան իրենց անթիւ բազմութեանը վրայ երբ Մարպուրկ հասան. և կ'ըսէին թէ շատ դարերէ ի վեր այնչափ բազմութիւն չէին տեսած, ինչպէս հիմա զարբուտին Եղիսաբեթի և իւր մարմինը պատուելու համար եկեր էին։ Դուրինկիոյ արքունական բոլոր գերդաստանը բնականաբար հոն ժողովուեր էր։ Սոփիա դրբսուհին, Հենրիկ և Գոնրատ իշխանները կարգէ դուրս ուրախութեամբ լեցուեցան որ կրցան այսպիսի հանդիսաւոր կերպով քաւել իրենց յանցանքը, թէպէտև նա ամենաբաւ ներողամիտ եղեր էր անոնց անիրաւութեանցը։ Հոն էին իր չորս փոքրիկ որդիքը բազմութիւն իշխանուհիներու պարոնուհիներու, քահանայից, կրօնաւորաց և եկեղեցականաց հետ։ Անոնց մէջը նշանաւորներն էին բաց ի Մայանսի արքեպիսկոպոսէն՝ որ նախագահ էր հանդիսին, Գոլոնիայի, Գրեւ. ի, և Պրեմի արքեպիսկոպոսները։ Նաև Համ

պուրկի, Հալպէրշտատի, Մէրսէպուրկի, Պամ-
պերկի, Վորմսի, Եբիրի, Բատերպորնի և Հիլ-
տեշայմի եպիսկոպոսները։ Վերջապէս Փրեդե-
րիկոս Բ կայսրն ալ, որ իւր զօրութեանն և փա-
ռացը ծայրը հասեր էր, քահանայապետին հետ
հաշտուած, և դեռ նոր ամուսնացած Անգղիոյ
Իզապէլ հրաշագեղ օրիորդին հետ, ալ մէկդի
դրաւ իւր ամենայն զբաղմունքները և զինուո-
րական արշաւանքը. և զինքնեռով այն բերդանը
որ գրգռելով ի Մարպուրկ կը տանէր իր հպա-
տակներէն խիստ շատերը, եկաւ հրապարակաւ
պատուելու զանիկայ՝ որ ինքզինքը աստուծոյ
ընծայելու համար՝ չէր ուզած իւր ձեռքը։

Ցեւտոնեան ասպետներն ըսելով կայսեր հոն
հասնիլը, կարծեցին որ պիտի չկարենան անոր
առջեւը սրբոյն մարմինը հողէն հանել. ուստի ո-
րոշեցին որ սահմանեալ օրէն քանի մ՝օր առաջ
կատարեն հանդէսը։ Երեք օր առաջ Ուրբիի ա-
ռաքելորդը եօթը կրօնաւորներով գիշերանց ե-
կեղեցին մտաւ ուր Եղիսաբեթի մարմինը կը
հանգչէր, և ամենայն դռները խնամքով փակե-
լէն ետքը, գերեզմանին փոսը զգուշութեամբ
բացին. և հազիւ թէ շիրմին վրայի քարը վեր
առին, գեղեցիկ և սքանչելի անուշահոտութիւն
մը բուրեց անոր պատուական նշխարներէն։ Կրօ-
նաւորը վերջի ատենի զարմացան ատուա-
ծային սիրոյն այս առհաւատչեային վրայ, մա-
նաւանդ զի լաւ գիտէին որ առանց անուշահո-
տութեան թաղեր էին զԵղիսաբեթ։ Այս պա-
տուական և սուրբ մարմինն ամբողջ գտան, ա-
ռանց ապականութեան կամ փճանալու նշան
մը ունենալու, թէպէտև հինգ տարի կար որ

հողին մէջն էր. դեռ ձեռուքները խաչաձև բռներ էր կուրծքին վրայ։ Մէկմէկու կ'ըսէին թէ անտարակոյս այս փտուկ և պատուական մարմին ապականութեան կամ գարշելի մահուան հոտ չէր հոտեր, որովհետև կենդանութեանը ժամանակ արհամարհեր էր ամենայն աղտեղութիւն և գարշութիւն առ ի սիրելի զաղքատս։ Յետոյ դագաղէն դուրս հանեցին, ծիրանեգոյն պատմուճանով մը փաթթեցին, և կապարե մատուկի մը մէջ դնելով՝ դարձեալ նոյն փոսին մէջ իջուցին առանց գոցելու, որպէս զի առանց շատ դժուարութեան կարենան հանդիսին օրը դուրս հանել։

Վերջապէս մայիսի Ին առաւօտը կանուխ, խուռն բազմութիւնը եկեղեցւոյն շրջակայքը ժողվուեցաւ, անանկ որ կայսրն իրեն որոշեալ տեղն երթալու համար, շատ մեծ դժուարութիւն կրցաւ խուռն ամբոխը ճեղքել ու անցնիլ։ Կարգէ դուրս խոնարհ և եռանդուն ջերմեռանդութիւն մը կ'երևեր իր վրայ. բոկոտն էր և մեծնագոյն զգեստ մը հագած, ինչպէս որ էր ժամանակաւ փառաւորեալ սրբուհի Եղիսաբեթը, զոր կը մեծարեր. իսկ գլուխն ալքունական պսակ գրեր էր։ Զորս կողմը իշխանք և տէրութեան կայսրընտիրները կեցեր էին. անոնք ալ նմանապէս իրենց պսակը գլուխնին, ինչպէս նաև եպիսկոպոսներն և աբբաներն ալ իրենց խոյրերովը։ Այս հանդիսաւոր թափորը սկսաւ դէպ ի սրբուհի Եղիսաբեթին գերեզմանը առաջ շարժիլ։ « Այն ատենը, կ'ըսէ պատմիչներն մէկը, սրբուհին Եղիսաբեթ իր երկրիս վրայ ունեցած ամէն նեղութեան և խոնարհու-

թեան հատուցումն ընդունեցաւ փառաք և պատուով»։ Կայսրն ուզեց ամենէն առաջ իջնալ փոսին մէջ, և վերցընել անոր մարմինը ծածկող քարը. նոյն սուրբ և երկնային անուշահոտութիւնը որ արդէն զարմացուցեր էր զկրօնաւորս, մէկէն տարածուեցաւ բոլոր հոն եղողներուն վրայ, ուանոնց բարեպաշտութեան եռանդուն զգացմունքը ալ աւելի աճեցուց։ Եպիսկոպոսներն փափաքեցան անձամբ հանել փոսէն այն սուրբ և նուիրական մարմինը։ Կայսրն ալ իրենց օգնեց. եռանդեամբ համբուրեց անոր մարմինը ամիսթոզ մնացուկը, ու անոնց հետ վեր վերուց։ Եպիսկոպոսաց կնքովը կնքուելէն ետքը հանդիսով իրենց ու կայսեր ձեռքովը, նուագարանաց ձայներով բերուեցաւ մինչև այն տեղը զոր պատրաստեր էին զինքը ժողովրդեան տեսութեանը դնելու համար։

Եռանդուն անհամբերութիւն մը կը բորբոքէր հաւատացելոց սիրտը, որ կը փափաքէին տեսնել մէյմը անոր սուրբ նշխարքը, մնացեալ դալչիլ ու դիրութեամբ համբուրել։ «Ո՛վ երջանիկ երկիր, կ'ըսէին, որ հանգիստ ունեցաւ այսպիսի սուրբ մարմնոյ մը և պահպան գտնուեցաւ մը. ով երջանիկ ժամանակ, յորում այսպիսի գանձ մը յայտնուեցաւ»։— Երբ թափորը ժողովրդեան մէջ հասաւ, երբ տեսան այն պատուական մարմինը զոր կայսրը, իշխաններն ու եպիսկոպոսունք իրենց ուսոցը վրայ կը կրէին, երբ անոր մարմնէն բուրած անուշահոտութիւնն առին, իրենց սրտին եռանդանն ալ չափ չմնաց. սկսան ամենքը մէկ բերան աղաղակել. «Ո՛վ նուիրական մարմին, որ այնչափ պա-

տիւ գտար աստուծոյ քով, ու այնչափ զօրութիւն ի բժշկել զմարդիկ, ոմն կրնար ջանուլ անուշահոտութիւնդ ու քեզի չդիմել։ Թող հեռեւոփիկոմները դողան ու նենգաւոր հրեաները սարսափին. Եղիսաբեթի հաւատքը զանոնք ամենքն ալ տակն ու վրայ ըրաւ։ Անիկայ զոր յիմար կը կարծէին, ահա իւր յիմարութեամբն ամբոյցուց երկրաւոր իմաստութիւնը. հրեշտակք մեծարեցին անոր գերեզմանը, և ահաւասիկ բոլոր ժողովուրդը հոն կը վազէ. մեծ իշխաններ և նոյն իսկ Հռովմայեցւոց կայսրը կը խոնարհի անոր այցելութեան կու գայ։ Ցեսէք աստուածային մեծվայելչութեան ողորմութիւնը. անիկայ որ կենդանութեան ատեն կ'արհամարհէր զփառս աշխարհի, ու մեծերուն ընկերութենէն կը փախչէր, ահա հիմա կը մեծարուի քահանայապետէն ու կայսրէն։ Անիկայ որ միշտ յետին տեղն ընտրեց, գետնի վրայ նստաւ ու հողերուն վրայ քնացաւ, ահա հիմա արքունական ձեռքեր զնքը կը տանին ու կը փառաւորեն։ Եւ յիրաւի, վասն զի աղքատ եղաւ ու ամեն ունեցածը ծախեց, որպէս զի արքայութեան անգիւտ մարգարիտը գնէ »։

Սրբուհւոյն մարմինը ժողովրդէն մեծարուելու համար՝ մեջտեղը դնելով, հանդիսաւոր պաշտօն մատուցին ի պատիւ նորա. ու անոր համար յատուկ ձայնաւոր պատարագը Մայանսի արքեպիսկոպոսն մատոյց։ Վերաբերութեան ժամանակ կայսրը մօտեցաւ դագաղին ու ոսկեղէն պսակ մը Եղիսաբեթի գլխուն վրայ դնելով՝ ըսաւ. « Որովհետև չկրցայ կենդանութեանդդ ատեն պսակել զքեզ իբրև իմ կայսրուհիս, դէթ

կ՚ուզեմ այսօր պսակել անմահ թագուհի երկնից արքայութեանը մէջ»։ Ոսկիէ բաժակ մը ալ ընծայեց զոր իւր խնջոյից ատեն կը գործածէր, յորում Եռքէն սրբուհւոյն գանկը ամփոփուեցաւ։ Եռքը կայսրն անձամբ հոն բերաւ Երիտասարդ Հերմանն դուքսը, որ սրբուհւոյն զաւակն էր. կայսրուհին ալ երկու երիտասարդ իշխանուհիքը զՍոփիա և զՎերդրուտա։ Սոփիա դքսուհին և իր Հենրիկ ու Գոնրատ որդիքն ալ նոյնպէս մեծեցան անոր փառաւորեալ նշխարաց, զոր առաջ այնչափ անգամ արհամարհեր էին, և հոն երկար ատեն աղօթելով՝ հարուստ ընծաներ պարգևեցին։ Զգնուականներն ու ժողովուրդը խուռն բազմութեամբ կը դիմէին այն խորանն՝ ուր Եղիսաբեթի մարմնոյն մնացուկը դրուեր էր, ու իրենց ընծաներն առատաբար անոր կը նուիրէին։ Կարգէ դուրս եղաւ այս ընծաներն իրենց շատութեամբն և հարստութեամբը. բարեպաշտ հաւատացեալց եռանդը գոհ չեր ըլլար զարդարելով և գեղեցկացնելով այն ծաղկազարդ հրաշից մահիճը՝ ուր կը հնչէր սրբուհին Եղիսաբեթ։ Կանայք իրենց մատանիները, կուրծքին վրայի զարդերն ու ականն տեսակ ակուներն անոր կու տային. ուրիշներն ալ սկիհներ, ճաշոցներ, պատարագի զգեստներ կը նուիրէին այն մեծ և գեղեցիկ եկեղեցւոյն զոր կը փափաքէին շուտով մը կառուցանել ի պատիւ նորա, որպէս զի իրեն պատշաճ փառքովը հանդչի հոն, և աւելի շուտով կատարէ իրեն բարեխօսութեանն ապաւինող հաւատացեալց աղաչանքը։

Սակայն նոր նշան մը հիացուց հասարակաց

մեծարանքն, և ցրցուց աստուծոյ խնամոյ մեծութիւնն ի փառս սրբոյն։ Երկրորդ առաւօտը սրբուհւոյն մարմնոյն մնտուկը բանալով՝ որ եպիսկոպոսաց կնքովը կնքուեր էր, ողողուած գտան զայն կարգէ դուրս ազնիւ և ընտիր իւղով, որ էն պատուական նարդոսի նման անուշահոտութիւն մը կը բուրէր։ Ա.յս իւղը շիթառ շիթ սրբոյն ոսկորներէն կը կաթէր իբրև բարերար ցող երկնից. և երբ կը ժողվէին այս կաթիլներն կամ կը սրբէին, անդգալի կերպով ուրիշ կաթիլներ կը յաջորդէին անոնց տեղը. կարծես թէ շռայլ պէս անոր ոսկորներէն կը ծաւալէր այս իւղը։ Ա.յս տեսարանիս թէ՛ եկեղեցականք և թէ հաւատացեալք նոր երախտագիտութիւն մը խնայան առ աստուած որ հեղինակն էր այնչափ և այնպիսի սքանչելեաց, և նոր զարմանք մ՝աւելցուցին անոր վրայ որ նոր պատակ եղեր էր այն հրաշներուն. և այն ազդեցութեամբն որ հաստատուն հաւատքէ մը առաջ կու գայ, մէկէն հասկրցան այս խորհրդաւոր երևոյթին խնստը։ «Ո՛վ գեղեցիկ և պատուական նշան, աղաղակեցին, արժանի անոր և հանճայն մեր ամենուս աղօթքին։ Ա.յս ոսկորներն որ գործածուեցան և խորտակուեցան այնչափ բարեպաշտ կրթութեամբք և մնահացուցմամբք՝ քաղցր անուշահոտութիւն մը կը բուրեն, իբրև թէ խորտակած ըլլային այն աղապատրը յորում կ՝ամփոփուէր սրբուհւոյն Մագդաղենացւոյ պատուական բալասանը։ Իր մարմնոյն քաղցր և սուրբ իւղ մը կ՝արտահոսէ, որովհետև իր բոլոր կենացը մէջ ուրիշ բանի ետևէ չէր՝ բայց եթէ առ ի սփոփել զաղ-

քատու և բարի գործեր ընել. և ինչպէս որ իւղը որ և իցէ հեղուկներու հետ խառնուելով՝ ա-նմացմէ վերը կը կենայ, այսպէս ալ գթութիւնը քան զամենն նմանները կը գերազանցէ աստու-ծոյ դատաստանաց առջևը։ Աբելի ոտքէն կ'ելլ-ել իւղը, որովհետև շատ անգամ աղքատաց հիւղերը կ'երթար, և ուր թշուառ մը տեսնէր՝ կը ջանար սփոփել զնա։ Այս սիրելի սրբուհին Եղիսաբեթ իբրև գեղեցիկ և պարարտ ձիթե-նի մը ծաղկեալ և անուշահոտ առաքինութիւն, ընդունեցաւ ի պարգև իբրև իւղ լուսաւորելու՝ մուցանելու և բժշկելու։ Որչափ ախտացեալը, որչափ տկար և թշուառ մարդիկ բժշկեց իր ո-ղորմութեամբը և իւր սրբութեան օրինակովը. որչափ հաղարաւոր աղքատներ մուց և յագե-ցուց իր բերնին հացովը. որչափ առատաձեռ-նութեամբ լուսաւորեց բովանդակ եկեղեցին։ Ցիրաւի ուրեմն այս փափուկ հեղուկը, այս ա-նուշահոտ իւղը կը յայտնէ անոր սրբութիւնն որ գիտցաւ մաքրել այսպիսի սուրբ պայծառու-թեամբ, բժշկել այսչափ քաղցրութեամբ, սբ-նուցանել այսչափ առատաձեռնութեամբ և իր բովանդակ կենացը մէջ ամեն տեղ ծաւալել այսպիսի քաղցրահոտութիւն մը»։

Այն պատուական իւղը՝ ժողովուրդը բարե-պաշտ խնամքով և միանգամայն կարգէ դուրս եռանդեամբ ժողվեց. որուն գործածութեամբ բը շատ բժշկութիւններ եղան ծանր ախտերու և վտանգալից վերքերու։

Այնչափ երկայնին նպաստներ զոր եկեղ-ցւոյ գերագոյն քահանայապետը իր հաւանու-թեամբը հաստատեց, և այնքան պատիւներն

որ այսպիսի հանդիսաւոր և փառաւոր կերպով նոր սրբութիւն համար սահմանուեցան, այլ աւելի աՀՀեցուցին հաւատացելոց թիւն և եռանդը, որ կու գային խնդրելու անոր գերեզմանին կամ մնունդ մը իրենց աստուածպաշտութեանը, և կամ դեղ մը իրենց ցաւոցը։ Իր փառքը շուտով ծաւալեցաւ բոլոր քրիստոնեայ աշխարհին մէջ, և բազմաթիւ ուխտաւորներ անդադար Մարպուրկ կը յաՀախէին, ինչպէս Եւրոպիոյ ամեն քաղաքներէն կը դիմեն ի շիրիմ սրբոյ առաքելոյն Յակոբայ Կոմպոստելլայ։

Ա.ին գործովելից հաւատոյ արդիւնքն եղան բազմաթիւ հրաշներ որ կը գրգռեին այսպիսի երկար և դժուարին ճամբաներ կտրել տալու այնչափ թշուառ հաւատացելոց։ Անոնց ամենուն մէջէն, որոնք սրբոյ վարքն ու ժամանակագիրը մեզի մատնանշեն աւանդեցին, կ'ուզենք երկուքը միայն մէջ բերել, որոնք շատ սրբատաշարժ մեզի կ'երևին և կը ցուցընեն թէ որ աստուածային սրբութիւն Եղիսաբեթի ընծայուած հաւատքը և սէրը, շուտով տարածուեցաւ և արմատացու մինչև ի հեռաւոր գաւառս։

Անտարակոյս Եղիսաբեթի պաշտօնն ամեն տեղէ աւելի ի Հունգարիա պիտի փառաւորուէր ուր արդէն ծներ էր ալ. և բնականապէս իր սուրբ վարուց պատմութիւնն և սրբացումն համբաւը սաստիկ և եռանդուն զարմանք և ուրախութիւն պիտի պատՀառէր այն երկրին՝ որուն ինքը մնայուն կերպով կը վերաբերէր։ Ա.րդ այն ժամանակները Հունգարիոյ Կրան քաղաքին մէջ երկու յարգելի և բարեպաշտ ամուսինք կային, որոց մէկ հատիկ դուստրը տը-

զայութեան մատղաշ հասակին մէջ վախճանե-
ցաւ։ Տղուն հայրն ու մայրը կարգէ դուրս ցաւ
զգային անոր մահուանը վրայ. և շատ արտա-
սուելէն և հառաչելէն ետքը քնացան. սակայն
չկարենալով անոր յիշատակին իրենց սրտին մէջ
խղդել՝ գիշերուան մէկ մասը մէկմէկու հետ ի-
րենց ցաւոցը վրայ խօսեցան։ Տղուն մայրը նո-
րէն քիչ մը քուն ըլլալով՝ տեսիլք մը տեսաւ որ
իրեն ազդեց շուտով տանիլ իր մեռեալ դստեր
մարմինն ի շիրիմ սրբուհւոյն Եղիսաբեթի ի
Գերմանիա։ Ա.րթնալով վստահացաւ յաս-
տուած և ըսաւ իր ամուսնոյն. « Զթաղենք աղ-
ջիկնիս, այլ փութանք տանինք զնա հաւատքով
սրբուհւոյն Եղիսաբեթի շիրիմը զոր աստուած
կը փառաւորէ այսչափ հրաշիւք, որպէս զի իր
բարեխօսութեան զօրութեամբը ողջենայ». ա-
մուսինն համոզուեցաւ իր կնոջ եղած ազդեցու-
թեանը։ Երկրորդ առաւօտը երբ ամենքը կը
սպասէին տղուն մեռեալ մարմնոյն թաղման տը-
խուր հանդէսը տեսնելու, անոր հայրը և մայրը
շատ զարմացուցին զիրենք երբ փոխանակ թա-
ղելու՝ կողովի մը մէջ դրին, և այնպէս Ճամբայ
ելան Եղիսաբեթի շիրիմն երթալու, առանց
ուշ դնելու հոնեներկայ եղողներուն խօսքերուն։
Երեսուն օր Ճամբորդութիւն ըրին՝ արցունքով,
հոգերով և շատ դժուարութեամբ. բայց այն
օրերը ըմենալէն ետքը, աստուած դթաց իրենց
հաւատոց և ցաւոցը վրայ, և անասելով սրբու-
հւոյն Եղիսաբեթի արդեանցը, զրկեց տղուն ան-
մեղ հոգին իւր անկենդանի մարմնոյն մէջ և
կենդանացուց զնա։ Թէպէտև իրենց ուրախու-
թիւնն անսահման եղաւ, սակայն ծնողքը չու-

զեցին անկատար թողուլ իրենց երկար պան-
դրխտութիւնն առ սրբուհին Եղիսաբեթ. ուս-
տի իրենց յարուցեալ դուստրն առին ու մինչև
Մարտուրկ տարին։ Հոն իրենց շնորհակալու-
թիւնը մատուցանելէն ետքը, նորէն Հունգա-
րիա դարձան վայելելու իրենց անկարծելի ուրա-
խութիւնը։ Ժամանակ անցնելէն ետքը՝ այս աղ-
ջիկն ընկերացած Հունգարիոյ թագաւորի մը
հարմնացու աղջկան մը հետ Գերմանիա գնաց։
Ռադիզպոն հասնելով՝ հարմնացուն կին եղաւ
Պաւիերայի դքսին. իսկ ինքը Գոմինիկեանց վան-
քը մնալով՝ անոնց աբբասուհին եղաւ, և մեծ
սրբութեամբ կ'անցընէր իր կենաց օրերը՝ երբ
Թէոդորիկ գրեց իր պատմութիւնը։

Երբոպիոյ միւս ծայրը յԱնգղիա, նոյն ատեն
նեերը ազնուատոհմ տիկին մը կար, որ յետ քա-
սան տարի իւր ամուսնոյն հետ ապրելէն, առանց
անկէ զաւակ մը ունենալու կորսնցուց զայն, որ
մեծ ցաւ պատճառեց իրեն։ Իւր այրիութիւնը
և առանձնութիւնը սփոփելու համար, մեծա-
գոյն զգեստ մը հագաւ, մազերը կտրեց և եր-
կոտասան աղքատ տղաք իրեն որդեգրեց. զա-
նոնք իր տանը մէջ բնակեցընելով, անոնց կե-
րակուրը կը հոգար, կը հագուեցընէր զանոնք,
կը լուար և կը ծառայէր իր յատուկ ձեռքովը։
Ուր որ իրեն աղքատ մը կամ խեղճ մարդ մը
պատահէր՝ շատ կ'ախորժէր և կը սիրէր անոր
ողորմութիւն մը տալ աստուծոյ և սրբուհոյն
Եղիսաբեթի սիրուն համար. վասն զի շատ ան-
գամ լսեր էր Եղիսաբեթի համբաւը, անոր
համար աշխարհիս մէջ ամէն բանէն աւելի, և
աստուծոյ ուրիշ ամէն սուրբերէն վեր զանիկայ

կը սիրէր։ Անոր յիշատակը միայն ոչ երբէք սրբ-
տէն կը հեռանար, և գիշեր ու ցորեկ չէր դադ-
բեր անոր երջանիկ կենացը վրայ մտածելէն։

Ս. Յակոբ ուրեմն ապրելով այս ամուսա-
տոհմ և բարեպաշտ տիկնին ալ վախճանեցաւ,
և երբ ամենուն կարգէ դուրս ցաւ մը պատճա-
ռեց անոր մահուան լուրը, խոստովանահայրը
անոր վրայ լացողներուն ըսաւ թէ զտիկոյ սրբ-
բուհւոյն Եղիսաբեթի շնչին պէտք է տանիլ,
որովհետև արդէն կենդանութեանը ժամանակ
ուխտ ըրեր է եղեր երթալու։ Հնազանդեցան
խորհրդոյն. ծոմն և ընդարձակ երկիրներ կրա-
բելով և հօթը շաբաթ ճամբորդութիւն ընե-
լով, անոր մարմնոյն հետ Մարպուրկ հասան։
Մեծ եռանդեամբ սրբուհւոյն դիմեցին հոգը,
բարեպաշտ տիկնոջ մարմնին յանկարծ կենդա-
նացաւ ու այս խօսքս ըսաւ. «Ո՛հ, ինչպէս եր-
ջանիկ եմ. սրբուհւոյն Եղիսաբեթի բազկացը
մէջ հանգչեցայ»։ Իր բարեկամներն ուզեցին
զտիկոյ նորէն Անգղիա դարձընել. իսկ ինքը
չուզեց հեռանալ իւր երկնաւոր բարեկամին
նուիրական տեղերէն. տասնըհինգ տարի ապ-
բեցաւ բոլորովին սուրբ կեանք մը վարելով, իւր
խոստովանահօրէն զատ ամենևին ուրիշ մարդու
մը հետ չխօսեցաւ։ Օր մը երբ քահանայն իրեն
հարցուց թէ ինչ բանի համար լուռ կը կենար,
պատասխանեց անոր. «Երբոր կը քնանայի Ե-
ղիսաբեթի բազկացը մէջ, այնչափ մեծ էր ու-
բախութիւնս, որ ալ ուրիշ մտածմունք մը չու-
նէի, բայց միայն թէ ինչպէս պիտի կարենամ
ձեռք ձգել այն յաւիտենական երջանկութիւ-
նը»։

Սրբուհւոյն Եղիսաբեթի մնրմինը գրեթէ երբէք դար լի այսպիսի քաղցր և սրտաշարժ յիշատակաբ մնաց այն սքանչելի և փառաւոր եկեղեցւոյն մէջ, միշտ Ցեւտոնեան կարգին ասպետացը պաշտպանութեանը տակ, որոնք միշտ խաչակիրք էին վասն հաւատոյ։ Միայն սիրտը, իւր ամենէն աւելի ազնուական մասը, Քամպրէի եպիսկոպոսը խնդրեց և ընդունեցաւ. և մեծ հանդիսով փոխադրեց իր եպիսկոպոսական քաղաքը, և մայր եկեղեցւոյն մէջ խորանի մը վրայ դրաւ։ Ոչ պատմութիւնն և ոչ աւանդութիւնը կը յիշատակէն թէ ինչ պատճառաւ արդեաք Գերմանիոյ հաւատացեալքը յանձն առին զրկուիլ այնպիսի պատուական գանձէ մը, զրկելով զայն օտար և հեռու երկիր մը։ Բայց ով չնկատեր հոս նախախնամութեան խորհրդաւոր կարգաւորութիւնն որ կ'ուզէր որ այս գոտովանից և մաքուր սիրտն երթայ սպասէ ի Քամպրէ իրեն յարմար և իւր խոնարհութեան և ողորմածութեան արժանաւոր սրտի մը, և առաստուած ունեցած եռանդուն սիրովը. — Ֆեներնի սրտին։

Այսպէս Եղիսաբեթի պաշտօնը բոլոր քրիստոնեայ աշխարհին մէջ ծաւալեցաւ. և մինչդեռ մէկ կողմէն հաւարաւոր ուխտաւորներ կը մեծարէին անոր շիրիմը, միւս կողմէն բազմաթիւ եկեղեցիներ կը շինուէին հեռու տեղեր, ամենն ալ իւր յիշատակին և անուանը նուիրուած. ամեն տեղ և մնմնաւորապէս Գրեչ, Աղբազոսուրկ, Գասսել, Ռենչադբը, Բրակա. և բոլոր Պեղճիային մէջ վանքեր, հիւանդանոցներ, բնական և բարոյական հիւանդութեանց

ապաստաններ շինուեցան, միշտ իրենց առաջնորդ և պաշտպան ունենալով զԵղիսաբեթ։

Սկսն Կալի աբբայն՝ Եղիսաբեթի խոստմունքը յիշելով, որ իւր աբբորանացը ժամանակն բերէր էր, ըլլալու միշտ իր փաստաբանն առ աստուած, յառաքակուսեցաւ թէ երկինքը երկրէս աւելի հաւատարմութեամբ պիտի կատարէր իրեն խոստմունքը. և անոր յիշատակին խորան մը նուիրեց, և մատուռ մը կանգնեց իր վանքին նեբքին գաւիթներուն մէկուն մէջ։ Հունգարիա, որ սրբոյն հայրենիքն էր, Գասգոյ քաղաքին մէջ մեծապայծառ եկեղեցի մը կառուցին ի պատիւ նորա. Դուբրնիկիոյ երկրին բազմաթիւ Գերմանացիք այն ատենները Վերին Հունգարիոյ այս քաղաքը գնացին. և սուրբ դքսուհւոյն համար ունեցած ջերմեռանդութիւններն բնական կապ մ՚եղաւ իրենց նոր և հին հայրենեացը։ Ստեփանոս Ե թագաւորը, Եղիսաբեթի քեռորդին, եռանդեամբ օգնեց այն շինքին կառուցմանը համար, որ քիչ ատենէն ամենէն աւելի գեղեցիկ ճարտարապետական շինքն եղաւ բոլոր տերութեան մէջ. և իր յաջորդացը մէջ ամենէն աւելի համբաւաւորը՝ հնգետասաներորդ դարուն մէջ, Մատաթիա Գորվին, հարստացուց և գեղեցկացուց զայն սքանչելի և փառահեղ ամպհովանիով մը։

Սրբազան քահանայապետին հաւանութեամբ բը սրբուհւոյն տօնախմբութեան օրը մեծ թափորով և մանաւոր խնամքով տօնուեցաւ բոլոր եկեղեցւոյն մէջ և ուրիշ մէկ քանի տեղուանք։ Հիսուն շայմի վիճակը մանաւանդ շատ հոչակաւոր եղաւ իւր այն փառաւոր հանդիսովը՝ որով

այն գեղեցիկ օրը տօնախմբէց, և նմանապէս երկոյց ներդաշնակութեամբը որ կը հնչէին Եղիսաբէթի պատուոյն հանար գեղեցիկ մայր եկեղեցւոյն մէջ, որ Բարեմոյն Լուսավիկոսի սկսյաձև վարդենւոյն շրջակայքը ի պատիւ Մարիամու շինուած էր։ Ինոսվկենտիոս Դ. դեռ հաղիւ քահանայապետական աթոռն եղած, մէկ տարուան և քառասուն օրուան ներողութիւն շնորհէց անոնց ամենուն՝ որ այց սիրտի եկնէին Մարպուրկի եկեղեցւոյն և Եղիսաբէթի գերեզմանին՝ աւագ շաբթուն իրեք վերջի օրերուն մէջ։ Բանեստոս Դ. յիսուն տարուան և նոյնչափ քառասնորդաց ներողութիւն շնորհէց ամենայն հաւատացելոց որ ապաշխարելով և խոստովանելով ըլլալով՝ այց եկնէն սրբոյն Փրանկիսկոսի կարգին եկեղեցիներուն ի պատիւ Եղիսաբէթի իր տօնախմբութեան օրը։ Նոյն օրը՝ մինչև այս օրս կայ ի Հռոմի հարիւր տարուան հանար ներողութիւն եօթը մայր եկեղեցիներուն երկուքին մէջ, այսինքն ի Սուրբ–Խաչ Երուսաղէմի, և ի Սրբուհի–Մարիամ Հրեշտակաց եկեղեցին. բաց անկէ լիակատար ներողութիւն Երրորդականաց եկեղեցւոյն մէջ, որ կը կոչուի սուրբ Կոզմաս և Դամիանոս՝ Հռոմայի հրապարակին մէջ։ Վերջապէս նաև եկեղեցական պաշտամունց մէջ ալ՝ յորում պայծառապէս կը փայլի քրիստոնէական քանաստեղծութիւնը, ի պատիւ Եղիսաբէթի նուիրած կը տեսնենք ընտիր շարականներ, երգեր, զանազան աղօթքներ, և այլն, և այլն. մանաւանդ կրօնաւորաց, ինչպէս Ս. Փրանկիսկոսի, Ս. Դոմինիկոսի, Պիտերսեանց և Պրեմոնտրեանց կարգերն իրեն հանար իւրաքանչիւրը մէյմէկ պաշտօն հաստատեցին։

Ա. յո՛, անեկեղեցի մենք ալ կը գոյենք, սուրբք և սրբուհիք աստուծոյ, որպիսի՞ փառք նման էն ձեր փառացը. կամ ո՞ր մարդկեղէն յիշատակն այնչափ սիրուած, պահպանուած և նուիրական եղած է ինչպէս ձերը։ Սակայն դուք չփնտռեցիք մարդկային փառքը, այլ զայն արհամարհելը ձեր մեծագոյն պարծանքը սեպեցիք. ու ձեռք ձգեցիք այդ անմահ փառքը, երբ զայն ստանալու տակն առնելու քաջութիւնն ունեցաք։ Աշխարհակալք, օրէնսդիրք, մեծ մտաւորականք, հանճարաւոր մարդիկ, կամ բոլորովին մոռցուած են և կամ քիչ մը ատեն միայն յիշատակուած մարդուս ընդարձակածաւալ մտացը մէջ. իսկ դուք ընդհակառակն, ո՛վ երջանիկ որդիք երկրի զոր կը փառաւորէք և երկնից զոր լի կ'ընէք ձեզմով, ծանօթ և սիրելի էք դուք ամէն քրիստոնէի. վասն զի դուք էք առնոց պաշտպանը, մտերիմը, կենաց պահպանն և փարատիչն անոնց արտմութեանը. և ինչպէս անոնց է սուրբ եկեղեցին, այսպէս ալ ձեր փառքը։ Ամէն տարուան գէթ մէկ օրը նուիրուած է ձեր յիշատակին. և այն օրը աշխարհիս ամէն կողմերը, հազարաւոր քրիստոնեայք մէկզմէկ կը բարեւեն և իրարու կը բարեմաղթեն միայն անոր համար՝ որ ձեր անունը կրելու բարեբաղդութիւնն ունին. այն անունը զոր ամէն եկեղեցեաց մէջ բիւրաւոր ձայնք անմեղաց, սուրբք և մաքուր կուսանաց, քահանայից և սարկաւագաց կ'օրհնեն, կը գովեն ու կը փառաբանեն. միավ բանիւ սրբազան քահանայապետէն սկսեալ ինչուան յետին աղքատիկ ձգնաւորն իրեն խրճիթին մէջ նստած՝ անզուգական ներ-

գաշնակութեամբ մը կը միացընեն ու կը խառ-
նեն իրենց ձայնը հրեշտակաց սրբասացութեան
հետ։ Ուրեմն իրաւունք ունինք մենք ալ, սուրբք
և սրբուհիք աստուծոյ, գոչելու զարմացմամբ
թէ որքան փառքը հաւասար է արդեօք ձեր
փառացը։

ԼԳ.

Սրբուհեայն Եղիսաբեթի սրգեսոյը, ծնողացն ու իր ցեղին եղած սրբոյը վրայ մեկ երկու խոսք.

Անշուշտ կը նեռեն ընթերցողք Եղիսաբեթի տղոց վիճակին վրայ հոս համառօտ տեղեկութիւն մը տալու, նաև այն գլխաւոր անձանց՝ որ նշանաւոր եղան իր պատուական կենաց պատմութեանը մէջ։

Նախ եւ առաջ այս աշխարհէս հրաժարողներուն կարգին հետեւելով, նախ կը գտնենք Անդրեաս Թագաւորը, սրբուհեայն Եղիսաբեթի հայրը, որ երբ իւր գաւերը մահուան գաւժը լսեց, կարգէ դուրս և խորտմութեան մէջ ընկղմեցաւ. և այն տրտմութեան գլխաւոր պատճառն էր իրեն չկարենալն ըստ արժանւոյն մեծարել և պատուել իր գաւերն առաքինութիւնը, և դիւրաւ յանձն առնուլը թողուլ զնա հիգութեան և արհամարհանաց մէջ։ Սակայն ու-

նեցաւ այն բարեբաղդութիւնն և մխիթարութիւնը տեսնելու իւր աղջկանը սրբութիւնը ծանուցեալ յեկեղեցւոյ, և սուրբ հրատարակեալ բոլոր քրիստոնեայ աշխարհին մէջ. բայց ափսոս որ անոր սրբացումն հանդիսէն քիչ եաքը ինքն Անդրէաս Թագաւորն ալ վախճանեցաւ։

Նոյնպէս Եղիսաբեթի Սոփիա կեսուրը 1238ին մեռաւ, Եղիսաբեթի մարմնոյն հանդիսաւոր փոխադրութենէն երկու տարի վերջը, որուն յարգը այնչափ ատեն չկրցաւ ձանչնալ. Այլենախ Սրբուհւոյն–Կատարինեայ վանքին մէջ, զոր իւր ամուսինը Հէրմոն դուքսը շիներ էր՝ զինքը թաղեցին։

Սրբուհւոյն առաքինութեանցը ամենէն աւելի եռանդուն զարմացողն ու ախոյեանը՝ Գոնը բատ իր ամուսնոյն եղբայրը, նոյնպէս շատ չապրեցաւ անոր դէմ բրած նախատանացը գեղեցիկ հատուցումն ընելէն ետքը։ Իր բարեպաշտութեամբը, քաջութեամբն և պարկեշտութեամբը Ցեւտոնեան կարգին առաջնորդն անուանեցաւ, որուն արդէն ընկեր գրուեր էր, ապաշխարութեան համար։ Իր զօրութեանն և հարստութեան մէկ մեծ մասը այն եկեղեցւոյն կառուցմանը նուիրեց, որ մինչև այսօր Մարպուրկ Եղիսաբեթի անունը կը կրէ ի յիշատակ հիմնադրին։ Անշուշտ ի մտոյ հակելու համար այն ընդարձակ շէնքին շինութեանը, կամ թերևս աւելի սեր մը ձգելով այն տեղերուն՝ զորոնք իր հարսը սրբացուցեր էր, Մարպուրկ քաղաքը ուզեց ընտրել գլխաւոր բնակութեան տեղի այն կարգին որուն գլխաւորն էր. և նոյն

տեղը մեծ պալատ մը շինել տուաւ, որուն ա-
ւերակները մինչև ցայսօր կը տեսնուին։ Հեսի
մէջ երկար ատեն կենալը իրեն արգելք չեղաւ
Բրուսիա երթալու, նախագահ բազմելու Տե-
սոնեան կարգին նոր յառաջադիմութեանը,
և հեթանոսաց դէմ պատերազմելու։ Կարը-
ձութեամբ ու մեծ խելքով պատերազմեցաւ
Գոնրատ. երկնցուց ու մեծցուց իր կարգին կա-
լուածները, և ընդունեցաւ քահանայապետէն
այն գաւառին իշխանութիւնը, որ ատեն անց-
նելէն ետքը ասպետաց կարգին փառացը տե-
սարան պիտի ըլլար։ Բայց չմեռած ուզեց նորէն
Հռոմի դառնալ, ուր հանելով ծանր հիւան-
դացաւ։ Եւ նոյն միջոցը անանկ գերազանց սըբ-
տի սրբութիւն մը ստացաւ՝ որ չէր կրնար հան-
դուրժել աչքին առջևը տեսնելու մէկը որ մա-
հացու մեղքի մէջ ըլլար. որով իրեն ծառայող-
ները ստիպուած էին ամէն մեղքէ հեռու կե-
նալու։ Իր խոստովանահայրն Կիստերսեանց
կարգէն Հակէնի աբբայն էր։ Օր մը երբ այս
պատուական քահանայն անոր անկողնոյն քովը
կեցեր էր, տեսաւ զինքը որ մնքով բոլորովին
երկինքը վերացեր էր. երբ ինքնիրենը եկաւ,
քահանայն հարցուց իրեն թէ ինչ տեսեր էր
տեսիլքին մէջ. «Յաւիտենական դատաւորին ա-
տեանը եղած էի, պատասխանեց Գոնրատ, ուր
խստիւ կը քննուէր ապագայ վիճակս. վերջա-
պէս արդարութիւնը սահմանեց որ հինգ տա-
րուան քաւարանի դատապարտուիմ։ բայց իմ
սիրելի Եղիսաբեթս դատաւորին մեծութեամբ՝
այն պատուհասէն զիս ազատեց։ Ուստի գիտ-
ցիր որ այս հիւանդութեամբս մեռնելով յաւէ

տեղական փառքը պիտի ժառանգեմ»։ Եւ յիւրաւի մեռաւ, յետ պատուիրելու որ իր մարմինը փոխադրեն ի Մարպուրկ սրբուհւոյն մարմնոյն քով, այն եկեղեցւոյն մէջ զոր սկսեր էր շինել ի պատիւ նորա։ Դեռ կը տեսնուի իր գերեզմանը, որուն վրայ նկարագրուած է իր դէմքը որ խաղաղութեամբ արդարոց քունը կը ննջէ, ու ձեռքը այն խարազանը զոր Ցրիցլարի աւերակաց վրայ ժողովրդեան տուաւ փափաքելով որ զինքը ծեծեն։

Թէպէտև Գոնրատ կատարեալ կերպով քաւեց աստուծոյ և սրբուհւոյն Եղիսաբեթի դէմ ըրած իր յանցանքը, բայց այնպէս չըրաւ նաև Հէնրիկ Բասպոնը, որ Եղիսաբեթի ամուսնոյն միւս եղբայրն էր, որուն պատմութիւնը ցաւալից կերպով խառնուած է դքսուհւոյն տղոց վրայ։ Հետ, ինչպէս որ պիտի տեսնենք։ Այս տղաքը իրենց ամէն գործերուն մէջ միշտ ինքզինքնին երախտագէտ կը ցուցընէին առ աստուած, որ արժանի սեպեր էր զիրենք սրբուհիէ մը ծնանելու։ և իրենք ալ նմանապէս կը պարծէին մարդկանց առջև այնպիսի փառաւոր և միանգամայն ազնուական ցեղէ ըլլալնուն համար։ Բոլոր հրովարտակաց և ուրիշ պաշտօնական վկայագրոց մէջ, ամէն անգամ իրենց ազնուական ու իշխանական տիտղոսէն առաջ կը ստորագրեին որդի կամ դուստր սրբուհւոյն Եղիսաբեթի։ Անոնցմէ երկուքն, իր երկու յետին օրիորդքն Սոֆիան և Կերտրուտան, խաղաղութեամբ կատարեցին իրենց կեանքը այն տեղւոյն մէջ՝ զոր ընտրած էին իրենք զիրենք կուսութեամբ աստուծոյ նուիրելու համար,

մէկն ի Գիդեմնկեն և միսը Յովհաննէսի, Վեցլար քաղաքին մօտ։ Երկուքն ալ աբբասուհի էին իրենց վանքին։ Կերդրուտս 1249ին ընտրուեցաւ, և գրեթէ 49 տարի իւր մենաստանը կառավարեց. իր աստուածպաշտութեամբն ու առատաձեռնութեամբն առ աղքատս՝ մօրը արժանաւոր հետեւողն եղաւ։ Ինչուան հրաշքներ ալ իրեն կ'ընծայէին, և միշտ Երանուհի անուանը կու տային. 70 տարուան վախճանեցաւ 1297, օգոստոսի 15։ Պաւիերայի Լուդովիկոս կայսեր աղաչանօքը Կղեմէս Զ. քահանայապետը ներողութիւն շնորհեց անոնց ամենուն որ հանդիսաւոր կատարեն անոր տօնախմբութեան օրը։ Դեռ կը տեսնուի անոր շիրիմը Յովհաննէսի, ինչպէս նաեւ իր սուրբ մօրը մէկ քանի պատուական յիշատակները, զորոնք Ժողովուրդը էր բարեպաշտ խնամքով։

Եղիսաբեթի մէկալ Հերման որդին և Սոֆիա երիցագոյն դուստրը բոլորովին տարբեր վիճակ մը ունեցան, և իրենց մօրը պէս մարդկանց անօրինութեանը զոհ եղան։

Հերման իշխանին տասնուվեց տարուան ըլլալուն պէս, մէկէն իւր հանգուցեալ հօրը տերութեանը բոլոր կալուածները ձեռքն առաւ, որոնք մինչև այն ատեն իր հօրեղբօրը Հենրիկ դքսին ձեռքով կը կառավարուէին (1239)։ Բիւրեղը Գաղղեոյ սուրբ Լուդովիկոս Թ թագաւորին այցելութեան գնաց, որ սրբուհոյն Եղիսաբեթի որդի ըլլալուն պատճառաւ՝ շատ պատիւ գտաւ թէ՛ բոլոր ժողովրդէն և թէ Գասդիլիոյ Պլանշ թագուհիէն, որ չափէն աւելի սեր ցոյց վրան։ Վերջը Պրանդուիքի Ոթոն

դքսին Հեղինէ աղջկանը հետ կարգուեցաւ։ Ամենայն ինչ երիտասարդ իշխանին պայծառ ապագայ մը կը խոստանար, բայց ափսոս որ վերը ցաւ վայելել, մեռնելով տասն և ութ ծաղիկ հասակին մէջ, ի Գրէօզպուրկ ուր ծնած էր (1241)։ Ամբողջ հասարակութիւնը պատճառը կարծուեցաւ որ Սեպոս քաղաքին Պերթ անունով կին մը իշխանին անարժան հօրեղբօրը Հենրիկոսի հրապուրանքը թունաւորած ըլլայ զինքը։ Դեռ յետին շունչը չտուած դժբաղդ երիտասարդը փափաքեցաւ որ զինքը ի Մարպուրկ իր երանելի մօրը քով թաղեն. բայց Հենրիկ որ շուտով մը յափշտակեց տիրապետութիւնը, չուզեց և ոչ այդ մխիթարութիւնն իրեն թողուլ և վախնալով որ չըլլայ թէ սուրբ մայրը զինքը յարուցանէ, ինչպէս որ յարուցեր էր այնչափ մեռեալներ, անոր նշխարքը Բենհարպրիւն դքսերուն գերեզմանատունն փոխադրել տուաւ, ուր դեռ կը տեսնուի գերեզմանին քարը հօրը շիրմին քով։

Ալ անկէց ետքը Հենրիկ Բասպոն՝ Դուրինկիոյ տանը ընդարձակ կալուածոցը միակ տէր և օրինաւոր ժառանգ ըլլալով, շուտով առաջնորդ եղաւ այն կուսակցութեանը որ օր օրուան վրայ կը զօրանար ի Գերմանիա Փրեդերիկոս Բ կայսեր օգնականութեամբը՝ որ էր ազնուականաց և եկեղեցւոյ իրաւանց դէմ։ Լիոնի ժողովքին մէջ Ինոսէնտիոս Դ քահանայապետը թագաւորական իշխանութենէ զրկելով զՓրեդերիկոս, անոր յաջորդելու իրաւունքը բնական կերպով Դուրինկիոյ դքսին կ'ինար։ Եւ թէպէտ կրնայ կարծուիլ թէ արքունի թագը ի-

բեն փառասիրութեանը նպատակ եղած ըլլայ, սակայն ինքը բողոքեց իր անկարողութիւնը մէջ բերելով, բայց քահանայապետը յորդորեց որ յօգուտ քրիստոնէութեան յանձն առնու, որով 1246ին Ֆրանքֆորտի ժողովին մէջ, Հռովմայեցոց թագաւոր ընտրուեցաւ և հետևեալ տարին ալ օծուեցաւ։ Յաջողութեամբ պատերազմեցաւ Փրեդերիկոսի ու անոր Գոնրատ որդւոյն դէմ. բայց երկար ատեն չկրցաւ վայելել իր նոր իշխանութիւնը. վասն զի մեռաւ 1248ին. և թէպէտ երեք անգամ ամուսնացաւ, բայց զաւակ մ՚ալ չթողուց։ Հաւատացեալք իր ցեղին լմննալը իրաւացի պատիժ մը սեպեցին անոնց Եղիսաբեթի դէմ ցուցած անիրաւութեանցը։ Դեռ չմեռած խնդրեր էր որ իւր սիրաց Ա.յզէնաս քաղքին Դամիանիկեանց վանքը թաղեն, զոր ինքը հիմներ էր ի քաւութիւն Եղիսաբեթի դէմ ըրած յանցանացը։

Իր մահուընէն ետքը Դուբինկիոյ մէջ երկար և դժնդակ պատերազմներ եղան յաջորդութեան համար։ Հենրիկի հետ Դուբինկիոյ իշխանաց արու ցեղը լմննալով, իր ընդարձակ գաւառները իգական ցեղին մնացին. որով Սոփիա որ սրբուհւոյն Եղիսաբեթի ու Լուդովիկոս դքսին անդրանիկ աղջիկն էր, Մեծասիրտ կոչուած Հենրիկոս Բ. Պրաբանդի դքսին հետ ամուսնացաւ ու իր հօրը ժառանգութիւնը ձեռք ձգեց թէ՛ յանուն իւր և թէ յանուն իւր որդւոյն Հենրիկի որ դեռ իրեք տարուան էր. առանց դժուարութեան ընդունելի եղաւ Հեսս գաւառին մէջ, զոր խնամոտութեամբ կառավարեց իւր որդւոյն պզտիկութեանը ատեն։ Բայց նոյն ըն-

դունելութիւնը չգտաւ նաև ի Դուբինկիա, ուր Մինիոյ իշխանը՝ Հենրիկոս Երևելի կոչուածը, իրեն առիթ առնելով Դուբինկիոյ մէջ եղած երկպառակութիւնները, շուտով մը տիրեց Դուբինկիոյ մեծ մասին, և մանաւանդ կերպով Վարդպուրկի բերդին։ Սոփիայի օգնութեան եկաւ Պրունզուիքի Ալբերտ քաջ իշխանը որուն դուստրը նշանուեցաւ Պրանդենբուրգի երիտասարդ Հենրիկ դքսին հետ։ Սակայն իրեն քաջութիւններն ալ բաւական չեղան յաղթութիւն մը ձեռք բերելու. որով Հենրիկոս իշխանն տէր մնաց իրեն յափշտակած գաւառներուն։ Մենք այս դժուդակ կռուին մանրամասն պարագաներն պիտի չյիշատակենք, այլ բաւական պիտի սեպենք միայն քանի մը դէպքեր պատմելու, որ լաւ կերպով կը ցուցընեն թէ ինչպէս ժողովուրդը մեծարելով իրենց սիրելի սրբուհւոյն յիշատակը, կը պատուէր նաև անոր որդւոյը իրաւունքը բանաստեղծութեան և աւանդութեան ամէն նշաններով։

Ուստի կ'աւանդուի թէ երբ առաջին անգամ մէկմէկու հետ տեսնուեցան Սոփիա և իշխանը, այս ետքինս ինքզինքը պատրաստ ցրցուց հնազանդելու իր հօրեղբօր դատերը. բայց երբ սկսաւ խօսիլ իւր մարաքախտը՝ զինքը մէկդի առաւ և ըսաւ. «Տէր իմ, ինչ կ'ընես. եթէ կարելի ըլլար որ մէկ ոտքդ յերկինս և միսը Վարդպուրկի վրայ դրած ըլլայիր, պէտք էր որ երկնքին վրայի ունեցած ոտքդ քաշէիր Վարդպուրկը աւելի հաստատուն կերպով բռնելու համար»։ Հենրիկոս համոզուեցաւ և գնաց դքսուհւոյն խնայընելու այս բանս։ «Սիրելի հօր-

եղբօր դուստր, ըսաւ, պէտք է որ մնածեմ այս բանտերուս վրայ, և խորհուրդ առնում իմ իշխանակիցներէս»։ Ա. յն ատենը Սոփիա արտասուօք հանեց իր աջ ձեռքին ձեռնոցը, և դէպի երկինք նետելով ըսաւ. «Ո՛վ դուդ այս, թէ՝նա մի ամենայն արդարութեան, քեզի կը նետեմ իմ ձեռնոցս. տար զայն ամենայն նենգաւոր խորհրդականներուն հետ մէկտեղ»։ Ձեռնոցը շուտով օդին մէջ անհետացաւ եղաւ, և ժամանակ անցնելէն ետքը խորհրդականն ալ մեռաւ դժոխքի և գէշ մահուամբ։

Բիչ ետքը 1254ին, երբ երկրորդ անգամ տեսնուեցան, Սոփիա յուսահատած համոզելու փաստիւք իր նախանձորդը, և կամ զօրութեամբ զինքը նուաճելու, կարծեց թէ պիտի կարենայ յաջողցնել իր խորհուրդները եթէ սուրբ կրօնքն իրեն օգնական առնելու ըլլայ. ուստի իրեն հետ բերաւ նաև իւր սուրբ մօրը կողին ոսկրը և պահանջեց որ երդուընայ այն նուիրեալ նշխարքին վրայ զոր այնչափ ժամանակ մեծարած էր Դուբինկիա։ Հենրիկոս առանց շփոթութեան երդուընցաւ. և իւր երդմնեալքը հաստատեցաւ քան ասպետաց հաւատութիւնը։

Ա. յլէնոսի քաղաքին բնակիչքը չափէն աւելի քաջութիւն ցրցուցին Սոփիա դբսուհւոյն հանար, կարծես թէ անանկով կ'ուզէին քաւել իրենց սրբուհի Եղիսաբեթին դէմ ըրած հին ապերախտութիւնը։ Պաշարեցին նաև Զարդպուրկ, ուր իշխանին զօրաց գունդերն կը կենային. երկու հողաբլուր կառուցին աւելի լաւ կերպով պաշարելու համար բերդը։ Բայց Հենրիկոս գիշեր ատեն քաղաքին վրայ հասաւ, և

մասնութեամբ առաւ զայն. սպաննել տուաւ գլխաւոր քաղաքացիներէն շատերը, որոնք Եղիսաբեթի դստերն և թոռանը կողմն էին։ Եւ զուրիշներն ալ վախցնելու համար, իր ոսերիներէն էն կատաղին, Վերտիեխ անուամբ, անգթութեամբ պատերազմի մեքենայի մը կապելով՝ Վարդապետին վար յԱյզենախ նետել տուաւ։ Քաջասիրտ քաղաքացին մինչդեռ օդը կը պատռէր, կ՚աղաղակէր. «Դուրինկիան Պրապանդի որդւոյն չէ»։ Աւանդութիւնը կը յաւելու թէ երբեք անգամ կրեց այս տանջանքս, միշտ նոյն խօսքերը կրկնելով. «Դուրինկիան Պրապանդի որդւոյն չվերաբերիր», և մեռաւ երրորդ անգամ խնալուն։

Սոփիա շուտով Հեսսէն Ա.յզենախ եկաւ, և շնտակ Սրբոյն-Գէորգայ գուռը գնաց, զոր փակ գտաւ. բնակիչներն ստիպեց որ բանան, երբոր տեսաւ որ պատասխան չէն տար՝ տապար մը առաւ ձեռքը և ամենայն ուժով զարկաւ կաղնեայ փայտէ դրան և ծակեց, որ երկու դար անցնելէն ետքը դեռ կը տեսնուէր։

Վերջապէս 1263ին Պրունզուիքի Ա.լպերտ դուքսը բոլորովին յաղթուելով՝ գերի ընկաւ իշխանին որդւոյ ձեռքը. որով հարկ եղաւ հաստատուն դաշնադրութիւն մ՚ընել։ Սոփիա ստիպուեցաւ հրաժարելու Դուրինկիոյ վրայ ունեցած ամենայն պահանջմունքներէն, որով յաստուկ մնաց Մինիոյ գերդաստանին, և ի փոխարէն Հեսսի տիրապետութիւն ինկաւ Հենրիկոսի և անոր յաջորդացը։ Այս երկու գաւառաց բաժանումը մինչև մեր օրերը կար, և հիմակուան Հեսսի և Սաքսոնիոյ տոհմերն այս

երկու հակառակորդ իշխաններէն կ'իջնան, ո-
րոնց իրաւունքը այս պայմաններուս որոշուե-
ցաւ։ Սոփիա 1284ին 60 տարուան վախճանե-
ցաւ, բոլոր իւր կեանքը նուիրելով իր երկրին և
ընտանեացը յաջողութեանը։ Կը հանգչի ի
Մարպուրկ իւր որդւոյն գերեզմանին և իր սուրբ
մօրը նուիրեալ եկեղեցւոյն մէջ։ Կը տեսնուի
նաև անոր արձանը պառկած և աղօթքի կե-
ցած՝ ուղղափառ ժամանակաց սովորութեանը
համեմատ. ունենալով քովը այն մանկահատակ
որդին, որուն վրայ հսկած էր այնչափ քաջու-
թեամբ և մայրական խնամքը։ Գէմքը բոլորո-
վին մնացած է ուխտաւորաց համբոյրներովը, ո-
րոնք իրեն մօրը վրայ ունեցած սիրոյ մէկ նշանը
իրեն ալ կը ցուցընէին։

Հենրիկոս Ա., Մանուկ կոչուածը, Սոփիային
որդին, սրբուհի Եղիսաբեթին թոռը և առա-
ջին տիրապետն Հեսի, իբրև անկախ և առանձ-
նական երկիր մը, տիրեց մինչև 1308 մեծ փա-
ռօք և ժողովրդեան սիրովը. զոր մնմնաւոր կեր-
պով կը պաշտպանէր ընդդէմ յարձակմանց և
յափշտակութեանց։ Մեռած ատենը 65 տա-
րուան էր, թէպէտ և պզտի տղու կերպարան-
քով քանդակուեր է այն շիրմին վրայ, որ միան-
գամայն իրեն մօրն ալ կը ծառայէր։ Այսիկայ
Հեսի տոհմին այլ և այլ Ձիւղերուն ընձիւղն ե-
ղաւ, որուն հետ նշանաւոր տիրող իշխանաց շա-
տերը միացան, որպէս զի զԵղիսաբեթն իրենց
նախամայրը ունենալու պատուոյն արժանի ըլ-
լան։

Եղիսաբեթի որդւոյը և թոռանցը վրայ ման-
րամասն խօսելիքս ետքը, հարկ կը սեպենք քա-

նի մը խօսք ալ ըսել այն սուրբ անձանց վրայ, զոր կը գտնենք այն գերդաստանին մէջ ուսկից ինքը սերեալ էր, և որոց վրայ իր օրինակը հետեւաբար ամենեն աւելի զօրաւոր ազդեցութիւնն ըրած էր։ Մայրական ցեղին մէջ, իր մօրաքոյրը սրբուհին Հեռվիկ Լեհաստանի և Ելեզվոյ դքսուհին՝ իրմէն աւելի ապրեցաւ. և ինչպէս որ այս բարեպաշտ իշխանուհւոյն առաքինութեան համբաւը մեծ ազդեցութիւն ըրեր էր Եղիսաբեթի վրայ դեռ օրօրոցին մէջ եղած ատենը, հաւանական է կարծելը թէ Հեռվիկ դքսուհին շատ աւելցուցեր էր իր եռանդն ու խստակրօնութիւնը քանի որ կը լսեր իր երիտասարդ քեռորդւոյն առաքինութիւնները և անոր երջանիկ կերպով անմահանալը թէ յերկինս և թէ յերկրի։ Կ'երևի թէ Հեռվիկ փութացեր էր ձգելու ինքզինքը անոր փրկարար հետացը վրայ, որ (Եղիսաբեթ) արդէն իրմէ առաջ թէպէտև աւելի երիտասարդ, հասեր էր այն նաւահանգիստը, ուր երկուքն ալ միատեղ փառաւորապէս պիտի մնային։ Եղիսաբեթի մահուընէն ետքը սրբուհւոյն գործածած մէկ քողը իրեն ղրկեցին. զոր այնչափ մեծարեց որ ինչուան իր մահուան օրը ուզեց գործածել. և յիրաւի ոչ ոք իրմէ աւելի արժանաւոր էր այն խորհրդական զարդը կրելու։ Տասուերկու տարուան Հենրիկոս դքսին հետ ամուսնանալով, վեց տղայ ունենալէն վերջը, դեռ երիտասարդ՝ երկուքը մէկտեղ ուխտ ըրին որ անկէ ետքը եղբօր ու քրոջ պէս իրարու հետ ապրին։ Կիսատերսեան կուսանաց համար մեծ մենաստան մը շինեց այն տեղը ուր ինքն ընկած էր, մէկ խո-

բունկ Ճահիճի մը մէջ, ուսկից աստուծոյ հրեշ-
տակը զինքն ապատեր էր ծառի Ճիւղ մը իրեն
երկնցընելով։ Ա.յս մենաստանին աբբաստուհի
ընտրել տուաւ իր կերդբուստա աղջիկը. ամուս-
նոյն հաւանութեամբը ինքն ալ հոն քաշուե-
ցաւ ու կուսանի զգեստ հագաւ, առանց ուզելու
հնազանդութիւն ու աղքատութիւն ուխտելու,
որպէս զի չըլլայ թէ արգիլուի ողորմութիւն
ընելէն։ Բոլոր կեանքը իւր սուրբ քեռորդւոյն
խոնարհութեամբն ու կարգէ դուրս Ճգնու-
թիւններովն անցուց։ Իրեն փափուկ ու տկար
մարմնոյն վրայ դրած ապաշխարանքները կար-
դալու առենիս չենք գիտեր աւելի որ բանին
վրայ զարմանալ. արդեօք իր կամացը անսկուն
զօրութեանը եթէ այն հրաշալի օգնութեանը
զոր աստուած կը պարգևէր առ ինքն մնռենա-
լու փափաք ունեցող տկար բնութեանը։ Յօժա-
րութեամբ ամէն բանի մէջ յետին տեղը կը
փնտրուէր. բոլորովին ընկղմած այն հոգւով ո-
րով աւետարանին մէջի Քանանուհին փրկուե-
ցաւ, որ Յիսուսէն կը խնդրէր այն հացի փշը-
բանքները որ աստուծոյ որդւոցը սեղանէն կ'ի-
նային, ինքը շատ անգամ ուրիշ կերակուր չէր
ուտեր բայց եթէ այն փշրանքները որ կրնա-
ւորաց ու կուսանաց սեղաններէն կ'ինային, ո-
րոնց ինքը կը ծառայէր։ Բայց ամէն բանէ աւե-
լի արժանաւոր նախանձորդ եղաւ Եղիսաբեթի
իր ողորմածութեամբն և կարգէ դուրս գթու-
թեամբը։ Իր վարքը գրողներէն մէկը կ'ըսէ թէ
«Ա.յնչափ գորովագութ էր որ անկարելի էր
առանց արցունքի ուրիշի արտասուելը տեսնել,
կամ այլոց նեղութիւններն ու վիշտը, և ինքը

հանգիստ կենար։... Իր սեղանը լեցուն էր աղ-
քատներով, որոնց ծնկան վրայ եկած կը ծա-
ռայեր։... Շատ անգամ երբ ուրիշները չէին
նայեր, կը համբուրեր գետինը՝ ասկից աղ-
քատներն անցեր էին, մեծարելով անոնցմով
զՔրիստոս որ թագաւոր էր փառաց, բայց ու-
զեց մեզի համար աղքատանալ։ Այնչափ եռան-
դեամբ կը սիրեր աղքատութիւնը ու աղքատ-
ները, որ կրօնաւորաց անոնց ողորմութիւն տը-
ւած հացի կտորուանքը կը գներ անոնցմէ ու
համբուրելով կ'ուտեր իբրև հրեշտակաց հաց։
Ուրիշ աղքատներէն զատ, տասուիրեք աղքատ
ալ կը պահէր ի պատիւ Քրիստոսի ու անոր ա-
ռաքելոցը, զորոնք միշտ իրեն հետ կը պտրցը-
ներ, և ուր երթալու ըլլար անոնց աղէկ բնա-
կութեան տեղ կու տար, և կ'ուզէր որ իր առ-
ջևը կերակուր ուտեն, ու ինքն անոնց կը ծա-
ռայեր։ Երբ ինքը կերակուր կ'ուտէր, սեղանին
վրայ գտնուած ամենագոյն կերակուրը անոնց
կը զրկէր. և այնչափ գթած էր՝ որ իրեն եկած
ամեն ընծայէն աղքատաց մաս կը հանէր, թէ-
պէտ և տանձ մը ըլլար. վասն զի համ չէր առ-
նուր եթէ իրմէ առաջ աղքատները անոր հա-
մը չառնուին »։

Չէր ուզեր ամենևին որ իր հպատակները
տուրքի համար նեղութիւն քաշեն. դատաս-
տանիներուն մէջ ալ երբ կը տեսնէր թէ դատաւ-
որը խստութեամբ կը վարուին աղքատաց հետ,
անոնց վճիռը փոխել կու տար իր քահանային
ձեռքովը զոր միշտ իրեն հետ կը պտրցրնէր,
Իր ամուսինն՝ որ իրեն վրայ թէ՛ մեծարանք և
թէ սէր ուներ, սրտաշարժ հնարք մը մտածեց

իրեն ցուցընելու այն համակրութիւնը զոր կը զգար անոր ժողովրդեան վրայ ցուցած գթութիւնին։ Ուստի ապրստպրեց որ երբ Հեռվին դրքսուհին անցնելու ըլլար հասարակաց բանտերուն առջևէն, դռները բացուին և բանտարկեալք ազատուին առ սեր իշխանուհւոյն։

Իր աստուածապաշտութեան եռանդը անչափ էր. բոլոր իրեն քովը եղած քահանայից մատուցած պատարագը կը տեսներ ամեն օր, իսկ բաքանչիւր պատարագին առատ արցունք թափելով։ Սուրբ Աստուածածնայ կարգէ դուրս ջերմեռանդութիւն ուներ. ոչ երբեք քովէն կը հեռացըներ անոր փոքրիկ պատկերն, որուն հետ յաճախ կը խօսակցէր իր պարզմտութեամբ. երբոր հիւանդաց այցելութեան կ'երթար՝ միշտ այն պատկերը ձեռքը բռնած էր, և զայն կը գործածէր զանոնք օրհնելու համար, և այս կերպով շատ անգամ ախտ ունեցողները կը բժշկուէին։ Իր ամուսինը վերաւորուելով և գերի խնալով իրեն նախանձողդ Գոնբատ դրքսին ձեռքը, մինակ և հետի գնաց գտնելու այն կատաղին և իր յաղթութեամբը հպարտացած թշնամին. և երբ անոր առջևն ելաւ, դուքսը կարծելով որ տեսածը հրեշտակ մ'է, առանց դէմ դնելու խաղաղութի խոստացաւ և ամուսնայն ազատութիւն տուաւ։ Քիչ ետքը կրսքսին ցուց այն սիրական փեսայն, և յետոյ իր Հենրիկոս որդին ալ, որուն վրայ սաստիկ սէր ունէր, և որ Թաթարաց դէմ պատերազմելու ժամանակ սպանուեր էր։ Անձամբ կը յորդորէր զոր դին որ սուրբ ձեռքը քրիստոնէութեան հաւատ մեռնի։ Համբերութեամբ և առանց խռո-

վերը կրեց այս երկու կորուստը այն ուժովը, որ գերագոյն սերը կը շնորհէ։ Բայց այս բաժանմանէս քիչ ետքը՝ իր մահն ալ վրայ հասաւ։ 1243ին սուրբ Կուսին ծննդեան տօնատխրմութեան օրը, այն կուսանին որ իրեն կը ծառայէր, գեղեցիկ օրիորդաց խումբ մը տեսաւ, որոնք գերբնական պայծառութեամբ կը փայլէին. այցելութեան եկան Հեսվիկ դքսուհոյն, որոնց հետ այսպէս խօսեցաւ մեծ ուրախութեամբ. « Ողջոյն ձեզ, սիրելի սրբուհիք և ընտրելագոյն բարեկամք, Մագդալենացի, Կատարինէ, Թեկլ և Որսոլա, և դուք ամենքնիդ որ զիս տեսնելու եկեր էք »։ Յետոյ սկսան լատիներէն խօսիլ, որով կուսանը ալ չհասկըցաւ խօսածնին։ Հոկտեմբերը ամնոյն 15ին զաստուած օրհնելով վերջին շունչը աւանդեց։ Բազմաթիւ հրաշքներ հաստատեցին Հեսվիկ դքսուհոյն սրբութիւնը, որով 1267ին սրբոց կարգը անցաւ Կղեմէս Դ. քահանայապետին ձեռքովը։ Յաջորդ տարին Հանդիսով կատարեցին անոր մարմնոյն փոխադրութիւնը. և երբոր հողէն Հանեցին՝ ձեռացը մէջ սրբոյ Կուսին պատկերը գտան, զոր այնչափ կը սիրեր իր կենդանութեան ատենը։

Մինչդեռ սրբուհին Հեսվիկ՝ Եղիսաբեթի մայրական ցեղը այնչափ կը փառաւորեր, սրբուհոյն Եղիսաբեթի ազգեցութիւնը եթէ ոչ պատուականագոյն, սակայն աւելի բազմաթիւ պտուղներ առաջ կը բերեր իր հայրական տոհմին մէջ։ Հունգարիոյ հռչակաւոր գերդաստանը, որ Եւրոպիոյ թագաւորական ամէն ցեղերէն աւելի ինքը միայն երեք սուրբ թագաւորներ ու-

ներ, սուրբ Ստեփաննոս, սուրբ Լիմերիկոս և սուրբ Լատիսլաւ, ջրերոցդ մէն ալ երևցուց զՊեՀլոյ Դ, սրբուհի Եղիսաբեթին եղեսայրը և յաջորդ իր Անդրեաս հօրը։ Արժանաւոր երևցաւ սա եղբայր ըլլալու այսպիսի համբաւաւոր իշխանուհւոյ մը և հայր ուրիշ երկու սրբուհեաց այն աստուածպաշտութեամբը, քաջութեամբը, հեզութեամբը և համբերութեամբ՝ զոր ցոցուց գրեթէ երեսուն և հինգ տարի իր թագաւորութեանը ժամանակ. և քաջութեամբ յաղթական երևցաւ ընդդէմ Թաթարաց տըւած պատերազմացը մէջ։ 1244ին, արքունական հրովարտակով հաստատեց և որոշեց եկեղեցւոյ մը հիմնադրութիւնը ի պատիւ իւր քրոջը. երկու հաւատարիմ անձանց յանձնեց անոր շինութիւնը, Դաւթի և Գորգոշի, որ իրեն հետ Դուրինկիա գնացեր էին։ Յետոյ անոր օրինակին հետևելով իրեն պէս սրբոյն Փրանկիսկոսի Երրորդականաց կարգին եղբայր գրուեցաւ, և թաղուեցաւ Փրանկիսկեան կրօնաւորաց եկեղեցւոյն մէջ, զոր կառուցեր էին Կրան քաղքին մէջ սրբուհի Եղիսաբեթի պաշտպանութեամբը, թէպէտև ամենքը դէմ կեցան և աղաչեցին որ չթողու թագաւորաց հին գերեզմանատունը։

Սրբուհւոյն Եղիսաբեթի երկրորդ եղբայրը Գոլման, կարծես թէ առաւել ևս զմայլած էր այն ազնիւ և սակաւագիւտ անուշահոտութեամբն որ կը ծաւալէր իր սուրբ քրոջ կենացը ծաղկէն։ Սաղմէ անունով Լեհացի իշխանուհւոյ մը հետ ամուսնացաւ, որ հռչակաւոր էր իր կարգէ դուրս գեղեցկութեամբն, որ Գրա-

գովիոյ իշխանին դուստրն էր, որուն հետ նշանուած էր երեք տարուան հասակէն և միատեղ կրթուած։ Իր հարսանեաց առջի օրէն իշխանուհուն հետ մնանկենաւոր կուսութեան ուխտ բրաւ, և հաւատարմութեամբ պահեց։ Երբ Կալիցիայի երկրին թագաւոր ընտրուեցաւ, շատ լաւ պաշտպանեց ընդդէմ Թաթարաց Լեհաստանին այն մասը, և մեռաւ փառաւոր մեծաւ, պատերազմելով անոնց դէմ ստուգոյ և հայրենեաց սիրոյն համար։ Իւր թշուառ տիկինը երկու վանք շինեց. մէկը Փրանկիսկեան կրօնաւորաց, և միսը Գլարեան կուսանաց։ Ինքն ալ հաւատաւոր եղաւ և մնաւ յօժարութեամբ իր շինած վանքը, յորում կեցաւ մինչև իր կենաց վախճանը դիւցազնական առաքինութեանց հրահանգացը մէջ, և միշտ մեծարուած աստուածային գթութեան առանձին շնորհքովը։ Իր մահուան օրը (1268), օդին մէջ անուշ ներդաշնակութիւն և գեղեցիկ ձայներ լսուեցան, որոնք այս խօսքերը կ'երգէին. Ծաղկեցաւ Անապոնի գաւազանը։ Հաւատաւոր մը դիտելով անոր երեսին վրայ մեծ ցնծութիւն մը, որ կը ժպտէր ուրախութեամբ՝ ըսաւ իրեն. «Ի՞նչ զարմանալի և հաճոյական բան կը տեսնես, տիկին, որ կրնայ զքեզ այսքան ուրախացնել այս ցաւերուս մէջ»։ «Ո՛հ, այո, պատասխանեց ընտանուհին, կը տեսնեմ զսրբը Կոյսը, աստուծոյս մայրը որ զիս ջափէ դուրս կը զուարճացընէ»։ Վերջին շունչն աւանդելու ատենը, տեսան որ փոքրիկ աստեղ նման բան մը բերնէն ելնելով առ աստուած կը թռչէր. և էր իր սուրբ հոգին։

Բայց Պէրզ Դ. իշխանին օրհորդքը, Եղեսաբեթ դքսուհւոյն եղբօրը դստերքն, բաւական չսեպելով իրենց հօրմէն աւելի մտահոգելին սիրով անոր՝ որ իրենց գերդաստանին պատիւն էր, ու զեցին նաև նախանձորդ ըլլալ անոր խստակրօնութեանն և կենաց սրբութեանը։ Անոնցմէ մէկը, զոր եկեղեցին կը մեծարէ կոչելով Երանելի Մարգարիտա Հունգարացի, կը ջանար անդադար, ինչպէս որ կ'աւանդէ մեզի իր պատմագիրը, հետևելու այն օրինակին զոր թողուցեր էր իր փառաւորեալ հօրաքրոջը, և այս միայն բոլոր իր կեանքը կը սրբացնէր։ Դեռ չծնած իբրև քառասնեան նուէր մը աստուծոյ նուիրուած էր իր Մարիամ մօրմէն, որ Կոստանդնուպօլսոյ կայսեր դուստրն էր, որպէս զի փոխարէն ընդունի յերկնից քիչ մը միսիթարութեան այն սաստիկ վշտացը, զոր Թաթարները կը պատճառէին Հունգարիոյ։ Իր ծնունդը նշանաւոր եղաւ անհաւատից դէմ պայծառ յաղթանակաւ մը, և կարծես թէ աստուած ուզեց յայտնապէս ցուցնել թէ ընդունելի եղաւ այն իրենց ըրած զոհը։ Իր բարեպաշտ ծնողքը, հաւատարիմ իրենց խոստմանը, երեք ու կէս տարուան հասակին զանիկայ Դոմինիկեանց վանքը դրին։ Կարգէ դուրս խնամոտութեամբ և կանխահաս սաստիկ եռանդեամբ տասուերկու տարուան հասակին հաւատաւոր եղաւ, թէպէտև իր հրեշտակային գեղեցկութեամբը և աղնուատոհմ ծնողքին բազմութիւն զօրաւոր իշխանը զանիկայ խնդրեցին յամուսնութիւն։ Բոմանդակ կեանքն հոն անցուց, որ ընդ ամենը քսան և չորս տարի եղաւ։ Այս հանառօտ ժա-

մանակը դքսուհին խստակրօնութեան, ողորմութեան և աստուածպաշտութեան եռանդուն գործերով անցուց. վերջապէս այն ամէն բանովը որ կրնար մաքուր սրտի մը մէջի աստուծոյ սէրը ուրիշներուն յայտնել։ Սուրբ Կոյսը և խաչելութիւնն էին իւր մէկ ճանապարհն որոնցմով կը բարձրանար ու կը հասնէր անոր՝ որ նը-պատակն էր իրեն այս ամէն գործոցը։ Զէր կրնար սուրբ Կուսին ուրիշ անուն տալ, քայց եթէ կոչելով զինքը Մայր Աստուծոյ և իմ յոյսս։ Զորս տարուան հասակին առջի անգամուն խաչ մը տեսաւ, և հաւատաւորաց հարցուց զարմանմամբ. «Ի՞նչ է այս փայտը»։ «Ա. յսպիսի փայտի մը վրայ, պատասխանեցին իրեն հաւատաւորք, Որդին Աստուծոյ իւր արիւնը թափեց աշխարհիս փրկութեանը համար»։ Ա. յս խօսքերն որ լսեց, դէպ ի խաչը մօտեցաւ և եռանդեամբ համբուրեց։ Ա. յն ատենէն ետքը, երբ խաչ մը կը տեսնէր, ծնկան վրայ կու գար երկրպագութիւն ընելու. և քունը չտարած՝ խաչելութիւն մը կը դնէր արտեւանունցը վրայ, որպէս զի աչքը բանալուն պէս անկէ զատ ուրիշ բան չտեսնէ։ Աստուած պարգևեց իրեն միանգամայն հնարքաց և մարգարէութեան պարգևները, և իշխելու իր հայրենակցաց սրտերուն, առանց ամենեւին վանքէն ելնելու։ Ա. յնչափ շնորհք, հաճոյք և ուրախութիւն կը ցուցնէր այն հիւանդաց և աղքատաց վրայ որոնք իրեն այցելութեան կու գային, որ մինչուընէն շատ ետքը, անվայել կամ անհաճոյ բան մը յայտնելու համար, Հունգարացիք կ'ըսէին առակով. «Ցայսմի կը տեսնուի թէ Մարգարիտա կուսին

ուզածին պէս չէ »։ Քան և ուզ տարուան էր, երբ աստուած յափշտակեց զնա իր գերդաստանէն, հայրենիքէն և կրօնքէն որուն պարծանքն էր, դասելու համար յերկինս սրբուհի Եղիսաբեթին քով։

Իր Գունեկոնտա կամ Գինկա քոյրը, որ 1239ին ամուսնացած էր Լեհաստանի Ամեթխան կոչուած Պոլիսլազ դքսին հետ, յորդորեց իր ամուսինը որ իրեն հետ հանդիսական և մշտնջենաւոր կուսութիւն ուխտէ. ուխտեցին ու հաւատարմութեամբ քառասուն տարի պահեցին։ 1279ին այրի մնալով, ինչպէս նաև իր երրորդ քոյրը Եօլանտ, որ ամուսնացած էր իրեն պէս Լեհաստանի Պոլեսլազ դքսին հետ, երկուքն ալ որոշեցին հաւատաւոր ըլլալու։ Բոլոր ունեցածնին առ աղքատս բաշխելէն ետքը՝ վանք մտան, իրենց Սալոմէ հօրաքրոջ հետևող ըլլալու համար, որ Գլարեանց կուսաստանը մտած էր, որուն եռանդեամբ կը դիմէին ժամանակին այլ և այլ իշխանուհիները։ 1292ին Գունեկոնտա վախճանեցաւ մեծ խստակրօնութեան օրինակ ըլլալով, և երկուքն ընդունելով հրաշից պարգևը։ Լեհաստանի բնակիչքն կը մեծարէին զնոքը իբրև իրենց երկրին գլխաւոր սուրբը և պաշտպանը, և իր շիրիմը նպատակ եղած էր Սլաւեան ցեղին եռանդուն մեծարանացը, որով ալ մեն կողմէն ուխտաւորք հոն կը դիմէին։ Ամեն շաբթուան երկուշաբթի օրը՝ իրեն նուիրուած էր։ Ինչուան մեզի հասած են այն բարեպաշտ ուխտաւորաց աղօթքները, որոնք պաշտպան կը բռնէին զերանելի Գունեկոնտան, փառաւորեալ սուրբ Կուսին և սրբուհւոյն Գլարայի հետ։

Դեքսուհեղին մահուընէն երեք դար ետքը, այն եռանդը ամենեին իր նախկին ոյժը դեռ չէր կորուսած. Լեհաստանի Սիկիսմոնտ Թագաւորը 1628ին ստիպողական նամակ մը գրեց առ Ուբանոս Բ. քահանայապետը, խնդրելով որ հանդիսաւոր կերպով սրբոց կարգը անցընէ զանիկայ որ այնչափ ատենէ ի վեր իրենց պաշտպան սուրբն եղեր էր։ 1690ին Աղեքսանդր Բ. քահանայապետը հաստատեց անոր ընծայուած հասարակաց պաշտօնը։ Քիչ ետքը, Կղեմէս ԺԱ. քահանայապետը ճանչցաւ և ընդունեցաւ զնա իբրև պաշտպան Լեհաստանի և Լիթուանիոյ։ Մեր օրերն, իրեն յիշատակը մանաւոր կերպով կը մեծարուի բարեպաշտ և ռամիկ ժողովրդներէն, որ կը ընակին Լեհաստանի Բրոբոշ ձգի լերանց կողմերն, ուր իշխանուհին երկար ատեն ընակեր էր և շատ վանքեր և եկեղեցիներ շինել տուեր էր։ Բազմաթիւ սրտաշարժ աւանդութիւններ կը պատմէ ժողովուրդը իշխանուհւոյն վրայ. և ի Լեհաստան անոր յիշատակը դեռ կը տիրէ հաստատուն կերպով ի սիրտս ուղղափառաց, ու միայն քանի մը տարիներ ի վեր է որ կրնանք մեռած համարիլ զայն։

Եւ որովհետև Հունդարիոյ այս ցեղը սահմանուած էր ածու մը ըլլալու երկնից համար, այս օրհնեալ տոհմին իշխանուհիներն որոնք Եղիսաբեթի պէս օտար իշխանաց հետ ամուսնացեր էին, թէպէտև իրենցմէ մանաւոր պայծառութիւն մը չունին, սակայն սրբուհեաց մայր ըլլալու պարծանքն ստացեր էին։ Այսպէս Եօլանտա Եղիսաբեթի քոյրը, ամուսնացած Ալրակոնի Յակոբ Տիեզերական Թագաւորին հետ,

Բորդոգալի թագուհոյն Եղիսաբեթի մեծ մայրն եղաւ. ու Կոստանդինա՝ Անդրեաս թագաւորին քոյրը՝ մայր եղաւ Բոհեմիոյ Ագնէս իշխանուհւոյն, որուն վրայ տեսանք թէ ինչ գովեստով խօսեցաւ սրբազան քահանայապետը։ Զուրգեց ասիկայ հարս ըլլալ Անգղիոյ ու Հռովմայ թագաւորաց ու Փրեդերիկոս Բ կայսեր. և քառասունուվեց տարի իր մենաստանին մէջ կենալէն ետքը՝ մէջքը կապեց սրբոյն Փրանկիսկոսի գօտին, ու բոկոտն երթալով սրբուհւոյն Գլարայ ու Եղիսաբեթի հետացը վրայ, խոնարհութեան աղքատութեան ու ողորմածութեան գերագոյն նշանակներ ցուցընելով, մեռաւ Ագնէս յամի 1283, ու միշտ իբրև սրբուհի մը մեծարուեցաւ։ Գերմանիոյ ու Բոհեմիոյ մէջ. թէպէտև սուրբ աթոռն յանձն չառաւ հանդիսապէս սրբոց կարգը դասաւորել զինքը, ինչպէս որ խնդրած էր Կարոլոս Դ. կայսրը, որուն կեանքն երկու անգամ խաչելսեր էր անոր բարեխօսութեամբը։

Իսկ Բորդոգալի թագուհւոյն, սրբուհւոյն Եղիսաբեթի համար՝ գրեթէ ամբողջ գիրք մը պէտք է անոր սրտաշարժ ու փառաւորեալ վարուց նկարագիրն ընելու համար. իսկ մենք քանի մը տող կրնանք իրեն նուիրել։ Ծնաւ 1271ին Արագոնի Պետրոս թագաւորէն, ու Սիկիլիոյ իշխանուհի Կոստանդինայէն, ու կարծես թէ նաև խաստահմանուած էր երկնային փառաց այն անուամբն որ իրեն տուեցաւ. վասն զի թէպէտ սովորութիւն էր ի Սպանիա որ նորածին իշխանուհեաց իրենց մօրը կամ հանուոյն անունը կուտային, բայց ինքն Եղիսաբեթի անուամբը կո-

չուեցաւ։ 15 տարուան էր երբ Բորդոգալի Դիոնեսիոս Թագաւորին հետ ամուսնացաւ. բայց փոխանակ իր պաշտպանին պէս գորովալից ու իրեն արժանի փեսայ մը գտնելու, շատ նեղութիւն քաշեց անոր դէշ վարմունքէն ու անհաւատարմութիւններէն. բայց ինքը միշտ հաւատարիմ կեցաւ քրիստոնեայ հարսի մը պարտուցը։ Աւելցուց իր գորովը ու համբերութիւնը. և երբ քանի մը տիկնայք կը մեղադրէին անոր չափէ դուրս ներողամտութիւնը, կը պատասխանէր անոնց. «Արժան է որ Թագաւորին մեղացը համար ետ կենամ ես ալ համբերութեան առաքինութենէն, ու իմ մեղքերս աւելցնեմ անոր մեղքերուն վրայ։ Աւելի լաւ կը համարիմ, առնուլ զԱստուած և իւր սիրեցեալ սուրբերն խորհրդակից ամենայն, և կարկղցնել ամուսնոյս սիրտը իմ քաղցրութեամբ»։ Եւ այն աստիճանի ներողամտութեան ձեռք զարկաւ, որ սկսաւ նոյն խնամքը և զգուշութեամբ մեծցընել իւր փեսին անհարազատ որդւոյն իբրև իրեն յատուկ և հարազատ որդիքը, անոնց հոգւոյն փրկութեանը համար։ Սակայն իր օրինաւոր անդրանիկ որդին, զայրացած հօրն անկարգ վարուցը վրայ, ապստամբեցաւ անկէց. Թագաւորը մանանկից համարեցաւ նաև զեղեսաբեթ այն ապստամբութեանը. անոր համար առաւ իրմէ օժիտը և զրկելով զինքը յամենայն ստացուածոց՝ փակել տուաւ բերդի մը մէջ։ Հազիւ Թէ ազատեցաւ այս անարդար գերութենէն, սկսաւ ամենայն ջանքով ետեւէ ըլլալ հաշտեցընելու իւր ամուսինն՝ որդւոյն հետ։ Բայց տեսնելով Թէ իր բոլոր ջանքերն ընդու-

նայն եղան, ուրիշ հնարքի մը ձեռք զարկաւ. Թագաւորին և որդւոյն բանակաց պատերազմի պատրաստուած ժամանակը, ինքը ձի հեծած համարձակ ինքզինքը երկու պատերազմող բանակներուն մէջ ձգեց, բազմաթիւ նետերուն կարկտին տակ, Թախանձելով մարդիկները որ դադրին իրենց հարուածներէն։ Զօրքերն՝ որոնց սիրտը աւելի զգայուն էր քան իրենց առաջնորդաց սիրտը, տակն ու վրայ եղան կնկան այս պիսի անձնանուիրութիւնը տեսնելով։ Ուստի զէնքերնին ձգեցին և այսպէս ստիպեցին զՀայր և զորդի որ մէկմէկու հետ հաշտուին։ Ժամանակ անցնելէն ետքը, հարկ եղաւ իրեն երկու որդւոցը մէջ միաբանութիւն հաստատել, որոնք դժնդակ պատերազմի մը ձեռք զարկեր էին. յետոյ նոյնպէս հաշտարար եղաւ Սպանիացւոց խնդրանքովը իւր եղբօրն՝ որ Ալբակնի Թագաւորն էր, և փեսին՝ Գադիլիոյ Թագաւորին մէջ։ Ա. այս արդեանցը համար Եղիսաբեթ արժանի եղաւ որ ընդհանուր երկրեցին իրեն այս փառաւոր անունը շնորհեց, մայր խաղաղութեան և հայրենեաց զնա կոչելով։ Իր ամուսինը մահացու ախտով հիւանդանալով, Եղիսաբեթ ուզեց որ ինքը միայնակ անոր ամենէն աւելի դժուարին ծառայութիւններն ընէ, և իրաւցընէ ինչուան վերջին շունչը իրմէ չբաժնուեցաւ։ Յետոյ սրբոյն Փրանկիսկոսի Երրորդականաց զգեստը հագաւ, զոր երկար ատենէ ի վեր պահեր էր. նոյնպէս այրիութեանը վերաբերեալ ամենայն բան առաջուց հոգացեր պատրաստեր ու մանաւանդ մտտուկի մը մէջ դրեր ու պահեր էր։ Ուխտի գընաց ի սուրբն Յակոբ Կոմպոստելլա հանգիստ

մաղթելով իր ամուսնոյն հոգւոյն համար, և ի յիշատակ հոն ձգեց այն սկանակապ թագը զոր հարս եղած օրը գործածեր էր։ Մնացած կեանքը առաքինական կրթութիւններով անցուց. ամեն օր երեսուն աղքատի ծառայելով հիւանդանոցի մը մէջ զոր իր պալատին մօտ կառուցեր էր ի պատիւ իւր սուրբ հօրաքրոջը և պաշտպանին, որուն կը ջանար նմանիլ իւր ողորմածութեամբը, խստակրօնութեամբն և հաւատարիմ պահպանութեամբ եկեղեցւոյ արարողութեանց։ Շատ կ'ախորժէր ժամերգութիւններ և եկեղեցական երաժշտութիւններ. ուստի ամեն օր ներկայ կը գտնուէր երկու ձայնաւոր պատարագներու, որոնց առաջինն իւր ամուսնոյն հոգւոյն համար էր։ Մահուընէն տարի մը առաջ ուզեց դառնալ ի սուրբն Յակոբ Կոմպոստելլա, բայց բոկոտն, գեղացիի զգեստով և բոլոր ճամբան իր հացը մուրալով. որպէս զի չըլլայ թէ ժողովրդէն ճանչցուելով անհանգիստ ըլլայ։ Վերջապէս 1336ին երբ իր որդին, Բորդոգալի թագաւորը, պատերազմ հրատարակեց իւր փեսին Գասգիլիոյ թագաւորին դէմ, Եղիսաբեթ միտքը դրաւ՝ առանց իր հաստակին նայելու՝ ամեն ջանքը բանեցրնել և եօթն օրուան ճամբորդութիւն ընել զանոնք հաշտեցնելու համար։ Ա.յս վերջին յաղթութիւնն ալ վաստրկեցաւ. բայց ճամբորդութեան նեղութիւններն ու ամառուան տաքութիւնը զինքը գերեզմանին դուռը հասուցին։ Մահուան առջև գիշերը քովիններուն դառնալով՝ «Տեսէք», ըսաւ, զուրբ Կոյսն Ներմակ զգեստներով, որ կու գայ աւետելու ինծի իմ երջանկութիւնս»։

Յուլիսի 8ին վախճանեցաւ։ Իր մահուընէն երեք տարիւր տարի ետքը, Ուրբանոս Ը. քահանայապետը մեծ հանդիսով զինքը սրբոց կարգը անցուց, և գեղեցիկ երգ մը յօրինեց ի պատիւ նորա։ Ա. յոպէս երկու անգամ Նղիսաբեթի գեղեցիկ անունը նուիրական եղաւ յերկինս և յերկրի. այն անունը՝ զոր մենք ալ այնչափ անգամ յիշեցինք, և զոր քաղցր է մեզ նորէն յիշատակելը։

ԼԴ.

Մարպուրկի եկեղեցւոյն և Եղիսաբեթի Նշխարացն անարգուելուն վրայ.

Լաւն գետին քովերն եղող լեռներուն մէջ բարձր տեղ մը կայ, որուն ծայրը Եղիսաբեթի թոռը Մարպուրկի հին բերդը կառուցեր է. ա-նոր շրջակայքը քաղքին դռներն և պարտէզնե-րը տարածուած է, ու այնչափ շէնքերուն մէջ աչքի կը զարնէ ի պատիւ սրբոյն Եղիսաբեթի շինուած եկեղեցին իւր բարձրութեամբը և երկու գեղեցիկ աշտարակներովը։ Մարպուրկ հաս-նող հաւատացեալ Ճանապարհորդ մը չմնածեր տեսնել անոր մէջի ամփոփուած գանձերը, այլ կը փնտռէ սրբուհւոյն Եղիսաբեթի յիշատակ-ները, և որոնք ամէն տեղ իր աչքին առջևը կ'ելլեն. վասն զի անոր անունը կը լսէ ամէնուն բերնէն, անոր անունն ամէն շէնքերու վրայ։ Ինչուան հիմա ըստ մասին պահուած է այն

վանքն ու հիւանդանոցը զորոնք ինքը կառոյց և ուր ինքը մեռաւ. ու կը ցուցնեն շէնք մը որուն համար աւանդութիւնը կը հաստատմացընէ թէ հոն վերջի շունչը տուած ըլլայ Եղիսաբեթ։ Ա.յս այլ և այլ յիշատակաց մէջ հուսկագոյն է այն եկեղեցին որուն վրայ կ'ուզենք քիչ մը երկնկեկ խօսիլ։

Ինչպէս որ ըսինք, այս եկեղեցին կառուցուած է Լաֆն գետին քով գեղեցիկ դիրք ունեցող երկրի մը վրայ. և ասոր համար ժողովրդական բերանն այլ և այլ աւանդութիւններ կան։ Կը զուրցեն թէ առաջ ինքն Եղիսաբեթ մտածած ըլլայ այս եկեղեցին կառուցանելը. բայց իր ընտրած տեղն էր մօտակայ ժայռ մը, որուն վրայ կ'ուզեր շինել եկեղեցին, ու քովն ալ զանգակատուն մը, որուն զանգակաց ձայնը բոլոր Հունգարիոյ մէջ լսուի. բայց այս վախճանիս համար իր բրած ամէն ջանքն ընդունայն եղաւ, նոյն իսկ հիմունքը ձգելն անկարելի. վասն զի բոլոր օրուան մէջ եղած աշխատանքը կը տեսնէին որ գիշերը կը փլէր։ Վերջապէս ձանձրացած օր մը ժայռին վրայ ելաւ ու ձեռքը քար մը առնելով դէպի վար նետեց. և ուր կենալու որ ըլլայ, ըսաւ, այն քարը՝ հոն պիտի կառուցանեմ եկեղեցին. քարը գնաց կեցաւ այն տեղը ուր հիմայ շինուած է։

Դարձեալ կը պատմեն թէ շինութեանը ժամանակ ստակները բաց մնտուկի մը մէջ դրուած էին, ուսկից ամէն գործաւոր կ'երթար իրեն համար պէտք եղած ստակը կ'առնուր, բայց թէ որ աւելի առնէր, ստակը դարձեալ ինքիրմէ գէշ շեր ատեն մնտուկը կը դառնար։

1235ին սուրբ Կուսին վերափոխման նախընթաց օրը, սրբուհւոյն՝ սրբոց կարգը անցնելէն քանի մը տարի ետքը այս եկեղեցւոյն հիմը դրուեցաւ, ու ամբողջ 20 տարի տևեց հիմունքը ձգելը, ու քսան տարի ալ ինչուան վերան գոցելը. իսկ ներսի կողմի շինութիւնը չորեքտասաներորդ դարուն մէջ գլխաւորեցաւ։ Եկեղեցւոյն երկայնութիւնը 230 ոտք է, իսկ լայնութիւնը 83. հիմունքը 43 ոտք խորութիւն ունի. բարձրութիւնը 70 ոտք. իսկ բովի երկու աշտարակներուն բարձրութիւնը 303 ոտք։ Եւ թէպէտ հարիւր յիսուն տարիէն աւելի տևեր է այս եկեղեցւոյն շինութիւնը, բայց անանկ միայ կերպութիւն ունի՝ որ կարծես թէ քիչ ժամանակի քանի մը մարդու աշխատանք է։ Եկեղեցւոյն հիւսիսային կողմը մատուռ մը կայ, յորում կը հանգչի սրբուհւոյն Եղիսաբեթի ոսկերքը, և որ զարդարուած է գեղեցիկ պատկերներով ու արձաններով. հոն հանգչեցաւ սուրբը մինչև նոր աղանդից ժամանակ։

1535ին, կիրակի օր մը, Հեսի Փիլիպոս իշխանն որ Եղիսաբեթի ազգական էր, անոր ընծայուած եկեղեցւոյն մէջ առաջին անգամ, իրեն աղանդին պաշտօնը մատուցանել տուաւ։ Հետը կային այլ և այլ իշխանազուն և գիտնական անձինք։ Պաշտամունքը լմընցնելէն ետքը, իրեն կանչել տուաւ Ցեատոնեան կարգին գլխաւոր հրամանատարը, ու անոր հետ մէկտեղ եկեղեցւոյն առանդատունը մտաւ, ուր կը պահուէր Եղիսաբեթի մարմինն ամփոփող մատուկը։ Այն թիւ բազմութիւն ժողովրդեան իրեն ետևէն ներս մտան. երբ իշխանն ու իրեն բարեկամներն

աւանդատուն մնան, ասպետաց հրամանատարը դռները գոցել տուաւ, որպէս զի ժողովուրդը չկարենայ ներս մտնել։ Երկրթէ վանդակը՝ ո-ւրուն մէջ դրուած էր մտուկը՝ կղզուած էր, և հրամանատարը չուզեց քանալ, ու քանալին հե-ռու տեղ մը նետեց. աւանդապահն ալ անկա-րելի կը ցուցներ ներս մտնելը։ Այն ատենն իշ-խանը բռնութեամբ բանալ տուաւ դուռը, ու գտնելով սրբուհւոյն Եղիսաբեթի ոսկրները, քովը կեցող հազարապետին տուաւ որ իր բեր-դը տանի։ Ետքը անոր մարմինն ամիսիսիոց սրն-տուկէն կատոր մը կոտրեց, կարծելով թէ ոսկի է. բայց երբ ոսկերիչը անոր պղինձ ըլլալն իմա-ցուց, «Տէս, ըսաւ իշխանն, թէ ինչպէս քա-հանայք ժողովուրդը կը խաբեն. պղնձէ շինել տուեր էն այդ մտուկը, ու բոլոր ոսկին իրենց պահեր էն»։ Տեսնելով որ սրբուհւոյն գլուխը պակաս է, իշխանը ստիպեց զհրամանատարը որ աւանդատան մէջի ծածուկ դարանը բանալ տայ. բացաւ ու հոն գտաւ Եղիսաբեթի գլու-խը, անոր պակաս և այն ոսկի սկիհը զոր սուրբ մարմնոյն փոխադրութեան օրն իրեն ընծայեր էր Փրեդերիկոս կայսրը։ Փիլիպպոս այս տեսն ծանրագին նիւթերը իր բերդը տանել տուաւ, ու անկէ ետքը ոչ ոք տեսաւ զանոնք։ Ահաւա-սիկ այսպիսի մարդ մը՝ համարձակեցան նորա-զանդք Փիլիպպոս Մեծանձն կոչելու։

Նոյն 1539 տարւոյն մէջ Փիլիպպոս հրաման ընդունեցաւ Լուտերէն ու Վիդդէնպերկի մէջ ժողովուած ուրիշ եօթը նորազանդ վարդապետ-ներէն՝ նորէն կարգուելու, թէպէտև դեռ կէս դանի էր իր առջի կինն, ուսկից շատ զաւակներ ալ ունեցեր էր։

Սրբուհւոյն ոսկեբերը իր եկեղեցւոյն մէջ անպաճոյճ քարի մը տակ դրուեցան, անծանօթ տեղ մը, որոնց ուր ըլլալը միայն Փիլիպպոս Իշխանն ու իր երկու հաւատարիմ բարեկամները գիտէին։ 1646ին պատճառելով թէ պատերազմաց տարիները կրնայ գողցուիլ անոր պատուական մնալուկը, տերուն թեան բերդ մը փոխադրելը աբեսաւ. ինչուան որ Կարորոս Ե կայսեր հրամանովը սարպուեցաւ դարձեալ սրբուհւոյն եկեղեցին դարձնելը անոր ոսկեբերը։ Անկէց իր պատուական մասունքը ցրուեցան. գլխոյն գանկը Գաղղիա տարուեցաւ, ու մէկ մասը ինչուան հարաւային Ամերիկայի Պոկոդա քաղաքը։ Բազկին մէկը Հնդարիա զրկուեցաւ. իսկ մէկալ մասունքն դեռ ասդին անդին այլ և այլ քաղաքաց մէջ կը տեսնուին. ինչպէս Հանովը, Վիեննա, Գոլոնիա և մանաւանդ ի Պրեզլաւ. հոն է նաև այն սև գաւազանը զոր գործածեց Վարդապետին վանտուած ժամանակը։ Սուաջ յիշատակեցինք թէ Էրֆուրդին մէջ էր իր գաւառթը, հարանեաց զգեստը յԱնտեխս, ի Պրանտֆիլը իւր հարանախօսութեան մասանին, ժամադիրքը, սեղանատախտակը ու յարդեայ սեղանը. Դանկեան քաղաքին մէջ ալ կը ցուցնեն իր քողը, ու Գոպլենց՝ արիւնազանգ շապիկը։

Իսկ ի Մարպուրկ իրեն նշխարներէն մաս մ՚այլ մնացած չէ, միայն մեծ կապերտ մը կը ցուցնեն, որուն համար կ՚աւանդեն թէ ինքը բանած ըլլայ, և որուն վրայ նկարուած է անառակ որդւոյն պատմութիւնը։ Իսկ իր մասունքն որ 300 տարիէ ի վեր պարապ մնացեր է, 1814ին

Մարդուրկ տարուեցաւ ու եկեղեցւոյն աւանդատանը մէջ դրուեցաւ. և այն փառաւոր եկեղեցին որ իր յիշատակին նուիրուած էր, 1539էն ի վեր այնպիսեաց ձեռքը խնայելով որոնք սրբոց բարեխօսութիւնը կռապաշտութիւն կը սեպեն, ալ անկէ ետքը հասարակաց մեծարանաց նշան մը չընդունեցաւ։

Ա.յսպէս ուրեմն անիկայ որ այնչափ սիրելի էր երկնից և երկրի, չունեցաւ ուրիշ սրբոց բաղդը, որոնց մարմինն ինչուան մեր օրերը հաւատացեալ ժողովրդոյ մէջ մնացին ապագայ սերնդոց մեծարանօքը և սիրով այն խորանները հովանւոյն տակ՝ ուր ամէն օր սուրբ պատարագին անարատ զոհը կը մատուցուի։ Ա.յլ ընդհակառակն այն աշխարհը՝ ուր կը քնակէր հրեշտակաց քոյրը Եղիսաբեթ, մնաներ իր հաւատքը, ու այն ժողովուրդը զոր այնչափ սիրեց մը, խեթ արեց և սիրեցաւ, չմնացաւ և ուրացաւ իր զօրաւոր պաշտպանութիւնը։ Դուրինկիա ուր ապրեցաւ իբրև օրիորդ մը և հարս մը, Հեռ ուր իր այրիութեան տարիներն անցուց, երկուքն ալ ուրացան ուղղափառութիւնը։ Լուտերի ազանդը աւրեց ու ապականեց բոլոր Վարդապետներ բերդին մէջի Եղիսաբեթի սուրբ յիշատակները, անոր բարեպաշտ մնայնութեան ու պատանեկութեան հասակին տեղուանքը. և այն ամուսնական սիրոյն՝ յորում անհամեմատ փայլեցաւ իր զորովանը և սրբութեամբը։ Ա.յն ընդարձակ աշխարհին մէջ, որ հանդիսարան մ'եղաւ իր անխոնջ սիրոյն, ճանապարհորդը փոշի տեղը կը փնտռէ եկեղեցի մը կամ՝ ուղղափառի տնակ մը։ Նոյն իսկ Ա.յրէնախի մէջ՝ ուր Եղի-

սաբեթ այնչափ սքանչելի կերպով Քրիստոսի սիրոյն և չարչարանաց յիշատակը նորոգէց, չկայ ուղղափառ մը որ իր բարեխօսութիւնը խնդրէ. չկայ խորան մը և ոչ սուրբ քար մը, որուն վրայ կարենայ ծնկան վրայ գալ բարեպաշտ ուխտաւոր մը մեծարելու իրեն քաղցր անունը և օրհնութիւնը հայցելու։ Վերջապէս այն քաղաքը ուր մեռաւ և ուր բիւրաւոր մարդիկ դիմեցին երկրպագելու անոր ոսկերացը, և ուր մնացած քարերն անոնց հաւատքը կը ցուցընեն, հոն ալ իր վարքը իբրև պարզ պատմութիւն մը կ'ասանդուի. և գտնուող սակաւաթիւ ուղղափառները և ոչ թիւ պատարագ մը ունին անոր տօնախմբութեան օրը։ Իրեն գերեզմանն ալ մեծարուած չէ, և մինչև իր ազգականներուն մէջ գտնուեցաւ մէկը որ նախատելով հանեց իր ոսկորները։

Ուղղափառ մը չկրնար զինքը ուրիշ կերպով մեծարել բայց եթէ իր անունը փառաւորելով և իր սիրոյն և յարգանացը նշանակը անոր մատուցանելով։ Անշուշտ այսպէս կը հասկնար այն խոնարհ կրօնաւորը զոր ցաւոք վերջին ատամ մ'ալ կը յիշենք, երբոր Եօթնեւտասներորդ դարուն մէջ կը զուրցէր. « Երբոր սրբուհոյն Եղիսաբեթի գեղեցիկ եկեղեցին և իր հարուստ շիրիմը կը տեսնեմ, սիրտս տանին ու վրայ կ'ելլայ, երբ կը նկատեմ զանոնք լուտեբականաց ձեռք ինկած, և իրենց նախկին պայծառութենէն մերկացած։ Այս բանին վրայ շատ անգամ գանգատեր եմ աստուծոյ, և ձեռքէս եկածին չափ Եղիսաբեթէն խնդրած որ զայս կարգի մը դնէ։ Բայց ով փառաւորեալ

սրբութիւդ աստուծոյ, մանաւանդ անոր համար որ ուղղափառ քրիստոնէները զբեզ չեն մեծարեր, պէտք է որ մենք ուղղափառքս կրկնապատկենք մեր յարգանքը, ու աւելի եռանդեամբ քու բարեխօսութեանդ դիմենք. և ուրախանանք յիշելով թէ աստուած քու մանկութեանդ հաստակէն հեռացուց զբեզ ի Հունգարիոյ, որպէս զի պարզևէ Գերմանիոյ իբրև ընտիր և պատուական ակունք »։

Սակայն նոյն իսկ այն երկիրները՝ որոնք մոռցան կամ ուրացան Եղիսաբեթի փառքը, քաղցր և սիրելազգոյն յիշատակ մը կայ. այն կողմերը պղտի ծաղիկ մը կը բուսնի, իրեն պէս խոնարհ և պարկեշտ, և կը կոչուի Ճաղիկ Եղիսաբեթի. ամէն անգամ որ արևը կը մտնէ՝ այս ծաղիկը կը գոցուի, ինչպէս որ Եղիսաբեթի սիրտն ալ գոց էր այն ամէն բաներուն որոնց մէջ լուսոյ և շնորհաց Հառագայթը կը պակսէր։

Երանի՜ մեզի եթէ հաճոյական ըլլայ իրեն մեր ջանքը, ինչպէս որ հաճոյ էր ուղղափառ գիւղացոյց բարեպաշտ սէրն ու մեծարանքը, երբոր իրենց սիրական ծաղկին իրեն սիրելի անունը կու տային։

Թոյլ տուր ուրեմն մեզի, ո՜վ երջանիկ սրբուհի, որ մեր խօսքերը չմնացուցած վերջին անգամ մ՚այլ դարձընենք մեր ձայնն և սիրտն առքեզ. որ այնչափ քեզի բարեպաշտ սրտերու հետ կը համբաձակինք կոչել զբեզ մեր սիրելի Եղիսաբեթի։ Ո՜վ սիրեցեալդ ի Քրիստոսէ, եղիր բարեկամ մեր հոգւոյն, և շնորհէ մեզի որ կարենանք քու բարեկամիդ բարեկամ ըլլալ։ Դար

ձուր երկնքէն աչքդ մեր վրայ, այն գթած աչուընեդ ողովք յերկրի կը բժշկեիր ամենէն աւելի դժնդակ մարդկային հիւանդութիւնները։ Եկած ենք մենք ալ խաւարեալ ու ցուրտ դարու մը մէջ լուսաւորուելու քու սուրբ լուսովդ և ջերմանալու սիրոյդ կրակովը, և դու զմեզ ընդունեցար, և յօժարութեամբ ընդունիս մեր սրտին քու խաղաղութիւնդ։ Օրհնեալ ըլլաս այն պատուական արտասուացը համար զոր թափեցինք պատմելով քու քաշած նեղութիւններդ ու համբերութիւնդ, քու սէրդ և հրեշտակային պարզութիւնդ. օրհնեալ ըլլաս երբ մեր աշխատանացը մէջ զմեզ կը պաշտպանեիր և երբ մեր տխուր օրերուն մէջ քու սուրբ դէմքովդ և յիշատակաւդ զմեզ կը սփոփեիր։ Օրհնեալ ըլլայ յաւիտեան քու սուրբ անունդ, և օրհնէ զիս ալ որ քու վարուցդ հրաշալի պատմութիւնը շարադրեցի։

Պատասխանի ետ Ցիսուս և ասէ. Գոհանամ զքեզ, Հայր, Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց։

18 յունիս 1836.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
имени Маяковского
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ 5

Ա. Ծնունդ սրբուհւոյն Եղիսաբեթի 9

Բ. Մանուկ Եղիսաբեթի սէրն առ Աստուած . . 19

Գ. Վիշտք սրբուհւոյն Եղիսաբեթի 27

Դ. Եղիսաբեթ՝ հարսն կ՚ընծայուի Լուդովիկոսի . 35

Ե. Դուքսն Լուդովիկոս 43

Զ. Լուդովիկոս և Եղիսաբեթ՝ սուրբ ամուսինք . . 53

Է. Ճգնութիւնք սրբուհւոյն Եղիսաբեթի 59

Ը. Աղքատասիրութիւն սրբուհւոյն Եղիսաբեթի . . 69

Թ. Սրբուհւոյն Եղիսաբեթի կարգէ դուրս ջերմեռանդութիւնը և խոնարհութիւնը 83

Ժ. Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ Ճանչցուեցաւ և սիրուեցաւ երեւելի սուրբ Փրանկիսկոսէն, և ինչպէս ունեցաւ իբրև տեսուչ զԻոնրատոս Մարբուրկցի 93

ԺԱ. Ինչպէս աստուած յայտնեց իւր ընտրեալին սրբուհւոյն Եղիսաբեթի 111

ԺԲ. Ինչպէս բարեսիրտ Լուդովիկոս դուքսը կը պաշտպանէր իւր աղքատ ժողովուրդը 123

ԺԳ. Դուրինկիոյ սոսկալի սովը, և սրբուհի Եղիսաբեթին մեծ ողորմածութիւնը 131

ԺԴ. Լուդովիկոս դքսին իւր ենոջը քով դառնալը . . 143

ԺԵ. Լուդովիկոս դքսին խաչակրութեան երթալը, և

մեծ ցաւով բաժնուիլը իւր բարեկամներէն, ընտանիքէն և մանաւանդ սրբուհւոյն Եղիսաբեթէն 153
ԺԶ. Ինչպէս Լուդովիկոս դուքսը տուքր երկիր երթալու ժամանակ Ճամբան վախճանեցաւ . . . 175
ԺԷ. Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ մեծ տրամութիւն և ցաւով իւր ամուսնոյն մահը խնացաւ . . 183
ԺԸ. Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ իւր փոքրիկ զաւակը հետ կ'աքսորուի իր բերդէն, և վերջի սահմանի հիդութեան մէջ կ'էլնոյ. և փոխանակ բարեաց՝ ապերախտութիւն ու չարութիւն կ'ընդունի իր պարտնակալներէն . . 189
ԺԹ. Ինչպէս բարեբարեր Յիսուս մխիթարեց զսրբուհին Եղիսաբեթի իւր հիդութեանը և ամենեն երեսէ ձգուած ատենը. և ինչպէս ամենասիրելի կոյսն Մարիամ եկաւ զրբացնելու զԵղիսաբեթ. 203
Ի. Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ չուզեց կրկին անգամ ամուսնանալ, և ինչպէս իւր հարատնեաց զգեստը Քրիստոսի իր նոր փեսային նուիրեց 223
ԻԱ. Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ իւր սիրելի ամուսնոյն ոսկերքն ընդունեցաւ, և ինչպէս Թագեցին ի Ռինհարդսպրիւն 233
ԻԲ. Ինչպէս դուբինկիացի ասպետները յանդիմանեցին Հենրիկոս դքսին չարութիւնը, և ինչ կերպով հաստատուեցաւ երբին Եղիսաբեթի իշխանութիւնն 243
ԻԳ. Ինչպէս սրբուհին Եղիսաբեթ ընդունեցին աշխարհէս հրաժարելով՝ առանձնացաւ իվարդապետի, և սրբոյն Փրանկիսկոսի սասիզացոյն կրօնքին զգեստը հագաւ 251
ԻԻ. Եղիսաբեթին ապչատ կեանքը, և իրեն ցուցած խնամարհութիւնն ու զգուութիւնն առ ամենայն մարդիկ 265

ԻԵ. Ի՞նչպէս սրբուհին Եղիսաբէթ չուզեց նորէն իւր հօրն արքունիքը դառնալ, որպէս զի աւելի ապահով կերպով կարենայ մտնել յերկինս. 285
ԻԶ. Ի՞նչպէս սրբուհին Եղիսաբէթ ազքատաց բաժնեց իւր ամենայն օժիտը 291
ԻԷ. Ի՞նչպէս սրբուհին Եղիսաբէթ կը սորվէր Գոնրատ վարդապետէն ամէն բանի մէջ խորագոյն իւր կամքը 299
ԻԸ. Ի՞նչպէս ասատուած յայտնեց իր մեծ կարողութիւնն ու ողորմութիւնը սրբուհւոյն Եղիսաբեթի միջնորդութեամբը, և անոր աղօթիցը հրաշալի զօրութեամբը 315
ԻԹ. Սրբուհւոյն Եղիսաբեթի մահը 339
Լ. Սրբուհւոյն Եղիսաբեթի թաղումը 349
ԼԱ. Սրբուհւոյն Եղիսաբեթի գործած հրաշքերը, և Գոնրատ գրքին զինքը սրբացընելու համար ըրած ջանքը 357
ԼԲ. Սրբուհւոյն Եղիսաբեթի սրբացուցումը, և իրեն նուիրական նշխարաց Գերմանիոյ մէջ տարածումը 377
ԼԳ. Սրբուհւոյն Եղիսաբեթի որդւոցը, ծնողացն ու իր ցեղին եղած սրբոցը վրայ մէկ երկու խօսք. 401
ԼԴ. Մարպուրկի եկեղեցւոյն և Եղիսաբեթինշխարացն անարգուելուն վրայ 429